ՈՒՂԵՐՁՆԵՐԻ 1-ԻՆ ՇՐՋԱՆ

4 մարտի 2005 թ. - 30 հունիսի, 2005 թ.

ՍԱՆԱՏ ԿՈՒՄԱՐԱ

4 մարտի, 2005 թ.

ԺԱՄԱՆԱԿԸ ՓՈԽՎԵԼ Է

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան. եկել եմ այս օրով, որպեսզի հայտնեմ աշխարհին այն նոր հնարավորության, նոր շնորհի մասին, որ Երկնոլորտները որոշել են հայտնի դարձնել աշխարհին մեր նոր ռուսազգի դեսպանորդ Տատյանայի միջոցով:

Շատերի համար անսպասելի կլինի իրադարձությունների այսպիսի ընթացքը: Եվ շատերը հակասական զգացմունքներ կապրեն՝ կարդալով սույն ուղերձը: Սակայն մենք ոչ ոքի չենք ստիպում հավատալ կամ չհավատալ այն ամենին, ինչ կասվի: Մեր խնդիրն է ձեզ տալ այս գիտելիքները, ձեր ազատ կամքը՝ դրանք ընդունել կամ չընդունել:

Ժամանակը փոխվել է, և սկսվել է Նոր Դարաշրջան: Աշխարհները մերձեցել են իրար: Եվ այս, ինչը մի քանի տարի առաջ, նույնիսկ անցած տարի թվում էր անիրականանալի երազանք, այժմ դառնում է իրականություն: Մենք հնարավորություն ենք ստանում խոսելու շատերի միջոցով և օգտվում ենք այդ հնարավորությունից:

Իրադրությունը Երկրի վրա շարունակում է շիկանալ: Բարձրանում է մոլորակի թրթռումների մակարդակը: Նոր էներգիաներ են գալիս Երկիր: Եվ մարդկության մեծ մասը զգում է այդ էներգիաներն այն ձևով, որ անհնար ու անիմաստ է այլևս ընթանալ խավարում թափառելու այն արահետներով, որոնցով նա ընթանում էր երկար ու ձիգ հազարամյակներ:

Դա արտահայտվում է անբավարարվածության զգացման տեսքով՝ որպես սրտի կարոտ և ինչ-որ բանի սպասում, որն ուր որ է պետք է տեղի ունենա: Առավել զգայուն մարդիկ կորցրել են հետաքրքրությունն իրենց սովորական զբաղմունքների նկատմամբ: Թվում է՝ այն ամենը, ինչ առաջ կարևոր էր և կյանքի իմաստն էր կազմում, այժմ որևէ նշանակություն չունի: Բոլոր նախկին զբաղմունքները՝ դատարկ ժամավաճառությունն ընկերների հետ, անվերջ սերիալների դիտումը, մանր-մունր բաների հետևից ընկնելը, թվում է, լրիվ անիմաստ են դարձել: Այդ ամենն արդեն հետտոնական պաճուճանք է հիշեցնում: Այսօր արդեն այդ ամենը զրկվել է իմաստից:

Առավել զգայուն մարդիկ իրենց սրտերում ունեն Նոր Աշխարհի կանխազգացումը, այն Աշխարհի, որը պետք է փոխարինի հնին ու իր դարն ապրածին: Եվ որքան էլ մարդկային գիտակցությունը փորձի կառչել կյանքի սովորական դարձած դրույթներից, հին ավանդույթներից, լինեն դրանք կրոնական, հասարակական թե ընտանեկան բնույթի, այդ ամենը կսրբվի-կտարվի վերահաս փոփոխությունների քամիով: Եվ միտք չունի դիմադրել այդ փոփոխություններին, որովհետև այս աշխարհում ամեն ինչ ենթակա է աստվածային բոլորապտույտի: Եվ ազատ կամքն էլ իրականում սահմանափակված է իր ժամանակային և տարածական շրջանակներով:

Մատերիական աշխարհի շրջանակներով սահմանափակված մարդկային մահկանացու գիտակցությունը ենթադրում է, թե այս աշխարհում ամեն ինչ ենթակա է մարդու կամ մարդկային առաջնորդների կամքին:

Ո՛չ: Կա քարերը նետելու ժամանակ: Կա քարերը հավաքելու ժամանակ:

Եթե մարդկային օրգանիզմում բույն է դնում քաղցկեղային ուռուցքը, ապա առողջ օրգանիզմը սկսում է ազատվել հիվանդ բջիջներից: Ճիշտ նույնպիսի սկզբունք է գործում նաև այս տիեզերքում:

Եթե որևէ մարդկային քաղաքակրթություն կենտրոնացված է դառնում միայն անձնական հետաքրքրությունների բավարարման վրա, ապա այդպիսի քաղաքակրթությունը ենթակա է ոչընչացման, ճիշտ այնպես, ինչպես քաղցկեղային ուռուցքը կարող է հեռացվել վիրահատական ճանապարհով:

Եվ տվյալ դեպքում դիմադրուzությունն անօգուտ է: Այն ամենը, ինչ չի համապատասխանի Նոր Գիտակցությանը՝ Ընդհանուր Բարօրության, Բարու, Համագործակցության, Աստվածառաջնորդության սկզբունքներին, կսրբվի Երկրի երեսից այնպես, ինչպես ոչ վաղ անցյալի երկրաշարժն ու ցունամին հաշված ժամերի ընթացքում խլեցին մի քանի հազար մարդու կյանք:

Դադարեք ձգտել ձեր աշխարհում հաճույքներ ստանալուն: Կան անհամեմատ ավելի մեծ հաճույքներ, որոնք հասանելի են նրանց, ովքեր բացում են իրենց սիրտն ու միտքը Վերին Աշխարհների թրթռումների համար:

Ձեզնից դուրս չկա ոչինչ, ինչի կարիքն ունեք: Ամբողջ աստվածային գիտելիքն ու կատարելությունը ձեր մեջ է: Փնտրեք այդ գանձը ձեր սրտում, փնտրեք դեպի ձեր մեջ եղած անհաշիվ հարստությունները տանող մուտքը: Բայց մուտքի համար հարկ կլինի վճարել: Եվ մուտքի գինը ձեր էգոն է: Դուք պետք է հրաժեշտ տաք ձեր ես-ի անցողիկ մասին, ձեր էլեկտրոնային գոտու այն կուտակումներին, որոնք ճոպանների պես ձեզ կապկպում են Երկրին՝ մոլորակի թանձր ոլորտին:

Եվ այն կարոտը, որ ձեզնից շատերն ապրում են, այն բանի ստույգ հայտանիշն է, որ դուք հոգնել եք ձեր աշխարհի հաճույքներից, որ պատրաստ եք նուրբ աշխարհների հետ շփմանը:

Այն ամենը, ինչ ձեզ անհրաժեշտ է, պարզապես ընտրություն կատարելն է և քայլելը դեպի անսահմանություն՝ հրաժարվելով երեկվա տոնական զարդարանքներից, քայլ կատարելը դեպի իրականություն: Սկզբում՝ մեկ քայլ, հետո՝ երկրորդը: Եվ առանց կանգ առնելու գնալ դեպի ձեր իրական Գոյը՝ դեպի այն, ինչ դուք իրականում կաք:

Ձեր սահմաններից դուրս չկա ոչինչ, որ ետ պահի ձեզ դեպի բարձր իրականաթյուն ձեր ընթացքից: Միայն դուք ինքներդ եք ետ պահում ձեզ:

Մի՞թե չեք կարող գլուխ հանել հազար-հազար վերամարմնավորումներով անիրական աշխարհում թափառող ձեր կրկնակից:

Դուք այլ ճանապարհ չունեք: Կամ պետք է քայլ անեք դեպի անանց Իրականությունը, կամ պետք է վերջ տաք ձեր անհատականության գոյությանը:

Առողջ օրգանիզմն ինքն է ազատվում իր մեջ եղած քաղցկեղային բջիջներից: Պատկերավոր ասած՝ դուք բոլորդ, գտնվելով Աստծո որովայնում, կարծում եք, թե Աստված թո՞ւյլ կտա ձեզ ապրել ձեր հորինած օրենքներով: Ո՛չ, ասում եմ: Նա պարզապես կազատվի այն ամենից, ինչը չի համապատասխանում Իր Կամքին և Իր Օրենքին: Մտածեք այն մասին, ինչ ասացի: Եվ ես հույս ունեմ ապագայում հանդիպել ձեզ հետ այս դեսպանորդի կամ ցանկացած ուրիշի միջոցով, ով կնախապատրաստի իր տաճարը՝ ինձ որպես հյուր ընդունելու համար:

Սանատ Կումարա: ՕՄ

ԵՍ ԵՄ ՈՐ ԵՄ

5 մարտի, 2005 թ.

ՎԱՐԴԵ ՃԱՆԱՊԱՐՀ

ԵՍ ԵՄ ՈՐ ԵՄ, խոսում եմ քո ներսից: Ոչ բոլորին է հաջողվում իր ներսի բարձր մասի հետ հաղորդակցվելու փորձառություն ստանալ: Միևնույն ժամանակ դա այնքան բնական գործընթաց է, որ մատչելի է ներկայումս Երկրի վրա ապրող անհատականությունների մեծ մասի համար:

Երկրային կյանքը շատ հագեցած է այնպիսի ձևերով, որոնք, իրական չլինելով բարձր իրականության տեսանկյունից, այնուամենայնիվ չափազանց շատ են գրավում մարդկանց ուշադրությունը՝ շեղելով նրանց այդ իրականությունից: Ապրելով խաբուսիկ աշխարհում՝ հնարավորություն ունենալ հայացք նետելու շղարշից այն կողմ, ճեղքել-անցնել ֆիզիկական աշխարհի թանձրության միջով՝ ահա այն նպատակը, որն այժմ ելնում է առաջին պլան:

Մենք աշխարհների միջև հաղորդակցության հնարավորություն ենք ստանում նոր շնորհի միջոցով: Եվ այդ հաղորդակցմանը կարող է տիրապետել յուրաքանչյուր ոք, ով ձգտում է դրան և ձգտում է անկեղծ, այլ ոչ թե շինծու:

Ամենամեծ բարդությունը սեփական արտաքին, խաբուսիկ գիտակցությունը հաղթահարելն է: Ինքն իրեն հագցրած խաբուսիկ հագուստի հաղթահարումը: Ինքն իր վրայից ֆիզիկական մտքերի և զգացմունքների դեն նետումը: Վեր բարձրանալը սեփական գիտակցության մեջ նախ՝ Ես-Քրիստոս մակարդակին, հետո՝ ԵՍ ԵՄ ՈՐ ԵՄ մակարդակին, և ապա՝ մինչև անսահմանություն:

Ամենադժվարն առաջին քայլն անելը կլինի՝ անկախ ամեն ինչից որոշում ընդունել և ընթանալ Ուղով: Ամեն օր: Արտաքին աշխարհի պատրանքը ձեզ կշեղի Ուղով ընթանալուց: Որոշ ժամանակ անց յուրաքանչյուր քայլ կարող է դառնալ շատ ցավոտ, կարծես քայլում եք ջարդված ապակիների վրայով կամ մի արահետով, որի վրա շաղ են տրված փշոտ վարդեր: Ոտաբոբիկ քայլում և ցավ եք զգում փշերից, որոնք խրվում են ձեր ոտքերի ներբանների մեջ: Ցավոտ ճանապարհ է: Երբ երեխան գալիս է ձեր աշխարհ, նրա համար դա մեծ ցնցում է լինում: Մոր արգանդից դուրս է գալիս անծանոթ աշխարհ: Եվ նրա համար ցնցում են առաջացնում և՛ առաջին շնչառության ցավը, և՛ անծանոթ միջավայրն ու լույսը:

Ճիշտ նույն կերպ, երբ դուք մտնում եք նուրբ աշխարհի հետ շփման մեջ, ցնցում եք ապրում: Դուք սկսում եք ճանաչել ձեր իսկ ձեզ անծանոթ մասը: Եվ այն չափազանց տարբեր է լինում ձեր արտաքին մասից: Բայց դուք առաջ եք գնում՝ անկախ ամեն ինչից: Անկախ ցավից և կորուստներից, որոնք հանդիպում են ձեր ճանապարհին:

Դուք կորցնում եք ձեր նախկին ընկերներին, քանզի նրանց հետ շփվելը ձեզ թվում է բոլորովին դատարկ և իմաստազուրկ:

Կորցնում եք հետաքրքրասիրությունը նախկինում ձեզ գրավող ամեն ինչի նկատմամբ: Դուք աստիճանաբար սկսում եք հասկանալ, որ արտաքին աշխարհն ամբողջովին օտար է դառնում ձեզ համար: Ձեր թրթիռներն այնքան են տարբերվում շրջակա աշխարհից, որ դուք կարծես պոկվում եք նրանից: Բայց ձեր էգոն չի հանձնվում: Այն փորձում է գրավել ձեր ուշադրությունը այդ աշխարհի հետ միայն ձեզ հայտնի ինչ-ինչ կապվածություններով, որոնցից դեռ չեք կարողացել ձերբազատվել:

Հաճախ ամոթ է լինում այդ կապվածությունները խոստովանելը: Սակայն դրանք կան, և դրանք կանցնեն: Բավական է միայն, որ ավելի ակտիվ դրսևորեք անկատարությունից հրաժարվելու ձեր ցանկությունը: Եվ ահա կրկին շարունակում եք Ուղով ձեր ընթացքը:

Եվ վարդերի փշերն ավելի ու ավելի ցավոտ են խրվում ձեր ոտնաթաթերի մեջ: Երբեմն ցավն անտանելի է դառնում: Բայց այլևս հնար չկա հետ դառնալու: Դա ցավոտ ճանապարհ է: Նա, ում էգոն ուժեղ է դրսևորված, ուղղակի պատրաստ չէ այդ ճանապարհին: Եվ նա հետ է դառնում:

Նա գերադասում է հաճույքներ ստանալ:

Սակայն ինչքան շատ դիմադրեք, այնքան ցավոտ կլինի վերադարձն Ուղուն:

Իրոք, դա շատ դժվարին ճանապարհ է: Ուղի, որի վրա սփռված են վարդեր և փշեր: Բայց ես այլ ուղի չգիտեմ: Դա զոհողության ուղին է, որի յուրաքանչյուր քայլը ջանքեր է պահանջում: Բայց այլ ուղի չկա:

Եվ այսպես, առաջին քայլը ինքնահաղթահարման ցանկությունն է:

Եթե այդ որոշումն արդեն կայացրել եք, ապա միշտ ձեր կողքին կհայտնվի մեկը, որը կօգնի ձեզ առաջ ընթանալ, կտա անհրաժեշտ գիտելիքն ու ըմբռնումը: Բայց հետո դուք պետք է ինքնուրույն գնաք: Առանց վկաների: Գալիս է պահը, երբ մենամենակ եք մնում ձեր էգոյի և ինքներդ ձեզ հետ: Եվ սկսվում է պայքարը: Դա կյանքի ու մահվան պայքար է: Ձեր իրական և անիրական մասերից յուրաքանչյուրն ապացուցում է ձեր իսկ մյուս մասին իր գոյության իրավունքը:

Եվ այդ վիճակը շատ հեռու է հանգստի, խաղաղվածության և հարմարավետության վիճակներից: Հենց այդ է պատճառը, որ շատերը շեղվում են Ուղուց՝ փնտրելով խմբեր, հոսանքներ և աղանդներ, որոնք տալիս են թվացյալ խաղաղվածություն, շինծու սեր և ցուցադրական հոգածություն:

Եվ շատերը խույս են տալիս սփռված վարդերով արահետից՝ գնալով փափուկ գորգերի վրայով: Անցնում են տասնյակ ու հարյուրավոր վերամարմնավորումներ, մինչև որ նրանք վերադառնում են ձեռնադրման Ուղուն: Աստված նրանց չի շտապեցնում: Մշտապես կա Ուղուն վերադառնալու հնար: Բայց երբեմն ձեր իսկ բարձր մասի կողմից շատ նշանակալից ակնարկ է պահանջվում, որպեսզի մարդը մտորի և վերադառնա Ուղուն:

Երբ գալիս է ձեր անիրական մասի հետ ձեր կռիվ տալու պահը, ապա դա իսկապես ճակատամարտի է նմանվում: Ձեր բոլոր մարմինները վերքեր են ստանում: Դուք ինքնեռդ եք ձեզ վերք հասցնում: Ձեր անիրական մասը չի հասկանում, թե ինչ է կատարվում: Ձեզ կարող է թվալ, թե ցնորվում եք, որ անբուժելի հիվանդ եք: Իրապես դա Հոգու մութ գիշերն է: Դա փորձություն է անապատում: Եվ այն երկար է տևում: Ամեն ինչ կախված է ձեր էգոյի դիմադրության աստիճանից: Բայց երբ հաղթահարում եք ձեր էգոն, հաղթում եք ձեր իսկ անիրական մասի շեմի պահակին, ապա այլ մարդ եք դառնում: Ճիշտ է, դուք շարունակում եք մարդկային մարմին կրել, շարունակում եք մնալ ֆիզիկական ոլորտում, բայց ձեր մեծագույն մասն արդեն գտնվում է այլ իրականության մեջ: Դուք դառնում եք երկու աշխարհների քաղաքացի՝ միաժամանակ գտնվելով վերևում և ներքևում:

Դուք այն կետն եք դառնում, որտեղ հանդիպում են աշխարհները: Բայց դրանով ձեր Ուղու ընթացքը չի ավարտվում, այլ նոր է սկսվում: Որովհետև դուք վերածվում եք աշխարհի առանցքի: Ձեր մեջ, ձեր միջով անցնում է առանցք՝ ձող, որը կապ է պահպանում աշխարհների միջև: Դուք վերածվում եք կապուղու, որի միջով Լույսը թափանցում է ձեր մութ աշխարհը:

Եվ, իհարկե, ինչպես ամեն առանցք, դուք ձեզ վրա զգում եք մեծագույն լարվածություն: Այնպիսի զգացողություն եք ունենում, թե այն Տիտանն եք, որն իր ուսերին կրում է աշխարհը: Հավերժական ինքնահաղթահարում, մշտական հրաժարում սեփական անիրական մասից: Նորանոր

ձեռնադրումներ: Մշտական լարվածություն: Միայն այսպես եք դուք աճում: Եվ դա հենց այն է, ինչ Աստված ձեզնից ուզում է:

Այլ ուղի չկա:

Եվ եթե դուք պատրաստ եք ձեռնադրման այդ Ուղուն, ապա չափազանց լավ կհասկանաք, թե ինչի մասին է խոսքը: Եթե դուք պատրաստ չեք Ուղուն, ապա այն ամենը, ինչ հենց նոր կարդացիք, ձեզ չի տա որևէ տեղեկատվություն:

Միայն թվում է, թե բոլոր մարդիկ նույնն են: Յուրաքանչյուրը գտնվում է զարգացման իր աստիճանի վրա: Ուղղակի հիմա եկել է այնպիսի պահ, որ մեծաքանակ անհատականությունների համար անհամեմատ ավելի իրական է դարձել, քան տառացիորեն մեկ տարի առաջ էր, Ուղու վրա կանգնելը և նրանով ընթանալը: Հենց էներգիաները, հենց Տիեզերքն ինքն է նպաստում այդ ընթացքին:

Ձեզնից նրանք, ովքեր հասկանում են, թե ինչի մասին է խոսքը, գտեք ժամանակ, առանձնացեք: Մնացեք ինքներդ ձեզ հետ: Խորասուզվեք ձեր սրտում, և հարցրեք ձեզ՝ պատրա՞ստ եք Ուղով ընթանալուն: Եվ եթե ձեր սիրտը հուշի ձեզ, որ պատրաստ եք, ապա ընթացե՛ք: Բայց ամեն օր արթնանալուց հետո և ամեն երեկո տեղում պառկելուց առաջ հիշեք ձեր ընդունած որոշման մասին: Եվ շարունակեք ընթանալ, ինչքան էլ փշերը ցավոտ խրվեն ձեր ոտնաթաթերի մեջ, և ինչ էլ որ ձեզ հետ կատարվի արտաքին աշխարհում: Ոչնչից մի՛ վախեցեք: Ո՛չ վիրավորանքները, ո՛չ կորուստները, ո՛չ այս աշխարհի տհաճությունները չեն կարող վնաս պատճառել ձեր այն մասին, որն անմահ է:

ԵՍ ԵՄ ՈՐ ԵՄ, միշտ ձեզ հետ եմ
ձեր Ճանապարհին

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆ

6 մարտի, 2005 թ.

ՄԵՆՔ ԲՈԼՈՐՍ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԵՆՔ ԵՎ ՆՈՒՅՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆ ՈՒՆԵՆՔ

ԵՍ ԵՄ Բոցը, հավերժական Բոցը, անտրոհելի Բոցը, հավերժության, անտրոհելիության և անսահմանության մեջ գտնվող միասնական Բոցը:

ԵՍ ԵՄ հոսքը Լույսի և Հրի:

Բոց...

Հուր...

Մահկանացու գիտակցությունը չի կարող ինձ ընկալել: Բայց կարող է զգալ իմ թրթիռները, իմ Ոգին, իմ Հուրը:

Փայլատակող անսահմանություն... Հավերժություն...

Գեղեցկություն: Համաչափություն: Երանություն: Բերկրանք: Ներդաշնակություն:

Տիեզերքի արարումը ենթակա է Իմ Օրենքին: Եվ այն ամենը, ինչ ասում եմ, հինավուրց Ճշմարտություն է, որը միշտ փորձել է գիտակցել մարդկությունը, որին միշտ ձգտել են լավագույն մարդկային մտածողները:

Ես հորինում եմ աշխարհներ և իրականացնում եմ հորինածս: Ես արարում եմ իմ Կամքի և Հրի միջոցով: Աստիճանաբար մանրամասնելով արարումը՝ Ես վստահում եմ Իմ իրավասություններն Իմ Աշխարհը բնակեցնող հոգևոր Էակներին: Ես առկա եմ այդ հոգևոր Էակներից յուրաքանչյուրում, բայց միաժամանակ նրանցից յուրաքանչյուրն օժտված է սեփական անհատականությամբ, սեփական ստեղծագործական և ինքնազարգացման կարողությամբ: Բոլոր էակներն իրենց հիմքում ունեն Իմ Հուրը: Մենք բոլորս միասնական ենք Իմ գիտակցության մակարդակում:

Բայց տիեզերքի տարրալուծմանը զուգընթաց տեղի է ունենում խտացում և բաժանում: Ինչքան ցածր են երևացող աշխարհի թրթիռները, այնքան մեծ է իմ մասերի միջև եղած մեկուսացվածությունն ու տարբաժանվածությունը:

Ես թույլատրում եմ այդ մեկուսացվածությունը, որովհետև դրա շնորհիվ ձգտում եմ ճանաչել Ինձ:

Տիեզերքը նման է մարդկային օրգանիզմի: Ամեն մի գալակտիկա կամ գալակտիկաների խումբ կարելի է նմանեցնել մարդկային օրգանիզմի համակարգերին և մասերին:

Այդ բոլորը կազմում են Իմ մարմինը ճիշտ այնպես, ինչպես ձեր օրգաններն ու համակարգերն են կազմում ձեր մարմինը: Մենք նման ենք:

Եվ ճիշտ այնպես, ինչպես ձեզ համար դժվար է հասկանալ Լինելիության բարձր ոլորտների գոյությունը, այնպես էլ Ինձ համար ծանր է գիտակցել ձեր թանձր աշխարհի խնդիրները:

Տիեզերքի ղեկավարման համար գոյություն ունի զարգացման տարբեր մակարդակների վրա

գտնվող գիտակից էակների մի ամբողջ հիերարխիա: Եվ այդ հիերարխիան ձգվում է Ինձնից մինչև այս աշխարհի մատերիական ամենամանրագույն մասնիկը:

Մենք բոլորս ենթարկվում ենք այս տիեզերքի միասնական Օրենքին:

Եվ ինչքան բարձր է այդ հիերարխիայում գտնվող հոգևոր էակի մակարդակը, այնքան նա ավելի փոքր ազատության է տիրապետում: Ըստ այդմ՝ համարյա անսահմանափակ ազատությամբ օժտված մարդու համար նախասահմանված է, որ նա ժամանակի ընթացքում պետք է հրաժարվի այդ ազատությունից՝ փոխարենն ստանալով ավելի մեծ լիազորություններ, ավելի մեծ իշխանություն: Ավելի մեծ հզորություն:

Այն աստիճանները, որոնք այս տիեզերքում զբաղեցնում են գիտակից էակները, ուղղակիորեն կախված են այդ էակների գիտակցության մակարդակից: Մարդը, մասնավորապես երկրային մարդկությունը, տեղ է զբաղեցնում բուրգի ստորոտի մոտ: Նա մշտապես հոգածության ու խնամքի կարիք է զգում այն էակների կողմից, որոնք հասել են զարգացման ավելի բարձր աստիճանի:

Այդ գործընթացը կարելի է համեմատել դպրոցի կամ մանկապարտեզի երեխաների դաստիարակության գործընթացի հետ: Գալիս են տարբեր դասատուներ և ուսուցանում են: Եվ այդ դասատուները կարող են գալ ինչպես դրսից՝ օտար մարդու տեսքով, այնպես էլ հայտնվել ձեր ներսում:

Եթե ձեր թրթռումների մակարդակին համապատասխանող նվաճումների մակարդակը թույլ է տալիս, ապա ձեր մարմնավոր տաճարում կարող են ներկա գտնվել մեկ կամ մի քանի Լույսի Էակներ: Դուք պարզապես ստանում եք Աստծո լրացուցիչ էներգիա՝ ուժեղացված Լույսի հոսք: Արտաքնապես ձեր ներսում եղած այդ էակների ներկայությունը ոչ մի կերպ չի արտահայտվում: Բայց յուրաքանչյուր մարդ, ում ներսում ներկա են այդ էակները, տեղյակ է այդ մասին: Նա գիտի, թե Լույսի Էակներից որն է իր ներսում ներկա:

Լրացուցիչ լույսը ձեր ֆիզիկական աշխարհի տեսակետից որևէ առավելություն չի տալիս: Թրթռանքների տարբերությունն ու ձեր աշխարհի մեծ խտությունը հանգեցնում են այն բանին, որ լրացուցիչ լույսի առկայությունը երկրային տրամաբանության տեսանկյունից կործանում է ձեր կյանքը: Կործանվում են սովորական կապերը, կորսվում է աշխատանքը, չի դիմանում ֆիզիկական տաճարը, և ի հայտ են գալիս ինչ-որ հիվանդությունների արտաքին նշաններ:

Սակայն այդ Լույսի Էակների ներկայությունն անհրաժեշտ է, և յուրաքանչյուր կամավոր, ով թույլատրում է իր ներսում այդ Լույսի Էակների գոյությունը, անում է դա իր ազատ կամքով՝ զոհաբերելով արտաքին ֆիզիկական նվաճումներն ու առավելություն տալով ավելի նուրբ աշխարհների նվաճումների տիրապետմանը:

Այդ Լույսի Էակների ներկայությունը տալիս է գիտակցության ընդլայնում, նուրբ աշխարհի էներգիաներին տիրապետելու ունակություն, որոնք հայտնի են որպես Սուրբ Հոգու շնորհներ:

Կա շատ նուրբ եզրաշերտ, որը բաժանում է մարդկանց, որոնք տրամադրել են իրենց տաճարները Լույսին ծառայելուն, այն մարդկանցից, որոնք տրամադրում են իրենց տաճարները ստորակարգ ոգիներին և մարմնազրկված էություններին: Ցավոք, ներկայումս մարդկության մեծ մասը՝ 90 տոկոսը, իրենց տաճարները տրամադրում են ստորակարգ ոգիներին՝ չհոգալով և չանհանգստանալով ազատ կամքի նման վարքագծի հետևանքների մասին:

Եվ այդ մարդիկ, որոնք տրամադրում են իրենց տաճարները խավարի ստորակարգ ոգիներին, կարող են տիրանալ ճիշտ նույնպիսի շնորհների՝ ինչ նրանք, ովքեր տրամադրել են իրենց տաճարները լուսավոր ոգիներին: Նրանք էլ կարող են բժշկել, կանխատեսել ապագան, ուղերձներ ընդունել: Սակայն կա և տարբերություն: Լույսին ծառայելու նպատակով իր ստորին մարմինը զոհաբերած մարդն իր շնորհները չի օգտագործի այս աշխարհին պատկանող երևելի իրեր և նշաններ ձեռք բերելու համար, լինի դա փող, իշխանություն, ազդեցիկություն, թե հեղինակություն: Այս աշխարհում շատ են մարդկանց անիրական մասի դրսևորումները:

Հենց դա է շփոթություն ծնում: Մարդիկ տեսնում են հրաշքներ, տեսնում են բժշկումներ, և իրենց մարդկային գիտակցությամբ չեն կարողանում զանազանել խավարի ներկայացուցիչներին Լույսի ներկայացուցիչներից:

Իսկ չափանիշը միայն մեկը կարող է լինել՝ ներքին իմացությունն ու ներըմբռնումը:

Տեսեք՝ վարվո՞ւմ է արդյոք մարդն ինքը այնպես, ինչպես սովորեցնում է: Սովորեցնում է ներել. իսկ արդյոք ներո՞ւմ է հենց ինքը:

Ուսուցանում է հրաժարվել շնացման մեղքից. իսկ այդպե՞ս է վարվում ինքը: Թույլ չի՞ տալիս արդյոք սեռական էներգիայի աղավաղումներ: Քարոզում է Աստծո Սեր, անշահախնդրություն. իսկ ի՞նչ ունի հենց ինքը: Չի՞ ապրում արդյոք նա ճոխության մեջ: Ինչո՞վ է սնվում:

Զննեցե՛ք, դիտեցե՛ք:

Բայց յուրաքանչյուր դրսի մարդ ձեզ որպես ուսուցիչ պետք է այնքան ժամանակ, քանի դեռ չեք հասել ճանապարհի այն հատվածին, որից հետո ձեզնից դուրս եղած ֆիզիկական ոլորտում ձեզ պետք չէ ունենալ որևէ ուսուցիչ:

Արդեն դուք կկարողանաք հանդիպել յուրաքանչյուր Լույսի Էակի հետ, որի մակարդակին կհասնեք ձեր գիտակցության մեջ: Կկարողանաք ուղղակիորեն այդ Լույսի Էակներից գիտելիքներ ստանալ: Եվ ժամանակի ընթացքում ձեր թրթիռներն այնքան կհամընկնեն այդ Լույսի Էակների թրթիռների հետ, որ նրանց թույլ կտաք մշտապես

ներկա գտնվել ձեր ներսում: Դուք նրանց լրիվ հայեցողությանը կհանձնեք ձեր մարմնական տաճարն ու բոլոր ստորին մարմինները: Եվ այստեղ չկա որևէ վատ բան, որը չի համապատասխանում բարձրագույն Օրենքին: Քանզի մենք բոլորս միասնական ենք և ունենք միևնույն Սկզբնաղբյուրը: Այսպիսի բաժանվածությունը հատուկ է միայն ձեր աշխարհին: Ավելի նուրբ աշխարհներում Միասնությունն ավելի ու ավելի է զգացվում՝ մատերիայի նրբացմանն ու Հրի, Բոցի հատկությունների ձեռքբերմանը զուգընթաց:

Դուք ինքներդ եք ձեր ազատ կամքով ընտրում, թե ում ծառայեք: Եվ դա որոշվում է ձեր գիտակցության մակարդակով:

Կամավոր հրաժարվեք ձեր միջոցով խավարի ուժերի յուրաքանչյուր դրսևորումից:

Հրաժարվեք այն ամբողջ ուղեբեռից, որը ձեռք եք բերել մոլորակի վրա լինելու միլիոնավոր տարիների ընթացքում: Բարձրացրեք ձեր գիտակցությունը և ձգտեք դեպի Բարձրագույն Աշխարհներ: Ձեր գիտակցության աճին զուգընթաց փոփոխություն կկատարվի այդ աշխարհում: Եվ բոլոր նրանք, ովքեր կառչում են հնից, և որոնց ժամկետը սպառվել է, ստիպված կլինեն լքելու ձեր աշխարհը, որին շատ շուտով վիճակված է տիեզերական չափանիշներով վերածվելու չքնաղ ու կատարյալ աշխարհի, իսկ ձեր մոլորակին վիճակված է վերածվելու փայլփլող աստղի:

ԵՍ ԵՄ Ներկայությունը Միասնականի, ձեզ հաջողություն եմ մաղթում Լինելիության անսահմանության ձեր Ճանապարհին

ԱՆՎԵՐԱՊԱՀ ՍԻՐՈ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆ

7 մարտի, 2005 թ.

ԲԱՑԵՔ ՁԵՐ ՍՐՏԵՐՆ ԱՍՏԾՈ ՍԻՐՈ ԱՌԱՋ, ԵՎ ԴՈՒՔ ԿՓՈԽԵՔ ԱՇԽԱՐՀԸ

ԵՍ ԵՄ Ներկայությունն Անվերապահ Սիրո՝ քո տաճարի ներսում: Աստծո Սիրո հատկանիշը գլխավորն ու գերակշռողն է քեզանում:

Մենք քեզ ընտրել ենք որպես մեր Դեսպանորդ հատկապես քո սրտում Սիրո այդ հատկանիշի գերակշռման պատճառով: Չափազանց մեծ է քո աշխարհում հակասիրո ճնշիչ ազդեցությունը: Մենք տխուր ենք դրա համար:

Բոլոր աստվածային հատկանիշների մեջ Սիրո հատկանիշն ամենամեծն է: Ձգտումը դեպի սերը, սիրելու և սիրված լինելու ցանկությունը հատուկ է բոլոր կենդանի էակներին: Եվ հենց հինավուրց Լեմուրիայի և Ատլանտիդայի ժամանակներում ազատ կամքի չարաշահմամբ Աստծո Օրենքի խախտման պատճառով հատկապես այդ հատկանիշի մեջ են ներարկվել ամենամեծ աղավաղումները:

Եթե մեզ հաջողվեր մարմնավորված վիճակում գտնվող ընդամենը մի քանի մարդկանց հոգիներում լիակատար ձևով վերականգնել այդ հատկանիշը, ապա այն մենք շատ արագ կտարածեինք ամբողջ աշխարհում: Դա մի հատկանիշ է, որին հնարավոր չէ դիմագրավել:

Դա այն է, ինչը տալիս է ակնթարթային համալարում Աստծո Իրականության հետ:

Շատ հաճախ այդ հատկանիշը խառնում են սեռական բնազդի հետ: Այստեղից էլ առաջանում են ամեն տեսակի սեռական այլասերումները:

Մարդու ստեղծագործական ընդունակությունն ի հայտ է գալիս Սիրո միջոցով ստեղծարար ուժի արտահայտմամբ: Եվ այն նույն ստեղծարար ուժը, որը մասնակցություն է ունենում երեխաների սաղմնավորման ժամանակ, ընկած է այն ամենի հիմքում, ինչ մարդն արարում է իր կյանքի ընթացքում:

Մարդն իր հիմքով նման է Աստծուն: Իսկ Աստծո հիմնական հատկանիշը Սերն է: Ըստ այդմ՝ մարդը չի կարող չարարել:

Եվ ստեղծարար ուժն ի հայտ է գալիս ուղիղ այնքանով, որքանով չի սահմանափակվում հակասիրո պատնեշներով, որոնք դրսից ներարկվում են մարդու գիտակցության մեջ, իսկ ներսում սատարվում են նրա անկատար գիտակցությամբ:

Սիրո Կատարյալ Բոցը ներթափանցում է աշխարհ ձեր ԵՍ ԵՄ Ներկայության միջոցով: Բայց Սիրո հոսքի այդ ուղու դեմ կանգնում են ձեր անկատար մտքերի և հույզերի զտիչները: Եվ հոսքն աղավաղվում է: Դուք Աստծո Սիրո հատկանիշը դրսևորում եք մշտապես: Դուք չեք կարող չդրսևորել այն, քանի որ դա հատուկ է ամբողջ Արարչությանը: Բայց հարկ է, որ մաքրեք ձեր գիտակցության, Աստծո Իրականության ձեր ընկալման զտիչները:

Բացեք ձեր սրտերը Սիրո՝ Աստծո Սիրո առաջ, և դուք կփոխեք աշխարհը: Չկա որևէ ուժ այս աշխարհում, որ ավելի հզոր լինի, քան Սերը:

Դրա համար էլ այն ուժերը, որոնք իրենք իրենց Աստծուց առանձնացնելու որոշում են կայացրել, ամենից առաջ մակաբուծվում են Աստծո Սիրո հատկանիշի աղավաղումների վրա: Սեքսի ամբողջ ինդուստրիան, պոռնոգրաֆիան, սեռերի փոխհարաբերությունների կարծրատիպերը, որոնք քարոզվում և լայնորեն տարածվում են տեղեկատվության զանգվածային միջոցներով, նպատակաուղղված են հատկապես այն բանին, որ հետ պահեն ձեզ Աստծո Սիրո դրսևորումից:

Անվնաս բան է թվում, երբ դուք ֆիլմ եք դիտում, որն աճեցնում է սեռական բնազդին հագուրդ տալու ձեր ձգտումը: Անվնաս բան է թվում կնոջ մերկ մարմնին ցուցադրելը, ինչն օգտագործվում է ձեր հոգևոր առաջընթացին որևէ կերպ չնպաստող առարկաների գովազդման ընթացքում:

Բայց ձեր գիտակցության մեջ բույն է դնում Աստծո Սիրո նկատմամբ ատելությունը: Դուք կամավոր կերպով ամրացնում եք այդ զտիչները, որոնք պարփակվում են ձեր գիտակցության մեջ և խանգարում ձեզ ձեր կյանքում դրսևորելու իսկական Սիրո հատկանիշը:

Այնքան մեծ տարբերություն է գոյացել նախասկզբնական Աստծո Սիրո դրսևորման և սիրո այն ընկալման միջև, որը սկզբնավորվել է կործանված քաղաքակրթությունների ժամանակներից, որ նույնիսկ դժվար է դրանք իրար հետ համեմատելը:

Դրանք տարբեր են, ինչպես կյանքն ու մահը:

Սրբերի հատկություններից մեկը իրենց սրտում Աստծո Բարիքի նեկտարն ընդունելու կարողությունն է: Ֆիզիկական աշխարհում չկա որևէ հաճույք, որ կարելի լինի համեմատել Տիրոջ Բարիքի ստացման հետ: Միայն մաքուր սրտերն են ունակ ստանալու այդ Բարիքը:

Աստծո էներգիայի՝ Աստծո Սիրո հոսքն անցնում է մեր բոլոր մարմիններով՝ մեզ գուրգուրելով: Դուք երանություն եք զգում յուրաքանչյուր չակրայում, յուրաքանչյուր էներգետիկական կենտրոնում:

Ամենաամբողջական սեռական բավարարվածությունը, որը դուք կարող եք ստանալ ֆիզիկական աշխարհում, հնարավոր չէ համեմատել Աստծո կողմից առաքված Բարիքի հետ:

Մտորե՛ք՝ արդյո՞ք այդքան անվնաս է ձեզ համար, երբ դիտում եք պոռնոգրաֆիական ֆիլմեր, հանդուրժում հայհոյախոսություն, ներկա գտնվում այնպիսի մարդկանց միջավայրում, որոնք կեղտոտ մտքեր ու արարքներ են թույլ տալիս կանանց և սեռերի փոխհարաբերության նկատմամբ:

Յուրաքանչյուր այդպիսի բացասական թրթիռ նպաստում է Աստծո Սիրո հատկանիշից ձեր հեռացմանը:

Մտահայե՛ք ծաղիկները, բնությունը, երեխաների ժպիտը: Մշտապես պաշտպանեցե՛ք ձեր սերը հակասիրո բոլոր դրսևորումներից: Պաշտպանեցե՛ք ձեր մերձավորներին, ձեր երեխաներին: Սիրո այն պատկերացումից, որը կստանա նոր սերունդը, կախված է ձեր մոլորակի ապագան:

Իսկական Սերը սկսվում է կնոջը, Մորը պաշտելուց: Եվ այն զգացմունքները, որ տածում եք ձեր Մոր նկատմամբ, կարող են հետք թողնել ձեր ամբողջ կյանքի վրա:

Առավել երջանիկ են այն ընտանիքները, որտեղ ավանդույթ է դարձել հարգանքը Մոր՝ օջախի պահապանի նկատմամբ:

Թող երբեք ձեր գիտակցությունը չծանրաբեռնվի Մոր նկատմամբ, կանացի նախասկզբի նկատմամբ անորակ մտքերով:

Դուք բոլորդ մայրեր եք ձեր աշխարհում: Եվ տղամարդիկ, և՛ կանայք: Դուք մարմնավորվել եք, որպեսզի ձեռք բերեք Աստվածամոր հատկանիշը: Ուստի կնոջ, Մոր նկատմամբ ճիշտ վերաբերմունքը Աստվածամոր հատկանիշի բարեհաջող ձեռքբերման երաշխիքը կդառնա: Եվ առանց այդ ձեռքբերման դուք չեք կարող ըմբռնել Հորը և Որդուն:

Ես մաղթում եմ ձեզ Աստծո Սիրո հատկանիշի ձեռքբերում ձեր ներկայիս մարմնավորման ընթացքում:

ԵՍ ԵՄ Ամվերապահ Սիրո Ներկայությունը,
գուրգուրում եմ ձեզ
իմ Սիրո Ճառագայթներով

ՊԱՇՏԵԼԻ ԱԼՖԱ

8 մարտի, 2005 թիվ

ԵԿԵԼ Է ՀԱՅՐԱԿԱՆ ՏՈՒՆ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Իմ պաշտելի՛ զավակներ, ԵՍ ԵՄ Ալֆան: Ես հաղթահարել եմ հսկայական տարածություն՝ ոչ ֆիզիկական, այլ սույն Դեսպանորդի գիտակցության մեջ եղած տարածությունը, որպեսզի հիմա հնարավորություն ունենամ խոսելու ձեզ հետ:

Երկրի զավակնե՛ր, մոտեցել է տիեզերական հնարավորության այն ժամանակը, որի մասին վերջին մի քանի հազար երկրային տարիների ընթացքում դուք լսում էիք դեսպանորդների և մարգարեների շուրթերից: Սա ուղղակի և անմիջական շփման ժամանակն է, երբ ձեր զգայարաններն այլևս չեն սահմանափակի Աստծո Իրականության ձեր ընկալումը:

Սա գիտակցության նոր, ավելի նուրբ մակարդակի անցման ժամանակն է:

Համաձայնե՛ք, որ ձեր զգայարանների և ձեր գիտակցության հնարավորությունները չափազանց սահմանափակ են:

Դուք բռնված եք ձեր սահմանափակ գիտակցության թակարդում, որի մեջ ընկնելն ինքներդ եք ընտրել: Դուք կարծում էիք, որ կլինեք ձեր ճակատագրի, ձեր մոլորակի տերը: Դուք ցանկացաք լինել աստվածների նման, բայց նախապես սահմանափակեցիք ձեր աշխարհն այս մոլորակի շրջանակներով:

Եվ ճիշտ այնպես, ինչպես գալիս է ճտի՝ ձվից դուրս գալու ժամանակը, այնպես էլ եկել է ձեզ համար տիեզերական հնարավորության ժամանակը, երբ դուք պետք է վերջապես դուրս ելնեք ձեր աշխարհի սահմաններից:

Ինչպե՞ս հասնել դրան: Պե՞տք է արդյոք կառուցել նորանոր, էլ ավելի կատարյալ թռչող սարքեր, ավելի ու ավելի հզոր դիտակներ:

Ո՛չ: Բոլոր հեռավոր աշխարհների և անսահմանության նվաճումները, որոնց մասին նախանշում էին անցյալի մարգարեներն ու դեսպանորդները, գտնվում են ձեր ներսում:

Դուք ստեղծված եք ըստ Աստծո պատկերի և նմանության, հետևաբար ձեր արարչության մեջ ձեզ համար չկա ոչ մի անհնարին բան:

Արարե՛ք: Ստեղծագործե՛ք: Զգտե՛ք:

Փնտրե՛ք և կարգավորե՛ք:

Փնտրեք ո՛չ ձեզ շրջապատող արտաքին աշխարհում: Փնտրեք ձեր սրտի խորքում:

Ունկնդրե՛ք սրտի ձայնին: Երբեք չի կտրվել աշխարհի ամենաամուր այդ կապը ձեր էության և Իմ՝ ձեր Հոր միջև: Պարզապես, ինչպես բոլոր անցումային շրջան ապրող երեխաներին, ձեզ հատուկ էր ինքնավստահությունը. դուք ուզեցիք փորձել ինքներդ ձեզ: Փորձարկել ձեզ: Ես չընդդիմացա: Դուք ձեր մարմինների և ձեր աշխարհի հետ արեցիք այն ամենը, ինչ ուզեցիք:

Բայց եկավ սահմանը, վերջացավ այն ժամանակը, որը տրվել էր ձեզ փորձարարության համար: Եվ արդեն ժամանակն է վերադառնալու Տուն՝ Հոր մոտ:

Բայց շատերը չեն վերադառնա: Որովհետև հույսեր կապեցին, չափազանց շա՛տ հույսեր կապեցին պինդ մկանի հետ, երերուն պատրանքի հետ, որ շրջապատում էր ձեզ պատրանքային աշխարհում:

Դուք ստեղծեցիք այդ պատրանքը ձեր գիտակցության միջոցով՝ օգտագործելով իմ էներգիան: Եվ հենց ինքներդ խրվեցիք այդ պատրանքի մեջ:

Եվ ինչպես երեխաներն են դժվարության հանդիպելու դեպքում օգնություն փնտրում և օգնության խնդրանքով դիմում իրենց ծնողներին, ճիշտ նույն կերպ դուք էլ հիմա օգնության խնդրանքով պետք է դիմեք ինձ՝ ձեր Երկնավոր Հորը:

Եկել է բոլորապտույտի շրջադարձի պահը, երբ պատրանքի տարածմանը գալիս է փոխարինելու տիեզերական պիեսի հաջորդ փուլը՝ երևակված աշխարհների հավաքումը:

Հնարավոր է՝ դուք ծանոթ եք աշխարհի կառուցվածքի որոշ արևելյան համակարգերի:

Միասնականի շնչառություն: Բրահմայի արտաշնչում: Բրահմայի ներշնչում: Տիեզերքի սփռում և նրա հետհավաքում:

Դա միաժամանակյա գործընթաց չէ. հենց միայն շրջադարձի կետը տևում է մի քանի միլիոն տարի և, կախված աշխարհի մատերիականու-

թյան աստիճանից, այդ տևողությունը տարբեր է աշխարհների տարբեր համակարգերի համար:

Ձեզ համար այժմ կարևոր է հասկանալ, որ վերջացել է պատրանքի բազմապատկման ժամանակը, և վրա է հասել պատրանքի կրճատման ժամանակը:

Երկրային չափանիշներով դա շատ ժամանակ կզբաղեցնի: Բայց այդ գործընթացն արդեն սկսվել է: Ուզում են դա որոշ անհնազանդ երեխաներ, թե ոչ: Պատրանքը պետք է կրճատվի: Գիտակցությունը պետք է փոխվի:

Եվ այն ամենը, ինչը կհամառի, կդիմադրի Օրենքին, կուղարկվի տիեզերական վառարանում վերահալեցման, ինչպես անցած տարվա խոտը կամ ծղոտն են վառում:

Երբ երեխաները հասակ են առնում, նրանք հեռանում են հայրական տնից: Կյանք են մտնում, կառուցում, դասավորում իրենց կյանքը, նորանոր փորձեր են անում: Ցավոք, թափառելով կյանքի ճանապարհներով, ոչ բոլորն են ի վերջո վերադառնում հայրական տուն: Ես հիմա ձեզ Տուն եմ կանչում: Ես դիմում եմ իմ բոլոր ուստրերին ու դուստրերին: Ես սիրում եմ բոլորիդ՝ անկախ նրանից, թե ինչը ճիշտ չեք արել ձեր այս կամ մյուս կյանքերից որևէ մեկի ընթացքում:

Եկել է Հայրական Տուն վերադառնալու ժամանակը: Ես եկել եմ, որ արթնացնեմ ձեր գիտակցությունը, ձեր հիշողությունը ձեր Սկզբնաղբյուրի մասին:

Ես եկել եմ, որ հիշեցնեմ ձեր առաջին Սիրո մասին:

Վերդարձեք: Լսեք իմ կանչը:

Զգտեք ձեր սրտերում շփվել նուրբ աշխարհների հետ:

Սկսեք ճանաչել ուրիշ իրականություն: Եվ այն կթափանցի ձեր գիտակցության մեջ: Ձեր գիտակցությունը կընդլայնվի և ունակ կդառնա ավելի ու ավելի շատ ընկալելու նուրբ աշխարհները:

Ապա կընկնի փառը ձեր աչքերից, և դուք կտեսնեք Հրեշտակներին ու տարրոգիներին: Դուք կտեսնեք ձեր շուրջ Աստծո Արքայությունը: Արքայությունը, որին դուք ձգտում էիք հասնել ֆիզիկական աշխարհում, կմոտենա ձեզ այն չափով, որքանով ձեր գիտակցության մեջ կհրաժարվեք ֆիզիկական աշխարհից:

Խիզախեք: Զգտեք:

Եվ Ես, Իմ գիրկը լայն բացած, ձեզ կդիմավորեմ Հայրական Տանը:

ԵՍ ԵՄ Ալֆան՝ ձեր Երկնավոր Հայրը,
համբերությամբ ու Սիրով սպասում եմ
ձեր վերադարձին

ՏԵՐ ՍՈՒՐԻԱ

9 մարտի, 2005 թ.

ԵՐԲԵՔ ՉԱՓԱՀԱՍ ՄԻ ԴԱՐՁԵՔ ԱՍՏԾՈ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ



ԵՍ ԵՄ Սուրիան, այսօր եկել եմ Մեծ Կենտրոնական Արևից, որ մեր Դեսպանորդի միջոցով մատուցեմ ձեզ Բանն Աստծո: Համարյա մեկ տարի առաջ պատիվ ունեցա Աստծո Դեսպանորդի պատմուճանը զգել Տատյանայի ուսերին:

Այն ժամանակ նա չէր կարող հավատալ, որ այդ իրադարձությունն իր կյանքում շատ ավելի իրական բնույթ կկրի, քան այն, ինչ իր շուրջ տեղի է ունենում ֆիզիկական ոլորտում:

Դեսպանորդի պատմուճանը հենց այնպես չի տրվում: Դրան պետք է արժանանալ: Եվ այդ արժանիքը միայն մի մարմնավորմամբ չէ, որ ձեռք է բերվում: Պահանջվում է մարմնավորումների մի ամբողջ շարք, որոնց ընթացքում տվյալ անհատականությունը պարտավոր է ապացուցել Աստծո Կամքին իր լրիվ նվիրվածությունը, որպեսզի արժանանա այդ պատմուճանին: Սակայն անցյալի արժանիքներն անպայման պետք է հաստատվեն նաև ընթացիկ մարմնավորման մեջ: Առանց դրա՝ պատմուճանի պարգևումն անհնար է:

Որքան էլ հաջող լինի ձեր ծառայությունն անցյալում, վերջին հաշվով ամեն ինչ որոշվում է ձեր

ներկա նվաճումների աստիճանով: Ահա թե ինչու մենք հատուկ ուշադրություն ենք դարձնում այն անհատականությունների թեստավորմանը, որոնք անցյալում արդեն ունեցել են դեսպանորդի պատմուճան: Մենք ունենք մշտապես մարմնավորված վիճակում գտնվող մի քանի անհատականություններ, որոնք անցյալում արդեն ունեցել են պատմուճան և կարողություն ունեն հաստատելու իրենց դեսպանորդությունը:

Սակայն մարմնավորված այս կամ այն անհատականությանը պատմուճան շնորհելու հարցը որոշվում է ամենաբարձր մակարդակով Մեծ Կենտրոնական Արևի վրա:

Ըստ այդմ՝ խնդրում եմ ձեզ ակնածանքով վերաբերվել Տատյանայի ուսերին գցված Դեսպանորդի պատմուճանին:

Դեսպանորդության հրապարակային հայտարարումից անմիջապես հետո մեր դեսպանորդի հասցեին ասված յուրաքանչյուր անհարգալից արտահայտություն ինքնաբերաբար ձեզ կարմա է ավելացնում ձեր և Աստծո միջև: Իսկ դա կարմայի այն տեսակն է, որն ամենադժվարն է ենթարկվում փոխակերպության: Մենք պաշտպանում ենք մեր դեսպանորդներին, և գիտցեք, որ դուք չեք որոշողը, թե մենք ում ենք նախընտրում:

Երկրի վրա հաստատված այժմյան պայմաններում մենք մեր առջև դնում ենք մեր դեսպանորդների միջև փոխազդեցության դրսևորման խնդիրը: Դուք գիտեք, որ երբ անցյալում մեր երկու դեսպանորդները ֆիզիկական մարմնավորման մեջ հանդիպում և շփվում էին իրար հետ, ապա, որպես կանոն, նրանք մեկը մյուսին չէին ճանաչում որպես դեսպանորդներ և ունակ չէին լինում իրար հետ համապատասխան փոխազդեցության մեջ մտնելու: Դա որոշվում էր դեսպանորդների գիտակցության մակարդակով և չէր կարող հաղթահարվել ընդհուպ մինչև տիեզերական հնարավորության նոր փուլի սկիզբը:

Պաշտելի Սանատ Կումարան այս դեսպանորդի միջոցով ձեզ արդեն տեղեկացրել է, որ ժամանակը փոխվել է: Այն իսկապես փոխվել է: Ահա մտնում ենք մի նոր փուլ, երբ մեր երկու և ավելի դեսպանորդներն ունակ կլինեն ճանաչելու իրար և համատեղ աշխատելու:

Այստեղ դժվարությունն այն է, որ Աստծո միևնույն Ճշմարտությունը տարբեր ձևերով է բեկվում մարմնավորված մարդկանց գլուխներում՝ կախված աշխարհընկալման այն համակարգից, որն, ընթացիկ մարմնավորման սկզբից սկսած, ազդում է անհատականությունների գիտակցության վրա:

Հատկապես հենց դա՛ է դժվարությունը՝ փոխըմբռնման և շփման կետեր գտնել կարծես թե Աստծո նկատմամբ իրարից բոլորովին տարբեր հայացքների միջև, որոնք դրսևորվում են տարբեր անհատականությունների արտաքին գիտակցությամբ:

Սակայն երբ դուք աճում եք ձեր գիտակցությամբ՝ անցում կատարելով գիտակցության ավելի բարձր մակարդակի, ապա տեսնում եք, որ այն, ինչը ձեր արտաքին գիտակցության համար թվում էր անհաղթահարելի հակասություն, իրականում միևնույն Ճշմարտությանը մի այլ կողմից մոտենալու արդյունք է:

Հավատացե՛ք ինձ, հարկ չկա շատ պնդել այս կամ այն Ճշմարտության՝ ձեր սահմանափակ գիտակցությամբ արված ցանկացած ըմբռնման վրա: Ձեր գիտակցությունն այնքան անկատար է, որ ուղղակի հիմարություն է ձեր ճշմարտությունը որպես միակ ճիշտն ու անմեղսելին հռչակելը: Դա նման է երկուսի վեճին, որոնցից մեկը պնդում է, թե Երկիրը լողում է երեք կետաձկան վրա, իսկ մյուսը՝ թե Երկիրը նստած է երեք փղի վրա:

Հիմա ձեզ համար նույնիսկ ծիծաղելի է թվում այդ վեճը: Սակայն կրոնական բախումների և կռիվների մեծ մասն իրենց հիմքում ունեցել են նմանատիպ դրդապատճառներ:

Դուք Աստծո Իմաստության օվկիանոսի ափին նստած մանուկներ եք և փորձում եքձեր մանկական հարցախույզ մտքով ճանաչել այդ Իմաստությունը: Մշտապես պահպանե՛ք մանկական գիտակցության վիճակը: Երբեք չափահաս մի՛ դարձեք Աստծո Ճշմարտության իմացության հարցում:

Իրապես եղե՛ք ինչպես մանուկներ, և դուք կկարողանաք հասնել ձեր գիտակցության մեջ այնպիսի բարձունքների, որոնք անմատչելի են եղել մարդկանց նախորդ սերունդների համար:

Ես տեսնում եմ Երկիրն իմ հոգևոր մտասևեռման մեջ: Եվ ես ավելի ու ավելի մեծ անդունդ եմ տեսնում, որն այն մարդկանց գիտակցությունը, որոնք տեղ են տալիս Աստծո Ճշմարտությանն իրենց սրտերում, բաժանում է այն մարդկանց գիտակցությունից, որոնք համառում են Ճշմարտության իրենց ըմբռնման մեջ, ինչը նրանց ճիշտ է թվում միայն այն պատճառով, որ դա ժառանգություն է մնացել իրենց նախնիների հավատից: Բայց ձեր մեջ կան նաև այնպիսիք, որոնք այնպես են անշարժացել իրենց զարգացման մեջ, որ առօրեական կյանքում այլևս դադարել են հիշել Աստծո անունը:

Մենք պատրաստ ենք Երկրի մարդկությանը ցուցաբերելու ամբողջ հնարավոր օգնությունը, մենք պատրաստ ենք այդ օգնության ցուցաբերման համար օգտագործել Երկնքի ամբողջ զորությունը, բայց մենք չենք կարող այդ օգնությունը ցուցաբերել, քանի դեռ դուք այն չեք խնդրել:

Ի՞նչն է խանգարում, որ անկեղծորեն ձեր սրտերում օգնության համար դիմեք ձեր Երկնավոր Հորը: Իսկապես, ի՞նչն է խանգարում...

Ասե՛մ, թե ինչն է խանգարում: Ձեզ խանգարում է այն կարման, որն ընկած է ձեր և Աստծո միջև: Եվ ձեր առաջին գործն այն պետք է լինի, որ ի սրտե ցանկանաք հաղթահարել այդ կարման:

Աստված ի զորու է ամեն ինչի. բայց ինչո՞ւ դուք չեք ցանկանում ստանալ Նրա օգնությունը:

Դուք մոռացության եք մատնել ձեր Սկզբնաղբյուրը. մոռացել եք, թե որտեղից եք եկել:

Մի՛ նեղացրեք մեր դեսպանորդներին, որոնք գալիս են այդ մասին ձեզ հիշեցնելու: Միշտ հիշեք, որ անհարգալից վերաբերմունքն Աստծո դեսպանորդի նկատմամբ անհարգալից վերաբերմունք է հենց Աստծո նկատմամբ: Իսկ դա ծանր մեղք է, որի քավումը հսկայական տառապանք է պահանջում:

Ինձ համար ցավալի է տեսնել այն տառապանքները, որ ստիպված են կրել Երկրի մարդիկ:

Եվ ես կուզենայի հնարավորինս ավելի մեծ թվով տառապողների հասկացնել, որ իրենց տառապանքները հենց իրենք են ծնել, և ասել, որ կարող են ազատվել այդ տառապանքներից տառացիորեն ինչպես կախարդական փայտիկի մի շարժումով: Դուք պարզապես ի սրտե պետք է ընդունեք Աստծուն: Պետք է բացեք ձեր սրտերն Աստծո Ճշմարտության առջև և դրա իմացության գործում նմանվեք օվկիանոսի ափին նստած մանուկների:

Ես ձեզ մենակ եմ թողնում Աստծո և նրա դեսպանորդների վերաբերյալ ձեր սրտերում ընթացող խոկումներում: Նաև խնդրում եմ ձեզ նկատի ունենալ, որ ձեզնից յուրաքանչյուրը կարող է դառնալ իմ դեսպանորդը: Դեսպանորդությունը պարզապես նվաճումների որոշակի պաշար է, որը ձեռք է բերվում Աստծո Ճշմարտությանն անկեղծորեն ծառայելու ճանապարհով:

Այժմ ես ուզում եմ, որ դուք բացեք ձեր սրտերը և ցանկություն հայտնեք ազատվելու մի հատկանիշից, մեն մի հատկանիշից, որն, ըստ ձեզ, ամենաշատն է խանգարում Ուղով ձեր ընթացքին:

Անկեղծորեն ձեր սրտում ցանկացեք ազատվել այդ հատկանիշից, և ես ձեզ օգնություն կցուցաբերեմ. և այդ օգնության աստիճանը համեմատական կլինի Աստծո և Աստծո Ճշմարտության նկատմամբ ձեր հավատին:

Դա իմ նվերն է, որ այսօր տալիս եմ ձեզ:

ԵՍ ԵՄ Սուրիան, հուսով եմ, որ կհանդիպեմ ձեզնից նրանց հետ, ովքեր պատրաստ են այս նոր հնարավորության, նոր շնորհի ընդունմանը:

ՀԱՈՒԹԱՄԱ ԲՈՒԴԴԱ

10 մարտի, 2005 թ.

ԴՈՒՔ ՊԵՏՔ Է ՎԵՐ ԽՈՅԱՑՆԵՔ ԱՍՏԾՈ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՒՐԳԸ ՍԵՓԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԵՍ ԵՄ Տերն Աշխարհի Հաութամա Բուդդան, ես եկա այսօր այս դեսպանորդի միջոցով, ով ինձ հնարավորություն տվեց խոսելու իր միջոցով:

Որպես արքայազն Սիդհարթհա իմ մարմնավորման ժամանակից հետո ես բազմիցս եկել եմ այս մոլորակը և ներկա եղել նրանց տաճարներում, ովքեր նախապատրաստել են իրենք իրենց իմ ներկայության համար: Եվ ես շարունակում եմ դա անել նաև այժմ: Բուդդային հասնելու աստիճանը թույլ է տալիս սեփական ներկայությունը պրոյեկտելու շատ անհատականությունների մեջ, որոնք գտնվում են աշխարհների տարբեր համակարգերում: Ըստ այդմ իմ մասը կարող է միաժամանակ ներկա լինել այս մոլորակում շատերի մեջ:

Եվ ես պետք է հայտնեմ ձեզ, որ ես ներկա եմ նաև այս դեսպանորդի մեջ, որքան էլ որ դա ձեզ տարօրինակ թվա: Իմ ներկայության աստիճանը որոշվում է տվյալ մարմնավորված մարդու նվաճումների մակարդակով, և իմ ներկայության այդ աստիճանը ժամանակի հետ կարող է փոխվել: Այժմ Տատյանայի մեջ իմ ներկայությունը կազմում է 50 տոկոս: Դա բավականին շատ է, և իմ ներկայության այդ աստիճանն է, որ թույլ է տալիս նրան հասնելու 33 եթերային մակարդակների, որոնցից էլ նա ընդունում է այս թելադրությունները:



Ես ուզում եմ փոքր-ինչ բացել գաղտնիքը, թե դա ինչպես է տեղի ունենում:

Սկզբում չակրաների մեջ Լույսի էներգիայի ներմղման միջոցով մենք բարձրացնում ենք դեսպանորդի թրթիռները: Այդ ընթացքում նրա բոլոր մարմինները համաձայնեցվում և համահունչ են

դառնում Լինելիության Բարձրագույն Իրականության հետ: Երբ Աստծո Ճշմարտության հետ համահնչունությունը հասնում է տվյալ հանգամանքների համար հնարավոր ամենաբարձր կետին, մենք սկսում ենք որոշակի տեղեկատվություն պարունակող էներգիայի առաքումը դեպի դեսպանորդի ստորին մարմինները:

Դա նման է այն բանին, կարծես մենք Լույսի էներգիայով լցնում ենք որևէ շտեմարան:

Այդ շտեմարանի ծավալը սահմանափակված է դեսպանորդի անհատական նվաճումների աստիճանով: Այնուհետև այդ էներգիան ձևափոխվում է ընկալման համար մատչելի ձևերի՝ մտքերի ու տեսապատկերների տեսքով, որոնք ձևավորվում են դեսպանորդի ֆիզիկական ուղեղում և արդեն կարող են արտաբերելի կամ գրառելի դառնալ: Այդ մտքերի և պատկերների գրառման ժամանակ օգտագործվում են դեսպանորդի ներքին լեզուն և բառային ձևակերպումների՝ իրեն բնորոշ առանձնահատկությունները: Այդ պատճառով սկզբնական մաքուր էներգիան, որը կրում է իր մեջ բացարձակ Ճշմարտություն, ձևափոխման այդ փուլում գունազարդվում է դեսպանորդին հատուկ աշխարհընկալման համակարգով և սահմանափակվում նրա արտաքին գիտակցությամբ:

Ես այսպիսի մանրամասնությամբ նկարագրում եմ թելադրություններ տալու՝ մեր կողմից օգտագործվող մեխանիզմը, որպեսզի դուք հասկանաք, որ մենք ձեզնից գաղտնիքներ չունենք: Մենք պատրաստ ենք բացելու Տիեզերքի բոլոր գաղտնիքները: Հարցն այն է, թե պատրա՞ստ է արդյոք ձեր գիտակցությունը այդ գաղտնիքներն ընդունելուն: Կդիմանա՞ արդյոք:

Այդ պատճառով ամեն անգամ Ճշմարտության մի մասը տրվում է ոչ թե բառերի տեսքով, այլ էներգիայի, որն իր մեջ պարունակում է հենց ինքը՝ տեքստը: Դա օգնում է մեզ՝ շրջանցելու ձեր արտաքին գիտակցությունը և ուղղակիորեն դիմելու ձեր այն մասին, որը երբեք չի մոռացել իր Սկզբնաղբյուրի մասին և դրանով իսկ արթնացնելու ձեր մեջ ձե'ր իսկ այդ մասը:

Ըստ այդմ՝ հիմնական խնդիրը, որին մենք ուզում ենք հասնել՝ տվյալ դեսպանորդի միջոցով թելադրություններ տալով, ինքներդ ձե՛ր մասին հիշողության արթնացումն է, և այդ խորքային հիշողությունը ձեր արտաքին գիտակցությանը հասցնելը:

Դուք նկատեցիք, որ այս թելադրությունները տրվում են շատ հասարակ լեզվով: Նրանք չեն պարունակում խճճված շարադրանքներ, դժվարիմաց իմաստություններ: Որովհետև իրականում Աստծո Ճշմարտությունը շատ պարզ է, և այն մատչելի է նույնիսկ երեխայի գիտակցության համար: Ավելի ճիշտ կլինի ասել՝ այն հատկապես մատչելի է միայն երեխայի գիտակցության համար: Այսպես կոչված, կյանքի փորձը, որը դուք ձեռք եք բերում Երկրի վրա լինելու ընթացքում, որպես կանոն, դժվարացնում է այդ Ճշմարտության ընկալումը:

Ձեր կյանքի փորձն այն է, ինչը թույլ է տալիս ձեզ գոյատևել ֆիզիկական պատրանքի պայմաններում: Իսկ որպեսզի գիտակցեք Աստծո Ճշմարտությունը, հենց այն է պահանջվում, որ դուք հրաժարվեք ձեր կողմից ձեռք բերված այդ ֆիզիկական փորձից:

Դա այն որակն է, որը դուք ստիպված կլինեք ձեռք բերել: Դուք պետք է ձեր մեջ մշտապես զգաք երկու սկզբի ներկայությունը՝ հոգևորի և ֆիզիկականի: Դուք պետք է միշտ հիշեք, որ ձեր գլխավոր մասը հոգևոր սկիզբն է: Իսկ ձեր ֆիզիկական մասն անցողիկ է, և ձեզ անհրաժեշտ է միայն ձեր անհատական էվոլյուցիայի որոշակի փուլում:

Երբ ձեր նույնացումը ճշմարիտ հոգևոր անհատականության հետ կհասնի որոշակի կրիտիկական ցուցանիշի, դուք կսկսեք աստիճանաբար կորցնել ձեր անիրական մասը: Ձեր մարմինները կսկսեն ավելի ու ավելի քիչ թանձր լինել, և դուք կազատվեք ձեր ֆիզիկական մարմիններից: Սակայն պետք է հիշեք, որ դա միանգամյա գործընթաց չէ: Դա գործընթաց է, որ տևում է մի քանի հարյուր հազար և միլիոնավոր տարիներ: Ձեր ֆիզիկական մարմինների փոփոխության հետ միաժամանակ կփոփոխվի նաև ձեզ շրջապատող աշխարհի ֆիզիկական իրադրությունը, որն, ըստ էության, հանդիսանում է ուղղակի հայելի, որի մեջ անդրադարձվում է ձեր գիտակցությունը:

Ըստ այդմ՝ հարյուր հազարավոր տարիներ հետո դուք գոյություն կունենաք մի այլ, ավելի քիչ թանձր աշխարհում: Բայց դա ավելի շուտ չի լինի, քան դուք կփոխեք ձեր գիտակցությունը:

Ուստի գիտակցեք, որ այն ամենը, ինչը չափից դուրս շատ կապված կլինի այդ պատրանքային աշխարհի իրերի հետ, չի կարողանա գոյություն ունենալ այն նոր իրականության մեջ, որն Աստծո Պլանն է հանդիսանում այս մոլորակի համար, ճիշտ նույն կերպ՝ նաև այլ մոլորակների և աշխարհների համար:

Եվ, հիրավի, այդ մարդիկ կնմանվեն անցած տարվա խոտի, որը չի կարող գոյատևել նոր աշխարհում և պետք է պարզապես հրի մատնվի տիեզերական կիզարանում:

Մենք գալիս ենք կրկին ու կրկին, որպեսզի արթնացնենք ձեր գիտակցությունը նոր դարաշրջանի, նոր ժամանակի գիտակցման համար: Եվ մենք չենք հոգնում նորից ու նորից ձեզ համար նույն բաները կրկնելուց: Եվ դա մենք կանենք այնքան ժամանակ, քանի դեռ դուք չեք ներկայանա որպես ձեր իսկ անմահ մասը, քանի դեռ չեք դադարի կառչել հին աշխարհից՝ ձեր հին ֆիզիկական տնից, որը ծառայել է ձեզ հավատով ու ճշտով, և որում հնարավորություն եք ունեցել ստանալու ձեր հոգու զարգացման համար անհրաժեշտ ամեն բան:

Բայց այժմ եկել է ավելի նոր, ավելի կատարյալ

տուն տեղափոխվելու ժամանակը: Եվ հենց հիմա՛ է վրա հասել այն փուլը, երբ դուք պետք է ձեզ համար կառուցեք այդ տունը: Իսկ այդ շինարարությունն իրականացվում է ձեր ներսում՝ ձեր գիտակցությունը փոխելու ճանապարհով. և դա, իսկապես, վիթխարի շինարարություն է:

Դուք պետք է վեր խոյացնեք Աստծո Իրականության բուրգը ձեր սեփական գիտակցության մեջ:

Եվ դա դուք արդեն անում եք, արդեն վեր եք խոյացնում այդ բուրգը՝ կարդալով այս թելադրությունները, բառերի ու էներգիայի տեսքով ստանալով անհրաժեշտ տեղեկատվություն, անհրաժեշտ՝ ձեր գիտակցության ձևափոխության համար:

Ես ուրախ էի ձեզ հետ այս հանդիպման համար: Եվ ես ձեզ հաջողություններ եմ մաղթում ձեր ճանապահին:

ԵՍ ԵՄ Հաութաման, հույս ունեմ մոտ ապագայում այս դեսպանորդի միջոցով հանդիպել ձեզ հետ

ՍԱՆԱՏ ԿՈՒՄԱՐԱ

13 մարտի, 2005 թ.

ՖԻԶԻԿԱԿԱՆ ՈԼՈՐՏ ՀԱՍՆՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅՈՒՆԸ

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան՝ իմ դեսպանորդի միջոցով կրկին ձեզ այցի եկածը:

Յուրաքանչյուր մարդու գիտակցություն կրում է ձեր թանձր աշխարհի մտածների և պատկերների ազդեցությունը: Այդ ձևերն ու պատկերները լողում են ակվարիումի հսկայական ձկների պես և փնտրում, թե ում գիտակցությունը կլանեն: Ուստի մեր խնդիրն է հեռու մղել ձեզնից այդ անկատար նմուշները և վերացնել դրանց վնասակար ազդեցությունը, որքանով որ դա հնարավոր է անել: Այդ էներգետիկական խտացումները և տարածության մեջ դրանց անկառավարելի տեղաշարժերը շատ են դժվարացնում մեր աշխատանքը:

Մարդու գիտակցությունը շատ խլրտուն է: Թվում է, թե մարդը անշարժ վիճակում է, սակայն նրա գիտակցությունն այդ պահին ձգվում է թրթիռներով իրեն համահունչ էներգետիկական պատկերների կողմից և կարող է ճանապարհորդել աստեղային և մենտալային ոլորտների տարբեր շերտերում:

Այդ պատճառով որևէ մաքուր գիտելիք տալու խնդիրը շատ դժվար իրագործելի է: Սա առաջին սահմանափակումն է: Երկրորդը կապված է գիտակցության այն շերտերի հետ, որոնք ձեռք են բերվել տեղեկատվության մարդ-հաղորդչի կամ ընթացիկ մարմնավորված դեսպանորդի կողմից: Այդ էներգիան երիտասարդ է և շատ ակտիվ. մինչև վերջ հաղթահարել այդ էներգիան հնարավոր չէ:

Ահա դրանք են երկու հիմնական խնդիրները, որոնց մենք բախվում ենք նուրբ ոլորտից ֆիզիկական աշխարհ տեղեկատվություն փոխանցելիս:

Հատուկ բարդություն է առաջացնում տեղեկատվության խոսքային փոխանցումը, այսպես կոչված, թելադրությունը: Դրանց որակը փոխվում է մեկ անգամից մյուսը, մի սեանսից մյուսը:

Ըստ այդմ՝ փոխանցվող տեղեկատվության հավաստիությունը մշտապես փոխվում է: Եվ այդ հավաստիության աստիճանը մեկ անգամից մյուսը կարող է լինել և՛ ավելի բարձր, և՛ ավելի ցածր: Ուստի տեղեկատվության ընդունիչի հավաստիության աստիճանի մասին կարելի է դատել միայն նշանակալից ժամանակահատվածի ընթացքում: Այս դեպքում հարմար է գալիս ասել՝ եթե դա ճշմարտություն է, ապա այն չի դադարի դրսևորել իրեն. եթե դա պատահական գործընթաց է, որը ներշնչվել է որոշակի աստեղային էներգետիկական կուտակներից, ապա որոշ ժամանակ անցնելուց հետո, որի տևողությունը որոշվում է այդ էներգակուտակին բնորոշ ներքին ուժով, տեղեկատվության գործընթացը կամ կդադարեցվի, կամ էլ, ընդունվող տեղեկատվության որակից ելնելով, հայտնի կդառնա նրա աղբյուրը: Մարդը, որը ենթակա է աստեղային այդ կույր ուժերի ազդեցությանը, ինքնուրույն ընդունակ չէ գնահատելու ստացվող տեղեկատվության որակը:

Ըստ այդմ՝ ուղերձների ընդունման գործընթացը շատ բարդ է և պահանջում է շատ ջանքերի ներդրում, ինչպես մեր, այնպես էլ տեղեկատվության ընդունիչի կողմից:

Ուղերձների մեջ պարունակվող տեղեկությունների հավաստիությունը նույնպես կարող է փոխվել մեկ անգամից մյուսը:

Դուք կարող եք հարցնել՝ ինչի՞ համար է մեզ պետք փնտրել անհատների, որոնք ունակ են ուղերձներ ընդունել, ապա նրանց միջոցով ան-

վերջ շարունակել կրկին ու կրկին ուղերձներ ու թելադրություններ տալու գործընթացը:

Այդ հարցն իր մեջ արդեն իսկ պարունակում է պատասխան: Մենք դա անում ենք, որովհետև սա այն անհրաժեշտ փուլն է, որի դեմ մարդկությունն այժմ կանգնած է: Շատ մարդիկ սկսել են լսել նուրբ ոլորտը, առնչվել տարբեր ուժերի հետ: Նրանցից ոչ բոլորն են գիտակցում, թե դրանք ինչ ուժեր են, որոնց հետ իրենք սկսել են փոխազդեցության մեջ մտնել: Կան դրանց մեջ ուժեր, որ բարեկամաբար են տրամադրված. կամենում են բարիք, բայց և կան ամբողջովին չարամիտ էություններ, որոնք օգտագործում են մարդուն, որին տիրացել են, իրենց շահադիտական նպատակների համար: Իսկ այդ նպատակը մեկն է և հատուկ է ամբողջ անիրական երևակվածին. որքան հնարավոր է, հեռու տանել Աստծո Իրականության իմացությունից:

Ձեր աշխարհում ամեն ինչ երկու կողմ ունի: Ամեն մի գործունեություն, որը հատուկ է այդ աշխարհին, կրում է երկակի բնույթ և կարող է ուղղված լինել և՛ դեպի բարին ու բարիքը, և՛ դեպի չարը, մահը, դժոխքը:

Ուղերձների և թելադրությունների ընդունումը բոլորովին չի տարբերվում ցանկացած ուրիշ գործունեությունից և ձեր երկակի աշխարհի ցանկացած այլ դրսևորումից:

Հենց որ հայտնվում է մի որևէ նոր գյուտ, որը կարծես թե սկզբնապես ուղղված է դեպի բարօրությունն ու բարիքը, համարյա ակնթարթորեն ձեր աշխարհի պատրանքային ուժերը սկսում են տիրանալ այդ գյուտին և այն ուղղել տրամագծորեն հակառակ նպատակների իրականացմանը: Վերցրեք ցանկացած օրինակ: Ահա վերջին գյուտերից մեկը՝ համացանցը, որը հսկայական ազատության աստիճան է տալիս օվկիանոսների և մայրցամաքների վրայով ակնթարթային հաղորդակցության համար: Ընդամենը մի քանի տասնամյակ առաջ մարդկային ուղեղը կընկալեր այդպիսի հնարավորությունը որպես ֆանտազիա: Եվ ինչո՞վ է այսօր լցված համացանցը. բարի գաղափարներ կրելու փոխարեն այն 90 տոկոսով լցված է կասկածելի բնույթի նմուշօրինակներով, որոնք արարվել են մարդկային երկակի ինտելեկտի կողմից:

Ճշմարտության հատիկներ նույնպես կան այդ համաշխարհային տեղեկատվական համակարգում, և ճիշտ նույնպիսի հարաբերակցությամբ, ինչքան որ ճշմարտություն կա ձեր աշխարհում. մեկը՝ տասի: Այո՛, Ճշմարտությունը, Աստվածային Ճշմարտությունն առկա է այժմ ձեր աշխարհում ընդամենը 10 տոկոսով:

Նուրբ աշխարհների հետ շփումը որևէ բացառություն չի կազմում այդ կանոնից: Եվ տեղեկատվության հավաստիության տոկոսը, որն առկա է նուրբ ոլորտից եկած ուղերձներում, նույն հարաբերակցությունն է կազմում. մեկը՝ տասի:

Դա չի նշանակում, որ բոլոր տեղեկությունների հավաստիությունն այդպիսին է: Կան տեղեկություններ, որոնք մուտք են գործում ձեր աշխարհ 95 և ավելի տոկոս հավաստիության աստիճանով: Բայց այդպիսի տեղեկությունների 90 տոկոսն իր մեջ սուտ է պարունակում:

Ըստ այդմ՝ մեր ներկայացուցիչների դեպքում, որոնց հետ աշխատում ենք, մենք օգտագործում ենք տեղեկատվության փոխանցման հատուկ հնարքներ և տալիս ենք այդ տեղեկատվության ընդունման բանալին, որը հայտնի է լինում միայն իրենց, և որը նրանք ստանում են ուսուցման երկարատև գործընթացում: Դրա ընթացքում մեր դեսպանորդներն անցնում են որոշակի բավականին ծանր փորձաքննությունների միջով՝ պաշտպանելով Աստվածային Սկզբնաղբյուրից տեղեկատվություն ստանալու իրենց իրավունքը:

Սակայն, որպեսզի ինքներդ հնարավորություն ունենաք տարբերակելու տարբեր աղբյուրներից եկող տեղեկատվությունների հավաստիության որակը, դուք պետք է ձեր մեջ զարգացնեք այդ տեղեկատվությունների մակարդակի տարբերակման ընդունակություն՝ լսելու և զանազանելու այն թրթիռները, որոնք առկա են նուրբ աշխարհների ուղերձներում:

Մեր դեսպանորդի պատմուճանի առկայությունն իսկ հնարավորություն չի տալիս մշտապես տեղ հասցնելու Ճշմարտությունը: Մեկ անգամից մյուսը, մի սեանսից մյուսը, կախված արտաքին պայմաններից և դեսպանորդի ներքին վիճակից, Ճշմարտության տոկոսը փոխվում է:

Այսօր ես առաջ քաշեցի ֆիզիկական աշխարհ մուտք գործող տեղեկությունների հավաստիության շատ բարդ թեման:

Բայց քանի որ աշխարհների հաղորդակցման գործընթացը շարունակելու է զարգանալ, ապա այս գիտելիքները ձեզ անհրաժեշտ են, որպեսզի գտնեք ճշմարտության այն 10 տոկոսը, որ կա այն ամենի մեջ, ինչը շրջապատում է ձեզ, և այն ամենի մեջ, ինչը ձեզ է հասցվում տեղեկատվական տարբեր աղբյուրների կողմից, կլինեն դրանք ռադիոն, թերթերը, հեռուստատեսությունը, համացանցը, թե նուրբ աշխարհից ստացված ուղերձները: Ուստի միակ խորհուրդը, որ կարող եմ ձեզ տալ, և որը ձեզ կպաշտպանի ձեր աշխարհին բնորոշ ստի 90 տոկոսից, հետևյալն է՝ կատարելագործե՛ք ձեր սեփական ընդունիչը:

Մաքրեցե՛ք ձեր բոլոր մարմինները՝ ֆիզիկական մարմինը, մենտալային մարմինը, զգացմունքային մարմինը, եթերային մարմինը:

Հետևե՛ք ձեր շփման միջավայրին, հետևե՛ք ձեր մտքերին, հետևե՛ք ձեր զգացմունքներին:

Վերահսկե՛ք ձեզ օրվա ընթացքում՝ ինչի՞ մասին եք մտածում. արդյոք ներդաշնակ վիճակո՞ւմ եք:

Մի՛ կարծեք, թե այն այլընտրանքները, որոնց առջև կանգնում եք օրվա ընթացքում, ձեզ համար անվնաս են:

Ձեր նախընտրանքները՝ այն, ինչ դուք ընտրում եք, ինչով նախընտրում եք զբաղվել, նստեց-

նում են ձեզ վրա անջնջելի էներգետիկական փառ, որից ազատվելը դժվար է լինում մեկ մարմնավորման ընթացքում:

Այն ամենը, ինչը ձեզ շրջապատում է, էներգիա է, թրթռանք: Եվ, նախընտրելով անկատար գործունեության ձևեր, դուք կամովին ձեզ վրա եք դնում ավելի ու ավելի շատ սահմանափակումներ: Սովորական մարդուն հատուկ յուրաքանչյուր առօրյա զբաղմունք, որը թվում է միանգամայն անվնաս, կարող է անորոշ ժամանակով հետաձգել Ուղով նրա առաջընթացը:

Հետևեք, թե ինչով եք զբաղվում օրվա ընթացքում. որքա՞ն ժամանակ եք հատկացնում անվերջ սերիալների դիտմանը, ծխարանային զրույցներին, շփմանը, այսպես կոչված, ընկերների հետ: Արդյոք այդ ամենն այդքան անհրաժեշտ է ձեր հոգևոր աճի համար:

Դուք չեք կարող ակնթարթորեն ազատվել ձեր մոլորություններից, բայց դա կարող եք անել աստիճանաբար՝ օր օրի, քայլ առ քայլ՝ հերթով ազատվելով կապվածություններից, շարժվելով ու շարժվելով ուղով, երբեք կանգ չառնելով և առաջնորդվելով դեպի տուն՝ Աստծո մոտ, վերադառնալու ձեր ներքին ձգտմամբ: Այն Աստծո մոտ, ով ի սկզբանե ձեզ հետ էր, և հիմա՛ էլ հատուկ է ձեր էությանը: Հարկավոր է պարզապես հիշել ձեր առաջին Սիրո մասին: Եվ ընթանալ:

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան՝
միշտ ձեզ հետ ձեր Ճանապարհին

ՏԵՐ ՍՈՒՐԻԱ

14 մարտի, 2005 թ.

ԸՄՊԵՔ ԱՍՏԾՈ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՆԵԿՏԱՐԸ

ԵՍ ԵՄ Սուրիան, կրկին եկել եմ այս դեսպանորդի միջոցով: Ուղիղ մեկ տարի առաջ Մեծ Կենտրոնական Արևում ես նրա ուսերին պատմուճան գցեցի: Եվ ուղիղ մեկ տարի պահանջվեց այդ պատմուճանի ակտիվացման համար:

Թելադրությունների ընդունումն ամենապատասխանատու ծառայությունն է: Դա՛ է այն հնարավորությունն ու օգնությունը, որը ներկայումս Համբարձված Դասերի կողմից մատուցվում է Երկրի մարդկությանը:

Թելադրությունները պարունակում են մեր թրթիռները, մեր էներգիան: Եվ եթե թելադրության խոսքերը մարմնավորված դեսպանորդի գիտակցության մեջ կարող են աղավաղվել, ապա թելադրությունների էներգետիկական բաղադրիչը, որը մեր կողմից ներդրվում է ուղերձը տալու պահին, կարող է հեռացվել միայն մեր ցանկությամբ:

Թելադրությունների մեջ պարունակվող էներգիան դուք կարող եք զգալ ոչ միայն թրթռումների հաճախականության տեսքով (որպեսզի զգաք բարձր թրթիռը, դուք պետք է համահունչ լինեք դրան), այլ նաև կարող եք զգալ թելադրության մեջ պարունակվող էներգիան՝ ելնելով այդ ուղերձի նկատմամբ ձեր ունեցած հետաքրքրության աստիճանից:

Դուք պարզապես կուզենաք այն կարդալ: Եվ ձեր արտաքին գիտակցությունը նույնիսկ գլխի չի ընկնի, որ կարդալու պահին ձեր բոլոր մարմիններն Աստծո էներգիայի նեկտար են ըմպում:

Ձեր բոլոր մարմինները մշտապես քաղց են զգում, նրանք տառացիորեն ծարավ են Աստծո էներգիայի: Ձեզ շրջապատող աշխարհի թրթռանքը էներգետիկական փոխնակ է՝ մի կերակուր, որը ձեր նուրբ մարմիններին անհրաժեշտ էներգետիկական սնուցում չի տալիս:

Դուք մեր սննդի կարիքն ունեք և պետք է սնուցվեք:

Եվ դա մենք անում ենք նորից ու նորից՝ յուրաքանչյուր դեսպանորդի միջոցով, հատկապես նրա գործունեության սկզբում, քանի դեռ էներգետիկական անցուղու վրա հարձակումները չեն ակտիվացել մութ ուժերի, մեզ հակադիր ուժերի կողմից:

Ըմպեք Աստծո էներգիայի նեկտարը, հիշեցեք Հայրական Տան մասին:

Լսեցեք Բարձրագույն Աշխարհների թրթռումները, հիշեցեք դրանք:

Այնպես կուզենայի շոյել ձեր գլուխները, փաղաքշել ձեզ, տալ ձեզ իմ պաշտպանությունը, հանդարտեցումը, սերը, մխիթարությունը...

Դուք մարտիկներ եք ձեր աշխարհում, հոգևոր մարտիկներ, և դուք անընդհատ ճակատամարտի մեջ եք: Այդ ճակատամարտն սկսվել է պատրանքի դրսևորման պահին, և այն կավարտվի այն բանից հետո, երբ տիեզերքը կավարտի իր գոյության այս շրջանը, և հետ կհավաքվեն երևակված աշխարհները: Մինչ այդ կշարունակվի ճակատամարտը լույսի և խավարի ուժերի միջև, որոնք կանգնած են դեմ առ դեմ և անցում են կատարում մեկը մյուսին:

Հավերժական շարժում, հավերժական ձգտում և հավերժական զարգացման ընդդիմություն:

Մարմնավորված մարդիկ ունեն գիտակցության տարբեր մակարդակներ:

Եվ գիտակցության տարբեր մակարդակները տարբեր կերպ են հասկանում այդ ճակատամարտը և տարբեր կերպ են փորձում մասնակցել այդ ճակատամարտին:

Իրոք, ամեն ինչ որոշվում է մարդու գիտակցությամբ: Հապա փորձեք միջնադարյան ասպետին, որը պատրաստվում է Տիրոջ գերեզմանի պաշտպանության արշավին, ասել, որ ինքը ճիշտ չի հասկանում աշխարհում ընթացող ճակատամարտը:

Հապա փորձեք ձեր ժամանակների ահաբեկիչ-մահապարտներին ասել, որ իրենք ճիշտ չեն հասկանում ընթացող ճակատամարտը:

Հապա փորձեք այն մարդկանց, որոնք ուսմունք են ստացել նախորդ դեսպանորդից և փորձում են խոսքով դատաստան անել Երկրի վրա, ասել, որ իրենք սխալ են հասկանում ճակատամարտը: Չեք կարող պատկերացնել, թե ինչով կվերջանան այդպիսի մարդկանց համոզելու ձեր փորձերը, որ իրենց պատկերացումները ճիշտ չեն:

Դա Աստծո Իրականության նրանց գիտակցության մակարդակն է: Եվ նրանք անկեղծորեն պատրաստ են կյանքում շատ բաներ զոհել, նույնիսկ սեփական կյանքը՝ հանուն այն ուժերի հաղթանակի, որոնց պաշտպանության համար իրենք մարտնչում են: Եվ եթե նրանք օժտված լինեին Բուդդայի կամ Քրիստոսի գիտակցությամբ, ապա կհասկանային, որ պայքարի յուրաքանչյուր դրսևորում, լինի դա մտքերի և զգացմունքների ֆիզիկական թե ավելի նուրբ ոլորտում, նպաստում է պատրանքի բազմապատկմանը:

Իսկ այս արարչագործության շրջանակներում մարտնչող երկու ուժերը հենց այն ուժերն են, որոնց մի մասը պատրանքինն է, զբաղված է պատրանքների բազմապատկմամբ, իսկ մյուս մասը Իրական Աստծո աշխարհինն է և պայքարում է պատրանքների հետհավաքման համար: Դա Երկնային ճակատամարտ է, որը կշարունակվի, քանի դեռ գոյություն ունի երևակված տիեզերքը, քանի դեռ գոյություն ունեն երևակված աշխարհները:

Այդ ճակատամարտը ներկայումս ապրող մարդկանց կողմից ընկալվում է յուրաքանչյուրի գիտակցությանը համապատասխան: Եվ այդ ճակատամարտում նրանց գործողությունները ամբողջովին համապատասխանում են այն էներգետիկական, կարմայական նստվածքներին, որոնք նրանք ստացել են անցյալում: Եվ այն ասպետները, որոնք պատրաստ էին սպանել այլադավանների իրենց, ինչպես իրենց էր թվում, հանուն Քրիստոսի արդար կռվում, այժմ կռվում են խոսքով, շարունակում են կապկպել խավարի ուժերին և կռվել նրանց դեմ մի փոքր այլ միջոցներով:

Եվ եթե նրանց ասվի, որ նրանք ճիշտ չեն վարվում Բուդդայի և Քրիստոսի ուսմունքների տեսակետից, ապա նրանք երբեք ձեզ չեն հավատա: Որովհետև այդպիսին է նրանց գիտակցության մակարդակը:

Եվ այն էներգիան, որն առկա է նրանց էլեկտրոնային գոտիներում, պետք է սպառի իրեն. այն կվերադառնա նրանց կրկին ու կրկին տարբեր մարմնավորումների ընթացքում, քանի դեռ նրանց գիտակցությունը չի հասնի այն աստիճանին, որի վրա նրանք կսկսեն հասկանալ աշխարհում տեղի ունեցող ճակատամարտի իրական իմաստը:

Այդ ճակատամարտը կշարունակվի, քանի դեռ մարդկության գիտակցությունը թույլ է տալիս, որ այն տեղի ունենա հենց իր ներսում:

Աշխարհը մարդու գիտակցության արտացոլանքն է: Եվ այն անհատը, որը հասնում է Բուդդայի գիտակցությանը, կամ այն անհատը, որն իր ներխոկումներով [медитациями] հասնում է նիրվանա կոչված վիճակին, հասկանում է, որ այդ վիճակում չկա ոչ մի պայքար: Այդ վիճակում գոյություն ունի միայն սեր, ներդաշնակություն, երանություն, բերկրանք՝ բոլոր այն աստվածային որակները, որոնք չեն մթագնվել մարդկային գիտակցության ստորին վիճակներով:

Արդյոք ձեր շուրջը տեսնո՞ւմ եք Բուդդաների, որոնք գտնվում են ներխոկման մեջ:

Դուք կարող եք ինձ չհավատալ, բայց միայն մեկ այդպիսի Բուդդան ի զորու է պահպանելու ամբողջ մոլորակի հավասարակշռությունը:

Եվ երբ ձեր քաղաքներում՝ զբոսայգու նստարանների վրա և ծառերի տակ, ներխոկման դիրքով Բուդդաներն նստած կլինեն, և նրանց վրա ոչ ոք ուշադրություն չի դարձնի (որովհետև դա կլինի այնպիսի սովորական երևույթ, ինչպես թռչակառուների զբոսանքն է իրենց չորքոտանի բարեկամների հետ), ապա այլևս չի լինի ահաբեկչություն, չեն լինի եռանդագին վիճող և տարբեր կրոնական դավանաբանություններ ներկայացնող դոգմատիկներ, որ ապացուցեն մեկը մյուսին, թե Աստծուն հասկանալու իրենց տարբերակն ամենաճիշտն է:

Բայց մինչ այդ ամենը կդառնա իրականություն, ամեն ոք կզբաղվի իր կարմայական բեռի մաշեցմամբ և կհայտնվի կյանքի այնպիսի իրադրություններում, որոնք վեր կհանեն նրա գիտակցությունը զարգացման նոր մակարդակի վրա՝ մի նոր աստիճանի վրա, որը տանում է դեպի Աստծո Ճշմարտության ըմբռնում:

Ես դեռ կվերադառնամ: Հուսով եմ, որ կվերադառնամ և կկարողանամ ձեր մտքերին տալ ճիշտ ուղղություն: Ի վերջո հույս ունեմ, որ կգտնվեն մարմնավորված մարդիկ, որոնք պատրաստ կլինեն լսելու Բուդդայի ուսմունքը:

ԵՍ ԵՄ Սուրիան

ՍԱՆԱՏ ԿՈՒՄԱՐԱ

15 մարտի, 2005 թ.

ՄԵՆՔ ՁԵԶ ՑՈՒՅՑ ԵՆՔ ՏԱԼԻՍ ՈՒՂԻՆ

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան: Ես եկա՛...

Այս դեսպանորդի միջոցով թելադրություններ տալն ավանդույթ է դարձել: Մենք դա կշարունակենք այնքան ժամանակ, քանի դեռ չեն փոխվել արտաքին կամ ներքին հանագամանքները: Զափազանց հազվագյուտ բան է աշխարհի ներկայիս վիճակում մեր տեղեկատվությունն ընկալող, բավարար չափով մաքուր հաղորդիչ ունենալը:

Այս թելադրությունները կարդալու ընթացքում ձեր գիտակցության մեջ դուք բախվեցիք որոշ կասկածների: Իրոք, հրամցվող տեղեկատվությունն իր մեջ ներառում է որոշակի տարբերություններ՝ համեմատած այն տեղեկատվության հետ, որը տրվում է մարմնավորված մյուս մարդկանց, այլ դեսպանորդների միջոցով:

Եվ այդ տարբերությունը կապված է բացորոշության ավելի մեծ աստիճանի հետ: Մենք ձգտում ենք ոչ այնքան տեղեկատվություն տալ այն հին ուսմունքների հունով, որոնք դուք ստացել եք վերջին ժամանակներում, որքան ընդարձակել ձեր պատկերացումները նուրբ աշխարհի վերաբերյալ: Յուրաքանչյուր աշխարհայացքային համակարգ, որքան էլ այն կուռ թվա, միայն մոտավոր, բավականին մոտավոր է նկարագրում ավելի նուրբ իրականությունը: Ուստի մենք ընտրեցինք այլ ճանապարհ. տեղեկատվություն տալ՝ չառնչվելով որևէ կոնկրետ, արդեն գոյություն ունեցող համակարգի կամ տերմինաբանության հետ: Ինչպես դուք կարողացաք նկատել, մենք համարյա չենք օգտագործում այնպիսի տերմիններ, որոնք կիրառվում են այլ կրոնական և աշխարհայացքային համակարգերում:

Հաշվարկը պարզ է: Ճշմարտությունը պետք է շարադրվի այնքան մատչելի, որ հասկանալի լինի նույնիսկ երեխայի համար:

Դուք նկատել եք, թե երբեմն որքան խրթինություն կա այս կամ այն համակարգում: Այո՛, տիեզերքի կառուցվածքը շատ բարդ է և հազիվ թե հասանելի զարգացման ներկա փուլում գտնվող մարդկային գիտակցության համար:

Ըստ այդմ՝ որքան էլ մենք փորձենք պարզ շարադրել որոշ բաներ, դուք ունակ չեք լինի ընկալելու: Դրա համար մենք ընտրեցինք այլ ճանապարհ: Դա մի ճանապարհ է, որը պարզապես ուղղություն է տալիս ձեր գիտակցությանը՝ կողմնորոշելով նրան ճիշտ ուղղությամբ: Երբ դուք գիտեք, թե ինչ ուղղությամբ պետք է շարժվեք, ապա կարող եք նախապատրաստել այն ամենը, ինչն անհրաժեշտ է ճանապարհի համար: Դուք կգտնեք և՛ հոգևոր գործիքներ, որոնք առավելագույնս համապատասխանում են ձեզ, և՛ հոգևոր գործառություններ, և՛ հոգևոր մեթոդներ: Բայց դուք այլևս չեք խարխափի այսուայնտեղ, որովհետև ուղղությունը, ներքին կողմնորոշիչն ու ձեր գիտակցության կողմնացույցն արդեն ճիշտ ուղղորդված կլինեն:

Եվ այդ ուղղությունը տրվում է շատ նրբորեն ու փափկանկատորեն, որպեսզի այն խստիվ չտարանջատվի ձեր արտաքին գիտակցությունից: Դուք նկատել եք, որ այն ամբողջ կամ գրեթե ամբողջ տեղեկատվությունը, որը տրվում է այս դեսպանորդի միջոցով, ձեզ համար ընդունելի է լինում: Ձեր գիտակցությունը փնտրում է հակասություններ, որոնցից կկարողանար օգտվել ձեր քննադատական միտքը, և չի գտնում:

Որովհետև ինչքան բարձր է Ճշմարտության շարադրման մակարդակը, այնքան հակասություններ գտնելն ավելի դժվար է:

Այսպիսի օրինակ կարելի բերել: Դուք ձեր առաջ տեսնում եք գագաթ՝ ձյունաճերմակ գլխարկով ծածկված աստվածային գիտակցության գագաթը: Բայց երբ դուք ճամփա եք ընկնում դեպի այդ գագաթը, ապա նախ մտնում եք անտառ, թափառում եք կիրճերում, մագլցում եք ժայռերը և արդեն ձեր առջև չեք տեսնում գագաթը:

Դա նման է այն բանին, երբ հայտնվում եք որևէ եկեղեցու կամ կազմակերպության կառույցի մեջ, որն ունի իր կանոնները, արարողակարգերն ու դոգմաները: Ձեզ այնտեղ տառացիորեն խճճում են դոգմաների ու կանոնների անանցանելի թփուտներում: Ոչ ոք արդեն չի հիշում, թե ինչի համար են մտցվել այդ կանոնները, բայց ձեզանից պահանջում են, որ դուք այդ կանոններն անպայման պահպանեք. այլապես դժոխքում հրի կմատնվեք, կամ ձեր գլխին կթափվեն ձեր աշխարհի բոլոր հայտնի դժբախտությունները:

Բայց եթե դուք հիշեք, մշտապես հիշեք այն աստվածային գագաթի մասին, դեպի ուր ձգտում եք, ապա կանցնեք իր փշերով ձեզնից կառչող թփուտից, և այն ձեզ ոչ մի վնաս չի հասցնի:

Ճիշտ նույն կերպ, եթե դուք մտնում եք դարերով գոյություն ունեցող կրոնների դոգմաներից կազմված խիտ անտառը և այլևս այդ դոգմաների ու կանոնների ետևում նույնիսկ կապույտ երկինքը չեք տեսնում, ապա հիշում եք աստվածային գագաթի մասին, դեպի ուր ընտրել եք ձեր ուղին, և ելք եք գտնում անտառից դուրս գալու համար:

Երբ դուք շարունակում եք ճանապարհը և սկսում մագլցել նոր ուսմունքներից կազմված ժայռերն ու քարե կիրճերը, որոնք երիտասարդ են ու դեռևս շատ սայթաքուն ու երերուն, ապա հիշում եք աստվածային գագաթի մասին և օգնություն ու օժանդակություն եք ստանում ընկերոջ ձեռքի կամ ճոպանի տեսքով, որը դեպի ձեզ է մեկնվում ձեր այն եղբայրների կողմից, որոնք արդեն ավելի վեր են ելել:

Այս թելադրությունները նրանց համար չեն, որոնք իրենց անդորրն են գտել անտառի բացատում՝ թռչունների ծլվլոցով և թևածող թիթեռներով լցված գետակի ափին: Այդ բացատները նման են այն աղանդներին և ուսմունքներին, որոնք ձեզ ներշնչում են, թե դուք պետք է ձգտեք երանության՝ գտնվելով ձեր աշխարհում, թե պետք է բոլորին սիրեք, դրսևորեք միայն մարդկային լավ հատկանիշներ:

Չի կարող կատարելություն լինել ձեր աշխարհում: Եվ ինչքան երկար ժամանակ դուք ձեզ սրբերի տեղ դնեք, այնքան ավելի ցավոտ հարվածի կենթարկվեք: Հարված, որը ձեզ կարթնացնի հիասքանչ բացատի ձեր քնից և կստիպի քայլել դեպի գագաթը՝ հաղթահարելով ինքներդ ձեզ, հաղթահարելով սեփական անկատարությունը: Վերելքին զուգընթաց ի հայտ կգան ձեր հին ցավոտ կետերը՝ ձեր վերքերը, որոնք ստացել եք ոչ միայն այս, այլ նաև ձեր նախորդ մարմնավորումների ընթացքում:

Դուք կշարունակեք առաջ ընթանալ՝ հաղթահարելով ձեր այդ վնասվածքների, ջարդվածքների, վերքերի ու հիվանդությունների ցավը:

Մեր խնդիրն է ձեզ ցույց տալ ուղին, ցույց տալ ճիշտ ուղղությունը, բայց կքայլեք ինքներդ՝ յուրաքանչյուրդ իր անհատական ճանապարհով:

Բայց, ստանալով ճիշտ ուղղություն, դուք այլևս երբեք չեք մոլորվի:

Մենք ձեզ ցույց ենք տալիս Աստծո Իրականության բարձրագույն գագաթին հասնելու Ուղին:

Ահա՛ ուղին: Ընթացե՛ք: Խիզախե՛ք, միայն թե կանգ մի՛ առեք ձեր զարգացման ճանապարհին: Առա՛ջ:

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան. ձեզ հետ եմ ամբողջ ճանապարհին

ԵՍ ԵՄ ՈՐ ԵՄ

16 մարտի, 2005 թ.

ՀԵՌԱՎՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐԸ ԲԱՑ ԵՆ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԵՎ ՍՊԱՍՈՒՄ ԵՆ ՁԵԶ

ԵՍ ԵՄ ՈՐ ԵՄ, խոսում եմ քո ներսից:

Համաչափությունը, համահնչունությունը այն որակներն են, որոնք պետք է դրսևորվեն, որպեսզի հնարավոր դառնա նուրբ ոլորտից թելադրություններ ընդունելը: Առանց այդ որակների հնարավոր չէ հասնել այն ամենից լրիվ կտրվածության վիճակին, ինչը ֆիզիկական ոլորտում շրջապատում է մեզ, այն է՝ կտրել սեփական գիտակցությունը շրջապատող իրականությունից և վեր բարձրանալ:

Կարելի է ակնառու դարձնել մարմնից դուրս գալն ու վերելքը դեպի Բարձրագույն Աշխարհներ՝ համեմատելով այն լեռնագագաթի նվաճման հետ: Իրականում նուրբ ոլորտ անցնելու պահը կապված է թրթիռների մակարդակի բարձրացման հետ: Եթե ֆիզիկական մարմինն ավելի լավ նախապատրաստված լիներ տարածական ու ժամանակային այդպիսի ուղևորությունների համար, ապա կարելի կլիներ հասնել թրթիռների այնպիսի մակարդակի, որը թույլ կտար տեղաշարժվել ցանկացած ուղղությամբ և աշխարհների ցանկացած համակարգերում: Սակայն ֆիզիկական տաճարը՝ ֆիզիկական ուղեկիցը, շատ կոպիտ է և չի կարող դիմանալ թրթիռների նույնիսկ աննշան բարձրացմանը: Այն պարզապես կայրվի: Այդ պատճառով ուղևորությունների համար մենք օգտագործում ենք նուրբ մարմինները: Եվ այստեղ առաջին պլան է ելնում նման ուղևորությունների համար այդ նուրբ մարմինների պատրաստվածությունը: Մարդկանց մեծամասնության նուրբ մարմիններն այնքան վնասված են, որ չունեն ո՛չ շիտակ ձևեր, ո՛չ անհրաժեշտ թեթևություն:

Նուրբ մարմինների վիճակն ամբողջությամբ կախված է մարդու գիտակցության մակարդակից: Ուստի և դեպի հեռավոր աշխարհներ ուղևորությունը Երկրի մարդկանց մեծամասնության համար պարզապես մատչելի չէ: Ձեր նուրբ մարմինները հենց ինքներդ եք, միայն թե՝ ավելի նուրբ աշխարհում: Եվ որքանով ձեր գիտակցությունը պատրաստ է ընդունել նուրբ աշխարհը, այնքանով էլ դուք շարժունակություն եք ստանում այդ աշխարհում:

Որպես կանոն, մարդկանց մեծ մասը չի կարող բարձրանալ, այսպես կոչված, թանձր աստրալի շերտերից ավելի վեր: Իսկ այդ շերտերը հնարավորություն չեն տալիս կտրվելու Երկրից և այցելելու տիեզերքի ավելի նուրբ ու ավելի զարգացած համակարգեր:

Ուստի առաջին պլան են ելնում նուրբ աշխարհների գոյության ընդունման խնդիրը և սեփական նուրբ մարմինների կատարելագործման խնդիրը՝ այդ նուրբ աշխարհներում տեղաշարժվելու ունակության ձեռք բերելու նպատակով:

Դուք պետք է ձեռք բերեք ձեր մարմինը լքելու ունակություն և ճանապարհորդեք աշխարհներում: Դա մարդկության գիտակցության զարգացման հաջորդ մակարդակի հատկանիշ է, և մարդկությունն այն ձեռք կբերի ճիշտ այնպես, ինչպես ձեզ վիճակված է ազատվել ձեր մարմնեղեն զրահահագուստից:

Հեռավոր աշխարհները բաց են այցելության համար և սպասում են ձեզ: Բայց ձեզ անհրաժեշտ է ձեռք բերել թեթևություն, ազատվել այս մոլորակի վրա ձեռք բերված կարմայի բեռից:

Մարմինների բաժանելիությունը, նուրբ մարմիններով տարածական տեղաշարժերը հանդիսանում են մարդու էվոլյուցիայի մոտակա փուլը, երբ նա մի մոլորակի շրջանակներով կաշկանդված և այդ մոլորակին կապկպված էակ լինելուց վերածվում է Տիեզերական Էակի: Էակի, որի համար տուն է հանդիսանում ամբողջ կոսմոսը, ամբողջ երևակված տիեզերքը:

Մարդկային էվոլյուցիայի այդ փուլը կբացվի ձեր առաջ, երբ դուք կավարտեք Երկրի դպրոցը: Իսկ դրա համար դեռևս կծախսվեն շատ մարդկային տարիներ:

Ես կուզենայի շոշափել, այսպես կոչված, համբարձման հարցը:

Չի կարելի ասել, որ համբարձման հարցի վերաբերյալ նախորդ դեսպանորդների միջոցով տրվել են ոչ ճիշտ գիտելիքներ: Բայց համբարձումը՝ որպես մի գործընթաց, որի ընթացքում դուք ընդմիշտ լքում եք ֆիզիկական աշխարհը և անցնում նուրբ աշխարհում գոյատևելուն, տեղի չի ունենա այնպես, ինչպես դուք եք պատկերացնում:

Դուք կհամբարձվեք աստիճանաբար՝ կարծես մաս առ մաս՝ անցնելով մի ռասայից մյուսին, մի տիեզերական բոլորապտույտից մյուսին: Բայց վերջնական համբարձումը՝ որպես մի վերջնական նպատակի հասնելու գործընթաց, անհնարին է: Որովհետև զարգացումն անվերջ է և չի կարող կանգ առնել: Ոչ մի նպատակ վերջնական չէ: Դուք ամեն օր համբարձվում եք ձեր գիտակցության մեջ, ձեր թրթիռներում՝ ձեռք բերելով ավելի ու ավելի մեծ ազատություն և հասնելով էներգետիկական այն մակարդակին, որին համապատասխանում են ձեր թրթիռները:

Ձեր մեջ կա այն մասը, որն արդեն անցյալի տիեզերական բոլորապտույտների ընթացքում հասել է, այսպես կոչված, համբարձմանը: Այդ մասը հանդիսանում է ձեր Ես-Քրիստոսը, կամ ձեր Բարձրագույն Ես-ը: Դա ձեր այն մասն է, որի օգնությամբ նյութականությունից դուրս եք քաշում ձեր ստորին մարմինները:

Ձեր Ես-Քրիստոսը ձեր հենակետն է, ձեր ուղեկցորդը, որը ցույց է տալիս ուղին և ղեկավարում ձեզ: Այդ պատճառով է, որ ձեր իսկ բարձրագույն մասի հետ կապն անհրաժեշտություն է: Եվ այժմ այդ կապն իրականություն է դառնում մարմնավորման վիճակում գտնվող ավելի ու ավելի մեծ քանակի մարդկանց համար:

Բարձրացնելով ձեր էներգետիկական մակարդակը՝ դուք հնարավորություն եք ստանում հաղորդակցվելու ձեր Ես-Քրիստոսի հետ: Եվ դուք փորձ եք ձեռք բերում ձեր իսկ ավելի բարձր մասի՝ ԵՍ ԵՄ Ներկայության հետ հաղորդակցվելու համար: Տեղի է ունենում ճիշտ այն, ինչ թույլ եք տալիս ձեր գիտակցության մեջ:

Եթե ձեր մեջ՝ ձեր գիտակցության մեջ, դուք ընդունում եք, որ կարող եք ձեր Ես-Քրիստոսի հետ հաղորդակցվել, ապա վաղ թե ուշ կստանաք այդ հնարավորությունը:

Տատյանան մի ժամանակ դադարեց լսել իր Բարձրագույն Ես-ի պատասխանները: Դա ցնցում եղավ նրա համար: Ըստ էության, սեփական բարձրագույն մասի հետ հաղորդակցվելն այնքան բնական բան էր դարձել, որ նա պարզապես չէր կարողանում հասկանալ, թե առանց այդ հաղորդակցության ինչ պետք է անի հետո:

Ճիշտ նույնն է և ձեր գիտակցության դեպքում. քանի դեռ այն չի ընդունում ձեր Բարձրագույն Ես-ի հետ հաղորդակցվելու միտքը, դուք չեք կարող ստանալ այդպիսի հաղորդակցության փորձ:

Եթե չցանկանաք լողալ սովորել, ապա չեք սովորի: Իսկ որպեսզի լողալ սովորեք, անհրաժեշտ է, որ մտնեք ջուրը և փորձեք լողալ: Բոլոր այն մարդիկ, որոնք կարդում են այս թելադրությունները և հասկանում, թե ինչի մասին է խոսքը, ունակ են լողալու, հաղորդակցվելու իրենց Բարձրագույն Մասի հետ:

Իսկ եթե դուք չեք ուզում ջուրը մտնել, ապա ոչ ոք չի կարող ձեզ ստիպել: Դուք կամ որոշում եք լողալ սովորել և ջուրն եք մտնում, կամ էլ չեք ուրոշում և չեք մտնում:

Շատ ուղեցույցներ կան, թե ինչպես հաղորդակցվել սեփական բարձրագույն մասի հետ:

Ես կտամ ձեզ ամենապարզը:

Դուք ունեք Ընկեր. ամենալավ և ամենահավատարիմ Ընկերը, որն ապրում է հենց ձեր մեջ: Եվ այդ Ընկերը միշտ սիրել է ձեզ, կյանքի բոլոր ծանր հանգամանքներում ձգտել է օգնել ձեզ այնքանով, որքանով թույլ եք տվել:

Դուք հաճախ անհրաժեշտություն եք զգացել խորհուրդ հարցնելու ընկերոջից, խորհուրդ՝ բարդ իրադրության լուծման համար: Դուք ընկերներ եք փնտրել ձեզնից դուրս: Ձգտել եք նրանց հետ

մարդկային հաղորդակցության մեջ մտնել: Իսկ այդ նույն ժամանակ ձեր ամենալավ ընկերը, ձեր ամենահավատարիմ ընկերը, ով ձեր ներսում է, համբերությամբ սպասել է, թե երբ իր վրա ուշադրություն կդարձնեք: Նա պատրաստ է ձեզ հետ հաղորդակցվելու: Նա տածում է ձեր նկատմամբ ընկերության ու սիրո զգացմունքներ: Ուշադրությա՛ն արժանացրեք նրան:

Ասացե՛ք նրան, թե որքան եք սիրում իրեն, թե որքան կարիք ունեք իր հետ հաղորդակցվելու:

Ընտրեք այնպիսի ժամանակ, երբ գիտեք, որ ձեզ ոչ ոք չի խանգարի: Անջատե՛ք այն ամենը, ինչը կարող է ձեզ շեղել: Հարմար դիրք ընդունեք: Կենտրոնացե՛ք սրտի վրա: Եվ հարցրե՛ք ձեր Բարձրագույն Ես-ին, թե արդյոք ուզո՞ւմ է ձեզ հետ հաղորդակցվել: Ինչպե՞ս հասկանալ նրա «այո»-ն:

Ունկնդրե՛ք ինքներդ ձեզ: Պատասխանը կարող է գալ շատ նուրբ զգացողության, սրտի թրթիռի, կամ որևէ այլ ձևով: Դուք պետք է կարողանաք հասկանալ, թե ինչպես է ձեր Ես-Քրիստոսը ձեզ պատասխանում: Նա ձեզ կպատասխանի այն եղանակով, որը ձեզ համար առավել ընկալելի է:

Հնարավոր է և, որ չլսեք ոչ մի պատասխան: Մի՛ համառեք և մի՛ հոգնեցրեք ձեզ: Փորձը կրկնեք հաջորդ օրը: Կրկնե՛ք այն ամեն օր:

Ինքներդ պետք է գլխի ընկնեք, թե օրվա որ ժամանակն է ամենահարմարը հաղորդակցման համար: Նորից ու նորից փորձե՛ք:

Սկզբում ձեզ միայն կթվա, թե լսում եք պատասխանները: Հարցեր տվեք ձեր Ես-Քրիստոսին, հարցերով դիմե՛ք նրան: Զրուցեք նրա հետ, ինչպես կզրուցեիք մտերիմ ընկերոջ հետ: Հայտնեցեք, թե որքա՛ն եք նրան սիրում, որքա՛ն եք երազում նրա հետ հաղորդակցվել:

Եվ վաղ թե ուշ հաղորդակցությունը կկայանա:

Ես ձեզ հաջողություններ եմ մաղթում ձեր ճանապարհին: Կգա ժամանակը, և մենք կհանդիպենք իրար հետ: Եվ Ես կխոսեմ ձեզ հետ ձեր ներսից ճիշտ այնպես, ինչպես հիմա խոսում եմ այս դեսպանորդի ներսից:

ԵՍ ԵՄ ՈՐ ԵՄ՝ ՕՄ

ՀԱՈՒԹԱՄԱ ԲՈՒԴԴԱ

17 մարտի, 2005 թ.

ԿԱՐՈՂԱՑԵՔ ՃԱՆԱՉԵԼ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՏԸ

ԵՍ ԵՄ Բուդդա Հաութաման: ԵՍ ԵՄ եկել նորից: Ժամանակը սուղ է, և ես ուզում եմ ասել հիմնականը:

Բառային թաղանթը, որով զգեստավորված են մեր ուղերձները, թող ձեզ չշփոթեցնի: Խոսքերը Ճշմարտության հագուստն են, ճիշտ այնպես, ինչպես տերևներն են ծառերի հագուստը: Գալիս է աշունը, տերևները թափվում են և գարնանը նորից հայտնվում:

Այդպես էլ խոսքերն են. Ճշմարտությունը ծածկվում է խոսքերով, դուք հիանում եք այդ Ճշմարտությամբ: Բայց գալիս է ժամանակը, երբ այդ խոսքերը թոշնում են աշնան տերևների նման, բայց միայն այն բանի համար, որ տիեզերական բոլորապտույտի հաջորդ փուլում ի հայտ գա նոր Ճշմարտություն:

Ըստ այդմ՝ իմաստ չունի կապվել խոսքերին, որոնցով զգեստավորված է Ճշմարտությունը: Կարողացե՛ք տարբեր ուսմունքների և կրոնական համակարգերի հետևում ճանաչել Ընդհանրական Ճշմարտությունը: Բայց մի՛ կապվեք խոսքերին:

Այս կամ այն համակարգի հետ ձեր կապվածությունը նման է անցած տարվա տերևների հետ կապվածությանը:

Կարողացե՛ք ճանաչել Ճշմարտության արմատը: Ներկայումս Ճշմարտությունը տրվում է այս դեսպանորդի միջոցով: Մենք չգիտենք, թե հետո ինչ կլինի: Զափազանց անկանխատեսելի է այն աշխարհը, որում ապրում եք: Այդ պատճառով ձեզ ուղղություն է տրվում էներգիայի՝ մագնիսի տեսքով, որը հետագայում թույլ կտա ձեզ, դրանով առաջնորդվելով, գտնել Ճշմարտության այն հատիկները, որոնք ցրված են տարբեր ուսմունքներում ու հավատներում:

Մի՛ մոռացեք, որ Ճշմարտությունը մեկն է, բայց տարբեր է նրա բեկումը մարդկանց գիտակցության մեջ, ինչը կախված է մարդկանց զարգացման մակարդակից:

Ճիշտ այնպես, ինչպես աշնանը ծառերը կորցնում են իրենց տերևները, դուք էլ կորցնում եք ձեր ֆիզիկական մարմինները. բայց միայն այն բանի համար, որպեսզի նորից աշխարհ գաք, նորից ծնվեք և նոր մարմին ստանաք: Իմաստուն մարդը, այս կյանքում ապրելով, մտածում է իր հաջորդ կյանքի մասին: Նա հասկանում է, որ յուրաքանչյուր իր ընտրությունը, արարքը, գործողությունը, միտքը կամ զգացմունքը կազմավորում են իր ապագան այս կյանքում, ինչպես նաև իր հաջորդ

կյանքի հանգամանքները: Շատ օգտակար կլինի ձեր զարգացման համար, եթե ձեր կյանքի յուրաքանչյուր պահի մտորեք այն մասին, որ այն, ինչ դուք անում եք, անդրադառնում է ձեր ապագա կյանքի վրա: Մի՛ ձգտեք այս կյանքում պարգևներ ստանալ ձեր բարի գործերի դիմաց: Ձգտեցեք պարգևներ ստանալ հաջո՛րդ կյանքում: Դա այն նվազագույն խնդիրն է, որ կանգնած է ձեր առջև:

Իսկ ձեզնից նրանք, ովքեր ունեն ավելի լայն գիտակցություն, հասկանում են, որ իրենք Աստծո անբաժանելի մասն են, և ինչպես Երկրի վրայի բոլոր կենդանի էակները, կազմում են Աստծո մարմինը: Ուստի ձեզ համար դադարում է որևէ նշանակություն ունենալ պարգևի ստացման հարցը՝ նաև հաջորդ կյանքի առումով:

Դուք ձեր նպատակը տեսնում եք բոլոր կենդանի էակներին օգնելու մեջ, որովհետև միաժամանակ հանդիսանում եք այդ կենդանի էակներից յուրաքանչյուրը: Եվ միասնական օրգանիզմ կազմելով համայն Արարչության հետ՝ դուք այլևս չեք կարող պնդել, թե օրգանիզմի այն մասը կամ համակարգը, որին դուք եք պատկանում, ամենակարևորն է: Եթե ձեր օրգանիզմում սիրտը կամ երիկամներն ասեն, թե իրենք ամենակարևորն են և արժանի են իրենց նկատմամբ հատուկ վերաբերմունքի, ապա դա կանդրադառնա ամբողջ օրգանիզմի վրա: Ամբողջ օրգանիզմը կսկսի իրեն հիվանդ զգալ: Իսկ տիեզերքի բոլոր մյուս կենդանի էակներից ինքներդ ձեզ առանձնացնելը միայն ձեր գիտակցության արգասիքն է և բնորոշ է միայն էվոլյուցիոն զարգացման տվյալ փուլի համար:

Եվ որքան զարգացած է մարդու գիտակցությունը, այնքան նա ավելի քիչ հակասություններ է տեսնում տարբեր կրոնական համակարգերի միջև, այնքան ավելի մեծ միասնականություն է զգում ամեն մի կենդանի էակի հետ:

Հապա փորձեք հակասություններ և վատ բաներ փնտրել ձեզ շրջապատող ամեն ինչում: Հենց այդպես է գործում, այսպես կոչված, էգոիստական՝ ինքն իր մեջ կենտրոնացված, գիտակցությունը: Դրանով այնքան կիջեցնեք ձեր թրթռումները, որ արտաքին աշխարհից ձեր կյանքի մեջ կներքաշեք ամենավատ դրսևորումները: Դուք դժբախտ կլինեք: Եվ ձեզ շրջապատող մարդիկ նույնպես դժբախտ կլինեն:

Եթե խորանանք, ապա մարդկանց մեծամասնությունը հենց այդպես էլ վարվում է: Նրանք առաջին հերթին թերություններն են մատնանշում այն ամենի մեջ, ինչն իրենց շրջապատում է: Եվ դա բնական է. նրանց գիտակցությունն այնքան անկատար է, որ միայն թերություններ են տեսնում: Այդ պատճառով, նման մարդիկ հանդիսանում են յուրահատուկ անկատարության գրգռիչներ, պատրանքների գրգռիչներ: Նրանք հանդիսանում են պատրանքների վիթխարի արտադրողներ, ուղղակի ռեկորդակիրներ՝ անկատար մտքերի ու զգացմունքների, անկատար էմոցիաների ու գործողությունների արտադրության ասպարեզում:

Բայց, ի վերջո, այդ ամենին պետք է վերջ տրվի:

Իսկ քանի որ ձեր աշխարհում գործում է ազատ կամքի օրենքը, ապա միայն դո՛ւք կարող եք ցանկանալ փոխել այդ իրավիճակը: Միայն դո՛ւք կարող եք փորձել փոխել ինքներդ ձեզ և շրջապատի նկատմամբ ձեր վերաբերմունքը:

Հեռո՛ւ քշեք ձեր գլխից ու սրտից այն ամենը, ինչը բաժանման է տանում, ինչը ստիպում է մեղադրել ուրիշներին, փնտրել ամեն ինչում հակասություններ և անկատարություն:

Դադարե՛ք ձեր մտքի մեջ փնտրել նրանց, ովքեր ձեր սահմաններից դուրս են և, ձեր կարծիքով, խանգարում են ձեզ: Դրանք կարող են լինել ձեր հարևանները, աշխարհընկալման այլ համակարգի ներկայացուցիչները, լքյալ հրեշտակները կամ համաշխարհային չարը:

Այո՛, անկատարությունն առատ է ձեր աշխարհում: Բայց երբ դուք անընդհատ ձեր ուշադրությունը կենտրոնացնում եք անկատարության վրա, ապա կամովին Աստծո էներգիայով ոռոգում եք մարդկային անկատար գիտակցության մոլախոտերը: Նայեք, թե ի՛նչն եք ոռոգում, որտե՛ղ եք ծախսում Աստծո կողմից տրված էներգիան:

Մշտապես պահպանեք ձեր թրթիռների մակարդակը ձեզ համար հնարավոր առավելագույն բարձրության վրա: Իսկապես, շատ դժվար է մշտապես գիտակցությունը պահել մաքուր վիճակում՝ գտնվելով անկատարության մեջ: Բայց դուք պետք է դա անեք: Օգտագործե՛ք այն ամենը, ինչն օգնում է բարձրացնել ձեր գիտակցությունը, բանաստեղծությունները, երաժշտությունը, բնությունը, երեխաների հետ խաղը, ծաղիկները:

Ձեր ուշադրության էներգիայով ոռոգեք միայն կատարյալ բաները: Դա չի նշանակում, որ պետք է ձեզ մեկուսացնեք աշխարհից: Եղե՛ք աշխարհում՝ անկատարի դրսևորման մեջ, բայց թույլ մի՛ տվեք այդ անկատարին տիրել ձեզ, ձեր գիտակցությանը, ձեր հոգուն: Երբ դուք սկսում եք կենտրոնանալ կատարյալ աստվածային դրսևորումների վրա, ապա բարձրացնում եք ձեր թրթիռները: Դուք դառնում եք երջանիկ մարդ: Բայց մի՛ մոռացեք, որ ձեր պարտականությունների մեջ է մտնում նաև բոլոր կենդանի էակներին օգնելը: Համայն տիեզերքի օրենքն այն է, որ վերինը պետք է ծառայի ստորինին:

Նա, ով ունի բավականաչափ ընդլայնված գիտակցություն, պարտավոր է օգնել իր կրտսեր եղբայրներին ու քույրերին: Եվ մենք ինքներս ձեզ տալիս ենք այդպիսի օրինակ:

Տեսեք, թե որքան էներգիա ու ջանքեր ենք մենք ծախսում, որպեսզի օգնենք ձեզ՝ բացելու Աստծո Ճշմարտության ձեր ընկալման լոտոսը:

Ես չեմ ասում ոչինչ, ինչը դուք նախապես չգիտեիք: Ձեզ շատ քիչ բան է մնում՝ կյանքում վարվել ստացած գիտելիքներին համապատասխան:

ԵՍ ԵՄ ձեր եղբայր Հաութման

ՊԱՇՏԵԼԻ ԱԼՖԱ

18 մարտի, 2005 թ.

ՊԱՅՔԱՐԻ ԶԳԱՑՄՈՒՆՔԸ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԶԳԱՑՄՈՒՆՔ ՉԷ

ԵՍ ԵՄ Ալֆան: Ես ահա եկել եմ: Համաձայն Օրենքի՝ Ես կարող եմ դեսպանորդի տաճարը մուտք գործել միայն նրա հրավերով:

Տատյանան ինձ հրավիրել է: Եվ ահա ես հնարավորություն ունեմ նորից խոսելու ձեզ հետ:

Երկնոլորտների ցանկությունն է շարունակել այս դեսպանորդի միջոցով խոսելն այնքան ժամանակ, քանի դեռ չեն փոխվել արտաքին ու ներքին հանգամանքները:

Ձեր աշխարհը նման է ճահճի, և հենց որևէ մարդու ներքին թրթիռները սկսում են չափազանց շատ տարբերվել ձեր աշխարհի միջին թրթռանքից, Օրենքի ընդդիմությունն սկսում է ջանքեր գործադրել, որպեսզի ամեն կերպ խլացնի իր համար վտանգ ներկայացնող աղբյուրը:

Ձեր աշխարհի հետ այս կամ այլ կերպ կապված համարյա յուրաքանչյուր էակի կողմից բարձր թրթիռներն ընկալվում են որպես վտանգի աղբյուր: Լույսի այդ թրթիռներն, իսկապես, իրենց մեջ վտանգ են պարունակում: Նրանք ավերում են այն ամենը, ինչը չի համապատասխանում տիեզերական էվոլյուցիայի հաջորդ փուլին համապատասխանող Աստծո մտահղացմանը:

Ժամանակը փոխվել է: Եվ եթե նախկինում մենք կարող էինք գործել մեր դեսպանորդների միջոցով, և այդ գործողությունը կարելի էր նմանեցնել Լույսի առվակի, ապա այժմ արդեն այն ավելի շատ նման է Լույսի ջրվեժի:

Մենք ձգտում ենք լցնել ձեր աշխարհը, որքան հնարավոր է, ավելի մեծ Լույսի հոսքով: Եվ այդ հոսքը տառացիորեն կսրբի այն ամենը, ինչը չի համապատասխանի Աստծո՝ Երկրի էվոլյուցիայի հաջորդ փուլի համար նախատեսված մտահղացմանը: Ուստի և դիմադրությունը հսկայական է: Եվ ճակատամարտի գիծն անցնում է մեր պատգամաբերների սրտերի միջով:

Դա, իրոք, վիթխարի ճակատամարտ է, որը պահանջում է ուժերի վիթխարի լարում:

Նոր փուլ է, նոր Տիեզերական հնարավորություն. և դիմադրություն՝ այդ հնարավորությանը: Այս տիեզերքը ձևավորող երկու ուժերը, որոնք արտաքնապես իրար հակադիր են երևում, իրականում պարզապես մասնակցում են Աստծո կողմից համայն տիեզերքի համար նախատեսված մտահղացման իրականացմանը:

Ուժերից մեկն այն է, որը նպաստում է պատրանքների երևակմանը՝ երևակված աշխարհների ստեղծմանը: Եվ կա մյուս ուժը, որը նպաստում է երևակված աշխարհների վերադարձին դեպի նախասկզբնական, Չդրսևորված Ամենիմացության վիճակ:

Տիեզերքի սփռման առաջին փուլում այն ուժը, որը նպաստում է պատրանքների ստեղծմանը, դիմադրության է հանդիպում մյուս ուժի կողմից, որը ձգտում է պահպանել նախասկզբնական անդորրությունը:

Այս տիեզերքի համար գոյություն ունեցող կրիտիկական պահից սկսած՝ ուժերը փոխում են իրենց դերերը, և դիմադրություն է ցուցաբերում այն ուժը, որը ձգտում է պահպանել պատրանքը:

Դրանք այն ուժերն են, որոնք տարբեր աշխարհայացքային համակարգերում անվանվել են Յան և Ին, արական և իգական նախասկիզբներ, բարու և չարի ուժեր:

Եվ ահա դուք տեսնում եք, որ այդ երկու ուժերն էլ Արարչի մտահղացման անհրաժեշտ մասերն են: Նրանք իրար փոխլրացնում են, և, որքան աշխարհն ավելի մեծ խտություն ունի, այնքան ավելի մեծ թշնամություն է դրսևորվում այդ երկու ուժերի միջև: Եվ հակառակը, որքան ավելի նուրբ է աշխարհը, այնքան ավելի ներդաշնակ է տիեզերքի այդ երկու հիմնական ուժերի փոխազդեցությունը:

Ձեր գիտակցության մեջ այդ երկու ուժերի միջև թվացյալ թշնամության հաղթահարումը հանդիսանում է այստեղ տրվող Ուսմունքի հիմնական մասը:

Պայքարի զգացմունքն աստվածային զգացմունք չէ: Այն հատուկ է միայն թանձր աշխարհներին: Եվ Երկնոլորտներում ընթացող պայքարի նշանակության այն մեկնաբանությունները, որոնք տրվում են շատ ուսմունքներում, բոլորովին այլ իմաստներ են պարունակում իրենց մեջ: Դրանք տարբեր են լինում՝ կախված այն մակարդակից, որին պատկանում է զարգացման մեջ գտնվող էակների գիտակցությունը:

Կար այնպիսի փուլ, որի ընթացքում թույլատրելի էր այդ պայքարը մեկնաբանել որպես պայքար, որը տեղի է ունենում Երկնային հրեշտակների միջև: Դա համապատասխանում էր այդ փուլում ապրող մարդկանց գիտակցության մակարդակին:

Այժմ եկել է պահը, երբ անհրաժեշտ է փոխել իրար հետ կռիվ տվող հրեշտակների կերպարը ձեր գիտակցության մեջ և այն փոխարինել այս տիեզերքի երկու հակոտնյա ուժերի փոխազդեցության գաղափարով: Որքան դուք ճշմարտությանն ավելի մոտ դիտարկեք այդ երկու ուժերի փոխազդեցությունը, այնքան ձեզ համար նվազ հի-

վանդագին կլինի Աստծո Ճշմարտության իմացության նոր մակարդակին ձեր մոլորակի անցումը:

Այս աշխարհում ընթացող պայքարի ճիշտ ըմբռնումը ձեզ կազատի հոգևոր ուղու շատ սխալներից, որոնք կապված են ճշմարտության ձեր ըմբռնումն ուժով պնդելու ձեր ցանկության հետ:

Դուք կարող եք պնդել ձեր Ճշմարտությունը, բայց չպետք է պայքարի մեջ մտնեք յուրաքանչյուրի հետ, ով, ըստ ձեզ, սխալ է հասկանում Ճշմարտությունը և, հենց միայն ձեր կարծիքով, ենթակա է պատժի ու դատաստանի:

Թողեք դատեն նրանք, ում դա վիճակված է անել: Մի՛ փորձեք ձեր մարդկային գիտակցությամբ դատել այնպիսի բաների մասին, որոնք դեռևս հասու չեն ձեր հասկացողությանը:

Ապրե՛ք աշխարհում, պահպանե՛ք Սիրո և Ներդաշնակության զգացումը, և ամեն ինչ իր տեղը կընկնի:

Ես հատուկ եկա, որ տամ այս կարևոր Ուսմունքը: Եվ հուսով եմ, որ ինձ հասկացաք:

ԵՍ ԵՄ Ալֆան՝ ձեր Երկնավոր Հայրը

ՏԵՐ ՍՈՒՐԻԱ

19 մարտի, 2005 թ.

ՄԵՆՔ ՊԱՐԶԱՊԵՍ ԼՈՒՅԿԻՆ ՀԵՌԱՑՐԻՆՔ ԵՐԵԽԱՆԵՐԻՑ

ԵՍ ԵՄ Սուրիան. այսօր ձեզ այցի եմ եկել Մեծ Կենտրոնական Արևից, որպեսզի այս դեսպանորդի միջոցով Ուսմունք տամ կարմայի մասին:

Դուք ծանոթ եք կարմայի հասկացությանը՝ որպես մի էներգիայի, որը երկրային մարմնավորումների շրջապտույտի մեջ ձեր գտնվելու ընթացքում մշտապես ուղեկցում է ձեզ: Դուք ստանում եք Աստծո էներգիա, որը տիեզերքի կյանքի աղբյուրն է, որից հետո օգտագործում եք այդ էներգիան՝ Աստծո կողմից տրված ձեր ազատ կամքին համապատասխան: Ոչ միշտ է ձեր կողմից այդ էներգիան օգտագործվում այնպես, ինչպես Աստված է կամենում, և այդ դեպքում սխալ դասակարգված էներգիան լրացնում է ձեր կարմայական բեռը՝ կուտակվելով ձեր նուրբ և ֆիզիկական մարմիններում:

Այնուհետև ուժի մեջ է մտնում նմանության օրենքը:

Սխալ դասակարգված էներգիան, որը ձեր կյանքում մշտապես ուղեկցում է ձեզ, դեպի ձեր կողմն է ձգում կյանքի այնպիսի իրադրություններ, որոնցով պետք է անցնեք, որպեսզի դաս առնեք և այդ իրադրության մեջ առաջնորդվեք ոչ թե ըստ ձեր կամքի, այլ ԱստծԿամքին համապատասխան:

Ըստ էության, դուք միշտ կարմա եք ստեղծում, երբ խախտում եք Աստծո Կամքը և գործում ձեր եսասիրական մղումներին համապատասխան:

Այդ պատճառով ձեր կարման ուղիղ համեմատական է ձեր էգոիզմի աստիճանին, Աստծո Օրենքից ձեր կտրվածության աստիճանին և Աստծո Օրենքը չընդունելու ձեր աստիճանին:

Եվ կարմայով պայմանավորված յուրաքանչյուր իրադրության մեջ ձեր կատարած ճիշտ նախընտրանքները թեթևացնում են ձեր կարման: Յուրաքանչյուր այդպիսի ճիշտ նախընտրանք մոտեցնում է ձեզ Աստծուն, ստիպում հրաժարվել ձեր իսկ կողմից ստեղծված ձեր անիրական մասից և հրաժեշտ տալ նրան:

Տիեզերական բոլորապտույտներին համապատասխան՝ ամեն մի բոլորաշրջանի սկզբում դուք սուզվում եք նյութականության մեջ, ձեռք եք բերում կարմա, որից հետո փորձում եք դուրս գալ նյութականությունից՝ կարծես մշտապես վերլուծելով ձեր անցյալի սխալները, երբ նորից ու նորից բախվում եք կարմայի բեռնաթափում պահանջող նույնատիպ իրադրությունների:

Նյութականությունից դուրս գալու ներկա բոլորաշրջանը դեռ նոր է սկսվել և կտևի շատ տարիներ, միլիոնավոր երկրային տարիներ:

Եկեք այժմ դիտարկենք այն թողության շնորհը, որը ձեզ տրվել է նախորդ դեսպանորդների միջոցով. նկատի ունեմ մանուշակագույն բոցի թողությունը: Մանուշակագույն բոցի պատվիրանների ընթերցման օգնությամբ կարման փոխակերպելու էությունն այն էր, որ այդ պատվիրանների ընթերցման ժամանակ դուք պետք է գտնեիք ձեր ներսի ոչ աստվածային հատկանիշները, և, ձեր ֆիզիկական աշխարհ ներքաշելով Աստծո լրացուցիչ էներգիա, ձևափոխեիք այդ բացասական հատկանիշները դրականի կամ աստվածայինի:

Ի՞նչ տեղի ունեցավ այն բանից հետո, երբ ձեզ տրվեց այդ թողության շնորհը:

Դուք ապրում եք երկակիության աշխարհում, ինչը նշանակում է, որ ձեր աշխարհում տառացիորեն ամեն ինչ կարող է օգտագործվել ինչպես բարու՝ բարիքի, այնպես էլ չարի օգտին:

Դուք կհարցնեք՝ ինչպե՞ս է հնարավոր կարմայի փոխակերպման համար նախատեսված մանուշակագույն բոցի պատվիրաններն ի սպաս դնել չարին:

Բացատրությունը շատ պարզ է, և այժմ ես այդ մասին կարող եմ բացեիբաց ասել, որովհետև այս պահին մանուշակագույն բոցի թողությունն արդեն հանված է Երկիր մոլորակից:

Այն պահին, երբ պատվիրանների ընթերցման ժամանակ ձեր կողմն եք ձգում Աստծո էներգիայի լրացուցիչ հոսք, դուք ղեկավարում եք այդ հոսքը ձեր մտքերի և զգացմունքների միջոցով: Եվ եթե լրացուցիչ էներգիայի ընդունման պահին ձեր մտքերն ու զգացմունքներն աչքի չեն ընկնում մաքրությամբ ու աստվածային կատարելությամբ, ապա ձեր էլեկտրոնային գոտու՝ ձեր ստորին չորս մարմինների, կարմայական կուտակների բեռնաթափման փոխարեն դուք այդ կուտակների վրա ավելացնում եք այն էներգիան, որը սխալ եք դասակարգել մանուշակագույն բոցի պատվիրանի ընթերցման պահին:

Եվ այդ եղանակով ձեր կարման բեռնաթափելու փոխարեն դուք նոր կարմա եք ստեղծում:

Ինչպես տեսնում եք, մանուշակագույն բոցի պատվիրանները հզոր զենք էին, որը ձեզ էր տրված մոլորակի համար այս ծանր ժամանակներում, բայց և տեսաք, որ մանուշակագույն բոցի էներգիայի 90 տոկոսն այդ պատվիրանների ընթերցման պահին նստեցվում էր ձեր ստորին մարմիններում, քանի որ այդ պահին դուք ոչ թե մտածում էիք ձեր էգոյից, ձեր անկատարությունից ազատվելու մասին, այլ այն մասին, թե ինչ կստանաք Աստծուց ձեր բազմաժամյա արթնության դիմաց: Եվ, որ ավելի վատ է, մեղադրական մտքեր էիք ունենում ձեր եղբայրների հանդեպ: Այդ պատվիրանների ընթերցման ժամանակ ունենում էիք նաև այլ բացասական մտքեր ու զգացմունքներ:

Ուստի մանուշակագույն բոցի թողության շնորհը ներկայումս գործում է ընտրողաբար՝ միայն այն խմբերի ու մարդկանց համար, ովքեր ճիշտ ներքին շարժառիթներ են ունենում, երբ ձեռնամուխ են լինում մանուշակագույն բոցի պատվիրանների ընթերցմանը: Եվ սա ընդամենը խելամիտ զգուշավորության միջոց է: Մենք պարզապես սահմանափակում ենք մտցրել այն անձանց համար, որոնք դեռևս չեն հասել գիտակցության զարգացման բավարար մակարդակի, որ այդ հզոր զենքը կիրառելիս իրենք իրենց չվնասեն: Մենք պարզապես լուցկին հեռացրինք երեխաներից:

Նույնը վերաբերում է նաև ամեն ամսվա 23-ի համար իմ տված թողության շնորհին, որը թույլ է տալիս փոխակերպության ենթարկել գալիք ամսվա կարման: Այն նույնպես սահմանափակ է և գործում է ընտրողաբար:

Ինչպե՞ս որոշել՝ գործո՞ւմ է ձեզ համար թողությունը, թե՞ ոչ:

Դա կարող եք որոշել Ուղու ձեր նվաճումներով: Եթե մեկ տարի, երկու տարի, տասը տարի առաջ դուք նեղանում ու դատապարտում էիք, թույլ էիք տալիս ձեզ բնորոշ անկատարություններ և այժմ էլ նույն ինտենսիվությամբ շարունակում եք դրանք, ապա ինքներդ կարող եք հասկանալ, որ թողությունը ձեզ չի վերաբերում: Սակայն ոչինչ անդարձ կորած չէ: Եթե դուք անկեղծ սրտով որոշեք ազատվել ձեր անիրական մասից և ձեր այդ պատրաստակամությունը ցուցաբերեք ամենօրյա մշտական ձգտումներով, ապա ամեն ինչ հետ կվերադարձվի: Դուք կզգաք, թե ինչպես է մանուշակագույն բոցը վերադառնում ձեր կյանք և օգնում ձեզ ազատվելու ձեր անկատարություններից:

Վերջին հաշվով, ամեն ինչ որոշվում է ձեր ներքին մղումով և ձեր ներքին շարժառիթներով:

Կուզենայի ձեզ հիշեցնել, որ կարևորն ամեն դեպքում ոչ թե պատվիրանի ընթերցումն է կամ աղոթքը, այլ ձեր էգոյից ազատվելու ցանկությունը և կյանքին, Աստծուն ծառայելու ցանկությունը: Իսկ այդ ցանկությունները կարող են իրականացվել ցանկացած գործում, ցանկացած իրադրության մեջ, որի հետ կյանքում դուք բախվում եք:

Ամենասովորական և առօրեական գործերը, շրջապատող աշխարհի մարդկանց հետ ձեր հարաբերությունները կարող են բեռնաթափել ձեր կարման ոչ պակաս, քան պատվիրանների ընթերցումը: Ձեր կյանքի յուրաքանչյուր պահի դուք ընտրություն եք կատարում: Եվ ձեր արարքներով կամ բեռնաթափում եք անցյալի կարման, կամ էլ եղածի վրա նոր կարմա եք ավելացնում:

Եվ ցանկացած կատարյալ հոգևոր ուղեցույց, անգամ ամենալավ աղոթքներն անօգուտ կլինեն ձեր հոգևոր առաջընթացի համար, եթե դուք դրանք օգտագործեք այնպիսի շահադիտական նպատակներով, որ ինչ-որ արտոնություններ ձեռք բերեք ձեր յուրայինների կամ ձեզ համար:

Կա միայն մեկ ճշմարիտ շարժառիթ, որով հարկ է ձեռնամուխ լինել ցանկացած հոգևոր ուղեցույցի կիրառմանը կամ ցանկացած հոգևոր գործառությանը. դա սեփական էգոյից ազատվելն ու Աստծուն մոտենալն է, Աստծուն և բոլոր կենդանի էակներին ծառայելը: Եթե դուք ձեռնամուխ եք լինում հոգևոր գործառության ցանկացած ուրիշ նպատակով, ապա կարմա եք ստեղծում:

Հոգևոր բնագավառում, կրոնի բնագավառում գործում է ճիշտ նույնպիսի երկակի սկզբունք, ինչպիսին հատուկ է ձեր աշխարհին:

Եվ երբեմն մարդկային պատկերացմամբ հավատացյալ մարդը, որը կանոնավոր կերպով մասնակցում է բոլոր կրոնական ծեսերին ու արարողություններին, իր հոգևոր մակարդակով ավելի ցածր է նրանից, ով, չնայած երբեք չի հաճախում եկեղեցի և չի մասնակցում եկեղեցական ծեսերին, բայց ճիշտ ներքին շարժառիթներ ունի և ընթացիկ կյանքում առաջնորդվում է այն պատվիրաններով, որոնք տալիս էին Հիսուս և մարդկության մյուս Ուսուցիչները:

Մեծ հայտնություն արած չեմ լինի, եթե ասեմ, որ հոգևոր առումով զարգացած մարդկանց քանակը կրոնական կառույցներից դուրս շատ ավելի մեծ է, քան դրանց ներսում:

Ես այսօր ձեզ բավարար քանակի տեղեկատվություն մատուցեցի մտորումների համար: Նաև օգտվեցի այս հնարավորությունից, որ ձեզ տեղեկություններ հաղորդեմ այն փոփոխությունների մասին, որոնց ներկայումս ենթարկվել են մեր նախորդ թողության շնորհները:

ԵՍ ԵՄ Սուրիան Մեծ Կենտրոնական Արևից: ՕՄ

ՎԵՀԱՊԵՏ ԷԼ ՄՈՐԻԱ

20 մարտի, 2005 թ.

ԵԿԵԼ Է ՊԱՀԸ, ԵՐԲ ՁԵՐ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՊԵՏՔ Է ՀՐԱԺԱՐՎԵՔ ՊԱՅՔԱՐԻ ՑԱՆԿԱՑԱԾ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԻՑ

ԵՍ ԵՄ Էլ Մորիան: Ես եկա...

Պաշտելինե՛րս, ճանաչեցի՛ք ինձ: Ջնո՛ւմ ձեր թրթիռները: Բոլոր խոսքերից ու պատկերներից այն կողմ կա մի բան՝ Աստծո Իրականությունը, որը հնարավոր չէ շփոթել որևէ այլ բանի հետ:

Ես ձեզ այցի եմ եկել այդ Բարձրագույն Իրականությունից, որպեսզի տամ հետևյալ Ուսմունքը:

Երբ ես վերջին անգամ մարմնավորվեցի, և այդ մարմնավորման մեջ դուք ինձ ճանաչեցիք որպես Էլ Մորիա, եկել էի այն նպատակով, որ արևմտյան աշակերտներին տամ գաղտնի գիտելիքների այն մասը, որին տիրապետում էին ձեռնադրյալները՝ սկսած հինավուրց Լեմուրիայի և Ատլանտիդայի ժամանակներից: Դեպի այդ գիտելիքներ տանող ուղին բաց է եղել շատ քիչ թվով ձեռնադրյալների համար, որոնք մարմնավորվում էին նորից ու նորից, որպեսզի ֆիզիկական օկտավայում վառ պահեն Ճշմարտության բոցը:

Ճշմարիտ Գիտելիքի կրակը չի մարել երբեք, բայց այն մատչելի է եղել շատ քիչ թվով մարդկանց, որոնք բծախնդրորեն պաշտպանում էին այդ գիտելիքներն անգետներից ու տհասներից:

Մենք՝ երեք արքաներս՝ Էլ Մորիան, Կութհումին և Ջավալ Կհուլը, մարմնավորվեցինք 19-րդ դարում և հնարավորություն ունեցանք տալու այն գաղտնի գիտելիքների մեծ մասը, որոնց տիրապետում էին այս մոլորակի միայն բարձրագույն Ձեռնադրյալները: Մեզ հաջողվեց ստեղծել «Թեոսոֆիական Ընկերություն» կազմակերպությունը, որի նպատակն այդ գիտելիքների տարածումն էր:

Այն պատճառով, որ Արևմուտքը բացասաբար էր վերաբերվում Հնդկաստանից և Տիբեթից եկած ամեն ինչին՝ համարելով, որ դրանք, իբր, ավելի ցածր մակարդակի գիտելիքներ են, քան այն գիտելիքները, որոնց տիրապետում էին այն ժամանակվա լավագույն ուղեղները, մենք ստիպված եղանք դիմել միջնորդների, որոնք ունակ էին ընկալելու և վերարտադրելու մեր ֆիզիկական ուղեղներում առկա պատկերներն ու գիտելիքները: Տեղեկատվության այդպիսի ընդունիչ ծառայեց Ե. Պ. Բ.-ն՝ մեր հավատարիմ աշակերտուհին ու հետևորդուհին: Մեր գաղափարների առաջխաղացման նպատակով մենք օգտվեցինք նաև մի քանի այլ մարդկանց ծառայությունից, որոնք Անգլիայի արիստոկրատական միջավայրից էին:

Մեր թելադրությամբ գրվեցին մի շարք գրքեր: Մենք մանրակրկիտ ստուգում էինք այն ամենը, ինչը հանձնվում էր տպագրության, որպեսզի հնարավորինս ավելի բարձր որակով մատուցվի Ճշմարտությունը: Եվ իրոք, բոլոր աշխատությունները, որոնք լույս տեսան Բլավատսկայայի միջոցով, պարունակում էին Ճշմարտություն. սակայն նյութի մատուցման ձևը դիտմամբ խճողված էր, որպեսզի այդ Ճշմարտությունից կարողանային օգտվել մարմնավորման մեջ գտնվող միայն այն հոգիները, որոնք բանալի կստանային դրա ճանաչման համար:

Մեր նպատակն իրագործվեց փայլուն կերպով:

Բլավատսկայայի կողմից հրատարակված աշ-

խատությունների տեսքով մենք Երկրի վրա թողեցինք հինավուրց Ճշմարտության նյութական վկայությունը:

Իրականում այդ աշխատությունների իրական հեղինակները մենք էինք:

Մենք ի վերջո հասանք մեր առջև դրված նպատակին: Արևմուտքի լավագույն ուղեղների ստեղծագործական միտքը ճիշտ ուղղություն ստացավ: Եվ մեր ցանած գիտելիքի սերմերը ծլարձակեցին հաջորդ՝ 20-րդ դարի էզոթերիկական ուսմունքներում:

Մենք չէինք կարող մեր Ուսմունքը տալ Ռուսաստանում: Այդ երկիրն ամենաշատն էր ընկալունակ այդ գիտելիքի նկատմամբ, բայց հատուկ այն բանի համար, որ գիտելիքը մատչելի չդառնա ռուսներին, մեզ ընդդիմադիր ուժերը ձեռնարկեցին բոլոր հնարավոր փորձերը, որպեսզի տրված Ուսմունքը տարածում գտնի Ռուսաստանում ամբողջ 100 տարի անցնելուց հետո միայն:

Եվ երբ այն վերջապես հասավ Ռուսաստան, գիտելիքին միախառնվել և այն մթագնել էին այլևայլ շատ ուսմունքներ, որոնք ծնունդ էին առել Ամերիկայի հողում:

Չնայած այդ ուսմունքների հիմքում ընկած էին այն գիտելիքները, որոնք շարադրված էին Բլավատսկայայի կողմից հրատարակված մեր աշխատություններում, այնուամենայնիվ ամերիկյան մտածողությանը հատուկ աղավաղումները արդեն նշանակալի չափով առկա էին այդ ուսմունքներում:

Եվ եթե մենք գիտելիքները տալու պահին միայն դիտմամբ խճճում էինք տեղեկատվությունը, որպեսզի այն մերկ տեսքով չհայտնվի անպատրաստ ուղեղների առջև, ապա ամերիկյանացված նոր ուսմունքներում ճշմարտությանը սուտ էր խառնվել՝ առանց մեր կարծիքը հաշվի առնելու:

Ահա այդ ամերիկյանացված փոխնակներն ի վերջո հասան Ռուսաստան: Իսկ օգուտը միայն այն եղավ, որ մարդիկ դիմեցին Բլավատսկայայի աշխատություններին, որոնց հավաստիության համար մենք անձնական պատասխանատվություն ենք կրում, քանզի ինքներս մասնակցել ենք այդ գրքերի ստեղծման գործին:

Այնուհանդերձ, անկեղծ աշակերտների մտքերում շփոթություն առաջացավ՝ կապված այն բանի հետ, որ շատ հակասություններ էին նկատվում ամերիկյանացված ուսմունքների և մեր կողմից տրված ուսմունքների միջև:

Քանի որ նորացված ուսմունքները տրվել էին պարզ ու մատչելի լեզվով, ապա նախապատվությունը տրվեց հատկապես այդ ուսմունքներին:

Սակայն եկել է ժամանակը, երբ հրամայական պահանջ է զգացվում պարզաբանելու հիմնական և գլխավոր հակասությունը. և դա վերաբերում է անկյալ հրեշտակների ու Լյուցիֆերի անկման հարցին:

Անցյալ տարի մենք փորձեցինք մեր Դեսպանորդ Տատյանայի միջոցով տալ անկյալ հրեշտակների և մարդկության անկման հարցի ավելի պարզ շարադրանք՝ պարզաբանելով և լուսաբանելով «Գաղտնի Վարդապետության» շարադրանքը:

Եվ ահա այժմ ես նորից ստիպված եմ անդրադառնալ այդ հարցին, որովհետև մենք տեսնում ենք, որ մեր լավագույն աշակերտների համար այն ելել է առաջին պլան: Այդ պատճառով պնդում ենք, որ դուք առավել ուշադիր դիտարկեք այդ թեման, այնպես, ինչպես այն շարադրված է «Գաղտնի Վարդապետության» մեջ:

Եկել է պահը, երբ ձեր գիտակցության մեջ պետք է հրաժարվեք պայքարի ցանկացած դրսևորումից, այդ թվում նաև անկյալ հրեշտակների դեմ պայքարից:

Իրականում այդ հարցում բախվել են երկու տեսակետներ՝ երկու տարբեր մոտեցումներ մարդկության պատմությանն ու տիեզերքի զարգացման ելակետին վերաբերող հայացքների նկատմամբ: Մեկն այն մոտեցումն է, որը հատուկ է արևելյան փիլիսոփայությանը, և որն արտացոլված է Հնդկաստանի և Տիբեթի կրոնական համակարգերում, իսկ մյուսն այն մոտեցումն է, որը հատուկ է արևմտյան գիտակցությանը՝ փոխառնված այնպիսի աշխարհայացքից, ինչպիսին արևմտյան քրիստոնեական միտքն է և այդ ամերիկյանացված նոր ուսմունքները:

Ռուսաստանը՝ որպես արևելքի և արևմուտքի միջև ընկած երկիր, իր աշխարհագրական դիրքով կարողություն ունի այդ երկու փիլիսոփայական համակարգերն ընկալելու և յուրացնելու:

Ըստ այդմ՝ մենք նորից ներկայանում ենք ռուսազգի Դեսպանորդի միջոցով, որպեսզի ուղղություն տանք ձեր մտքին:

Անկյալ հրեշտակների և, այսպես կոչված, Լյուցիֆերի խռովության հարցերը ոչ մի տեղ շարադրված չեն ավելի լավ, քան մենք ենք դա արել՝ գտնվելով մարմնավորված վիճակում:

Արդ, եկել է անցյալում տրված գիտելիքը վերաիմաստավորելու և Ճշմարտության վերաբերյալ ձեր պատկերացումը նոր մակարդակի բարձրացնելու ժամանակը:

Ամեն անգամ, երբ ձեր մեջ ցանկություն է առաջանում պայքարի մեջ մտնելու անկյալ հրեշտակների հետ, հիշեցեք, որ ձեզնից յուրաքանչյուրն իր մեջ ունի այդ հրեշտակը՝ որպես, այսպես կոչված, հինգերորդ սկզբունք կամ Ես-Քրիստոս:

Դուք չեք կարող կռիվ տալ ձեր մի մասի հետ: Ձեր խնդիրը հենց այն է, որ այդ ընկած հրեշտակին օգնեք վերադառնալու Տուն՝ Աստծո մոտ: Իսկ նրան խանգարում են դա անել ձեր չորս ստորին մարմինները, որոնք Երկրի վրա ձեր ունեցած երկար ու ձիգ մարմնավորումների ընթացքում կքել են ձեր կուտակած կարմայի բեռի տակ:

Ուստի ձեր բոլոր ջանքերը պետք է ուղղված լինեն այն բանին, որ ազատվեք ձեր իսկ անիրական մասից՝ ձեր էգոյից, ձեր կարմայական նստվածքներից, ապա բարձրացնեք ձեր գիտակցությունը մինչև Ես-Քրիստոսի մակարդակը՝ ձեր

Պահապան Հրեշտակի մակարդակը: Դա ձեր էվոլյուցիայի հաջորդ փուլն է, և այն տեղի կունենա, որքան էլ ուժեղ ընդդիմանաք ու կառչեք հաճկատարությամբ ձեզ մատուցվող համակարգից, որը մղում է ձեզ դեպի պայքարի ուղին:

Հիշեցեք Քրիստոսի Ուսմունքը, հիշեցեք Բուդդայի Ուսմունքը. արդյոք դրանցից որևէ մեկն ուսուցանո՞ւմ էր պայքարել անկյալ հրեշտակների դեմ:

Վերընթերցեք Աստվածաշունչը: Նույնիսկ այդ, մեր տեսակետից՝ ոչ այնքան մաքուր մնացած աղբյուրում դուք կարող եք գտնել Երկրի զարգացման պատմության մասին ճշմարիտ պատկերացումներ, եթե այդ հատվածները կարդաք՝ օգտվելով «Գաղտնի Վարդապետության» մեջ եղած բանալիներից:

Մենք շատ ջանք ու էներգիա ծախսեցինք, որպեսզի հաղթահարենք Տատյանայի արտաքին գիտակցության դիմադրությունը՝ նախորդ դեսպանորդների նկատմամբ նրա նախատրամադրվածությունը և անկյալ հրեշտակների մասին նրա ունեցած պատկերացումը, որ նա ստացել էր ամերիկյան դեսպանորդներից:

Քանի դեռ այս դեսպանորդի միջոցով խոսելու հնարավորություն կա, ես ասում եմ և հաստատում, որ ժամանակը փոխվել է, և որ անհրաժեշտ է բարձրանալ Աստծո Ճշմարտության գիտակցման նոր մակարդակի վրա:

Դուք ունեք այլընտրանք: Կարող եք դեռ երկար մտորել: Սակայն մի՛ մոռացեք, որ կան տիեզերական ժամկետներ, և ովքեր չտեղավորվեն այդ ժամկետներում, ստիպված կլինեն կուլ տալ ճանապարհի փոշին:

ԵՍ ԵՄ Էլ Մորիա Խանը

ՏԵՐ ՀԻՍՈՒՍ

21 մարտի, 2005 թ.

ԵՍ ԴԻՄՈՒՄ ԵՄ ՁԵԶՆԻՑ ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ԻՄ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՏՈՒԿ ՀԱՐԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԶԳՈՒՄ



ԵՍ ԵՄ Հիսուս: Ես եկել եմ Աստծո այս դեսպանորդի միջոցով:

Երկրի վրա իմ մարմնավորումից հետո անցել է շուրջ 2000 տարի: Ես երջանիկ եմ, որ կարող եմ օգտվել սույն հնարավորությունից և ոչ մեծ մի Ուսմունք տալ այս դեսպանորդի միջոցով:

Դուք տեղյակ եք, որ իմ մարմնավորման ընթացքում շատ մարդիկ էին գալիս՝ տեսնելու այն հրաշքները, որ ես գործում էի, բայց ավելի քիչ մարդիկ էին գալիս, որ լսեն իմ ուսմունքները. և միայն իմ ամենամերձավոր 12 աշակերտներն էին, որ ունակ էին այս կամ այն չափով ընկալելու այն գաղտնի գիտելիքները, որոնք ես տալիս էի:

Այդ գիտելիքները չափազանց շատ էին տարբերվում այն ժամանակվա կրոնական համոզմունքներից: Բայց ես ուսուցանում էի, որովհետև պարտավոր էի ցանել Ճշմարտության սերմերը թեկուզև ոչ շատ մեծ թվով հետևորդների սրտերում:

Ինչ կատարվեց հետո: Նրանց, ովքեր առավել լրիվ էին ընկալել իմ ուսմունքը, սկսեցին հետապնդել, սպանել:

Եվ գտնվեցին ուրիշ ավելի ճարպիկ մարդիկ, որոնք կարողացան հարմարեցնել իմ ուսմունքն իրենց շահամոլ նպատակներին և օգտագործել այն իրենց անձնական բարօրության համար՝ չմտահոգվելով այն մասին, որ աղավաղում են Աստծո Ճշմարտությունը:

Մեծ անդունդ գոյություն ունի այն ուսմունքի միջև, որ ես տվեցի աշխարհին իմ մարմնավորման ընթացքում, և այն ուսմունքների միջև, որ տալիս են քրիստոնեական եկեղեցիները:

Բայց և այնպես անցած 2000 տարիների ընթացքում առավել զարգացած հոգիները հասկանում էին այդ տարբերությունը և առաջնորդվում իմ ուսմունքի այն ընկալմամբ, որն իրենց սրտից

էր բխում, այլ ոչ թե մեռյալ տառով աղավաղված գրվածքներից:

Այդ հոգևոր նվիրյալներն այս կամ այն չափով ներքին կապ ունեին ինձ հետ: Եվ ես միշտ արձագանքում էի նրանց սրտերի անկեղծ մղումներին և իմ խրատներով ցուցաբերում էի ողջ հնարավոր օգնությունը, որը նրանք ստանում էին իրենց հոգում: Եվ հիմա՛ էլ ես ներքին կապ եմ պահպանում մարմնավորված շատ անհատականությունների հետ:

Այս թելադրությունը ես տալիս եմ ձեզ համար, ձեզ, որ զգում եք ինձ հետ ձեր ունեցած և կյանքից կյանք պահպանած ներքին հատուկ կապը:

Ձեզ պետք չէ ոչ մի արտաքին ուսմունք, որպեսզի զգաք մեր հաղորդակցման քաղցրությունը և իմ Սերը: Արտաքին ուսմունքները ծառայում են միայն ձեր գիտակցությունը ցնցելու, նրան ուղղություն տալու համար: Ցավոք սրտի, գոյություն ունեցող պաշտոնական եկեղեցին այնքան էլ չի քաջալերում ինձ հետ անմիջական հաղորդակցություն ունենալու ձեր ձգտումը:

Ուստի ես դիմում եմ ձեզնից նրանց, ովքեր հատուկ հարազատություն են զգում իմ նկատմամբ. իմացե՛ք, որ ես բաց եմ ձեր սրտերում ինձ հետ կապ ստեղծելու համար: Ես գալիս եմ յուրաքանչյուրի մոտ, ով ինձ հրավիրում է և նախապատրաստել է իր տաճարն ինձ ընդունելու համար:

Մի՛ ահաբեկվեք և մի՛ հուսահատվեք, եթե մեր հաղորդակցությունը միանգամից չի կայանում: Ինձ անհրաժեշտ է, որ ձեր թրթիռները հասնեն որոշակի մաքրության աստիճանի, որից հետո ես կկարողանամ ներկա գտնվել ձեր մեջ և հաղորդակցվել ձեզ հետ:

Ինձ հետ հաղորդակցվելու ձեր մղումը կստեղծի որոշակի ձգտման մագնիս, և ես հնարավորություն կստանամ ներքին հաղորդակցության համար մուտք գործել ձեր սրտի մեջ:

Եթե դուք ուշադրությամբ վերընթերցեք Կտակարանի նույնիսկ այն տարբերակը, որն այժմ մատչելի է ձեզ, ապա կտեսնեք, որ ես երբեք արտաքին ծիսակարգը պահպանելու կոչ չեմ արել: Ես կոչ եմ արել ընթանալ Ուղով, որն անցնում է ձեր սրտերի միջով:

Ես ուսուցանել եմ ձեզ, որ դուք նախապատրաստեք ձեր տաճարները փեսացուի գալստյան համար: Ձեր փեսան ձեր Ես-Քրիստոսն է:

Երբ դուք հասնում եք ձեր ստորին չորս մարմինների, ձեր հոգու որոշակի մաքրության աստիճանի, ապա հնարավորություն եք ստանում հաղորդակցվելու ձեր բարձրագույն Ես-Քրիստոսի՝ ձեր բարձրագույն մասի հետ, որից հետո ձեր Ես-Քրիստոսի միջոցով հնարավորություն եք ստանում հաղորդակցվելու նաև բոլոր Համբարձյալ Դասերի հետ:

Իրականում ձեզ պետք չէ ոչ մի արտաքին դեսպանորդ, որպեսզի մեր հաղորդակցությունը կայանա: Ես կտամ ձեզ և՛ իմ օժանդակությունը, և՛ իմ խաղաղությունը, և՛ իմ մխիթարությունը: Այդ ամենը դուք կստանաք ձեր ներսում՝ ձեր սրտում:

Ես կգամ բոլորի մոտ, ովքեր սպասում են ինձ, ովքեր ձանձրացել են առանց ինձ: Ես խոստանում եմ, որ կգամ ձեզնից յուրաքանչյուրի մոտ և կտամ հենց այն, ինչին ամենաշատն է ծարավ ձեր սիրտը: Ես ձեզ գիտելիք կտամ ձեր Սկզբնաղբյուրի՝ այն աշխարհի մասին, որտեղից եկել եք և ուր ձգտում եք վերադառնալ: Ես ձեզ կհիշեցնեմ ձեր առաջին սիրո մասին, ձեզ գիտելիք կտամ այն Ուղու մասին, որը ձեզ կբերի Տուն՝ ձեր Երկնավոր Հոր մոտ:

Մի՛ հավատացեք նրան, ով ձեզ կասի, թե ահա այս արքայությունն այստեղ է, կամ ահա այդ արքայությունն այնտեղ է: Մի՛ հավատացեք նրանց, ովքեր ձեզ կհամոզեն կառուցել այդ Արքայությունն արտաքին աշխարհում՝ կկոչվի դա Աստծո Երկրային Արքայություն թե Կոմունիզմ:

Ձեզ պետք չէ հասնել աշխարհի ծայրը՝ Հնդկաստան, Ամերիկա կամ Տիբեթ, որ գտնեք այդ Արքայությունը:

Աստծո Արքայությունը ձեր գիտակցության վիճակն է: Եվ երբ դուք հասնում եք ձեր գիտակցության զարգացման որոշակի մակարդակին, ապա Աստծո Արքայություն մտնելու թույլտվություն եք ստանում:

Դա ձեզ համար դժվար է հասկանալ, այդ պատճառով խնդրում եմ ուղղակի հավատալ ինձ:

Բռնե՛ք իմ ձեռքը: Ամո՛ւր պահեք այն, և ես ցույց կտամ ձեզ դեպի այդ Արքայությունը տանող ճանապարհը, որը գտնվում է ձեր սրտի ներսում:

Միայն թե սկզբում դուք պետք է կամավոր կերպով հրաժեշտ տաք ձեր այն որակներին, որոնք ծանրաբեռնում են ձեր սրտերը և ձեզ խանգարում ճանաչելու ինձ նույնիսկ այն ժամանակ, երբ ես մոտենում եմ ձեզ և կանգնում ուղիղ ձեր աչքերի առաջ:

Դուք ինձ չեք տեսնի, քանի դեռ չեք կարողանա ազատվել ձեր ուսաբեռից: Դա մի բեռ է, որ գոյացել է ձեզ շրջապատող աշխարհի հետ ձեր ունեցած կապվածություններից:

Ես ձեզ վարժություն կտամ, և խոստացեք, որ այն ամեն օր կկատարեք: Ամեն օր պատկերացրեք, որ ուղիղ ձեր առջև տեսնում եք կուրացուցիչ փայլատակող Լույս: Ձեր մեջ ցանկություն է առաջանում ձուլվելու այդ Լույսին, դառնալու նրա հետ մի միասնություն: Բայց այդ Լույսը վառում է ձեզ, և դուք չեք կարողանում մոտենալ նրան:

Քանզի ձեր մեջ կա մի բան, որը Լույսից չէ, մի բան, որը խանգարում է ձեզ՝ հասնելու ձեր իսկական բնույթին համապատասխանող վիճակին, այն է՝ Լույս Հուր, Բոց:

Մտորե՛ք՝ ի՞նչն է ձեզ խանգարում: Ի՞նչն է, որ Լույսից չէ: Պետք չէ փորձել միանգամից ազատվել ձեր բոլոր անկատարություններից: Գտեք ձեր մեջ այն հատկանիշը, որը, ձեր կարծիքով, ամենաշատն է խանգարում ձեզ դրսևորելու ձեր իսկական էությունը: Եթե դուք չեք գտնում, թե դա որ

հատկանիշն է, ապա մտասևեռվեք ինձ վրա, խնդրեք ինձ, և ես կհուշեմ, թե որ հատկանիշն է դա: Այն բացահայտ կդառնա ձեր կյանքում, և դուք կուզենաք ազատվել դրանից: Դուք այնքան կրքոտ պետք է ցանկանաք ազատվել այդ հատկանիշից կամ վնասակար սովորությունից, որ ինձ ուղղված ձեր յուրաքանչյուր աղոթքում խնդրեք, որ ազատեմ ձեզ այդ հատկանիշից, օգնեմ ձեզ հաղթահարելու ձեր այդ անկատարությունը:

Տվեք ինձ ձեր բոլոր անկատարությունները: Խնդրեք ինձ, և ես կվերցնեմ բոլորը: Եվ ձեր մեջ այլևս չի մնա ոչինչ, որ խանգարի տեսնել ինձ, երբ կանգնած կլինեմ ձեր առաջ: Ինձ միայն կմնա բռնել ձեր ձեռքը և ձեզ տանել դեպի Աստծո Արքայության այն գաղտնի մուտքը, որը թաքցված է ձեր սրտի գաղտնի մենաստանում:

Իսկ մինչ այդ մենք դեռ կհանդիպենք: Ես ձեզ մոտ կգամ նորից ու նորից, քանի դեռ ունակ չեք լինի լսելու ինձ և զգալու իմ Սերը:

ԵՍ ԵՄ Հիսուս՝ ձեր ընկերն ու եղբայրը
ձեր Ճանապարհին

ՍԱՆԱՏ ԿՈՒՄԱՐԱ

22 մարտի, 2005 թ.

ԱՅԺՄ ԵՐԿԻՐՆ Է ԿՐԻՏԻԿԱԿԱՆ, ԲԵԿՈՒՄՆԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿ

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան՝ իմ դեսպանորդի միջոցով կրկին եկածը:

Սպասվող իրադարձությունների բառային ձևակերպումները միշտ էլ քիչ են արտացոլել այն, ինչը պետք է տեղի ունենա, և կրել են մոտավոր, հավանական բնույթ:

Բոլոր իրադարձություններն իրենց հավանական տեսքով արդեն կանխանշված են արարման սկզբնական պահից:

Ձեր աշխարհում կա այնպիսի հասկացություն, ինչպիսին Կենդանակերպն է՝ Կենդանակերպի նշանները: Աստղերի լեզվին ծանոթ մարդու համար ամբողջ ներկան և ապագան գրի է առնված այդ տեղեկատվական դաշտում, որը կազմված է երևացող աստղերից: Եվ եթե դուք կատարելապես տիրապետեիք աստղերի լեզվին, ապա կկարողանայիք կարդալ ձեր մոլորակի ապագան, որը գրի է առնված տիեզերքի այդ համապիտանի լեզվով: Բայց ներկայումս հազիվ թե գտնվի գոնե մեկ աշխարհիկ աստղաբաշխ, որն ընդունակ լինի հասկանալու այդ լեզուն:

Ճշմարիտ գիտելիքը, որն աստղերի լեզվի բանալին է և թույլ է տալիս կանխատեսել ապագան, թաքցված է ժամանակակից մարդկությունից: Ճիշտ այնպես, ինչպես ձեզնից թաքցված է այն գիտելիքը, որը թույլ է տալիս կանխատեսել մահը և իմանալ սեփական անցյալն ու ապագան:

Սակայն անցյալն ու ապագան որոշվում են ներկայով, դրա յուրաքանչյուր րոպեով և վայրկյանով: Ձեր աշխարհում առկա է ժամանակի և տարածության սահմանափակում: Բարձրագույն Աշխարհներում չկան այդ սահմանափակումները, այդ պատճառով արարման կատարյալ մատրիցան տարածաժամանակային կոորդինատներով կարող է դրսևորվել բազմաթիվ եղանակներով, որոնց հավանականությունը որոշվում է ամեն րոպե կատարվող ձեր ընտրությամբ:

Ըստ այդմ՝ տիեզերքի զարգացման այն պլանը, որն իր մեջ ներառում է նաև ձեր մոլորակի պլանը, կարող է փոփոխվել որոշակի տիրույթում, բայց այդ տիրույթն ունի սահմանափակ շրջանակներ: Եվ եթե որևէ մոլորակի էվոլյուցիան ընթանում է Բարձրագույն Պլանով նրա համար նախատեսված միջանցքի սահմանագծի վրայով, ապա այդ էվոլյուցիայի ճշգրտման համար սկսում է միջամտել Տիեզերական Էակների մի ամբողջ Հիերարխիա: Այդպես շատ անգամ եղել է ձեր մոլորակի հետ: Էվոլյուցիան հասել է մինչև որոշ կրիտիկական կետի և վերադարձվել դեպի նախկին անվտանգ հունը:

Տվյալ էվոլյուցիայի համար վտանգը կապված է այդ էվոլյուցիայի և Բարձրագույն Ուժերի՝ Տիեզերքի Հիերարխիների, Աստծո, Աստծո Օրենքի միջև կապի կտրվածության աստիճանից:

Երկրի, ինչպես և ցանկացած այլ մոլորակի պատմության մեջ գոյություն ունեն որոշակի կրիտիկական պահեր, որոնք որոշվում են Կենդանակերպով և նրանով պայմանավորված տիեզերական բոլորապտույտներով, երբ ուղղությունը՝ Տիեզերական Օրենքի տեղեկատվական դաշտը, համեմատվում է մոլորակը բնակեցնող կենսահոսքերի էվոլյուցիայի ուղղության հետ: Եվ այդ պահերին տեղի է ունենում մոլորակի զարգացման ճշգրտում, եթե նախատեսված ուղղությունից նրա շեղումը գերազանցում է կրիտիկական չափանիշը:

Նույնը կատարվում է ձեր օրերում: Մոլորակի

էվոլյուցիան շեղվել է Տիեզերական Օրենքով նախատեսված հետագծից և ճշգրտման կարիք ունի:

Մենք պարբերաբար գալիս ենք տարբեր մարգարեների և դեսպանորդների միջոցով, որպեսզի հիշեցնենք գոյություն ունեցող Օրենքի և նրան հետևելու անհրաժեշտության մասին:

Եվ աշխարհի վերջի ու տարբեր աղետների մասին բոլոր արգարեությունները, որոնք տրվել են անցյալում ու տրվում են հիմա, պարզապես հիշեցումներ են այս տիեզերքում գործող Օրենքին ենթարկվելու անհրաժեշտության մասին: Օրենքը կպաշտպանվի՝ անկախ նրան հետևելու կամ չհետևելու ձեր ցանկությունից:

Եվ Բարձրագույն Ուժերի խնդիրը միշտ հանգել է նրան, որ մարդկությանը հեռու պահի անդունդի եզրից, որպեսզի նա ինքն իրեն չկործանի:

Օգնությունը, որը ցուցաբերվել է և շարունակվում է ցուցաբերվել մարդկությանը, կայանում է նրա գիտակցության ընդլայնման մեջ, կայանում է մարդկանց հատուկ ներքին սահմանափակումների հաղթահարման մեջ և նաև կապված է գիտակցության զարգացման հաջորդ մակարդակի վրա բարձրանալու հետ:

Այժմ Երկիրն ապրում է կրիտիկական, բեկումնային ժամանակ:

Եվ խնդիրը, որն այժմ դրվում է մարդկության առջև, այն բանի գիտակցումն է, որ, բացի ֆիզիկական ոլորտից, կան ավելի նուրբ ոլորտներ, որ մարդն իր բնույթով Մեծ Տիեզերական Հոգևոր Էակ է: Մարդու ներուժը հսկայական է: Բայց այդ ներուժին տիրապետելը չի լինի ավելի վաղ, քան մարդը կհաղթահարի իր այն որակները, որոնք նրան գամում են ֆիզիկական ոլորտին:

Երբ ձեզնից ոմանց մենք դիտում ենք մեր համբարձյալ մակարդակից, երբեմն այնպիսի զգացում ենք ապրում, ինչպիսին դուք զգում եք՝ դիտելով մրջյուններին: Երևի ձեր կյանքում դիտել եք մրջյունի, որը մեծ բեռ է քարշ տալիս դեպի մրջնանոց: Ձեր մակարդակից ավելի լավ է երևում, թե ինչպես նրա համար ավելի լավ կլիներ ընթանալ: Տեսնում եք, որ ճանապարհը կարելի էր և կրճատել՝ ավելի քիչ ջանքերի գնով հասնելով մրջնանոցին: Եթե դիտեք մրջյունին, ապա կհասկանաք մեր այն զգացմունքները, որոնք մենք ապրում ենք՝ դիտելով ձեր զարգացումը:

Եվ ճիշտ այնպես, ինչպես դուք ձեզ վրա չեք վերցնում մրջյունի աշխատանքը, այնպես էլ մենք մեզ վրա չենք վերցնում այն խնդիրների լուծումը, որոնք կանգնած են ձեր առջև:

Մենք կարող ենք ցուցաբերել որոշակի օգնություն և մշտապես ցուցաբերում ենք, բայց միայն այն շրջանակներում, որ թույլ է տալիս Օրենքը:

Օգնության տեսակներից մեկը, որը մենք ցուցաբերում ենք, տիեզերական ժամկետների մասին հիշեցնելն է, նաև հիշեցնելն այն մասին, թե ովքեր եք դուք իրականում: Ձեր ներուժը հսկայական է: Եվ, ի տարբերություն մրջյունի, որն այս մանվանտարում՝ տիեզերքի զարգացման այս փուլում, չի կարող հասնել զարգացման մարդկային ձևին, դուք մինչև այս մանվանտարի վերջը ունակ կլինեք դրսևորելու ձեր իսկական աստվածային բնույթը:

Ուստի մենք այսքան ջանքեր ենք ցուցաբերում, որպեսզի կասեցնենք հենց ֆիզիկական հարթակի՝ այս Երկրի, ոչնչացումը, որը ձեզ իր հարկի տակ է առել և տալիս է ապրելու, զարգանալու անվտանգ պայմաններ:

Յուրաքանչյուր արհավիրք, յուրաքանչյուր տարերային աղետ ձեր ոչ կատարյալ գիտակցության հետևանքն է: Եվ արդարև, դուք արժանանում եք ձեր անհնազանդության, էգոիզմի և համառության պտուղներին, երբ երես առ երես կանգնում եք տարերքի այդ դրսևորումների առջև:

Մարդկության տեղեկատվական դաշտն ու Երկրի տեղեկատվական դաշտը շատ սերտորեն են իրար հետ կապված և միահյուսված: Ուստի յուրաքանչյուր անկատար միտք ազդեցություն է թողնում ամբողջ մոլորակի վրա՝ պտույտ գործելով երկրագնդի շուրջը և համալարվելով նմանատիպ անկատար մտքերով և զգացմունքներով:

Ճիշտ նույն կերպ Բարիքին, Բարուն ուղղված մտքերը, դրական մտաձևերն ու ապրումներն ավելացնում են մոլորակի կայունությունը և օժանդակում երկրային առանցքի շտկմանը:

Որպեսզի դուք կարողանաք հանգիստ գոյատևել ու զարգանալ, միլիարդավոր Տիեզերական Էակներ պատրաստ են օր ու գիշեր անխոնջ ծառայելու ձեզ այն բանի համար, որպեսզի համակշռեն և կասեցեն հնարավոր աղետներն ու արհավիրքները:

Դրանում է նաև ձեր օգնությունը, որը դուք կարող եք ցուցաբերել Համբարձյալ Դասերին:

Մտասևեռվեք Բարու, Բարիքի, Սիրո վրա: Պահպանեք ներքին խաղաղություն ու հանգստություն: Ձեզնից յուրաքանչյուրը կարող է հենակետ դառնալ Երկրի վրա, դառնալ Լույսի հաղորդիչ, որի միջոցով կիրականացվի այս մոլորակի հավասարակշռումն ու Լույսի թափանցումը, ինչն անհրաժեշտ է, որպեսզի Երկիրը կարողանա անցնել հաջորդ մակարդակին:

Ես բերկրանքով եմ դիտում ձեզնից շատերի նվաճումները: Եվ ես անկեղծորեն ուրախ եմ Ուղու վրա ունեցած ձեր հաջողությունների համար:

Տիեզերական Օրենքի համաձայն՝ ես չեմ կարող գալ և սեղմել ձեզնից յուրաքանչյուրի ձեռքը: Բայց դուք կարող եք ձեր նուրբ մարմնով հասնել իմ մակարդակին, և ես կգրկեմ ինձ մոտեցողներից յուրաքանչյուրին՝ սեղմելով նրա ձեռքը:

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան: ՕՄ

ՀԱՈՒԹԱՄԱ ԲՈՒԴԴԱ

23 մարտի, 2005 թ.

ԵՍ ԵԿԵԼ ԵՄ ԱՐԹՆԱՑՆԵԼՈՒ ՁԵՐ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿԱՐԱՏԵՎ ՔՆԻՑ

ԵՍ ԵՄ Հաութամա Բուդդան՝ այս դեսպանորդի միջոցով նորից եկածը:

Գիտելիքները, որ եկել եմ այսօր ձեզ տալու, վերաբերում են այն ժամանակներին, երբ ես մարմնավորվել էի որպես արքայազն Սիդհարթհա: Ես անցկացրի անտառում այնքան շատ օրեր, որոնց հաշիվն արդեն կորցրել էի: Լինում էին արևադարձային հորդառատ անձրևներ, լինում էր և շոգ: Օրերն անցնում էին իրար հետևից:

Ամեն ինչ ինձ համար կորցրել էր նշանակությունը: Ես գիտակցում էի, որ այս աշխարհում այլևս չկա ոչինչ, որ հետաքրքրի ինձ, գրավի իմ ուշադրությունը:

Ես ներխոկման դիրքով նստել էի բանիանի ծառի տակ: Իմ գիտակցությունը լքեց ինձ: Եվ ես անցա այլ՝ ավելի նուրբ իրականություն, որն ինձ համար դարձավ ավելի իրական, քան այն անտառը, որտեղ ես թողել էի իմ ֆիզիկական մարմինը:

Ես շարունակում էի նստած մնալ ծառի տակ և միաժամանակ գտնվում էի ուրիշ իրականության մեջ, որտեղ չկար ժամանակ: Ես և՛ երանություն էի զգում, և՛ բերկրանք, և՛ ազատություն: Այս աշխարհում չկան առավել ուժեղ զգացմունքներ, քան նրանք, որոնք ես ապրեցի այդ իրականության մեջ:

Ես չէի ուզում վերադառնալ մարմնիս մեջ: Չափազանց շատ են սահմանափակումները, և չափազանց մութ է այն աշխարհը, որտեղ ես թողել էի իմ մարմինը՝ համեմատած այն աշխարհի հետ, որում ես գտնվեցի իմ ներխոկման ընթացքում:

Ես ինձ միասնական զգացի այն Բարձրագույնի հետ, որին ընդունում էի որպես Աթման: Դա երանության մի էքստազ էր, որը հնարավոր չէ արտահայտել որևէ լեզվով:

Ի՞նչը ստիպեց ինձ վերադառնալ մարմնիս մեջ, որը թողել էի անտառում՝ ներխոկման դիրքով նստելով բանիանի ծառի տակ:

Ես պարտավոր էի իմ ստացած փորձի մասին պատմել ուրիշներին. ես գտել էի իմ ներսում մի վայր, ուր չկային ցավեր ու տառապանքներ, ուր կար միայն երանություն ու հանդարտություն, անսահման Սեր:

Ես կարող էի շարունակել այդ վայրում մնալ: Ես այն փնտրել էի երկար տարիներ, և ես գտա՛ այն: Սակայն իմ այդ մարմնավորման ամենամեծ նվաճումը ես համարում եմ այն, որ կարողացա ինձ ստիպել վերադառնալու մարմնիս մեջ: Դրան ինձ մղեց կարեկցանքը կենդանի էակների նկատմամբ, որոնք, մնալով Երկրի վրա, իրենց արտաքին գիտակցության մեջ ոչինչ չգիտեին այն վայրի մասին, որտեղ ես քիչ առաջ գտնվել էի:

Ես վերադարձա մարմնիս մեջ: Չնայած փայլող արևին ու տապին՝ ես շուրջս զգացի ցուրտ ու խավար: Իմ առաջ դժվարին խնդիր էր դրված՝ պատմել մարդկանց այն վայրի մասին, որտեղ ես քիչ առաջ գտնվել էի, ցույց տալ նրանց այն Ուղին, որով ես գնացի դեպի այն վայրը, որը գտնվում է հենց իմ մեջ:

Որքա՞ն էի ես զարմացել հետևորդներ գտնելուց հետո: Այդ մարդիկ երբեք չկարողացան ապրել այն երանությունը, որը ես ապրեցի իմ ներխոկման ժամանակ: Այդ մարդիկ շատ հեռու էին կատարելությունից: Եվ նրանք չկարողացան զգալ իմ թրթիռների մաքրությունը:

Նրանցից շատերը պարզապես կուրորեն հավատացին ինձ: Ես այնպիսի՞ կարոտ էի զգում նրանց աչքերի մեջ այն աշխարհի նկատմամբ, որի մասին հիշողություն չէր պահպանվել նրանց գիտակցական ուղեղներում, բայց և այնպես նրանք հավատացին այն ամենին, ինչ որ ես ասացի: Նրանք համաձայն էին կատարել իմ բոլոր պահանջները, որպեսզի հասնեն բացարձակ երանության ու հանդարտության վիճակին: Ես խոնարհվում եմ այդ մարդկանց առջև:

Ես պատրաստ էի նրանց ծառայելու և նրանց համար էր, որ ետ վերադարձա:

Միլիոնավոր կենդանի էակներ անհերևակայելի տառապանքներ են կրում այս մոլորակի վրա: Նրանք կաղապարված են, մումիաների նման, իրենց ֆիզիկական մարմինների մեջ:

Եվ այդ մարդիկ իմ օգնության կարիքն ունեին: Ես վերադարձա, որպեսզի օգնեմ բոլոր կենդանի էակներին:

Եվ դա ես անում եմ մինչև հիմա:

Ես ներկա եմ Տատյանայի մարմնում, ես ներկա եմ այս մոլորակի շատ մարդկային էակների մարմիններում: Եվ ես օգնում եմ նրանց հենց իրենց ներսից: Ձեզ համար դժվար է հավատալ: Հավանաբար, դա չի համաձայնեցվում ձեր այն պատկերացումների հետ, որոնք դուք ձեռք եք բերել այս կամ այն աղբյուրից կամ գրքից:

Բայց ես և Իմաստության մյուս Վեհապետները գտնվում ենք ձեր ներսում, որպես ձեր իսկ մի մասը՝ որպես ձեր Բարձրագույն Ես-ը:

Եվ մենք չենք կարող հեռանալ այս մոլորակից,

քանի դեռ մեր ամենաչնչին մասը գտնվում է որևէ մարդու մարմնում, ով դեռևս ստիպված է մարմնավորվել այս մոլորակի վրա և առայժմ չի կարողանում ազատվել սանսարայի անիվից:

Այդ պատճառով մենք մեր Ուսմունքներով գալիս ենք նորից ու նորից և մեր խոսքն ենք ասում այնպիսի մակարդակով, որը մատչելի է այն լսարանի համար, որն, ըստ մեր գիտեցածի, կմերձենա մեր նյութերին:

Որքան էլ մենք պարզ նկարագրենք Ճշմարտությունը, դուք այն չեք հասկանա: Որքան էլ մենք բարդ նկարագրենք Ճշմարտությունը, դուք այն չեք հասկանա: Բայց դուք կարող եք ըմբռնել ամբողջ Ճշմարտությունը միանգամից՝ որպես պայծառացման պահ, որպես ձեր գիտակցության հանկարծակի լուսավորում: Դուք բոլորդ ունակ եք գիտակցելու Ճշմարտությունը: Եվ դա տեղի կունենա ձեզնից յուրաքանչյուրի հետ: Հնարավոր է՝ ոչ բոլորի հետ դա տեղի ունենա հենց այս կյանքի ընթացքում: Բայց դուք բոլորդ անպայման կապրեք պայծառացում: Ճշմարտությունը ձեզ կհասնի ոչ բառերի, և ոչ պատկերների միջոցով: Այն պարզապես հանկարծ կառկայծի ձեր ուղեղում, և դա նման կլինի կայծակի բռնկմանը, որը ծայրից ծայր լուսավորում է Երկիրը: Եվ դուք այլևս չեք կարողանա քնով անցնել: Պայծառացման այդ պահը նման կլինի արթնացմանը երկարատև քնից, որում դուք գտնվել եք միլիոնավոր տարիներ:

Արթնացման այդ պահը հնարավոր չէ շփոթել որևէ ուրիշ բանի հետ: Դա մի պահ է, երբ ձեր գիտակցությունը կբարձրանա ձեր Բարձրագույն Ես-ի մակարդակին: Եվ դուք կհիշեք, թե ով եք և ինչու եք եկել Երկիր:

Եվ այլևս դուք չեք կարողանա քնով անցնել: Դուք կսկսեք Երկրի վրա լինելու ձեր յուրաքանչյուր րոպեն ու վայրկյանը ծախսել այն բանի համար, որ օգնեք բոլոր կենդանի էակներին, որ պատմեք նրանց ձեր ապրած պայծառացման մասին և ցույց տաք նրանց այն Ուղին, որն ընկած է ձեր ներսում՝ ձեր սրտերում:

Դուք կդառնաք արթնացված՝ Բուդդա, ով գտնվում է մարմնավորման մեջ:

Իսկ դա մարդկության զարգացման նոր աստիճանն է. ռասա, որը բաղկացած է Բուդդաներից:

Բայց նախ կհայտնվեն ավելի ու ավելի շատ մարդիկ, որոնք իրենց ընդունակություններով չափազանց կտարբերվեն մյուս մարդկանցից: Այդ մարդիկ ամբողջ երկրագնդով մեկ կգտնեն իրենց նմաններին և կհամախմբվեն Երկրի ամբողջ կյանքին ծառայելու հիմքի վրա: Այդ նոր ռասայի մարդիկ ներկայացնում են Մարդկության Վեցերորդ Ռասան, որն արդեն սկսում է մարմնավորվել և հանդես գալ այն սովորական մարդկանց միջավայրում, որոնք դեռևս չեն հաղթահարել իրենց գիտակցության սահմանափակությունը:

Երբ ձյունը սկսում է հալվել, ապա նախ գոյանում են ձյունից զերծ որոշակի կղզյակներ: Հետո այդ կղզյակներն ավելի են շատանում: Երևում է խոտը, հետո՝ ծաղիկները: Ապա կարճ ժամանակում ամբողջ հողը, որքան աչքդ կտրում է, կերպարանափոխվում է և լցվում նորանոր գույներով ու բուրմունքներով:

Երկրի կերպարանափոխությունը տիեզերական չափանիշներով շատ արագ տեղի կունենա: Եվ հիմա էլ մենք արդեն նկատում ենք որոշակի վայրեր, որոնք ազատվել են մարդկային գիտակցությունը ծածկող սառը քնից, որոնք պատրաստ են կերպարանափոխության կամ էլ արդեն կերպափոխվել են՝ զարդարվելով ձյան տակից իրենց գլուխները հանած առաջին ծաղիկներով:

Մենք հետևում ենք ձեր ծաղկմանը: Իրապես, բացված գիտակցությամբ մարդը հիշեցնում է արտասովոր ծաղիկ, եթե նրա վրա նայելու լինենք նուրբ ոլորտից:

Ես եկա արթնացնելու ձեր գիտակցությունը երկարատև քնից: Զարթնեցեք: Նայեցեք ձեր Աթմանի արևին, որը ձեր ներսում է:

ԵՍ ԵՄ Հաութման՝
ձեր եղբայրը

ՎԵՀԱՊԵՏ ԿՈՒԹՀՈՒՄԻ

24 մարտի, 2005 թ.

ԴՈՒՔ ՊԵՏՔ Է ՁԳՏԵՔ ՎԵՐԱՀՍԿԵԼ ՁԵՐ ՄՏՔԵՐՆ ՈՒ ԶԳԱՑՄՈՒՆՔՆԵՐԸ

ԵՍ ԵՄ Կութհումին: ԵՍ եկա...

Եկա, որպեսզի օգտագործեմ այս նոր հնարավորությունը և խոսեմ ձեզ հետ:

Դուք ինձ գիտեք որպես Վարպետ հոգեբանի, նաև գիտեք, որ ժամանակին ես և Էլ Մորիան մարմին առանք, որպեսզի հիմնադրենք Թեոսոֆիական Ընկերությունը և մարդկությանը տանք այն գիտելիքները, որոնք նախկինում թաքուն էին պահվում նրանից:

Դուք ինձ գիտեք որպես Համաշխարհային Ուսուցչի, որն այդ պաշտոնը կիսում է Հիսուսի հետ:

Ձեզ հայտնի են իմ մարմնավորումները՝ Պյութագորաս, Շահ Ջահան...

Դուք իմ մասին շատ բան գիտեք: Ես բաց Վարպետ եմ:

Ես նա եմ, ով ձգտում է կապի մեջ մտնել չհամբարձված մարդկության հետ, ուստի աշխատում եմ ձեզնից շատերի հետ:

Մենք ձեզ բավականաչափ գիտելիք տվեցինք վերջին 150 տարիների ընթացքում: Եվ մենք կշարունակենք նոր գիտելիք տալ նրանց, ովքեր կարող են այն ընկալել: Բայց նախ պետք է յուրացնեք որոշ հին դասեր, որոնք մենք ձեզ տվել ենք անցյալում:

Համաձայնեք, որ նոր գիտելիքներ ստանալու իր ողջ ձգտմամբ հանդերձ՝ մարդկությունը, չգիտես ինչու, գործնական կյանքում այնքան էլ հաճույքով չի կիրառում արդեն ձեռք բերված գիտելիքները: Եթե այդպես շարունակեք, ապա պարզապես չեք կարողանա ընկալել նորը:

Ձեր գիտակցությունը նման է որոշակի ծավալով անոթի: Յուրաքանչյուր մարդու գիտակցությունը սահմանափակ է, երբ նա գտնվում է մարմնավորման մեջ: Ազատ կամքի պարգևի շնորհիվ դուք ինքներդ եք որոշում, թե ինչով լցնել ձեր գիտակցության ծավալը:

Լինում է այնպես, որ աշակերտը պատրաստ է յուրացնելու որոշակի ծավալի գիտելիքներ, սակայն նրա գիտակցությունը չունի անհրաժեշտ մղումն ու ուղղվածությունը: Այդ դեպքում նա գերադասում է գիտակցության իր այդ ծավալը լցնել այն ամենով, ինչը նրան հանդիպում է արտաքին աշխարհում, այն ամենով, ինչ նա կարդում է թերթերում, դիտում է հեռուստատեսությամբ, լսում ռադիոյով:

Մինչև որոշակի փուլի հասնելը նման ամենակուլությունը թույլատրելի է: Բայց՝ մինչև որոշակի փուլ:

Քանզի եթե մարդն ինքը ջանքեր չգործադրի ֆիզիկական աշխարհից իր արտաքին գիտակցության մեջ թափանցող տեղեկատվության հոսքը սահմանափակելու համար, ապա նա իր գիտակցությունը կլցնի անպետք բաների զանգվածով, իսկ երբ վրա հասնի իրական գիտելիք ստանալու տիեզերական պահը, շնորհիվ այն բանի, որ Երկնոլորտները որոշում կկայացնեն չհամբարձված մարդկությանը գիտելիք տալ, այդպիսի անհատի գիտակցությունը պարզապես ունակ չի լինի որևէ նոր բան իր մեջ տեղավորելու:

Եվ դեռ ավելին, նա ունակ չի լինի կողմնորոշվելու տեղեկատվության այն ամբողջ քաոսում, որը տիրել է նրա արտաքին գիտակցությանը: Նրա համար աշխարհիկ մամուլից ստացած տեղեկությունները նույն արժեքը կունենան, ինչ Վեհապետների թելադրություններից ստացված տեղեկատվությունն ունի:

Այդ տեղեկատվական աղբի մի մասը տեղափոխվում է մարդու ենթագիտակցության մեջ և այնտեղ նստվածք տալիս: Եվ երբեմն, երբ դեպի ներս քշված որևէ հոգեբանական խնդրի հրեշ նմանատիպ թրթռումներ է ստանում, այսպես կոչված, զանգվածային տեղեկատվության միջոցներից, ապա մարդու արտաքին վարքում դրսևորվում է անկանխատեսելի և որևէ շրջանակի մեջ չտեղավորվող այնպիսի արդյունք, որ ոչ մի հոգեբան չի կարող օգնել նրան, որ գտնի անսպասելիորեն իր առջև ծառացած հոգեբանական խնդրի լուծումը:

Սակայն բոլոր խնդիրները դուք ինքներդ եք ստեղծում ձեզ համար, հատկապես այն պահերին, երբ, առանց հետևանքների մասին մտածելու, ձեր գիտակցության ծավալի մեջ եք խցկում այն ամ-

բողջ տեղեկատվությունը, որին բախվում եք ձեր կյանքում: Ձեզ ադեն մի քանի անգամ այս դեսպանորդի միջոցով ասվել է, որ ձեր աշխարհում ձեր շուրջը եղած տեղեկատվության 90 տոկոսը կեղծ է և անպետք՝ որպես հոգևոր էակներ ձեր զարգացման համար:

Ըստ այդմ՝ ես առաջարկում եմ նախ և առաջ սահմանափակել ձեր ամենակուլությունը: Չարժե՛ չափազանց շատ հենվել այն տեղեկատվության վրա, որը հասնում է ձեզ արտաքին աշխարհից:

Նախ և առաջ դուք պետք է ձգտեք վերահսկել ձեր մտքերն ու զգացմունքները:

Գտեք օրեկան 10-15 րոպե ժամանակ, երբ ձեզ ոչինչ չի շեղում: Օրինակ՝ քնելուց առաջ: Փորձեք հետևել, թե ինչի մասին եք մտածում: Կողքից դիտե՛ք ձեր մտքերը: Ուսումնասիրե՛ք դրանք: Պատկերացրեք, որ ձեր մտքերը ակվարիումի ձկներ են: Ահա դեպի ձեզ է լողում մի միտք: Ձնե՛ք այն: Ինչի՞ հետ է կապված այդ միտքը: Եթե այդ միտքը ձեզ կապում է ձեր աշխարհին, ապա բաց թողեք, թող գնա: Այն պետք չէ ձեր հոգևոր աճի համար:

Հետո դիտարկեք ձեր հաջորդ միտքը, հետո՝ էլի հաջորդը:

Կտեսնեք, որ ձեր գիտակցությունը լցված է շատ մտքերով, որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ էներգիա, որը դուք ներքաշում եք դրսից, և որը համահունչ է այն էներգիային, որն առկա է ձեր զգացմունքային և մենտալային մարմիններում:

Երբ դուք այդ եղանակով կսովորեք վերլուծել ձեր մտածմունքը, ապա վերլուծեք ամբողջ օրվա ընթացքում ունեցած ձեր մտքերը:

Եվ դուք կհասկանաք, որ ձեր գիտակցությունն այնպես է ծանրաբեռնված ոչ պետքական տեղեկատվության մշակմամբ, որ նրա հզորությունն այլևս չի հերիքում, որ սկսեք մշակել ձեր զարգացման համար իսկապես կարևոր տեղեկատվությունը:

Ահա թե ինչո՛ւ է ամենագլխավորը հանդիսանում այն որոշումն ընդունելու պահը, որ այլևս ձեր գիտակցությունը չլցնեք շրջապատող ֆիզիկական աշխարհից եկող անպետք տեղեկատվությամբ:

Այնուհետև հնարավոր է, որ որոշեք օգտվել ներխոկման որևէ ուղեցույցից, որը կօգնի ձեզ ազատվելու ձեր այն մտքերից, որոնք ձեզ կապում են ձեր աշխարհի հետ: Յուրաքանչյուր մեդիտատիվ ուղեցույցի նպատակը, եթե այն ճշմարիտ է, մտքերից ազատ վիճակի հասցնելն է:

Եվ եթե ձեզ հաջողվի բավականին երկար ժամանակ պահպանել մտքերից ազատ այդ վիճակը, ապա ձեզ մատչելի կդառնա այն ճշմարիտ տեղեկատվությունը, որն իսկապես անհրաժեշտ է ձեր հոգևոր առաջընթացին:

Եկել է ժամանակը, երբ մոլորակի մենտալային դաշտը պետք է մաքրվի: Միայն այն դեպքում, երբ կդատարկեք կաթսան, կկարողանաք այն լցնել տվյալ պահին ձեզ անհրաժեշտ բաներով:

Ես առաջարկում եմ լրջորեն վերանայել ձեր գիտակցությունը չմտածված ձևով ձեր աշխարհի ամենաբազմազան տեղեկատվական հոսքերի ազդեցությանը հրամցնելու ձեր պահվածքը:

Այս թելադրություններից պետք է որ իմացած լինեք, որ ձեր աշխարհը պարունակում է տեղեկատվություն, որի 90 տոկոսը ձեզ բոլորովին պետք չէ: Ձերբազատվե՛ք այդ տեղեկատվությունից, և ձեզ մատչելի կդառնա այն տեղեկատվությունը, որն իսկապես ձեզ անհրաժեշտ է:

Նույնը վերաբերում է նաև ձեր զգացմունքներին: Վերլուծե՛ք օրվա ձեր զգացմունքները: Պե՛տք չէ նայել ուրիշներին: Ես գիտեմ, որ մարդիկ, հատկապես Ռուսաստանում, մշտապես գտնվում են ընկճախտին շատ մոտ վիճակում: Հետևե՛ք ձեր զգացմունքներին օրվա ընթացքում. որքա՞ն հաճախ եք դուք եղել սիրո, բերկրանքի, անառիթ ուրախ տրամադրության վիճակում. քանի՞ անգամ եք կանգ առել ճամփի մեջտեղում, որպեսզի հիանաք ծառերով կամ ամպերով. որքա՞ն հաճախ եք ընդհանրապես ելնում բնության գիրկը:

Ձեր զգացմունքները ձեր մտքերի պես ենթակա են Երկրի ընդհանուր տեղեկատվական դաշտի ազդեցությանը: Իսկ այդ դաշտը խոչընդոտում է ավելի բարձր օկտավաներից ձեր թանձր աշխարհի մեջ ցանկացած պատկերների և պատկերացումների ներթափանցումը: Մարդկությունը գտնվում է անկատար մտքերի և զգացմունքների ծածկոցի տակ, ուր հենց ինքն է իրեն քշել:

Եվ այժմ դուք պետք է սկսեք «փոցխել» ձեր անկատար մտքերի ու զգացմունքների կույտերը:

Ձեր զանգվածային տեղեկատվական միջոցները հարմարվում են մարդկային գիտակցության միջին մակարդակին: Այդ պատճառով նրանք խոչընդոտում են գիտակցության ավելի բարձր մակարդակ ձեր անցումը: Հրաժարվե՛ք տեղեկատվական փոխնակներից, և մրցակցային պայքարով ղեկավարվող զանգվածային տեղեկատվական միջոցները կսկսեն հարմարվել ձեր գիտակցության մակարդակին:

Այս աշխարհն ընդամենը ձեր գիտակցության արտացոլանքն է: Եվ փոխելով ձեր գիտակցությունը՝ դուք ունակ կդառնաք դեպի ձեզ քաշելու նուրբ աշխարհի ավելի կատարյալ դրսևորումներ:

Եվ կիրականանա այն կատարյալ նմուշների ցանքսը, որոնք ձեզ համար նախապատրաստել են մարդկության ամենաառաջավոր մտածողները և սպասում են, թե երբ վերջապես դուք դրանք կընդունեք ձեր աշխարհ:

Իմ այսօրվա զրույցի նպատակը ձեզ հիշեցնելն էր, որ դուք ինքներդ եք պատասխանատվություն կրում այն ամենի համար, ինչը տեղի է ունենում Երկրի վրա: Ուստի մի՛ ծուլացեք և մի՛ հետաձգեք գործը, այլ հենց հիմա լծվեք ձեր գիտակցությունը փոխելու գործին:

ԵՍ ԵՄ Կութհումին՝
ձեր նկատմամբ սիրով լի

ՎԵՀԱՊԵՏ ՍԵՆ ԺԵՐՄԵՆ

25 մարտի, 2005 թ.

ԵՍ ԶԳՈՒՄ ԵՄ ՁԵՐ ՍԵՐԸ ԵՎ ՁԵԶ ԵՄ ԱՌԱՔՈՒՄ ԻՄ ՍԵՐԸ...



ԵՍ ԵՄ Սեն Ժերմենը... ԵՍ ԵՄ եկողը...

Մեր հանդիպման բերկրանքը կմթագնվի տխուր լուրով, որն այժմ ես ուզում եմ հասցնել ձեզ: Արդեն գիտեք, որ ես ներդրեցի իմ կաուզալ մարմինը, որպեսզի Երկրի մարդկությունը մոլորակի համար այս դժվար ժամանակներում, կարողանա օգտվել մանուշակագույն բոցի շնորհից:

Օրենքն այնպիսին է, որ էներգիան պետք է ծախսվի խելամտորեն: Եվ ի վերջո որևէ մեկը պետք է փոխհատուցի անտեղի ծախսված էներգիայի կորստի համար:

Ես ներդրեցի իմ կաուզալ մարմինը՝ մանուշակագույն բոցից օգտվելու երկրացիների իրավունքի համար: Դա վիթխարի հնարավորություն էր, որը պետք է նպաստեր մարդկության գիտակցությանը թափ հաղորդելուն: Այդ համապիտանի լուծիչով լուծելով կարմայական կուտակները՝ դուք կկարողանայիք անցում կատարել էվոլյուցիոն զարգացման նոր աստիճանի վրա՝ շրջանցելով համաղետները և բոլոր հնարավոր տարերային ու տեխնածին աղետներն ու արհավիրքները:

Բայց դա տեղի չունեցավ: Մանուշակագույն բոցը մարդկությունն օգտագործեց ոչ այնպես, ինչպես պլանավորել էին Համբարձյալ Դասերը: Եվ, ինչպես ձեզ բացատրեց Տեր Սուրիան, ներկա պահին մանուշակագույն բոցի թողության շնորհը գործում է ընտրողաբար և միայն այն անհատների համար, ովքեր ունակ են կիրառել այդ բոցը՝ առանց մոլորակին հավելյալ վնաս պատճառելու:

Որևէ մեկը պետք է փոխհատուցեր վնասը, էներգետիկական վնասը, որն առաջացել էր, մանուշակագույն բոցի՝ մարդկության կողմից թույլ տրված սխալ դասակարգումից:

Ըստ այդմ՝ ես եկել եմ, որ ձեզ ասեմ այն զոհաբերության մասին, որը ես ստիպված եղա անել հանուն ձեզ: Ոչ այն բանի համար, որ ստանամ ձեր կարեկցանքն ու օժանդակությունը: Ես եկել եմ ձեզ պարզապես տեղեկացնելու այն մասին, ինչ տեղի է ունեցել: Եվ եթե դա տեղի չունենար, ապա կարման, որը մարդկությունն առաջացրեց մանուշակագույն բոցի սխալ օգտագործմամբ, կարող էր Երկիր մոլորակի համար անդառնալի հետևանքների հանգեցնել:

Ես եկել եմ ձեզ հայտնելու ահա այդ տխուր իրադարձության մասին: Բայց մի՛ վհատվեք: Այս աշխարհը միշտ էլ բարձրագույն էակներից զոհողություններ է պահանջել: Եվ նմանատիպ զոհողություններ միշտ էլ արվել են Երկիր մոլորակի վրա քաղաքակրթության զարգացման պատմության ողջ ընթացքում:

Ես ձեզ ավելին կասեմ. շատ Լույսի Էակներ զոհաբերել են և շարունակում են զոհաբերել իրենց կաուզալ մարմինները, որպեսզի Լույսի ողջ զորությունը, նվաճումների ողջ զորությունը, որն ամփոփված է այդ մարմիններում, օգտագործվի դրության կայունացման համար, ինչպես այս մոլորակում, այնպես էլ այլ մոլորակներում ու գալակտիկաներում, որտեղ իրավիճակը նույնքան անբարենպաստ է, որքան հիմա Երկրի վրա է:

Ես ենթադրում եմ, որ ձեզնից շատերը կտխրեն այս լուրից: Ձեզնից շատերին ես հետևում էի մանուշակագույն բոցի պատվիրանների ձեր ընթերցման պահին: Դուք դա անում էիք այնքան անկեղծորեն ու անձնվիրաբար, որ հանուն ձեր այդ մղման, հանուն ձեր այդ պոռթկման և այդ ընթացքում ձեռք բերած ձեր նվաճումների՝ ես պատրաստ եմ զոհաբերել այն ամենը, ինչ ունեմ՝ իմ բոլոր մարմինները և այն ամենը, ինչ ԵՍ ԿԱՄ:

Հնարավոր է, որ դա ձեզ անխելամիտ քայլ թվա: Սակայն ես ուզում եմ ձեզ հիշեցնել, որ մենք բոլորս՝ Համբարձյալ Դասերն ու չհամբարձված մարդկությունը, կազմում ենք Աստծո մարմինը: Մենք միասնական ենք: Եվ մենք անմահ ենք: Ուստի հնարավոր չէ մեռնել, եթե նույնիսկ դուք զոհաբերեք ձեր բոլոր մարմինները: Դա Աստծո գաղտնի խորհուրդն է, և դուք երբևէ կհասկանաք դրա իմաստը:

Առայժմ ես ձեզ միայն կարող եմ ասել, որ այս տիեզերքում չկա ավելի բարձր երանություն, քան այն, որն ապրում ես՝ քեզ զոհաբերելով հանուն կյանքի, հանուն կենդանի էակների փրկության:

Ձեր կյանքում դուք նույնպես զոհաբերություններ եք անում: Ամեն ոք կատարում է այն զոհաբերությունը, որը համապատասխանում է իր զարգացման, իր գիտակցության զարգացման մակարդակին: Դուք զոհաբերում եք ձեր ազատ ժամանակը՝ այն հատկացնելով մանուշակագույն բոցի պատվիրանների ընթերցմանը. դուք զոհաբերում եք ձեր սովորությունները, թերությունները:

Եվ երբևէ դուք կբարձրանաք ձեր զարգացման այն աստիճանի վրա, որը թույլ կտա հանուն կյանքի բարօրության զոհաբերել ձեր կաուզալ մարմնի մի մասը կամ ամբողջ կաուզալ մարմինը:

Գաղտնիքի կարգով ասեմ, որ բոլոր այն զոհողությունները, որոնք դուք կատարել եք և դեռ կկատարեք, իրականում այնքան էլ զոհողություններ չեն, եթե նայելու լինենք Հոգևոր Աշխարհի դիրքերից: Դուք զոհաբերում եք ձեր իսկ անցողիկ մասը, բայց ձեռք եք բերում անգնահատելի փորձ, որով ձեր մոնադան գունազարդվում է զարմանահրաշ գույներով: Ճիշտ այնքան, որքան դուք տալիս եք, այնքան էլ ստանում եք: Ավելի շատ ստանում եք, քանի որ տալիս եք անցողիկ փոխարժույթ, որն ուժ ունի միայն ձեր աշխարհում, բայց փոխարենը Երկնքում ձեռք եք բերում անանց գանձեր:

Եվ կգա օրը, երբ դուք պատրաստ կլինեք զոհաբերելու նաև ձեր այդ անգին գանձերը, քանի որ կհասկանաք, որ այլևս գոյություն չունի ձեզ Աստծուց բաժանող սահմանը: Եվ ձեր գիտակցության մեջ դուք արդեն տարբերակում չեք մտցնի, թե ինչն է ձեզ պատկանում, և ինչը՝ Աստծուն: Որովհետև դուք Աստծո հետ մի միասնություն եք:

Իսկ դա հենց այն վիճակն է, որին պետք է հասնեք:

ԵՍ ԵՄ Սեն Ժերմենը, նույն այն Սեն Ժերմենը, որին սիրում եք: Ես գիտեմ, թե դուք ինչքան եք ինձ սիրում: Ես զգում եմ ձեր Սերը: Եվ փոխարենը ես ձեզ եմ առաքում իմ Սերը:

Ձեր սրտերի Սերը՝ Սիրո Էներգիան, այն է, ինչ մեզ՝ Համբարձյալ Դասերիս, անհրաժեշտ է: Ձեր Սերը մեզ համար նման է այն լավագույն կերակուրին, որը դուք երբևէ կարող եք ճաշակել Երկրի վրա:

Եվ մենք էլ մեր հերթին առաքում ենք ձեզ մեր պատասխան Սերը: Եվ դուք ընկալում եք մեր Սերը որպես Բարեշնորհություն: Եվ դա լավագույնն է և այն ամենաբարձր երանությունը, որը դուք կարող եք զգալ՝ գտնվելով ձեր ֆիզիկական աշխարհում:

Դա ալքիմիայի գաղտնիքն է: Դա Էներգիայի փոխանակումն է օկտավաների միջև, և դա Աստծո Պլանն է Երկրի մարդկության համար:

Շատ շուտով՝ արդեն հաջորդ Վեցերորդ Ռասայի ժամանակներում, մարդկությունը կհրաժարվի կոպիտ սննդից: Մնուցումը կկատարվի Աստծո խտացված Էներգիայով, որը ներս կհորդի ստորին մարմինների չակրաներով և կսնի այդ մարմինները:

Սա ֆանտաստիկա է թվում, բայց այն իրականություն կդառնա: Դուք կվերածվեք հոգևոր էակների ռասայի և կկարողանաք հիշել Երկրի վրա ապրած ձեր բոլոր կյանքերը, ձեր յուրաքանչյուր կյանքի բոլոր մանրամասները: Բայց և ուզում եմ ձեզ ասել, որ առաջին բանը, որ դուք կձգտեք անել, կլինի այն, որ երբեք չհիշեք ձեր այդ երկրային փորձը: Որովհետև ձեր նրբացած հոգու համար անտանելի կլինի այդ փորձի մասին հիշողությունը:

Եվ այն, ինչ հիմա ձեզ շրջապատում է, ձեզ պարզապես ահավոր երազ կթվա, որը տևել է միլիոնավոր տարիներ: Բայց երազներն ի վերջո ավարտվում են: Եվ ես ձեզ շուտափույթ արթնացում եմ մաղթում իրական կյանքում:

ԵՍ ԵՄ Սեն Ժերմենը,
ձեզ եմ առաքում իմ Սերը

ՄԱՅՐ ՄԱՐԻԱՄ

26 մարտի, 2005 թ.

ԹՈՂ ՄՈՏԱԿԱ ԺԱՄԱՆԱԿՈՒՄ ԻՄ ՎԱՐԴԱՐԱՆՆԵՐԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ ՁԵԶ ՀԱՄԱՐ ԼԻՆԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԽՆԴԻՐ

ԵՍ ԵՄ Մայր Մարիամը՝ ձեր Երկնային Մայրը. ձեզ այցի եմ եկել այս դեսպանորդի միջոցով:

Ես բազմիցս ներկայացել եմ շատ մարդկանց միջոցով, որոնք այսօր մարմնավորված են Երկիր մոլորակի վրա: Ես օգտվում եմ այն թողությունից, որը շնորհված է ինձ, և որը թույլ է տալիս ինձ օգտագործել այն էներգիան, որը մարդիկ հղում են ինձ Վարդարանների ընթերցման ընթացքում, որպեսզի երևամ ֆիզիկական աշխարհում:

Ես շատերին եմ երևում, և ես կունենամ դրա հնարավորությունը, քանի դեռ չի ցամաքել ձեր սրտերից դեպի իմ սիրտն առաքվող էներգիայի հոսքը:

Ես օգտագործում եմ ամեն մի հնարավորություն, որպեսզի հայտնվեմ նրանց առաջ, ովքեր պատրաստ են տեսնելու և լսելու ինձ: Ես այժմ եկել եմ Տատյանայի միջոցով, որովհետև ժամանակն է, որ այս փուլի համար ձեզ անհրաժեշտ ոչ մեծ մի խրատ տամ:

Դուք կարող եք ինձ մտապատկերել. ես կանգնած եմ ուղիղ ձեր առջև, երբ դուք կարդում եք այս տողերը: Ես կանգնած եմ ձեր առջև՝ վարդերի փունջը ձեռքիս: Եվ այդ փունջը ես պատրաստել եմ ձեզ համար, սիրելիներս: Ձեզ համար, որ նկրտումներ ունեք և շատ ժամեր եք հատկացնում իմ Վարդարանների ընթերցմանը: Մի՛ դադարեցրեք այդ գործը, սիրելիներս: Ես հասկանում եմ, թե որքան շատ են ձեր աշխարհի փորձություններն ու գայթակղությունները, որոնք ավելի կարևոր են թվում այն աղոթքների համեմատ, որոնք ես խնդրում եմ ամեն օր ուղղել ինձ: Սակայն եթե չլիներ պահի պահանջը և ձեր ծառայության կարիքը, ապա ես չէի անհանգստացնի ձեզ:

Պաշտելիներս, որևէ հատուկ նշանակություն չունի այն, թե ո՞ր Վարդարանն եք կարդում՝ ավանդական կաթոլիկական Վարդարանն՞ը, թե՞ այն Վարդարանները, որոնք վերջին ժամանակներում ես տվել եմ շատ դեսպանորդների միջոցով: Գիտակցեք, որ նշանակություն ունեն միայն ձեր սրտերի մղումներն ու մաքրությունը և այս մոլորակի ամբողջ Կյանքին օգնելու ձեր ցանկությունը:

Ես չեմ ուզում ձեզ վախեցնել հնարավոր աղետներով ու արհավիրքներով: Ոչ այն պատճառով, որ դրանք մոտ ժամանակում չեն սպասվում. արհավիրքներն անխուսափելի են, քանի դեռ մարդիկ առաջվա պես չեն կամենում իրենց հայացքն ուղղել դեպի Երկինք և շարունակում են համառել ձեր աշխարհում նորանոր հաճույքներ ստանալու իրենց ձգտմամբ: Հենց դրա համար է մեզ այդքան անհրաժեշտ ձեր աղոթքների էներգիան: Յուրաքանչյուրին, ով այս դժվար ժամանակներում ամեն օր կկարդա իմ Վարդարանները, ես վստահեցնում եմ, որ 100 կիլոմետր շառավղով այն վայրի շուրջ, որտեղ տեղի է ունենում ձեր ամենօրյա ծառայությունը, չի լինի ոչ մի աղետ ու արհավիրք:

Հատկապես ես դիմում եմ իմ սիրելի Ռուսաստանի բնակիչներին: Շատ լայնարձակ է ձեր երկիրը, և նրա շատ շրջանների բնակեցվածության նոսրությունը ձեզնից պահանջում է ձեր ծառայության մեջ երկակի, եռակի ջանքերի գործադրում: Ռուսաստանին վիճակված է մեծ դեր խաղալ մարդկության գիտակցության վերափոխման, այդ գիտակցությունն ավելի բարձր մակարդակի բարձրացնելու գործում:

Ըստ այդմ՝ ես խնդրանքով դիմում եմ յուրաքանչյուրին, ով լսում է իմ այս ուղերձը. թող մոտակա ժամանակում իմ Վարդարանների ընթերցումը, անկախ այն բանից, թե ո՞ր դեսպանորդի միջոցով են այդ Վարդարանները հասել ձեզ, լինի ձեր կյանքի առաջնահերթ խնդիրը: Դուք պետք է հղեք ինձ օրական մի Վարդարան: Ես խնդրո՞ւմ եմ ձեզ: Աղաչում եմ ձեզ, սիրելիներս: Ես անձամբ կգամ յուրաքանչյուրի մոտ, ով հանձն է առել ամեն օր կարդալ իմ Վարդարանները, և մի վարդ կտամ իմ ծաղկեփնջից՝ ի նշան նրա նկատմամբ իմ սիրո:

Եվ դա դեռ բոլորը չէ, սիրելիներս: Ես խնդրում եմ, որ դուք կարդաք իմ Վարդարաններն այն ամե-

նավեհ սիրո զգացումով, որը դուք կարող եք տածել ձեր մոլորակի, ձեր մոլորակը բնակեցնող բոլոր կենդանի էակների նկատմամբ: Նաև խնդրում եմ ձեզ, նախքան Վարդարանն ընթերցել սկսելը խորացեք ձեր սրտերի մեջ: Զգացեք ձեր սրտի ջերմությունը: Խորհեք իմ մասին: Ես գիտեմ, թե որքան դժվար է այս դժվարին ժամանակներում Երկրի վրա մարմնավորման մեջ լինելը: Բայց դուք էլ հիշեք, թե որքան դժվար էր ինձ համար, երբ իմ աչքերի առջև խաչվեց իմ Հիսուս որդին. ինչ վիճակում էի ես նրա տառապանքները տեսնելիս...

Սիրելիներս, դուք սիրում եք ինձ: Կարող եք ամեն օր Վարդարանը կարդալուց առաջ ընդամենը մի քանի րոպեով ձեր սրտի Սերն առաքել ինձ: Չէ՞ որ դա բարդ բան չէ: Դուք կկատարեք իմ այս խնդրանքը, սիրելիներս:

Ես սիրում եմ բոլորիդ: Եվ ես կգամ ձեզ մոտ ձեր՝ Վարդարան կարդալու ընթացքում: Դուք կզգաք, անպայման կզգաք իմ ներկայությունը: Դուք կարող եք ընդհատել ընթերցանությունն ու զրուցել ինձ հետ: Ես ականջալուր կլինեմ ձեր բոլոր խնդրանքներին, ձեր բոլոր ցանկություններին:

Եվ խոստանում եմ ցուցաբերել այն ամբողջ օգնությունը, որն ինձ թույլ կտա ցուցաբերել Տիեզերական Օրենքը: Ես ձեզ համար կանեմ այն ամենը, ինչ ի զորու եմ անել: Կարող եմ արդյոք հուսալ, որ դուք էլ կանեք այն, ինչ ես եմ խնդրում:

Հավատացեք ինձ. եթե ես չիմանայի այն, ինչ գիտեմ, և ինչը ծածկված է ձեր աչքից, ապա երբեք չէի խնդրի ձեզ անել այն գործը, որը միայն դուք կարող եք անել: Նվազագույն ակնկալիքս ձեր չերկյուղելն է: Ոչնչից մի՛ վախեցեք: Ես եղել եմ ձեզ հետ, քայլել եմ Երկրի վրայով և կարող եմ վստահեցնել, որ յուրաքանչյուրն իր կյանքում ճիշտ այնքան փորձությունների է ենթարկվում, որքանին որ կարող է դիմանալ:

Չափազանց ծանր կարմա է ստեղծել մարդկությունը: Եվ այդ կարմայի հատուցումը պահանջում է մեծ զոհեր ու տառապանքներ:

Բայց Աստված ողորմած է և տալիս է ձեզ միջոցներ, որոնց օգնությամբ կարող եք մեղմել ձեր կարման և թեթևացնել ձեր բեռը: Մի՛ անտեսեք այդ միջոցները և մի՛ անտեսեք ձեզ տրված հնարավորությունը:

Ես այժմ լքում եմ ձեզ: Եվ ես ուրախ եղա՝ այս հնարավորությունն օգտագործելով և ձեզ հիշեցնելով այն աշխատանքի մասին, որը դուք պարտավոր եք կատարել:

Ես անպայման կհանդիպեմ յուրաքանչյուրիդ հետ Վարդարանների ձեր ամենօրյա ընթերցման ժամանակ:

ԵՍ ԵՄ Մայր Մարիամը,
մինչ Նոր հանդիպում

ԳՈՒԱՆ ԻՆ

27 մարտի, 2005 թ.

ԴՈՒՔ ՊԵՏՔ Է ԱՆԸՆԿԱԼՈՒՆԱԿ ԼԻՆԵՔ ՁԱՐԻ ՀԱՆԴԵՊ



ԵՍ ԵՄ Գուան Ինը: ԵՍ ԵՄ եկել այս դեսպանորդի միջոցով:

Հնարավոր է՝ այս թելադրություններն ընթերցողներից ոչ ոք չգիտե իմ մասին: Ես Արևելքում եմ հայտնի: Եվ Արևելքի բնակիչների համար նույնն եմ, ինչ Մարիամ Աստվածածինն Արևմուտքի բնակիչների համար:

Կանացի նախասկիզբն այս ժամանակներում ելնում է առաջին պլան: Եվ կանացի Բոցի, Աստծո կանացի ասպեկտի երկրպագությունը ձեր կողմից այժմ պետք է իրացվի:

Ոչ այն պատճառով, որ այդ ասպեկտն է գլխավորը, այլ այն պատճառով, որ երկար ժամանակ Աստծո այդ ասպեկտը ստորադասվել է:

Մեր Աստված Հայր-Մայր է: Եվ արական, և իգական ասպեկտները հավասարապես կարևոր են:

Ստորադասելով ասպեկտներից մեկը՝ դուք խախտում եք աստվածային ներդաշնակությունը,

և դա ձեր աշխարհում իր արձագանքն է գտնում տարբեր անսերդաշնակ դրսևորումների տեսքով՝ սկսած ընտանեկան անսերդաշնակություններից և վերջացրած տարբեր տիպի արհավիրքներով ու տարերային աղետներով:

Աստծո դրսևորման երկու ասպեկտները ձեր կյանքում պետք է հավասարակշռված լինեն: Հոր ասպեկտը, Հոր Կամքի՝ Աստծո Կամքի հարգումը և Մոր ասպեկտը, այն ասպեկտը, որը թույլ է տալիս դրսևորել այդ Կամքը, հավասարակշռված են մատերիայի մեջ:

Վերջին մի քանի հազարամյակում հենց կանացի նախասկզբի ստորադասումն է հանգեցրել նրան, որ Երկրի համար նախատեսված աստվածային մտահղացումն աղավաղվել է: Եվ այն, ինչ ձեր ժամանակներում դուք տեսնում եք ձեր շուրջը, ընդամենը խղճուկ ծաղրանկարն է Աստծո այն մտահղացման, որն ի սկզբանե գոյություն է ունեցել ձեր մոլորակի համար:

Ես Ողորմածության և Կարեկցանքի Աստվածուհին եմ: Եվ ես իրականացնում եմ այս մոլորակի վրա ապրող բոլոր կենդանի էակներին օգնելու իմ առաքելությունը: Իրականացնում եմ իմ առաքելությունը Արևելքում ճիշտ այնպես, ինչպես Մարիամ Աստվածածինը՝ Արևմուտքում: Սակայն մեր առաքելությունների միջև տարբերություն չկա: Մենք եկել ենք՝ օգնելու Երկրի բնակիչներին, և մեր առաքելությունը կիրականացնենք՝ անկախ ամեն ինչից:

Ուզում եմ դիմել Ռուսաստանի և այն երկրների բնակիչներին, որտեղ հասկանում են ռուսերեն, ինչպես նաև այն երկրների բնակիչներին, որոնց լեզվով, ինչպես մենք հույս ունենք, կթարգմանվեն այս թելադրությունները:

Ես դիմում եմ ձեզ խնդրանքով, որ պահպանեք համակշռությունն ու հավասարակշռությունը արական և իգական նախասկիզբների միջև: Եվ քանի որ արական նախասկիզբը տիրապետող է ձեր աշխարհում, ապա կցանկանայի, որ դուք ավելի շատ ուշադրություն հատկացնեք իգական ասպեկտին. խոսքս հատկապես վերաբերում է Ռուսաստանի բնակիչներին:

Արական թրթռանքի գերակշռումն այդ երկիրը տանում է մի ուղով, որն առատություն չի ապահովում նրա բնակչության մեծամասնության համար: Մեկ շնչին հասնող բնական հարստությունների տեսակետից ամենահարուստ այդ երկիրն այժմ իրականում աղքատ երկիր է, եթե երկրի զարգացվածության աստիճանի մասին դատելու լինենք բնակչության մեծամասնությանը պատկանող մեկ շնչին հասնող եկամուտով, այլ ոչ թե վերցնենք միջին ցուցանիշը, որում ներառվում են և՛ հարուստները, և՛ աղքատները:

Եթե Ռուսաստանում զարգացած լիներ Մոր՝ Աստծո Մայրական ասպեկտի նկատմամբ հարգանքը, ապա մի՞թե այդ երկրի մարդիկ թույլ կտային, որ այն տարեց կանայք, որոնք տվել են իրենց բոլոր ուժերը, աշխատանքն ու ընդունակություններն իրենց երկրի բարօրության համար, աճեցրել են երեխաներ ու թոռներ, այժմ քարշ տան իրենց խղճուկ գոյությունը և նույնիսկ ստիպված լինեն ողորմություն խնդրել և կերակուր փնտրել աղբանոցներում:

Ամեն անգամ, երբ դուք տեսնեք տարեց կնոջ, որը, ցնցոտիների մեջ նստած, ողորմություն է խնդրում, իմացեք, որ ինձ եք տեսնում՝ Ողորմածության Աստվածուհուն, որը ձեզ մոտ է եկել այդ կնոջ կերպարանքով, որպեսզի ձեր սրտերում Ողորմածություն և Կարեկցանք արթնացնի:

Դուք պարտավոր եք խոնարհվել Մայր-Կնոջ առաջ, որը ձեզ կյանք է տվել, մարմնավորել է ձեր հոգին:

Եվ կարևոր չէ, թե ձեր մայրը որքան խիստ է վարվել ձեզ հետ մանուկ հասակում: Ձեզ հայտնի չէ, թե ինչպիսի կարմայական հարաբերություններ են ձեզ կապում ձեր մոր հետ:

Ահա ասում եմ ձեզ՝ ձեր տիեզերքում գործում է հատուցման օրենքը, և դուք ինքներդ եք վաստակել ձեր մոր կողմից ձեր նկատմամբ ցուցաբերվող, ինչպես ձեզ է թվում, անարդարացի վերաբերմունքը: Ձեզ հայտնի չէ, թե ձեր անցյալ կյանքերում քանի անգամ եք տանջել և նույնիսկ սպանել այն անհատին, որն այժմ մարմնավորվել է որպես ձեր մայրը: Եվ, հավատացե՛ք ինձ, Աստված ձեզ տվել է ամենահեշտ հնարավորությունը, որպեսզի վերամշակեք ձեր կարմայական փոխհարաբերություններն այն անհատի հետ, որն այժմ ձեր մայրն է:

Ձեզ թվում է, թե ձեր կառավարությունը ձեզ հետ անարդար է վարվում, և որ դուք արժանի եք ավելի լավ բախտի: Այո՛, իհարկե, դուք ավելի լավ բախտի եք արժանի, և Ռուսաստանին առաջիկայում մեծ ապագա է սպասվում:

Դուք կարող եք ինձ չհավատալ, բայց ձեր երկրի ներկայիս իրադրությունը կապված է հենց կանացի նախասկզբի՝ Աստծո կանացի ասպեկտի նկատմամբ ոչ բավարար հարգանքի հետ: Փոխհարաբերությունների հավասարակշիռ վիճակն ընտանիքում, հավասարակշռությունը հոր և մոր միջև, ընտանեկան ճիշտ հարաբերություններն ու դրվածքն առողջ հասարակության հիմքն են: Եվ այն դաստիարակությունն ու հիմունքները, որոնք ընտանիքում ստանում է ապագա սերունդը, անհնար է համեմատել համացանցով, հեռուստացույցով կամ դպրոցից ստացված գիտելիքների հետ:

Եվ հենց ընտանիքի քայքայմանն էին ուղղված այն վարչակարգի բոլոր ջանքերը, որը Ռուսաստանում գոյատևեց 70 տարի, և որին արևմուտքում կոչում էին կոմունիզմ, իսկ Ռուսաստանում՝ սոցիալիզմ:

Այդ վարչակարգի բոլոր ջանքերն ուղղված էին հասարակության բջիջ հանդիսացող ընտանիքը քայքայելուն: Եվ, զրկվելով իր հիմքից, Ռուսաստանը խոցելի դարձավ «ազատ կյանքի» քարոզչության այն վիրուսի համար, որն այժմ՝ Արևմուտքից

մուտք է գործել այնտեղ: Առողջ օրգանիզմն անընկալունակ է ցանկացած քայքայիչ վիրուսի հանդեպ: Իսկ հասարակության համար այդպիսի վիրուս է սեքսի, թմրանյութերի, բռնության քարոզչությունը: Եվ քանի որ Ռուսաստանի օրգանիզմն այդ 70 տարիների ընթացքում թուլացել էր, ապա նա չկարողացավ դիմագրավել արտաքին վարակներին ու վիրուսներին, որոնք տառացիորեն հեղեղեցին այդ երկրի տեղեկատվական դաշտը:

Մարդկային օրգանիզմի հետ համանմանությունն այս պարագայում կատարյալ է: Օրգանիզմը պետք է ազատվի վիրուսներից և այն թույներից, որոնք արտազատում են այդ վիրուսները: Իսկ այդ ձերբազատմանը կարելի է հասնել մաքրագործումների օգնությամբ:

Վիրուսների դեմ պայքարելն իմաստ չունի: Հարկավոր է ջանքեր գործադրել անընկալունակությունն ամրապնդելու համար:

Ձեր աշխարհում գոյություն ունի չարը: Եվ այն շա́տ շատ է: Դուք պետք է անընկալունակ լինեք չարի հանդեպ: Եվ այդ դեպքում ոչ մի վիրուս ձեզ համար սարսափելի չի լինի:

Իսկ ձեռնարկվելիք առաջին քայլն այն պետք է լինի, որ հասարակության յուրաքանչյուր անդամ և բջիջ ցանկանա առողջ լինել, ձերբազատվել իր վրա փաթաթվող կեղծիքից ու քարոզչությունից:

Ձեզ շրջապատող կյանքում կարողացե́ք զանազանել աստվածայինը բոլոր այն կեղծ բաներից, որոնք մահ ու դժոխք են ներարկում ձեր մեջ:

Ձեր կյանքից դո́ւրս քշեք այն ամենը, ինչ Աստծուց չէ, այն ամբողջ սուտը, որ հեռուստացույցի ու համակարգչի էկրանից ներթափանցում է ձեր գիտակցության մեջ: Փնտրեք և գտե́ք ձեր շուրջը եղած ճշմարիտը: Աճեցրե́ք այն:

Միայն ձեզնից է կախված, թե որտեղ կներդնեք այդքան դժվարությամբ վաստակած ձեր փողերը. կյանքի անիմաստ հաճույքների՞ վրա կծախսեք, թե՞ այն բանի համար, որ ձեր երեխաները հնարավորություն ստանան առնչվելու անցյալի և ներկայի մշակութային արժեքներին:

18–19-րդ դարերի ռուս կոմպոզիտորների երաժշտության մեջ և ռուս նկարիչների կտավներում պարունակվող թրթռանքները կարող են չեզոքացնել մահվան այն թրթռանքները, որոնք ձեր գիտակցության մեջ ներդրվում են հեռուստահաղորդումները դիտելուց և այն երաժշտությունը լսելուց, որը վերջին ժամանակներում ողողել է ամբողջ Ռուսաստանի տարածքը:

Պաշտպանե́ք ձեր երեխաներին հեռուստահաղորդումներից և ռոք երաժշտություն լսելուց: Հավատացե́ք ինձ, այն վնասը, որն անգիտակցաբար ստանում են նրանց հոգիները, անհամեմատ ավելի շատ է, քան այն օգուտը, որն ստացվում է զանգվածային տեղեկատվության ժամանակակից միջոցներից օգտվելուց:

Օգտվե́ք բնության գրկում լինելու ամեն մի հնարավորությունից: Ձեր ժամանակն անցկացրեք բնության գրկում. միայն թե՝ ոչ ռադիոընդունիչի երաժշտությամբ ու գովազդով համեմվող խորոված ի շուրջ:

Ունկնդրե́ք բնության ձայները: Նայեցե́ք թռչուններին, ծառերին: Դիտե́ք ամպերը: Ունկնդրե́ք լռությունը:

Մենք չենք կարող բոլոր մարդկանց ստիպել, որ աղոթեն և կարդան մեր Վարդարանները, բայց մենք կարող ենք նրանց ուշադրությունը հրավիրել կյանքում նրանց շրջապատող այն խոչընդոտների վրա, որոնք խանգարում են նրանց հոգևոր աճին, և որոնցից պետք է հեռու քաշվել՝ փոխարինելով դրանք ավելի կատարյալ բաներով:

Եթե ձեզ համար դժվար է դատել ձեզ շրջապատող իրերի որակի մասին, ապա փնտրեք ձեր շուրջը գտնվող այն մարդկանց, որոնք կարողացել են պահպանել դաշնությունն Աստծո հետ, և որոնց համար չկա ավելի մեծ երջանկություն, քան Աստծո Իրականության իրենց ընկալումը, իրենց թրթիռների մաքրությունը ձեզ փոխանցելը:

Ես ձեզ բավականաչափ տեղեկատվություն հաղորդեցի մտորումների համար: Դես ու դեն ընկնելու ժամանակ չունեմ: Ես տվեցի ձեզ հենց այն, ինչն անհրաժեշտ է, որ դրանով ոգեշնչվեք և արթնանաք Բարձրագույն Իրականության համար:

Եվ դա արեցի ձեր նկատմամբ սիրուց ու կարեկցանքից դրդված:

ԵՍ ԵՄ Գուան Ինը

ՏԵՐ ՄԱՅՏՐԵՅԱ

28 մարտի, 2005 թ.

ԵՍ ՁԵԶ ՀՐԱՎԻՐՈՒՄ ԵՄ ԳԱՂՏՆԻ ԾԵՍԵՐԻ ԻՄ ԴՊՐՈՑԸ



ԵՍ ԵՄ Մայտրեյան: ԵՍ ԵՄ եկել: Ես եկել եմ ձեզ մոտ այս դեսպանորդի միջոցով: Ես եկա՛:

Ուշադրությամբ հետևե՛ք ձեզ ուղղված այսօրվա իմ խոսքերին: Ձեզ կարող է թվալ, թե իմ խոսքերը նշանակալից չեն և որևէ նոր տեղեկատվություն չեն պարունակում: Մի՛ շտապեք եզրակացություններ անել: Թույլ տվեք, որ ես որոշեմ, թե ինչ է ձեզ անհրաժեշտ ստանալ հենց հիմա, որպեսզի կարողանաք կատարել ձեր հոգևոր Ուղու հաջորդ քայլը:

Դուք բոլորդ Հոգու մարտիկներ եք: Դուք եկել եք ֆիզիկական աշխարհ, որպեսզի մարտնչեք պատրանքի հետ: Որովհետև դա է Աստծո Պլանն այժմվա համար: Սկզբում դուք ներառում եք պատրանքը ձեր մեջ, նույնիսկ կարող եք ամբողջությամբ ձեզ նույնացնել պատրանքի հետ: Եվ ահա գալիս է պահը, երբ պետք է հրաժեշտ տաք պատրանքին և անցնեք ձեր գիտակցության զարգացման ավելի բարձր աստիճանին:

Եվ դուք վերածվում եք այն ուժերի պայքարի թատերաբեմի, որոնց մի մասը ձգտում է պահպանել պատրանքը, իսկ մյուս մասը՝ հաղթահարել այն: Ձեզ թվում է, թե այդ պայքարն ընթանում է ձեր աշխարհում, բայց իրականում այն ընթանում է յուրաքանչյուրիդ ներսում:

Հենց դա է այն ձեռնադրումը, որը դուք անցնում եք այս պահին. հասկանալ, որ պայքարն ընթանում է ձեր ներսում: Եվ քանի դեռ այդ պայքարը ձեր ներսում շարունակվում է, դուք նորից ու նորից վերամարմնավորվում եք ֆիզիկական աշխարհում և հայտնվում այնպիսի մարդկանց շրջապատում, որոնց ներսում նույնպես ընթանում է այդ պայքարը:

Եվ դուք կշարունակեք մարտնչել ձեր կրքերի, ձեր թերությունների ու անկատարությունների դեմ, քանի դեռ լրիվ չեք հաղթահարել դրանք:

Դրանում է այն պայքարի իմաստը, որն ընթանում է Լույսի և խավարի ուժերի միջև: Բայց այդ իմաստի այսպիսի բացատրություն ես ձեզ հիմա տալիս եմ ձեր գիտակցության մակարդակին համապատասխան: Երբ ձեր գիտակցությունն ավելի պայծառանա, և ձեր միտքը նման դառնա բյուրեղապակու բյուրեղի, այնժամ մենք կտանք նոր գիտելիք և պայքարի նոր մեկնաբանություն:

Ըստ այդմ՝ իմ խորհուրդն է՝ վերջ տալ արտաքին կռվին և դադարեցնել ձեզնից դուրս թշնամիներ որոնելը:

Յուրաքանչյուր ոք, ով մոտենում է ձեզ ֆիզիկական ոլորտում, մոտ է գալիս հենց այն պատճառով, որ ձեր թրթիռները նրան թույլ են տալիս դա անել: Եվ եթե այդ մարդը ձեզ վնաս հասցնի կամ վիրավորի, դուք նրան չպետք է համարեք ձեր անձնական թշնամին կամ ընկալեք որպես անկյալ հրեշտակ: Նա կա՛մ մոտեցել է ձեզ, որ դուք կարողանաք իրեն վերադարձնել ձեր կարմայական պարտքը, կա՛մ էլ, որ ձեզ դաս տա կամ ստուգի, թե որքանով եք յուրացրել այն դասերը, որ մեր Ուսմունքի միջոցով ստացել եք մեզնից:

Եվ ամեն անգամ, երբ ցանկություն կառաջանա վրեժ լուծել ձեզ վնաս պատճառող մարդուց կամ պատժել նրան, դուք պետք է համարեք, որ այդ ե'ս եմ եկել ձեզ մոտ այդ մարդու տեսքով, որպեսզի քննություն վերցնեմ և պարզեմ, թե որքանով եք յուրացրել մեր տված դասերը:

Ձեր սահմաններից դուրս չկա ոչինչ, որի դեմ արժե պայքարել: Իսկ եթե ուզում եք, որ ցույց տամ ձեր իրական թշնամուն, ապա մոտեցեք հայելուն և կտեսնեք նրան: Ահա՛ ձեր իրական թշնամին՝ իր մարմնական ցանկություններով, եսասիրությամբ, ինքնագոհությամբ և վստահությամբ, որ ինքն արդեն ճանաչել է Ճշմարտությունը և կարող է այն ուսուցանել ուրիշներին:

Որպեսզի ուսուցանեք Ճշմարտությունը, դուք պետք է շատ ջանքեր թափեք ինքներդ ձեզ վրա: Դուք նախ պետք է անցնեք ձեր անիրական մասի դեմ պայքարի բովով, կռիվ տաք ձեր շեմի պահակի՝ ձեր էգոյի հետ: Դուք պետք է հաղթանակ տոնեք ձեր սեփական գիտակցության մեջ: Պետք է հաղթանակած դուրս գաք ձեր պայքարից: Ահա այնժամ, և ոչ ավելի շուտ, դուք իրավունք կստանաք ուսուցանելու: Գուրուի պատմուճան, ինչպես և Դեսպանորդի պատմուճան, մեր կողմից չի տրվում, քանի դեռ ձեռք չեք բերել որոշակի արժա-

նիքներ: Ձեզնից շատերը նախորդ մարմնավորումներում պատմուճան ունեցել են: Եվ ձեր հոգիները գիտեն այդ մասին: Դուք անցյալում ձեռք բերված հսկայական նվաճումների պաշար ունեք:

Տարբեր պատճառներով դուք զրկվել եք ձեր պատմուճաններից: Եվ ամեն անգամ մարմնավորվելով՝ դուք հնարավորություն եք ստանում ձեռնադրում անցնելու և վերականգնելու պատմուճանը:

Ուստի ես ձեզ հրավիրում եմ Գաղտնի Ծեսերի իմ Դպրոցում թեստեր հանձնելու: Ձեզնից շատերը կուզենային սովորել անձամբ ինձ մոտ: Եվ ես միշտ պատրաստ եմ աշակերտներ ընդունելու: Պարզապես պետք է մոտենաք զոհասեղանին և արտահայտեք ինձ աշակերտելու ձեր ցանկությունը: Կարող եք ձեր այդ ցանկությունը հայտնել ձեր սրտերում:

Շատերն են ցանկություն հայտնել դառնալու իմ աշակերտները: Եվ ես բոլորին ընդունել եմ: Սակայն նրանցից շատ քչերն են կարողացել անցնել իմ տված առաջին թեստը:

Ես հարկ չունեմ գալու անձամբ ձեզ մոտ, որպեսզի տամ իմ առաջին թեստը: Ես պարզապես ձեզ մոտ կուղարկեմ այն մարդուն, ում դուք ձեր թշնամին եք համարում, և նա կկատարի որևէ արարք, որը ձեզ վիրավորական կթվա: Յուրաքանչյուր թեստի խնդիրը ձեզ հավասարակշռությունից հանելն է: Ձեր գնահատականը կորոշվի ոչ թե նրանով, որ հավասարակշռությունից դուրս կգաք թե ոչ, այլ նրանով, թե ինչ եզրակացության կհանգեք այդ թեստն անցնելու արդյունքում:

Լավագույն աշակերտներն իրենց երախտագիտությունն են հայտնում Աստծուն և ինձ՝ որպես Ուսուցչի, այդ թեստն անցնելու տրված հնարավորության համար:

Նրանք, ովքեր պատրաստ չեն իմ ձեռնադրումների նույնիսկ նախնական աստիճանին, չեն էլ կարող գլխի ընկնել, որ ես իրենց թեստ եմ տվել: Նրանք արձագանքում են այնպես, ինչպես որ միշտ են արձագանքում՝ վիրավորվելով, ատելությամբ, տարակուսանքով, վրեժ լուծելու ցանկությամբ:

Նման մարդը երբեմն մինչև իր ընթացիկ մարմնավորման ավարտը զրկվում է իմ ղեկավարությամբ ուսում ստանալու հնարավորությունից:

Այդ պատճառով, թեև շատ են Գաղտնի Ծեսերի իմ Դպրոցն ընդունվել ցանկացողները, բայց միայն եզակիներն են կարողանում անցնել ընդունելության այդ փոքրիկ քննությունը և նոր թեստեր անցնելու հնարավորություն ստանալ: Ես հարկ չունեմ Երկրի վրա գտնվող որոշակի վայրում հավաքելու իմ աշակերտներին, որ թեստ տամ նրանց: Այդ նպատակի համար ես օգտագործում եմ ձեր կյանքի հանգամանքներն ու ձեր շրջապատի մարդկանց:

Գաղտնի Ծեսերի իմ դպրոցն ընդունվելու հնարավորություն բոլորն ունեն, բայց միայն եզակիներն են հնարավորություն ստանում ավարտելու այդ դպրոցը և ստանալու Գուրուի ավարտական պատմուճան: Եվ ձեզ համար արդեն նորություն չի լինի, եթե ասեմ, որ Տատյանան, ում միջոցով հիմա ես տալիս եմ այս թելադրությունը, ավարտել է իմ դպրոցը 2002 թվականին՝ անցնելով ուսուցման ադրագացված կուրս: Ժամանակի պահանջն էր այդպիսին: Եվ երբ Տատյանայի ուսուցումը սկսվեց, մեզնից քչերն էին վստահ, որ նա կկարողանա մինչև վերջ անցնել այն: Բայց նա անցավ, և միայն դրանից հետո մենք հնարավորություն ունեցանք նրա միջոցով տալու այս Ուսմունքը:

Կուզենայի, որ իմանաք՝ այս իրավիճակում չկա որևէ բացառիկություն: Ձեզնից յուրաքանչյուրը կարող է իմ ղեկավարությամբ ուսուցում անցնելու ցանկություն հայտնել: Ես էլ իմ հերթին բոլորիդ հրավիրում եմ՝ դառնալու իմ աշակերտները: Սակայն դուք միշտ պետք է հիշեք, որ այն պահից սկսած, երբ աշակերտելու խնդրանքով կդիմեք ինձ, ձեր կյանքում ի հայտ կգան ամեն տեսակի ձախորդություններ ու դժբախտություններ. ձեր սովորական կյանքն ուղղակի կփլվի ձեր աչքի առաջ:

Բայց, որքան էլ ձեզ դաժան թվա, դա ուսուցման անհրաժեշտ փուլն է: Դուք պետք է գիտակցեք, որ ձեզ շրջապատող ամեն ինչը պատրանք է, և ձեր գիտակցության մեջ պետք է խզեք ձեր ունեցած բոլոր կապվածությունները: Ձեզ կթվա, թե դուք անբուժելի հիվանդ եք, որ ուր որ է կմեռնեք: Եվ այդ միտքը պետք է ընդունեք խոնարհաբար: Ձեզ կթվա, թե դուք շեղվել եք Ուղուց. որ Աստված չի կարող այդքան դաժան լինել և այդպես պատժել ձեզ: Ձեր մարմնավոր միտքը դեռ ու դեռ կընկնի որևէ պատրանքային հնարավորություն գտնելու համար, որ ձեզ հեռացնի Ձեռնադրումների Ուղուց:

Եվ դուք կռիվ կտաք ձեր մարմնավոր մտքի՝ ձեր անհիրական մասի հետ: Եվ որքան համառ լինի դիմադրությունը, այնքան ձեզ համար ավելի ցավագին կլինի վերջնական թեստն անցնելը՝ դպրոցի ավարտական քննությունը հանձնելը: Եվ դուք իմ դպրոցի շրջանավարտը չեք դառնա, քանի դեռ ձեր որևէ մասը կընդդիմանա Աստծո Օրենքին ենթարկվելուն: Այո, սիրելիներս, իմ դպրոցի շրջանավարտները հրաժարվում են Աստծո կողմից իրենց շնորհված կամքի ազատությունից: Ազատ կամքն Աստված տվել է մարդուն՝ որպես շնորհ: Եվ երբ մարդն իր ազատ կամքով հրաժարվում է այդ շնորհից, ապա նա վերջնական ձեռնադրում է անցնում իմ դպրոցում: Նա հանձնում է ավարտական քննությունը: Այսօր ես ձեզ համար բացեցի իմ Դպրոցի գաղտնիքներից շատերը: Ես շատ բաց խոսեցի: Հիրավի, ես դեռ երբեք այսքան բաց չեմ խոսել այսպիսի մեծ լսարանի առջև: Հուսով եմ, որ այսօրվա մեր զրույցը ձեզ համար օգտակար կլինի:

Եվ եթե ձեզնից որևէ մեկն իմ դպրոցում ուսում ստանալու վստահություն է զգում, ապա բարի գալուստ: Իմ դպրոցի դռները լայնորեն բաց են: Ավա՜ղ, շատ քչերն են ցանկանում անցնել այդ դռներից ներս և փորձության ենթարկվել...

ԵՍ ԵՄ Մայտրեյան, սպասում եմ ձեզ

ՎԵՀԱՊԵՏ ՍԵՐԱՊԻՍ ԲԵՅ

29 մարտի, 2005 թ.

ՁԵՐ ՄՈԼՈՐԱԿԸ ՄՏՆՈՒՄ Է ԲՈԼՈՐԱՊՏՈՒՅՏԻ ՄԵՋ, ՈՐԸ ՏԱՆՈՒՄ Է ԴԵՊԻ ՊԱՏՐԱՆՔԻ ՀԵՏՀԱՎԱՔՈՒՄ

ԵՍ ԵՄ Սերապիսը, ԵՍ ԵՄ եկողը:

Այս տիեզերքի արարումն ու նրա զարգացումը կապված են հազարավոր խոչընդոտների հաղթահարման հետ: Եվ այդ խոչընդոտները ծնունդ են առնում այս տիեզերքում գործող երկու հիմնական ուժերի փոխազդեցության արդյունքում: Աստծո նախասկզբնական մաքուր Մտահղացումը տարբաժանման ու երևակման սկզբի պահին դիմադրության է հանդիպում այն ուժերի կողմից, որոնք գտնվում են հավերժական երանության հանգստի մեջ. ճիշտ այնպես, ինչպես դուք հապաղում եք առավոտյան քնից արթնանալ, հատկապես երբ ձեր քունը քաղցր է, ինչպես մանկության տարիներին:

Ժամանակն անցնում է, և տիեզերքը դիմադրության է հանդիպում արդեն այն ուժերի կողմից, որոնք չեն ուզում վերադառնալ նախասկզբնական հանգստի վիճակին: Դա էլ նման է այն բանին, որ մարդը չափազանց շատ է կլանված օրվա պրոբլեմներով և չի շտապում սուզվել քնի մեջ:

Բայց ճիշտ այնպես, ինչպես հերթագայում են ցերեկն ու գիշերը՝ արթնության ու քնի ժամանակահատվածները, տիեզերքը նույնպես ունի իր ցերեկը՝ իր արթնությունը և իր դադարը՝ հանգիստը:

Ամեն ինչ ենթակա է բոլորապտույտի: Եվ բոլորապտույտի՝ բոլորապտույտների մեջ:

Ձեր մոլորակը մտնում է մի բոլորաշրջանի մեջ, որը տանում է դեպի պատրանքի հետհավաքում: Սակայն մարդկային էակներն այնքան են խորասուզվել այդ երևակված պատրանքի մեջ, որ ընդդիմանում են հաստատված կարգին:

Ձեր մեջ առկա է ձեր անմահ մասը, ձեր Բարձրագույն Մասը: Եվ ձեր մեջ առկա է ձեր մահկանացու մասը՝ ձեր ստորին չորս մարմինները: Ձեր Բարձրագույն Մասը ենթարկվում է Աստծո Օրենքին, որովհետև արար աշխարհում ձեր ճամփորդելու ամբողջ ընթացքում ձեր այդ մասը երբեք չի կորցրել իր կապն Արարչի հետ: Ձեր ստորին մասն էվոլյուցիոն զարգացման որոշակի փուլում կորցրել է Արարչի հետ իր միասնության, ինչպես և ամբողջ արարչության հետ իր միասնության զգացողությունը:

Նա ցանկացել է ապրել իր առանձին կյանքով և մոլորվել է պատրանքի ջունգլիներում: Եվ որքան էլ երկար տևեն հոգու թափառումները տիեզերքի լայնարձակության մեջ, գալիս է պահը, երբ նա պետք է պատրանքային աշխարհից վերադառնա Աստծո Իրական Աշխարհը: Ահա այժմ սկսվել է այդ փուլը, պատրանքից հրաժարվելու և Իրական աշխարհ վերադառնալու փուլը:

Այդ նպատակով ձեզ ուղեկցորդ է տրված. դա ձեր Պահապան Հրեշտակն է՝ ձեր Սուրբ Եսը-Քրիստոսը: Եվ այդ ուղեկցորդը ձեզ պետք է դնի ճիշտ Ուղու վրա, դեպի Հոր Արքայություն վերադառնալու Ուղու վրա:

Ամբողջ արտաքին ուսմունքը, որը մենք տալիս ենք մեր այս կամ որևէ այլ դեսպանորդի միջոցով, հենց նպատակ ունի կապ ստեղծել ձեր իսկ այն մասի հետ, որը հիշում է, թե ով եք դուք: Եվ որքան ավելի ամուր լինի ձեր կապը ձեր իսկ իրական մասի հետ, այնքան ավելի շուտ տեղի կունենա ձեր վերադարձը Տուն:

Բոլոր ճշմարիտ ձեռնադրումները, որոնք ես տվել եմ իմ աշակերտներին, և որոնք իրենց աշակերտներին են տալիս մյուս Վեհապետները, նպատակաուղղված են հենց նրան, որ հաղթահարվի ձեր պատրանքային մասի դիմադրությունը և կապ ստեղծվի ձեր անմահ մասի հետ:

Իսկ ձեզնից նրանք, ովքեր այցելել են իմ Մեհնաստանը՝ Լուքսորում գտնվող իմ Տաճարը, այժմ պետք է վերհիշեն այն գիտելիքները, որոնք ստացել են իմ Տաճարում:

Ես խստապահանջ ուսուցիչ եմ և արտակարգ

կարգապահություն եմ պահանջում իմ աշակերտներից: Քանզի եթե աշակերտը չի ենթարկվում իր իսկ ընտրած Ուսուցչին, ապա այդպիսի աշակերտը իրավունք չունի մեր ղեկավարությամբ ուսում ստանալու:

Ժամանակի պահանջն այնպիսին է, որ ձեր ուսուցումն ու ձեռնադրումը տեղի են ունենում սովորական կյանքի պայմաններում: Ձեզնից չի պահանջվում գնալ աշխարհի ծայրում գտնվող անդրծովյան որևէ ուսուցչի մոտ, որպեսզի ստանաք ձեզ անհրաժեշտ գիտելիքները: Ժամանակի պահանջն այնպիսին է, որ ձեզ անհրաժեշտ գիտելիքները դուք ստանում եք հենց այն վայրում, որտեղ ապրում եք: Դուք ուսում եք ստանում ձեր սովորական կյանքում: Եվ մենք օգտագործում ենք ձեր կյանքի հանգամանքները, որպեսզի ձեր հոգուն տանք հենց այն ձեռնադրումները, որոնց կարիքը նա ամենաշատն է զգում:

Նաև դուք գիտելիքներ եք ստանում ձեր գիշերային քնի ընթացքում՝ անգիտակցաբար կամ էլ լրիվ գիտակից վիճակում այցելելով մեր մենաստանները:

Հիրավի, ձեր հոգիները ջանում են օր ու գիշեր՝ առանց պարապ նստելու:

Խոսքս չի վերաբերում այն հոգիներին, որոնք ծուլանում են ուսման մեջ և գիշերվա քնի ժամանակը վատնում են ոչ թե սեփական լուսավորման վրա, այլ վատնում են այն՝ այցելելով աստեղային ոլորտի շերտերը և քնի մեջ շարունակում են ստանալ այն նույն պատրանքային հաճույքներն ու երանությունները, դեպի որոնց ձգտում են՝ լինելով ֆիզիկական աշխարհում:

Ես չեմ ուզում վախեցնել այդ ծույլ անհատներին, բայց այն ամենը, ինչը դուրս կլինի Աստծո Պլանից, չի կարողանա շարունակել իր գոյությունը Նոր Աշխարհում: Ոչ այն պատճառով, որ Աստված դաժան է և ձգտում է պատժել ձեզ: Ո՛չ, ինքնե՛րդ եք ձեզ դատապարտում անէության, քանի որ անկարող կլինեք գոյատևելու ավելի նուրբ աշխարհում, ինչպիսին ժամանակի ընթացքում կդառնա ձեր մոլորակը, ինչպես տիեզերքի մյուս մոլորակները: Կյանքն աստիճանաբար կտեղափոխվի ավելի նուրբ ոլորտ: Իհարկե, դա կխլի միլիոնավոր տարիներ: Եվ նրանք, ովքեր չեն հարմարվի ավելի նուրբ ոլորտի կյանքին, կքշվեն տիեզերական փոփոխությունների քամիով:

Ըստ այդմ՝ այս թելադրությունների միջոցով ձեզ ազդակ է տրվում, որպեսզի ձեր էության կենտրոնը տեղաշարժվի դեպի ավելի նուրբ ոլորտ:

Ձեր գիտակցության մեջ բարձրանալով ավելի նուրբ մակարդակի վրա և բարձրացնելով ձեր թրթիռները՝ դուք կարծես քաշում եք ամբողջ մոլորակը ձեր մակարդակի վրա:

Կուզենայի, որ պատկերացնեք լեռնագնացի, որը մագլցում է դեպի ուղղաձիգ լեռնագագաթը՝ աստվածային գիտակցության գագաթը, և այդ լեռնագնացն իր ճոպանով վեր է քաշում ամբողջ մոլորակը: Եվ որքան շատ լինեն աստվածային գիտակցության գագաթը գրոհող լեռնագնացները, այնքան ավելի արագ ու անցավ կանցնի մոլորակի թրթիռների մակարդակի բարձրացման գործընթացը, զարգացման նոր մակարդակին անցնելու գործընթացը:

Տեղին կլինի ձեզ հիշեցնել ամբարտակի փլուզման երևույթը: Եթե աշխարհի վերափոխմանը հատկացված Աստծո էներգիան դիմադրության է հանդիպում մոլորակը բնակեցնող անհատների մեծ մասի կողմից, որոնց գիտակցությունն այս դեպքում կարելի է նմանեցնել նորացման ու վերափոխման աստվածային ջրերի ճամփան փակող ամբարտակի, ապա վաղ թե ուշ ավելացող ջուրը կճեղքի այդ ամբարտակն ու կավերի այն ամենը, ինչը դիմադրում է իր ընթացքին:

Ըստ այդմ՝ միայն ձեր գիտակցությունն է, որ խոչընդոտում է նորացման աստվածային գործընթացը: Եվ որքան արագ փոխեք ձեր գիտակցությունը, այնքան ապագայում ավելի քիչ արհավիրքներ բաժին կհասնեն ձեր մոլորակին:

Ամեն անգամ, երբ չեք կարողանում գլուխ հանել ձեր գիտակցության որևէ արգելապատնեշից, ամեն անգամ, երբ ծուլանում եք կատարել այն պահանջները, որոնք մենք ներկայացնում ենք մեր աշակերտներին, դուք պետք է հիշեք այն հսկայածավալ ջրի մասին, որն ամեն պահի կարող է հեղեղել Երկիրը և ավերել այն ամենը, ինչը դիմադրում է Աստծո Օրենքին:

Ես ձեզ պատմեցի ներկա ժամի պահանջի մասին: Իսկ վերջում կուզենայի խրատ տալ այն մասին, թե ինչպես առավել արդյունավետ ձևով հաղթահարեք սեփական գիտակցության դիմադրությունը:

Երբ պատրաստվում եք քնելու, հիշեցեք, որ ձեզ անհրաժեշտ է այցելել Լույսի եթերային օկտավաների սրբազան Մենաստանները: Ձեր վերջին միտքը քնելուց առաջ, երբ ձեր գիտակցությունը լքում է ձեզ, մեր Մենաստաններն ալցելելու միտքը պետք է լինի, և պետք է ցանկանաք, որ այդ Մենաստաններում ստացած գիտելիքները հաջորդ օրվա ընթացքում հասնեն ձեր արտաքին գիտակցությանը:

Մի՛ անտեսեք մեր այս օգնությունը և այն հնարավորությունը, որը ձեզ ընձեռում են Համբարձյալ Դասերը:

Այժմ ես հրաժեշտ եմ տալիս ձեզ, բայց հույս ունեմ ձեզնից յուրաքանչյուրի հետ հանդիպել Լուքսորի վերևում գտնվող իմ Մենաստանում:

ԵՍ ԵՄ Սերապիս Բեյը

ՍՊԻՏԱՄԱ ԶՐԱԴԱՇՏ

30 մարտի, 2005 թ.

ՄԱՐՄՆԱԿԱՆ ԽԵԼՔԸ ՊԵՏՔ Է ԻՐ ՏԵՂԸ ԶԻՋԻ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ

ԵՍ ԵՄ Զրադաշտը, եկել եմ այս դեսպանորդի միջոցով:

Հրեղենությունն է իմ հիմնական հատկանիշը: Հուրն է իմ տարերքը...

Բեկումն Ուսմունքի, որը մենք տալիս ենք, տեղի է ունենում մեր աշխարհին բնորոշ հրե թրթռանքի և Երկիր մոլորակի ֆիզիկական ոլորտի թրթռանքի հպման ընթացքում:

Սակայն հուրը, որն առկա է իմ խոսքերում, դուք կարող եք զգալ նույնիսկ աշխարհներով նրա անցնելուց հետո:

Ես ահա եկել եմ...

Հրո աշխարհի վիճակը չափազանց տարբերվում է ձեր աշխարհի վիճակից, և մեր աշխարհի պատկերներն անսովոր ձևով կարող են ընկալվել ձեր գիտակցության կողմից: Մենք խոսում ենք բոցի լեզվով, և մեր թրթիռների ձևափոխությունը երկրային լեզվի չի կարող լրիվ փոխանցել նրանում առկա ամբողջ տեղեկատվությունը: Սակայն հաղորդման հիմնական էությունը բավարար չափով ամբողջական է փոխանցվում:

Այսօրվա իմ գալուստը պայմանավորված է ոչ մեծ Ուսմունք տալու իմ ցանկությամբ: Այդ Ուսմունքը ես տվել եմ իմ աշակերտներին, երբ հազարավոր տարիներ առաջ մարմնավորվել էի Երկրի վրա: Սակայն այդ ուսմունքի կարևորությունը մինչև այժմ չի փոխվել: Դեռ ավելին, կարող եմ ասել ձեզ, որ Երկրի շատ քիչ մարդիկ են կարողացել ամբողջությամբ յուրացնել այդ Ուսմունքը:

Երբ կատարյալ Հոգին իջնում է թանձր ֆիզիկական աշխարհ (իսկ դա տեղի է ունենում այն ժամանակ, երբ նախորդ մանվանտարների ընթացքում նվաճումների որոշակի աստիճանի հասած Բարձրագույն տիեզերական Հոգիները, համաձայն Տիեզերական օրենքի, պետք է նորից մարմին առնեն), ապա թանձր, զարգացած մատերիայի հետ նրա բախման ընթացքում լինում են որոշ բաներ, որոնց մասին ես պետք է ձեզ պատմեմ:

Հնարավոր է՝ ուրիշ ուսմունքներից դուք լսել եք կամ կարդացել եք ինչ-որ գրքերում, որ ի սկզբանե մարդը, երբ արարվել է ըստ Աստծո պատկերի և նմանության, ունեցել է Բարձրագույն անմահ մաս, որը երբեք չի մոռանում Աստծո հետ իր միասնականության մասին, և ստորին մաս, որը մոլորակի վրա ունեցած միլիոնավոր տարիների վերամարմնավորումների ընթացքում կորցրել է Աստծո հետ իր միասնության զգացումը և իր իսկ Բարձրագույն մասի հետ կապը:

Սակայն մարդկության զարգացման պատմության մեջ եղել է մի շրջան, երբ նրա զարգացումը գնահատվել է որպես փակուղային ու ապարդյուն: Մարդկային էակներն իրենց պահում էին կենդանիների պես և միայն արտաքինով էին նման մարդու: Այնպես էր ստացվել, որ ցածրակարգ ձևարարները մարդուն չէին կարողացել օժտել այն հրով, որը բնորոշ է մարդկային էակներին և նրանց դարձնում է Աստծուն նման: Դա բանականության հուրն է՝ Աստծո կայծը, որը պետք է առկա լինի մարդ էակի մեջ:

Միլիոնավոր տարիներ առաջ Երկրի էվոլյուցիան պետք է ընդհատվեր որպես ձախողված: Եվ դրությունը փրկելուն ձեռնամուխ եղան Բարձրագույն Հոգիները, որոնք նախորդ մանվանտարներում արդեն հասել էին երանության և նիրվանայի վիճակին: Այդ Հոգիները պետք է իջնեին բարձր կազմակերպված մատերիայի մեջ և նրան փոխանցեին իրենց բնորոշ հրո, բոցի և իմաստության հատկանիշը:

Եվ նրանք իջան: Իջան մարդկանց մարմինների մեջ, որոնք, ըստ էության, կենդանու պես էին պահում իրենց: Եվ հրո հատկանիշը փոխանցվեց նրանց: Մարդկանց աչքերը լուսավորվեցին բանականության հրով: Եվ մարդիկ հասկացան, որ իրենք տարբերվում են կենդանիներից: Այդպիսով, յուրաքանչյուր մարդ իր ներսում ունեցավ

սերմ, կայծ, հուր, ինչը նա ստացավ այն հոգևոր Էակներից, որոնք հրո բարձրագույն ոլորտներից իջան մատերիայի մեջ:

Յուրաքանչյուր Բարձրագույն Էակ իր հրո մասնիկները ցրեց բազմաթիվ մարդկային էակների միջև: Եվ մարդկանցից յուրաքանչյուրը, իր զարգացման մակարդակին ու աստիճանին համապատասխան, օժտվեց բանականությամբ:

Հենց դա՛ էր Բարձրագույն Հոգիների կամ Հրեշտակների անկումը սաղմնավորման մեջ: Նրանք իջան մասամբ Տիեզերական Օրենքի ազդեցությամբ, մասամբ էլ՝ առաջնորդվելով մարդկությանը կործանումից փրկելու իրենց սեփական մղումով. քանի որ բանականությունից զրկված մարդկությունը չէր կարող համապատասխանել Աստծո այն նպատակին, որի համար նա ստեղծված էր:

Մարդու արատը հաջողվեց վերացնել այն Բարձրագույն Էակների զոհողության շնորհիվ, որոնք զոհաբերեցին իրենց նիրվանայի հանգիստը, որպեսզի իջնեն և օգնեն մարդկանց:

Նրանք իջան և մարդկանց օժտեցին բանականությամբ և իրենց հատկանիշների մի մասով, որն ընդամենը նախորդ մանվանտարներում ձեռք բերած նրանց վաստակի աղոտ արտացոլանքն էր:

Իսկ ի՞նչ կատարվեց մարդկության հետ: Մարդիկ բանական դարձան: Եվ նրանք իրավունք ստացան գործելու իրենց ազատ կամքին համապատասխան՝ այնպես, ինչպես յուրաքանչյուրի բանականությունն էր թելադրում:

Եվ երբ մարդիկ գիտակցեցին Աստծո հետ իրենց նմանությունը, սկսեցին իրենց պահել աստվածների պես: Նրանք վարվում էին այնպես, ինչպես կարծում էին, թե կվարվեին աստվածները:

Նրանք ցանկացան հայտնվել երանության ու հաճույքների մեջ, նրանք ցանկացան ֆիզիկական աշխարհում ճաշակել իրենց համար մատչելի վայելքների բոլոր տեսակները:

Երբ մարդու բանականությունը բախվում է երևակված թանձր աշխարհին, սկսում է կրել երկակի բնույթ: Եվ դա տեղի է ունենում հենց այն պատճառով, որ Աստծո Աշխարհում գոյություն ունեցող աստվածային որակները պատրանքային աշխարհում ձեռք են բերում լրիվ հակադիր հատկանիշներ:

Դրանում է երևակված աշխարհի պարադոքսը: Եվ հենց այդպիսին է Աստծո Մտահղացումը երևակված աշխարհի համար:

Երբ խելքը սկսում է գործել մատերիական աշխարհի պայմաններում, ստիպված է լինում որպես առարկա օգտագործել թանձր մատերիան, որի վրա փորձարկում է իր ունակությունները: Եվ երբ խելքը կիրառում է իր ունակությունները թանձր մատերիայի վրա՝ հիշելով Աստծո Աշխարհի մասին, ապա փորձում է Աստծո Աշխարհի օրենքները ներմուծել թանձր աշխարհ: Իսկ քանի որ մատերիայի թրթռանքը շատ ցածր է, ապա ֆիզիկական աշխարհում կիրառված խելքի յուրաքանչյուր որակ կարող է հանգեցնել այն որակին հակադիր հատկանիշի, որին նույն ջանքերի արդյունքում նա կհասներ նուրբ, հրո աշխարհում:

Ահա այստեղ է գաղտնիքը: Երբ Բարձրագույն Հոգին հրո ոլորտներից իջնում է ցածրադիր աշխարհներ և շարունակում օգտագործել հրո աշխարհին հատուկ խելքի որակներ, ապա մատերիայի վրա ազդեցության արդյունքը միշտ չէ, որ կհամապատասխանի Աստծո Մտահղացմանը՝ հատկապես հենց մատերիայի թանձրության պատճառով:

Միլիոնավոր տարիներ առաջ ձեզնից յուրաքանչյուրը, ով հիմա կարդում է այս տողերը, օժտվել է աստվածային բանականության կայծով՝ շնորհիվ այն Բարձրագույն Հոգիների, որոնք իջել էին ձեզ բանականությամբ օժտելու նպատակով:

Եվ ձեզնից յուրաքանչյուրը հիմա իր ներսում մի մասնիկ ունի այն Վեհապետներից, որոնց տարբեր ուսմունքներում տարբեր կերպ են անվանում՝ Իմաստության Վեհապետներ, Համբարձյալ Վեհապետներ կամ Շամբալայի Վեհապետներ:

Յոթ Բարձրագույն Հոգիներ իջան: Յուրաքանչյուրն իր մասնիկները ցրեց միլիոնավոր մարդկանց հոգիների միջև:

Այդպիսով մարդիկ ապրելու և զարգանալու հնարավորություն ստացան: Եվ մարդկանցից յուրաքանչյուրն իր ներսում ստացավ Բարձրագույն Հոգու մասնիկ, որը դարձավ նրա ներքին ուսուցիչը, նրա Պահապան Հրեշտակը կամ Ես-Քրիստոսը:

Եվ այժմ անհնար է տարբերել, թե որտեղ է վերջանում մարդու կենդանական մասը, և սկսվում նրա հոգևոր նախասկիզբը:

Իսկ մարդը ստիպված է պայքար մղել իր կենդանական բնույթի դեմ և մշտապես ձգտել դեպի Հոգին: Բայց վաղ թե ուշ կգա այն օրը, երբ մարդը կհաղթի իր մեջ եղած կենդանուն, կհաղթահարի իր կրքերը, կհաղթի իր էգոյին և Հոգուն հնարավորություն կընձեռի ամբողջովին իշխելու իր վրա: Եվ մարդն այլևս ստորակարգ չի լինի՝ մնալով կենդանու և մարդու խառնուրդ: Գազանը կհնազանդեցվի, և մարդը կնմանվի Աստծուն:

Բանականության այն կայծը, որը վառվում էր յուրաքանչյուր մարդու տաճարում, մարմրում է այժմ, իսկ շատերի մոտ էլ հանգչում է կամ արդեն հանգել է: Ուստի այդ կայծի բորբոքման համար տրվում է Ուսմունք, տրվում են պատգամներ:

Անասնական մարդը պետք է իր տեղը զիջի Աստվածամարդուն:

Անցողիկ մարդը պետք է իր տեղը զիջի անանցին:

Մարմնական խելքը պետք է իր տեղը զիջի աստվածային բանականությանը:

Եվ դա տեղի կունենա, որովհետև ձեր ներսի կայծն ու բոցը ձեզ հանգիստ չեն տա, քանի դեռ դա տեղի չի ունեցել: Դուք դեսուդեն կընկնեք, կշարունակեք փնտրել: Կջանաք ֆիզիկական աշխարհում հասնել նիրվանայի այն վիճակին, որի մասին

հիշում է Բարձրագույն Էակի՝ ձեր ներսում առկա մասնիկը: Դուք այդ վիճակը կփնտրեք ամբողջ Երկրով մեկ և այն չեք գտնի ֆիզիկական ոլորտում:

Եվ ահա, երբ կհասկանաք, որ ոչինչ ձեր աշխարհում այլևս ձեզ չի գրավում, երբ կհրաժարվեք ձեր աշխարհի հետ ունեցած բոլոր կապերից, միայն այդ ժամանակ դուք ձեռք կբերեք իրական նիրվանայի վիճակ և ձեր Բարձրագույն Մասի հետ միավորմամբ երանություն ստանալու հնարավորություն, իսկ դրանից հետո՝ նաև այս տիեզերքի Արարչի հետ միանալու հնարավորություն:

Իսկ մինչ այդ դուք դեռ կպայքարեք, կտառապեք, դեսուդեն կընկնեք, կփնտրեք:

Եվ ի վերջո կգտնեք ձեր Սկզբնաղբյուրը, ձեր Հաղթանակը և ձեր Երանությունը:

Այնժամ Բարձրագույն Էակների մասնիկները, որոնք ձեր մեջ են, հնարավորություն կստանան խմբավորվելու մի միասնության մեջ և ազատվելու միլիոնավոր տարիներ իրենց կաշկանդող մատերիայի կապանքներից:

Ես ձեզ տվեցի մի Ուսմունք, որը տվել եմ իմ աշակերտներին հազարավոր տարիներ առաջ: Եկան ուրիշ կրոններ, եկան ուրիշ ուսմունքներ: Եվ ահա վրա հասավ ձեր պատմության մասին գիտելիք տալու ժամանակը: Այդ գիտելիքը կօգնի, որ այլ կերպ նայեք ինքներդ ձեզ և այն պայքարին, որն ընթանում է ձեր աշխարհում:

ԵՍ ԵՄ Զրադաշտը՝
Միասնության բոցում՝ կանգնած

ԿՈՆՖՈՒՑԻՈՍ

31 մարտի, 2005 թ.

ՄԵՆՔ ԱՍՏԾՈՒՆ ՊԵՏՔ Է ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՏԱՆՔ ՄԵՐ ՄԻՋՈՑՈՎ ԻՆՔՆԱԴՐՍԵՎՈՐՎԵԼՈՒ



ԵՍ ԵՄ Կոնֆուցիոսը, ձեզ այցի եմ եկել այս դեսպանորդի միջոցով:

Ես եկել եմ Աստծո Իմաստության գիտությունից խրատներ կարդալու:

Երկրի վրա իմ մարմնավորումից հետո անցել են շատ հարյուրամյակներ: Եվ ես ուրախ եմ ընձեռված հնարավորության համար՝ երախտապարտ լսարանի առջև կրկնելու իմ Ուսմունքի խոսքերը:

Միշտ ավելի լավ է լսել խոսքը սկզբնաղբյուրից, քան թե վստահել այդ խոսքի մեկնաբանությանը, որը տալիս են այն մարդիկ, ում կարծիքով իրենք հասել են իմաստության ճանաչման բարձր աստիճանի, բայց գտնվում են Աստծո Իմաստության լեռնագագաթի ստորոտում, և ունայն կյանքն անընդհատ շեղում է նրանց ուշադրությունը՝ թույլ չտալով դեպի գագաթը տանող ուղղությամբ գոնե մեկ քայլ անել:

Ես կարծում եմ, որ ձեզ հետ, ովքեր կարդում են այս տողերը, այդպես չի լինի: Եվ դուք ունակ կլինեք որոշ ժամանակով վերանալ ձեզ շրջապատող պատրանքից և կենտրոնանալ անանց Ճշմարտությունների վրա, որոնք որևէ կապ չունեն այն ժամանակի, երկրի կամ շրջապատի հետ, որոնց դուք պատկանում եք:

Զգտեք կենտրոնանալ ձեր սրտի վրա. սրտի զարկերի վրա: Ունկնդրեք ձեր շնչառությանը: Ներշնչում... Արտաշնչում...

Ձեր սրտի աշխատանքն ու ձեր շնչառությունը որևէ կերպ կապված չեն այն պետության հետ, որում ապրում եք: Ինչպես և կապված չեն այն դերի հետ, որը դուք կյանքում խաղում եք:

Ճիշտ նույն կերպ նաև Աստծո Ճշմարտությունն է. այն ինքնին գոյություն ունի և կախված չէ ձեր գիտակցությունից ու ձեր մտքերից:

Այդ դեպքում ինչո՞ւ դուք գոյություն ունեք, եթե այս աշխարհը կարող է հրաշալի յոլա գնալ առանց ձեզ: Այս հարցը ձեզ չի՞ հետաքրքրել: Երբևէ դուք ձեզ հարցրել եք, թե ինչու եք ապրում:

Կարծում եմ, որ այդ հարցը ձեր կյանքում գոնե մեկ անգամ կանգնել է ձեր առջև: Իսկ որոշների առաջ այն ծառացել է այնքան համառորեն և այնքան հաճախ, որ կյանքի իմաստի որոնումը տառացիորեն նրանց համար վերածվել է հենց կյանքի իմաստի:

Դուք իրավացի եք, սիրելիներս, պատվարժան խնդիր է՝ պարզել, թե ինչու եք ապրում, և ինչու գոյություն ունի այն ամենը, ինչը շրջապատում է ձեզ:

Երբ ես մարմնավորման մեջ էի, այդ հարցը տառացիորեն գերել էր ինձ: Օրեր էին լինում, երբ ես տեղս չէի գտնում՝ նորից ու նորից փորձելով գտնել այդ հարցի պատասխանը:

Ես հավատացյալ մարդ էի և ընդունում էի այն աշխարհայացքը, որն ընդունված էր ինձ շրջապատող հասարակության մեջ այնքան ժամանակ, քանի դեռ չէի հասկացել, որ այդ աշխարհընկալման համակարգը ստեղծված է մարդկանց կողմից, այնպիսի մարդկանց կողմից, ինչպիսին ես ինքս եմ: Հասուն մարդ դառնալուն զուգընթաց ես հասկացա, որ ես կատարյալ չեմ, և, այդ պատճառով, իմ յուրաքանչյուր միտքն արդեն ոչ կատարյալ է դառնում՝ նախքան այն բարձրաձայն արտահայտելը: Ինչո՞ւ ես կատարյալ չեմ: Եվ ինչո՞ւ, որքան էլ ջանում եմ, չեմ կարողանում հաղթահարել իմ ներսի այդ անկատարությունները:

Ձեզ ծանո՞թ են այս հարցերը: Դուք է՞լ եք այդ հարցերը տվել ձեզ:

Որոշ ժամանակ անց այդ հարցի պատասխանը հիմք դարձավ ուսուցման համակարգի համար, ինչը ես տալիս էի այն մարդկանց, որոնք ցանկանում էին ուսում ստանալ ինձից:

Ես պարզորոշ գիտակցում էի, որ իմ ներսում կա ի՛մ իսկ Բարձրագույն՝ ավելի կատարյալ մասը: Եվ ես կարողանում էի հաղորդակցվել իմ այդ մասի հետ: Բայց և գիտակցում էի, որ իմ այդ մասի դրսևորմանը ես ինքս եմ խանգարում. ոչ թե իմ սահմաններից դուրս որևէ մեկը, այլ հենց ինքս:

Ես ենթադրում էի, որ ես և մյուս բոլոր կենդանի էակները ստեղծված ենք Նրա կերպարով, ով ստեղծել է այս աշխարհը, և ով իր դիրքով անհամեմատ բարձր է մեզնից: Եվ մենք բոլորս կապված ենք Նրա հետ և մի անբաժանելի Միասնություն ենք կազմում: Եվ ճիշտ այնպես, ինչպես ես ունեմ իմ ներսում իմ Բարձրագույն մասը, համայն Աշխարհի Ստեղծողն ու Արարիչը նույնպես ունի իր Բարձրագույն մասը, ինչպես և իր ցածրագույն մասը: Իսկ Նրա այդ ցածրագույն մասը ես եմ՝ մարմնավորման մեջ. և՛ ես, և՛ մյուս կենդանի էակները, և՛ ամբողջ Երկիրը, որը երևում է ինձ, որքան աչքս կտրում է:

Մենք բոլորս Նա ենք՝ մարմնավորման մեջ:

Եվ Նա մեր միջոցով ապրում է, ստեղծում, ճանաչում: Մեր միջոցով՝ յուրաքանչյուր կենդանի էակի միջոցով, Նա ճանաչում է Ինքն իրեն:

Մենք բոլորս նրա բջիջներն ու անոթներն ենք: Մենք կազմում ենք նրա մարմինը: Եվ մենք բոլորս կապված ենք թե՛ Նրա հետ, թե՛ մեկս մյուսի հետ: Այն ամենը, ինչը սահմանազատում է մեզ իրարից և Նրա հետ Միասնությունից, ենթակա է հաղթահարման:

Ըստ այդմ՝ ես ուսուցանում էի և շարունակում եմ այժմ ուսուցանել միայն մեկ պարզ բան: Ձեզնից յուրաքանչյուրին ես հրավիրում եմ աշխատելու իր այն մասի վրա, որը խանգարում է միասնական լինել Արարչի հետ: Աշխատել իր այն մասի վրա, որը թույլ չի տալիս ձեզ լրիվ միասնության վիճակում լինել Աստծո, Արարչի, Ատմանի, Բարձրագույն Բանականության հետ: Կարևոր չէ, թե ինչպես կկոչեք այն, որի մի մասն եք դուք իրականում:

Դուք ոչինչ չեք կարող անել այլ մարդու փոխարեն: Դուք մի այլ մարդու չեք կարող ստիպել անելու որևէ բան, որը ձեզ պետք է: Ավելի ճիշտ, դուք դա կարող եք անել, բայց ձեզ հարկ կլինի բռնություն կիրառել: Դուք միայն ուժով կարող եք ստիպել որևէ մեկին աշխատել ձեզ համար կամ կատարել ձեր հրամանները: Կարևոր չէ՝ այդ ուժը ֆիզիկակա՞ն է, թե՞ ձեր կողմից գրված օրենքի տեսք ունի:

Հապա փորձե՛ք ձեր մարմնի մեջ սրտին ստիպել շնչել, իսկ թոքերին՝ արյուն մղել արյունատար անոթներով:

Դա ձեզ չի հաջողվի: Իսկ եթե դիմենք պատմությանը, ապա այն կազմված է հենց այնպիսի դրվագներից, երբ ինչ-որ մեկը փորձում է ստիպել մի ուրիշին անել այն, ինչ իրեն է պետք: Այստեղից էլ հենց ծագել են բոլոր պատերազմներն ու աշխարհի բոլոր անարդար դրսևորումները:

Եվ այդ բոլոր անարդարությունների հիմքում ընկած է ցանկությունը, որ մեկն անի այն, ինչ մյուսին պետք է:

Վերադառնանք սեփական անկատարության թեմային:

Երբ երիտասարդ էի, ես իսկապես մտածում էի, թե կարող եմ իմ համոզմունքի ուժով և անձնական օրինակով աշխարհին ոգեկոչել փոփոխության: Ես շատ ջանք ու եռանդ ծախսեցի՝ փորձելով համոզել մարդկանց, որ ճիշտ գործեն և ճիշտ պահեն իրենց:

Իմ ուժերը չհերիքեցին, որպեսզի համոզեմ մարդկանց, որ վարվեն այնպես, ինչպես, իմ կարծիքով, խելացի կլիներ:

Այնժամ ես փորձեցի գործել այն մարդկանց հետ համատեղ, որոնք կիսում էին իմ համոզմունքները: Սակայն, միևնույնն է, նախկինի պես իմ ուժերը չէին հերիքում:

Հավատացե՛ք ինձ, ես չափազանց շատ ջանք թափեցի, որպեսզի համոզեմ մարդկանց, որ նրանք ճիշտ չեն ապրում, որ նրանք գոնե մի փոքր լսեն ինձ, թե ինչպես արժե ապրել:

Անցնում էր տարին տարու հետևից, տասնամյակը տասնամյակի հետևից, իսկ վիճակն աշխարհում չէր փոխվում՝ չնայած իմ ձգտմանն ու թափած ջանքերին:

Ինչո՞ւ:

Ես միայն մի փոքրիկ ավազահատիկ էի՝ այս տիեզերքի օրգանիզմի մի փոքրիկ բջիջը: Եվ ես փորձում էի համոզել ամբողջ տիեզերքին, որ նա պետք է ապրի իմ օրենքներով:

Եվ շատ տասնամյակներ անց ես վերջապես գիտակցեցի, որ ողջ Երկրի վրա միակ մարդը, որ խանգարում էր ինձ, հենց ինքս էի: Դա իմ անչափ փառասիրությունն էր և իմ անչափ վստահությունը, որ ես ճանաչել եմ ամբողջ Ճշմարտությունն ու կարող եմ այն ուսուցանել ուրիշներին: Իմ արտաքին մարդ-արարածը, փոխանակ ենթարկվելու այս օրենքին, որը գործում է այս տիեզերքում, փորձում էր ստիպել ողջ տիեզերքին ապրել իր օրենքով:

Ես հասկացա գլխավոր Ճշմարտությունը: Եվ պետք է ձեզ ասեմ, որ արժեր ծախսել ամբողջ կյանքը՝ այդ Ճշմարտությունը գիտակցելու համար:

Անիմաստ ու անօգուտ է սեփական օրենքներ մտցնել այն աշխարհում, որում մենք ապրում ենք: Մենք պետք է ենթարկվենք Օրենքին, որն ընկած է այս տիեզերքի հիմքում, և որն արդեն ստեղծվել է այս տիեզերքի արարման պահին:

Եվ Օրենքն այնպիսին է, որ մենք պետք է հրաժարվենք կյանքում մեզ՝ մեր էգոն, դրսևորելու ցանկությունից. մենք պետք է մեզնից կախված ամեն ինչ անենք, որպեսզի հնարավորություն տանք Աստծուն մեր միջոցով ինքն իրեն դրսևորելու:

Այդ դեպքում մենք կկարողանանք վերականգնել մեր Միասնությունը: Եվ մենք կկարողանանք մասնակցել այս տիեզերքի Արարչի մտահղացման իրագործմանը:

Եվ դա այն խնդիրն ու գործն է, որ պետք իրագործի յուրաքանչյուրը: Եվ չկա տիեզերքում որևէ մեկը, որ այդ գործն ի կատար ածի ձեր փոխարեն: Ուրեմն այդ աշխատանքն ամենակարևորն է: Եվ այդ աշխատանքի կատարումն է այն կյանքի իմաստը, որը դուք փնտրում եք ձեր սահմաններից դուրս ու չեք կարողանում գտնել:

Ես տալիս եմ ձեզ իմ երկրային կյանքի ընթացքում ունեցած մտորումների պտուղը: Բայց ես չեմ կարող ստիպել ձեզ ճաշակել այդ պտուղը: Դա դուք ինքներդ պետք է անեք:

Ձեզնից դուրս ոչ ոք չի կարող ձեր փոխարեն կատարել ձեր աշխատանքը:

Ես լքում եմ ձեզ: Հուսով եմ, որ ձեր մտքին ճիշտ ուղղություն տվեցի:

ԵՍ ԵՄ Կոնֆուցիոսը

ՄՈՎՍԵՍ

1 ապրիլի, 2005 թ.

ԵԿԵԼ Է ՆՈՐ ԵԼՔԻ ԺԱՄԱՆԱԿԸ, ՈՐԸ ԴՈՒՔ ՊԵՏՔ Է ԻՐԱԳՈՐԾԵՔ ՁԵՐ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԵՍ ԵՄ Մովսեսը, որ եկել եմ այս դեսպանորդի միջոցով:

ԵՍ ԵՄ եկողը...

Այն դեպքերից հետո, որոնք Աստվածաշնչում նկարագրված են որպես Եգիպտոսից հրեաների Ելք, անցել են հարյուրավոր հազարամյակներ: Եվ իրականում ես մարմնավորվեցի Երկրի վրա, որպեսզի իրականացնեմ իմ առաքելությունը, այն էր՝ Հինգերորդ Արմատական արիական Ռասային Ատլանտիդա մայրցամաքից տեղահանել դեպի Եվրասիա մայրցամաք, որն այն ժամանակ նոր էր ձևավորվել: Շատ ավելի ուշ այդ իրադարձությունները ձևափոխվեցին ու վերափոխվեցին տարբեր ժողովուրդների առասպելներում ու ասքերում և ժամանակակից ընթերցողին հասան այն տեսքով, ինչպես շարադրված է Աստվածաշնչում:

Բայց այդ իրադարձություններն անհամեմատ ավելի հին են:

Մենք գտնվում էինք թշնամական մայրցամաքում: Անընդհատ պատերազմ էր ընթանում նրանց միջև, ովքեր իրենց սրտերում հավատարիմ էին Աստծուն և նրանց միջև, ովքեր, հիշելով հանդերձ իրենց Նախասկզբի մասին, տրվել էին պատրանքային աշխարհի գայթակղություններին և օգտագործում էին իրենց ունակություններն՝ այս աշխարհում օգուտ ստանալու համար:

Ամեն ինչ ճիշտ այնպես էր, ինչպես ձեր օրերում է: Կային մարդիկ, որոնք իրենց մեջ պահպանել էին Աստծո կայծը, և կային այնպիսիները, որոնք որոշել էին Աստծո էներգիան օգտագործել իրենց սեփական իշխանությունն ու հզորությունն ամրապնդելու համար:

Ամեն ինչ ճիշտ այնպես էր, ինչպես հիմա է: Շատ քիչ էին նոր ռասային պատկանող մարդիկ, ովքեր, հասակ առնելով ատլանտների հին ռասայի խորքում, պատրաստ էին բարձրանալ էվոլյուցիոն զարգացման հաջորդ աստիճանի վրա:

Ես մարմնավորվեցի Երկրի վրա, և իմ առջև խնդիր էր դրված առանձնացնել ընտրյալ ժողովրդին՝ ապագա ռասայի սաղմը, մեղքերի մեջ խրված ատլանտների ռասայից և տանել այդ ժողովրդին Ավետյաց Երկիր, որպեսզի հետագայում այն մայրցամաքը, որտեղ մեղքն էր թագավորում, կործանվի ջրերով, սրբվի Երկրի երեսից այն բնակեցնող ատլանտների հետ մեկտեղ, որոնք անհնազանդ էին և չէին ցանկանում ենթարկվել Աստծո Կամքին:

Ես հավաքեցի մարդկանց, որոնք հավատացին ինձ, և տարա նրանց դեպի Արևելք՝ դեպի նոր Երկիր:

Այդ մարդիկ պետք է իսպառ մոռանային Երկրի վրա մեղքի գոյության մասին: Ես նրանց տվեցի նոր Օրենք, որը գրված էր քարասալիկների վրա. Օրենք, որը հասկանալի էր և հաստատում էր այն հիմնական սկզբունքները, որոնք անհրաժեշտ են մարդկության նոր ռասայի զարգացման համար:

Որքա՜ն մեծ էին իմ տարակուսանքն ու զայրույթը, երբ մի անգամ ես վերադարձա Աստծո հետ հաղորդակցվելուց և տեսա իմ ժողովրդին Ոսկե հորթի շուրջ պարելիս՝ իրենց կողմից կաղապարված արտաքին Աստծուն երկրպագելիս, փոխանակ երկրպագեին այն Աստծուն, որն իրենց ներսում է:

Ես այնքան խիստ զայրացա, որ ջարդեցի այն քարասալիկները, որոնց վրա գրված էր Օրենքը: Եվ ես պատվիրեցի մեղավորներին այնքան խստորեն պատժել, որ դրանից հետո մարդիկ դարերով հիշեն այդ մասին և զգուշանան արտաքին Աստվածներին երկրպագելու ուղով ընթանալուց:

Դա արտակարգ խիստ պատիժ էր*, բայց ես հուսաբեկված էի: Ես չգիտեի, թե ուրիշ ի՞նչ կերպ է հնարավոր ազդել այդ կիսավայրենի մարդկանց գիտակցության վրա:

Եվ դա մեծ մեղք էր իմ կողմից: Ես ուժ կիրառեցի և ուժով փորձեցի ստիպել այդ մարդկանց՝ հավատալ ճշմարիտ Աստծուն:

Սակայն Կարմայի Օրենքն իմ կողմից խախտված չէր: Ուրիշ ժամանակներ էին, և այդ մարդկանց գիտակցությունն իմ գիտակցության մակարդակին բարձրացնելու իմ ցանկությունն անկեղծ էր: Քչերը գիտեն, որ այդ կյանքում ես պատիժ կրեցի իմ արարքի համար: Ես սպանվեցի իմ ժողովրդի կողմից: Կարմայի օրենքը բավարարված էր:

Իսկ մարդիկ խրատվեցին ամենալավ ձևով, որը համապատասխանում էր այն ժամանակվա նրանց գիտակցության մակարդակին:

Հարյուրավոր հազարամյակներ անցնելուց հետո էլ շարունակվում է ֆիզիկական ոլորտի այդ կոիվը Երկիր մոլորակի վրա: Մարդիկ սպանում են մեկը մյուսին՝ որպես այլադավանի: Շատերը շարունակում են ատելություն ու թշնամանք զգալ յուրաքանչյուրի նկատմամբ, ով ունի այլ կրոնական և բարոյական համոզմունքներ, ով նույնիկ ունի ուրիշ գույն և ուրիշ սովորություններ:

Մարդկության ամբողջ պատմությունն իրենից ներկայացնում է անվերջ պատերազմներ ու պայքար իշխանության, այս աշխարհի հարստությանը տիրելու և այն վերահսկելու համար:

Անվերջ հերթագայում են սպանությունները, բռնությունները, պատերազմները, աղետները, տառապանքները:

Ես չափից դուրս դաժան չեղա իմ ժողովրդին դաս տալու իմ ցանկության մեջ: Ես վարվեցի գիտակցության այն շրջանակներին համապատասխան, որոնք ուներ իմ ժողովուրդը: Հենց դրա համար եմ ես ասում, որ կարմայի օրենքն իմ կողմից չէր խախտվել:

Եվ եթե փորձեի այն ժամանակ իմ ժողովրդին ուսուցանել այնպես, ինչպես շատ հազարամյակներ հետո իրենց աշակերտներին ուսուցանում էին Բուդդան, Քրիստոսը, Զրադաշտը, ապա հազիվ թե գտնեի մի քանի մարդու, որոնք կգային իմ հետևից: Դաժան ժամանակներ էին, և իմ կողմից կիրառված բռնությունն արդարացված էր:

Եվ ահա սկսվել է այլ բոլորապտույտ: Մարդկության գիտակցությունը նորից պետք է բարձրացվի էվոլյուցիոն զարգացման իր հաջորդ մակարդակին: Եվ ճիշտ այնպես, ինչպես Չորրորդից Հինգերորդ Ռասային անցնելու ժամանակներում էր, այժմ նույնպես ընթանում են անընդհատ պատերազմներ և առկա է թշնամանքը:

Բայց այս պատերազմներն ավելի ավերիչ բնույթ են ստացել: Վերջին համաշխարհային պատերազմին զոհ գնացին միլիոնավոր մարդիկ, իսկ հաղորդակցության ժամանակակից միջոց-

---

* Նկատի ունի Աստվածաշնչյան հետևյալ դրվագը «Ելից», գլուխ 32.

15 Եւ Մովսէսը դարձաւ եւ սարիցն իջաւ, եւ վկայության երկու տախտակները ձեռքին էին. տախտակներն երկու կողմերիցը գրուած էին. այս կողմից եւ այն կողմից գրուած էին նորանք:

16 Եւ տախտակներն Աստուծոյ գործք էին, եւ գրուածքն Աստուծոյ գրուածք էր տախտակների վերայ փորագրուած:

19 Եւ եղաւ երբոր բանակին մոտեցաւ եւ տեսաւ որթը եւ պարելը, Մովսէսի բարկութիւնը բորբոքուեց, եւ տախտակներն իր ձեռքիցը շպրտեց. եւ կոտրատեց նորանց սարի տակին:

20 Եւ առաւ նորանց շինած որթը եւ կրակով այրեց, եւ մանրեց մինչեւ որ փոշի արաւ, եւ ջրի վերայ ցանեց, եւ խմեցրեց Իսրայէլի որդիներին:

26 Եւ Մովսէսը բանակի դրանը կանգնեց, եւ ասեց. Ով որ Տէր Աստծունն է՝ ինձ մոտ [գայ]. եւ Ղեւիի բոլոր որդիքը նորա մօտ ժողովուեցան:

27 Եւ ասեց նորանց. Այսպէս է ասում Իսրայէլի Տէր Աստուածը. Ամեն մարդ իր սուրը թող մէջքը կապէ, եւ բանակի մէջ դռնէ դուռ անցէք դարձէք, եւ ամեն մարդ իր եղբօրը, եւ ամեն մարդ իր ընկերին, ամեն մարդ իր դրացուն մեռցնէ:

28 Եւ Ղեւիի որդիքը Մովսէսի խօսքին պէս արին, եւ այն օրը ժողովրդիցն երեք հազար մարդի չափ ընկան:

ների շնորհիվ՝ յուրաքանչյուր ստեղծված հակամարտության մեջ ակնթարթորեն ներգրավված են դառնում բոլոր երկրները: Աշխարհը նմանվել է վառոդի տակառի, երբ բավական է մի կայծ, որպեսզի ամբողջ մոլորակը վերածվի կտորների:

Այդ պայմաններում առաջին պլան է ելնում ցանկացած տիպի բռնությունից հրաժարումը: Եվ առաջին հերթին դուք պետք է բռնությունից հրաժարվեք ձեր գիտակցության մեջ:

Ինչպես խավարն է անթափանց լինում լուսաբացից առաջ, այնպես էլ այս վերջին գլոբալ պատերազմներն իրենց բազմամիլիոն զոհերով պետք է անվերադարձ սուզվեն անցյալի գիրկը: Երկիրն այլևս չի կարող դիմանալ գլոբալ պատերազմի: Ըստ այդմ՝ ես եկել եմ ձեզ տալու այս Ուսմունքը բռնության և բռնություն չկիրառելու մասին:

Գոյություն է ունեցել մարդկության զարգացման մի որոշակի շրջան, և այն տևել է հարյուրավոր հազարամյակներ, որի ընթացքում բռնության կիրառումը թույլատրելի էր: Եվ նույնիսկ պատերազմների ու հակամարտությունների ընթացքում կատարվող սպանության կարմայական պատասխանատվությունն այնքան ծանր չէր լինում, որքան ձեր ժամանակներում է:

Եվ այժմ ես ձեզ պետք է ասեմ, որ տիեզերական զարգացման նոր փուլին համապատասխան՝ ձեր մոլորակի համար սկսվում է մի ժամանակաշրջան, երբ դուք կարմայական պարտք եք ձեռք բերում ոչ միայն ֆիզիկական սպանություն կատարելիս, այլ նաև այն դեպքում, երբ փորձում եք ձեր գիտակցության մեջ մտովի ոչնչացնել ձեր թշնամիներին:

Եկել է նոր Ելքի ժամանակը: Դա Ելքն է մարդկության նոր Ռասայի, որն արդեն եկել է և շարունակում է մարմնավորվել՝ մարդկության հին, Հինգերորդ Արմատական Ռասային փոխարինելու նպատակով: Եվ եկել է ժամանակն իրագործելու Ելքը ձեր գիտակցության մեջ, այն է՝ գիտակցության մեջ կտրվել ամեն հնից, իր դարն ապրածից:

Նոր ռասայի մարդկանց նախ և առաջ բնորոշ կլինի ցանկացած տիպի բռնությունից հրաժարումը: Բայց դա չի նշանակում, որ մոտակա ժամանակներում բռնությունը Երկրի երեսից կվերանա: Ո՛չ, ճիշտ այնպես, ինչպես շատ տարիներ պահանջվեցին, որպեսզի աճեն երկրի մարդկանց մի քանի սերունդներ, մինչև որ մոռացվի նրանց կողմից այն ժամանակվա Ելքի օրոք թույլ տրված Անտլանտիդայի մեղսագործությունը, այնպես էլ այժմ կպահանջվի շատ սերունդների հերթագայություն, մինչև որ մարդկությունն ունակ կլինի հրաժարվել բռնության դիմելու և պայքար մղելու ցանկությունից՝ ամենից առաջ հենց իր գիտակցության մեջ:

Եվ կլինեն մարդկանցով բնակեցված ամբողջ տարածքներ, որտեղ տիրապետող կլինի նոր գիտակցությունը, բայց կլինեն և տարածքներ, որտեղ կտիրապետեն հին գիտակցությունն ու մտածողությունը:

Եվ աստիճանաբար այն տարածքները, որտեղ տիրապետող կլինի հին մտածողությունը, մեկը մյուսի հետևից կանցնեն ջրի տակ: Եվ կհայտնվեն նոր երկրներ, որոնք կբնակեցվեն նոր ռասայի մարդկանցով: Այդ մարդկանց տարբերությունն այն ռասայից, որն այժմ ապրում է, առայժմ կլինի միայն նոր ռասայի մարդկանց գիտակցության բոլորովին նոր մակարդակը և կռվի ու բռնության ցանկացած զգացմունքի անընդունելիությունը նրանց համար:

Եկել է ժամանակը նոր Ելքի, որը դուք պետք է իրականացնեք ձեր գիտակցության մեջ:

Եվ այդ նոր գիտակցությունը ձեզ հնարավորություն կտա ձերբազատվելու հին աշխարհի հետ ունեցած ձեր կապվածությունների մեծամասնությունից և մոտակա ժամանակներում ազատվելու մարմնական կապանքներից: Եվ կարիք չի լինի պատժել այն մարդկանց, որոնք համառում են իրենց չկամությամբ՝ հետևելու նոր ժամանակի հովերին: Այդ մարդիկ հենց իրենք են ստեղծում իրենց պատիժը, իսկ Մայր Երկիրը հոգ կտանի այդ մարդկանցից ինքն իրեն ազատելու համար:

ԵՍ ԵՄ Մովսեսը, նորից եկա,
որ ձեզ ցույց տամ ձեր Ելքի Ուղին

ՏԵՐ ՇԻՎԱ

2 ապրիլի, 2005 թ.

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՊԱԳԱՆ ԿԱՊՎԱԾ Է ՃՇՄԱՐԻՏ ՀԱՎԱՏԻ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԵՏ

ԵՍ ԵՄ Շիվան... Ես եկա...

Ես եկա ձեզ մոտ այս դեսպանորդի միջոցով: Ես եկա...

Շիվա է իմ անունը: Շիվա...

ԵՍ ԵՄ Շիվան...

Հեռավոր Հնդկաստանում, հեռավոր, այսպես կոչված, արևմտյան քաղաքակիրթ աշխարհի նկատմամբ, ինձ երկրպագում են որպես Բարձրագույն Աստվածության: Ինձ պաշտում են միլիոնները: Միլիոնավոր մարդիկ ինձ են ուղղում իրենց աղոթքները և զոհաբերություններ են անում: Ես Բարձրագույն Աստվածություն եմ և խիստ պահվածք ունեմ: Սակայն նրանց համար, ովքեր հավատարիմ են ինձ, ես ամենալավ ընկերն եմ, ում հետ իրենք կարող են զրույցի բռնվել և երանություն ապրել իմ ներկայությունից ու ինձ հետ հաղորդակցվելուց:

Սակայն ես խիստ եմ նրանց նկատմամբ, ովքեր չեն պաշտում Աստծուն, ովքեր մոռացել են իրենց աստվածային բնույթի մասին և չեն խոնարհվում Աստծո առաջ, Աստծո, ով իրենց մեջ է և իրենցից դուրս:

Ամենայն ինչ Աստված է: Այն, ինչ ձեզ շրջապատում է, այն, ինչ տեսնում եք, որքան աչքերդ կտրում է, Աստված է: Դուք էլ եք Աստված: Այո՛, դուք Աստված եք մարմնավորման մեջ, բայց միայն այն դեպքում, եթե պահպանում եք որոշակի պայմաններ, որոնք անհրաժեշտ են, որպեսզի ձեր աստվածային բնույթը դրսևորվի:

Ես ձեզ կուսուցանեմ, թե ինչ է անհրաժեշտ անել, որպեսզի վերածվեք Աստծո:

Նախ և առաջ դուք պետք է սիրեք ու պաշտեք Աստծուն այն ամենի մեջ, ինչը ձեզ շրջապատում է: Չկա ոչինչ, որ բաժանի ձեզ կյանքի յուրաքանչյուր մասնիկից՝ սկսած ամենափոքրիկ մրջյունից և վերջացրած ամենազարգացած Գուրուով:

Դուք այդ ամենն եք և միաժամանակ հանդիսանում եք Աստծո անհատականացումը ֆիզիկական սահմանափակ կաղապարի մեջ: Եվ հենց այդ կաղապարն է, որ ձեզ առանձնացնում է ամբողջական աստվածայնությունից: Այդ կաղապարը ձեզ տրված է ժամանակավորապես, որպեսզի միլիոնավոր տարիների ընթացքում դուք երկրային կյանքի փորձառություն անցնեք՝ մտնելով հազարավոր և տասնյակ հազարավոր երկրային մարմնավորումների մեջ:

Դուք օգտագործում եք այդ կաղապարն այն նպատակների համար, որոնք ձեր առջև դրված են Աստծո կամքով: Աստված կամենում է դրսևորել իրեն ձեր ֆիզիկական կաղապարի միջոցով: Եվ ձեր խնդիրն է հնարավորություն տալ Աստծուն դրսևորելու իրեն ձեր միջոցով:

Դուք պետք է ձեր կյանքը ենթարկեցնեք այն Աստծուն, որը հենց ինքներդ եք: Եվ դա՛ է յուրաքանչյուր մարդու խնդիրը: Դուք պետք է խնամք տածեք ձեր կաղապարի նկատմամբ, պահեք նրան պատշաճ վիճակում, սնեք նրան անհրաժեշտ ամեն ինչով:

Սակայն երբեք դուք չպետք է մոռանաք, որ Աստված եք և, հետևաբար, չեք կարող անել այն, ինչ անարժան է Աստծուն:

Հայացք նետեք ձեր կյանքին, ձեր կյանքի հանգամանքներին: Արդյո՞ք ամեն ինչ է համապատասխանում աստվածային չափանիշներին:

Դուք պետք է ուշադրություն դարձնեք ձեր կյանքի բոլոր կողմերին. ինչո՞վ եք սնվում, ի՞նչ եք հագնում, ո՞ւմ հետ եք շփվում, ինչպե՞ս եք վարվում ձեր հարազատների ու ծանոթների հետ:

Նրանք նույնպես կաղապարված Աստվածներ են: Եվ նրանց նկատմամբ ձեր վերաբերմունքը պետք է նմանվի Աստծո նկատմամբ վերաբերմունքին: Կարող եք գնալ տաճար կամ եկեղեցի: Դուք այնտեղ կտեսնեք աստվածությունների պատկերներ: Դուք երկրպագում եք այդ աստվածություններին: Սակայն մեծ տարբերություն չկա ձեր, ձեզ շրջապատող մարդկանց և տաճարի աստվածությունների միջև: Մենք բոլորս մեզնից ներկայացնում ենք աստվածության դրսևորումներ:

Իհարկե, մենք կանգնած ենք աստվածայնության դրսևորման տարբեր աստիճանների վրա, բայց դա առանձնապես մեծ նշանակություն չունի:

Համաձայնեք, որ եթե դուք ինքներդ ձեզ վերաբերվեք որպես աստծու և նաև ձեր շրջապատի մարդկանց վերաբերվեք որպես աստվածների, ապա ձեր կյանքը կփոխվի: Եվ կփոխվի այնքան արագ, որքան տևական ու լրիվ կկարողանաք ձեր գիտակցության մեջ պահել աստվածության կերպարը: Ահա թե ինչու է ձեզ անհրաժեշտ աստվածության նկար ունենալ տանը, աշխատավայրում:

Շատ կարևոր է մշտապես աչքի առաջ ունենալ նմանակման նմուշօրինակ: Ձեր աշխարհը կաղապարների աշխարհ է, այդ պատճառով ձեզ համար հատկապես շատ կարևոր է անընդհատ տեսապատկերել ձեր առջև այն աստվածությանը, որը հենց ինքներդ եք:

Համաձայն եք ինձ հետ: Դուք դառնում եք այն, ինչին ձգտում եք և ինչ կերպարներ որ մշտապես պահում եք ձեր գիտակցության մեջ:

Նայեք, թե ինչով եք շրջապատված տանը, փողոցում, ուշադրություն դարձրեք այն պատկերներին, որոնք մատուցվում են որպես գովազդներ. դրանցով ողողված են ձեր հեռուստահաղորդումները: Ինչ եք կարծում, այն, ինչ ձեզ շրջապատում է, նման է արդյոք Աստծո Իրականությանը:

Ես ձեզ առաջարկում եմ Աստված դառնալու ամենահեշտ ուղին: Դուք պետք է մեկուսանաք անկատար կերպարներից և փոխարենը շրջապատվեք կատարյալ աստվածային կերպարներով: Ընդ որում ոչ մի նշանակություն չունի, թե որ կրոնին կամ հավատին են դրանք պատկանում:

Դրանք պետք է լինեն կերպարներ, որոնք վեր են հանում ձեր գիտակցությունը, հնարավորություն են տալիս լինել, որքան հնարավոր է, ավելի կատարյալ գիտակցության վիճակում, որն առավելագույնս մոտ կլինի կատարելության աստվածային թրթռանքին:

ԵՍ ԵՄ Շիվան: Ես հազվադեպ եմ գալիս այնպիսի մարդկանց միջոցով, որոնց կրոնական համոզմունքները հինդուիստական չեն: Արևմուտքի մարդիկ Աստվածություն պաշտել չգիտեն և չեն կարողանում ճիշտ վերաբերվել Աստվածությանը:

Ուստի ես խորհուրդ եմ տալիս ուսումնասիրել Հնդկաստանի ավանդույթները՝ մի երկրի, որում պահպանված են Աստվածության պաշտամունքի ավանդույթները, և որտեղ գնահատում են այն մարդկանց, ովքեր իրենց կյանքը նվիրաբերում են Աստվածությանը ծառայելուն: Աշխարհի ոչ մի ուրիշ երկրում ստեղծված չեն Աստծուն ծառայելու այնպիսի պայմաններ, ինչպիսիք կան Մայր Հնդկաստանում:

Ես սիրում եմ այդ երկրի ժողովրդին: Եվ ես ձգտում եմ ներկա լինել հնդիկ մարդկանց մեջ:

Ռուսաստանի նման երկրի համար, երջանկություն կլինի, եթե ճիշտ վերաբերմունք մշակվի Աստծո, բարոյական դաստիարակության նկատմամբ: Ռուսաստանը ևս Աստծո սիրելի երկիրն է: Եվ Ռուսաստանի ապագան կապված է ճշմարիտ հավատի ավանդույթների վերականգնման հետ: Հավատ, որը հիմնված է ոչ թե արտաքին աստվածության պաշտամունքի, այլ ներքին Աստծո պաշտամունքի վրա, որը ներկա է յուրաքանչյուր մարդու ներսում: Առաջնահերթ խնդիր է աճող սերնդի դաստիարակությունը՝ յուրաքանչյուր մարդու ներսում գտնվող Աստծուն երկրպագելու ավանդույթ ստեղծելով և ավագ սերնդի նկատմամբ հարգանք սերմանելով:

Աստվածության ցանկացած արտաքին կերպար անհրաժեշտ է միայն որպես հիշեցում ինքներդ ձեզ ձեր աստվածային բնույթի, ինչպես նաև ձեր շրջապատի բոլոր մարդկանց աստվածային բնույթի մասին: Աստվածության երկրպագությունը ոչ մի ընդհանուր բան չունի կրոնի հետ: Կրոնն արտաքին ուղի է, որն անհրաժեշտ է որոշակի փուլում. բայց չի կարելի չափազանց շատ ուշադրություն հատկացնել այդ ուղուն:

Հնդկաստանում շատ տաճարներ կան, որտեղ ծառայում են աստվածություններին: Բայց Հնդկաստանում նաև կան շատ իմաստուններ, յոգեր, որոնք ուսուցանում են Աստծուն երկրպագել սրտի ներսում. ուսուցանում են, թե ինչպես անմիջական կապ ստեղծել ներսի Աստծո և այն աստվածությունների հետ, որոնք միշտ պատրաստ են մարդու հետ հաղորդակցության:

Ես խոստանում եմ, որ կգամ ձեզնից յուրաքանչյուրի մոտ, ով իր սրտում կանչ կհղի ինձ: Ես կգամ ձեզ մոտ և կօգնեմ՝ լուծելու այն խնդիրը, որն այս պահին ամենասուրն է ձեզ համար և խանգարում է ձեր հոգևոր առաջընթացին:

ԵՍ ԵՄ Շիվան, այսօր ուրախ եղա հաղորդակցվելու ձեզ հետ

ՀԱՈՒԹԱՄԱ ԲՈՒԴԱ

3 ապրիլի, 2005 թ.

ՈՒՍՄՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍԻՆ

ԵՍ ԵՄ Հաութաման, կրկին ձեզ այցի եմ եկել իմ դեսպանորդի միջոցով:

Այսօր ես ուզում եմ կանգ առնել տարբեր համայնքների և կրոնական ուղղությունների պատկանող մարդկանց փոխհարաբերությունների թեմայի վրա:

Շատ հեշտ է հաստատել ձեր անձնական հարաբերությունները ձեր ներսում գտնվող Աստծո հետ: Եվ շատ բարդ է հարաբերություններ հաստատել ուրիշ մարդկանց հետ, որոնք կարծես թե ձեզ հետ գտնվում են նույն Ուղու վրա և պետք է որ ձեր ընկերները լինեին: Բայց հենց այդ մարդկանցից, որոնք ձեզ հետ նույն Ուղու վրա են, դուք ամենաշատն եք դիմադրության հանդիպում, բախվում նրանց բացասական հույզերին՝ ատելության, նախանձի, մեղադրանքի տեսքով:

Ինչո՞ւ:

Ձեզնից շատերն են այս հարցը տվել: Եվ ձեզնից շատերը փորձել են գտնել այդ հարցի պատասխանը, բայց ապարդյուն:

Ձեր Ուղու ուղեկիցներն իրականում ձեր կարմայական գործընկերներն են: Դուք ձգվել եք իրար կողմ, որպեսզի միասին լուծեք ձեր կարմայական հակասությունները: Չկա ոչ մի պարտք, որ ներվի ձեզ: Ուստի երբ դուք հասնում եք ձեր հոգևոր նվաճումների որոշակի մակարդակին, ապա չեք կարող դրանից ավելի առաջ գնալ, քանի դեռ չեք հանդիպել բոլոր այն մարմնավորված անհատներին, որոնք ձեզ հետ ունեն չլուծված կարմայական խնդիրներ:

Այսպիսով, դուք մի կողմից հայտնվում եք այնպիսի մարդկանց հասարակությունում, որոնք Աստծո Ճշմարտության ճանաչման ասպարեզում լուսավորվելու ցանկությամբ մերձեցել են Ուսմունքին, մյուս կողմից՝ նույն այդ մարդիկ ձեր վաղեմի կարմայական պարտապաններն են, կամ էլ ինքներդ պետք է նրանց վերադարձնեք ձեր կարմայական պարտքը: Այդ պատճառով է, որ հոգևոր հոսանքների մեջ առկա հակասություններն այդքան հաճախ են ցայտունորեն դրսևորվում՝ հասնելով լրիվ թշնամանքի՝ այն աստիճան, որ թվում է՝ այդ մարդիկ ոչ մի ընդհանուր բան չունեն Աստծո հետ և ծառայում են հենց սատանային:

Յուրաքանչյուրիդ մեջ կա Աստված, և յուրաքանչյուրիդ մեջ կա սատանա: Մարմնավորված մարդկանց մեջ չկան կատարյալներ: Որպեսզի կատարյալը մարմին առնի ձեր աշխարհում, պետք է կամավորապես իրեն ծանրաբեռնի այս մոլորակին հատուկ այնպիսի կարմայական խնդիրներով, որ հանդիպելով մարմնավորված այդ աստվածային կատարելությանը՝ դուք կկարծեք, թե հանդիպել եք հենց սատանային:

Ճշմարտությունն այստեղ այն է, որ առավել կատարյալ հոգիները մարմնավորվելիս ձգտում են, որքան հնարավոր է, ավելի մեծ կարմայական ուղեբեռ վերցնել, որը պատկանում է ուրիշ մարդկանց, որպեսզի թեթևացնեն վերջիններիս ծանրաբեռնվածությունը:

Ըստ այդմ՝ ես այսօր տալիս եմ այս Ուսմունքը և համայնքի ներսում մարդկանց փոխհարաբերությունների այս ըմբռնումը, որպեսզի պարզաբանեմ, թե ինչու շատ մարդիկ, իրենց համայնքում բախվելով շատ խնդիրների, նախընտրում են հեռանալ և փնտրել ուրիշ համայնք, որտեղ ավելի քիչ կլինեն նման խնդիրներ, և որոնք ավելի հավասարակշռված ու համակշռված կլինեն իրենց դրսևորումներում:

Ընդ որում մարդիկ մոռանում են, որ թրթռումների իրենց որակին համապատասխան՝ ձգվում են դեպի մարդկանց հենց այն խմբի կողմը, որը կարող է իրենց տալ կարմայական պարտքերի մարման ամենաարագ եղանակը:

Ոչ բոլոր անկատարությունները դուք կարող եք հաղթահարել՝ օգտագործելով աղոթքներ և այլ հոգևոր գործառություններ: Դրանց մի մասը կարող եք հաղթահարել միայն այն դեպքում, եթե կյանքում դուք հանդիպեք այն մարդուն, որի հետ կարմա ունեք և բեռնաթափեք այդ կարման անմիջական շփման և հակադրության լուծման միջոցով, առաջին հերթին՝ սեփական գիտակցության մեջ:

Ուստի երբեք չարժե զայրույթ ու տարակուսանք ապրել, երբ ձեր եղբայրներից որևէ մեկը, ինչպես ձեզ է թվում, Ուղու վրա ձեզ հետ անարդարացի է վարվում: Դրանով դուք հնարավորություն եք ստանում բոլոր հնարավոր եղանակներից ամենամեղմով այդ մարդուն վերադարձնելու ձեր կարմայական պարտքը: Գուցե այդ մարդուն սպանե՞լ եք ձեր նախորդ կամ անցած կյանքերից որևէ մեկում... Իսկ այս կյանքում նա ձեզ ընդամենը խոսքով է վիրավորում, ձեզ քշում է համայնքից կամ խարդավանքների ու զրպարտությունների միջոցով ձեզ համար ստեղծում է համայնքում մնալու անտանելի պայմաններ:

Թերևս ձեզնից շատերին թվում է, թե անհամեմատ ավելի լավ կլիներ սպանվել, քան դիմանալ նման անտանելի հոգեկան ցավին:

Սակայն թույլ տվեք, որ Աստված որոշի, թե ինչպե՞ս մարեք ձեր կարմայական պարտքը: Թույլ տվեք, որ Աստված հոգա ձեր հոգու մասին: Հավատացե՛ք, կյանքում դուք հայտնվում եք հենց

այնպիսի իրադրություններում, որոնք լավագույնս նպաստում են Ուղով ձեր առաջընթացին:

Եվ որքան էլ դեգերեք կրոնական տարբեր խմբերի ու համայնքների միջև՝ փնտրելով համայնքի և շրջապատի մարդկանց առումով ձեզ համար առավել հարմարավետ տարբերակ, ոչ մի տեղ ձեր փնտրածը չեք գտնի, որովհետև ձեր ներսում, ձեր աուրայում պարփակված էներգիաները ձեզ թույլ չեն տա Երկրի վրա գտնել մի այնպիսի վայր, որտեղ կարողանայիք թաքնվել ձեր կարմայական պարտքերից: Իսկ ձեր սահմաններից դուրս գտնվող որևէ մեկին ձեր ունեցած խնդիրների համար է մեղադրել ձեզ ստիպում ձեր իսկ անիրական մասը՝ ձեր էգոն: Եվ քանի դեռ դուք չեք կոտրել ձեր ներսի թշնամու դիմադրությունը, դուք կբախվեք այնպիսի իրադրությունների, որոնք ձեր ներսում կառաջացնեն ծանր հոգեկան ապրումներ ու վնասվածքներ:

Դուք չեք կարող փոխել ուրիշ մարդկանց և կյանքի ընթացքը Երկրի վրա. մեն մի կյանքի ընթացքում դուք չեք կարող հասնել շոշափելի փոփոխությունների, բայց կարող եք փոխել ձեր վերաբերմունքը ձեր իսկ կյանքի հանգամանքների նկատմամբ: Նաև կարող եք փոխել ձեր վերաբերմունքն այն մարդկանց նկատմամբ, ովքեր վիրավորում են ձեզ կամ ձեր նկատմամբ դրսևորում անբարեհաճ վերաբերմունք:

Եթե դուք ոսկի եք, ապա ինչքան էլ կյանքում ցեխի մեջ ընկնեք, ինչքան էլ ձեզ անվանարկեն վիրավորողները, միևնույնն է, ոսկի կմնաք: Բայց ցեխի այն շերտի պատճառով, որի տակ թաղված է ձեր կատարելությունը՝ ձեր ոսկին, մյուս մարդիկ չեն տեսնում ձեր աստվածային, կատարյալ էությունը:

Հնարավո՞ր է արդյոք ցանկացած խմբում այնպիսի հարաբերություններ հաստատել, որոնք համապատասխանում են Վեհապետների, մարգարեների, դեսպանորդների կողմից տրվող Ուսմունքի բարձր չափանիշներին:

Իհարկե հնարավոր է: Բայց միայն այն դեպքում, եթե խումբն ընդհանուր առմամբ պահպանում է Աստծո Պլանի ուղղությունը և ձգտում է հասնել մերձավորին, կյանքի յուրաքանչյուր դրսևորմանն աստվածային ծառայություն մատուցելու բարձունքին:

Այն խումբը, որը կազմված է հոգևոր ուղու վրա նշանակալից նվաճումների հասած անհատներից, մշտապես ներդաշնակ է և հակադրություններից զուրկ: Սակայն անհրաժեշտ է, որ խումբն իր կազմում ունենա գոնե մեկին, ով ունի նվաճումների բավականաչափ բարձր մակարդակ, և ձգտի նրան դարձնել ընդօրինակման նմուշ:

Լինում է և այնպես, երբ լուսավորված և հոգևոր պայծառացման հասած մեկը ձգտում է իր փորձը փոխանցել խմբում իրեն մոտ կանգնած մարդկանց, բայց այդ փորձի փոխանցմանն ընդառաջ գնալու և դրանով ուրախանալու փոխարեն նա բախվում է անըմբռնողության պատին և նույնիսկ արժանանում զոռոզության ու անկատարության մեջ մեղադրանքի:

Նման խմբի ընդհանուր մակարդակն այնպիսին է, որ դրա անդամներն իրենց գիտակցության մեջ ունակ չեն զանազանելու իրենց եղբայրակիցների նվաճումները: Եվ խումբն այդպիսով զրկվում է նշաձողից՝ այն մարդուց, որը կարող էր խմբին տալ իր Լույսն ու նվաճումները:

Տարբեր խմբերում շատ տարբեր իրադրություններ կարող են առաջանալ: Բայց այդ բոլոր իրադրություններով անհրաժեշտ է անցնել. անհրաժեշտ է դրանք ընդունել և հասկանալ, որ դրանք ստեղծվում են Աստծո կողմից, որպեսզի դուք, հրաժարվելով ձեր անկատարություններից, Աստծո մեջ կատարյալ դառնալու հնարավորություն ստանաք:

Ըստ այդմ՝ յուրաքանչյուրն ստանում է այն, ինչին արժանի է: Բայց ես չէի ուզենա, որ այս զրույցից հետո ձեր հոգում բույն դնի անելանելիության ու վհատության զգացումը:

Իրականում գիտակցության՝ նոր մակարդակի վրա բարձրանալու գործընթացը շատ արագ է կատարվում՝ հաշված վայրկյանների ընթացքում: Ձեզ միայն անհրաժեշտ է ձեր գիտակցության մեջ մշտապես ունենալ ճշմարիտ նշաձող, ճշմարիտ ուղղություն և ճշմարիտ նկրտում:

Եվ մենք այս թելադրությունները տալիս ենք հատկապես ձեր գիտակցությունն ուղղորդելու և ձեր նկրտումներին ճիշտ ուղղություն հաղորդելու նպատակով:

Ուշադրություն մի՛ դարձրեք ցեխի այն նստվածքների վրա, որոնք նստած են ձեզ շրջապատող մարդկանց հոգիների վրա: Կարողացե՛ք ցեխի շերտից այն կողմ նշմարել յուրաքանչյուր մարդու աստվածային բնույթը:

Եվ ճի՛շտ ընտրություն կատարեք, թե ձեր շրջապատում ում ընդօրինակեք: Դրա համար ձեզ շատ բանալիներ են տրված այս թելադրություններում:

Ես ձեզ հաջողություններ եմ մաղթում
ձեր Ուղում

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԻՐԵՑՅԱԼ

4 ապրիլի, 2005 թ.

ԵՐԿՈՒ ԲՈԼՈՐԱՇՐՋԱՆ Է ԻՄ ԿՈՂՄԻՑ ՆԿԱՐԱԳՐՎԱԾ ԱՊՈԿԱԼԻՊՍԻՍՈՒՄ՝ ՄԱՏԵՐԻԱՅԻ ՄԵՋ ՍՈՒԶՎԵԼՈՒ ԲՈԼՈՐԱՇՐՋԱՆԸ ԵՎ ՄԱՏԵՐԻԱՅԻՑ ԴՈՒՐՍ ԵԼՆԵԼՈՒ ԲՈԼՈՐԱՇՐՋԱՆԸ

ԵՍ ԵՄ Հովհաննես Սիրեցյալը: Դուք պետք է որ հիշեք ինձ: Ես հայտնի եմ որպես Ապոկալիպսիսի՝ Հովհաննես Սիրեցյալի Հայտնության գրողը:

Ես գրի առա այն ամենը, ինչ Պատմոս կղզու վրա ունեցած իմ հոգևոր պայծառացումների ընթացքում ստացա որպես Հայտնություն:

Ես այն գրի առա այնպես, որ հայտնի դառնա Հայտնության էությունը, բայց և միաժամանակ սքողվի այն:

Շատերն են փորձել հասկանալ իմ Հայտնության իմաստը, բայց դրան հասու չեն դարձել: Ո՛չ այն պատճառով, որ գրված չի եղել, այլ՝ որ չի հասկացվել:

Ես օգտագործեցի շատ նշաններ և միևնույն նշանի շատ նշանակություններ: Օգտագործեցի բազմիմաստ բառեր: Օգտվեցի պատկերներից, որոնք թեև բացասական իմաստ ունեին, բայց դրական են. նաև օգտվեցի մի ժամանակագրությունից, որը երկրային տարեգրությամբ մեկնաբանել հնարավոր չէ:

Քանզի ես նկարագրեցի մի իրադարձություն, որը չէր պատկանում ո՛չ այդ հազարամյակին, ո՛չ նախորդ հազարամյակին, ո՛չ էլ գալիք հազարամյակին: Ես նկարագրեցի այն իրադարձությունը, որը Երկրի վրա տեղի է ունենում մարդկության կյանքի զարգացման ամբողջ ընթացքում: Իսկ մարդու համար հազար տարին թե միլիոն տարին նույն նշանակությունն ունեն, եթե այդ հազարն ու միլիոնը դիտարկենք մարդու կյանքի տևողության տեսանկյունից. դրանք, ըստ էության, նույն միավորներն են՝ համեմատած մարդու կյանքի՝ 100 տարի էլ չկազմող տևողության հետ:

Ես նկարագրեցի մարդկության զարգացման շրջանը՝ նկատի ունենալով ֆիզիկական ոլորտում մարդու գոյության ամբողջ բոլորաշրջանը:

Վիշապն ու գազանը իմ այլաբանության մեջ տարբեր են իրենց նշանակությամբ: Վիշապը Բարին է խորհրդանշում, իսկ գազանը՝ չարը: Վիշապը Երկնքից իջնում է Երկիր և զայրագին հետապնդում կնոջը, որն արու զավակ է ծնել: Կինը մարդկությունն է: Վիշապն Աստծո Իմաստությունն է, որը մուտք է գործել մարդու մեջ: Նորածինն այդ իմաստության պտուղն է՝ մարդու Բարձրագույն Ես-ը, որը ծածուկ կմնա հազար տարի և ավելի երկար: Նկատի ունեցեք երկրային մարդկության գոյության միլիոնավոր տարիները: Այդ ողջ ընթացքում մոլեգնում է գազանը, որը մարդու կրքերի խորհրդանիշն է՝ նրա էգոն:

Գազանը պետք է ընկնի, ինչպես Վիշապն է ժամանակների սկզբում Երկնքից ընկել և սուզվել մատերիայի՝ մոր, կնոջ մեջ:

Երկու բոլորաշրջան է նկարագրված իմ Ապոկալիպսիսում՝ մատերիայի մեջ սուզվելու բոլորաշրջանը և մատերիայից վեր ելնելու բոլորաշրջանը:

Եվ մատերիայում գտնվելու ընթացքում անցնում են ևս յոթ բոլորաշրջաններ, որոնք խորհրդանշված են հրեշտակային փողի ձայներով:

Բոլորաշրջաններից յուրաքանչյուրը բերում է աղետներ ու դժբախտություններ, որոնք վիճակվում են մարդկությանը, որպեսզի նա ձերբազատվի գազանից՝ կենդանուց, որը միաձուլվել է մարդուն և խանգարում է նրա աստվածային բնույթի դրսևորմանը: Եվ բոլոր այդ աղետներն ու դժբախտությունները, որոնցով անցնում է մարդկությունը, անհրաժեշտ են նրան, որպեսզի գիտակցի իր աստվածային բնույթը, ձերբազատվի մարմնական ցանկությունների, մարմնական խելքի գազանից և իր գիտակցությունը վեր հանի Աստծո Իմաստության մակարդակին, որը նշանավորված է բոլորաշրջանների վերջում քառանկյուն քաղաքի իջանումով:

Յոթ բոլորաշրջանները խորհրդանշում են մարդկային յոթ Ռասաները, նույնն են խորհրդանշում նաև վիշապի յոթ գլուխները:

Եվ, անցնելով այդ յոթ բոլորաշրջաններով, մարդը պետք է ազատվի կենդանական գիտակցությունից և վերածվի Աստվածամարդու:

Ես տվեցի մի այլաբանություն, որը նշանավորում է Բարձրագույն Հոգիների՝ մատերիայի մեջ սուզվելը, տվեցի նաև մարդկության գիտակցության բարձրացման ճանապարհով այդ նույն Հոգիների՝ մատերիայից դուրս գալու այլաբանությունը: Ցավում եմ, որ այն պատկերներն ու նշանները, որոնք ես կիրառել էի, չեն հասկացվել ու աղավաղվել են:

Եվ եթե դուք կարդաք իմ այս թելադրությունը Մովսեսի ու Զրադաշտի տված թելադրությունների համատեքստում, ապա ձեզ համար պարզ կդառնա հինավուրց Ճշմարտության իմաստը, գոնե ձեզնից նրանց համար, ովքեր ցանկություն ունեն ճանաչելու Ճշմարտությունը, և նրանց համար, ովքեր պատրաստ են այդ Ճշմարտության ճանաչմանը:

Շատ տարիներ կանցնեն, մինչև որ այդ Ճշմարտությունը կգրավի բազում մարդկանց մտքերը: Եվ շատ տարիներ կանցնեն, մինչև շատերի գիտակցությունը ձեռք կբերի բյուրեղային թափանցիկություն և ունակ կդառնա իր միջով անցկացնելու Աստծո ամբողջական Ճշմարտությունը:

Ներկայումս ձեր գիտակցությունը նման է մթնեցված ապակու. դուք նայում եք դրա միջով և, որքան էլ ջանում եք, չեք կարողանում զանազանել Աստծո Ճշմարտությունը: Մեկն ընդամենը տեսնում է այդ Ճշմարտության ընդհանուր գծերը, իսկ մյուսն ընդհանրապես ոչինչ չի տեսնում և ստիպված է հենվել նրանց կարծիքի վրա, ովքեր գոնե ինչ-որ բան տեսնում են: Բայց լինում է և այնպես, երբ մեկը, ոչինչ չտեսնելով, չի էլ կարողանում հավատալ նրան, ով ինչ-որ բան տեսնում է, և վերջինիս մեղադրում է ստի մեջ կամ նախանձում նրա սրատեսությանը:

Դեռ երկար մարդկային անգիտության գազանը կտիրի մարդկանց ուղեղներին: Եվ շատերը կնմանվեն գազանների և ո՛չ իրենց ներսում, ո՛չ էլ ուրիշների միջոցով չեն լսի Բանականության ձայնը: Եվ միայն աղետները, դժբախտություններն ու տառապանքներն ունակ կլինեն սովորեցնելու նրանց մարդ մնալ: Իսկ այդ աղետները հենց իրե՛նք են իրենց գլխին ստեղծում իրենց արարմունքով՝ մեկը մյուսի, բնության և հենց Մայր Երկրի հանդեպ իրենց կատարած գործողություններով:

Ահավո՛ր ժամանակներում եք ապրում: Ամենամութ կրքերն են մոլեգնում մարդկանց մեջ: Եվ նրանք չեն ուզում լսել Բանականության ձայնը, չեն ուզում շրջվել դեպի Աստծո Ճշմարտության ճանաչման Ուղին: Եվ ամեն ինչ կլինի այնպես, ինչպես նկարագրել եմ: Եվ սկավառակներից ոչ մեկը չի շրջանցի մարդկանց:

Այդպես եղել է և այդպես կլինի: Սակայն վաղ թե ուշ բոլորաշրջանները կավարտվեն, և մարդը կձերբազատվի իր կենդանական, գազանային բնույթից և շնորհի կստանա լինելու Աստծո Արքայության մեջ, որը վաստակել է, և որին իր գիտակցության մեջ նա անպայման կհասնի: Կլինի այնպես, ինչպես նկարագրել եմ: Կարդա՛:

Այսօր ես ձեզ տվեցի այն բանալիները, որոնք անհրաժեշտ են իմ Հայտնությունը հասկանալու համար:

Եվ ասացի ձեզ ուղիղ այնքան բան, որքան պարտավոր էի ասել: Նրանց համար, ովքեր հասկանում են, չափազանց շատ բան ասացի, իսկ նրանց համար, ովքեր ունակ չեն հասկանալու, ոչինչ չասացի:

ԵՍ ԵՄ Հովհաննես Սիրեցյալը,
այսօր եղա ձեզ հետ

ՎԵՀԱՊԵՏ ԻԳՈՐ

5 ապրիլի, 2005 թ.

ԵԿԵԼ Է ԺԱՄԱՆԱԿԸ, ԵՐԲ ՊԵՏՔ Է ՍԿՍԵՆՔ ԳՈՐԾԵԼ

ԵՍ ԵՄ Իգորը, ձեզ այցի եմ եկել այս դեսպանորդի միջոցով:

ԵՍ ԵՄ Իգորը՝ նա, ով, լինելով հասարակ գյուղացի, 20-րդ դարասկզբի հեղափոխության և քաղաքացիական պատերազմի ահավոր ժամանակներում հավասարակշռեց ողջ Ռուսաստանի կարման: Երկու ուժեր իրար բախվեցին այդ կովում Ռուսաստանի ապագա ճակատագրի համար: Դա իրոք ճակատամարտ էր Լույսի և խավարի միջև:

Բայց չդիմացանք: Լուսավոր ուղին հետաձգվեց Ռուսաստանի համար՝ չնայած իմ և նրանց ջանքերին, ովքեր հավասարակշռեցին այդ իրադրությունը և, լինելով մարմնավորման մեջ, ջանա-

ցին անել հնարավոր ամեն ինչ, որպեսզի զոհերի թիվը հասնի նվազագույնի:

Ռուսաստանի կարման թույլ չտվեց անդունդի վրայով թռիչք կատարել դեպի Ռուսաստանի պետականության նոր մակարդակ: Ռուսաստանն ամբողջ 100 տարով փլվեց անհավատության անդունդի մեջ: Եվ դեռևս չի լրացել վաղաժամության այդ շրջանը: Ռուսաստանը կախված է մնացել անցյալի ու ապագայի միջև: Նա դեռ չի շարժվում դեպի իր համար կանխորոշված լուսավոր ապագան և չի էլ գլորվում դեպի անցյալը, որը նրան ահավոր է թվում:

Միլիոնավոր է պատերազմների, հեղափոխության, կուլակաթափության, հալածանքների զոհերի թիվը:

Ես ասում եմ ձեզ. աշխարհի ոչ մի երկիր չէր դիմանա իր վրա կատարվող բոլոր այդ հրեշավոր փորձերին:

Պահանջվեց այս ազգի անսահման համբերությունն ու խոնարհությունը, որպեսզի անցնի իր ուղու այդ հատվածն ու չընկճվի:

Քիչ մնաց ազատ շունչ քաշեինք, երբ սկսվեց վերակառուցումը, բայց բանը դրան չհասավ:

Չի՛ ննջում Ռուսաստանին տապալող գազանը, թույլ չի՛ տալիս նրան ոտքի կանգնել, ուղղել ուսերը և դեռ նետել իր շալակը ելած անգիտության գազանին, անհավատության արնախում գազանին, որը մահվան ճիրաններով կառչել է Ռուսաստանից:

Մա՛յր Ռուսաստան... Մայրական բազմաչարչա՛ր Երկիր... Խավարն այնքան թանձր է պատել Ռուսաստանը, որ լույսի ոչ մի շող չի երևում: Չի երևում, թե դեպի ուր ձգտել: Կործանվել է հավատը, կործանվել են հասարակության բարոյական գաղափարները: Համատարած անհավատությունն ու սանձարձակությունն են բույն դրել մարդկանց ուղեղներում ու սրտերում:

Ամեն ազգի ուժ իր մարդկանց սրտերում է: Չկա ոչինչ, որին իր ֆիզիկական դրսևորման մեջ անհնար լինի ենթարկել փոփոխության, եթե կան դրան ձգտող սրտեր, սիրող սրտեր, հավատացող սրտեր:

Սրտեր, որոնք պատրաստ են նույնիսկ կյանքը զոհել հանուն նրա, որ երջանկությունը թագավորի սիրելի երկրում:

Ես ինձնից կախված ամեն ինչ արեցի, երբ գտնվում էի մարմնավորման մեջ: Ես օրերով չէի լքում իմ աղոթատեղին՝ աղոթքս միայն հազվադեպ ընդհատելով կարճատև քնով:

Ես աղոթում էի, աղոթում էի և աղոթում: Ես միայն մի բան էի կամենում, որ Ռուսաստանն անցկացվի անդունդի վրայով: Ես աղաչում էի Աստվածամորն ու Երկնային Թագավորին, որ հրաշք կատարվի Ռուսաստանի համար:

Սակայն հրաշք տեղի չունեցավ, չնայած բեռը թեթևացավ, և Ռուսաստանը կարողացավ պահպանել իր ամբողջականությունը:

Եվ ահա 100 տարի անցնելուց հետո իրադրությունը նորից է կրկնվում: Նույն աղքատությունն է տիրում Ռուսաստանում, պաշտոնյաների նույն սանձարձակությունը: Եվ ուժ չկա դա տեսնելու և դիմանալու: Սիրտդ լցվում է, երբ տեսնում ես այդ երկրի ժողովրդի տառապանքները:

Ո՞րն է ելքը: Դուք ինձնից խորհուրդ ու հանձնարարական եք սպասում, թե ինչպես վարվել:

Կասեմ ձեզ անկեղծ. եթե ես հիմա Ռուսաստանում մարմնավորված լինեի, ապա միայն աղոթքներով չէի կարողանա հավասարակշռել նրա կարման:

Ասենք, դուք տեսնում եք երեխայի, որը գտնվում է վառվող խրճիթում: Եվ խրճիթն, ուր որ է փուլ կգա: Ի՞նչ կանեիք դուք: Արդյոք կաղոթեիք և կսպասեիք հրաշքի՞, թե՞ կնետվեիք հրդեհի բոցերի մեջ և դուրս կհանեիք երեխային:

Այս հարցը յուրաքանչյո՛ւրն է ինքն իր համար որոշում: Ամեն ինչ կախված է աղոթողի սրտի մաքրությունից: Եվ, եթե դուք համոզված եք ձեր սուրբ լինելու մեջ և նրանում, որ աղոթքով ունակ եք կանխելու ցանկացած դժբախտություն, ապա ես խոնարհվում եմ ձեր հավատի առաջ: Եվ ես ձեզ հետ կլինեմ ձեր աղոթքի պահին: Եվ ես կուժեղացնեմ ձեր աղոթքի ազդեցությունը՝ ներկա լինելով ձեր ներսում:

Սակայն այժմ Ռուսաստանին պետք են ֆիզիկական ոլորտի կոնկրետ գործողություններ: Դա վերաբերում է հատկապես երեխաների և երիտասարդության դաստիարակությանը: Որևէ գաղափարախոսությունից զուրկ լինելով, զրկված լինելով բարոյական հիմքերից՝ երիտասարդները, որոնք Ռուսաստանի ապագան են, իրենց հասուն տարիքում ունակ չեն լինի վերցնելու երկրի համար պատասխանատվությունը:

Իրենց կամ իրենց ընտանիքի ներկա բոպեի շահի համար նրանք պատրաստ կլինեն 30 արծաթի դիմաց վտանգել ամբողջ Մայր Ռուսաստանը, որպեսզի աստծո արքայության արժանանան անդրծովյան երկրներում:

Երկրի վրա չկա և չի կարող լինել Աստծո ոչ մի Արքայություն: Եվ ձեր նվաճումների չափը որոշվում է ոչ թե արտասահմանյան որևէ բանկի ձեր հաշվի համարի վրա եղած դոլարների քանակով, այլ այն զոհաբերության աստիճանով, որը դուք կարող եք անել ձեր մերձավորների, ընչազուրկների, կարիքավորների փրկության համար:

Յուրաքանչյուր պետություն ստեղծված է նրա համար, որ պաշտպանի իրեն արտաքին թշնամուց և պաշտպանված լինի ներքին թշնամուց: Իսկ ներքին թշնամին ընչազրկությունն ու աղքատությունն են:

Ըստ այդմ՝ եթե պետությունը հոգ չի տանում երեխաների, ծերունիների ընչազուրկների մասին, որոնք հոգածության կարիք ունեն, ապա այդպիսի պետությանը Բարձրագույն Օրենքը չի օժանդակում: Եվ նման պետությունը դատապարտված է կամ մահվան, կամ ձևափոխության: Ես առա-

ջարկում եմ ձեզ Երկնոլորտների օգնությունը ձեր պետության ձևափոխության համար:

Ռուսաստանի պատմության մեջ եղել են ժամանակներ, երբ նա համարյա ամբողջությամբ նվաճվել է օտարերկրացիների կողմից:

Հիշե՛ք թաթարների արշավանքը, 1812 թվականի հայրենական պատերազմը:

Հիշե՛ք Մինինին և Պոժարսկուն, Ալեքսանդր Նևսկուն:

Հիշե՛ք անցյալ դարի Հայրենական մեծ պատերազմը:

Միշտ գտնվում էին մարդիկ, որոնք ոտքի էին ելնում և անհավատալի ջանքերի գնով, սեփական կյանքի գնով ազատագրում էին երկիրը օտարերկրյա զավթիչներից: Ես ասում եմ ձեզ. այժմ երկիրը զավթված է օտարերկրացիների կողմից: Եվ դժվարությունն այն է, որ նրանք եկել են երկրի ներսից՝ հենց ժողովրդի միջից, բայց ըստ էության՝ նրանք օտարերկրացիներ են: Նրանք թալանում են Ռուսաստանը, և իրենց թալանը դուրս են հանում Եվրոպա, Ամերիկա:

Ռուսաստանի ժողովո՛ւրդ, դու պետք է նորից ոտքի ելնես ողջ աշխարհում և վերջնական հաղթանակ տոնես Բարու և չարի այս ճակատամարտում:

Առաջիկայում Ռուսաստանին լուսավոր ապագա է սպասում: Բայց, նախքան այդ անհրաժեշտ է ազատվել օտարերկրյա զավթիչներից, որոնք գրավել են երկրի իշխանությունը խորամանկության ու խաբեության միջոցով և ղեկավարում են ձեզ՝ ձեռքները շփելով ամեն մի միլիոնի համար, որը դնում են շվեյցարական և ամերիկյան բանկերում:

Ես ձեզ խոստանում եմ Համբարձյալ Դասերի օգնությունը, Երկնոլորտների ամբողջ օգնությունը Ռուսաստանը զավթիչներից ազատագրելու գործում, բայց դուք պետք է ոտքի կանգնեք ամբողջ աշխարհով մեկ և դեն նետեք ձեր վրայից զավթիչների լուծը: Եկել է թևերը քշտելու ժամանակը: Դուք այլևս չեք կարող անգործ մնալ: Դուք պարտավո՛ր եք գործել: Երեխան կրակի մեջ է...

Մայր Ռուսաստանը կրակի մեջ է...

Միայն կույրն ու խուլը կարող են ձևացնել, թե ոչինչ տեղի չի ունենում:

Ես հիմա ձեզ տալիս եմ ամենաուժեղ զենքը, որի դեմ պաշտպանություն չկա, որի դեմ չի կարող դիմանալ ոչ մի թշնամի:

Ես լցնում եմ ձեր սրտերը Հավատով, Հույսով և Սիրով: Ես Սիրով եմ լցնում ձեր սրտերը Հայրենիքի՝ Մայր Ռուսաստանի նկատմամբ:

Ես կրակ եմ վառում ձեր սրտերում: Ունենալով այդ կրակը՝ դուք այլևս չեք կարող չգործել:

Այդ կրակն օր ու գիշեր ձեզ հանգիստ չի տա: Եվ դուք կանեք այն, ինչը գիտեք, որ պետք է անեք: Դուք կանեք այն, հանուն ինչի մարմնավորվել եք: Դուք կհասցնեք Հավատի և Գիտելիքի կրակը յուրաքանչյուրին, ում կհանդիպեք ձեր ճանապարհին: Դուք կանեք ձեզնից կախված ամեն ինչ, ինչպես այն ժամանակ, երբ ձեր հարազատ քաղաքները պաշարել էր թշնամին: Եվ դուք կջանաք առանց հոգնելու՝ միայն մի կարճ ժամանակ քուն առնելով:

Դուք պե՛տք է գործեք:

Ոտքի՛ ել, Ռուսաստա՛ն:

Բարձրացի՛ր, Աստծո ժողովո՛ւրդ:

Թշնամին բակո՛ւմ է...

Իսկ առջևում Հաղթանա՛կն է, ազատագրությո՛ւնը, Բերկրա՛նքը:

Ես այս ազդակը տալիս եմ իմ սրտից՝ ձեզ ներարկելով Հաղթանակի ձգտում:

Սիրելինե՛րս, Երկնոլորտները ձեզ են նայում: Եկել է ժամանակը, երբ պետք է սկսեք գործել...

ԵՍ ԵՄ Իգորը,
ձեզ հետ եմ այժմ

ՎԵՀԱՊԵՏ ԼԱՆԵԼԼՈ (ՄԱՐԿ ՓՐՈՖԵԹ)

6 ապրիլի, 2005 թ.

ՄԵՆՔ ՄԵՐ ԼՈՒՅՍԻ ԿԻԶԱԿԵՏԸ ՏԵՂԱԴՐՈՒՄ ԵՆՔ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀՈՂՈՒՄ

ԵՍ ԵՄ Լանելլոն, ձեզ այցի եմ եկել այս դեսպանորդի միջոցով:

Դուք հիշո՞ւմ եք ինձ: ԵՍ ԵՄ նա, ով 1958 թվականին Ամերիկայում հիմնադրեց Սամմիթ Լայթհաուզ կազմակերպությունը:

Ես հիմնադրեցի այդ կազմակերպությունը՝ առաջնորդվելով Էլ Մորիայի և մյուս Համբարձյալ Վեհապետների ցուցումներով, ովքեր համարյա 40 տարիների ընթացքում օժանդակեցին այդ կազմակերպությանը, մինչև այն պահը, երբ 1997 թվականին Էլ Մորիան ետ վերցրեց իր հովանավորչությունն այդ կազմակերպության վրայից:

Ես պետք է ձեզ հասցնեմ նոր տեղեկատվություն, որը վերաբերում է Ամերիկայում գոյություն ունեցող կազմակերպություններին ցուցաբերվող մեր հովանավորչության հարցին:

Հնարավոր է՝ ձեզ հայտնի է, որ մի քանի կազմակերպություններ գոյություն ունեն տարբեր նահանգներում, այդ թվում և Մոնտանայում, որոնք իրենց հայտարարել են Սամմիթ Լայթհաուզի ժառանգորդներ, իսկ այդ կազմակերպությունները հիմնադրող մարդիկ իրենք իրենց հայտարարել են դեսպանորդներ:

Եկել է պահը, որ ես օգնեմ ձեզ՝ պարզություն մտցնելու ձեր ուղեղներում ստեղծված խառնաշփոթի մեջ՝ կապված այդքան մեծ քանակի կազմակերպությունների ու դեսպանորդների առկայության հետ:

Իմ ցանկությունն է ձեզ ուղեցույց տալ, թե ինչպես վերաբերվել բոլոր այդ կազմակերպություններին:

Ցավոք սրտի, իրադրությունն Ամերիկայում այնպիսին է, որ ոչ մի կազմակերպություն չունի Համբարձյալ Վեհապետների հովանավորչությունը, և իրեն Մեծ Սպիտակ Եղբայրության դեսպանորդ հռչակած ոչ մեկն իրականում այդ Եղբայրության դեսպանորդ չէ:

Ամերիկայի համար մերժված է այդ երկրի տարածքում գտնվող որևէ կազմակերպության հովանավորելու հարցը:

Չափազանց շատ Լույս, չափազանց շատ էներգիա է ծախսվել Համբարձյալ Դասերի կողմից, որպեսզի ստեղծվեին այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք էին Ազատության Կամուրջը, ԵՍ ԵՄ Շարժումը և, ի վերջո, Սամմիթ Լայթհաուզը: Լույսի այնքան մեծ քանակություն արձակվեց այդ կազմակերպությունների միջոցով, որքան պատմական այդպիսի կարճ ժամանակահատվածում երբեք չէր արձակվել Երկրի զարգացման ողջ պատմության ընթացքում:

Ամերիկայի բնակիչները հնարավորություն էին ստացել ներկա գտնվելու Համբարձյալ Դասերի հետ ուղղակի հաղորդակցմանը, որը տեղի էր ունենում տառացիորեն հենց իրենց աչքի առջև:

Նրանք հնարավորություն ունեին զգալու այն Լույսը, որն արձակվում է թելադրությունների ժամանակ:

Նրանք տառացիորեն վրա էին ընկել շրթունքներով և խմում ու խմում էին այդ Լույսը:

Մենք հագեցրինք ծարավներին, Մենք գիտելիքներ տվինք ուղիղ այնքան, որքան հնարավոր էր տալ տվյալ պահին և տվյալ կոնկրետ երկրում:

Եվ ի՞նչ ստացանք արդյունքում: Ես մեծ գաղտնիք բացած չեմ լինի, եթե ասեմ, որ մարդիկ, ովքեր տասնամյակներ շարունակ ըմպում էին թելադրությունների Լույսը, հաջողեցրին այդ Լույսի 90 տոկոսն օգտագործել ներքին զգվոտոցի և խառնակչության համար:

Կարո՞ղ եք պատկերացնել Համբարձյալ Դասերի վիճակը, երբ տեսնում էին, թե ինչպես է այն Լույսը, որն այնքան սիրով իրենք ներարկում էին մարդկանց սրտերում, վերածվում մեղադրանքի, նախանձի, խանդի և մարդկանց հատուկ այլ բացասական հույզերի մոխրակույտի:

Պատկերացրեք, սիրելիներս, թե ինչպես էր մեր աչքի առաջ աղավաղվում մեր կողմից այդքան սիրով տրված Լուսային Էներգիան:

Երկնային աննախադեպ թողության շնորհը ձախողվեց Ամերիկայի հողում: Եվ ես ստիպված եմ արձանագրել այդ տխուր փաստը: Եվ այլևս ոչ մի կազմակերպության, համենայն դեպս, տեսանելի ապագայում, չի՛ շնորհվի Համբարձյալ Դասերի հովանավորչությունը:

Մենք մեկ անգամ չէ, որ փորձել ենք Ամերիկայի տարածքում տեղադրել մեր Լույսի կիզակետը, և ամեն անգամ պարտություն ենք կրել մեր մարմնավորված հետևորդների անկանխատեսելի ու անիրական մասերի կողմից:

ԵՍ ԵՄ Լանելլոն, որ եկել եմ այն բանի համար, որ հաղորդեմ ձեզ այս տխուր փաստը:

Մենք հեռանում ենք Ամերիկայի Հողից, և մենք տեղափոխում ենք մեր Լույսի կիզակետը Մայր Ռուսաստանի Հողի վրա: Դուք գիտեք, որ Մեծ Սպիտակ Եղբայրության նախնական մտահղացումը եղել է այն, որ հենց Ռուսաստանում ամրացվի Լույսի կիզակետը, որպեսզի իրագործվեն Եղբայրության պլաններն այդ երկրում, Աստծո սիրելի երկրում:

Սակայն խավարի ուժերի դիմադրությունն այնքան մեծ էր, որ հարկ եղավ նահանջել: Եվ ամբողջ 20-րդ դարի ընթացքում մենք չկարողացանք գործել Ռուսաստանի տարածքում՝ այնտեղ կազմավորված կարմայական հանգամանքների պատճառով:

Դուք գիտեք, որ ես և Եղիսաբեթը մարմնավորվել էինք որպես արքայազն Ալեքսեյ և արքայադուստր Անաստասիա: Բայց մեր առաքելությունն ընդհատվեց հենց ամենասկզբում՝ կապված հեղափոխության և դրան հետևած ցարական ընտանիքի գնդակահարության հետ:

Այդ արարքի ծանր կարման նստեց ողջ Ռուսաստանի ժողովրդի վրա: Եվ ես մշտապես ցավակցորեն եմ վերաբերվել այդ երկրի անվեհեր մարդկանց: Բայց դեռևս երբեք այդ երկրին չի վիճակվել բախվել անտեսանելի թշնամու հետ: Թշնամի, որ թափանցել է մարդկանց սրտերի և ուղեղների մեջ և ստիպում է նրանց կատարել այդ երկրի համար նախատեսված աստվածային մտահղացմանը չհամապատասխանող գործողություններ: Մենք նորից մեր կիզակետը տեղափոխում ենք Ռուսաստան:

Եվ այժմ ես դիմում եմ Մայր Ռուսաստանի այն բնակիչներին, ովքեր կարող են լսել ինձ և կարդում են այս թելադրությունը:

Ձեր աչքի առաջ է Ամերիկայի օրինակը: Եվ ձեր աչքի առաջ է Ռուսաստանի այն գործողությունների օրինակը, որոնք նա անցյալում դրսևորել է Աստծո դեսպանորդների, Լույսի Հիերարխիայի ներկայացուցիչների նկատմամբ:

Երկիր մոլորակի իրադրությունն այնքան անկանխատեսելի է, որ մենք չենք կարող գուշակել, թե որքան հաջող կլինեն մեր ջանքերն այս անգամ:

Սակայն ես կարող եմ ձեզ վստահեցնել, որ Վեհապետների կողմից այժմ նախատեսված գործի հաջողությունը լրիվ և ամբողջապես պետք է ապահովվի ձեր անձնական ջանքերի շնորհիվ:

Այո՛, մենք մեծ քանակի Լույս ներդրեցինք Ամերիկայի հողում, բայց ոչ մի կարգին բան չքաղեցինք այդ հողից: Իսկ ամեն մի նոր թողության շնորհ տրվում է ավելի խիստ պայմաններով և ավելի մեծ սահմանափակումներով:

Եվ ահա այժմ դուք պետք է սկսեք գործել՝ չունենալով կազմակերպություն, որում Վեհապետները կկարողանային ամրացնել կիզակետը. պետք է գործեք՝ չունենալով դրամական ռեսուրսներ, չունենալով ոչինչ, բացի ձեր ձեռքերից, ոտքերից, գլուխներից և ձեր սրտերի նվիրվածությունից:

Դրանք դաժան պայմաններ ու փորձություն են այդ երկրի լուսակիրների համար:

Բայց ես կարող եմ ձեզ վստահեցնել, որ այժմ Ռուսաստանի տարածքում մարմնավորված են Լույսի լավագույն ներկայացուցիչները՝ Աստծո լավագույն ուստրերն ու դուստրերը:

Եվ նրանցից յուրաքանչյուրն իր համար պատիվ է համարում աստվածային առաքելության իրագործումը, որքան էլ խիստ լինեն այժմ Ռուսաստանի տարածքում գործելու պայմանները:

Դուք ունեք Դեսպանորդ և հնարավորություն ունեք ստանալու և՛այս խրատը, և՛ մյուս Վեհապետների խրատները: Ըստ էության, ձեզ այլևս ոչինչ պետք չէ, որպեսզի սկսեք գործել:

Մենք Ամերիկայում սնուցեցինք Աստծո ուստրերին ու դուստրերին ամբողջ 20-րդ դարի ընթացքում: Եվ այժմ մենք ստիպված ենք վերադառնալ Ռուսաստանի հողը և հենարան գտնել այն ուստրերի ու դուստրերի սրտերում, որոնք այդքան շատ Լույս չեն ստացել, չեն ստացել մեր կողմից այդքան շատ խնամք ու հոգածություն, բայց միանգամայն հասուն Լույսի զավակներ են և ունակ են գործելու ցանկացած հանգամանքներում և այդ երկրին հատուկ ամենադաժան պայմաններում:

Դուք անցել եք ձեր թեստերն ու ձեր փորձառությունը՝ չգտնվելով Սամմիթ Լայթհաուզի ջերմոցային պայմաններում: Դուք ստացել եք ձեր ձեռնադրումը հենց Ռուսաստանի կյանքային պայմաններում:

Եվ դուք դիմացել եք այդքան ծանր պայմաններին:

Այն, ինչ հեշտ էր իրագործել Ամերիկայի պայմաններում՝ ազատության ու դեմոկրատիայի սկզբունքների շնորհիվ, որոնք Սեն-Ժերմենի կողմից ամրագրվել են այդ երկրի հիմքում, Ռուսաստանի պայմաններում միշտ հաջողվում էր անել մեծ ջանքերի գնով:

Եվ Աստծո շատ ուստրեր ու դուստրեր կորսվեցին ճամբարներում ու հոգեբուժական հիվանդանոցներում: Ձեզ վիճակվեց անցնել դաժան փորձություններով, և դա կոփեց ձեր սրտերը:

Մենք Լույսի կիզակետը տեղադրում ենք Ռուսաստանի հողում: Եվ այժմ միայն ձեզնից ու ձեր ջանքերից է կախված, թե ինչպես կիրականացնեք մեր հովանավորությունը:

Մենք բացում ենք ձեր Ուղին: Բայց նրանով դուք պետք է քայլեք ձեր ոտքերով:

ԵՍ ԵՄ Լանելլոն: Եկա ձեզ տեղյակ պահելու նոր թողության շնորհի մասին, որն արդեն ուժի մեջ է

ԷԼՈՀԻՄ ԿԻԿԼՈՊԵՈՍ

7 ապրիլի, 2005 թ.

ՄԵՐ ԱՌՋԵՎ ԵՆ ԵՐԿԻՐ ՄՈԼՈՐԱԿԻ ՀԱՄԱՐ ԱՍՏԾՈ ՊԼԱՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՈՅԱԿԱՊ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՍ ԵՄ Կիկլոպեոսը: ԵՍ ԵՄ, ձեզ այցի եմ եկել այս Դեսպանորդի միջոցով:

ԵՍ ԵՄ Էլոհիմ Կիկլոպեոսը: ԵՍ ԵՄ եկել, որ տամ ձեզ մոտակա ժամանակների մոլորակի իրադրության՝ Աստծո Տեսիլքը:

Ես աշխարհի ձևերի արարիչն եմ, նա եմ, ով երևակված ձևերի աշխարհի ստեղծման ընթացքում իրականություն դարձրեց Աստծո Տեսիլքը:

Ամբողջ երևակումն արարվեց իմ մասնակցությամբ: Ես մասնակցել եմ մատերիական տիեզերքի երևակման բոլոր փուլերին: Եվ ես նա եմ, ով իր գիտակցության մեջ պահպանում է համայն տիեզերքի Աստծո Տեսիլքն ու Պլանը:

Ես սկսում եմ իմ Տեսիլքի շարադրանքը:

Երևակված ձևերի աշխարհն իր ամբողջ բազմազանությամբ հանդերձ հանդիսանում է արարման անհրաժեշտ մասը, երբ Աստծո նախասկզբնական էներգիան, որն ընկած է այս տիեզերքի հիմքում, իր թրթիռներով հասնում է նվազագույն սահմանին՝ սպեկտրի այն ամենացածր հաճախականությանը, որը հնարավոր է այս տիեզերքի համար:

Դուք այժմ գտնվում եք երևակված աշխարհի ամենացածր կետում: Ձեր թրթռումները համապատասխանում են ամենացածր կետին: Այդ կետին համապատասխանում է ձեր երևակված աշխարհը:

Դուք գտնվում եք այդ աշխարհում, որովհետև ձեր թրթիռներով համապատասխանում եք ձեզ շրջապատող աշխարհին: Այդ պատճառով այն, ինչ ձեզ շրջապատում է, ձեզ իրական է թվում: Դուք այդ ամենը կարող եք տեսնել, այդ ամենը կարող եք շոշափել: Դա ձեր աշխարհն է:

Սակայն այն աշխարհը, որ ձեզ շրջապատում է, նման է այսբերգի այն մասին, որը գտնվում է ջրի երեսին: Եվ ֆիզիկական մարմինն ընդամենը ձեր մի աննշան մասն է, այն մասը, որի թրթռանքը համընկնում է Աստծո էներգիայի դրսևորման ամենացածր հաճախականությանը:

Բայց ձեր ավելի նուրբ մարմինները, որոնք շրջապատում են ձեր ֆիզիկական մարմինը և տեսանելի չեն ձեր ֆիզիկական տեսողության համար, ունեն թրթռանքի ավելի բարձր հաճախականություն: Եվ ֆիզիկական աշխարհում ձեր երևակվելը նշանակալից չափով պայմանավորված է այդ նուրբ կառույցներով:

Ձեր այդ նուրբ մարմինները՝ ձեր նուրբ էներգետիկական կառույցները, իրար հետ փոխկապակցված են և կապված են ձեր ֆիզիկական մարմնի հետ էներգետիկական կենտրոնների համակարգի կամ չակրաների միջոցով:

Ձեզ հայտնի է, որ ողնաշարի երկայնքով դասավորված են յոթ հիմնական էներգետիկական կենտրոններ, որոնք կապված են ձեր զգացմունքային, մենտալային և եթերային մարմինների հետ: Իրականում ձեր ողնաշարի երկայնքով տեղաբաշխված էներգետիկական կենտրոնների քանակն անհամեմատ ավելի մեծ է: Եվ կան այլ էներգետիկական կենտրոններ, որոնք տեղաբաշխված են ձեր մարմնի մյուս մասերում: Այդ կենտրոնների միջոցով ձեր ֆիզիկական մարմինը սնուցվում է Աստծո էներգիայով:

Որևէ գաղտնիք բացած չեմ լինի, եթե ասեմ, որ մարմնավորված մարդկության մեծագույն մասի մոտ նուրբ մարմինների հետ կապը բացակայում է այն բանի հետևանքով, որ էներգետիկական կենտրոնները չեն գործում: Իսկ չգործելու հիմնական պատճառը ձեր կարման է՝ մաթի պես թանձր այն էներգիան, որը խցանել է ձեր էներգետիկական կենտրոնները և խոչընդոտում է նրանց միջով Աստծո էներգիայի անցնելուն: Լավագույն դեպքում մարդկանց մոտ բաց են կամ մասամբ են բաց միայն ստորին չակրաները, որոնք հնարավորություն են տալիս երբեմն զգալ Աստծո էներգիայի թրթռանքը՝ բնությամբ, երաժշտությամբ կամ եկեղեցական ծառայության ընթացքում հիացման պահեր ապրելիս:

Սակայն մարդկության մեծամասնության համար իրենց չակրաներով անմիջականորեն Աստծո էներգիա ստանալու հնարավորությունը բացակայում է:

Բայց դուք գիտեք, որ համայն աշխարհն իրենից միայն Աստծո էներգիա է ներկայացնում, որը թրթռում է տարբեր հաճախականություններով: Եվ իրականում այս աշխարհում ոչինչ գոյություն չունի, բացի Աստծո էներգիայից:

Ըստ այդմ՝ եթե մարդը չի կարող իր չակրանե-րով Աստծո էներգիա ստանալ, նա փաստորեն ինքն իրեն կտրում է Աստծուց և Աստծո Իրակա-նությունից: Նա իրեն դատապարտում է մահվան, քանի որ կորցնում է Աստծո Իրականության հետ կապը: Այդ պատճառով, սիրելիներս, ֆիզիկական մարմնի գոյությունն առանց Աստծո Իրականու-թյան դրսևորման ավելի նուրբ ոլորտների հետ կապի՝ ձեր ֆիզիկական կյանքի շրջանի ավար-տին ձեզ դատապարտում է մահվան:

Եվ իրականում ձեզ համար կյանքի ու մահվան հարց է այն ընտրությունը, որը մոլորակի համար այս բարդ ժամանակներում ձեզնից յուրաքանչ-յուրը կատարում է:

Հույս ունեմ, որ բավականաչափ պարզ բա-ցատրեցի ընթացող պրոցեսների էությունը:

Եթե դուք մերժում եք Աստծո Իրականությունը, եթե գերադասում եք անջատ գոյությունը ֆիզիկա-կան, պատրանքային աշխարհում, ապա տառա-ցիորեն ինքներդ ձեզ դատապարտում եք մահվան:

Ահա թե ինչու է ձեզ համար առաջին պլանում հայտնվում ձեր ընտրության հարցը՝ ո՞ր աշխարհն եք ընտրում. ձեզ շրջապատող պատրանքային աշ-խա՞րհը, թե՞ Աստվածայինը: Անցողի՞կը, թե՞ անանցը:

Եվ այն հոգիները, ովքեր նախընտրում են գոյությունը ֆիզիկական աշխարհում, նախընտ-րում են այդ աշխարհը, չգոյության են դատապար-տում իրենց նուրբ՝ անմահ մասին:

Չի կարող առանձին գոյություն ունենալ այս-բերգի միայն այն մասը, որը երևում է ջրի երեսին:

Դուք կամ ունեք այսբերգն ամբողջությամբ, կամ էլ ընդհանրապես այսբերգ չունեք:

Ես հուսով եմ, որ շատ պարզ շարադրեցի իմ միտքը:

Եթե դուք Աստծուն թույլ չեք տալիս իրեն դրսևորել ձեր միջոցով, ապա էլ ի՞նչ նշանակու-թյուն կարող եք ունենալ Աստծո համար:

Դուք բոլորդ Աստծո միասնական օրգանիզմի բաղադրիչ մասերն եք, և, եթե առողջ օրգանիզմը չազատվի իր մեռած ու անկենդան բջիջներից, ապա այն իրեն մահվան է դատապարտում:

Դուք նույնիսկ չեք նկատում, թե ինչպես է ձեր օրգանիզմն ամեն րոպե ազատվում մեռած բջիջ-ներից և այն ամենից, ինչն անկենսունակ է իր մեջ:

Ձեր օրգանիզմի և տիեզերքի համանմանու-թյունն այս դեպքում լիակատար է: Դուք ինքներդ եք ընտրություն կատարում. կամ ձեր ուշադրու-թյան վեկտորն ուղղում եք պատրանքին, կամ այն ուղղում եք դեպի Աստծո իրական Աշխարհ:

Այս դեսպանորդի միջոցով ձեզ տրված թելադ-րություններում շատ անգամ է կրկնվել, որ տեղի է ունենում բոլորաշրջանների հերթագայություն: Սկսվել է պատրանքային աշխարհի հետհավաք-ման բոլորաշրջանը: Սկսվել է ֆիզիկական աշ-խարհի թրթռանքի բարձրացման բոլորաշրջանը, սկսվել է Աստծո Արարչության ավելի նուրբ ոլոր-տին անցնելու բոլորաշրջանը:

Ձեզնից ոչ ոք չի կարող ասել, թե այդ մասին չի լսել: Դուք հնարավորություն եք ունեցել ձեր արտա-քին գիտակցության միջոցով լրիվ գիտակցաբար ընտրություն կատարելու: Եվ այս պահին Երկրի բնակչության մեծ մասն արդեն իր ընտրությունը կատարել է: Այդ պատճառով մոտակա ժամանա-կում ուժեղացված զտում տեղի կունենա այն մարդ-կանց միջև, ովքեր ընտրել են Աստծուն, և նրանց միջև, ովքեր ընտրել են պատրանքային աշխարհը:

Եվ դուք ականատես կլինեք նախկինում չար-տահայտված ընդունակությունների ու հոգևոր շնորհների ի հայտ գալուն որոշ մարդկանց մոտ և դրանց բացահայտ հետզարգացմանը՝ մյուսների մոտ: Այն մարդիկ, ովքեր իրենց դատապարտել են Աստծո էներգիայից կտրվելուն, մոտակա ժամա-նակում այլևս չեն կարողանա դրսևորել իրենց այս աշխարհում: Որովհետև նրանք զրկված կլինեն էներգիայի աղբյուրներից: Նրանք չեն կարողանա այդ էներգիան ձեռք բերել ուրիշներից, իսկ սեփա-կանը չունեն:

Մարդիկ, ովքեր ընտրություն են կատարել Աստ-ծո օգտին, ընդհակառակը, թույլտվություն կստա-նան օգտվելու Աստծո էներգիայից, կկարողանան իրենց էության միջոցով դրսևորել այդ էներգիան և արարել Աստծո գործը թանձր աշխարհում:

Պաշտելիներս, դուք չեք կարող առևտուր անել Աստծո հետ: Դուք այլևս չեք կարող առաքել աղոթ-քի էներգիան՝ ֆիզիկական աշխարհում բարիք ստանալու ակնկալիքով: Առևտուրն ավարտված է:

Եվ նրանց, ովքեր դեռևս գիտակցական ընտ-րություն չեն արել Աստծո օգտին, խորհուրդ եմ տալիս շտապել:

Թող մեռյալները թաղեն իրենց մեռելներին: Մեր առջև են այս Երկիր մոլորակի համար նա-խատեսված Աստծո Պլանների իրականացման հոյակապ հնարավորություններ: Եվ ձեզ թող չվրդովեն բացահայտ անարդարություններն ու ամենատարբեր չարաշահումները, որոնք դուք ձեր շուրջը տեսնում եք:

Գիշերը մութ է լինում լուսաբացից առաջ: Իսկ լուսաբացն ուր որ է վրա կհասնի, և արդեն մարդ-կանց մի քանի սերնդից հետո դուք կզգաք, թե ինչպես է փոխվում մոլորակը:

Ես նոր գիտելիք չտվեցի: Այս ամենը դուք շատ անգամ եք լսել այլ աղբյուրներից: Հնարավոր է, որ ես պարզապես ձեր հայացքն ուղղեցի մի փոքր այլ տեսանկյունով: Եվ ես ուրախ կլինեմ, եթե այդ տեսանկյունն օգնի ձեզ ձեռք բերելու Աստծո՝ ձեր ֆիզիկական աշխարհում տեղի ունեցողի Տեսլա-կանը և այն հոյակապ հեռանկարների Տեսլականը, որոնք ապագայում սպասվում են ձեր մոլորակին:

ԵՍ ԵՄ Կիկլոպեոսը

ԲԱԲԱՋԻ

8 ապրիլի, 2005 թ.

ԵՐԿԻՆՔ ՏԱՆՈՂ ՈՒՂԻՆ ՁԵՐ ՆԵՐՍՈՒՄ Է

ԵՍ ԵՄ Բաբաջին: Ես եկել եմ այս Դեսպանորդի միջոցով:

Հնարավոր է՝ դուք ինձ չգիտեք: Ես մարմնավորվեցի Հնդկաստանում անցած՝ 20-րդ դարի վերջում: Եվ ես չծնվեցի այնպես, ինչպես սովորաբար ծնվում են երեխաները: Ես մարմին առա մտքի ուժով: Ես եկել էի, որպեսզի Հնդկաստանում վերականգնեմ ճշմարիտ հավատի ավանդույթները: Ես Շիվայի մարմնավորումն էի:

Օ՜, շատ դժվար է հասկանալ, թե ինչպես կարող է միևնույն Վեհապետը գալ տարբեր մարդկանց միջոցով, մարմնավորման տարբեր ճանապարհներով: Սակայն ես պետք է ասեմ, որ Վեհապետները, Բարձրագույն Էակները, որոնք գալիս են՝ օգնելու Երկրին և նրա մարդկությանը, փնտրում են ցանկացած հնարավորություն, որպեսզի ներկա գտնվեն ֆիզիկական աշխարհում:

Ներկայումս ձեր աշխարհը շատ թանձր է և Լույսի Բարձրագույն Էակներին թույլ չի տալիս երկար ժամանակով լինել ձեզ հետ: Այդ պատճառով մենք օգտվում ենք մասնակի մարմնավորումներից կամ էլ ժամանակավորապես կացարան ենք գտնում այն մարդկանց մեջ, ովքեր հարկ եղած չափով հոգացել են իրենց մարմնական տաճարի մասին, որպեսզի մեզ համար հնարավորություն ստեղծեն ներկա գտնվելու այնտեղ:

Երբ դուք հյուրեր եք կանչում տուն, ձգտում եք նախապես կարգի բերել բնակարանը: Դուք հավաքում եք ոչ պետքական իրերը, մաքրում եք փոշին, լվանում եք հատակը: Շատ տարօրինակ է տեսնել, թե ինչպես են ձեզնից շատերը սպասում հրաշքի. սպասում են իրենց մեջ Բարձրագույն Վեհապետի ներկայությանը, կամ ցանկանում են հաղորդակցվել իրենց իսկ բարձրագույն մասի հետ, բայց և որևէ ջանք չեն թափում, որպեսզի մաքրեն իրենց մարմնական մտքերի փոշին և հավաքեն մարդկային ցանկությունների անպետք իրեղենը:

Մեր աշխարհները շատ ավելի մոտ են իրար, քան ձեզ թվում է: Եվ մեր աշխարհը միշտ բաց է ձեզ հետ հաղորդակցության համար: Ձեզ անհրաժեշտ է միայն համալարվել մեր թրթիռների հաճախականության հետ: Մենք պատրաստ ենք հաղորդակցվելու մարմնավորված մարդկանց հետ. ամբողջ հարցն այն է, թե պատրա՞ստ եք արդյոք դուք:

Թեև, չեմ թաքցնում՝ այն վայրերը, որտեղ դուք բնակվում եք, այնքան էլ պիտանի չեն մեր ներկայության համար: Իմ վերջին մարմնավորման ժամանակ, չնայած համարյա չէի այցելում խոշոր քաղաքները, այնուամենայնիվ ինձնից պահանջվում էին նշանակալի ջանքեր, որպեսզի վերականգնեմ իմ էներգիան, մարդկանց հետ շփվելուց հետո կարգի բերեմ իմ տաճարը, որպեսզի Բարձրագույն Էակների հաղորդակցությունն ինձ հետ հնարավոր դառնա:

Ես ապրում էի Հնդկաստանում: Բայց ես հնարավորություն ունեցա զննելու այն մարդկանց, ովքեր ինձ այցելում էին Եվրոպայից ու Ամերիկայից:

Նրանց գիտակցությունն ու մտակառույցը չափազանց շատ էին տարբերվում այն մարդկանց գիտակցությունից, որոնք ապրում էին Հնդկաստանում: Եվ հիմնական ուսուցումն ու գիտելիքը, որն ինձ վիճակվում էր տալ այդ մարդկանց, աստվածային զգացմունքն ու աստվածային զգացողությունն էր, որը ես նրանց էի հղում իմ դարշանների միջոցով: Աստվածայնությունն ու Շնորհը դուրս էի հորդում իմ չակրաներից: Եվ ներկաները հնարավորություն էի ստանում ճաշակելու Շնորհի այդ զգացմունքը:

Զարմանք էր հարուցում այն, թե ինչպես են հպարտ օտարերկրացիները փթթում իմ ներկայությամբ, ինչպես են մոռանում իրենց քաղաքակիրթ պրոբլեմները և վերադառնում պարզ կյանքին ու աստվածային հաղորդությանը:

Եթե մեզ հաջողվեր ներկա լինել ավելի մեծ թվով մարդկանց ներսում, որոնք նախապատրաստած կլինեն իրենց տաճարները մեր ներկայության համար, ապա դժվար չէ պատկերացնել, թե որքա՞ն կբարեփոխվեր մոլորակի իրադրությունը:

Շատերն այդ աստվածային կապն ուզում են

ձեռք բերել իրենց էգոյի ինքնահաստատման համար: Հետաքրքիր է դիտել, թե ինչպես է մարդը փորձում մի ձեռքով երկու խոշոր ձմերուկ բռնել:

Նա միաժամանակ և՛ ուզում է ստանալ աստվածային հաղորդություն, և՛ ուզում է հաստատել իր էգոն: Ի՞նչ եք կարծում. կարո՞ղ է այդպիսի մարդն աստվածային հաղորդություն ստանալ: Մարդը միշտ ստանում է այն, ինչին ձգտում է: Եվ եթե նա շատ է ուզում աստվածային հաղորդություն ստանալ, բայց կարգի չի բերել իր տաճարը, որպեսզի այն պատրաստ լինի Բարձրագույն Էակների գալստյանը, ապա նա կստանա հաղորդություն, միայն թե այնպիսի էակների հետ, որոնք համապատասխանում են իր իսկ գիտակցության մակարդակին: Կան շատ էակներ, որոնք հենց դրան են սպասում, որպեսզի իրենց ձեռքն ընկնի նման մեկը, որին ղեկավարեն կամ նրա միջոցով լուրեր տարածեն: Չէ՞ որ գիտեք՝ նմանն զնմանն գտանէ:

Ըստ այդմ՝ պահանջվում է, որ ձեր գիտակցության մեջ ամբողջովին հրաժարվեք ցանկացած մարդկային ցանկությունից և այն մտքերից, որոնք կապված են անձամբ ձեզ համար որևէ առավելություն ձեռք բերելու հետ:

Դուք պարզապես ձեր բոլոր թերություններն ու ձեր բոլոր անկատարությունները տալիս եք Աստծուն և ասում.

Տե՛ր, այո, ես կատարյալ չեմ, բայց ես սիրում եմ Քեզ, Տե՛ր: Օգնի՛ր ինձ: Օգնի՛ր ինձ, Տե՛ր: Ես կարոտել եմ Քեզ, կարոտել եմ Քո Շնորհին, Քո Սիրուն: Այս աշխարհում չկա ոչինչ, որ ինձ հրապուրի, Տե՛ր: Ես ուզում եմ միասնական լինել Քեզ հետ: Ես ուզում եմ կատարել Քո ամեն մի ցանկությունը: Ես կծառայե՛մ Քեզ: Ես կծառայեմ բոլոր կենդանի էակներին, որոնց մեջ Դու ներկա ես: Օգնի՛ր ինձ, Տե՛ր: Ես Քոնն եմ»:

Այդպիսի կոչից հետո, եթե այն անկեղծ է և ի սրտե, դուք կստանաք մեր օգնությունը: Սակայն մարդիկ մոլորվում են՝ կարծելով, թե իրենք անմիջապես Շնորհի կարժանանան և իրենց մարմնով կդառնան համակ կատարելություն: Ցավոք սրտի, այդ կոչով դեպի Աստված ձեր ուղին ընդամենն սկսվում է: Եվ ես կարող եմ ասել ձեզ, թե ինչ կհետևի այդ կոչին: Դուք կստանաք ձեր կարմայի արագացված վերադարձը: Կբախվեք իրավիճակների հետ ձեզնից դուրս՝ շրջապատի աշխարհում, և իրավիճակների հետ ձեր ներսում՝ հոգեբանական խնդիրների տեսքով, որոնք անդադար ամեն օր կհառնեն ձեր առջև: Դուք հնարավորություն կստանաք Աստծուն ապացուցելու, որ իրոք պատրաստ եք անել այն ամենը, ինչ խոստացել եք:

Եվ դեպի Աստված ձեր մղումը պետք է ձեզ օգնի՝ հաղթահարելու բոլոր փորձաքննություններն ու դժվարությունները, որքան էլ ծանր լինեն դրանք:

Դա աշակերտելու փուլն է: Այդ փուլը կարող է և անցնել առանց ձեր կողքին մարմնավորված Ուսուցիչ ունենալու: Ձեր աուրայում պարփակված էներգիաները լավագույն ուսուցիչ կլինեն ձեզ համար: Այդ էներգիաները կստեղծեն հենց այն իրավիճակները, որոնցով պետք է անցնեք, որպեսզի ապացուցեք, որ իրոք պատրաստ եք ձերբազատվել այն ամենից, ինչով կապված եք ձեր աշխարհին: Պարտադիր չէ, որ զրկվեք ամեն ինչից՝ ընտանիքից, աշխատանքից, տնից, ունեցվածքից: Բայց դուք պետք է հրաժեշտ տաք ձեր աշխարհի ամեն մի իրի հետ ունեցած ձեր կապվածությանը: Եվ դա վերաբերում է ոչ միայն այն իրերին, որոնք ձեռքով շոշափելի են, այլ նաև պետք է հրաժեշտ տաք այն ներքին խնդիրներին, որոնք ձեզ բնորոշ են և կյանքից կյանք ուղեկցում են ձեզ: Մեկի համար նախանձն է, մյուսի համար՝ քննադատումը, մեղադրելը, հաջորդի համար՝ ինքնախղճահարությունը: Չափազանց շատ են այն հատկանիշները, որոնց դուք պետք է հրաժեշտ տաք: Եվ դա ցավագին գործընթաց է: Որովհետև Երկրի վրա լինելու ամբողջ ընթացքում այդ հատկանիշները ներընձյուղվել են ձեր մեջ: Դա նման է ձեր մարմնի վրայից մաշկի մի կտոր պոկելուն: Սակայն դա ուրիշ ցավ է, հոգեկան ցավ, որը երբեմն ուղղակի անտանելի է լինում:

Եվ եթե հանդիպեք ուսուցչի, որը հանձն կառնի ձեզ ազատել ձեր կարմայից ու ձեր խնդիրներից՝ այդ ամենը վերցնելով իր վրա, ապա այդպիսի ուսուցչին երբեք մի՛ հավատացեք, անկախ այն բանից, թե դրամի համար է դա անում, թե ոչ: Ձեր խնդիրներին և ձեր կարմայական ուղեբեռին միայն ինքներդ կարող եք հրաժեշտ տալ: Արտաքին ուսուցիչը միայն կարող է ձեզ հուշել ձեր խնդիրների մասին, բայց ձեր փոխարեն այդ խնդիրները լուծել չի կարող: Ըստ այդմ՝ ես գալիս եմ, որ ձեզ զգուշացնեմ ձեր ուղու դժվարությունների մասին և ըստ կարելվույն ձեզ օգնեմ իմ խորհուրդներով:

Ես հասկանում եմ իրադրության բարդությունը, որում հայտնվել եք՝ հնարավորություն չունենալով երբեմն խորհուրդ ստանալ մարմնավորման մեջ գտնվող ճշմարիտ Գուրուից: Այնինչ ձեր հոգիները օգնության ու խորհրդի կարիք ունեն: Ուստի մենք էլ մեր հերթին ձգտում ենք ձեզ ցուցաբերել այդպիսի օգնություն և խորհուրդներ տալ:

Ըստ այդմ՝ մենք վաղ թե ուշ կհանդիպենք:

Երկինքն ու Երկիրը կհանդիպեն: Եվ դա տեղի կունենա ձեր տաճարի ներսում: Որովհետև Երկինք տանող Ուղին ձեր ներսում է: Եվ դուք կարող եք շրջել Երկրով մեկ՝ փնտրելով ճշմարիտ Գուրուի, դուք կարող եք դրա համար ծախսել ձեր բոլոր խնայողությունները և այդպես էլ ոչինչ չգտնել:

Իսկ իրականում Երկնքի դուռը գտնվում է ձեր ներսում: Եվ հիմա դուք ունեք այդ դռան բոլոր անհրաժեշտ բանալիները: Բայց այդ դուռը բացելու համար անհրաժեշտ վերջին ճիգն այնուամենայնիվ դուք ինքներդ պետք է գործադրեք: Ես ուրախ եղա մեր այսօրվա հանդիպման առիթով և կարծում եմ, որ այն ձեզ համար օգտակար եղավ:

ԵՍ ԵՄ Բաբաջին, ձեզ եմ առաքում իմ Սերը

ՏԵՐ ԿՐԻՇՆԱ

9 ապրիլի, 2005 թ.

ԵՍ ՏԱԼԻՍ ԵՄ ՁԵԶ ԻՄ ՄԱՆՏՐԱՆ

ԵՍ ԵՄ Կրիշնան, ձեզ այցի եմ եկել այս Դեսպանորդի միջոցով:

ԵՍ ԵՄ Կրիշնան, Տեր Կրիշնան: Ինձ գիտեն և պաշտում են Հնդկաստանում: Ինձ գիտեն նաև աշխարհի շատ երկրներում՝ շնորհիվ Տեր Կրիշնայի նվիրյալների:

Իրականում ես ամենուրեք եմ: Ես ձևի մեջ եմ և ձևազուրկի մեջ, ես գիտակցության մեջ եմ և Հոգու մեջ:

Նվաճումների իմ մակարդակը թույլ է տալիս ինձ միաժամանակ գտնվել շատ ձևերի մեջ: Ես Ամենաթափանց եմ:

Իմ կերպարն ամենից շատ տարածված է սրինգը ձեռքին հովիվ պատանու տեսքով: Ես իրոք ամենից շատ այդ կերպարն եմ սիրում, և հենց այդ տեսքով վերջին անգամ ես երկրային մարմնավորմամբ երևացի Վրինդավանում:

Ես իմ նվիրյալներին տվեցի Աստծո անունները փառաբանող մանտրա: Ես տվեցի այդ մանտրան, քանի որ իմ գալուց հետո սկսված Կալի-Յուգայի բոլորաշրջանի մարդկանց միտքն ունակ չէ ընկալելու վերամբարձ ուսմունքը: Միտքն անհանգիստ է ու անհնազանդ: Այդ պատճառով նրան անհրաժեշտ է զբաղեցնել Աստծո անունները փառաբանող մանտրաների անընդհատ ընթերցմամբ:

Երբ միտքը զբաղված է Աստծո անունները կրկնելով, նրան քիչ ժամանակ է մնում, որ մտածի ստորին բաների մասին և ապրի ստորին ցանկություններով:

Այդ մանտրաները, մանտրաների ընթերցման գործընթացը, թույլ են տալիս միտքը պահել սանձահարված և մարդու Բարձրագույն Ես-ին հնազանդ վիճակում:

Ես կամենում եմ, որ մոլորակի բոլոր մարդիկ վերադառնան Աստծո անունները փառաբանելու գործառությանը՝ որպես Աստծո մոտ հետ բերող ամենակարճ Ճանապարհի:

Դուք դառնում եք այն, ինչին ձգտում է ձեր միտքը: Եվ, եթե ձեր միտքը մշտապես կենտրոնացված է այն պատկերների վրա, որոնք քարոզվում են հեռատեսիլի էկրաններից ու գովազդային վահանակներից, ապա այդպիսի միտքը գամված կմնա այդ աշխարհին և ունակ չի լինի պոկվելու նրանից:

Աստծո անվան փառաբանման գործառությունն իրականացնելը հատուկ ջանքեր չի պահանջում: Պետք չէ դրա համար գնալ հատուկ պաշտամունքի կամ մասնակցել որևէ եկեղեցական արարողության, պետք չէ պատկանել որևէ եկեղեցական խմբի կամ եկեղեցական կազմակերպության: Այն ամենը, ինչ ձեզ անհրաժեշտ է, Աստծո անունները ճիշտ արտասանելն է և այդ անուններն արտասանելու ժամանակ մտքի ճիշտ վիճակ ունենալը: Մանտրաներն արտասանելիս դուք պետք է ամբողջությամբ կենտրոնացած լինեք Աստվածայինի վրա: Ձեր միտքը պետք է դադարի թափառել այն առարկաների և պատկերների միջև, որոնք ֆիզիկական աշխարհում ձեզ շրջապատում են:

Դուք պետք է մտածեք Աստծո և միայն Աստծո մասին:

Կարևոր չէ նույնիսկ, թե ինչ եք դուք անում մանտրաների ընթերցման ժամանակ: Կարող եք աման լվանալ, լինել հասարակական տրանսպորտում, աշխատել սեփական հողամասում, զբոսնել երեխաների հետ, լինել ձեր աշխատավայրում: Լավ կլինի, եթե այդ մանտրաները կարդաք բարձրաձայն. կարելի է և կիսաձայն, որպեսզի չխանգարեք շրջապատի մարդկանց, նաև կարող եք մանտրաներ կարդալ ներքուստ, որպեսզի կողմնակի ուշադրություն չգրավեք:

Միշտ հիշեք, որ այդ մանտրաները կարդում եք Աստծո համար, այլ ոչ թե նրա համար, որ տպավորություն ստեղծեք շրջապատի մարդկանց մոտ:

Որոշ նվիրյալներ անչափ շատ են կարդում Աստծո անունները: Նրանք ամբողջ օրեր են անցկացնում մանտրաներ կարդալով: Նրանք հատկապես սիրում են մանտրաներ կարդալ մարդկանց խիտ բազմության մեջ, որպեսզի բոլորը տեսնեն, թե

որքա՞ն եռանդուն են իրենք ծառայում Աստծուն: Մանտրաների այդպիսի ընթերցումը կբերի ուղիղ հակառակ ազդեցության, քանի որ էներգիան, Աստծո էներգիան այդ դեպքում ծախսվում է էգոյի, այլ ոչ թե Աստծո հետ կապի ամրապնդման համար:

Ես կտամ ձեզ իմ մանտրան:

Խնդրում եմ, գտե՛ք մարդկանց, ովքեր կարողանում են արտասանել այդ մանտրան, գտե՛ք մանտրայի ձայնագրությունը պարունակող հոլովակներ: Շատ կարևոր է, որ իմ մանտրաների այդ ձայնագրություններն ունենան ճիշտ աստվածային թրթիռներ: Ձեր սրտո՛վ զգացեք աստվածային թրթիռների իսկական լինելը:

Եթե ձեզ և ձեր մերձավորներին վրդովում է այն, որ դուք կարդում և փառաբանում եք Աստծո անունները ձեզ անծանոթ լեզվով, ապա մի՛ բռնացեք ինքներդ ձեզ վրա: Այդ դեպքում դուք կարող եք օգտվել ուրիշ գործառույթից, որը ձեզ հետ կբերի Աստծո մոտ:

Շատ են այն ճանապարհներն ու ուղիները, որոնք բերում են Աստծո մոտ: Գործնականում յուրաքանչյուրն ունի իր ուղին:

Բայց երբեք պետք չէ մոռանալ, որ շատ են նաև այն ճամփաներն ու արահետները, որոնք ոչ մի տեղ չեն տանում:

Իսկ եթե դուք ձեռքներդ ծալած նստեք և ոչ մի կողմ չգնաք՝ սպասելով հրաշքի, ապա, ամենայն հավանականությամբ, այդ հրաշքը տեղի չի ունենա:

Աստծուն անհրաժեշտ է, որ դուք գործադրեք ձեր սեփական ջանքերը: Եվ որքան շատ սեփական ջանքեր գործադրեք, այնքան վերից ավելի մեծ օգնություն կստանաք:

Ես տալիս եմ ձեզ իմ մանտրան: Խոստացե՛ք ինձ, որ կկարդաք իմ մանտրան այնքան, քանի դեռ ձեզ հաճույք է պատճառում դրա ընթերցումը:

Կարդացե՛ք իմ մանտրան տնային պարտականությունների կատարման ընթացքում: Օգտագործե՛ք ձեր ամեն մի ազատ րոպեն իմ մանտրայի ընթերցման համար:

Ես գիտեմ, որ շատ մարդիկ իրենց անցած մարմնավորումներով եղել են Հնդկաստանի հողում: Եվ նրանց համար մանտրաների ընթերցումը բնական պահանջ է: Բոլորից շուտ հենց այդ մարդիկ պետք է արձագանքեն իմ կոչին:

Վաղեմի կապ գոյություն ունի, որն իրար է կապում Հնդկաստանն ու Ռուսաստանը:

Վաղեմի ժամանակներում Հնդկաստան եկավ մի քաղաքակրթություն, որն ավելի բարձր զարգացած էր՝ համեմատած այն բնակչության հետ, որն այդ ժամանակ գոյություն ուներ Հնդկաստանում: Այդ քաղաքակրթությունը՝ այդ ժողովուրդը, եկավ հյուսիսից: Եվ շատերի համար անսպասելի կլինի, եթե ասեմ, որ այդ մարդիկ եկան այն տարածքից, որն այժմ զբաղեցնում է Ռուսաստանը: Ըստ այդմ՝ շատ ամուր կապ գոյություն ունի Հնդկաստանի Մայր Հողի և Ռուսաստանի Մայր Հողի միջև: Այդ երկու երկրները շատ մոտ են իրար, առաջին հերթին իրենց հարուստ հոգևոր ավանդույթներով:

Եվ ես հուսով եմ, որ Ռուսաստանը կվերհիշի իր վաղեմի պատմական արմատներն ու իր վաղեմի նախնիների հավատը, ովքեր զբաղեցրել են այդ երկրի տարածքը հինավուրց ժամանակներում:

Ռուսաստանի տարածքում տեղաբաշխված են եղել շատ տաճարներ ու բյուրեղներ: Այդ սրբություններն այժմ քուն են մտել մինչև իրենց ժամանակի գալուստը: Եվ այդ պատմական սրբությունները նորից կյանքի կկոչվեն այդ ազգի գիտակցության արթնացման հետ մեկտեղ. ամողջ ուժով կսկսեն գործել Լույսի այն կիզակետերը, որոնք մինչև իրենց ժամկետի վրա հասնելը թաքցված են անգետների աչքից:

Ես տալիս եմ իմ մանտրան և գիտեմ, որ այդ մանտրան ունակ է ձեր մեջ արթնացնելու պատմական հիշողությունն ու այն ընդհանուր արմատները, որոնք նույնիսկ առկա են ռուսաց լեզվի հիմքում:

ՀԱՐԵ ԿՐԻՇՆԱ ՀԱՐԵ ԿՐԻՇՆԱ
ԿՐԻՇՆԱ ԿՐԻՇՆԱ ՀԱՐԵ ՀԱՐԵ
ՀԱՐԵ ՐԱՄԱ ՀԱՐԵ ՐԱՄԱ
ՐԱՄԱ ՐԱՄԱ ՀԱՐԵ ՀԱՐԵ

Կրկնե՛ք այդ մանտրան սանսկրիտով:

Այս մանտրայի հնչողությունը կտա ձեզ ուժ, բերկրանք, առույգություն և վստահություն՝ ինքներդ ձեր, ձեր ապագայի և Ռուսաստանի ապագայի նկատմամբ:

ԵՍ ԵՄ Կրիշնան: Ես զգում եմ, որ դուք իմ օգնության կարիքն ունեք: Եվ ես կցուցաբերեմ այդ օգնությունը, եթե դիմեք ինձ:

Թող ձեզ չշփոթեցնի իմ արտաքինը և նրա տարբեր լինելը եկեղեցական այն պատկերներից, որոնց դուք սովոր եք երկրպագել:

Ոչ մի տարբերություն չկա իմ և Հիսուսի միջև: Մենք մի ամբողջություն ենք և Հոգու մակարդակի վրա կազմում ենք անբաժանելի Միասնություն:

Եվ իմ Կրիշնա անունը նույն իմաստն ունի, ինչ և Քրիստոս անունը:

Ամբողջ տարբերակումն ու բաժանումը գոյություն ունի միայն ձեր սահմանափակ գիտակցության մեջ և միայն այս պահին, շատ կարևոր պատմական պահին, երբ ձեր գիտակցությունն արթնանում է միլիոնավոր տարիներ տևած քնի վիճակից:

Եվ ես ուրախ կլինեմ, եթե ձեզնից որևէ մեկն օգտվի իմ խորհրդից և կարդա իմ մանտրան:

ԵՍ ԵՄ Կրիշնան, եկա, որ ձեզ փոխանցեմ
իմ սիրո մի մասնիկը

ՎԵՀԱՊԵՏ ՀԻԼԱՐԻՈՆ

10 ապրիլի, 2005 թ.

ՍԻՐՈ ԵՎ ԿԱՐԵԿՑԱՆՔԻ ՁԵՐ ՄԵՆ ՄԻ ԹՐԹԻՌՆ ՈՒՆԱԿ Է ՄԱՐԵԼՈՒ ԴԺՈԽԱՅԻՆ ԿՐԱԿԸ, ՈՐԻ ՄԵՋ ՎԱՌՎՈՒՄ ԵՆ ԱՅՍ ՄՈԼՈՐԱԿԻ ԲԱՋՄԱԹԻՎ ՀՈԳԻՆԵՐ

ԵՍ ԵՄ Հիլարիոնը՝ Հինգերորդ Ճառագայթի Վեհապետը, որ ձեզ այցի եմ եկել այս Դեսպանորդի միջոցով:

Եկել եմ, որպեսզի հայտնեմ ձեզ որոշ բաների մասին, որոնց կյանքում դուք բախվում եք և դրանց նշանակություն չեք տալիս, այնինչ, եթե դիտարկենք ավելի մանրամասն, դրանք շատ տարիներ առաջ կանխորոշում են աշխարհում ձեր լինելու կերպը: Ես եկել եմ ձեզ պատմելու այն մասին, թե ինչպես եք դուք ստեղծում ձեր ապագան: Եվ, հնարավոր է, այս տեղեկատվությունն ինչ-որ մեկի համար կթվա անիրական և անհարկի բարդացված, բայց և հնարավոր է, որ որոշներն արդեն ծանոթ լինեն սույն տեղեկատվությանը: Այնուամենայնիվ, ես կարծում եմ, որ միշտ օգտակար է անցածը վերհիշելն ու կրկնելը:

Այսպիսով, ես կուզենայի կանգ առնել տկարությունների վրա, հոգևոր և մարմնական այն տկարությունների, որոնք ծանրաբեռնում են ձեր ֆիզիկական և նուրբ մարմինները:

Մարդը շատ կարճ հիշողություն ունի, և, որպես կանոն, նրա համար շատ դժվար է նշմարել այն ուղղակի կապը, որը գոյություն ունի կյանքում նրա գործած արարքների և այդ արարքների հետևանքների միջև: Սակայն հատկապես հենց դա է կազմում Կարմայի Օրենքի կամ Հատուցման Օրենքի հիմքը, պատճառահետևանքային կապի օրենքի հիմքը, որն առկա է գործողության և այդ իսկ գործողության հետևանքի միջև:

Քանի-քանի անգամ է ինձ կամ հատկապես Մայր Մարիամին վիճակվել լսելու մարդկանց աղաչանքը, որ ամոքենք իրենց տկարությունները... Երբ լուրջ հիվանդությունը տիրում է մարդուն և վնասում նրա մարմնական տաճարը, ապա մարդը պատրաստ է դառնում մեծ զոհողությունների, որպեսզի ազատվի այդ հիվանդությունից: Նա իրենից դուրս փնտրում է բուժարարների, ովքեր ունակ կլինեն օգնելու իրեն:

Եվ երբ բժիշկների, բուժարարների և պայծառատեսների ամբողջ մի շարան, համապատասխան վարձատրություն ստանալով հանդերձ, անզոր տարածում է ձեռքերը, ապա վերջապես մարդն օգնության համար դիմում է Աստծուն և Համբարձյալ Դասերին: Գալիս է պահը, երբ բանականությունը մարդու մեջ գերակշռում է, և նա հասկանում է, որ իր հիվանդությունն ի վերուստ է տրված, և որ դրանից իրեն կարող է ազատել միայն Աստված: Եվ մարդն ուղի է փնտրում դեպի Աստված, պատրաստ է զոհեր մատուցելու ու կարդալու հսկայական քանակի աղոթքներ, որպեսզի բուժվի:

Հազվագյուտ մարդիկ են հասկանում, որ հիվանդություններն ու տառապանքներն առաջանում են ոչ թե չար ու վրիժառու Աստծո կողմից, այլ սեփական գործողությունների պատճառով, ընդ որում իրականացված ոչ միայն անցյալ կյանքերում, այլ նաև հենց ընթացիկ մարմնավորման ժամանակ:

Երբ դեռ երիտասարդ եք և ուժ ու եռանդով լի, շատ քիչ եք մտահոգվում ձեր արարքների հետևանքներով: Ձեզ բնական բան է թվում ձեր ուզածը ստանալը, եթե նույնիսկ հարկ է լինում այդ ընթացքում որևէ մեկին նեղացնել կամ լրջորեն վիրավորել:

Երբեմն որքա՜ն անհամարժեք է լինում ձեր ցանկությունը, որը ձգտում եք ամեն զնով բավարարել, այն վնասի հետ համեմատած, որն այդ ընթացքում դուք պատճառում եք ուրիշներին:

Եվ այսպես, ձեր առաջին և ամենագլխավոր թշնամին, երբեմն՝ ձեր միակ թշնամին, թաքնված է հենց ձեր ներսում: Դա ձեր մարմնական խելքն ու

ձեր անհագ ցանկություններին հագուրդ տալն է:

Եվ թվում է, թե վախենալու ոչինչ չկա, երբ դուք ձգտում եք բավարարել ձեր այդ ցանկությունները: Դա ձեզ այնպես բնական է թվում, հատկապես երիտասարդ ժամանակ: Եվ դուք որևէ նշանակություն չեք տալիս նույնիսկ այն բարոյականության ու պարկեշտության չափանիշների խախտումներին, որոնք թույլ եք տալիս ձեր ցանկությունները բավարարելիս: Իսկ այն վնասի մասին, որ պատճառում եք ուրիշներին, պարզապես չեք էլ մտածում:

Հնարավո՞ր է արդյոք ձեր անկշտում ցանկությունների առաջն առնել: Հնարավո՞ր է արդյոք վերջ տալ կյանքում անվերջ հաճույքներ ստանալու ձեր ձգտմանը:

Շատ քիչ են այն մարդիկ, ովքեր ունակ են դաս քաղել ուրիշ մարդկանց օրինակից և ինքնուրույն ուսում ստանալ՝ գրքեր կարդալով կամ գտնելով այն մարդկանց, որոնցից կարող են Իմաստություն քաղել: Իսկ նրանց համար, ովքեր ունակ չեն հասկանալու և ուսում առնելու, ուժի մեջ է մտնում Կարմայական Հատուցման Օրենքը:

Ձեր յուրաքանչյուր արարքը, որը չի համապատասխանում Աստծո Կամքին, բերում է նրան, որ Աստծո Էներգիան, որից դուք մշտապես օգտվում եք և առանց որի պարզապես չեք կարող գոյություն ունենալ, երանգավորվում է ձեր այդ անկատար գործողությամբ: Եվ որքան ավելի շատ եք կատարում այդպիսի անկատար գործողություններ, այնքան Աստծո Էներգիան ավելի ցածր թրթիռներ է ձեռք բերում: Այդ Էներգիան ոչ մի տեղ չի կորչում, այլ պահպանվում է ձեր աուրայում, ձեր զգացմունքային, մենտալային և եթերային մարմիններում:

Եվ այդ Էներգիան ծառայում է որպես մագնիս, որը շրջապատի արտաքին աշխարհից դեպի ձեզ է քաշում նմանատիպ Էներգիաներ: Այդ պատճառով, եթե դուք որևէ մեկին նեղացրել եք, ապա վաղ թե ուշ այդ Էներգիան դեպի ձեզ կքաշի կյանքի մի իրադրություն, որում ձեզ կնեղացնեն:

Ձեր աուրայում դուք կրում եք ձեր բոլոր անկատար արարքների գրառումները: Այդ գրառումները նման են ձեր աուրայի արատներին: Եվ եթե դուք չափազանց հաճախ եք թույլ տվել կարմայորեն պատժելի արարքներ, մտքեր և զգացմունքներ, ապա վաղ թե ուշ վրա է հասնում այդ բացասական թրթռումներով ձեր աուրայի հագեցումը: Եվ արդեն դուք ունակ չեք լինում բեռնաթափելու ձեր իսկ կուտակած կարման՝ կատարելով ճիշտ գործողություններ ու ճիշտ արարքներ այն ընթացքում, երբ մինչև ձեր մարմնավորման ավարտը ձեզ են վերադարձվում համապատասխան կարմայական իրավիճակները: Դա նշանակում է, որ չափազանց շատ բացասական էներգիա է կուտակվել ձեր աուրայում:

Ձեզ ասվել է, որ դուք այժմ ապրում եք բացառիկ ժամանակներում. տեղի է ունենում տիեզերական բոլորաշրջանների հերթագայություն, և սկսվում է նոր բոլորաշրջան:

Այն մարդիկ, ովքեր ծանրաբեռնված են չափազանց մեծ քանակի բացասական էներգիայով, կտկարանան և կզրկվեն կյանքում ակտիվ գործելու հնարավորությունից: Նրանց կմերժվի Աստծո Էներգիան և հնարավորություն չի տրվի աշխարհում բազմացնելու իրենց անկատարությունները: Որովհետև նա, ով ունի չափազանց շատ քանակի բացասական էներգիաներով ծանրաբեռնված աուրա, իրականում նման է բորոտի, որը անբուժելի հիվանդ լինելով, վտանգ է ներկայացնում շրջապատի համար: Պատճառն այն է, որ նրա աուրայում պարունակվող բացասական թրթիռներն ունակ են մակածելու նմանատիպ բացասական թրթիռներ բոլոր այն մարդկանց աուրաներում, որոնց հետ կյանքում նա շփվում է:

Համաձայն նմանության օրենքի՝ այդպիսի մարդիկ ձգում են իրար, և նրանք Երկիր մոլորակի վրա ստեղծում են գոտիներ, որոնք բորոտանոցներ են հիշեցնում: Եվ եթե բավականաչափ մաքուր աուրա ունեցող մարդը պատահաբար հայտնվում է այդպիսի գոտում, ապա իրեն զգում է ափ նետված ձկան պես:

Երբ մենք նայում ենք մոլորակին, ապա տեսնում ենք այդ գոտիները՝ այդ օջախները, որոնք իրենցից ներկայացնում են այն աստիճանի սեղմված ու խտացված բացասական էներգիաներ, որ նրանց միջով չի կարող անցնել ամոքիչ ճառագայթներից և ոչ մեկը, որոնք մենք անխոնջ կերպով առաքում ենք Երկիր:

Այն մարդիկ, ովքեր հենց իրենք են իրենց քշել այդ էներգետիկական բորոտանոցների մեջ, օգնության կարիք ունեն, ինչը կարող է նրանց ցուցաբերվել միայն դրսից:

Ըստ այդմ՝ մենք պարտաստ ենք համագործակցելու և օգտվելու յուրաքանչյուրի ծառայությունից, ով ունակ է պահպանելու իր թրթիռները բավարար չափով բարձր մակարդակի վրա, որպեսզի նրա միջոցով օգնենք այն մարդկանց, ովքեր, թվում է, հոգևոր առումով կատարելապես մեռած են, բայց վերջին հույսով իրենց հայացքը հառում են Երկնքին և անկեղծորեն խնդրում ու օգնություն աղերսում:

Մենք պատրաստ ենք օգնություն ցուցաբերելու, և մենք բոլորին օգնում ենք: Բայց այդ օգնությունը կարող է և չվերաբերել ֆիզիկական մարմնին, որն անդառնալի գործընթացների հետևանքով այլևս անհնար է վերականգնել: Մեր օգնությունն առաջին հերթին հասնում է մարդկանց հոգիներին: Մենք փորձում ենք պահպանել և բուժել նրանց հոգիները, որոնք, թեկուզև իրենց կյանքի ավարտին, իրենց հայացքը հառում են Երկնքին և անկեղծորեն օգնություն խնդրում՝ զղջալով իրենց կատարած բոլոր մեղքերի համար: Չկա որևէ մեղսավոր, որն ապագա չունենա: Բայց, արդարև, հնարավոր չէ փրկել նրան, ով չի ուզում ստանալ այդ փրկությունը:

Ըստ այդմ՝ օգնության հնարավորություն միշտ

գոյություն ունի: Չնայած երբեմն մենք զգում ենք անկեղծ սպասավորների պակաս, որոնք պատրաստ են զոհաբերել իրենց՝ հանուն մարդկության փրկության, հանուն բոլոր կենդանի էակների փրկության ու նրանց օգնելու:

Եվ այժմ ես դիմում եմ նրանց, ովքեր ունակ են ինձ հասկանալու, նրանց, ովքեր հասկանում են, թե ինչի մասին եմ խոսում:

Եկել է այն ժամանակը, երբ պայքար է գնում մարմնավորված յուրաքանչյուր հոգու համար:

Կան ուժեր, որոնք ձգտում են, որքան հնարավոր է, շատ հոգիներ պահել պատրանքի ոլորտում: Եվ կան ուժեր, որոնք պայքարում են ամեն մի հոգու համար, որպեսզի դուրս քաշեն նրան այն դժոխքից, ինչին վերածվել են Երկիր մոլորակի ֆիզիկական ոլորտի շատ վայրեր: Եվ երբեմն մի հանդիպումը, մի սիրող ու կարեկից հայացքը բավարար է լինում, որ չգոյության դատապարտված հոգին ձեռք բերի Հավատ, Հույս և Սեր:

Պահպանե՛ք հավասարակշռություն, պահպանե՛ք հոգեկան հանգստություն: Դուք մարտիկներ եք, որ գտնվում եք ձեր աշխարհում: Եվ Սիրո և Կարեկցանքի ձեր մեն մի թրթիռն ունակ է մարելու դժոխային այն կրակը, որի մեջ վառվում են այս մոլորակի բազմաթիվ հոգիներ:

ԵՍ ԵՄ Հիլարիոնը, դիմեցի մոլորակի բոլոր Ոգու մարտիկներին

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ

11 ապրիլի, 2005 թ.

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՔ ՁԵՐ ՏԱՃԱՐՆԵՐԸ ՄԵՍԻԱՅԻ ԳԱԼՍՏՅԱՆ ՀԱՄԱՐ



ԵՍ ԵՄ Հովհաննես Մկրտիչը: Ես էի, որ կանխագուշակեցի Քրիստոս-Մեսիայի գալուստը:

ԵՍ ԵՄ եկել: Ես եկել եմ՝ ձեզ պատմելու իմ ապրած կյանքերից մեկի պատմությունը: Նաև եկել եմ, որ որոշ խրատներ տամ ձեր ներկա կյանքերի վերաբերյալ:

Իմ մարմնավորումից հետո շատ բան է փոխվել Երկրի վրա: Շատ բան է փոխվել կյանքի միջավայրում՝ այն ամենի մեջ, ինչը կապված է մարդկանց կենցաղի, նրանց աշխատանքի հետ: Շատ նոր բաներ կան: Շատ նոր հայտնագործություններ, որոնք օգտագործվում են արտաքին աշխարհում:

Սակայն եթե անդրադառնանք մարդու աշխարհայացքին՝ Աստծո նկատմամբ և տիեզերքի կառուցվածքի նկատմամբ նրա տեսակետներին, ապա փոփոխություններն էական չեն: Այո՛, փոխվել է տերմինաբանությունը, շատ գիտական հայտնագործություններ են արված, որոնք բացահայտում են տիեզերքի կառուցվածքն ու ֆիզիկական աշխարհի օրենքները: Բայց միևնույն ժամանակ մարդու գիտակցությունն ինչպես կար, այնպես էլ մնացել է՝ ֆիզիկական աշխարհի արտաքին դրսևորումների, Աստծո արտաքին երկրպագության և արտաքին ծիսակատարությունների հետ կապված: Կարծես թե չի եղել այն 2000 տարին, որ անցել է իմ մարմնավորումից հետո:

Մարդը նախանձելի արագությամբ օգտագործում է ամեն մի գիտական հասկացություն և գիտական հայտնագործություն, որպեսզի դրանք կիրառի ոչ թե Աստծուն մոտենալու, այլ ինքն իրեն Աստծուց հեռացնելու համար:

Ձեզ առաջադիմական է թվում, երբ եկեղեցական ծառայության ժամանակ ժամանակակից ռիթմեր եք օգտագործում, ձեզ ժամանակակից եք երևակայում, երբ աշխարհակառույցի բացատրության համար օգտագործում եք գիտական տերմինաբանություն:

Ամեն մի գիտական հայտնագործություն, մարդկային գիտակցության ամեն մի նվաճում անմիջապես օգտագործվում է այն բանի համար, որ Աստծուց ավելի հեռանաք:

Աստվածային զգացմունքի պարզությունն ու աստվածային կյանքի պարզությունը ձեր կողմից սքողվում են բազմաթիվ ժամանակակից տերմիններով ու հասկացություններով:

Դուք օգտագործում եք տեխնիկական տերմինների մի ողջ զանգված, երբ դատողություններ եք անում Աստծո մասին:

Եթե դուք նույնքան ջանքեր գործադրեիք,

որպեսզի իրապես ավերեիք այն ամենը, ինչը ձեր գիտակցության մեջ ձեզ հեռացնում է Աստծուց, ապա կյանքը Երկրի վրա կփոխվեր, ինչպես կախարդական փայտիկի մի շարժումով:

Ժամանակակից հայտնագործությունների մեծամասնությունը անանցանելի պատնեշ է ստեղծում ձեր և Աստծո միջև:

Դուք գիտեք, որ իմ մարմնավորման ժամանակ ես ապրում էի անապատում: Ես սնվում էի վայրի մեղրով ու մարախով: Շատերն ինձ տարօրինակ էին համարում: Բայց միայն մարդկանցից ու նրանց ունայնությունից առանձնանալո՛վ էր, որ ես կարողացա մենության մեջ հաղորդակցվել Աստծո հետ: Եվ ես չէի փոխի իմ այդ հաղորդակցությունը մարդկային ոչ մի հարստության ու պատվի հետ:

Ես հազվադեպ էի շփվում մարդկանց հետ: Եվ հիմնական ուսմունքը, որ ես նրանց ուսուցանում էի, վերաբերում էր նրանց հոգիները մաքրելուն և մեսիայի գալստյանը պատրաստելուն: Մարդիկ այնպես էին ընկալում իմ խոսքերը, որ դա վերաբերում է արտաքին մեսիայի գալստյանը՝ մարդու, որը պետք է գա և փրկի իրենց փորձանքներից ու դժբախտություններից:

Սակայն ես ի նկատի էի ունենում ոչ միայն արտաքին մեսիայի գալուստը, այլ նաև ներքին մեսիայի գալուստը, որն առկա է յուրաքանչյուր մարդու ներսում: Եվ ես մարդկանց գիտակցությունը նախապատրաստում էի այդ մեսիայի գալստյան համար: Չեմ կարծում, թե մարդկանցից որևէ մեկը հասկացել էր, թե ինչի մասին էի ես խոսում: Այնուամենայնիվ մարդկանց գիտակցությունը փոքրինչ փոխվեց, և նրանք սպասում էին Քրիստոսի գալուստին: Եվ Նա եկավ ու պատվով կատարեց իր առաքելությունը:

Իմ քարոզի համար ես վճարեցի կյանքով: Ի տարբերություն մարդկանց մեծամասնության՝ կառավարող եկեղեցականները շատ արագ հասկացան, որ իմ ուսմունքը մարդկանց կողմից ընկալվելու դեպքում իրենց հոտին կշեղի արտաքին երկրպագություններ-ից ու արտաքին ծիսակատարություններից և կուղղորդի դեպի իրական մեսիան, դեպի իրե՛նց իսկ իրական մասը, դեպի իրենց մեջ Աստծո հետ ներքին հաղիպումը:

Եվ ստանալով այդ ներքին հաղորդությունը, առնչվելով իրե՛նց իսկ ներսի երանության հետ՝ մարդիկ այլևս չէին կարող հավատալ ո՛չ արտաքին կրոնի, ո՛չ էլ արտաքին ուսուցիչների:

Կարողանալով առնչվել աստվածային գիտակցության վիճակին՝ մարդիկ շատ արագ կմիավորվեին իրենց նմանների հետ: Աստվածային գիտակցության վիճակը նույնքան վարակիչ է, որքան այժմ մարդկանց մեծամասնության գիտակցության ոչ աստվածային վիճակն է վարակիչ:

Նուրբ ոլորտում մարդիկ իրար հետ սերտ կապի մեջ են: Եվ ամեն մի բարի միտք, բարի մտածողություն, որ ծագում է մի քանի գլուխներում ու սրտերում, ունակ է տարածվելու սրտից սիրտ, նման այն բանին, որ մի վառվող մոմով կարելի է վառել միլիոնավոր ուրիշ մոմեր:

Իհարկե, ես հնարավորություն չունեցա իմ ուսմունքը տալ մարդկանց մեծ քանակի: Ես ուսուցանեցի այն մի քանի հոգուն, ովքեր քաջություն ունեցան մոտենալու և լսելու ինձ: Մարդիկ վախենում էին ինձնից գիտելիք ստանալուց, որովհետև եկեղեցականներն ինձ հետ շփվելն արգելել էին: Ինձ համար դժվար էր գիտելիք տալ մարդկանց:

Տեսեք, թե որքան է հիմա ժամանակը փոխվել: Ես տալիս եմ այս թելադրությունը, և դուք նույն օրը հնարավորություն ունեք ծանոթանալու դրան՝ նույնիսկ գտնվելով երկրագնդի հակառակ կողմում: Սա իրոք մեծ հնարավորությունների ժամանակ է:

Նույնիսկ պետք չէ ծախսել մեր և ձեր ջանքերը, որպեսզի երկրագնդի որոշակի վայրում հավաքենք այն մարդկանց, ովքեր ունակ են ընկալելու մեր ուսմունքը: Մեր ուսմունքն ու մեր թրթիռները դուք ստանում եք այն օրհնյալ պարգևի շնորհիվ, որը մարդկությանը նվիրեց Սեն-Ժերմենը: Ես նկատի ունեմ համացանցը: Եվ սա համացանցի օգտագործման այն ոչ շատ դեպքերից մեկն է, որը շոշափելի օգուտ է բերում, և որի համար, ըստ էության, այդ հայտնագործությունը տրվել է ֆիզիկական ոլորտին:

Օրհնյա՛լ սրտեր, դուք հնարավորություն ունեք լսելու այն մեծագույն Լույսի Էակների ուսմունքները, ովքեր վերջին մի քանի հազարամյակի ընթացքում մարմնավորվում էին, որպեսզի ուսուցանեն մարդկությանը:

Դուք հնարավորություն ունեք այս թելադրությունների միջոցով ստանալու Աստծո Էներգիայի աննախադեպ հոսք: Եվ այդ թողության շնորհը՝ Երկնոլորտների այդ պարգևը, իրական դարձավ նոր հնարավորության շնորհիվ: Գնահատե՛ք այդ հնարավորությունը: Ըմպե՛ք Աստծո էներգիայի նեկտարը: Եվ հիշե՛ք. այդ էներգիայի ոչ մի կաթիլն իզուր չպետք է կորչի: Էներգիան տրվում է ձեզ բարի գործեր կատարելու համար: Ո՛չ նրա համար, որ պարզեք, թե ով է ձեզնից գլխավորը, և ով՝ ավելի աստվածային:

Դուք դա չեք կարող իմանալ ձեր մարդկային գիտակցությամբ: Ձեզնից մեծը նա է, ով բոլորից շատ է ծառայում կյանքին. ով ծառայում է բոլոր կենդանի էակներին՝ փոխարենը ոչինչ չպահանջելով: Որովհետև այս կյանքում չկա ոչինչ, որ արժանի լինի փոխարինելու աստվածային հաղորդության շնորհին, ամբողջ կյանքում Աստծուն ծառայելու հնարավորությանը:

Ըստ այդմ՝ օգտագործե՛ք ստացված Էներգիան իր նպատակի համար: Պատրաստեցե՛ք ձեր տաճարները մեսիայի գալստյան համար, թո՛ւյլ տվեք ձեր մեսիային՝ ձեր Բարձրագույն Ես-ին՝ ձեր Ես-Քրիստոսին գալ ձեզ մոտ, լինել ձեր մեջ, խոսել ձեզնով, գործել ձեզնով:

Օ՜, սիրելինե՛րս, ես երջանիկ եմ, որ պաշտելի Ալֆան ձեզ համար բացեց այս հնարավորությունն

այս դժվարին, բայց, հիրավի, այս մոլորակի համար օրհնյալ ժամանակում:

Ես ուրախ կլինեմ հանդիպել ձեզնից յուրաքանչյուրի հետ, ով կբարձրացնի իր թրթիռներն իմ մակարդակին, և ես կկարողանամ անձամբ գալ և զրուցել ձեզ հետ ձեր սրտում:

Պաշտելինե՛րս, օրհնյալնե՛րս, հավատացե՛ք ինձ. ամեն ինչ հենց այնպես կլինի, ինչպես կանխատեսված է: Ձեր աչքերը կբացվեն, և դուք կկարողանաք տեսնել մեզ, շփվել մեզ հետ, զբոսնել և զրուցել մեզ հետ:

Աստծո Աշխարհում չկա ոչ մի սահմանափակում: Դուք ինքներդ եք ստեղծել այդ սահմանափակումները ձեր գիտակցության մեջ, և եկել է ժամանակը, երբ վերջապես կարող եք ազատվել դրանցից:

Ես չեմ կարող զսպել ափեափ լցված իմ ուրախությունը, որը կապված է ձեզ ուղղակիորեն դիմելու հնարավորության հետ: Եվ ես գիտեմ, որ շատերը, շատ-շատերը նրանցից, ովքեր կարդում են այս թելադրությունները, արդեն պատրաստ են ինձ հետ հաղորդակցության:

Կարո՞ղ եք պատկերացնել, թե ինչպես կփոխվի աշխարհը, եթե յուրաքանչյուրը հնարավորություն ստանա հաղորդակցվելու Համբարձյալ Դասերի հետ: Իսկ դա կլինի՛: Վաղ թե ուշ կլինի՛: Եվ դա կլինի այնպես անխուսափելիորեն, ինչպես ձմեռվանից հետո գարուն է գալիս և հետո՝ ամառ:

ԵՍ ԵՄ Հովհաննես Մկրտիչը՝ Եղիա մարգարեն, և ես տալիս եմ ձեզ այս մարգարեությունը: Եվ իմ մարգարեությունն անպայման կիրականանա, և դուք նույնպես ձեր սրտերում այդ մասին գիտեք:

ԵՍ ԵՄ Հովհաննես Մկրտիչը

ՎԵՀԱՊԵՏ ԼԱՆՏՈ

12 ապրիլի, 2005 թ.

ԴՈՒՔ ՊԵՏՔ Է ԳՏՆԵՔ ՄԱՐՄՆԱՎՈՐՎԱԾ ԼՈՒՅՍ ԲՈԼՈՐ ՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԻՇԵՑՆԵՍ ԻՐԵՆՑ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԵՍ ԵՄ Լանտոն, ձեզ այցի եմ եկել այս Դեսպանորդի միջոցով:

ԵՍ ԵՄ եկել ձեզ հետ շատ կարևոր և պատասխանատու զրույց վարելու նպատակով, և այն այժմ ի կատար կածվի: Դուք գիտեք, որ երբ մենք գալիս ենք թելադրություն տալու, ձգտում ենք ձեր ուշադրությանը ներկայացնել տեղեկատվության մի նոր հատված, բայց սովորաբար մենք պարզապես արդեն հայտնի փաստերն ու տեղեկատվությունը ներկայացնում ենք մի նոր տեսանկյունով:

Այժմ ես պետք է ձեր ուշադրությանը ներկայացնեմ բոլորովին նոր տեղեկատվություն, և հնարավոր է, շատերի համար այդ տեղեկատվությունը թվա անսպասելի և չափազանց ֆանտաստիկական: Եվ այսպես, ես սկսում եմ: Դուք ինձ գիտեք՝ որպես Երկրորդ ճառագայթի Վեհապետի: Իսկ դա Իմաստության ճառագայթն է: Այդ պատճառով իմ գիտելիքը ձեզ կներկայացվի այդ ճառագայթի ներքո:

Պատկերացրեք մարդու, ով կարողացել է հավասարակշռել բազմահազար մարմնավորումների ընթացքում իր մարմիններում կուտակված բացասական կարման: Այդպիսի մարդու զգացմունքային, մենտալային, եթերային և ֆիզիկական մարմինները չեն պարունակում էներգիաներ, որոնք այդ մարդու կողմից սխալ դասակարգված լինեն Երկիր մոլորակի վրա գտնվելու իր ամբողջ բոլորաշրջանի ընթացքում: Ի՞նչ եք կարծում. ի՞նչ տեղի կունենա այդպիսի մարդու հետ:

Կարո՞ղ է նա արդյոք շարունակել գոյություն ունենալ ֆիզիկական աշխարհում, թե՞ նա պետք է անցում կատարի և շարունակի իր գոյությունն ավելի նուրբ աշխարհում:

Եվ կա՞ն արդյոք Երկրի վրա մարդիկ, ովքեր

կարողացել են հավասարակշռել ամբողջ կարման:

Հնարավոր է՝ դուք իրավացիորեն կնկատեք, որ, կարմայի հավասարակշռումից բացի, անհրաժեշտ է նաև իրագործել Աստծո Պլանը:

Իսկ յուրաքանչյուր անհատի համար նախատեսված Աստծո Պլանն ամբողջությամբ համաձայնեցված է ամբողջ Երկիր մոլորակի՝ Աստծո Պլանի հետ: Ուստի հնարավոր է, որ ձեզնից շատերն արդեն գլխի ընկան, որ, ամենայն հավանականությամբ, այդպիսի մարդը կմնա մարմնավորման մեջ: Աստծո Պլանն այն չէ, որ շատ մեծ նվաճումների հասած մեկ անհատը շարունակի ինքն իրեն կատարելագործել՝ բոլոր մյուս կենդանի էակներից և ամբողջ աշխարհակառույցից անկախ: Ըստ այդմ՝ եթե մարդը հավասարակշռել է իր անձնական կարման, դա դեռ չի նշանակում, թե նա անմիջապես անցում կկատարի:

Ընդհակառակը, այդպիսի մարդը շատ մեծ արժեք է ձեռք բերում Աստծո և Համբարձյալ Դասերի աչքում: Նա ավելորդ կարմայական ուղեբեռով չի ծանրաբեռնված, նրա չակրաները ձերբազատված են կարմայական աղբից և ամբողջ ծավալով սկսում են իրենց միջով անցկացնել Աստծո էներգիան:

Իհարկե, եթե անհատը ցանկություն ունի անցում կատարելու, ապա դա նրան չի մերժվում: Սակայն այն մարդը, ով 100 %-ով հավասարակշռել է իր անձնական կարման, դադարում է դատել անձնական չափանիշներով: Նա գիտակցում է իր Միասնությունն ամբողջ աշխարհակառույցի հետ, ինչպես և գիտակցում է իր լիակատար Միասնությունն Աստծո հետ: Այդ պատճառով նման մարդը կամավորապես հատկացնում է իր մարմինները աստվածային առաքելության կենսագործման համար:

Ձեզ հայտնի է, որ անձնական կարմայից բացի գոյություն ունի նաև ընտանիքի կարմա, քաղաքի կարմա, երկրի կարմա և համաշխարհային կարմա:

Մոլորակն իր ամբողջության մեջ գտնվում է շատ խիտ էներգիաների շրջապատում, կարծես կեղևապատված լինի բացասական էներգիայի շատ թանձր շերտով: Եվ ահա այդ բացասական էներգիայի կեղևն անհրաժեշտ է լուծման ենթարկել:

Իր կարման բեռնաթափած մարդը նուրբ մակարդակներում իր վրա պարտավորություն է վերցնում չեզոքացնել մոլորակի կարման: Տեխնիկապես ինչպե՞ս է դա տեղի ունենում:

Երբ առաջին աստվածային մաքրություն է ձեռք բերում, և չակրաներն անարգել աշխարհին են փոխանցում Աստծո էներգիա, ապա այդպիսի մարդն իր ազատ կամքով սկսում է իր առաջի մեջ ներառել և վերաձևափոխել շրջապատի աշխարհի բացասական էներգիաները: Փոշեծծիչի պես: Նա շփվում է մյուս մարդկանց առաջների կամ շրջակա տարածքում լողացող բացասական էներգիաների կուտակների հետ և իր չակրաների էներգիայի օգնությամբ սկսում է չեզոքացնել բացասական էներգետիկական թանձր սուբստանցիան: Նմանատիպ մարդիկ աշխարհին ծառայություն են մատուցում Քրիստոսի պես: Քանի որ այդ մարդկանց թրթիռները չափազանց շատ են տարբերվում շրջապատի աշխարհի թրթռանքից, ապա հենց միայն այդ շրջապատում լինելը նրանց կողմից ընկալվում է ինչպես մշտական, ամենօրյա խաչելություն:

Նրանք իրոք որ խաչված են Հոգու և մատերիայի միջև:

Այդ մարդկանց ներսում նրանց չակրաների օգնությամբ միանում են աշխարհները:

Դուք գիտեք, որ մարդու չակրաները ֆիզիկական մարմինը կապում են ավելի նուրբ մարմինների հետ: Այդ պատճառով, երբ չակրաները լրիվ մաքուր են, ապա մարդն իրենից ներկայացնում է աշխարհների միջև բաց դուռ:

Եվ ծառայությունը, որն այդ մարդը մատուցում է, հար և նման է այն ծառայությանը, որ մատուցեց Հիսուսը, երբ գտնվում էր մարմնավորման մեջ: Նրանք բոլորը կամավորապես իրենց զոհաբերում են՝ հանուն մյուս մարդկանց փրկության:

Հասկանո՞ւմ եք ինչի մասին եմ խոսում, պաշտելիներ: Մարդը կամովին ընտրում է այդ աշխարհի թանձր էներգիայի շրջապատում լինելը: Իսկ քանի որ այդ մարդկանց թրթիռները չափազանց շատ են տարբերվում շրջապատի աշխարհի թրթռանքից, ապա հենց միայն այդ շրջապատում լինելը նրանց կողմից ընկալվում է ինչպես ամենօրյա խաչելություն: Եվ դա իսկապես խաչելություն է: Այդպիսի մարդն իր վրա է վերցնում աշխարհի կարման, աշխարհի մեղքերը: Նա մեղքերը ներառում է իր մարմնի մեջ և վերամշակում է այդ մեղքերը՝ այդ համաշխարհային կարման, շնորհիվ աշխարհին մատուցվող ծառայության, շնորհիվ բոլոր կենդանի էակներին ծառայելուն:

Ես այսպես մանրամասն նկարագրում եմ այդպիսի մարդու ծառայությունը, որովհետև ձեզնից շատերը նմանատիպ ծառայություն են մատուցում աշխարհին, բայց, հնարավոր է, ոչ բոլորն են գիտակցում իրենց այդ ծառայությունն իրենց արտաքին գիտակցությամբ, արթմնի գիտակցությամբ, ֆիզիկական խելքով:

Մարմնավորված յուրաքանչյուր իսկական լուսակիր կատարում է իր ծառայությունն օրվա մեջ 24 ժամ՝ չունենալով ոչ քուն, ոչ հանգիստ:

Քանզի ձեզնից շատերը շարունակում են իրենց ծառայությունը նաև քնի ժամանակ՝ նուրբ մարմնով հայտնվելով աստեղային ոլորտում և մաքրելով այդ ոլորտը բացասական էներգիաներից: Եվ այդ գիշերային աշխատանքի ընթացքում ձեր նուրբ մարմիններն իսկական վերքեր են ստանում: Եվ դուք, առավոտյան արթնանալով, չեք հիշում ձեր գիշերային սխրանքների մասին, բայց ձեզ զգում եք ջարդված ու թույլ, քանի որ բուժարար հրեշտակները երբեմն չեն հասցնում ձեր գիշերային քնի ընթացքում օգնություն ցուցաբերել ձեր նուրբ մարմիններին:

Կուզենայի, որ դուք տեղյակ լինեք ձեր եղբայ-

բակիցների և ձեր իսկ ծառայության մասին: Անգնահատելի է ձեր ծառայությունն Աստծո աչքում և Համբարձյալ Դասերի աչքերում:

Եվ ես նույնիսկ անհարմար եմ զգում, որ խնդրեմ ձեզ՝ լրացուցիչ բեռ վերցնել: Շատ քիչ են մարմնավորված Լույսի մարտիկները: Շատերն էլ մոռացել են իրենց մարտական պարտքը և տրվել այդ աշխարհի հմայքներին: Նրանք մոռացել են, թե ինչի համար են մարմնավորվել:

Այդ պատճառով, ես խնդրում եմ ձեզ գտնել այդ Լույսի մարտիկներին և հիշեցնել նրանց իրենց ծառայության մասին, որը մարմնավորվելուց առաջ նրանք պարտավորվել են կատարել: Գտեք նրանց, տվեք, թող կարդան այս թելադրությունները, զրուցեք նրանց հետ: Դա կարող է լինել և՛ մասնավոր զրույց, և՛ հրապարակային դասախոսություն: Ձեզնից յուրաքանչյուրն ինքը գիտե, թե ինչ պետք է անել: Բայց դուք պետք է գտնեք բոլոր այն Լույսի մարտիկներին, որոնք գտնվում են մարմնավորման մեջ, և նրանց հիշեցնեք իրենց առաքելության մասին:

Ես իմ երախտագիտությունն եմ ուզում հայտնել ձեր ծառայության համար: Եվ ես խոնարհվում եմ ձեր մեջ գտնվող Աստծո Լույսի առջև:

ԵՍ ԵՄ Լանտոն

ՄԵԾՆ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՈՒՂՂՈՐԴԻՉ

13 ապրիլի, 2005 թ.

ԱՍՏԾՈ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՄՇՏԱՊԵՍ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ

ԵՍ ԵՄ Մեծն Աստվածային Ուղղորդիչը: ԵՍ ԵՄ եկել այս դեսպանորդի միջոցով:

Ձեզ երևի տարօրինակ է թվում, որ այսքան շատ Համբարձյալ Էակներ այսքան կարճ ժամանակահատվածում իրենց թելադրություններն են տալիս ձեզ: Պետք է ձեզ վստահեցնեմ, որ դրա մեջ ոչ մի տարօրինակ բան չկա: Համբարձյալ Դասերն ուզում են հաղորդակցվել մարդկության հետ և դրա համար օգտագործում են յուրաքանչյուր ընձեռված հնարավորություն: Եվ մենք կշարունակենք դա անել, քանի դեռ ձեր ֆիզիկական աշխարհում չի փոխվել այն իրադրությունը, որը կապված է այս թելադրությունների ընդունման հետ:

Պետք է նաև ձեզ ասեմ, որ իրականում թելադրության ամեն մի փոխանցում մեր կողմից մանրազնին պլանավորվում է. մենք ձգտում ենք վերանայել ու տալ հենց այն տեղեկատվությունը, որն ամենաշատն է համապատասխանում Երկրի ընթացիկ իրավիճակին:

Ընդ որում մենք նաև հաշվի ենք առնում դեսպանորդի գիտելիքների ծավալը և կապուղու բնական սահմանափակումները: Օրինակ՝ մենք չենք կարող տալ տեղեկատվություն, որը չի ընդունում Դեսպանորդի արտաքին գիտակցությունը՝ իրեն հատուկ սահմանափակումների պատճառով: Սակայն կարող եմ վստահեցնել, որ մենք տալիս ենք այն ամբողջ տեղեկատվությունը, որը հնարավոր է տալ տվյալ ֆիզիկական հաղորդչի միջոցով:

Այժմ ես կուզենայի անցնել որոշակի նոր տեղեկատվության հաղորդմանը: Պատկերացրեք անոթ, որը բերնեբերան լցված է: Եթե անոթը լիքն է, ապա դուք չեք կարող նրա մեջ որևէ լրացուցիչ բան տեղավորել:

Ըստ այդմ՝ մեր ու ձեր խնդիրն ու այս թելադրությունների նպատակներից մեկն այն է, որ ձգտենք ազատել ձեր անոթների ծավալը նոր տեղեկատվության ընկալման համար:

Ձեր ֆիզիկական ուղեղը, ի տարբերություն ձեր աստվածային բանականության, չափազանց սահմանափակ է: Եվ եթե ձեր ֆիզիկական ուղեղում որևէ հարցի մասին տեղեկություն կա, ապա դուք չեք կարող այդ նույն հարցի մասին այնպիսի տեղեկատվություն ընկալել, որը մի փոքր այլ բովան-

դակություն ունի: Ահա հենց դա է մարդկային գիտակցության հետ աշխատելու ողջ դժվարությունը:

Եթե դուք տեղեկատվություն եք ստացել մի աղբյուրից, որին հեղինակավոր եք համարել, և հետո ձեզ տեղեկատվություն է հասնում մի այլ աղբյուրից, որը ձեզ համար նոր է և այդ նույն տեղեկատվությունը տալիս է մի փոքր այլ կերպ կամ լրիվ հակառակ իմաստով, ապա, ամենայն հավանականությամբ, դուք կմերժեք նոր աղբյուրի տեղեկատվությունը:

Իսկ դա այնքան էլ վատ բան չէ: Եթե հալած յուղի տեղ ընդունեիք ամեն մի արտաքին աղբյուրից եկած ամեն մի տեղեկատվություն, ապա ձեր աշխարհում պարզապես չէիք կարողանա գոյատևել: Ձեզ կվիճակվեր ձեր արտաքին գիտակցության մեջ միաժամանակ պարփակել իրար հակադիր, իրարամերժ տեղեկություններ:

Մարդկության էվոլյուցիոն զարգացման որոշակի փուլում տիրապետող են լինում որոշակի ճշմարտություններ, որոնք աստիճանաբար փոխարինվում են այլ ճշմարտություններով: Նման աստիճանական ձևով տեղի է ունենում մարդկային գիտակցության էվոլյուցիան՝ բացառելով հարկադրանքի ուղին:

Ամենամեծ խնդիրը, որին մենք բախվում ենք՝ գործ ունենալով մարդկային գիտակցության հետ, հենց այդ սահմանափակությունն է և հեղինակավոր աղբյուրից նախապես ստացած տեղեկությունը որպես դոգմա ընդունելու ձեր հակումը:

Եվ ամեն անգամ, երբ մենք ձեռնամուխ ենք լինում նոր տեղեկատվության շարադրմանը, մենք դա անում ենք շատ նրբանկատորեն՝ ձգտելով չառաջացնել անջատում ու անհանդուրժողականություն, որոնք իրենց հետ բերում են շատ բուռն հակազդեցություն և բացասական հույզերի չափազանց մեծ տարածական բռնկում:

Ես ձեզ առաջարկում եմ մի փոքր այլ կերպ նայել հրեշտակների անկման հարցին: Հավանաբար հիշում եք, թե այդ հարցն ինչպես է շարադրված այն գրքերում, որոնք ձեզ մատուցվել են նախորդ դեսպանորդների միջոցով: Անձամբ ես հղել եմ հրեշտակների անկման հետ կապված որոշակի մտքեր, որոնք տեղ են գտել արևմտյան աշխարհում լայնորեն տարածված Ուսմունքի մեջ:

Դժվար է ասել, թե ինչու մարդկանց այդքան սրտամոտ դարձավ այդ Ուսմունքը: Պետք է ենթադրել, որ մարդկային գիտակցությանը շատ սրտամոտ է Աստծո և նրա Օրենքների դեմ խռովության գաղափարը: Չափազանց գայթակղիչ բան է սեփական էությանը բնորոշ թերություններ վերագրել նաև Բարձրագույն Ուժերին: Արդյոք այն պատճառով չէ՞ հրեշտակների խռովությունն այդքան լայն տարածում գտել արևմուտքում, որ այդ գաղափարը շատ սրտամոտ է ժամանակակից մարդուն. կարելի է դրանով արդարացնել սեփական վարքագիծը՝ մտաբերելով, որ նույնիսկ հրեշտակներն են Երկնքում խռովություն բարձրացնում:

Մինչև այժմ թելադրություններում մենք աշխատում էինք շրջանցել այդ թեման, և եթե հիշատակում էինք դրա մասին, ապա միայն ընդհանուր գծերով, որոնք վերաբերում էին երկու սկիզբների՝ երկու ուժերի պայքարին, որոնցից մեկը բազմապատկում է պատրանքը, իսկ մյուսը ձգտում է վերադառնալ Աստծո նախասկզբնական, չդրսևորված Արարչությանը: Պետք է ձեզ ասեմ, որ հրեշտակների անկման առասպելն այն տեսքով, ինչպես այն շարադրված է արևմուտքում տարածված շատ ուսմունքներում, պարզապես արտահայտում է Տիեզերական մի Օրենք, համաձայն որի՝ անփոփոխ պահանջ է դրված Լույսի բարձրագույն Էակների առջև, որ նրանք տիեզերական էվոլյուցիայի որոշակի փուլում պետք է մարմնավորվեն մարդկանց մեջ: Կյանքի բարձրագույն ձևը, որը ֆիզիկական ձևից իր վերջնական ազատագրմանն է հասել տիեզերական նախորդ բոլորապտույտների ընթացքում, որոշակի փուլում պարտավոր է վերադառնալ ֆիզիկական ոլորտում էվոլյուցիոն զարգացման ավելի ցածր աստիճանի վրա գտնվող մարդկանց մարմինների մեջ, որպեսզի դրանց հաղորդի աստվածային կայծ, աստվածային բանականություն և աստվածային ներըմբռնողականություն:

Դրսևորված Ֆիզիկական աշխարհը չի կարող բարձիթողի վիճակով գոյություն ունենալ համայն Արարչությունից առանձին: Այնտեղ գերակշռող քաոսի ուժերի ազդեցության պատճառով այն մշտական հոգածության ու խնամքի կարիք է զգում դրսևորված տիեզերքի ավել բարձր աշխարհների կողմից:

Մարդկանց մարմինների մեջ Հրեշտակների իջնելու գործընթացը էվոլյուցիոն զարգացման անհրաժեշտ փուլն է: Այն կարելի է համեմատել խմոր հունցելու հետ: Եթե խմորն ինչ-որ պատճառով որակյալ չի ստացվել, ապա դուք լրացուցիչ հունցում եք այն: Ջու կամ յուղ եք ավելացնում, որպեսզի որակը բարձրացնեք: Այդպես էլ մարդիկ ավելի բարձր ունակություններով են օժտվում, երբ ավելի բարձր փուլի ներկայացուցիչ հանդիսացող Էակների մասնիկներն իջնում են նրանց մարմինների մեջ:

Եվ այդ գործընթացը, որ մարդը դառնա ավելի աստվածանման՝ ավելի մոտ իր նախասկզբնական աստվածային էությանը, մշտապես շարունակվում է:

Այս թելադրություններում ձեզ մի քանի անգամ ասվել է, որ յուրաքանչյուր մարդ, ով արդեն նախապատրաստել է իր ֆիզիկական տաճարը, Լույսի Էակների ներկայության տեսքով լրացուցիչ Լույս է ստանում իր տաճարի ներսում՝ այդ նպատակի համար հատկացված ֆիզիկական հաղորդչի միջոցով:

Մենք ձգտում ենք ներկա գտնվել Երկրի մարդկանց մեջ, և դրա համար օգտագործում ենք մեր լրացուցիչ ներկայության ամեն մի հնարավորություն: Այստեղ ազատ կամքի օրենքի որևէ խախտում չկա, քանի որ մեզ հետ հաղորդակցվելուն պատրաստ մարդը հաճույքով է իր տաճարը տրա-

մադրում մեր ներկայությանը: Եվ, ըստ էության, իրականացվում է այն մտահղացումը, որ դուք ծառայեք մեզ՝ որպես մեր ձեռքերն ու ոտքերը: Ճիշտ նույն կերպ միլիոնավոր տարիներ առաջ տեղի է ունեցել Հրեշտակների կամ բարձրագույն Լույսի Էակների իջնելը մարդկանց մարմինների մեջ. ներթափանցելով Բարձրագույն մարմնի կամ Ես-Քրիստոսի կազմի մեջ՝ Լույսի Էակները մարդկանց օժտել են բանականությամբ:

Ես այսօր այլևս չեմ ուզում կենտրոնացնել ձեր ուշադրությունն այս նյութերի վրա: Քանզի կանխազգում եմ, որ այս տողերը կարդացողներից շատերը չափազանց բուռն հակազդեցությամբ կարձագանքեն դրանց: Իմ ասածները բավարար են, որպեսզի արթնացնեն ձեր գիտակցությունը և նրան նոր ազդակ հաղորդեն Աստծո Ճշմարտությունը ճանաչելու հարցում:

Մի՛ կարծեք, որ դուք միանգամից հասու կլինեք Աստծո ողջ Ճշմարտությանը:

Կանցնեն որոշակի քանակությամբ տարիների ևս, և մարդկության կողմից այդքան դժվարությամբ յուրացված ճշմարտությունը հարկ կլինի փոխել մի ուրիշ ճշմարտությամբ, որը մարդու բանականությունն ավելի կմոտեցնի Աստծո Ճշմարտությանը:

Եվ Աստծո Ճշմարտության ճանաչման այս գործընթացն անընդհատ կկայանա: Ձեզնից պահանջվում է միայն Աստծո Ճշմարտությունը ճանաչելու մշտական ցանկություն ունենալ, ձգտել նրա իմացությանը և ձերբազատվել այն բոլոր դոգմաներից, որոնց մարդկային գիտակցությունն այնպես արագ է կառչում, որ այդ դոգմաներից ազատվելը չափազանց դժվար է լինում՝ երբեմն զգալի ցավ պատճառելով և առաջացնելով մարդկային էակի էգոյի անհանդուրժողականություն:

Մտորեք այն մասին, որ այն զգացումը, թե իբր ամբողջովին տիրապետել եք Աստծո Ճշմարտությանը, ըստ էության, ձեր էգոյի դրսևորումն է: Մի՞թե սահմանափակ գիտակցության մեջ կարող է պարփակվել Աստծո անսահման Ճշմարտությունը:

Ես այսօր ձեզ շատ նոր գիտելիքներ տվեցի և ձգտեցի դա անել առավելագույնս մեղմ ձևով, որպեսզի ձեր աուրայում չափազանց մեծ մենտալային և զգացմունքային բռնկումներ չլինեն:

ԵՍ ԵՄ Մեծն Աստվածային Ուղղորդիչը,
ձեզ հետ եղա այսօր

ՎԵՀԱՊԵՏ ՆԻԿՈԼԱՅ ՌԵՐԻԽ

14 ապրիլի, 2005 թ.

ԱՎԱՐՏՎԵՑ ԽԱՎԱՐ ԺԱՄԱՆԱԿԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

ԵՍ ԵՄ Նիկոլայ Ռերիխը. համբարձյալ վիճակից ձեզ այցելել եմ այս դեսպանորդի միջոցով:

Ուրախալի է գիտակցել, որ մեր հանդիպումը կայացավ:

Համբարձյալ Դասերի կողմից շատ ջանքեր են գործադրվել, որպեսզի Ռուսաստանի հողում դեսպանորդի ներկայությունն իրողություն դառնա:

Դուք գիտեք, որ իմ մարմնավորման ընթացքում մենք շատ անգամ ենք փորձել վերադառնալ Ռուսաստանի հողը: Եվ ամեն անգամ մի շարք պատճառներով դա անհնարին էր դառնում, իսկ ամենագլխավոր պատճառը խավարի ուժերի հսկայական դիմադրությունն էր, որոնք զավթել էին Ռուսաստանը և խոչընդոտում էին այդ երկրում ներկա գտնվելու մեր ամեն մի հնարավորությունը:

Ձեզ հայտնի է, թե որքան կարևոր է այնպիսի երկրի տարածքում, ինչպիսին Ռուսաստանն է, ունենալ Լուսատու՝ Լույսի կիզակետ, որն ամրացված է մարմնավորված մարդու սրտում:

Ձեզ հայտնի է, թե որքան դժվար է եղել Ռուսաստանում Լույսի այդպիսի կիզակետ ստանալը:

Հիրավի, սա Լույսի ուժերի վիթխարի հաղթանակն է: Դուք նույնիսկ չեք կարող պատկերացնել թե որքան կարող է փոխվել Ռուսաստանի ապագան, եթե ձեզ հաջողվի պահել այս Լույսի կիզակետը, պաշտպանել այն և այդ Լույսի կիզակետից

վառել շատ այլ Լույսի կիզակետեր ինչպես Ռուսաստանի տարածքում, այնպես էլ մերձավոր երկրների տարածքներում:

Մենք ուրախ ենք: Երկնոլորտներն ուրախ են: Երկինքը ցնծում է...

Այս կիզակետի ամրագրումը պատահական չէր. դա վերջին մեկուկես հարյուրամյակի տաժանակիր աշխատանքի արդյունքն է:

Դուք գիտեք, որ Մեծ Սպիտակ Եղբայրության և ոչ մի դեսպանորդ չի կարողացել երկար ժամանակով մնալ այդ մեծ երկրի տարածքում: Կարո՞ղ եք պատկերացնել, թե որքա՞ն ջանքեր են գործադրվել, որպեսզի ձեզ հնարավորություն տրվի ստանալու այս թելադրությունները:

Իրապես, այս իրադարձության ողջ նշանակությունը միանգամից չի յուրացվի լուսակիրների գիտակցության կողմից:

Ինչպես գիտեք, Ռուսաստանի տարածքում անցյալ դարի 20-ական թվականների մեր կարճատև ներկայության ժամանակ երկու անգամ անցել ենք Օմսկով: Առաջին անգամ՝ Մոսկվա գնալու ճանապարհին, և երկրորդ անգամ՝ երբ հետդարձի ճանապարհով լքում էինք Ռուսաստանը:

Սակայն շատ քչերը գիտեն, որ Օմսկում լինելու ընթացքում մենք այնտեղ հիմնեցինք Լույսի կիզակետ՝ լուսային էներգիայի բյուրեղ, որն այս ամբողջ ընթացքում գործում էր նուրբ ոլորտում:

Այդպիսով մենք նախապատրաստեցինք ուղին: Դուք գիտեք, որ այս դեսպանորդը ծնվել ու իր ամբողջ կյանքն ապրել է Օմսկում, և նա չէր կարող նուրբ ոլորտում օգնություն չստանալ մեր Լույսի կիզակետից՝ այն բյուրեղից, որն այդ վայրում մենք տեղադրել էինք մոտ հարյուր տարի առաջ:

Այդպես է կերտվում պատմությունը, այդպես են Երկրի վրա հերթագայում իրադարձությունները: Մենք չունեինք ոչ մի երաշխիք, որ այդ փորձը կհաջողվի, այլ ոչ թե կրկին կկասեցվի, ինչպես նախկինում կասեցվել էին Ռուսաստանում ապրող մարդկանց ֆիզիկական տաճարներում Եղբայրության կողմից կիզակետ ամրացնելու բոլոր փորձերը:

Ես այսպես մանրամասնորեն տեղեկացնում եմ ձեզ այս մասին, որպեսզի դուք համակվեք բացվող հնարավորության վիթխարիությամբ: Ֆիզիկական ոլորտում տեղի ունեցող ո՛չ ամեն ինչն է, որ արտացոլում է այն, ինչ տեղի է ունենում նուրբ ոլորտում: Իսկ նուրբ ոլորտում վաղուց է կառուցված Նոր Ռուսաստանը: Այն կառուցվել է Մայր Ռուսաստանի լավագույն որդիների ու դուստրերի ջանքերով: Որքա՞ն տաճարներ, որքա՞ն հոյակապ նախագծեր կան Ռուսաստանի եթերային ոլորտում: Եվ այդ աստվածապարգև նախագծերի հղացումները պատրաստ են իջնելու ֆիզիկական ոլորտ: Սակայն խավարը թանձր է լինում լուսաբացից առաջ:

Ռուսաստանը նախանձելի կայունությամբ, ինչպես չսանձված ձի, իր վրայից միշտ դեն է նետել Լույսի ուժերի կարևոր առաքելությունները: Նա ընտրել է դժվարին ուղի: Բոլոր այս տարիներին Ռուսաստանի տարածքի վրա ծանրացած էր միլիոնավոր կենսահոսքերի հեծեծանքը, որոնք լրիվ ծավալով ստացել էին Աստծո Կամքին հակառակվելու իրենց կարմայական հատուցումը:

Սպառվե՞ց ժողովրդի համբերությունը: Հասավ հանգրվանին: Որքան էլ դեսուդեն փախչեք, միևնույնն է, հնարավոր չէ խույս տալ այս երկրի համար Աստծո Պլանից: Եվ հասել է մտահղացման իրականացման ժամկետը:

Տիեզերական հնարավորության իրագործման ժամկետն այս երկրի համար վրա է հասել: Եվ այժմ մարմնավորման մեջ են գտնվում հատկապես նրանք, ովքեր պետք է եթերային հղացումներն իջեցնեն Ռուսաստանի ֆիզիկական ոլորտ:

Դուք գիտեք, որ միայնակ միշտ էլ դժվար է լինում բարձրանալ աննվաճ գագաթը: Բայց երբ մեկը բարձրանա, ապա մյուսները կկարողանան օգտվել առաջինի օգնության ձեռքից և նրա օրինակից և ի վերջո իրենք նույնպես կհասնեն աստվածային գիտակցության գագաթին:

Հե՛յ, Ռուսա՛ց երկիր, մի՞թե հասել է քո ժամանակը: Ինչպե՞ս չի հասել, երբ ահա եկել է...

Դեռևս առջևում շատ կան անսպասելի շրջադարձեր, շատ վտանգավոր վերելքներ և ուղղաձիգ ժայռեր, բայց Ռուսաստանի լուսակիրներն արդեն հասել են այն կետին, որտեղից տեսանելի է դեպի գագաթ տանող ուղին:

Եվ աշխատանքի այն փուլը, որն առջևում է՝ կապված Աստծո Մտահղացումը ֆիզիկական ոլորտ իջեցնելու հետ, ձեզնից կպահանջի ներդնել բոլոր ուժերն ու ընդունակությունները:

Ավարտվե՞ց խավար ժամանակը Ռուսաստանի համար: Եվ դուք ձեր սրտերում արդեն իսկ զգում եք վրա հասնող վաղվա օրը: Ռուս մարդկանց սրտերի խորքում միշտ հավատ է եղել դեպի այն պայծառ ապագան, որը պետք է գա: Ռուս մարդիկ իրենց սրտի խորքում միշտ հավատացել են հրաշքի, որով կփրկվի Ռուսաստանը: Եվ շատ անգամ Ռուսաստանը հենց հրաշքով է փրկվել:

Եվ ահա գալիս է նոր հրաշքների ժամանակը:

Ձեր սրտերով, ձեր ուղեղներով, ձեր ձեռքերով ու ոտքերով կկառուցվի Ռուսաստանի Ոսկեդարը: Այդ երկիրը միշտ հատուկ դիրք է գրավել մյուս երկրների շարքում և միշտ զարմացրել է իր անկանխատեսելիությամբ: Եվ այդ ժողովրդի լավագույն ներկայացուցիչների ուղեղներում միշտ առկա է եղել հույսն այն առանձնահատուկ ուղու, որը հանկարծակի կբացվի, և որն անպայմանորեն կապված կլինի Աստծո հետ:

Ռուսաստանն Աստծո սիրելի երկիրն է:

Եվ ես լցված եմ բերկրանքով ու մոտալուտ այն լուսաբացի կանխազգացումով, որին կհետևի պայծառ արևային օր Ռուսաստանի համար...

Այսօր ես եղա ձեզ հետ: Ուրախ եմ, որ մեր հանդիպումը կայացավ:

ԵՍ ԵՄ Նիկոլայ Ռերիխը

ՍՈՒՐԲ ՄԻՔԱՅԵԼ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏ

15 ապրիլի, 2005 թ.

ՄԻԱՅՆ ՁԵՐ ՍԻՐՈՎ ՈՒ ՀԱՎԱՏՈՎ ԿԱՐՈՂ ԵՔ ԻՐԱԳՈՐԾԵԼ ՁԵՐ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՊԼԱՆԸ

ԵՍ ԵՄ Միքայել Հրեշտակապետը: ԵՍ ԵՄ՝ Աստծո այս դեսպանորդի միջոցով եկածը:

Իմ Հրեշտակների Դասերը՝ իմ հրեշտակախմբերը, ինձ հետ եկել են՝ պատվելու այս դեսպանորդին:

Մի՛ տարակուսեք հույզերի նման դրսևորումից: Մենք իրոք ուրախ ենք ցուցաբերել ամբողջ անհրաժեշտ օգնությունն ու օժանդակությունը և պաշտպանել մարմնավորման մեջ գտնվող այս դեսպանորդին:

Այժմ ես ուզում եմ դիմել նրանց, ովքեր մինչև վերջ չեն գիտակցել այս իրադարձության կարևորությունն ու նշանակալիությունը:

ԵՍ ԵՄ Միքայելը՝ Առաջին ճառագայթի՝ Հավատի ճառագայթի Հրեշտակապետը: Եվ ես պետք է հայտնեմ ձեզ, որ Ուղով առաջընթացի ձեր առաջին քայլը ձեր Հավատն է: Առանց Հավատի՝ դեպի Աստված տանող Ուղով ոչ մի քայլ չեք կարող անել:

Ֆիզիկական ոլորտի ձեր ցանկացած գործն առանց Հավատի չի կարող հաջող լինել և կնմանվի ավազի վրա կառուցված տան:

Ձեր Հավատն է այն ուղեցույց աստղը, որը ճանապարհ ցույց կտա կյանքի մրրիկների ու փոթորիկների միջով, որոնց հետ բախվում եք ֆիզիկական ոլորտի ձեր կյանքում:

Ուստի ձեր Հավատի աստիճանից է կախված, թե որքան հաջող կլինի ձեր ամեն մի հաջորդ քայլը:

Եթե դուք հավատում եք, և ձեր Հավատն ամուր է, ապա ձեր կյանքում կարող եք աստվածառաջնորդություն խնդրել և այն ստանալ ձեր Հավատի թույլ տված չափով:

ԵՍ ԵՄ Միքայել Հրեշտակապետը: Ես եմ եկել, որպեսզի ամրացնեմ ձեր Հավատն ու նվիրվածությունը Տիրոջ նկատմամբ: Դուք կկասկածեք, ինչպես միշտ եք կասկածում, երբ ընթանում եք դեպի Աստված դարձի Ուղով: Դուք ուղենիշներ և առաջնորդություն եք խնդրում, երբ ընթանում եք ձեր Ուղով: Իհարկե, կտրվեն ձեզ և՛ ուղենիշներ, և՛ առաջնորդություն, բայց դա կլինի ոչ ավելի վաղ, քան դուք կապացուցեք Տիրոջ և Համբարձյալ Դասերի նկատմամբ ձեր Հավատն ու նվիրվածությունը:

Նախ դուք հանձնում եք ձեր մարդկային էգոն, դրսևորում ձեր հնազանդությունն Աստծո Կամքին և միայն դրանից հետո եք ստանում ուղենիշներն ու ձեր կատարած ընտրության իրավացիության հաստատումը:

Սա է Օրենքը, և ո՛չ ես, ո՛չ դուք ի վիճակի չենք այն փոխել:

Ըստ այդմ՝ ձեզ բոլորիդ, որ գտնվում եք մարմնավորման մեջ, Հավատն անհրաժեշտ է: Իսկ ձեր Հավատին հաջորդում է հույսն ու առաջնորդումը:

Ֆիզիկական ոլորտում ձեր Հավատը դրսևորվում է Սիրո միջոցով: Քանզի քանի դեռ Սերն ափեափ չի համակել ձեզ և չի ոգեկոչել՝ գործելու ֆիզիկական ոլորտում, հնարավոր չէ քայլ անել ճիշտ ուղղությամբ: Սկզբում հավատում եք, ապա լցվում ամենաթափանց սիրո զգացումով և այդ Սիրո առաջնորդությամբ անցնում ձեր կյանքի բոլոր փորձաքննություններով ու փորձառություններով:

Միայն Սիրով ու Հավատով կարող եք իրագործել ձեր աստվածային պլանը:

Եթե ձեզ թվում է, թե ձեր աստվածային պլանի իրականացման համար անհրաժեշտ է էլի ինչ-որ բան, ապա ուշադրությամբ վերլուծեք ձեր ցանկություններն ու ձգտումները: Որպես կանոն՝ դա կլինի հենց այն, որից դուք պետք է ձերբազատվեք առաջին հերթին:

Եթե գտնում եք, որ ձեզ փող է հարկավոր, իշխանություն, կամ ձեր պատրանքային աշխարհին պատկանող էլի ինչ-որ բան, առանց որի չեք կարող ծառայել Աստծուն, ապա կեղծ ուղու վրա եք:

Դուք մշտապես կունենաք անհրաժեշտ ամեն բան, որպեսզի իրագործեք ձեր աստվածային պլանը և ծառայեք Աստծուն ու մարդկանց, եթե Հավատն ու Սերը լինեն ձեր կյանքի մշտական ուղեկիցները: Աստվածային իմաստությունն է հենց այն հատկանիշը, որը ձեռք եք բերում անձնվիրաբար սիրելու և հավատալու դեպքում:

Աստված պարգևատրում է ձեզ իր Իմաստությամբ, նաև Սուրբ Հոգու այլ շնորհներով, որոնք ձեր խնդրանքով և նույնիսկ առանց դրա իջնում են ձեզ վրա:

Ձեր սրտի այն որակները, որոնք ձեռք եք բերում՝ անձնվիրաբար Աստծուն ծառայելով, հենց իրենք են դեպի ձեր աշխարհ քաշում այն ամենը, ինչ անհրաժեշտ է ձեր ծառայությունն առավել արդյունավետ դարձնելու համար:

Եթե դուք ճիշտ Ուղու վրա եք, ապա ձեր Ուղով ընթանալուն համընթաց ձեռք եք բերում բոլոր աստվածային հատկանիշներն ու կատարելությունները: Բայց հենց որ աստվածացնում եք ձեր նկրտումների առարկան, շատ արագ շեղվում եք ուղուց: Մարդկային խելքն այնքան խարդախ է, որ նույնիսկ աստվածային հատկանիշներ ձեռք բերելու ձգտումը կարող է շուռ տալ ոչ թե Աստծո, այլ իր էգոյի օգտին:

Քանի դեռ գտնվում եք թանձր ֆիզիկական աշխարհում, դուք մշտապես պետք է զգոն լինեք և ամեն րոպե ձգտեք զանազանել այն շարժառիթներն ու ցանկությունները, որոնցով առաջնորդվում եք: Դրանցով են մարդիկ հարում տարբեր կրոնական խմբերի ու հոսանքների. իրականում նրանք այդ խմբերին միանում են ոչ թե Աստծուն ծառայելու, այլ իրենց իսկ էգոյին ծառայելու և նրան երկրպագելու համար:

Իրականում Աստծուն երկրպագելու համար ձեզնից չի պահանջվում ո՛չ ծես, ո՛չ էլ որևէ արտաքին կազմակերպության առկայություն. նաև չի պահանջվում, որ հնազանդ լինեք որևէ եկեղեցական դոգմայի: Ձեր երկրպագությունը ձեր սրտում պետք է լինի. պետք է ձեր սրտում գտնեք Աստծուն և երկրպագեք միայն Նրան:

Դրսի ուսմունքները, դրսի խմբերն ու եկեղեցիները ձեզ պետք են միայն, որ հասկանաք այս պարզ ճշմարտությունն ու շրջվեք միակ ճշմարիտ Աստծո կողմը, որը ներկա է ձեր սրտում:

Եթե ուշադրություն դարձնեք մարդկության բոլոր մեծ Ուսուցիչների խոսքերին, նույնիսկ այն խոսքերին, որոնք ձեզ են հասել այս դեսպանորդի միջոցով տրված թելադրություններով, ապա կնկատեք մեկ ընդհանուր օրինաչափություն. մարդկության բոլոր մեծագույն Ուսուցիչները, յուրաքանչյուրն իր լեզվով և իր ներքին ըմբռնումով, ուսուցանել են միևնույն մեծագույն Ճշմարտությունն առ այն, որ ամենայն ինչ Աստված է և Աստված ներկա է բոլոր այն իրերում ու առարկաներում, որոնք կան արար աշխարհում:

Եվ, բնականաբար, Աստված ներկա է նաև ձեր ներսում: Երբ Աստծո այս Ճշմարտությունը վերջապես հասու դառնա մարդկանց մեծամասնության գիտակցությանը, և յուրաքանչյուր մարդ մղվի դեպի իր ներսում առկա Աստծո կողմը, ապա արար աշխարհի պատրանքն այլևս կդադարի գոյություն ունենալուց: Իսկ մարդկությունն ու Երկիրն ամբողջությամբ անցում կկատարեն ավելի բարձր էներգետիկական մակարդակի և կգոյատևեն այլ, ավելի նուրբ մարմիններով:

Այնժամ կավարտվի պայքարն այն ուժերի միջև, որոնց մի մասը փորձում է փոել ու պահպանել պատրանքը, իսկ մյուս մասը՝ հետ հավաքել:

Եվ եթե դուք, ձեզ համար մատչելի ամենաբարձր գիտակցության մակարդակում գտնվելով, ուշադիր դիտեք շրջակա աշխարհը, ապա կտեսնեք, որ ձեր շուրջն անընդհատ իրար են բախվում հենց այդ երկու ուժերը:

Կան մարդիկ, ովքեր ջանում են իրենց բոլոր գործողություններով պահպանել պատրանքը: Բայց և կան այնպիսիները, որոնց գործողություններն ուղղված են արար աշխարհի պատրանքների վերացմանը: Նաև կարող եք նկատել, որ առաջինները ավելի բազմաքանակ են, քան երկրորդները:

Սակայն ուժերի այդ գերակշռությունը թվացյալ է: Այն ժամանակավոր է՝ միայն մոլորակի ֆիզիկական ոլորտում և պատմական այս պահին: Իսկ նուրբ ոլորտում ուժերի վերջնական գերակշռությունը Լույսի ուժերի կողմն է. միայն ժամանակի հարց է, թե այդ հաղթանակը երբ կդրսևորվի ֆիզիկական ոլորտում:

Ուստի դեռևս այդ երկու ուժերի հակադրությունը շարունակվում է, և իմ ու իմ կապույտ բոցի հրեշտակախմբերի աշխատանքի ծավալն առայժմ չի նվազում:

Անգամ փոքրամասնություն կազմելով՝ բոլոր լուսակիրները, հուսալիորեն պաշտպանված են:

Ուժերի իրական գերակշռությունն այն ուժերի կողմն է, ովքեր Աստծո կողմից են: Եվ այդպես միշտ է եղել:

Ոչ թե թվաքանակով, այլ հավատով ու հավատարմությամբ կերևան Երկրի վրայի այն փոփոխությունները, որոնք հարկ եղած ժամանակ պետք է իրականան՝ համաձայն Աստծո Պլանի:

Ուստի թող ձեզ չշփոթեցնի ֆիզիկական ոլորտում այն ուժերի գերակշռությունը, որոնց դուք անվանում եք խավարի ուժեր: Իրականում նրանց ժամանակը հատել է: Եվ որքան էլ հետին թվով գազազեն, նրանց ուժերն արդեն սպառվում են:

Ես և իմ հրեշտակախմբերն ամբողջովին ձեր տրամադրության տակ ենք: Եվ մենք պատրաստ ենք ձեր կանչով ցուցաբերելու ամբողջ այն օգնությունը, որը կարող է ցուցաբերվել ձեր Հավատին համապատասխան:

ԵՍ ԵՄ Միքայել Հրեշտակապետը, օրվա մեջ 24 ժամ սպասում եմ ձեր կանչերին և խոստանում, որ իմ հրեշտակախմբերով ձեզ կցուցաբերեմ ամբողջ հնարավոր օգնությունը...

ՎԱՅՐՈՉԱՆԱ ԲՈՒԴԴԱ

16 ապրիլի, 2005 թ.

ՁԵԶՆԻՑ ՄԵԾԸ ՆԱ Է, ՈՎ ԱՎԵԼԻ ՇԱՏ Է ԾԱՌԱՅՈՒՄ ՈՒՐԻՇՆԵՐԻՆ

ԵՍ ԵՄ Վայրոչանան՝ այս դեսպանորդի միջոցով եկածը:

ԵՍ ԵՄ Բուդդան գաղտնի ճառագայթներից մեկի, և ես պատկանում եմ հինգ Դհիանի Բուդդաների մանդալային:

ԵՍ ԵՄ՝ նաև Կարմայական Վարչության անդամ:

Ես այսօր ձեզ պետք է որոշակի գիտելիքներ տամ գաղտնի ճառագայթների վերաբերյալ:

Հնարավոր է, որ դուք գիտեք, որ բացի յոթ հիմնական ճառագայթներից, որոնք համապատասխանում են ողնաշարի երկայնքով դասավորված յոթ հիմնական չակրաներին, գոյություն ունեն նաև գաղտնի ճառագայթներ:

Իսկ անցյալում տրված ուսմունքներից դուք գիտեք, որ գաղտնի ճառագայթների չակրաները դասավորված են ձեռքի ափերի, ոտնաթաթերի և մարմնի այն մասի տիրույթի վրա, որը խոցվեց տեգով, երբ Հիսուսը գտնվում էր խաչի վրա:

Հնարավոր է՝ ոչ բոլորը գիտեն, որ յոթ հիմնական չակրաներից բացի, ողնաշարի երկայնքով տեղաբաշխված են նաև այլ չակրաներ, որոնք հաջորդում են հիմնական չակրաներին: Եվ այդ լրացուցիչ չակրաները նույնպես հանդիսանում են գաղտնի ճառագայթների չակրաներ:

Իմ չակրան այն է, որը գտնվում է արևահյուսակի և սրտի չակրաների միջև: Ես ձեռքով մատնացույց եմ անում այդ չակրան իմ՝ արձանիկի տեսք ունեցող պատկերում:

Ես կուզենայի այսօր որոշակի ուսմունք տալ՝ կապված այդ չակրայի հետ, որը գտնվում է կրծքի կենտրոնական մասում:

Դա կենտրոնական չակրա է, և այն բացվում է միայն այն մարդկանց մոտ, ովքեր անցյալում հասել են շատ մեծ նվաճումների, որոնք իրենց հաստատումն են ստանում նաև ներկա կյանքում: Այդ չակրան անմիջականորեն ձեզ կապում է ձեր ԵՍ ԵՄ Ներկայության հետ: Դա Բուդդաների և Բոդհիսատվաների չակրան է:

Մարդը, ում մատչելի են այդ չակրայի էներգիաները, կարող է ցանկության դեպքում այդ չակրայի օգնությամբ փոխակերպության ենթարկել ոչ միայն իր, այլ նաև համաշխարհային կարման:

Ահա թե ինչու է ասվում, որ Բուդդաներն ու Բոդհիսատվաները համաշխարհային ծառայություն են մատուցում՝ փոխակերպության ենթարկելով համաշխարհային կարման:

Բուդդաների աղոթքը չակրաների բաբախում է:

Բուդդաների աղոթքը մատչելի է դառնում միայն այն անհատների համար, ովքեր 100 տոկոսով հավասարակշռել են իրենց կարման և ուխտել ծառայելու մարդկությանը:

Մարմնավորված յուրաքանչյուր Բուդդա իր ուսերի վրա կրում է մոլորակային կարմայի մի հսկայական հատված: Ահա թե ինչու շատ անհատներ, ովքեր հասել են Բուդդայի գիտակցության մակարդակին, ձգտում են ֆիզիկական մարմնավորում ստանալ, անցնել չակրաների բացման համար անհրաժեշտ ձեռնադրումներով և Բուդդայի աղոթքի միջոցով իրենց ծառայությունը մատուցել աշխարհին:

Շատ Բուդդաներ հենց հիմա էլ մարմնավորված են երկրի վրա: Եվ, ամեն մի այդպիսի Բուդդա, մատուցելով իր անշահախնդիր ծառայությունը, մաքրում է իր շրջապատի կարման հարյուրավոր և նույնիսկ հազարավոր կիլոմետր շրջագծով: Մի այդպիսի Բուդդան իր ծառայությամբ փոխարինում է տասնյակ հազարավոր արդար վանականների ու սրբերի:

Դուք ձեր մարդկային գիտակցությամբ չեք կարող որոշել Բուդդայի նվաճումների աստիճանը: Բայց յուրաքանչյուր այդպիսի Բուդդա, հանդիպելով մարմնավորված իր եղբայրակցին, ընդամենը մի քանի րոպեի հաղորդակցությունից հետո ունակ է ճանաչելու ծանոթ ու հարազատ թրթիռները, որոնք դրսևորվում են ամեն ինչում՝ ձայնի տեմբրում, շարժուձևում, նույնիսկ հագնվելու և

պահվածքի ձևում: Հիմնական խնդիրը, որին բախվում են մարմնավորված Բուդդաները, շրջապատի աշխարհի խտացված ու ցածր թրթռումներն են: Նրանք գործնականում չեն կարող մնալ խոշոր քաղաքներում, մարդկանց մեծ բազմության մեջ: Այդ պատճառով նրանք ընտրում են բնակության մեկուսի վայրերը՝ խուլ տեղերը, լեռները: Սակայն Բուդդայի ծառայության հիմնական մասը մարդկությանը լուսավորելն է, և այդ պատճառով, որքան թույլ են տալիս արտաքին հանգամանքները, նրանք հանդիպում են մարդկանց հետ և տալիս իրենց ուսմունքը:

Բայց շատերը մինչև իրենց կյանքի վերջն այդպես էլ չեն հանդիպում սովորական մարդկանց հետ՝ մնալով այնպիսի տեղերում, որտեղ իրենց չակրաները գործում են լրիվ հզորությամբ՝ Լույսը փոխանցելով թանձր ֆիզիկական աշխարհին:

Ես այսօր ձեզ համար բացեցի վարագույրի մի մասը՝ կապված Համբարձյալ Դասերի՝ սովորական մարդկանց համար անտեսանելի ծառայության հետ: Եվ նույնիսկ տարօրինակ կլիներ, եթե Համբարձյալ Դասերն իրենց ողջ հույսը դնեին նորելուկների աղոթքների վրա, ովքեր անում են իրենց առաջին՝ հազիվ նշմարելի քայլերն իրենց այն Ուղու վրա, որն իրենց հետ է բերում Աստծո մոտ:

Նրանց քայլերն անքան անվստահ են ու երկչոտ, իսկ երբեմն էլ նրանք այնպես են տարվում շրջապատի պատրանքով, որ մոռանում են և՛ Աստծո, և՛ իրենց Ուղու մասին:

Բայց եկեք խստորեն չդատենք այդ մարդկանց: Նրանցից յուրաքանչյուրը գտնվում է Ուղու իր հատվածի վրա, և յուրաքանչյուրն անում է այն անհրաժեշտը, որը համապատասխանում է իր նվաճումների աստիճանին:

Եվ այդ նորելուկներն իրականում նշանակալի կարմայական պատասխանատվություն չեն կրում իրենց այն գործողությունների համար, որոնք երբեմն բավականին սխալ գործողություններ են՝ ուղղված պատրանքների բազմապատկմանը, կապված այն բանի հետ, որ չափազանց շատ քանակի արտաքին ծեսերը շեղում են ուշադրությունն Ուսմունքի էությունից և Աստծուց:

Սակայն, կան նաև մարդիկ, ովքեր իրենց Ուղու վրա հասել են նվաճումների զգալի աստիճանի և գիտակցաբար օգտագործում են իրենց նվաճումները՝ իշխանության ու ազդեցության արտաքին հատկանիշներ ձեռք բերելու նպատակով: Նրանք ձեռնածություն են անում ոչինչ չկասկածող նորելուկների հետ և նույնիսկ օգտագործում են աղոթքի էներգիան իրենց շահադիտական նպատակներով:

Այդ մարդիկ ծանր կարմա են ստեղծում և կարժանանան արդարացի կարմայական հատուցման:

Որքան բարձր է ձեր նվաճումների մակարդակն, այնքան դուք ավելի մեծ կարմայական պատասխանատվություն եք կրում՝ շեղվելով Ուղուց և հանելով այդ Ուղուց ուրիշներին:

Ըստ այդմ՝ անկեղծորեն Աստծուն ձգտող մարդկանց համար միակ ելքը, որ ճանաչեն այդ կեղծ հովիվներից եկող վտանգը, հանդիսանում է այն, որ մաքրեն իրենց մարմինները, իրենց մտքերն ու զգացմունքները, որպեսզի ձեռք բերեն մաքուր տեսողություն ու զանազանման շնորհ, ինչը նրանց թույլ կտա իմանալ, թե ով ով է:

Եվ ես լիովին գիտակցում եմ, որ շատ դժվար է այդպիսի գնահատում անել արտաքին գիտակցության միջոցով: Սակայն, ես վստահեցնում եմ ձեզ, որ հոգու մակարդակով դուք միշտ գիտեք, թե ով է Աստծո էներգիայի ճշմարիտ հաղորդիչ, և ով է, որ սոսկ ուրիշի լույսն է հավաքում և ապրում այդ լույսի հաշվին: Եվ, գիտելիք ստանալով ձեր հոգուց, դուք միաժամանակ կարմայական պատասխանատվություն եք ստանում, եթե ձեր լույսն օգտագործում եք կեղծ հովիվներին օժանդակելու նպատակով:

Դուք հասկացա՞ք իմ միտքը: Միայն նա է կարմայական պատասխանատվություն կրում իր լույսի կեղծ կիրառության համար, ով, ճանաչելով հանդերձ կեղծ հովիվներին, իր էգոյի հետ կապված պատճառներով շարունակում է ուղղորդել իր լույսը նրանց օժանդակելու համար:

Սակայն, եթե կեղծ ուսուցիչը ճշմարիտ Ուղուց հանում է անմեղներին, ապա ես նույնիսկ չէի ցանկանա օգտագործել իմ կարողությունները, որպեսզի տեսնեմ այն կարմայի հետևանքները, որը նա ստեղծում է:

Ես այսօր ձեզ գիտելիք տվեցի ճշմարիտ սպասավորների մասին և նաև ձեզ տվեցի կեղծ ծառայության ըմբռնումը:

Եվ, ստանալով այս գիտելիքը, դուք այլևս չեք կարող անպատասխանատու կերպով վերաբերվել ձեր ուսուցիչների ընտրությանը: Ջնո՛ւք, դիտեցե՛ք: Վիճելի դեպքերում դուք կարող եք անկեղծ կանչ ուղարկել Համբարձյալ Դասերին, այն Վեհապետին, ով մոտ է ձեզ, ում հետ դուք զգում եք ներքին խոր կապ ու հարազատություն, և դուք օգնություն կստանաք: Մի գեղեցիկ օր ձեր աչքերը կբացվեն, և դուք կտեսնեք այն ուսուցչի ներքին էությունը, որին հետևում եք:

Ձեզ միայն պետք է ավելի շատ վստահել ձե՛ր իսկ Բարձրագույն մասին: Օ՜, դուք անհամեմատ ավելի մեծ եք, քան այն արտացոլանքը, որն ամեն օր հայելու մեջ տեսնում եք ձեր առջև: Դուք իրապես հզոր հոգևոր էակներ եք, որ այդ աշխարհն եք եկել մարդկային փորձ ձեռք բերելու համար: Եվ ձեր հոգին ի՛նքն է մարմնավորումից առաջ ընտրել ձեր ներկայիս մարմնավորման հանգամանքները:

Եվ դուք գիտեիք, որ ինչքան էլ դժվարին լինի Ուղին, կկատարեք ձեզ վրա վերցրած առաքելությունը, որն ուղղված է մարդկանց գիտակցության բարձրացմանը:

Ես այսօր եկել եմ՝ արթնացնելու ձեր հոգու հիշողությունը մարմնավորումից առաջ ձեր վերցրած պարտավորությունների վերաբերյալ:

Ըստ այդմ՝ մի կողմ թողեք ձեր այն խաղա-

լիքները, որոնցով շարունակում եք խաղալ նույնիսկ հասուն տարիքի հասնելուց հետո: Եկել է հասունանալու՝ գիտակցությունը հասուն մարդու մակարդակին բարձրացնելու ժամանակը, և պատասխանատվություն վերցնելու ոչ միայն ձեր, այլ նաև այն մարդկանց համար, ովքեր իրենց գիտակցության մակարդակով ձեզնից ավելի ցածր են կանգնած:

Հիշեք, որ ձեզնից մեծը նա է, ով ավելի շատ է ծառայում ուրիշներին: Մարդկության ամենամեծ ծառան Բուդդան է, ով ներխոկման դիրքով խոնարհությամբ նստած է լեռներում ինչ-որ տեղ և իր չակրաների միջոցով փոխակերպության է ենթարկում աշխարհի կարման:

Ձեզնից յուրաքանչյուրը ծնունդ է առել հենց այն վայրում՝ այն երկրում ու այն հանգամանքների մեջ, որոնք դուք պետք է օգտագործեք ձեր նվաճումների համար, իսկ ձեր շուրջը գտնվում են հենց այն մարդիկ ու այն հանգամանքները, որոնք ձեր օգնության կարիքն ունեն:

Ես ձեզ մենակ եմ թողնում ձեր մտքերի հետ՝ այսօրվա ձեր ստացած խրատների վերաբերյալ:

ԵՍ ԵՄ Վայրոչանան, ձեզ հետ եղա այսօր

ԱԹԵՆԱՍ ՊԱԼԼԱՍ

17 ապրիլի, 2005 թ.

ԴՈՒՔ ՊԵՏՔ Է ԱՅՆ ԷԼԵԿՏՐՈՆՆԵՐԸ ԴԱՌՆԱՔ, ՈՐՈՆՔ ԵՐԿԻՐ ՄՈԼՈՐԱԿԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՈԼՈՐՏԸ ԿՀԱԳԵՑՆԵՆ ԼՈՒՅՍՈՎ

ԵՍ ԵՄ Աթենաս Պալլասը՝ այս դեսպանորդի միջոցով ձեզ այցի եկածը:

Դուք ճանաչո՞ւմ եք ինձ: ԵՍ ԵՄ Ճշմարտության Աստվածուհին և Կարմայական Վարչության անդամ:

Այսօր ԵՍ ԵՄ այցելել ձեզ, որպեսզի որոշակի գիտելիքներ տամ, որոնք վերաբերում են ձեր ֆիզիկական աշխարհում Կարմայի Օրենքի դրսևորմանը: Երբ դուք մարմնավորվում եք, վարագույրը փակվում է ձեր հետևից, և դուք դադարում եք հիշել, թե ինչ էր կատարվում ձեզ հետ նախքան մարմնավորվելը. դուք մոռանում եք ձեր նախկին մարմնավորումները: Իրերի այսպիսի դրությունը միշտ է գոյություն ունեցել: Եվ այդ միջոցը ձեր կենսահոսքերի նկատմամբ ավելի շուտ հումանիստական է, քան սահմանափակող:

Բանն այն է, որ ձեր կյանքում դուք թույլ եք տվել ոչ ամենալավ արարքները, և եթե ձեր բոլոր ծանր արարքներն ու չարաշահումները հիշեիք, ապա չէիք կարողանա գործել ձեր ներկա կյանքում: Այդ պատճառով ձեր ծնվելուց անմիջապես հետո ձեր հիշողության վարագույրը փակվում է: Սակայն այդ վարագույրը թանձր չէ նրանց համար, ովքեր իրենց վաստակով ուղի են հարթել անցյալն ու ապագան տեսնելու շնորհի ձեռք բերելու համար: Դուք գիտեք, որ պայծառատեսության շնորհով են օժտված եղել շատ մարգարեներ ու սրբեր, ովքեր անցյալում և ներկա ժամանակներում մարմնավորվել են Երկրի վրա:

Վարագույրը հետ է քաշվում, երբ ձեր ստորին չորս մարմինները ձեռք են բերում որոշակի մաքրության աստիճան, և ձեր գիտակցությունը հասնում է այնպիսի մակարդակի, որի վրա այն ի վիճակի չէ վախ ապրել աշխարհների փոխազդեցության ժամանակ տեղի ունեցող որոշակի բաներից: Մարդկային գիտակցությունն իրականում շատ սահմանափակ է: Այն սահմանափակված է մի դերով, որը դուք կատարում եք ընթացիկ կյանքում, և այն կարմայով, որը դուք ձեռք եք բերել անցած կյանքերի ընթացքում: Ըստ էության, ձեր

կարման այն խոչընդոտն է, որն ընկած է ձեր և ավելի նուրբ աշխարհների միջև: Ձեր կարման էներգիա է՝ խիտ էներգետիկական սուբստանցիա, որն ունի թրթիռների չափազանց ցածր հաճախականություն:

Եվ այդ ցածրհաճախային թրթռանքը հենց այն վարագույրն է, որը ձեզ կտրում է մեր աշխարհից:

Ուստի, պաշտելիներս, ձեր և իմ միջև չկա ոչ մի տարբերություն, բացի թրթռանքից: Եվ երբ ձեր ջանքերի ու ձեռքբերումների միջոցով հնարավորություն եք ստանում ձերբազատվելու ձեր կարմայից ու ձեր անկատարություններից, ապա ունակ եք դառնում հաղորդակցվելու մեր աշխարհի հետ, լինելու մեր աշխարհում: Ձեր աշխարհընկալման տիրույթն ընդարձակվում է, և դուք ձեռք եք բերում շատ ունակություններ, որոնք կոչվում են Սուրբ Հոգու շնորհներ:

Ուստի իմ այսօրվա զրույցի նպատակն է ձեզ հստակ պատկերացում տալ այն մասին, որ միայն դուք ինքներդ, անցյալի ու ներկայի ձեր գործողություններն են ստեղծել այն վարագույրը, որը ձեզ բաժանում է Աստծո Իրական Աշխարհից: Եվ քանի որ, ըստ Աստծո մտահղացման, այս տիեզերքում ամեն ինչ զարգանում է էվոլյուցիոն ուղով, ապա հաջորդ փուլը, որին անխուսափելիորեն դուք կհասնեք, կլինի երկրային մարմնավորումների կարմայից ձեր ազատագրվելու փուլը:

Դուք կձերբազատվեք ձեր կարմայից և կբարձրանաք էներգետիկական ավելի բարձր մակարդակի վրա:

Իսկ ձեր կարմայից իրականում կարող եք ազատվել մի քանի եղանակներով: Կարելի է ճիշտ ընտրություններ կատարել: Ձեր կյանքը ոչ այլ ինչ է, եթե ոչ իրավիճակների հերթագայություն, որոնցում ձեզ միշտ հնարավորություն է տրվում ընտրել երկուսից մեկը: Մի ընտրության դեպքում դուք մոտենում եք Աստծուն, իսկ մյուս ընտրության դեպքում՝ հեռանում: Ամեն ինչ շատ պարզ է: Եվ կյանքի իրավիճակների ամբողջ բազմազանությունը կարելի է հանգեցնել այդ այլընտրանքին:

Եվ այս ուղին միակն է, որով ընթանում են Երկրի վրա մարմնավորած բոլոր մարդիկ: Մնացած ուղիները լրացուցիչ են:

Ձեզ ծանոթ է աղոթքային գործառության ուղին, երբ ձեր սրտերի ներուժով դուք Աստծո լրացուցիչ էներգիա եք ներքաշում ձեր կյանքի մեջ և այդ էներգիայի միջոցով բեռնաթափում եք ձեր կարման:

Վերջերս ձեզ տեղեկացրել ենք չակրաների բաբախումների օգնությամբ կարմայի բեռնաթափման ավելի բարձր կարգի գործառության մասին: Սակայն, ցավոք սրտի, այդ գործառությունը ձեզ համար մատչելի է դառնում ձեր հոգևոր նվաճումների շատ բարձր մակարդակի դեպքում միայն:

Այնուամենայնիվ ձեզ համար գլխավորը ձեր սահմանափակ վիճակը հաղթահարելու ձեր մղումն է, որում հայտնվել եք կարմայական պատճառներով: Եթե ձեզ հայտնի է ախտորոշումը, ապա կարող եք հեշտությամբ գտնել ճիշտ բուժումը և այն կիրառել ձեր կյանքում:

Ըստ այդմ՝ այն ամենը, ինչ դուք անում եք ձեր կյանքում, ձեր սահմանափակ կարմայական վիճակը հաղթահարելու միջոց է: Հենց դրա համար էլ դուք մարմնավորվել եք:

Այդպիսին է այս աշխարհի Օրենքը: Ինչ-որ ժամանակ դուք ընտրություն եք կատարել՝ մարմնավորման միջոցով փորձարկել ձեզ որպես անհատականություն: Ձեզ ազատություն է տրվել այդ փորձերի համար: Եվ դուք սկսել եք Աստծո էներգիան օգտագործել՝ ըստ ձեր հայեցողության: Էվոլյուցիոն զարգացման ինչ-որ փուլում ձեր անձն օժտվել է բանականությամբ: Իսկ բանականությունն օժտված է երկակիությամբ: Այն հնարավորություն ունի ընտրելու, թե ինչպես օգտագործի իր կարողությունները:

Եվ խելքի հետ կատարվող ձեր փորձերի ընթացքում դուք սկսել եք ինքներդ ձեզ պարուրել ավելի ու ավելի թանձր էներգիաներով՝ ստեղծելով կարմա, այն է՝ Աստծո էներգիան օգտագործել եք ոչ թե Աստծո Մտահղացման, այլ ձեր սեփական խելքի հղացումներին համապատասխան:

Թանձր ֆիզիկական ոլորտի ձեր գործունեությունը միլիոնավոր տարիների ընթացքում ստեղծել է շրջակա այն իրականությունը, որի մեջ այժմ գտնվում եք: Ձեզ ասվել է, որ ձեզ շրջապատող աշխարհն ընդամենը հայելի է, որի մեջ արտացոլվում է ձեր անկատար գիտակցությունը: Դուք անցել եք մի փուլ, երբ այս տիեզերքի համար նախատեսված Աստծո Պլանի համաձայն ձեզ թույլ էր տրված, ձեր ազատ կամքին համապատասխան, փորձեր կատարել Աստծո Էներգիայի հետ:

Իսկ հիմա նոր փուլ է սկսվում: Առաջին փուլում դուք խորացաք պատրանքի մեջ, իսկ այժմ եկել է Աստծո Իրական Աշխարհ վերադառնալու ժամանակը:

Եվ, ըստ Աստծո մտահղացման, նույն այն հոգիները, որոնք մասնակցել են պատրանքի արարմանը, այժմ իրենց գործողություններով պետք է հաղթահարեն այդ պատրանքային դրսևորումները: Եվ առաջին հերթին դուք պետք է ձեր իսկ գիտակցության մեջ հրաժարվեք ձեր անկատար գործերից:

Առաջին փուլում դուք անընդհատ խորասուզվել եք մատերիայի մեջ և ավելի ու ավելի եք հեռացել Աստծուց: Երկրորդ փուլում, Աստծո հետ ձեր Միասնությունը գիտակցելով, դուք պետք է վերադառնաք ձեր իսկ իրական մասին՝ հրաժարվելով պատրանքից և շրջվելով դեպի Իրականություն:

Հաղթահարելով ձեր անկատար վիճակը, բեռնաթափելով ձեր կարման՝ դուք բարձրացնում եք ձեր թրթիռների մակարդակը, և դրան զուգընթաց բարձրանում են ձեզ շրջապատող աշխարհի թրթիռները:

Դուք հաղթահարում եք ինքներդ ձեզ, հաղթահարում եք ձեր մարդկային բնույթը և ձեռք եք

բերում ավելի ու ավելի շատ աստվածային որակներ՝ աստիճանաբար վերադառնալով Աստծո այն Իրականությանը, որից ձեր հոգիները փորձարարության նպատակով դուրս էին եկել ֆիզիկական աշխարհ:

Ձեր հոգու հիշողությունն արթնացնելու, ձեր մղումներին ճիշտ ուղղություն տալու համար էլ հենց նախատեսված են այս թելադրությունները, որոնք մենք տալիս ենք այս դեսպանորդի միջոցով:

Եվ ձեր զարգացմանը զուգընթաց ձեր աչքերն ավելի ու ավելի շատ կբացվեն, և դուք կճանաչեք Աստծո Ճշմարտությունն ու որոշակի փուլում միասնական կդառնաք այդ Ճշմարտության հետ:

Ես այսօր փորձեցի ձեզ տրամադրել, որ դուք մի փոքր այլ հայացքով նայեք Երկրի վրա ներկայումս տեղի ունեցող փոփոխություններին:

Եվ, ըստ էության, բոլոր փոփոխությունները հնարավոր կլինեն և կիրականանան միայն ձեր օգնության՝ ձեր սրտերի մղումների և այն Աստծո էներգիայի միջոցով, որը դուք փոխանցում եք ձեր թանձր աշխարհին:

Իսկ մոտակա ժամանակներում բոլորդ, որ կարդում եք այս թելադրությունները, այն էլեկտրոդները պետք է դառնաք, որոնց միջոցով Երկիր մոլորակի ֆիզիկական ոլորտը կհագենա Լույսով:

Եվ այդ ուղու վրա ես ձեզ հաջողություն եմ մաղթում, որ ձեր ներսում հաղթահարեք այն ամենը, ինչը խանգարում է ձեզ՝ իրականացնելու ձեր մոլորակի համար նախատեսված Աստծո մտահղացումը:

ԵՍ ԵՄ Աթենաս Պալլասը

ՎԵՀԱՊԵՏ ՋԱՎԱԼ ԿՀՈՒԼ

18 ապրիլի, 2005 թ.

ԽԹԱՆԵՔ ՁԵՐ ՍՐՏՈՒՄ ՍԻՐՈ ԶԳԱՑՄՈՒՆՔԻ ԱՃԸ



ԵՍ ԵՄ Ջավալ Կհուլը՝ մեր դեսպանորդի միջոցով Սիրո ճառագայթով եկածը:

Այո՛, պաշտելինե՛րս, ԵՍ ԵՄ եկել այսօր, որպեսզի Սեր հաստատեմ:

Բոլոր հատկանիշների, բոլոր աստվածային հատկանիշների մեջ Սերն ամենակարևորն է:

Աշխարհներն արարվում են Սիրով: Եվ, եթե ձեր կյանքում դուք ուրախություն չեք զգում, եթե ձեզ տանջում են ծանր մտքերն ու զգացմունքները, ապա դուք պարզապես ձեր էության մեջ Սիրո անբավարարություն եք զգում:

Կարևոր չէ՝ սիրում են ձեզ, թե չեն սիրում: Սերը ուժ է, որն առկա է ձեր էության խորքում: Եվ այն միշտ ձեզ հետ է անքան ժամանակ, քանի դեռ Սկզբնաղբյուրից դուք ստանում եք Աստծո էներգիա: Ըստ այդմ՝ Սիրո զգացմունքի ամենաչնչին պակասությունը ձեզ մտցնում է գիտակցության աննկարագրելի վիճակի մեջ: Սիրո հատկանիշը համակում է համայն Արարածին և օրգանապես ներհյուսվում ձեր և մյուս կենդանի էակների կյանքերի մեջ:

Եվ աշխարհի շատ պրոբլեմներ, եթե չասենք՝ բոլոր պրոբլեմները, կապված են հենց Սիրո անբավարարության հետ:

Ես եկել եմ խորհուրդ տալու, թե ինչպես ամրացնեք Սիրո կիզակետը ձեր սրտում:

Խոստացեք, որ ամեն օր կկատարեք այս վարժանքը՝ հենց որ ազատ րոպե կունենաք: Այն չի պահանջում որևէ պատրաստվածություն կամ որևէ լրացուցիչ նախապատրաստություն ու պայման: Դուք կարող եք կատարել այս վարժանքը տանը և աշխատանքի վայրում, կամ գտնվելով ամենամարդաշատ տեղերում:

Եվ այսպես, դուք մշտապես պետք է ձեր աչքերի առջև ունենաք սիրելի մարդու պատկերը: Ես շատ լավ հասկանում եմ, որ ձեզնից շատերը կարող են ասել, թե իրենք այս աշխարհում սեր չեն տածում որևէ մեկի նկատմամբ: Դա մոլորություն է: Դուք պարտավո՛ր եք սիրել: Դուք պարտավոր եք ձեր գիտակցության մեջ գտնել կերպար, որի նկատմամբ սեր եք տածում: Ես այժմ նկատի չունեմ, թե դա անպայման պետք է լինի սիրելի կնոջ

կամ տղամարդու կերպարը: Սակայն դուք ուշադրությամբ փորփրեք ձեր սրտի խորքը: Գտեք այն կերպարը, որի նկատմամբ ունակ եք սեր տածել:

Դա կարող է լինել ձեր մայրը կամ հայրը, ձեր ամուսինը կամ կինը, ձեր զավակները: Դա կարող է լինել և այն Վեհապետը, որի հետ դուք կապ ունեք ներքին մակարդակներում:

Եթե ձեր սիրտն այնքան է վնասված, որ հենց միայն սիրելիներին հիշատակելը ձեր աչքերում արցունքներ է առաջացնում և հանգեցնում ինքնախղճահարության, ապա, ամեն դեպքում, գտեք այն կերպարը, որին կարող եք կառչել ձեր գիտակցությամբ և Սեր տածել նրա նկատմամբ:

Թող դա լինի նույնիսկ որևէ ընտանի կենդանի կամ սիրած բույս:

Խթանեք Սիրո զգացմունքի աճը ձեր սրտում:

Ձեր կյանքի գլխավորագույն խնդիրն է ամեն գնով հետ բերել Սիրո զգացմունքը:

Եթե դուք մարդկանց միջավայրում եք գտնվում, ապա փորձեք սեր տածել շրջապատի մարդկանց նկատմամբ: Սիրեք մարդկանց ոչ այն բանի համար, ինչ նրանք արել են ձեր նկատմամբ, կամ կարող են անել, այլ տածե'ք նրանց նկատմամբ ոչնչով չպայմանավորված Սեր:

Ոչինչ, որ ձեզ չի հաջողվի երկար ժամանակով կենտրոնանալ ձեր Սիրո զգացմունքի վրա: Բայց դուք պետք է ամեն օր գտնեք գոնե երկու-երեք րոպե, որպեսզի ապրեք այդ Սիրո զգացմունքը:

Խթանեք ձեր մեջ այդ զգացմունքի աճը:

Եվ կգա օրը, երբ դուք կկարողանաք զգալ այնպիսի համապարփակ, անառիթ Սեր ձեզ շրջապատող ամեն ինչի նկատմամբ՝ Երկրի վրա ապրող բոլոր մարդկանց, հենց Երկրի, բնության, ամպերի, երկնքի, անձրևի, արևի նկատմամբ:

Ձեզ ափեափ կլցնի Սիրո զգացմունքը, շրջապատող ամեն ինչի հետ ձեր Միասնականության զգացմունքը: Դուք միաժամանակ հանդիսանում եք այդ ամենը:

Հասկացեք, ձեր գիտակցությունը, ձեր մարդկային գիտակցությունն է, որ բաժանում է ձեզ այն ամենից, ինչը ձեզ շրջապատում է, այնինչ ձեր էությունն ու ձեզ շրջապատող ամեն ինչի էությունը նույնական են:

Ամենայն ինչ Աստված է: Եվ Աստծո հետ Միասնությունից մեր բաժանված լինելը գոյություն ունի միայն մեր գիտակցության մեջ:

Այժմ խոսենք մի փոքր այլ բանի մասին: Ես ուզում եմ օգտվել այս հնարավորությունից և ձեզ որոշակի գիտելիք կամ տեղեկատվություն տալ, որը ձեզ համար օգտակար կլինի հատկապես ժամանակի տվյալ պահին:

Դուք Երկրի վրա մարմնավորվել եք այս բարդ ժամանակներում, երբ ձեր աշխարհում տեղի է ունենում զտում: Հերթագայել են տիեզերական բոլորապտույտները, և նոր էներգիաներ են եկել Երկիր՝ Սիրո, Միասնության էներգիաները: Այդ էներգիաներն իրենց հետ բերում են Վեներայի՝ իմ հարազատ մոլորակի ազդեցությունը: Չկա որևէ կենդանի էակ, որ իր վրա չկրի այդ էներգիաների ազդեցությունը:

Սակայն ոչ բոլորի վրա են այդ էներգիաները բարերար ազդեցություն թողնում: Ձեր աշխարհում կան էակներ, որոնք այնպես են խզել իրենց կապն Աստծո՝ Սկզբնաղբյուրի հետ, որ նրանց էությունն այլևս ունակ չէ ընկալելու այդ էներգիաները: Նրանք մեռած են: Եվ ճիշտ այնպես, ինչպես արևը լուսավորում և բարերար ազդեցություն է թողնում բոլոր բույսերի վրա՝ նպաստելով նրանց աճին ու կենսագործունեությանը, արևը տալիս է իր լույսը նաև այն մեռած բույսերին, որոնք չորացել են: Եվ արևի ազդեցությամբ այդ բույսերն ավելի են չորանում և պետքական դառնում միայն վառարանի համար: Ըստ այդմ՝ իր դարն ապրած ամեն ինչ մոտակա ժամանակներում ի մի կբերվի և կվառվի տիեզերական վառարանում:Լավ այգեգործը հետևում է իր այգուն և ժամանակին այրում է չոր ծառերը, որպեսզի չորացման վարակը նրանցից չփոխանցվի առողջ բույսերին:

Այն, ինչ հիմա ձեզ ասում եմ, շատ տխուր բան է: Բայց դա ճշմարտություն է, որին դուք բախվում եք ձեր կյանքում: Կորուստներն անխուսափելի են, և յուրաքանչյուրն ինքն է ընտրում իր ուղին: Երկրի վրա լինելու ձեր ամեն րոպեին դուք ընտրություն եք կատարում: Կամ ընտրություն եք անում Աստծո՝ Կյանքի օգտին, կամ էլ՝ մահվան: Քանի՞ անգամ եք դուք լսել այն մասին, որ եկել է որոմը հատիկից ջոկելու ժամանակը: Քանի՞ անգամ եք լսել, որ մոլախոտը պետք է առանձնացվի ու վառվի:

Ոչ ոք, նույնիսկ նրանք, ովքեր հեռու են Աստծուց, չեն կարող ասել, որ այդ դարձվածքն իրենց կյանքում գոնե մի անգամ չեն լսել:

Հապա էլ ինչո՞ւ եք զարմանում: Ժամը հասել է: Եվ այն մարդիկ, ովքեր չեն կարողանա յուրացնել նոր թրթռանքները, անցում չեն կատարի գիտակցության նոր մակարդակի վրա և կընկնեն այն այգեպանի ձեռքը, ով հոգ կտանի նրանց հետագա ճակատագրի մասին:

Իսկ մեր այս տիեզերքի համար այգեպան է հանդիսանում ինքը՝ Տեր Աստված:

Ըստ այդմ՝ մի՛ անհանգստացեք որևէ բանի համար: Ամեն ինչ տեղի է ունենում Աստծո Կամքով, և բոլոր ժամկետներն ու դրանց հետ կապված աշխատանքները կլինեն ճիշտ ժամանակին՝ Աստծո Պլանի հետ ճշտորեն համապատասխան:

Ի՞նչ պետք է անեք այդ ընթացքում: Սովորեք բնությունից: Գնացեք անտառ և տեսեք, թե ինչ է կատարվում անտառում:

Այնտեղ կան չորացած ծառեր և փտած կոճղեր: Բայց կան և երիտասարդ շիվեր: Եվ կյանքը շարունակվում է. բզզում են մեղուները, երգում են թռչունները, ծաղկում են ծաղիկները: Լիակատար ներդաշնակություն է տիրում:

Իսկ ձեզնից յուրաքանչյուրը մի ուրույն ծաղիկ է այդ անտառում: Հետևաբար դուք պետք է պար-

զապես ծաղկեք և Սեր տածեք այն ամենի նկատմամբ, ինչը ձեզ շրջապատում է:

Օրինակ վերցրեք ձեր շրջապատի բնությունից:

Ամեն ծաղիկ պարզապես ծաղկում է: Նա պայքար չի մղում ոչ չոր ծառերի, ոչ էլ փտած կոճղերի դեմ: Ամեն ինչ ենթակա է Աստծո Օրենքին, և ամեն ինչ տեղի է ունենում Աստծո Օրենքին համապատասխան: Եվ, հավատացեք ինձ, տիեզերքում կան սպասավորներ, որոնց կոչումը տիեզերքի մաքրումն է այն աղբից ու այն ամենից, ինչն արդեն մեռած է կամ չի ուզում համապատասխանել հաստատված Օրենքին:

Դուք լսել եք հունձքի մասին: Նաև մտածել եք, որ հունձքի ժամանակը մոտենում է: Բայց, չգիտես ինչու, ձեզնից ոչ մեկը չտագնապեց, որ հունձքի ժամանակն արդեն հասել է: Իսկ հունձքն ընթանում է լրիվ հունով: Եվ ամեն ինչ տեղի է ունենում այնպես բնական, որ մարդիկ նույնիսկ չեն էլ նկատում այդ հունձքը: Ամեն ինչ տեղի է ունենում հարկ եղած ժամանակին և Բարձրագույն Օրենքին համապատասխան:

Ես այսօր ձեզ բավականին շատ օգտակար տեղեկատվություն տվեցի: Եվ, չնայած այդ տեղեկատվությունն իմ կողմից տրվեց շատ մեղմ ձևով, այնուամենայնիվ, շատերի համար տխուր կլինի Երկրի վրա ընթացող իրադարձությունների մասին լսելը:

Եվ ամեն դեպքում ես ձեզ կոչ եմ անում ավելի հաճախ Սեր տածել կենդանի ամեն ինչի նկատմամբ: Քանզի միայն Սերն է ունակ հրաշքներ գործելու ինչպես ձեր, այնպես էլ ձեզ շրջապատող մարդկանց կյանքում:

Դուք սիրում եք, ուրեմն ապրում եք... Եվ դա է գլխավորը:

ԵՍ ԵՄ Ջավալ Կհուլը, այսօր եղա ձեզ հետ

ՊԱԴՐԵ ՊԻՈ

19 ապրիլի, 2005 թ.

ԳՈՐԾԵՐՈՎ ԱՂՈԹՔԸ ՄԻՇՏ ԵՂԵԼ Է ԵՎ ԿՄՆԱ ՈՐՊԵՍ ԱՂՈԹՔԻ ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՁԵՎԵՐԻՑ ՄԵԿԸ



ԵՍ ԵՄ Պադրե Պիոն: ԵՍ ԵՄ՝ այս դեսպանորդի միջոցով եկածը:

Հնարավոր է՝ շատերի համար իմ անունն անծանոթ է:

Ես ապրել եմ Եվրոպայում անցյալ դարում, և եղել եմ Հռոմի Կաթոլիկական Եկեղեցու վանական: Ես հայտնի դարձա իմ ձեռք բերած Սուրբ Հոգու շնորհների շնորհիվ, բայց մարդկանց մեծ մասն ինձ գիտեր այն խարանների շնորհիվ, որոնք ես կրում էի իմ կյանքի մեծ մասի ընթացքում:

Մարդկանց ամբոխները գալիս էին իմ վարած ժամերգությանը մասնակցելու, որպեսզի տեսնեն իմ խարանները:

Ես կրում էի այդ բեռն իմ մարմնի վրա, որովհետև այն ինձ վրա էի վերցրել ներքին մակարդակներով: Այդ խարանները կրելն իմ հոգու ինքնակամ ցանկությունն էր: Այդ խարանների հետ մեկտեղ ես ինձ վրա էի վերցրել համաշխարհային կարմայի նշանակալի մաս:

Ողջ կյանքում ես Հռոմի Կաթոլիկական Եկեղեցուն եմ պատկանել և ծառայել այդ եկեղեցուն: Արդեն իմ մահից հետո շատերն էին ինձ օրինակ բերում՝ որպես եկեղեցուն նվիրվածության և եկեղեցական դոգմաներին ու կանոններին հնազանդ մարդու օրինակ: Իրոք, ես մնացի եկեղեցում նույնիսկ այն բանից հետո, երբ երկար տարիներով ինձ զրկեցին այցելուների խոստովանանքներն ընդունելու իրավունքից: Դա իմ սպասավորության հիմնական մասն էր: Խոստովանության ընթացքում ես ինձ վրա էի վերցնում խոստովանող մարդկանց կարմայի մի մասը, որպեսզի թեթևացնեմ նրանց բեռը: Ես նաև հնարավորություն ունեի խոստովանության ընթացքում տեսնելու այն խնդիրների իրական պատճառները, որոնց հետ

մարդիկ կյանքում բախվում էին, և կարողանում էի նրանց հոգու համար անհրաժեշտ խրատներ տալ: Ես զրուցում էի ոչ միայն մարդու հետ, ով խոստովանում էր, այլև նրա հոգու հետ և անում հնարավոր ամեն ինչ, որպեսզի թեթևացնեմ այն բեռը, որն ընկած էր այդ մարդու ուսերին՝ անցյալի իր արարքների պատճառով: Չնայած արևմտյան քրիստոնեական եկեղեցում չի օգտագործվում այնպիսի տերմին, ինչպիսին կարման է: Սակայն ես հնարավորություն ունեի տեսնելու հոգու տառապանքների պատճառները և ինձնից կախված ամեն ինչ անում էի, որպեսզի թեթևացնեմ այդ տառապանքները և խոստովանող մարդու արտաքին գիտակցությունն ուղղեմ դեպի այն ճշմարիտ ուղին, որը թույլ է տալիս ապագայում խուսափել հոգու տառապանքների պատճառներից:

Շատերն են ինձ մատնացույց անում՝ որպես եկեղեցական հիերարխիային հնազանդ լինելու օրինակ: Ես իսկապես չլքեցի եկեղեցին այն բոլոր տարիների ընթացքում, երբ ստիպված էի սպասել խոստովանանք ընդունելու իմ իրավունքի վերականգնմանը: Ես չլքեցի եկեղեցին ո՛չ այն պատճառով, որ հաշտվեցի եկեղեցու ղեկավարության կողմից իմ նկատմամբ ցուցաբերած անարդար վերաբերմունքի հետ: Ես այլ ուղի չէի տեսնում՝ բացի Հռոմի Կաթոլիկական Եկեղեցուց, որից օգտվելով՝ ես կկարողանայի այդքան գործուն ծառայություն մատուցել մարդկանց: Եվ ինչո՞վ կարող էի հակադրվել եկեղեցու ղեկավարության այդ որոշմանը: Իմ պայքարո՞վ: Սկսելով պայքարել մարդկանց ծառայելու իմ իրավունքի համա՞ր:

Ես արդարամտորեն դատեցի, որ Աստված իրավունք ունի ցանկացած եղանակով փորձելու ինձ: Եվ Նա դա արեց եկեղեցու ղեկավարության միջոցով: Աստված զրկեց ինձ իմ շնորհն օգտագործելու իրավունքից. Աստված, և ո՛չ մարդիկ, ովքեր տվյալ դեպքում հանդես եկան որպես Նրա կամքի կատարողներ:

Ըստ այդմ՝ խոսքը եկեղեցու ղեկավարության ու կանոնների առջև իմ խոնարհության ու հնազանդության մասին չէ, այլ է Աստծո Կամքի առջև իմ խոնարհության ու հնազանդության մասին է:

Աստված իրավունք ունի զրկելու մեզ այն ամենից, ինչի նկատմամբ մենք թեկուզ շատ չնչին կապվածություն ենք զգում՝ դրանով փորձելով Իր Կամքին մեր նվիրվածությունն ու մեր հնազանդությունը:

Գոյություն ունեն միայն Աստծո հետ ձեր փոխհարաբերությունները, ձեր անձնական փոխհարաբերություններն Աստծո հետ և ձեր անձնական փոխհարաբերությունները սատանայի հետ: Եվ մեկը, և՛ մյուսը գտնվում են ձեր ներսում: Այդ պատճառով, այնքան էլ էական չէ, թե ինչ կրոնի, կրոնական խմբի կամ կրոնական ուղղության եք դուք հարում: Ամենակարևորը ձեր անձնական փոխհարաբերություններն են Աստծո հետ:

Դուք կարող եք վազել մի եկեղեցուց մյուսը, մի կրոնից մյուսը, բայց ձեր հոգում հանգստություն չեք գտնի այնքան ժամանակ, քանի դեռ չեք հասկացել, որ և՛ Աստված, և՛ սատանան գտնվում են ձեր ներսում: Իսկ արտաքին կրոնն ու արտաքին կրոնական համակարգն ունեն միայն լրացուցիչ նշանակություն: Եվ նրանք օգտակար են միայն այնքան ժամանակ, քանի դեռ օգնում են ձեզ կողմնորոշվելու ձեր ներքին խնդիրներում ու հարցերում: Այնքան ժամանակ, քանի դեռ օգնում են ձեզ լուծելու ամենակարևոր հարցը՝ Աստծո հետ ձեր փոխհարաբերությունների հարցը:

Եվ դուք մշտապես պետք է հիշեք, որ յուրաքանչյուր եկեղեցում կան մարդիկ, ովքեր ճշմարիտ սպասավորներ են, և կան մարդիկ, ովքեր եկեղեցի են եկել, որպեսզի երկրպագեն իրենց իսկ էգոյին:

Եվ ճշմարիտ սպասավորները միշտ ավելի քիչ են: Բայց նրանք կան բոլոր կրոններում ու եկեղեցիներում: Քանզի ցանկացած եկեղեցու ուժը հիմնված է այն Լույսի վրա, որն իրենց մեջ կրում են այդ եկեղեցու և այդ կրոնի սրբերը:

Եթե եկեղեցին սկսում է հալածել իր սրբերին, ապա այդպիսի եկեղեցին դատապարտված է դանդաղ մահվան, որովհետև զրկվում է այն հիմքից, որի վրա հենված է:

Ըստ այդմ՝ դուք կարող եք փնտրել նոր կրոններ ու նոր մարդկանց, որոնք ձեզ գիտելիք են տալիս, բայց դուք կարող եք նաև մնալ ավանդական եկեղեցիների և ավանդական կրոնների շրջանակներում: Ամեն ինչ որոշվում է ոչ թե ճշմարիտ կամ ոչ ճշմարիտ կրոնական ուղղության արտաքին պատկանելությամբ, այլ ձեր ներքին մղումով և ձեր իսկ ներսում ճշմարտության որոնմամբ:

Եվ եթե ձեր մղումներն անկեղծ են, ապա ցանկացած կրոնական դավանանքի շրջանակներում դուք կգտնեք մարդկանց, որոնց թրթռանքները համահունչ են ձեզ, և նրանցից դուք կստանաք հենց այն, ինչը տվյալ պահին ձեր հոգու զարգացման համար ամենաանհրաժեշտն է: Իսկ դա կարող է լինել ո՛չ միայն հավանություն տալու և խրախուսանքի խոսք, այլ նաև փորձաքննություն, որին դուք պետք է պատվով դիմանաք, քանի որ այդ պահին դա հենց այն է, ինչն ամենաշատն է անհրաժեշտ ձեր հոգու զարգացման համար:

Եվ հավանականությունն այն բանի, որ պաշտոնական կրոնի սահմաններում դուք կբախվեք կեղծ կրոնական հոսանքների ու աղանդների հետ, ճիշտ այնքան է, որքան հավանականությունն այն բանի, որ կբախվեք կրոնի կեղծ մեկ-նաբանների հետ հին, թվում է, թե վաղուց ստուգված դավանաբանությունների ներսում:

Ձեր թրթիռներով ու էներգիաներով դուք ինքներդ եք դեպի ձեզ քաշում այն կյանքային իրավիճակները, որոնք, ըստ էության, ձեր ուղու այն թեստերն են, որոնք դուք պետք է պատվով հաղթահարեք:

Ըստ այդմ՝ մի՛ ձգտեք փնտրել Աստծուն ձեզնից

դուրս: Ձգտեք Աստծո հետ փոխհարաբերություններ հաստատել ձեր ներսում: Եվ ձեր ուղու վրա դուք անպայման կհանդիպեք մարդու՝ հոգևորականի աստիճանով կամ առանց դրա, որը ձեզ կտա ձեր ուղու համար անհրաժեշտ գիտելիքներ:

Կարողացեք ունկնդրել ձեր սրտին, կարողացեք զանազանել գառան մորթով գայլերին, որոնք, առատորեն դես ու դեն ընկած, միջոց են փնտրում տիրանալու ձեր հոգուն, ինչպես ավանդական կրոնական դավանաբանությունների ներսում, այնպես էլ դրանցից դուրս: Եվ ոչ մի երաշխիք չկա, որ այն մարդը, որին դուք ձեր ուղու վրա կհանդիպեք պաշտոնական եկեղեցու սահմաններից դուրս, կտա այն, ինչ ձեզ անհրաժեշտ է:

Դուք հայտնվում եք այն կյանքային իրադրություններում, որոնք դեպի ձեզ եք քաշում ձեր թրթիռներով:

Եվ եթե մեկին անհրաժեշտ է դուրս գալ ավանդական եկեղեցու սահմաններից, ապա մյուսին հատկապես անհրաժեշտ է մնալ այդ եկեղեցու շրջանակներում: Ոչ այն պատճառով, որ այդ եկեղեցին այդքան լավն է, այլ պարզապես այդ մարդու անփորձ հոգու համար ավելի լավ կլինի, եթե նա գտնվի սովորական փոշեկոլոլ ավանդության շրջապատում: Իսկ թարմ օդից այդպիսի հոգին կարող է հիվանդանալ և չդիմանալ փորձություններին:

Չկան և չեն կարող լինել բոլորի համար ընդհանուր հանձնարարականներ: Յուրաքանչյուր մարդ գտնվում է էվոլյուցիոն զարգացման իր աստիճանի վրա: Եվ այն, ինչ լավ է մեկի համար, մյուսի համար պարզապես կարող է կործանարար լինել:

Իսկ վերջում ես կուզենայի տալ մի քանի հանձնարարականներ:

Երբեք մի՛ շտապեք ձեզ վրա վերցնել պարտավորություններ, որոնք կապված են ինչ-որ կազմակերպության հետ ունեցած ձեր ֆինանսական կապերի հետ: Երբեք մի՛ ստորագրեք ոչ մի արտաքին փաստաթուղթ կամ պայմանագիր:

Աստծո հետ ձեր փոխհարաբերությունները չեն կարող հիմնված լինել որևէ պարտավորության վրա, որը ձեզ կապում է ինչ-որ եկեղեցու կամ կազմակերպության հետ: Դուք և միայն դո՛ւք կարող եք որոշել, թե որքան փող կամ կարողություն զոհաբերեք այս կամ այն կազմակերպության կամ եկեղեցու համար: Իսկ ֆիզիկական ոլորտում գտնվող և ոչ մի կազմակերպություն չի կարող ձեզ ստիպել, որ ձեզ վրա վերցնեք այդ կազմակերպությունը պահելու ֆինանսական պարտավորություններ:

Որպեսզի գտնեք դեպի Աստված տանող ուղին, հարկ չկա, որ դուք պատկանեք որևէ արտաքին կազմակերպության: Բայց այն բանի համար, որ ձեր կյանքում իրագործեք աստվածային ղեկավար սկզբունքներն այն երկրի կանոններին համապատասխան, որում դուք ապրում եք, ձեզ կարող է պետք գալ որևէ արտաքին կազմակերպություն: Սակայն բոլորովին պարտադիր չէ, որ այդ կազմակերպությունը լինի կրոնական: Դա կարող է լինել ցանկացած կազմակերպություն, որը նախատեսված է աստվածառաջնորդության սկզբունքների ներդրման համար կյանքի այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են երեխաների դաստիարակությունը, զառամյալների և ընչազուրկների խնամքը, առողջապահությունը, բժշկական սպասարկումը, կրթությունը և նույնիսկ ցանկացած բիզնեսը:

Կյանքը բազմազան է, և մարդկային գործունեության ցանկացած բնագավառ կարիք ունի այն բանին, որ հիմնված լինի բարձրագույն աստվածային սկզբունքների, այլ ոչ թե շահառության սկզբունքների վրա: Եվ միայն ձեզնից է կախված, թե ձեր կյանքում ինչ սկզբունքներով կառաջնորդվեք այդ կազմակերպությունները հիմնելու ընթացքում: Եվ երբեմն, եթե դուք ունակ եք ստեղծել կազմակերպություն և այն ղեկավարել բարձրագույն աստվածային սկզբունքներին համապատասխան, ապա ավելի քիչ օգուտ չեք բերում, քան եթե ձեր կյանքը նվիրաբերեիք վանքում աղոթելուն:

Գործերով աղոթքը միշտ եղել է և կմնա որպես աղոթքի ամենաբարձր ձևերից մեկը:

ԵՍ ԵՄ Պադրե Պիոն

ՍՈՒՏԱԿԵ ՃԱՌԱԳԱՅԹԻ ԲՈՒԴԴԱ

20 ապրիլի, 2005 թ.

ԼՈՒԾՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՁԵՐ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՐԿՐԱ-ԲՆԱԿՆԵՐԻ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄՆ Է

ԵՍ ԵՄ Սուտակե Ճառագայթի Բուդդան՝ այս դեսպանորդի միջոցով ձեզ այցի եկածը:

ԵՍ ԵՄ՝ Սուտակե Ճառագայթում Բուդդայի պաշտոն վարողս: Ես եկել եմ ձեզ որշակի գիտելիքներ տալու՝ կապված Սուտակե Ճառագայթի Հիերարխիայի հետ:

Երևի գիտեք, որ շատ տարիներ առաջ, երկրային ժամանակով միլիոնավոր տարիներ առաջ, Սուտակե Ճառագայթի Հիերարխիայի Վեհապետներս իջանք Երկիր մոլորակի ֆիզիկական ոլորտ: Մենք մարդկային մարմիններ առանք: Մեզնից յուրաքանչյուրը հնարավորություն ստացավ, Բարձրագույն մարմինների մաս կազմելով, մտնելու շատ մարդկանց մարմինների մեջ:

Անհատներից շատերն իրենց թերի զարգացման ու թրթիռների ցածրության պատճառով չէին կարող ընդունել մեզ: Բայց կային անհատներ, ովքեր Լույսի Էակների նշանակալի մաս ձեռք բերեցին՝ ընկալելով որպես իրենց իսկ բաղադրյալ մասը: Եվ կային նաև այնպիսիները, ովքեր ընդամենը շատ փոքրիկ կայծ ստացան: Տիեզերքն այնպես է կառուցված, և բոլոր կենդանի էակների էվոլյուցիայի ուղին այնպիսին է, որ երբ լրանում է ժամկետը, Բարձրագույն Էակները զոհաբերում են կյանքին ծառայելով ձեռք բերված իրենց նվաճումների պաշարը և միանում են կյանքի ստորին ձևերին, որպեսզի աստվածային ազդակ դառնան նրանց հետագա զարգացման համար:

Երևի գիտեք նաև, որ Սուտակե Ճառագայթի Հիերարխիայի ղեկավարը Սանատ Կումարան է, ով Երկրի համար դժվարին ժամանակներում ձեզ մոտ է եկել Վեներա մոլորակից: Դրանով է պայմանավորված Վեներա և Երկիր մոլորակների միջև կապի առկայությունը: Մեր էվոլյուցիաները շատ սերտորեն են միահյուսված: Իրականում յուրաքանչյուր բնիկ երկրացի իր Բարձրագույն մարմնի կազմում ունի վեներացու մասնիկ:

Այս նոր գիտելիքն ու ըմբռնումը, որ հիմա տալիս եմ, ուղղակի պարզաբանումն է ձեզ հայտնի այն փաստի, որ 144 000 վեներացիներ իջել են մարդկանց մարմինների մեջ: Հավանաբար տեղյակ եք կամ էլ նախկինում արդեն լսել եք այդ մասին: Ես ուղղակի մի փոքր կընդլայնեմ և ավելի կկոնկրետացնեմ ձեր գիտելիքը:

Մարդկանց մարմիններում Վեհապետների մարմնավորումն ընթացել է տարբեր ձևերով: Շատ հազվադեպ և միայն շատ վաղեմի ժամանակներում էր հնարավոր, որ Բարձրագույն որևէ Վեհապետ իր Լույսի ամբողջ զորությամբ կարողանա ներկա գտնվել որևէ մարդու մարմնում: Որպես կանոն՝ Վեներայի ամեն մի Վեհապետ իր Լույսով ու իր նվաճումներով օժտել է շատ ու շատ երկրացիների: Այդ գործընթացը նման է այն բանին, երբ կարագի մեծ կտորը դուք առանձին մասերի եք բաժանում՝ շիլայի տարբեր բաժիններին խառնելու համար: Այդպես էլ այն Վեհապետները, որոնց կոչում եք Համբարձյալ Վեհապետներ, իրենց կաուզալ մարմնի զգալի մասը բաժանել են մարմնավորված տարբեր մարդկանց միջև:

Եվ քանի դեռ իր մեջ որևէ Վեհապետի մաս ունեցող մարդը ենթակա է կարմայի օրենքի ազդեցությանը և ստիպված է մարմնավորվել Երկրի վրա, այդ Վեհապետը չի կարող ընդմիշտ լքել Երկիր մոլորակը և կրկին ամբողջությամբ վերածվել Տիեզերական Էակի: Նա կշարունակի կապված մնալ ձեր մոլորակի և ձեր մարմինների հետ:

Լսած կլինեք, որ ձեզնից յուրաքանչյուրը պատկանում է որոշակի ճառագայթի, և ամեն մեկդ որևէ մի Վեհապետի հետ ներքին կապ եք զգում: Հիմա արդեն իմացաք, թե ինչու կա այդ կապը:

Եվ քանի դեռ մարմնավորված վերջին մարդը չի հաղթահարի իր էգոն, իր կարման և չի հասնի Համբարձյալ Էակի գիտակցության մակարդակին, Համբարձյալ Վեհապետները կապված կմնան Երկրի հետ և կծառայեն մարդկությանը:

Սրանք երկար ժամանակ եղել են շատ գաղտնի և առանձնահատուկ գիտելիքներ:

Ձեզ նաև ասվել է, որ իրականում այս տիեզերքում ամենայն ինչ Աստված է: Եվ ձեզնից յուրաքանչյուրն Աստծո մարմնի ընդամենը մի մասնիկն է, բջիջը, ատոմը: Այն բանին զուգընթաց, երբ բարձրացնում եք ձեր գիտակցությունը, դուք հաս-

կանում եք, որ տարբերություն չկա ձեր և մյուս կենդանի էակների միջև, և պատրաստ եք դառնում ինքներդ ձեզ զոհաբերելու հանուն բոլոր կենդանի էակների: Որքան բարձր է ձեր նվաճումների մակարդակը, որքան ավելի բարձր դիրք եք գրավում տիեզերական հիերարխիայում, այնքան ձեզ համար ավելի հեշտ է դառնում հանուն հանուր տիեզերական կյանքի ինքներդ ձեզ զոհաբերելը:

Ահա այդպիսին է համայն տիեզերքի օրենքը, բարձրագույնը զոհաբերում է իրեն հանուն ցածրագույնի, որպեսզի այդ ցածրագույնին հնարավորություն տա զարգանալու և հասնելու գիտակցության ավելի բարձր մակարդակի:

Ուստի երբ մեծագույն Ուսուցիչները մարմնավորվում են Երկրի վրա, նրանք ուսուցանում են, որ նա, ով ավելի մեծ նվաճումներ ունի, ավելի մեծ սպասավոր է բոլորի համար: Ավելի բարձր գիտակցության մակարդակ ունեցող մարդն իր սրտի հատկանիշով դրդվում է ինքնազոհաբերության՝ հանուն էվոլյուցիոն զարգացման ավելի ցածր աստիճանի վրա կանգնածների գիտակցության զարգացման:

Եվ երբ դուք հասնեք Բուդդայի աստիճանին, ինքներդ էլ կկարողանաք նվիրաբերել ձեզ՝ ձեր ներկայությունը, միլիոնավոր կենդանի էակների:

Կան Երկիր մոլորակի հետ կապված Համբարձյալ Վեհապետներ, և կան Տիեզերական Էակներ, որոնց տունը ամբողջ տիեզերքն է, համայն աշխարհը, և նրանք կարող են, իրենց ցանկությամբ և Տիեզերական Օրենքներին համապատասխան, իրենց մի մասը պրոյեկտել շատ կենդանի էակների մեջ, որպեսզի Լույսի լրացուցիչ ազդակ հաղորդեն այն էակներին, որոնք գտնվում են էվոլյուցիոն զարգացման ցածր փուլերում:

Նաև Ես՝ Սուտակե Ճառագայթի Բուդդաս, հնարավորություն ունեմ ներկա լինելու շատ երկրացիների մարմիններում: Ես օժտված եմ գիտակցության տրոհելիությամբ և կարող եմ միաժամանակ մարմնավորվել հազարների ու միլիոնների մեջ, ինչպես նաև գտնվել գիտակցության համբարձյալ վիճակում: Դա այն որակն է, որին ձեզ նույնպես վիճակված է հասնել: Դուք մշտապես պետք է գիտակցեք, որ Երկրի վրա ձեր գտնվելը ժամանակավոր է, և լուծման ենթակա ձեր հիմնական խնդիրը երկրաբնակների գիտակցության բարձրացումն է՝ Երկրի բնակիչների գիտակցությունը համբարձյալ վիճակի մակարդակին հասցնելը:

Իսկ հետո, երբ այլևս կաշկանդված չեք լինի երկրային դոգմաներով ու սահմանափակումներով, ձեր գիտակցության առջև կբացվեն գլխապտույտ հեռանկարներ:

Էվոլյուցիան անսահման է:

Ես այսօր փորձեցի փոքր-ինչ ընդլայնել աշխարհակառույցի ձեր ընկալման հորիզոնները: Եվ հնարավոր է, որ ձեզնից որևէ մեկը Համբարձյալ Վեհապետի՝ ձեր մեջ ներկայության մասին գիտելիքն ընդունի որպես ենթագիտակցության մակարդակով վաղուց հայտնի փաստ, իսկ մի ուրիշը դա համարի չափից դուրս ֆանտաստիկական: Դուք բոլորդ գտնվում եք ձեր գիտակցության զարգացման տարբեր փուլերում:

Եվ քանի որ այս թելադրությունները տրվում են շատ լայն լսարանի համար, ապա գիտելիքի այս նոր նշույլը Ես տվեցի շատ մատչելի մակարդակով:

Երբ դուք առաջ եք ընթանում ձեր ուղով, ներքին մակարդակներով դուք կապված եք շատերի հետ, և ձեր նվաճումներն անմիջապես նուրբ ոլորտում փոխանցվում են հազարների ու միլիոնների: Իսկ երբ ձեր գիտակցության մեջ ցած եք սահում քարանձավային մարդու մակարդակի վրա, ապա դա նույնպես իր ազդեցությունն է թողնում հազարավոր ու միլիոնավոր կենդանի էակների վրա:

Դուք երբևէ չպետք է վախենաք, թե հանկարծ կարող եք գնալ ո՛չ այն ուղղությամբ: Մի՛ վախեցեք փորձարարությունից: Մի՛ վախեցեք սխալներ թույլ տալուց: Դուք միշտ օգնություն կստանաք ձեր ուղու վրա և միշտ կարող եք խնդրել այդ օգնությունը: Դուք միայնակ չեք և գտնվում եք հուսալի խնամքի ու պաշտպանության տակ, քանի դեռ ուզում եք ընթանալ Ուղով և ենթարկվել այն Օրենքին, որը գործում է համայն տիեզերքում:

Իսկ եթե ձեր ազատ կամքով ուզում եք ինքներդ ձեզ առանձնացնել համայն տիեզերքից և ապրել սեփական օրենքներով, ապա դա էլ ձեզ ոչ ոք չի արգելում:

Միայն թե այդ դեպքում ձեր ազատությունը կտարածվի մինչև որոշակի մի սահման, որից այն կողմ ձեզ կսպառնա անգոյության վիճակ: Ինձ ճի՛շտ հասկացեք, չեմ ուզում ձեզ վախեցնել ու ահաբեկել: Ըստ էության, նույնիսկ այն դեպքում, երբ դուք այնքան վտանգավոր եք դառնում այս տիեզերքի Աստծո Պլանի համար, որ ձեզ անգոյություն է սպառնում, միևնույնն է, անհետ չեք կորչում: Դուք շարունակում եք գոյություն ունենալ որպես էներգիա, միայն թե ձեր գիտակցությունից վերանում են այն գրառումները, որոնք չեն համապատասխանում Աստծո Պլանին: Եվ դուք ձեր էվոլյուցիան նորից սկսում եք ամենացածր մակարդակից՝ կրկին բարձրանալով էվոլյուցիայի աստիճաններով, որոնք տանում են դեպի անսահմանություն:

ԵՍ ԵՄ Սուտակե Ճառագայթի Բուդդան և առաքում եմ իմ Սուտակե Ճառագայթը ձեզնից նրանց, ովքեր պատրաստ են այն ընդունել:

Սուտակե ճառագայթը, լինելով Սիրո խտացված արտահայտություն, ունակ է արթնացնելու ձեր գիտակցությունը և բացելու ձեր հետագա Ուղու հեռանկարները:

ԵՍ ԵՄ Սուտակե Ճառագայթի Բուդդան

ՎԵՀԱՊԵՏ ԳՈԴՖՐԻ

21 ապրիլի, 2005 թ.

ՁԵՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՎԵՐՑՐԵՔ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՏՐՎՈՒՄ ԵՆ ՎԵՀԱՊԵՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

ԵՍ ԵՄ Գոդֆրին: ԵՍ ԵՄ եկել այս դեսպանորդի միջոցով:

Հնարավոր է, որ դուք ինձ չճանաչեք: Ես ավելի շատ հայտնի եմ Ամերիկայում՝ մի երկրում, որը շատ եմ սիրում, և որտեղ անցել են իմ մարմնավորումներից շատերը:

Ես կանգնած եմ եղել այդ երկրի նախահիմքերում, և ես մշտապես ձգտել եմ պաշտպանել ժողովրդավարության և ազատության սկզբունքները:

Ամեն ինչ կարող է փոխվել, բայց ժողովրդավարությունը և ազատությունը պետք է մնան այդ երկրի հիմքում: Եվ քանի դեռ այդ սկզբունքներն անսասան են մնում, այդ երկիրը կբարգավաճի:

Ըստ էության, պատմական զարգացման ժամանակակից փուլում չկան ավելի կարևոր բաներ, քան ազատության ու ժողովրդավարության սկզբունքները, որոնք պետք է դրվեն աշխարհում այժմ գոյություն ունեցող պետությունների հիմքում:

Ազատությունն ու ժողովրդավարությունն այն բանի երաշխիքն են, որ երկիրը չի գլորվի դեպի տոտալիտարիզմ, և երկրում կապահովվեն կյանքի բարենպաստ պայմաններ նրա բոլոր բնակիչների համար, այլ ոչ թե միայն կառավարող վերնախավի համար: Ես լիովին ինձ հաշիվ եմ տալիս, որ այսօր ես դիմում եմ հիմնականում Ռուսաստանի և այն երկրների բնակիչներին, ովքեր վերջին ժամանակներում իրենց շրջապատող իրականության մեջ համարյա չեն տեսել ոչ միայն ազատություն ու ժողովրդավարություն, այլ նաև դրանք թեկուզ հեռավոր ձևով հիշեցնող ինչ որ բան:

Եթե մարդը ծնվի բանտում և կյանքի մեծ մասն անցկացնի նրանում, ապա ազատ մարդու վիճակն այնքան անմատչելի կլինի նրա գիտակցության համար, որ այն մարդկանց պատմածները, ովքեր եկել են դրսի աշխարհից, հնարավոր է, նրան հեքիաթ թվան: Ազատությունը նախ և առաջ մտքի վիճակ է, մարդու հոգու վիճակը: Եվ դա այն է, ինչին դուք պետք է ձգտեք ձեր ողջ էությամբ:

Հավատացեք ինձ, մոտակա ժամանակներում որքան հաջող Ռուսաստանն ու մերձավոր երկրները կարողանան իրենց կյանքում իրականացնել ազատության ու ժողովրդավարության սկզբունքները, այնքան ավելի արագ ու բարեհաջող կլինի այդ երկրների համար Աստծո Պլաններին հասնելը մոտակա տասնամյակների ընթացքում:

Ազատության ու ժողովրդավարության համակցումը Աստծո նկատմամբ խոր ու ճշմարիտ հավատի հետ հենց այն է, ինչը մոտակա ժամանակներում կգերակշռի Ռուսաստանում ու նրա մերձակա երկրներում:

Ես գիտեմ, որ հիմա դուք իմ խոսքերն ընկալում եք որպես հեքիաթ: Եվ, հնարավոր է, դուք հիմա իմ խոսքերին մեծ նշանակություն չեք տալիս: Ինչ ասես, որ չեն ասում Համբարձյալ Վեհապետները, և դա այնքան է տարբերվում այն ամենից, ինչ ձեզ շրջապատում է, որ թվում է, թե այն ոչ մի առնչություն չունի ձեր կյանքերի և ձեզ հետ:

Դուք սխալվում եք, պաշտելիներս, այն ամենը, ինչ մենք ասում ենք՝ մեր կողմից ասված յուրաքանչյուր բառը, ձեզ համար շատ կարևոր է: Ես հասկանում եմ, որ թելադրությունների այսպիսի առատությունը կարող է ցրիվ տալ մեր կողմից մատնանշած լրիվ կոնկրետ առարկաների ձեր ընկալումը: Այդ առումով, խոստացեք ինձ, որ դուք կվերընթերցեք այս թելադրությունները, որ դուք մոտակա ժամանակներում կկարդաք մեր դեսպանորդի միջոցով տրված թելադրություններից օրական մեկ հատ, և որ դուք կմտորեք այդ թելադրությունների ամեն մի բառի մասին: Եվ այդպիսով դուք կհասկանաք, որ չկա իզուր ասված ոչ մի բառ: Մեր հանձնարարածների մեջ չկա մի բան, որ հենց այս պահին, հենց ձեր երկրների և հատկապես Ռուսաստանի համար արտակարգ կարևոր նշանակություն չունենա:

Խնդրում եմ, մեծ ուշադրությամբ վերաբերվեք այս թելադրությունների խոսքերին: Եվ նաև խնդրում եմ ձեզ հատուկ ուշադրություն դարձնել Վեհապետների վարժություններին ու հանձնա-

բարականներին, որոնք առատորեն տրվել են ձեզ:

Պաշտելինե՛րս, դա ձեր հավատի հարցն է: Որքանով որ հավատում եք, որ Համբարձյալ Դասերը կարող են խոսել ձեզ հետ և տալ ձեզ իրենց խրատները, այնքանով էլ հաջող կընթանա մոտակա ժամանակներում Ռուսաստանի համար նախատեսված Աստծո Պլանի իրականացումը:

Այժմ ես չէի ուզենա հիշել Ամերիկայի ոչ վաղ անցյալի տխուր փորձը: Բայց նկատեք, որ համարյա ամբողջ 20-րդ դարի ընթացքում Համբարձյալ Դասերն այդ երկրի ժողովրդին տվեցին իրենց հանձնարարականները, իրենց գիտելիքները: Դա Լույսի և Աստծո Իմաստության աննախադեպ արտահոսք էր: Եվ այնպիսի տպավորություն է ստացվում, որ Վեհապետների թելադրությունները շատերի կողմից, եթե չասենք համարյա բոլորի կողմից, ընկալվեցին որպես հերթական զվարճալի միջոցառում. բեյսբոլի կամ թատերական ներկայացման նման մի բան: Խնդրում եմ, պաշտելինե՛րս, լրջությամբ վերաբերվեք նոր թողության շնորհին՝ Աստծո կողմից տրված հնարավորությանը:

Միայն հենց ձեզնից, այն բանից, թե ինչպես կընկալեք այն ամենը, ինչ շարադրված է այդ թելադրություններում, և թե որքանով ունակ կլինեք կիրառել դրանք ձեր կյանքում, կախված է այն, թե ինչքան արագ ու հաջող կընթանան բարեփոխումները ձեր երկրների ժողովուրդների համար:

Աստծո համար ոչինչ անհնարին չէ, պաշտելինե՛րս, և Աստված կարող է ձեզ համար ապահովել ամենալավ կառավարությունն ու ամենալավ պայմանները ձեր երկրներում: Բայց եթե դուք ձեր գիտակցության մեջ պատրաստ չեք ընդունելու այդ աստվածային ողորմածությունը, ապա այդ ողորմածությունը՝ այդ թողության շնորհը, այդպես էլ կմնա որպես հնարավորություն և չի կարողանա գոյություն ունենալ ձեր աշխարհում:

Բոլոր բարեշնորհ փոփոխությունները ձեր կյանքերի արտաքին հանգամանքներում և ձեր երկրների ներսում գոյատևման պայմանների բարեփոխումներում որոշվում են միայն ձեր գիտակցության մակարդակով և նրանով, թե ձեր գիտակցության մեջ որքանով եք ունակ ընդունելու Աստվածառաջնորդության սկզբունքներն ու Աստծո օգնությունը ձեր երկրների համար:

Ըստ այդմ՝ ես ձեզ կրկին ու կրկին ասում եմ. վերցրե՛ք այս թելադրությունները. կարդացե՛ք դրանք: Դրանք այն գործիքն են, որն ընդունակ է փոխել ձեր գիտակցությունը և մոտակա տասնամյակների ընթացքում ձեզ ազդակ հաղորդել ձեր առաջընթացի ուղղությամբ:

Դուք հիշում եք, թե ոչ շատ վաղ պատմական ժամանակում ինչպես էին ձեզ ստիպում մշակել ձեր կուսակցական համագումարների նյութերն ու մարքսիստական գաղափարախոսության հայրերի աշխատությունները: Գաղտնիքը պարզ է: Մարդկային գիտակցությունը շատ շարժունակ ու անկայուն է, և որպեսզի գիտակցության մեջ ինչ-որ բան կախված մնա, անհրաժեշտ են բազմապատիկ կրկնություններ՝ ընդհուպ մինչև անգիր սերտելը:

Մի՞թե համարում եք, թե Վեհապետների խոսքերը պակաս կարևոր են, քան այն մարդկանց խոսքերը, որոնք դուք տասնամյակներ շարունակ մեջբերում և ուսումնասիրում էիք:

Որպեսզի ձեր շրջապատի կյանքում փոփոխություններ տեղի ունենան, անհրաժեշտ է, որ փոխվի ձեր գիտակցությունը: Դուք բավարար քանակի գիտելիքներ եք ստացել: Եվ մոտակա ժամանակի ձեր խնդիրն այն է, որ այդ գիտելիքները տարածեք, որքան հնարավոր է, ավելի լայն շրջապատի անձանց համար, ովքեր ունակ են ընկալել և յուրացնել այդ գիտելիքները: Բայց նախ և առաջ դուք ինքներդ պետք է յուրացնեք այդ գիտելիքները:

Դուք փոխում եք ձեր գիտակցությունը, և միայն դրանից հետո են տեղի ունենում ձեզ շրջապատող աշխարհի փոփոխությունները: Մարդկային գիտակցությունն այնպես է կառուցված, որ նա իր համար մշտապես պետք է ունենա արտաքին ուսմունք, արտաքին կողմնորոշիչներ, դեպի ուր նա պետք է մղվի: Դուք դրանք կարող եք անվանել գաղափարաբանական հիմնադրույթներ, իսկ ես կգերադասեի, որ անվանեիք Աստվածառաջնորդության սկզբունքներ:

Գաղափարները շարժում են աշխարհը: Ըստ այդմ՝ խնդրո՛ւմ եմ, ձեր գործունեության համար հիմք վերցրեք աստվածային գաղափարները, որոնք տրվում են Վեհապետների կողմից: Ոչ մի վատ բան չկա այն բանում, որ դուք Աստվածառաջնորդության սկզբունքները ձեր կյանքի մեջ ներդնելով համակվեք: Համենայն դեպս այդ համակվածությունը ձեզ համար ավելի օգտակար կլինի, քան ձեր աշխարհի անցողիկ ու առասպելական արժեքներին ձգտելը:

Եվ կրկին, ինչպես միշտ, ձեր առջև ընտրության հարցն է: Ի՞նչը գերադասել. ընտրել այս աշխա՞ռհն՝ իր զարդարանքներով ու ոսկե հորթերով, թե՞ Աստծո Աշխարհը: Ընտրել պատրա՞նքը, թե՞ Աստծո Իրականությունը: Դուք սոսկ այդ մի ընտրությունն եք կատարում թե՛ ձեր այս ողջ կյանքի ընթացքում, թե՛ կյանքից կյանք ձեր ճանապարհին:

Եվ եթե վերադառնանք ազատության ու ժողովրդավարության որակներին, ապա ես կուզենայի, որ դուք զանազանեիք այդ որակների մեջ առկա այն նրբերանգները, որոնք հատուկ են և՛ այդ աշխարհին, և՛ Աստծո Աշխարհին:

Եվ որքան էլ ասեք, թե Ռուսաստանն ազատ ժողովրդավարական երկիր է, այն չի լինի այդպիսին, քանի դեռ ազատության որակը, աստվածային ազատության որակը չի ծլարձակի ձեր սրտերի մեջ և այնտեղից չի տարածվի ձեր ողջ երկրում և ողջ աշխարհում:

ԵՍ ԵՄ Գոդֆրին, ձեզ հետ եղա այսօր:
Եվ ես իմ սրտի միջից ձեզ օժտում եմ
Ազատության մղումով

ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՍՏՎԱԾՈՒՀԻ

22 ապրիլի, 2005 թ.

ԱՄԵՆԱԼԱՎ ՔԱՐՈԶԸ ՁԵՐ ԱՆՁՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿԸ ԿԼԻՆԻ

ԵՍ ԵՄ Ազատության Աստվածուհին՝ այս դեսպանորդի միջոցով ձեզ այցի եկածը:

Ես Կարմայական Վարչության անդամ եմ և ապրիլի 23-ի նախօրյակին ձեզ այցի եմ եկել որոշակի նպատակով:

Տեր Սուրիան ապրիլի 19-ին ձեզ տեղեկացրեց, որ ամսի 23-ի թողության շնորհն այժմ գործում է միայն այն հոգիների համար, ովքեր մաքուր սիրտ ունեն և իրենց գործողությունների մաքուր շարժառիթներ: Ուստի մի՛ մոռացեք, որ յուրաքանչյուր ամսի 23-ին դուք հնարավորություն եք ունենում փոխակերպելու հաջորդ ամսվա կարման:

ԵՍ ԵՄ Ազատության Աստվածուհին, իսկ ձեզ համար աստվածային ազատության հատկանիշն առաջին հերթին ենթադրում է ազատություն կարմայից, ազատություն այն էներգիաներից, որոնք աղավաղվել են անցյալում գործած և Աստծո Կամքին չհամապատասխանող ձեր արարքներով: Այդ էներգիաները ձեզ կապկպում են Երկիր մոլորակի ֆիզիկական ոլորտին և մյուս թանձր շերտերին: Եվ ձեր հիմնական խնդիրն է ազատվել այդ կապվածությունից:

Իսկ այդ կապազերծման գործընթացը մեկ անգամվա գործ չէ: Եթե հանկարծ այնպես ստացվեր, որ հազարամյակներ տևած բազմաթիվ մարմնավորումների ընթացքում աղավաղված ձեր էներգիաներն ակտիվանային ձեր աուրայում, ապա դուք այդպիսի ծանրաբեռնվածությանը չէիք դիմանա: Ուստի, ըստ Տիեզերական բոլորաշրջանների մարդասիրական Օրենքի, ձեր կյանքը բաժանվում է ժամանակի առանձին հատվածների, որոնցից ամեն մեկում ակտիվանում է նախկինում աղավաղված այս կամ այն էներգիան: Իսկ ժամանակի այդ հատվածները պատիկ են Տիեզերական ժամանակացույցի 12 հիմնական ճառագայթներին:

Նշված ժամանակային բոլորաշրջանները ստորաբաժանվում են տարեկան շրջանների, այսպես կոչված, 12-ամյա շրջանների, որոնք համապատասխանում են Կենդանակերպի նշաններին: Դրանից զատ, յուրաքանչյուր տարվա ներսում կա ամսական շրջանների ստորաբաժանում: Դրանք այն շրջաններն են, որոնց համապատասխան ձեզ են վերադառնում այն կարմայական իրավիճակները, որոնցով պետք է անցնեք, որպեսզի հավասարակշռեք ձեր աուրաներում առկա և ձեր կողմից նախկինում աղավաղված էներգիաները:

Տիեզերքում ամեն ինչ տեղի է ունենում տիեզերական բոլորաշրջաններին համապատասխան, որոնք Աստված հաստատագրել է աստղերի լեզվով: Աստղերի լեզուն հասկացողին մատչելի են դառնում Աստծո Պլանի մանրամասները՝ ինչպես համայն տիեզերքի, այնպես էլ առանձին մոլորակի կամ աստղի վերաբերյալ: Ձեր ծննդյան պահին գործի է դրվում ձեր կենսահոսքի Տիեզերական ժամացույցը, լարվում է ձեր անհատական ժամացույցի զսպանակը: Եվ գիտենալով ձեր կյանքի պլանը, որը ձեր ծննդյան պահին որոշվում է նաև աստղերով, դուք կարող եք իմանալ, թե ժամանակի ո՞ր հատվածում և ձեր անցյալի կարմայական գրառումների ո՞ր էներգիաներն են մատչելի դառնում բեռնաթափման համար:

Եթե դուք ուշադրությամբ հետևեիք ձեր կյանքերի շղթային, ապա կնկատեիք, որ նախանձելի պարբերականությամբ ձեր հայացքի առջև հառնում են միևնույն խնդիրները, որոնք կապված են ձեր իսկ հոգեկան աշխարհի և շրջակա աշխարհի ձեր ընկալման հետ: Զսպանակը շարունակվում է լարվել, և ամեն մի նոր գալարի հետ նախանձելի հաստատունությամբ ձեզ են վերադառնում միևնույն խնդիրները: Եվ դուք ստիպված եք լինում նորից ու նորից վերադառնալ ձեր չհոկված որակներին՝ ամեն անգամ նոր մակարդակով լուծելով ձեր առջև կանգնած կենսական խնդիրները:

Դա նման է օվկիանոսի ալիքների ծփանքին: Ալիքը գալիս է դեպի ափ և ապա նահանջում: Իր շարժմանը զուգընթաց ալիքը շարժման մեջ է դնում օվկիանոսի ափին գտնվող քարերը՝ դրանք հետ ու առաջ տանելով: Եվ հազարավոր տարիների ընթացքում քարերը ողորկություն են ձեռք բերում:

Օվկիանոսը հոկում է ամեն մի խորդուբորդություն: Եվ այդպես՝ օրեցօր, տարեցտարի: Աստված Տիեզերական Բոլորաշրջանների Օրենքի միջոցով ձեր անկատար որակները հոկում է այնքան ժամանակ, քանի դեռ ողորկ չեք. քանի դեռ ձեր առաքան օվալաձև չի դարձել և ձեռք չի բերել այն թափանցիկությունն ու այն գույները, որոնք ի սկզբանե հատուկ էին ձեր հոգուն՝ նախքան ֆիզիկական աշխարհում ձեր մարմնավորվելը: Եվ ձեր այդ որակների հոկման ու դրանց՝ աստվածային որակների վերափոխելու գործընթացն ընդամենը մի կյանք չի տևում:

Իմաստուն մարդը հասկանում է, որ տիեզերական Օրենքից խուսափել հնարավոր չէ, բայց այն արդյունքին, դեպի ուր ձեզ մղում է Տիեզերական Օրենքը, կարելի է հասնել ավելի կարճ ժամանակի ընթացքում, եթե Օրենքին դիմադրելու փոխարեն նպաստեք դրա կենսագործմանը: Այդ դեպքում արդյունքը հասանելի է դառնում ավելի քիչ քանակի տիեզերական բոլորաշրջաններով: Եվ հենց դրանում է ասվածի իմաստը, որ ընտրյալների օրերը կկրճատվեն: Դուք հնարավորություն ունեք երկրային ձեր օրերը կրճատելու միայն այն դեպքում, եթե արագացնեք ձեր կարմայի վերադարձը: Այն, ինչի բեռնաթափման համար սովորական մարդուց պահանջվում են տասնյակ տարիներ, դուք կարող եք անցնել մեկ տարում:

Դուք պարզապես ավելի արագ եք փոխակերպում աղավաղված էներգիան՝ ձեր ցանկության և այն աստվածային ողորմածության շնորհիվ, որը ձեզ թույլատրում է դա անել: Ուստի մի՛ անտեսեք յուրաքանչյուր ամսի 23-ը: Եթե ձեր մղումներն անկեղծ են, ապա այդ օրը դուք կարող եք հաջորդ ամսվա կարման փոխակերպել ոչ միայն ճիշտ ընտրություններով, այլ նաև աղոթքային գործառությամբ: Ես կուզենայի, որ դուք յուրացնեիք այն ճիշտ շարժառիթը, որով հարկ է, որ այդ օրը ձեռնամուխ լինեք աղոթքներ ընթերցելուն.

• Դուք անկեղծորեն գիտակցում եք ձեր բոլոր մեղքերը, որոնք գործել եք անցյալում, և դուք ձգտում եք ձեզնից կախված ամեն ինչ անել, որպեսզի ապագայում այլևս նման մեղքերը չգործեք:

• Դուք պատրաստ եք ձեր սրտերի ներուժով, որը լցված է ամբողջ Արարչության, բոլոր կենդանի էակների նկատմամբ սիրով, ձեր աշխարհ ներքաշել Աստծո Էներգիայի այնպիսի քանակություն, որը ձեզ թույլ կտա լրիվ փոխակերպել ձեր կողմից աղավաղված էներգիան:

Այդպիսով, եթե դուք կարողանաք ձեռք բերված ներուժի շնորհիվ Լույսի վերածել այն ամբողջ անկատար էներգիան, որն, ըստ օրենքի, բացվել է այս տիեզերական ժամկետում, ապա, երբ գա հաջորդ տիեզերական ժամկետը, դուք այլևս փոխակերպելու ոչինչ չեք ունենա: Այնուամենայնիվ դուք կշարունակեք ձեր ծառայությունը: Որովհետև, քանի դեռ մարմնավորման մեջ եք գտնվում, դուք պետք է օգտագործեք Երկրի վրա գտնվելու ձեր յուրաքանչյուր պահը, որպեսզի օգնություն ցուցաբերեք այն կենդանի էակներին, որոնք ձեզ նման հաջողակ չեն Ուղով իրենց առաջընթացում: Որպեսզի մարդը գիտակցի այս աշխարհում իր վիճակն ու իր անկատարությունը և մղվի դեպի Աստված, նրան անհրաժեշտ է հաղորդել սկզբնական էներգիա: Պատկերացրեք, որ մոտեցել եք մեկին, որն այնպես է կարմայով ծանրաբեռնված, որ չի գիտակցում իր կապը ո՛չ Աստծո հետ, ո՛չ էլ Երկրի մյուս արարածների հետ: Նա նման է չափազանց մրոտված անոթի: Ինչո՞ւ չօգտագործեք ձեր էներգիայի մի մասը, որպեսզի մրազերծեք այդ անոթը: Լաթով շփեք, օգնեք, որ նրան հասնի Աստծո էներգիայի մի փոքրիկ մասնիկ՝ Լույսի մի փոքրիկ ճառագայթ, որն ունակ կլինի արթնացնել այդ մարդու քնած գիտակցությունը: Ձեզնից յուրաքանչյուրը, եթե լավ հիշեք, անցյալում գտնվել է նման մրոտված վիճակում: Եվ միշտ ձեր կողքին գտնվել է մեկը, որը ձեզ է ուղղել իր քնքուշ հայացքը կամ կարեկցել է ձեր հոգուն: Եվ դուք ստացել եք էներգիայի այն չափաբաժինը, որը ձեզ համար բավարար է եղել, որպեսզի ձեր գիտակցությունը բարձրացնեք ավելի բարձր Իրականության գիտակցման մակարդակին:

Ձեզնից յուրաքանչյուրն օգնության կարիք ունի, և ինքն էլ կարող է ցուցաբերել այդպիսի օգնություն:

Դուք կարող եք այդ օգնությունը ցուցաբերել անգիտակցաբար՝ ձեր հայացքով, ծագած ծայրահեղ իրադրության նկատմամբ ձեր վերաբերմունքով: Ամենալավ քարոզը կլինի ձեր անձնական օրինակը՝ այն, թե ինչպես եք ձեզ պահում կյանքում, ինչպես եք ընդունում կյանքի իրադրություններն ու փորձությունները:

Ձեռնադրումների նախնական դպրոցի ձեր ավարտական քննությունը կլինի այն օրը, երբ կտեսնեք, թե ձեր շրջապատի որքա՞ն շատ մարդիկ են ձեր օգնության կարիքը զգում: Իսկ ձեր ամենամեծ նվաճումը կլինի այն պահին, երբ անկեղծորեն կուրախանաք ձեր եղբայրակիցների նվաճումներով: Երբ անկեղծորեն ուրախանում եք ձեր շրջապատի մարդկանց նվաճումներով, ապա դուք ստանում եք, որպես ձեր սեփական նվաճումների մոմենտում, այն բոլոր մարդկանց նվաճումները, որոնց հաջողություններով անկեղծորեն ուրախացել եք:

Այդ եղանակով դուք կարող եք բազմապատկել ձեր գանձերը Երկնքում ձեր կաուզալ մարմնի գանձերը: Դուք ընդհանրապես կարող եք ինքներդ ոչինչ չանել, այլ միայն օգնել և անկեղծորեն ուրախանալ մյուսների նվաճումներով: Եվ դուք ձեռք կբերեք ավելի մեծ վաստակ ու բարի կարմա, քան նույնիսկ այն դեպքում, երբ ձեր բոլոր ջանքերը նվիրաբերեք ձեր անձնական թերությունների դեմ պայքարին: Ես այսօր ձեզ համար բացեցի շատ պարզ մի գաղտնիք, որի շնորհիվ շատերն են հասել համբարձման և վերջ տվել իրենց երկրային մարմնավորումների հերթագայությանը:

Կարողացե՛ք ուրախանալ ուրիշ մարդկանց նվաճումներով և հիանալ դրանցով:

ԵՍ ԵՄ Ազատության Աստվածուհին

ՊԱԴՄԱ ՍԱՄԲՀԱՎԱ

23 ապրիլի, 2005 թ.

ԱՂՈԹՔԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՂՋ ԻՄԱՍՏԸ ՁԵՐ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐ ՀԱՆԵԼՈՒ ՄԵՋ Է

ԵՍ ԵՄ Պադմա Սամբհավան: Գիտեք ինձ արդյոք:

ԵՍ ԵՄ եկել այս դեսպանորդի միջոցով, որպեսզի մի քիչ պատմեմ այն գործի մասին, որը ես կատարեցի Երկրի վրա ունեցած իմ մարմնավորման ժամանակ:

Ես եկա Երկիր ավելի քան հազար տարի առաջ: Ես ծնվել էի բանականության միջոցով: ԵՍ ԵՄ՝ Բանականության Լոտոսից ծնվածս:

Բուդդայի մակարդակի իմ նվաճումներն ինձ թույլ տվեցին աշխարհ գալ այդ եղանակով:

Օ՜, դուք կարող եք չհավատալ: Երկրի երեսին շատ հրաշքներ ենս տեղի ունենում, բայց, եթե դուք չեք հավատում այդ հրաշքներին, ապա այդ հրաշքները ձեզ համար գոյություն չունեն:

Դուք հավատում եք միայն այն բաներին, ինչ տեսնում եք ձեր հեռուստացույցների կամ ձեր համակարգիչների էկրանների վրա: Այն, ինչ անիրական է, դուք իրականության տեղ եք դնում, իսկ այն, ինչ իրական է, չեք կարողանում ընկալել:

Դուք կդառնաք Բուդդա, եթե ձեր գիտակցության մեջ տեղի ունենա հակառակ գործընթացը. ընկալեք Աստծո Իրականությունը՝ գտնվելով պատրանքի մեջ, և գիտակցեք ձեր աշխարհի ողջ պատրանքայնությունը:

ԵՍ ԻՆՔՍ եկա Երկիր, որպեսզի ամրապնդեմ այն հավատի հիմքերը, որն անվանվում է բուդդայականություն. եկա, որպեսզի նորացնեմ և ամրացնեմ այդ հավատը: Դա էր իմ առաքելությունը: Եվ ես ուրախ եմ այսօր այն մարդկանց դիմելու իմ հնարավորության համար, ովքեր մեծ մասամբ բուդդայականներ չեն:

Իրականում ձեզնից յուրաքանչյուրը հեշտությամբ կարող է բուդդայական դառնալ: Բավական է միայն՝ ձեր սրտում որոշում ընդունեք երբեք չվնասել Երկրի վրա ապրող ոչ մի կենդանի էակի և պարտավորվեք օգնել Երկրի վրայի բոլոր կենդանի էակներին: Եվ, եթե դուք պատրաստ եք կատարելու ձեր այդ երկու խոստումները, ապա այսօրվանից ձեզ կարող եք համարել բուդդայականներ:

Ես ձեզ մոտ եմ եկել Վեսակ տոնի նախօրյակին, երբ լիալուսինը Ցուլի համաստեղությունում է: Եվ ես եկել եմ ամրապնդելու բուդդայականության հիմքերը ձեր սրտերում, ճիշտ այնպես, ինչպես այդ նույն առաքելությամբ ես եկել էի հազար տարուց ավելի առաջ: Աշխարհում ոչինչ չի փոխվել: Առաջվա պես աշխարհը գտնվում է պատրանքի մեջ և չի շտապում հրաժեշտ տալ այդ պատրանքին:

Ձեր աղոթքային գործառությունը պետք է մղվածություն ունենա: Եթե դուք աղոթում եք առանց հարկ եղած մղվածության, ապա իզուր ժամանակ եք կորցնում: Եվ, եթե այն ընթացքում, երբ դուք աղոթում կամ ներխոկում եք, ձեզ այցելում են մտքեր, թե ինչ մեծ աշխատանք եք կատարում մարդկության համար, ապա ձեր աղոթքն անիմաստ է դառնում:

Աղոթքի ժամանակ դուք պետք է ամբողջությամբ մի կողմ թողնեք ձեր մարդկային գիտակցությունը: Ինչպե՞ս կարող եք զրուցել Աստծո հետ, եթե ձեր գիտակցությամբ չեք հասել այն բարձունքին, որտեղից Աստված կկարողանար ձեզ լսել:

Երբ դուք խոսում եք իրար հետ, ապա հոգ եք տանում, որպեսզի մոտ լինեք այնքան, որ այն մարդն, ում դիմում եք, կարողանա ձեզ լսել: Հապա ինչո՞ւ Աստծո հետ զրուցելիս հոգ չեք տանում, որ Աստված լսի ձեզ:

Աստված զրուցում է ձեզ հետ սրտի լեզվով, և Նա զրուցում է ձեզ հետ ձեր սրտերում: Ուստի աղոթքի ժամանակ ձեր ուշադրությունը ոչնչով չպետք է շեղվի: Դուք պետք է ամբողջությամբ կենտրոնացած լինեք ձեր սրտի վրա, սրտի զգացողությունների վրա: Պարտադիր չէ նույնիսկ աղոթքի բառեր արտաբերելը: Դուք պարզապես ձեր գիտակցությունը միացնում եք Աստծո գիտակցության հետ: Դուք բարձրացնում եք ձեր գիտակցությունը ձեր Բարձրագույն Ես-ի մակարդակին: Եվ ահա՝ Աստծո մեջ եք:

Աղոթքային գործառության ամբողջ իմաստը

ձեր գիտակցությունը բարձրացնելն է: Եթե ձեր շուրթերն ու լեզուն աղոթքի խոսքեր են արտաբերում, իսկ ձեր միտքն այդ ընթացքում թափառում է շրջակայքում՝ դիտելով, թե ինչով են զբաղված ուրիշ մարդիկ, ապա ավելի լավ է՝ թողնեք աղոթելը: Դուք անիմաստ գործով եք զբաղված: Աղոթքը հաղորդություն է Աստծո հետ, այլ ոչ թե լեզվի վարժանք:

Դուք գիտեք, որ բուդդայականության մեջ Աստծո գաղափարն այլ կերպ է ընկալվում: Բայց եթե դուք, Աստված ասելով, հասկանաք Բարձրագույն Օրենքը, Բացարձակը, Բարձրագույն Բանականությունը, ապա համարյա բուդդայական կլինեք:

Որքան տարօրինակ է դիտել, թե ինչպես են մարդիկ իրենց մարդկային գիտակցությամբ դատում այն մասին, թե ինչպիսին է Աստված, կամ թե ինչ է Նա իրենից ներկայացնում: Եվ այն դեպքում, երբ ձեր պատկերացումներն Աստծո մասին չեն համընկնում մի այլ մարդու պատկերացումների հետ, դուք նույնիսկ կարող եք այդ մարդու նկատմամբ թշնամանք զգալ: Յուրաքանչյուր մարդ իր գիտակցության մեջ ունի Աստծո իր կերպարը: Եվ ձեզ մնում է միայն ընդունել այն միտքը, որ ուրիշ մարդիկ կարող են ա՛յլ պատկերացում ունենալ Աստծո մասին: Բայց դա դեռ չի նշանակում, թե որևէ մեկի պատկերացումն ավելի շատ է մոտ ճշմարտությանը, իսկ մի ուրիշն ավելի հեռու է այդ ճշմարտությունից: Դուք Աստծուն մոտ եք դառնում միայն այն ժամանակ, երբ ձեր գիտակցությունը բարձրացնում եք, որքան ձեզ համար հնարավոր է, ավելի բարձր մակարդակի վրա: Եվ որքան բարձր է ձեր գիտակցության մակարդակը, այնքան ավելի ու ավելի շատ եք գիտակցում, որ չեք կարող ամբողջությամբ ճանաչել Աստծուն:

Կա միայն Լինելիության իմացության հավերժական ձգտումը՝ հավերժական ինքնակատարելագործումը: Սակայն, երբ դուք ձեր գիտակցության մեջ հասնում եք նիրվանայի վիճակին, ապա հասկանում եք, որ հասել եք ամեն ինչին, և այլևս ձեզ ոչինչ պետք չէ ճանաչել, որովհետև մուտք եք գործել Աստվածության վիճակի մեջ:

Այնուամենայնիվ, երբ գալիս են տիեզերական ժամկետները, դուք դուրս եք գալիս ձեր այդ վիճակից և նորից սկսում եք ճանաչել Աստծուն: Եվ այդ գործընթացը ո՛չ սկիզբ ունի, ո՛չ վերջ: Բայց այժմ դուք գտնվում եք Աստծո ճանաչողության ամենացածր աստիճանի վրա, և առաջին խնդիրը, որ կանգնած է ձեր առջև, այն է, որ սկսեք տարբերել պատրանքային աշխարհն Իրական աշխարհից: Եվ նախ և առաջ դուք պետք է սովորեք զանազանել պատրանքը ձե՛ր իսկ գիտակցության մեջ: Եվ եթե խորհրդածեք ձեր մտքերի ու զգացմունքների շուրջ, ապա կհասկանաք, որ ձեր մտքերն ու զգացմունքները բացարձակապես անիրական են: Այն ամենը, ինչ շոշափում է ձեր մտածողությունը, իրենից պատրանք է ներկայացնում: Ըստ այդմ՝ պատրանքից ազատվելու առաջին էտապը ձեզ համար հանդիսանում է այն բանի ըմբռնումը, որ ձեր բոլոր մտքերն ու զգացմունքներն իրենցից պատրանք են ներկայացնում:

Եվ հենց որ դուք դա հասկանաք, պատրաստ կլինեք հաջորդ քայլին՝ հասկանալ այն, թե ինչն է, որ ձեր մեջ Իրական է:

Աղոթքային շատ գործառություններ կան: Դրանք բոլորն այն բանին են ուղղված, որ ձեզ հասցնեն ձեր իսկ Իրական մասի հետ շփման: Իսկ դեպի ձեր Իրական մասը տանող առաջին քայլը ձեր մտածողության հանդարտեցումն է:

Ես կտամ ձեզ իմ մանտրան: Այդ մանտրայի մեջ ես ներդնում եմ իմ էներգիան՝ իմ նվաճումների մոմենտումը: Դրա շնորհիվ, եթե դուք որոշեք կարդալ այդ մանտրան հենց հիմա, ապա այդ մանտրայի ընթերցումից դուք կստանաք առավելագույն ազդեցություն: Այդ մանտրան ոչ միայն կօգնի ձեզ ազատվել ձեր մտածողության ավելորդ շարժունությունից, այլ նաև թույլ կտա ձերբազատվել ձեր շատ անկատարություններից:

Այսպիսով, դուք հնազանդորեն արտաբերում եք. «ՕՄ ՄԱՆԵ ՊԱԴՄԵ ՀՈՒՄ»:

Կրկնեք այս մանտրան այնքան շատ և այնքան հաճախ, որքան դրա ցանկությունը կունենաք:

Այս մանտրան կօգնի ձեզ ազատվելու ձեր էգոյից այնքան արագ, որքանով ձեր մտքի մեջ ընդունում եք, որ կարող եք ազատվել ձեր էգոյից:

Ձեզնից ոմանք այն կարծիքին են, որ մինչև իրենց այս կյանքի վերջը չեն կարողանա ազատվել իրենց էգոյից: Որոշներն էլ մտածում են, որ իրենց մի քանի կյանք պետք կլինի, մինչև որ կարողանան ազատվել իրենց էգոյից:

Տեղի է ունենում ճիշտ այն, ինչը թույլ եք տալիս ձեր գիտակցության մեջ: Եվ, եթե դուք ձեր գիտակցության մեջ թույլ եք տալիս, որ կազատվեք ձեր էգոյից այն դեպքում, եթե տարվա ընթացքում օրական հազար անգամ կրկնեք իմ մանտրան, ապա հենց այդպես էլ տեղի կունենա: Միայն թե, խնդրում եմ, իմ մանտրան կարդալուց առաջ մի՛ մոռացեք կատարել իմ այն հանձնարարականները, որոնք տվեցի այս թելադրության մեջ:

Մի՛ մոռացեք, որ դուք զրուցում եք Աստծո հետ և, որքան հնարավոր է, շատ մոտեցեք Նրան ձեր սրտում, որպեսզի Նա լսի ձեզ:

ԵՍ ԵՄ Պադմա Սամբհավան,
ձեզ հետ եղա այսօր՝
Վեսակ տոնի նախօրյակին

ՎԵՀԱՊԵՏ ՆԻԿՈԼԱՅ

24 ապրիլի, 2005 թ.

ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ ԱՄԲՈՂՋ ԽԱՎԱՐԸ ԴՈՒՔ ՊԵՏՔ Է ԴՈՒՐՍ ՄՂԵՔ ՁԵՐ ՍՐՏԵՐԻ, ՁԵՐ ՕՐԻՆԱԿԻ ՈՒԺՈՎ

ԵՍ ԵՄ Համբարձյալ Վեհապետ Նիկոլայը: Դուք ճանաչում եք ինձ: ԵՍ ԵՄ՝ ռուսական ցար Նիկոլայ Երկրորդ Ռոմանովս, այժմ՝ Համբարձյալ Վեհապետ Նիկոլայ:

Ես շատ հուզված եմ մեր այսօրվա հանդիպման առիթով և այն հնարավորությամբ, որ կարող եմ դիմել ձեզ՝ բոլորիդ, ովքեր ապրում են Ռուսաստանում և այն երկրների տարածքներում, որոնք ինչ-որ ժամանակ կոչվել են Ռուսաստան:

Ես խոսում եմ, և իմ աչքերն արցունքով են լցվում: Որքա՜ն շատ բան կա ասելու: Բայց ես կուզենայի ասել ամենակարևորը՝ այն, ինչ ձեզ անհրաժեշտ է իմանալ այս պատմական պահին. այն, ինչ ձեզ համար տեսանելի չէ, բայց իրապես տեղի է ունենում Ռուսաստանի վերին նուրբ ոլորտում: Բազմաթիվ Երկնային ուժեր իրենց կառուցողական ջանքերն այժմ կենտրոնացրել են այդ երկրի տարածքի վերևում: Հսկայական զորություն է հավաքված Ռուսաստանից վեր՝ Երկնոլորտներում:

Եվ մենք պատրաստ ենք գործողությունների: Ամեն ինչ պատրաստ է, վերջին նախապատրաստություններն արդեն ավարտվել են: Աստվածային հնարավորությունը՝ Երկնոլորտների մտահաղացումը Ռուսաստանի համար, պատրաստ է փոխանցվելու ֆիզիկական ոլորտ: Օ՜, դա հիրավի վիթխարի մտահղացում է: Եվ այն ամենը, ինչ հիմա մեզ անհրաժեշտ է, ձեր օգնությունն է, որպեսզի այդ մտահղացումը փոխանցվի ֆիզիկական ոլորտին: Դուք գիտեք, որ որպեսզի իրականանա Աստծո Մտահաղցման փոխանցումը ֆիզիկական ոլորտ, մենք պետք է ունենանք որոշակի թվով նվիրյալ անհատներ, ովքեր գտնվում են մարմնավորման մեջ և ամբողջովին հավատարիմ են Աստծո Կամքին:

Մենք հասկանում ենք, թե որքան դժվար է ձեզ համար դիմանալ այն ուժերի մոլեգին ճնշմանը, որոնք կանխազգում են իրենց վերջը և այդ պատճառով գործում են բացահայտ՝ բոլորովին հոգ չտանելով այն մասին, որ իրենց անաստված գործողությունները փոքրիշատե թաքցնեն գաղափարախոսական ծածկույթով կամ քողարկեն իրենց անպատկառությունը:

Այդպես իրեն պահում է մահացու վիրավոր գազանը, որը զգում է իր մոտալուտ վախճանը և, իր անզորության կատաղի չարությունից դրդված, պատրաստ է ավերել ու սրբել իր ճանապարհին ամեն ինչ:

Այն ուժերը, որոնք այժմ Ռուսաստանում իշխանություն ունեն, նման են այդ մահացու վիրավոր գազանին, և, թվում է՝ ոչինչ չի կարող նրանց կանգնեցնել և խելքի բերել:

Սակայն այդ երկրի համար գոյություն ունի Աստծո Պլան, և այդ Պլանը կկենսագործվի: Հետաձգումը մի քանի տասնամյակով կամ նույնիսկ ամբողջ հարյուր տարով իրենից ներկայացնում է աննշան պատմական ժամանակամիջոց: Ձեզ հայտնի է, որ ես և իմ ընտանիքի անդամներն այդ բարձր առաքելությամբ մարմնավորվել էինք 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի ժամանակահատվածում:

Սակայն գազանն այդ ժամանակ շատ ուժեղ էր: Եվ նա աջակցություն ստացավ Ռուսաստանի ժողովրդի կողմից՝ օգտվելով այդ երկիրը բնակեցնող մարդկանց տգիտությունից: Տգիտությունն այն արատն է, որի միջոցով գործում են այս մոլորակի բոլոր չարամիտ ուժերը: Տգետ մարդը կույր գործիք է դառնում խավարի ուժերի ձեռքին:

Որքա՜ն ցավալի էր ինձ համար գիտակցել իմ անզորությունը իմ՝ գահից հրաժարվելու, հետագա ամոթալի ձերբակալության և պահակախմբի հսկողության տակ գտնվելու ընթացքում: Ես սիրում եմ Ռուսաստանը: Սիրում եմ Ռուսաստանն ամբողջ սրտով, իմ ողջ էությամբ: Եվ ես պատրաստ էի զոհաբերելու ինձ որպես զոհ մատուցելու ինձ ու իմ ընտանիքի անդամներին, միայն թե հնարավորություն տայի այդ երկրի մարդկանց, որ նրանք պայծառ ապագայի հեռանկար ունենան:

Ձեզ հայտնի է, որ ես գիտեի իմ ճակատագիրը, ես գիտեի այն նահատակության մասին, որը վիճակված էր ինձ ու իմ զավակներին: Եվ շատ ուղիներ կային, որ ես պահպանեի իմ կյանքն ու փախչեի արտասահման: Ես այդ բոլորը մերժեցի: Ես գիտակցաբար ընդունեցի իմ խաչն ու իմ խաչելությունը: Ամենադժվարն իմ ներսի այն մասի հաղթահարումն էր, որը փորձում էր ամեն գնով փրկել երեխաներին: Ճիշտ նույն կերպ Աբրահամն էր պատրաստ զոհ մատուցել իր զավակին: Ես մինչև վերջին պահը հույս էի փայփայում, որը Տերը հեռու կտանի ճակատագրի ձեռքը եթե ոչ ինձնից, ապա գոնե իմ զավակներից: Բայց ո՛չ: Տեղի ունեցավ ահավորը:

Սուրբ անմեղները մատնվեցին նահատակության: Եվ այդ պահը որպես ազդանշան ծառայեց խավարի ամենաչարամիտ ուժերի համար, որպեսզի դուրս սողան իրենց անկյուններից և մղվեն իշխանության: Ամբողջ խավարը ջրի երես հանվեց: Բոլոր նրանք, որ նախկինում փորձում էին պատշաճություն պահպանել և թաքնվել պուճախներում, այժմ ասպարեզ ելան: Դա մութ ուժերի խրախճանքն էր: Եվ այդ խրախճանքը շարունակվում է առ այսօր: Եվ, եթե առաջ նրանք քողարկվում էին գաղափարախոսությամբ՝ ձևացնելով, թե հոգ են տանում ժողովրդի կարիքների համար, ապա այժմ նրանք հարկ չեն համարում որևէ արդարացում բերել իրենց անօրինությունների համար:

Տխուր է այն ամենին նայելը, ինչ տեղի է ունենում Ռուսաստանում: Բայց դուք գիտեք, որ եթե հիվանդությունը ներս է քշվում, ապա այն աննկատելիորեն հյուծում է օրգանիզմը, մինչև որ այն ուժասպառ լինի ու մեռնի:

Իսկ Ռուսաստանում եղավ այնպես, որ բոլոր չար ուժերը, ամբողջ աղտեղությունն ու ամբողջ ախտը դուրս եկան նրա միջից: Եվ արդեն դարից ավել է, ինչ Ռուսաստանը ցնցվում է տենդի մեջ: Բայց ես հավատում եմ այդ երկրի զորությանը, ես հավատում եմ այդ երկրի ժողովրդին և գիտեմ, որ վաղ թե ուշ հիվանդությունը կհաղթահարվի: Նախքան այն, որ Աստված երկրի համար նոր հնարավորություն կընձեռի, այդ երկիրը պետք է անցնի քավարանով, ինքնամաքրվի: Ինքնամաքրմանը պետք է հաջորդի ապաշխարությունը, և միայն դրանից հետո լուսավոր ուղի կբացվի Ռուսաստանի ժողովուրդների համար:

Ես կարող էի դիմադրել: Կարող էի պահպանել իմ ընտանիքը, և մենք բոլորս կարող էինք կենդանի մնալ: Բայց ի՞նչ իմաստ կունենար իմ կյանքն առանց Ռուսաստանի: Ես ընտրեցի պայքարից հրաժարվելու ուղին, բռնությունից հրաժարվելու ուղին: Ես ընտրեցի Քրիստոսի ուղին և թույլ տվեցի խաչել ինձ ու իմ ողջ ընտանիքին:

Ես դարձա Համբարձյալ Վեհապետ, ես հասա համբարձման: Բայց իմ զավակները, իմ դուստրերը մինչև այժմ գտնվում են մարմնավորման մեջ: Նրանցից երկուսը դարձել են Մեծ Սպիտակ Եղբայրության դեսպանորդներ: Մեկը՝ Ամերիկայի տարածքում, իսկ մյուսը՝ Ռուսաստանի: Եվ, եթե իմ կյանքը նորից կրկնվեր, ես նորից կընտրեի իմ և իմ ընտանիքի խաչելությունը:

Դուք գիտեք, որ Հիսուս իր մարտիրոսական մահով իր վրա վերցրեց մարդկության կարման: Նա տառապեց մարդկության մեղքերի համար: Բոլոր ժամանակների բոլոր սրբերն իրենց վրա են վերցրել մարդկության մեղքերը՝ մոլորակային կարմայի մի մասը, որպեսզի թեթևացնեն բեռը, և մարդկությունը, ուղղելով մեջքը, հայացքն ուղղի դեպի Երկնոլորտները:

Այժմ եկել է ձեր հերթը: Ձեզ վրա՝ մարմնավորվածներիդ վրա է ընկած Ռուսաստանի, ամբողջ մոլորակի ապագայի համար պատասխանատվությունը: Քանզի, համաձայն Աստծո մտահղացման, Ռուսաստանը պետք է ուղի ցույց տա բոլոր մյուս երկրներին:

Ես նկարագրում եմ այն իրադրությունը, որի մեջ դուք գտնվում եք, այնպես, ինչպես երևում է ինձ իմ գիտակցության համբարձյալ վիճակից: Եվ ես տեսնում եմ, որ հարկ չի լինի շատ սպասել: Սակայն հատկապես հիմա, ինչպես երբեք, ձեզնից պահանջվում է գործադրել ձեր բոլոր ջանքերը:

Ամեն ինչ իրար է խառնված Ռուսաստանում: Հատիկը խառնված է որոմի հետ: Կարծես դիտմամբ է ամեն ինչ վերածվել շիլաշփոթի: Ահարկու գազանն ամեն ինչ խառնել է իր ճանապարհին և շարունակում է ավերել:

Սակայն այժմ ամեն ինչ ասպարեզ է հանված, և դուք պտուղով դատելու հնարավորություն ունեք: Այժմ դուք տեսնում եք, թե ով ով է:

Սակայն, խնդրում եմ ձեզ, թողեք պայքարը: Ընթացեք այն ուղով, որը մատնանշել է Հիսուս, այն ուղով, որը ես ընտրեցի իմ վերջին մարմնավորման ժամանակ: Ձեր խնդիրն է հրաժարվել բռնությունից:

Դուք պետք է Ռուսաստանից ամբողջ խավարը դուրս մղեք ձեր սրտերի, ձեր օրինակի ուժով: Ձեզնից յուրաքանչյուրը պետք է վերածվի Բարու և Լույսի հսկայական գեներատորի: Եվ այնտեղ, որտեղ դուք եք գտնվում, այլևս տեղ չի մնա խավարի համար:

Թող նրանք փախչեն Ռուսաստանից: Թող վերցնեն իրենց թալանածն ու գնան: Աստված երբեք չի լքի Ռուսաստանը, քանի դեռ մարմնավորման մեջ է գոնե մեկ սուրբ: Իսկ հիմա մարմնավորման մեջ են աննախադեպ քանակությամբ սրբեր:

Հիշեք, որ եթե նույնիսկ ֆիզիկական ոլորտում դուք տեսանելի պարտություն եք կրում, նուրբ ոլորտում հասնում եք հսկայական հաղթանակների: Դուք անմահ եք: Եվ, զոհաբերելով ֆիզիկական մարմինը, դուք սոսկ հաստատում եք Կյանքը: Դուք հաստատում եք Բարու և Լույսի սկզբունքներն այս մոլորակի վրա:

Բազմապատկեք Լույսը... Արարեք Բարին...

Ձեզ կիալածեն: Ձեզ կստորացնեն աղքատության միջոցով: Ես աղաչում եմ, որ դիմանաք այդ ամենին: Այնպես, ինչպես դիմացել եք այդ երկրի ծանր պատմության ընթացքում:

Քիչ է մնացել, սիրելիներս, դիմացեք:

Ժամանակը փոխվել է, և այն, ինչ ձեր աչքերի համար տեսանելի չէ, ես տեսնում եմ իմ համբարձյալ վիճակից: Եվ ես ասում եմ ձեզ. Ռուսաստանը մեծ երկիր է: Եվ նրա հզորությունն այժմ կենտրոնացված է նուրբ ոլորտում:

Եվ դուք գիտեք, որ Աստծո Պլանը՝ Աստծո Մտահղացումը, կկենսագործվի՝ անկախ խավարի ուժերի ցանկացած դիմադրությունից:

Որքան էլ վիրավոր գազանը մոլեգնի, նրա վախճանը կանխորոշված է:

Քիչ մնաց սպասելու: Դիմացեք, սիրելիներս: Ես ձեզ օգնություն կցուցաբերեմ: Ես կցուցաբերեմ այն օգնությունը, որը թույլ կտրվի ցուցաբերել: Օգնության համար ձեր աղոթքներում դիմեցեք ինձ:

Եվ թող ձեր սրտերը լցվեն ուրախությամբ՝ շուտով սպասվող մեծ հաղթանակի կանխազգացումից...

ԵՍ ԵՄ Վեհապետ Նիկոլայը, ներկա եմ Ռուսաստանի ամեն մի լուսակրի մեջ

ՎԵՀԱՊԵՏ ԷԼ ՄՈՐԻԱ

25 ապրիլի, 2005 թ.

ԴՈՒՔ ԱՇԽԱՐՀ ԵՔ ԵԿԵԼ ԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ. ԿԱՏԱՐԵՔ ՁԵՐ ՊԱՐՏՔԸ...

ԵՍ ԵՄ Էլ Մորիան՝ այս դեսպանորդի միջոցով նորից ձեզ այցի եկածը:

Ես շտապում եմ ամրագրել իմ Լույսի մոմենտումը Տատյանայի ուժային դաշտում: Համաձայն ինձ շնորհված պարտականության՝ ես օծել եմ վերջին հարյուր տարվա բոլոր դեսպանորդներին: Եվ ահա այժմ ես տեղադրում եմ իմ էլեկտրոնային ներկայությունը Տատյանայի դաշտում՝ որպես իմ խնամակալության նշան:

Ես չեմ կարող հովանավորչություն ցուցաբերել կազմակերպության միջոցով, քանի որ ֆիզիկական ոլորտում չկա համապատասխան կազմակերպություն: Կա միայն դեսպանորդ:

Ըստ այդմ՝ այսօրվանից սկսած, ես հաստատում եմ իմ հովանավորչությունը և իմ պաշտպանական թեվն ամրացնում եմ Տատյանայի աուրայում:

Այժմ ես դա կանեմ:

...

Իրականացավ:

Այս պահից սկսած՝ ես օժտում եմ Տատյանային ֆիզիկական օկտավայում ինձ ներկայացնելու իրավասություններով և նրան վերցնում եմ իմ խնամակալության տակ:

Ես ուրախ եմ, որ նորից ունեմ իմ ներկայացուցիչը Երկրի վրա՝ Երկիր մոլորակի ֆիզիկական ոլորտում:

Դուք գիտեք, որ ես մարդկանց հետ աշխատելու առանձնահատուկ ձգտում ունեմ: Չկա ուրիշ մի Վեհապետ, որն այսքան շատ աշակերտներ ունենա: Սակայն իմ անձնական հովանավորչությունը ես ցուցաբերում եմ խիստ հազվադեպ և բացառիկ դեպքերում:

Հնարավոր է՝ դուք դեռ լավ չեք պատկերացնում, թե դա ինչ է նշանակում:

Անմիջապես այն բանից հետո, երբ Եղբայրությունը հնարավորություն է ստանում որևէ երկրում ապրող դեսպանորդի աուրայում ամրագրված Լույսի մշտական կիզակետ ունենալու, և քանի դեռ Լույսի այդ կիզակետը պահպանվում է, ոչ միայն դեսպանորդը, այլ նաև այն երկիրը, որտեղ նա ապրում է, գտնվում են մեր խնամակալության տակ:

Ըստ այդմ՝ ես ձեր ուշադրությունը սևեռում եմ այսօրվա իրադարձության վրա: Եվ կտեսնենք, թե ինչ կլինի ապագայում. որքանո՞վ կարդարանան մեր հույսերն ու վստահությունը: Եվ դա վերաբերում է ոչ միայն դեսպանորդին, այլ նաև այն լուսակիրներին, ովքեր այժմ մարմնավորված են Ռուսաստանում: Սա բոլորիդ համար հարմար առիթ է՝ Երկնքից աննախադեպ օժանդակություն ու օգնություն ստանալու ձեր սկսած բոլոր գործերում:

Եվ այսօրվանից ես խոստանում եմ ձեզնից նրանց, ովքեր ամբողջ սրտով ընդունել են մեր դեսպանորդին, որ կարձագանքեմ ձեր ամեն մի կանչին: Եվ ես ձեր բոլոր նախաձեռնություններում կցուցաբերեմ հնարավոր ամբողջ օգնությունը: Միակ պայմանը ձեր շարժառիթների մաքրությունն է ու ձեր նախաձեռնությունների համապատասխանությունն Աստծո Կամքին:

Պաշտելիներս, գիտակցո՞ւմ եք արդյոք, թե ինչ հնարավորություն է ձեզ ընձեռվում: Ձեր հոգին չի՞

հրապուրվում արդյոք նրանով, որ առաջին իսկ կանչով դուք կստանաք Համբարձյալ Դասերի խնամակալությունը:

Կարո՞ղ եք արդյոք պատկերացնել, թե այդ դեպքում որքան արագ կվերափոխվի ձեր շուրջն ամեն ինչ:

Այսպիսով, ձեզ անհրաժեշտ է միայն, որ մոտենաք զոհասեղանին կամ խորանաք ձեր սրտում և հղեք հետևյալ կոչը.

«Հանուն ԵՍ ԵՄ ՈՐ ԵՄ-ի, հանուն իմ Հզոր ԵՍ ԵՄ Ներկայության, հանուն իմ Սուրբ Ես-Քրիստոսի՝ Մեծ Սպիտակ Եղբայրության Դեսպանորդ Տատյանա Միկուշինայի միջոցով պաշտելի Էլ Մորիայի շնորհած հնարավորությանը համապատասխան, ես խնդրում եմ, որ Աստծո Կամքը դրսևորվի իմ այս գործում, որը ֆիզիկական օկտավայում ես իրագործում եմ հանուն Աստծո»:

Այնուհետև դուք շարադրում եք այն միջոցառման կամ գործի էությունը, որում դուք ուզում եք ստանալ իմ անձնական օգնությունն ու Համբարձյալ Դասերի օգնությունը:

Դուք կարող եք ձեր այդ խնդրանքը գրել թղթի վրա և այրել այն: Այդ եղանակով, նույնիսկ չունենալով որևէ կազմակերպություն, դուք օգնություն եք ստանում, որն ուղղակիորեն ցուցաբերվում է ձեր աստվածային գործերում, որտեղ էլ որ գտնվելիս լինեք:

Ոչ մի նշանակություն չունի՝ մենա՞կ եք դուք գործում, թե՞ համախոհների խմբի հետ:

Ձեր գործում, որպես օգնություն, նաև դեսպանորդի կանչերից օգտվել կարողանալու համար խորհուրդ եմ տալիս ձեր խնդրանքը պարունակող նամակի պատճենն անմիջականորեն ուղարկել դեսպանորդին:

Այսօրվանից սկսած՝ Տատյանան, Մեծ Սպիտակ Եղբայրության Դեսպանորդի պատմուճանը կրելուց բացի, որը նա ստացել է համարյա մեկ տարի առաջ, կկրի նաև իմ անձնական դեսպանորդի պատմուճանը:

Այսպիսով մենք շատ շուտով կճանաչենք այն բոլոր լուսակիրներին, որոնք պատրաստ են միանալու այս նոր թողության շնորհին և գործելու դրա շրջանակներում:

Սակայն այստեղ կա տարբերություն՝ համեմատած մեր նախորդ թողության շնորհների հետ: Նախկինում մենք կիզակետն ամրագրում էինք կոնկրետ կազմակերպության, որը գտնվում էր որևէ կոնկրետ երկրում: Եվ, որպես կանոն, դեսպանորդը լինում էր այդ կազմակերպության առաջնորդը, և նրա ուսերին էր դրվում ամբողջ կազմակերպչական աշխատանքը: Այժմ մենք ընտրել ենք այլ ճանապարհ: Ձեր խնդրանքով մենք կհովանավորենք այն կազմակերպություններին, որոնք դուք կստեղծեք ձեր բնակավայրերում:

Մի՛ սպասեք որևէ հրամանի, այլ առաջնորդվեք ձեր սրտի թելադրանքով: Ձեզնից յուրաքանչյուրը մարմնավորվել է որոշակի առաքելությամբ: Եվ ամենքդ գիտեք, թե ինչ պետք է անեք: Պարտադիր չէ, որ հիմնեք կազմակերպություն, որն ընդգրկում է ձեր գործունեության բոլոր կողմերը: Դեռ ավելին, պարտադիր չէ, որ այն լինի հասարակական կամ կրոնական կազմակերպություն:

Դուք կարող եք բացել առևտրական կազմակերպություն, որպեսզի ձեր երկրի ներսում հաստատեք աստվածային սկզբունքների վրա հիմնված գործարարության վարման մեթոդներ: Կարող եք բացել առողջապահական և կրթական ձեր հաստատությունները:

Միակ պահանջը հետևյալն է. ձեր կազմակերպության համար գերակայությունը պետք է լինեն նրա հիմքում դրված աստվածային սկզբունքները և ձեր շրջապատի մարդկանց ցուցաբերվող օգնությունը:

Դրամի մասին մի՛ մտածեք: Դրամ կունենաք այնքան, որքան անհրաժեշտ է ձեր պլանների իրականացման համար:

Դրամը՝ փողերի էներգիան, երկրորդական գործոն է: Ամենակարևորը ձեր սրտերի մաքրությունն է և Աստծո Կամքը կատարելու ձեր ցանկությունը:

Դա ձեր ծառայությունն է, որը եկել եք ի կատար ածելու այդ աշխարհում: Եկել է կոնկրետ գործողությունների ժամանակը: Եվ մի՛ ասեք ինձ, որ չգիտեք, թե ինչ անեք: Հապա նայե՛ք ձեր շուրջը. մի՞թե ձեր աչքերը չեն տեսնում, թե որտեղ կարող են գործել ձեր կարողությունները, ձեր ջանքերը, ձեր ձեռքերն ու ոտքերը:

Եկել է կոնկրետ գործողությունների ժամանակը: Դուք աշխարհ եք եկել, որպեսզի գործեք: Բարի եղեք կատարե՛լ ձեր պարտքը:

Վե՛րջ տվեք դատարկ խոսքերին ու պարզաբանման ջանքերին, թե ով է Ուղու վրա ավելի մեծ արդյունքների հասել: Ես ուզում եմ վերջապես տեսնել, թե դուք իրապես ի՞նչ կարող եք անել ձեզ շրջապատող ֆիզիկական աշխարհում:

Դուք աշխարհ եք եկել գործելու համար. կատարեցե՛ք ձեր պարտքը... Եվ եթե մինչև հիմա չհասկացաք, թե ինչի մասին եմ խոսում, ապա երևի ստիպված իջնեմ ձեզ մոտ, թևերս քշտեմ և ցույց տամ, թե ինչ անեք:

Հապա տեսեք, թե որքա՞ն աղբ կա ձեր շուրջը: Եվ դա միայն ֆիզիկական աղբ չէ: Դա նաև այն աղբն է, որով հեղեղված են ձեր բոլոր տեղեկատվական միջոցները՝ հեռուստատեսությունը, ռադիոն, համացանցը, թերթերը:

Ձբաղվե՛ք ձեր շուրջն ու ձեր գիտակցության մեջ եղած աղբը հավաքելու գործով:

Եվ եթե ձեզնից որևէ մեկը չգիտի, թե որտեղ ներդնի իր ջանքերը, ապա նրան մնում է միայն աղոթել և Աստծուց լույս խնդրել, քանզի չափազանց շատ է հեռացել Աստծո Իրականությունից և նույնիսկ չի կարող գիտակցել, թե այն աշխարհը, որում ինքը գտնվում է, որքա՞ն կտրված է Աստծո Իրականությունից:

Ժամանակը փոխվել է, և, բոլորաշրջանների հերթագայությանը զուգընթաց, մենք ընտրում ենք գործողությունների այլ եղանակ:

Մենք չենք հիմնի միասնական կազմակերպություն, որը կարող է համեղ պատառի ու գայթակղության վերածվել նրանց համար, ովքեր ղեկավարելու մարմաջ ունեն:

Ո՛չ, մենք կտեղադրենք մեր Լույսի կիզակետը ցանկացած կազմակերպությանում, որը համապատասխանում է մեր սկզբունքներին, և որն ուղղակիորեն կամ մեր դեսպանորդի միջոցով կդիմի մեզ՝ մեր խնամակալությունը ստանալու համար: Եվ մենք կգործենք յուրաքանչյուրի միջոցով, ով նախապատրաստել է իր տաճարը մեր գալստյան համար: Մենք պարզապես կօգտվենք ձեր տաճար մուտք գործելու ձեր հրավերից և ձեր ինքնառաջադրումից, որ ֆիզիկական ոլորտում մեր ձեռքերն ու ոտքերը դառնաք:

Եվ մենք մուտք կգործենք ձեր տաճարները: Դա տեղի կունենա այնքան բնականորեն, որ դուք նույնիսկ չեք նկատի մեր ներկայությունը, իսկ մենք ձեզ ցույց կտանք այն լավագույն ուղին, որով կարող եք գործել. նաև ցույց կտանք, թե առաջին հերթին որտեղ ներդնեք ձեր ջանքերը:

Եվ եթե ձեզնից որևէ մեկն ասի, թե ինքը ոչ մի հնարավորություն չունի, որ ստեղծի իր կազմակերպությունն ու բացի իր գործը, թե ինքը ոչ մի համախոհ ու կողմնակից չունի և բոլորովին մենակ է, ապա թույլ տվեք չհավատալ: Դուք մարդկանց մեջ եք ապրում, և այդ մարդիկ ձեր օգնության կարիքն ունեն: Դուք չորս ստորին մարմին ունեք, և այդ մարմինները մաքրման կարիք ունեն:

Ըստ այդմ՝ մի՛ ասեք ինձ, որ դուք չգիտեք, թե ինչ անեք կամ ինչով զբաղվեք:

Եկել է ակտիվ գործողությունների ժամանակը: Ձեր բոլոր նախաձեռնություններում կստանաք Երկնքի օգնությունը, եթե դրանք համապատասխանում են Աստծո Կամքին...

Էլ ինչի՞ն եք սպասում:

Ի՞նչ է, ես իսկապես գամ և ցո՞ւյց տամ, թե ինչ անեք: Այդ դեպքում պահ՛եք ձեր ուսերը, և ես իմ պարտականությունների ու աշխատանքի մի մասը կդնեմ դրանց վրա...

Ամեն ոք պետք է ի՛ր գործն անի: Սկսեք գործել, և ուղղակի կզմայլվեք այն օգնությամբ, որը ձեզ կցուցաբերվի:

ԵՍ ԵՄ ԷԼ Մորիան, մշտապես ձեզ հետ եմ այնտեղ, որտեղ դուք կոնկրետ գործեր եք անում՝
հանուն Աստծո

ՎԵՀԱՊԵՏ ԿՈՒԹՀՈՒՄԻ

26 ապրիլի 2005 թ.

ՈՒՍՄՈՒՆՔ ԵՐԿՎՈՐՅԱԿ ԲՈՑԵՐԻ ՄԱՍԻՆ

ԵՍ ԵՄ Կութհումին՝ այս դեսպանորդի միջոցով ձեզ այցի եկածը: ԵՍ ԵՄ եկել, որպեսզի երկվորյակ բոցերի մասին նոր ուսմունք տամ ձեզ, որը տարբեր է նախկինում ձեզ տրված ուսմունքից:

Դուք գիտեք, որ Երկրի վրա մարմնավորված յուրաքանչյուր տղամարդու և կնոջ մեջ առկա են և՛ արական, և՛ իգական նախասկիզբները:

Ըստ էության, ձեր բարձրագույն ասպեկտում՝ ձեր Բարձրագույն մարմնում, դուք սեռ չունեք, անդրոգիններ եք: Եվ միայն տարբերակման, մատերիայի թանձրացման արդյունքում է, որ սկզբում ձեռք եք բերում ֆիզիկական մարմին, որից հետո՝ այս կամ այն սեռի հատկանիշը: Նախորդ պատկերացումները սխալական էին այնքանով, որ ձեր մի կեսը համարվում էր ձեզնից դուրս գտնվող, որն իբր առանձնացել է ձեզնից էվոլյուցիայի որոշակի փուլում:

Իրականում, եթե խոսենք ձեր հոգիների զարգացման մասին, ապա ձեր ճերմակահուր միջուկը կամ ձեր ԵՍ ԵՄ Ներկայությունը՝ ձեր ներսում գտնվող Աստծո անմահ մասը, երբեք չի բաժանվել երկու առանձին մասի, որ ներկայանան որպես արական և իգական նախասկիզբներ: Դա սխալ պատկերացում է, որը ձեր զարգացման որոշակի փուլում հանդուրժել էինք, որ այդպես ներկայացվի ձեզ: Այժմ եկել է նոր փուլ, և մենք կարող ենք ձեր հոգու զարգացման վերաբերյալ ձեզ տալ մի փոքր այլ՝ նախկինից տարբերվող պատկերացում:

Այսպիսով, ձեր Բարձրագույն մարմինը երբեք չի բաժանվել արական և իգական բևեռների:

Այդ դեպքում որտեղի՞ց են ծագել երկվորյակ բոցերի մասին բոլոր գեղեցիկ առասպելները՝ կապված երկրորդ կեսի որոնման և երկվորյակ բոցերի օրինական ամուսնության միջոցով միասնության հասնելու հետ:

Թույլ տվեք բացատրել: Ձեր հոգին և ձեր բարձրագույն մարմինները սեռ չունեն: Նրանք անսեռ են: Սեռ ունի միայն ձեր ֆիզիկական մարմինը,

որը սեռական հատկանիշ է ձեռք բերել էվոլյուցիոն զարգացման ոչ շատ վաղ անցյալում՝ ընդամենը մի քանի միլիոն տարի առաջ:

Նախքան սեռական հատկանիշների բաժանումը մանկածնության գործընթացը բոլորովին այլ է եղել, բայց այժմ մենք չենք խորանա այդ հարցում:

Եվ այսպես, որտեղի՞ց է առաջացել երկրորդ կեսի և նրա հետ կապված երջանկության մասին պատկերացումը:

Էվոլյուցիայի որոշակի փուլում դուք ստացել եք Բարձրագույն մարմին, որը տարբեր կրոնական համակարգերում տարբեր կերպ է անվանվում: Դա ձեր Ես-Քրիստոսն է՝ ձեր Բարձրագույն Ես-ը կամ Մանասը:

Հնարավոր է՝ այս թելադրություններից դուք արդեն հասկացել եք, որ ձեր Բարձրագույն Ես-ը ձեզ տրվել է որպես էմանացիա՝ ավելի բարձր հոգևոր էակների կողմից, ովքեր ձեզ են նվիրել իրենց մի մասնիկը: Մարդը պետք է իր ներսում ստանար ուղեկցորդ, որի ցուցումներին հետևելով՝ նա կկարողանար ստանալ Աստծո և ողջ արարվածի հետ միասնության՝ իր ներսում պակասող զգացողությունը:

Հիսուս, երբ գտնվում էր մարմնավորման մեջ, ուսմունք է տվել հոգու միավորման մասին: Դուք հիշում եք փեսայի առակը, նաև հիշում եք հարսի անվան հիշատակումը, որ նա պետք է իրեն նախապատրաստի փեսայի գալստյան համար:

Դա Հիսուսի կողմից շարադրված՝ երկվորյակ բոցերի մասին ուսմունքի տարբերակն է, որն ունի ուրիշ, ավելի ճշմարիտ իմաստ:

Երկվորյակ բոցի հետ ձեր միավորումը նշանակում է միավորում ձեր իսկ Բարձրագույն մասի հետ:

Սկսվում է տիեզերական էվոլյուցիայի նոր փուլ, և սարերի հետևում չէ այն, որ ձեզնից յուրաքանչյուրը միասնության կհասնի իր երկվորյակ բոցի՝ իր Ես-Քրիստոսի հետ:

Երկվորյակ բոցերի միավորումը նման է ծեսի, որի ընթացքում ձեր ստորին մարմինները, ձեր հոգին իրենց թրթիռներով համահունչ են դառնում ձեր Բարձրագույն մարմնի՝ ձեր Ես-Քրիստոսի հետ:

Իսկ քանի որ մինչ այդ դուք լիովին մաքրած եք լինում ձեր ստորին մարմինները, ապա էներգիան ազատ շրջանառվում է ձեր մարմիններում՝ ողողելով դրանք: Եվ այն երանությունը, որն ապրում եք ինքներդ ձեր Բարձրագույն մասի հետ միանալուց, վեր է հանում ձեզ անդրսահմանային երանության գագաթի վրա, որի հետ չի կարող համեմատվել ֆիզիկական ոլորտում տղամարդու և կնոջ ոչ մի միացում:

Օ՜, պաշտելինե՛րս, Աստված շատ ծածուկ բաներ ու գաղտնիքներ ունի, որոնք ժամանակի ընթացքում ձեզ համար կբացվեն: Եվ հնարավոր է, որ ես այսօր ձեր մտքերում ավերեցի երկվորյակ բոցերի մասին գեղեցիկ առասպելը, որն այնքա՜ն մոտ էր յուրաքանչյուրի սրտին, ում բախտ էր վիճակվել ծանոթանալ նախորդ դեսպանորդի միջոցով տրված ուսմունքին:

Սակայն վաղ թե ուշ պետք է հրաժեշտ տալ երեխայական հեքիաթներին և հասուն մարդ դառնալ:

Եվ միշտ էլ հաճելի է, հասուն գիտակցության վիճակում գտնվելով, կյանքում բախվել հրաշքների, որոնց նկարագրությունը չեք գտնի նույնիսկ լավագույն հեքիաթներում: Քանզի Աստծո Իրականությունը, Աստծո Իրականության ճանաչումը չեն կարող համեմատվել հեքիաթասացների ամենահամարձակ ֆանտազիաների հետ, որոնք ամեն դեպքում Աստծո Ճշմարտությունը բեկում են իրենց մարդկային գիտակցության մեջ:

Այժմ, պաշտելինե՛րս, ես կանգ կառնեմ ևս մի հանգամանքի վրա, որը կարող է ձեզ համար անսպասելի լինել: Քանի որ այն հեռավոր ժամանակներում յուրաքանչյուր Լույսի Էակ իր մասնիկներով օժտել է շատ կենսահոսքերի, ապա ձեզնից շատերի Ես-Քրիստոսները նույնական են իրար հետ և ունեն նույն էությունը, որն ունի այն Լույսի Էակը, ով ձեզնից յուրաքանչյուրին օժտել է իր մասնիկով:

Եվ, երբ դուք հասնում եք ձեր Բարձրագույն մասի հետ միավորման վիճակին, և մյուս մարդիկ էլ իրենց հերթին հասնում են իրենց Բարձրագույն մասերի հետ միավորման վիճակին, ապա դուք դառնում եք իրար հետ միասնական: Դուք զգում եք յուրաքանչյուրի հետ ձեր միասնությունը: Եվ ընդամենը մի երկվորյակ բոցի փոխարեն դուք միասնություն եք զգում միլիոնավոր երկվորյակ բոցերի հետ, որոնք ձեր Ես-Քրիստոսի հետ նույն էությունն ունեն:

Սակայն երկվորյակ բոցերի առասպելն ունի ևս մի կողմ, որը կապված է տիեզերական էվոլյուցիայի է՛լ ավելի վաղ փուլի հետ:

Այս տիեզերքի արարման արշալույսի ինչ-որ պահի տեղի է ունեցել արական ու իգական բևեռների բաժանում, և բաժանման այդ կետից էլ սկսվել է երևացող աշխարհի արարումը: Ուստի երբ դուք ձեր էվոլյուցիոն զարգացման ընթացքում ամբողջ տիեզերքի հետ կրկին վերադառնաք այդ կետին, ապա կանհետանան այս տիեզերքի և՛ արական, և՛ իգական բևեռները: Սակայն մարդկային չափանիշներով դա տեղի կունենա անսահման հեռու ժամանակներում:

Իսկ ներկայումս ձեր գիտակցությունը դեռ ունակ չէ իր մեջ տեղավորելու Տիեզերական Ճշմարտություններից շատերը: Դե, իսկ ես էլ իմ առջև խնդիր չեմ դնում ձեզ համար շարադրելու բոլոր այդ Ճշմարտությունները՝ թեկուզ այն տեսքով, ինչպես ես դրանք տեսնում եմ իմ համբարձյալ վիճակից:

Առայժմ այսքա՜ն էլ բավարար է, ինչ ձեզ ասացի:

Որպես սփոփանք կարող եմ ասել, որ այն

անհատները, որոնց Ես-Քրիստոսը նույն էությունն ունի, ինչ որ իմ Ես-Քրիստոսը, ինչ-որ չափով հանդիսանում են իմ երկվորյակ բոցերը: Ուստի, բացի ձեր Ես-Քրիստոսից, որն իրավամբ ձեր երկվորյակ բոցն է, դուք ունեք ևս մի քանի միլիոն երկվորյակ բոցեր, որոնք գտնվում են մարմնավորման մեջ և Ես-Քրիստոսի մակարդակով ձեզ հետ ունեն նույն էությունը:

Իսկ դա կարող է մեկին ուրախացնել, մի ուրիշին՝ վհատեցնել:

Այնուհանդերձ, հնարավոր չէ կանգնեցնել Աստծո Ճշմարտության ճանաչման գործընթացը: Այն կշարունակվի, անընդհատ բացահայտումները կշարունակվեն: Ուզում եք, թե ոչ, բայց ձեր գիտակցության էվոլյուցիայի գործընթացը հնարավոր չէ կանգնեցնել, և, եթե դուք սկսեք դիմադրել առաջընթացին, ապա, ինքներդ մտածեք, արդյո՞ք գործած կլինեք Աստծո Օրենքին համապատասխան:

Այսօրվա զրույցում ես ձեզ մատնանշեցի ձեր երկվորյակ բոցը, որը միշտ ձեզ հետ է և համբերությամբ սպասում է, թե երբ կդադարեք կլանված մնալ այս աշխարհի պատրանքով, որպեսզի ձեր հայացքն ուղղեք դեպի իրեն: Ձեր երկվորյակ բոցը ցանկանում է հաղորդակցվել ձեզ հետ, նա սպասում է ձեզ: Եվ այս աշխարհում չկա ուրիշ մեկը, որն ավելի մոտ լիներ ձեզ, և որի հետ դուք կարողանայիք կիսել ձեր բոլոր գաղտնիքներն ու ստանալ վստահելի խորհուրդ:

Ես ահա լռում եմ, որպեսզի ձեզ հնարավորություն տամ յուրացնելու այն անսպասելի տեղեկատվությունը, որը պարունակվում էր այսօրվա զրույցում:

ԵՍ ԵՄ Կութհումին: ԵՍ ԵՄ, որ Ես-Քրիստոսի մակարդակով նույն էությունն ունեմ ձեզնից շատերի հետ

ՏԵՐ ՍՈՒՐԻԱ

27 ապրիլի, 2005 թ.

ԵԹԵ ԻՐԱՊԵՍ ՈՒԶՈՒՄ ԵՔ ԻՆՉ-ՈՐ ԲԱՆ ՓՈԽԵԼ ՁԵՐ ԿՅԱՆՔՈՒՄ, ԱՊԱ ՊԵՏՔ Է ԱՎԵԼԻ ՀԱՃԱԽ ՄՏՈՐԵՔ ՁԵՐ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԵՍ ԵՄ Սուրիան՝ այս դեսպանորդի միջոցով կրկին ձեզ այցի եկածը:

Մեր այսօրվա զրույցի նյութը ձեր գիտակցությունը կլինի: Գտնվելով առօրեական կյանքի ունայնության մեջ՝ դուք չեք մտորում ամենագլխավորի՝ ձեր գիտակցության մասին: Դուք մտածում եք իրեղենի, սննդի, աշխատանքի, ընտանիքի, ժամանցների մասին: Մտածում եք հազար բանի մասին, սակայն հազվադեպ եք մտորում ձեր գիտակցության մասին:

Ես ուզում եմ ձեզ ասել, որ ձեր գիտակցությունը նույնպիսի կարևոր հարց է, ինչպես Աստծո հարցը: Որովհետև ձեր գիտակցությամբ է, որ ապրումներ եք ունենում և պահպանում ձեր կենսափորձը՝ ձեր կյանքերի հերթագայության ձեռքբերումները:

Եվ իրականում ձեր գիտակցության մակարդակով է որոշվում կյանքում ձեզ հետ պատահած ամեն բան: Ձեր գիտակցության մակարդակը շատ սերտորեն կապված է ինչպես ձեր, այնպես էլ ձեզ շրջապատող մարդկանց կարմայի հետ:

Որքան ավելի բարձր տոկոս է կազմում ձեր կարմայի բեռնաթափումը, այնքան ավելի բարձր է ձեր գիտակցությունը, և այնքան ավելի մոտ եք Աստծուն:

Ձեր գիտակցության մակարդակը կապված է նաև ձեր թրթիռների հետ: Որքան բարձր է ձեր թրթիռների մակարդակը, այնքան ավելի բարձր է ձեր գիտակցության մակարդակը: Եվ դրա հետևանքով ձեր գիտակցության մակարդակը ձեզ քաշում է դեպի այս կամ այն շրջապատը: Նմանը ձգվում է նմանի կողմը:

Ըստ այդմ՝ եթե ուզում եք իրապես ինչ-որ բան փոխել ձեր կյանքում, ապա պետք է ավելի հաճախ մտորեք ձեր գիտակցության մասին:

Ձեզ շրջապատող ֆիզիկական աշխարհի ցանկացած իրի, ցանկացած իրադարձության կարելի է մոտենալ երկու կողմից: Ամեն ինչի նկատմամբ գոյություն ունեն երկու հիմնական տեսակետներ: Եվ կյանքի ողջ բազմազանությունը, և՛ կենսական հարցերի ողջ բազմազանությունը դրվում են ձեր ընտրության առջև. ո՞ր աշխարհն եք ընտրում՝ պատրանքների՞ աշխարհը, թե՞ Աստծո Իրական Աշխարհը:

Ես կբերեմ իմ զրույցի նյութի մեջ պարզություն մտցնող օրինակներ:

Մի պահ պատկերացրեք, թե գտնվում եք ձեր գիտակցության բացարձակ ներդաշնակ վիճակում: Դուք, հավանաբար, ձեր կյանքում ապրել եք այդպիսի վիճակներ, երբ զգում եք խորը ներքին հանգստություն, հավասարակշռություն, անառիթ ուրախություն և սեր այն ամենի նկատմամբ, ինչը ձեզ շրջապատում է:

Աստված ձեզ տալիս է այդպիսի րոպեներ, որ կյանքի բարդ իրադրությունների ժամանակ կարողանաք վերադառնալ այն զգացողություններին, որոնք դուք ապրել եք ձեր կյանքի այդպիսի երանելի րոպեներին:

Ես ձեզ հանձնարարում եմ հիշել այդպիսի վիճակները: Փորձեք հուսալիորեն սևեռել ձեր հիշողության մեջ, եթե մոտ ապագայում հայտնվեք այդպիսի վիճակում:

Դա այն նմուշօրինակը թող դառնա, որի հետ կհամեմատեք ձեր կյանքի ընթացքում ունեցած ձեր գիտակցության վիճակները:

Այժմ պատկերացրեք, թե բախվել եք ձեր կյանքի որևէ աններդաշնակ իրադրության հետ: Դա կարող է լինել աններդաշնակ մարդկանց միջավայր կամ դղրդացող ռոք երաժշտություն: Շատ են այն ոչ աստվածային դրսևորումները, որոնց հետ ամեն օր դուք բախվում եք: Եվ կյանքի այդ աններդաշնակ իրադրությունների հետ ձեր բախման ընթացքում մի շատ կարևոր պահ է գալիս, երբ կարող եք կամ խառնվել այդ իրադրությանը, կամ էլ մնալ հավասարակշիռ վիճակում:

Բերեմ կոնկրետ օրինակ: Ասենք, ձեզ վիրավորել են ընտանիքում, աշխատատեղում կամ փողոցում: Ձեզ վիրավորանք են հասցրել, որին, ձեր կարծիքով, դուք բոլորովին արժանի չեք: Դուք դրան կարող եք արձագանքել այն երկու տարբեր ճանապարհներով, որոնք ես վերևում նշեցի: Դուք կարող եք մտնել այդ դրության մեջ և ապացուցել, որ դուք իրավացի եք, և ձեզ իզուր են վիրավորել, բայց կարող եք և այդ դրության մեջ չմտնել: Կարող եք ուղղակի ձեր գիտակցության մեջ սևեռել այդ իրադրությունը, բայց դրա մեջ չներդնել ձեր էներգիան: Հիշեք, որ ամբողջ ձեր պատրանքային աշխարհը պահվում է բացառապես ձեր էներգիայի միջոցով: Եվ դուք ինքներդ եք ամեն րոպե, ամեն վայրկյան ընտրում, թե ուր առաքեք ձեր էներգիան: Եվ եթե մտնում եք այն տհաճ իրավիճակի մեջ, որին հանդիպել եք, ապա սկսում եք դրա մեջ ներդնել այն էներգիան, որը բյուրեղյա լարով ձեր աուրայի մեջ է մուտք գործել Աստծո Աշխարհից:

Ինչ է տեղի ունենում նման դեպքում: Դուք ձեր էներգիան ներդնում եք անկատարության մեջ, և, դրանով հանդերձ, բազմապատկում եք պատրանքը:

Երկրի վրա ապրող մարդկանց մեծամասնությունը հենց այդպես էլ վարվում է:

Ձեր աշխարհը պահպանվում է միայն ձեր էներգիաներով: Եվ դուք ձեր էներգիաներով սնուցում եք ձեր աշխարհի ողջ անկատարությունը:

Աններդաշնակ վիճակում հայտնվելիս ձեր այլընտրանքն այն կարող լինել, որ հրաժարվեք սեփական էներգիան այդ անկատարության մեջ ներդնելուց: Իհարկե, նկատում եք, որ այդ իրադրությունն անարդարացի է, բայց նաև հասկանում եք, որ այն, ինչ տեղի է ունենում ֆիզիկական աշխարհում, պարզապես պատրանք է: Ուստի դուք ուղղակի դուրս եք քշում այդ իրադրությունը ձեր գիտակցությունից և ձեր գիտակցությանը թույլ չեք տալիս մտածել այդ իրադրության շուրջ:

Դա չի նշանակում, որ դուք անտարբեր եք դառնում ձեր աշխարհի անաստված դրսևորումների նկատմամբ: Դուք տալիս եք ձեր գնահատականը: Իհարկե, տալիս եք ձեր գնահատականը, նույնիսկ կարող եք ձեզ շրջապատող մարդկանց համար հասկանալի մակարդակով արտահայտել այն, բայց ձեր այդ գնահատականի մեջ չեք ներդնում ձեր էներգիան: Դուք վերհիշում եք ձեր ներդաշնակ վիճակները և շրջապատի աններդաշնակ իրավիճակից ձեր գիտակցությունը տեղափոխում եք այդ ներդաշնակ վիճակների մակարդակի վրա:

Ես լիովին հաշվի եմ առնում, որ այն, ինչ ասացի, կարող է անել միայն շատ բարձր մակարդակի հասած ադեպտը, իսկ այս տողերը կարդացող մարդկանց մեծամասնության համար կենսական իրադրությունների նկատմամբ նման արձագանքը մատչելի չէ:

Սակայն դուք պետք է գոնե գիտենաք, թե ուր մղվեք: Եվ պետք է փորձեր ձեռնարկեք ձեր գիտակցությունը փոխելու ուղղությամբ: Չէ՞ որ ամբողջ աստվածային կատարելությունն առկա է ձեր ներսում:

Եվ միայն դո՛ւք եք որոշողը՝ լինե՞լ այդ կատարության մեջ, թե՞ ենթարկվել ձեր աշխարհի պատրանքին:

Վերջում, որպես օրինակ, կուզենայի տալ գետի ափին նստած Բուդդայի կերպարը: Ահա Բուդդան, ներխոկման դիրքով նստած, դիտում է գետի հանդարտ հոսքը: Նա ջրի երեսին մի լողացող տաշեղ է տեսնում, հետո՝ գերան:

Ապա տեսնում է, որ իրենից ոչ հեռու անցնում է մարդկանցով բեռնված մի նավակ: Բուդդան տեսնում է այդ ամենը: Նա գնահատական է տալիս ամեն առարկայի ու երևույթի, որին հանդիպում է, բայց իր էներգիան չի ներդնում դրանցից ոչ մեկի մեջ: Նա պարզապես իրերն իրենց անուններով է կոչում և վերջ:

Եթե Բուդդայի փոխարեն նստած լիներ սովորական մի մարդ, ապա կկառչեր ամեն առարկայից, ինչ աչքը տեսնում է: Տաշեղը տեսնելիս նա կմտածեր, թե որքա՜ն անպատասխանատու մարդիկ կան, որոնք կեղտոտում են գետը: Գերանը տեսնելիս կմտածեր, թե ինչպես այն օգտագործի իր տնտեսության մեջ: Նաև իր մտքում ծանր ու թեթև կաներ բոլոր այն մարդկանց, որոնք նստած են իր մոտով անցնող նավակի մեջ:

Ես այս օրինակը բերեցի, որ ձեզ համար վերջնականապես պարզ դառնա, թե ինչպես եք դուք ձեր գիտակցության մեջ ծնում ձեզ շրջապատող պատրանքը:

Մշտապես ձեր գլխում պահելով կյանքում ձեզ պատահած բացասական իրադրությունները և պտտեցնելով այդ իրադրությունների նկատմամբ ձեր արձագանքը, ինչպես նաև շրջապատի մարդկանց արձագանքը ձեր արձագանքին՝ դուք Աստծո կողմից ձեզ տրված էներգիան հատկացնում եք ձեզ շրջապատող պատրանքի բազմապատկման գործին:

Նույնը վերաբերում է նաև ձեր ցանկացած անկատար հույզին, որը տեղ է գտնում ձեր գիտակցության մեջ:

Ձեզ հարկավոր է մշտապես վերլուծել ձեր բոլոր մտքերն ու զգացմունքները և դրանք համեմատել կատարյալ վիճակի այն նմուշօրինակի հետ, որը դուք պարտավոր եք մշտապես պահել ձեր հիշողության մեջ:

Ահա թե ինչո՞ւ է ձեզ անհրաժեշտ ձեր գիտակցության մեջ հրաժարվել այնպիսի զգացմունքից, ինչպիսին պայքար մղելու ցանկությունն է: Երբ դուք տրամադրված եք պայքարի, ապա ձեր աշխարհ եք քաշում այդ պայքարի առարկան: Դա վերաբերում է նաև անկյալ հրեշտակների հետ ձեր այնքա՞ն սիրած պայքարին: Եթե դուք տրամադրված եք պայքարի, ապա շրջապատի մարդկանց մեջ միշտ էլ կգտնեք ձեր պայքարի թիրախը:

Իսկ եթե դուք պայքարելու ցանկություն չունեք, ապա ձեր ուղու վրա չեք հանդիպի մարդկանց, որոնց դեմ հարկավոր է պայքարել: Դեռ ավելին, ձեր գիտակցությունը մշտապես բարձր մակարդակի վրա պահելով՝ դուք կկարողանաք ձեր այդ գիտակցության վիճակով վարակել յուրաքանչյուրին, ում հետ բախվում եք ձեր կյանքի ընթացքում:

Ես այսօր փորձեցի սևեռել ձեր ուշադրությունը ձեր գիտակցության վրա: Որովհետև դա հենց այն է, ինչի վրա դուք պետք է մշտապես աշխատեք:

Եվ, որպեսզի կարողանաք աշխատել ձեր գիտակցության վրա, համաձայնե՛ք, որ ձեզ ոչինչ պետք չէ, բացի ձեր ցանկությունից և գիտակցությունը փոխելու ձեր ձգտումից:

Ես ուրախ կլինեմ, եթե այսօրվա զրույցն ընկալեք ոչ թե որպես վերացական դատողություն, այլ գործունեության ուղեցույց:

ԵՍ ԵՄ Սուրիան

ՎԵՀԱՊԵՏ ԷԼ ՄՈՐԻԱ

28 ապրիլի, 2005 թ.

ԵՍ ՄՈՒՏՔ ԿԳՈՐԾԵՄ ՁԵՐ ՏԱՃԱՐԸ ԵՎ ԿԳՈՐԾԵՄ ՁԵՐ ՄԻՋՈՑՈՎ

ԵՍ ԵՄ Էլ Մորիան՝ իմ դեսպանորդի միջոցով կրկին ձեզ այցի եկածը:

ԵՍ ԵՄ եկել, որ ձեր մեջ ամրացնեմ նոր գիտելիք և այն իրադարձությունների ըմբռնումը, որոնք տեղի են ունենում Երկիր մոլորակի նուրբ ոլորտում:

Դուք գիտեք, որ տեղի է ունենում բոլորաշրջանների հերթագայություն: Այս մասին շատ է ասվել և՛ այս դեսպանորդի միջոցով տրվող թելադրություններում, և՛ այն թելադրություններում, որոնք մենք տվել ենք նախորդ դեսպանորդների միջոցով:

Ի՞նչն է բնորոշ այն վերափոխումներին, որոնք, բոլորաշրջանների հերթագայության հետ կապված, տեղի են ունենում Երկիր մոլորակում:

Դուք կզարմանաք, եթե ձեզ ասեմ, որ նուրբ ոլորտում վերափոխումներն արդեն գործնականում ավարտված են: Նուրբ ոլորտի բոլոր շերտերը, բացառությամբ ամենացածր աստեղային շերտերի, մեր կողմից մաքրվել են այն բացասական էներգիաներից, որոնք կարող էին մուտք գործել իրենց բնույթին ոչ հարիր շերտերը:

Դա վիթխարի աշխատանք էր, պաշտելի՛նե՛ս, և այն մենք հաջողությամբ ավարտել ենք: Այժմ սկսվել է այն փուլը, երբ մենք հատուկ ձեռնամուխ ենք լինում ֆիզիկական ոլորտին մոտ գտնվող շերտերի և բուն ֆիզիկական ոլորտի մաքրմանը:

Ո՞րն է դժվարությունը: Այն ուժերը, որոնք ապօրինաբար կարողացել էին մուտք գործել բարձր թրթռանքներով շերտերի մեջ, այժմ մեր կողմից հետ են սեղմվել Երկրին: Եվ նրանք փնտրում են ցանկացած առիթ, որպեսզի հաստատեն իրենց դիրքերը ֆիզիկական ոլորտում և աստեղային ոլորտի առավել թանձր շերտերում:

Այդ ուժերը չունեն Աստծո էներգիայի իրենց սեփական աղբյուրը և սնվում են ձեր այն էներգիաներով, որոնք դուք այդպես անխոհեմ ձևով երբեմն հանձնում եք նրանց լիակատար տնօրինմանը:

Ուստի այժմ առաջին պլան է ելնում Աստծո էներգիայի ծախսման վերահսկողության հարցը: Եվ բոլոր այս թելադրությունների հիմնական գիծը, եթե դուք դրանք ուշադրությամբ վերընթերցեք, հենց Աստծո էներգիայի ծախսման վերահսկողությունն է, որը դուք, պաշտելիներս, պետք է իրագործեք ինքնուրույնաբար:

Ձեզնից յուրաքանչյուրը ձեր ֆիզիկական աշխարհի համար հանդիսանում է Աստծո էներգիայի աղբյուր: Ինքներդ եք՝ որպես ազատ կամքով օժտված էակներ, ընտրում, թե ինչի վրա ծախսեք Աստծո կողմից ձեզ շնորհված Էներգիան:

Այդ Էներգիան դուք չեք կարող չծախսել: Երկրի վրա գտնվելու ամեն րոպեին ու վայրկյանին Աստծո էներգիան անընդհատ հոսքով մուտք է գործում ձեր աուրայի մեջ: Եվ միայն ձեզնից է կախված, թե ինչպես կտնօրինեք ձեզ հատկացված Աստծո էներգիան:

Խավարի ուժերին Աստծո էներգիան մատչելի չէ, բայց նրանք շատ հնարամիտ հնարքների են տիրապետում, որպեսզի յուրացնեն Աստծուց ձեզ հատկացված էներգիան: Նրանք իրենց կողմն են քաշում ձեր այն էներգիան, որն այդպես անմիտ ձևով նրանց եք տալիս ձեր ոչ աստվածային գործողություններով, որոնք ձեզ թույլ եք տալիս կատարել ձեր աշխարհում:

Ամբողջ ժամանակակից արդյունաբերությունն 90 տոկոսի չափով աշխատում է խավարի ուժերի էներգետիկական կարիքների բավարարման համար: Երբևէ մտածե՞լ եք այս մասին, պաշտելիներս: Ձեզ անվնաս բան է թվում, երբ գնում եք ոռք երաժշտության համերգ դիտելու կամ ձեզ թույլ եք տալիս դիտել սարսափի ֆիլմեր, փուչ օպերաներ կամ այնպիսի կինոնկարներ, որոնք բռնություն են քարոզում:

Ձեզ անվնաս բան է թվում, երբ դուք, նորաձևության հետևից ընկած, գնում եք ձեզ բոլորովին պետք չեկող առարկաներ, զանազան իրեր: Յուրաքանչյուր ձեռք բերված իր կրում է իր մեջ որոշակի թրթռանքներ: Կան իրեր, որոնք իրենց մեջ Լույս են կրում, բայց և կան իրեր, որոնք ձեզնից խլում են ձեր Լույսը: Խորհո՞ւմ եք արդյոք այդ մասին, երբ ձեր դրամը՝ Աստծո էներգիայի ձեր մյուս փոխարժեքը, ծախսում եք ոչ աստվածային իրեր ձեռք բերելու նպատակով:

Խորհրդակցո՞ւմ եք արդյոք ձեր Ես-Քրիստոսի հետ, երբ կատարում եք ձեր գնումները:

Ձեր կյանքի յուրաքանչյուր պահի դուք ընտրություն եք կատարում, և այդ ընտրության արդյունքում ձեր էներգիան ուղղվում է կա՛մ ձեր աշխարհի պատրանքի բազմապատկմանը, կա՛մ այդ պատրանքի հետհավաքմանը:

Աստծո էներգիան գունազարդվում է հրաշագեղ զգացմունքներով, եթե դրանք լի են բերկրանքով ու սիրով, և դրանով իսկ բարձրացնում է ձեր աշխարհի թրթռանքները: Իսկ եթե լի եք բացասական մտքերով ու զգացմունքներով, ապա ձեր աշխարհը լցնում եք ծանր էներգիայով՝ ձեր նեգատիվի մածուցիկ մաթով:

Եվ միայն դո՛ւք կարող եք հսկողություն սահմանել Աստծո էներգիայից ձեր ծախսած յուրաքանչյուր էրգի վրա: Մենք ձեր փոխարեն դա չենք կարող անել: Մենք շատ կուզենայինք, որ ձեզնից յուրաքանչյուրը վերածվի Լույսի էլեկտրոդի, որով ձեր շրջապատի աշխարհը կողողվեր ներդաշնակության, գեղեցկության, սիրո ու բերկրանքի թրթիռներով: Եվ մենք պարտավորություն ենք ստանձնում օգնելու ձեզնից յուրաքանչյուրին, ով անկեղծորեն կցանկանա օգնել մեզ, որպեսզի ձեր օկտավան մաքրենք խավարի ուժերից: Բայց մենք ձեր փոխարեն այդ ընտրությունը կատարել չենք կարող, պաշտելիներս:

Մենք ձեզ առաջարկում ենք պարզ լուծում, որը նույնիսկ լրացուցիչ ժամանակի ծախս չի պահանջի այն ժամանակի համեմատ, որն անհրաժեշտ է աղոթքներ ընթերցելու համար: Թեև աղոթքները հիմա աշխարհին անհրաժեշտ են, ինչպես երբեք, քանի որ լրացուցիչ Լույսի աղբյուր են ֆիզիկական օկտավայի համար:

Իսկ եթե դուք մշտապես վերահսկեք, թե ինչպես եք ծախսում Աստծո էներգիան, ապա դա ձեզանից լրացուցիչ որևէ ծախս չի պահանջի: Հակառակը, կնպաստի ձեր դրամական միջոցների խնայողությանը: Քանզի եթե մտորեք, թե որտեղ եք ծախսում ձեր դրամը, ապա կպարզվի, որ այն իրերի ու մթերքների 90 տոկոսը, որոնք ձեռք եք բերում ձեր գնումներով, բոլորովին պետք չեն ձեր ֆիզիկական մարմնի պահպանմանը: Ընդհակառակը, դրանք նպաստում են ձեր մարմնի քայքայմանը, և դուք կախյալ վիճակում եք հայտնվում մի ամբողջ արդյունաբերությունից, որը սկզբում ձեզ ներքաշում է ձեր մարմնի քայքայման գործընթացի մեջ, ապա հաճկատարությամբ ձեզ է առաջարկում թանկարժեք միջոցների մի հսկայական հավաքածու, որոնք, իբր, նպաստում են ձեր առողջության վերականգնմանը:

Վերահսկե՛ք ձեզ օրվա ընթացքում: Հետևե՛ք ձեր մտքերին, ձեր զգացմունքներին: Դեպի ուր ուղղված են ձեր մտքերը, այնտեղ էլ հոսում է ձեր էներգիան: Դիտե՛ք, թե ինչի մասին եք մտածում: Դուք մտածում եք անարդար կառավարության մասին, և ձեր էներգիան առաքում եք այդ կառավարության անդամներին. դուք մտածում եք այն մասին, թե աշխատավայրում ձեզ հետ որքան անարդար է վարվել ձեր պետը, և նրան եք առաքում ձեր էներգիան. դուք մտածում եք հենց նոր դիտած փուչ օպերայի սյուժետի մասին, և ձեր էներգիան առաքում եք աստեղային ոլորտում գտնվող այն էգրեգորին, որն զբաղված է արհեստածին մտքեր և հույզեր բազմացնելով:

Դուք պատասխանատու եք անմիտ կերպով ծախսած ձեր էներգիայի ամեն մի էրգի համար: Եվ ամեն անգամ, երբ ձեր էներգիան ծախսում եք աստվածային սկզբունքներին չհամապատասխա-

նող ձևով, դուք կարմա եք ստեղծում: Իսկ եթե տեղյակ եք կարմայական օրենքին, բայց այնուամենայնիվ շարունակում եք աստվածային սկզբունքները խախտել ի շահ ձեր էգոյի, ապա ձեր կարման ավելի եք ծանրացնում:

Հավատացեք, մենք մեր խոսքերն իզուր չենք ասում: Եվ մենք մեր էներգիան իզուր չենք ծախսում: Մեր դեսպանորդի միջոցով այս թելադրություններում ասված ամեն մի բառն ուղղված է այն բանին, որ ձեզ տրվեն գիտելիքներ, որոնց կարիքն այս պահին դուք ամենաշատն ունեք:

Ըստ այդմ՝ մենք չենք հոգնում ձեզ համար միևնույն բանը կրկնելուց. դուք պատասխանատու եք ձեր էներգիայի ծախսման համար, և կրկնակի պատասխանատու եք, եթե այս թելադրությունները կարդալուց հետո էլի շարունակում եք ձեր նախկին կենսակերպը՝ ինքներդ ձեզ համոզելով, որ այն ամենը, ինչի մասին խոսվում է այս թելադրություններում, ձեզ բոլորովին չի վերաբերում:

Դուք ֆիզկական օկտավայում գտնվում եք մարմնավորման մեջ, և ձեզնից շատերը մարմնավորվելուց առաջ պարտավորվել են անցումային այս ծանրագույն ժամանակի ընթացքում օգնել մարդկությանը: Եվ մենք այժմ ձեզ հիշեցնում ենք ձեր ստանձնած պարտավորությունները:

Հետո, երբ կկանգնեք Կարմայական Վարչության առջև, չասեք, թե դուք ոչինչ չգիտեիք և ոչինչ գլխի չեք ընկել. թե իբր ձեզ չեն զգուշացրել, և դուք ոչինչ չեք լսել: Ես ձեզ նորից ու նորից եմ ասում. ուսուցման ժամանակն ավարտվել է: Ձեզնից պահանջվում են կոնկրետ գործողություններ ու կոնկրետ քայլեր ֆիզիկական ոլորտում:

Ձեզ ուղղված մեր պահանջներն ավելի պարզ ձևակերպել, քան դա արված է այս դեսպանորդի միջոցով, այլևս հազիվ թե հնարավոր լինի: Դուք պետք է փոխեք ձեր գիտակցության գերակայությունները:

Հասկացեք վերջապես, որ մենք անզոր ենք ֆիզիկական ոլորտում ինչ-որ բան անել՝ առանց ստանալու ձեր օգնությունն ու օժանդակությունը: Ֆիզիկական աշխարհը մեզ այլ կերպ մատչելի չէ, բացի այն, որ ձեզնից որևէ մեկը նախապատրաստի իր տաճարը մեր գալստյան համար և կոչ անի մեզ օգտագործելու իր ստորին չորս մարմինները, որպեսզի մենք կարողանանք, իր ձեռքերն ու ոտքերն օգտագործելով, կենսագործել մեր պլանները:

Ահա ես տալիս եմ այդ կոչի ձևը: Եվ, խնդրում եմ, ամեն օր հղեք այն.

«Հանուն ԵՍ ԵՄ ՈՐ ԵՄ-ի, հանուն իմ հզոր ԵՍ ԵՄ Ներկայության, հանուն իմ Սուրբ Ես-Քրիստոսի, ես հրավիրում եմ պաշտելի Էլ Մորիային՝ մուտք գործելու իմ տաճարը և գործելու իմ միջոցով, որպեսզի ֆիզիկական օկտավայում և աստեղային ոլորտի թանձր շերտերում դրսևորվի Աստծո Կամքը: Պաշտելի՛ Էլ Մորիա, քո լիիրավ տնօրինմանն եմ հանձնում իմ չորս ստորին մարմինները՝ ֆիզիկական մարմինս, աստեղային մարմինս, մենտալային մարմինս և եթերային մարմինս: Գործի՛ր իմ միջոցով, եթե դա է Աստծո Սուրբ Կամքը: Թող Աստծո Կամքը լինի: Ամեն»:

Իսկ ես խոստանում եմ ձեզ, որ հենց որ հնարավորությունը ծագի, մուտք կգործեմ ձեր տաճարը և կգործեմ ձեր միջոցով:

Այդպիսով մնք կփոխենք աշխարհը: Եվ Երկիրը կապրի ու կվերածվի ազատության, բերկրանքի ու սիրո հոյակերտ աստղի...

ԵՍ ԵՄ Էլ Մորիան, այս ուղերձը տվեցի ձեր նկատմամբ իմ Սիրո ամենաբարձր կետից

ՎԵՀԱՊԵՏ ԷԼ ՄՈՐԻԱ

29 ապրիլի, 2005 թ.

ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ՁԵՌՔԻ ՏԱԿ ՈՒՆԵՆԱԼ ԱՍՏԾՈ ՀԶՈՐԱԳՈՒՅՆ ԳՈՐԾԻՔԸ

ԵՍ ԵՄ Էլ Մորիան՝ ձեզ այցի եկածը:

ԵՍ ԵՄ եկել, որ ոչ մեծ մի Ուսմունք տամ՝ կապված այն հնարավորության հետ, որը դուք ձեռք եք բերում, երբ ձեր ստորին չորս մարմիններն ու չակրաները մաքուր են:

Ներկայումս Երկրի վրա ապրող մարդկանց մեծամասնության ստորին չորս մարմինները ծայրահեղ կեղտոտ վիճակում են: Իսկ քանի որ, ինչպես գիտեք, ձեր չակրաները միացնում են ձեր նուրբ մարմիններն իրար հետ և Աստծո աշխարհի հետ, ապա ձեր չակրաները ևս անմխիթար վիճակում են: Ուստի ես այսօր մտադրվել եմ տալ որոշակի Ուսմունք՝ կապված այն հնարավորությունների հետ, որոնք դուք ձեռք եք բերում, երբ

ձեր չակրաները մաքուր են լինում: Եվ ձեր ստորին չորս մարմինների մաքրման ու ձեր չակրաների մաքրության մասին վերացական դատողությունները ձեզ համար կստանան ավելի գործնական հնչեղություն:

Այսպիսով, ձեր չակրաների մասին: Դուք գիտեք, որ ունեք յոթ հիմնական չակրաներ, որոնք տեղաբաշխված են ողնաշարի երկայնքով. ունեք նաև գաղտնի ճառագայթների չակրաներ, որոնք նույնպես տեղաբաշխված են ողնաշարի երկայնքով, և շատ չակրաներ, որոնք տեղաբաշխված են ձեր մարմնի տարբեր մասերում: Ընդհանուր հաշվով, ինչպես գիտեք, գոյություն ունեն 144 չակրաներ:

12 չակրաները 12 տիեզերական ճառագայթներով ձեր աշխարհ են փոխանցում կատարյալ աստվածային հատկանիշներ, իսկ յուրաքանչյուր հատկանիշ իր մեջ կրում է ևս 12 նրբերանգ կամ կիսատոն: Եվ երբ ձեր չակրաները հմայիչ ծաղիկների պես բացվում են, ապա ձեր ֆիզիկական իրականության մեջ դուք վերածվում եք աստվածային հատկանիշների կատարյալ հաղորդչի:

Աստված կանխատեսել է բոլոր հնարավոր չարաշահումները, որոնք Աստծո էներգիայի ոչ ճիշտ կիրառությամբ կարող է թույլ տալ մարդկությունը:

Ըստ այդմ՝ երբ դուք համայն տիեզերքում գործող Աստծո Օրենքի տեսակետից սխալ եք օգտագործում Աստծո էներգիան, ապա դա առաջին հերթին անդրադառնում է ձեր չակրաների թողունակության վրա: Եվ Աստծո էներգիան, որը բյուրեղյա լարով մուտք է գործում ձեր մարմինների մեջ, բնական ճանապարհով սահմանափակվում է: Դա նման է այն բանին, որ այն ծորակը, որից ֆիզիկական աշխարհ մուտք գործող Աստվածային Էներգիան դուրս է ցայտում, քիչ-քիչ ոլորվում է, մինչև որ վերջնականապես փակվում է: Եվ Աստծո էներգիան չարաշահելու ձեր հնարավորությունները փոքրանում են:

Ըստ այդմ՝ գիտակցության այն վիճակը, որը բնորոշ է մարդկությանը նրա զարգացման ներկա փուլում, իր տնօրինման տակ չի կարող ունենալ անսահմանափակ աստվածային զորություն: Քանզի առաջին բանը, որ կաներ ձեր գիտակցությունը, եթե նրան մատչելի լիներ Աստծո էներգիայի անսահմանափակ աղբյուրը, կսկսեր օգտագործել այդ էներգիան իր էգոյի կարիքների բավարարման համար: Իսկ ձեզ հայտնի է, որ ձեր էգոյի պահանջմունքները հնարավոր չէ բավարարել: Դրանք անսահման են:

Ըստ այդմ՝ մարդկության մեծամասնության համար Աստծո էներգիայի մատչելիությունը հուսալիորեն փակված է: Եվ, որպեսզի Աստծո էներգիան մատչելի դառնա, ձեզ վիճակված է կանգնել Ձեռնադրումների Ուղու վրա: Իսկ այդ Ուղին մի կյանքով չէ, որ անցնում է: Բացառիկ դեպքերում, այն էլ միայն մեր ընտրյալ սաների համար, մենք թույլ ենք տալիս այդ Ուղին անցնել մեկ կյանքի ընթացքում:

Յուրաքանչյուր աստվածային հատկանիշի վերաբերյալ դուք փորձաքննության թեստեր եք անցնում: Եվ այդ թեստերից յուրաքանչյուրը պետք է անցնեք 12 անգամ: Ընդհանուր հաշվով՝ դուք պետք է անցնեք 144 թեստ, որպեսզի հաջողությամբ ավարտեք ձեռնադրումներն ըստ 12 հիմնական չակրաների, ինչն անհրաժեշտ է վերջիններիս բացման համար:

Եվ, եթե չլինեին թեստերի կրկնությունները, որոնք դուք ստիպված եք լինում անցնել ձեր ծուլության երեսից, ապա հաջողության կհասնեիք ընդամենը մի քանի տարվա ընթացքում:

Իսկ ի՞նչ է տալիս չակրաների բացվելը: Ինչո՞ւ պետք է ձգտեք դրան: Նա, ով իր ձեռքի տակ ունի այնպիսի հզոր գործիք, ինչպիսին բաց չակրաներն են, կարող է աշխարհին անգնահատելի ծառայություն մատուցել: Եվ այդ ծառայության գլխավոր մասը ձեզ շրջապատող աշխարհը ցանկացած բացասական թրթռանքներից ու էներգիաներից մաքրելն է: Ձեր չակրաների զորությունն ունակ է չեզոքացնելու սխալ դասակարգված էներգիայի աներևակայելի քանակություն, որով տառացիորեն հագեցած է ձեր աշխարհը:

Սիրելինե՛ր, երբ դուք կարդում եք պատվիրաններ ու աղոթքներ, ապա լրացուցիչ Լույս եք ներքաշում ձեր աշխարհ: Եվ այդ Լույսը ձեր աշխարհ մուտք է գործում ձեր չակրաների միջոցով: Հիմա պատկերացրեք, թե որքա՜ն շատ Լույս կարող էիք բերել ձեր աշխարհ, եթե ձեր չակրաները լրիվ բաց լինեին:

Եվ քանի որ այն պահին, երբ ձեր բոլոր չակրաները բացվում են, դուք կատարյալ Բուդդա եք դառնում, այսինքն հասնում եք Բուդդայի գիտակցության մակարդակին, ապա նույնիսկ ձեր մտքերով չի անցնում ոչինչ, որը կարող է դույզն-ինչ վնաս հասցնել ձեզ շրջապատող աշխարհին և ձեր շրջապատի կենդանի էակներին: Դուք մշտապես գտնվում եք ձեր գիտակցության աղոթքային վիճակում: Եվ նույնիսկ կարիք չունեք աղոթքի խոսքեր արտաբերելու, որպեսզի մշտապես գտնվեք ձեր գիտակցության աղոթքային վիճակում:

Եվ ձեր չակրաները երբեմն գործում են ձեր գիտակցությունից անկախ. դրանք փոշեծծիչի պես շրջապատի աշխարհից ներս են քաշում ամբողջ աղբը և աշխարհը լցնում Աստծո անթերի մաքուր էներգիայով:

Ուստի, երբ ձեր չակրաները մաքուր են, դուք կարող եք դիմել ձեր ԵՍ ԵՄ Ներկայությանը և խնդրել, որ ձեր չակրաների էներգիան ուղղվի ձեր աշխարհի այս կամ այն իրավիճակի հանգուցալուծմանը: Եվ, եթե ձեր խնդրանքը համապատասխանում է Աստծո Օրենքին, ապա ձեր ԵՍ ԵՄ Ներկայությունն ի՛նքը կղեկավարի ձեր չակրաների աշխատանքը, և էներգիան կմղվի դեպի այն կոնկրետ իրավիճակը, որի մասին խնդրել եք ձեր կոչի մեջ:

Դուք ձեր կոկորդի չակրայի էներգիան կարող եք օգտագործել ինչպես ձեր, այնպես էլ բոլոր

նրանց պաշտպանության համար, որոնց իրավունք ունեք պաշտպանելու՝ համաձայն Աստծո Օրենքի:

Ձեր մաքուր չակրաների օգնությամբ դուք կարող եք փոխակերպել ոչ միայն ձեր կարման (այդ դեպքում դուք սեփական կարմա չեք ունենում), այլ նաև մոլորակի կամ թեկուզ ձեր երկրի կարման: Դուք կարող եք հասցեագրված օգնություն ցուցաբերել այն մարդկանց, որոնց տեսնում եք, որ օգնել է պետք, և իրենք էլ խնդրում են ձեզնից այդ օգնությունը:

Դրանք իրապես ֆանտաստիկ հնարավորություններ և հիրավի անգնահատելի օգնություն են մարդկությանը, որը կարող եք ցուցաբերել, եթե ձեր չակրաների բացման նպատակով անցնեք անհրաժեշտ ձեռնադրումներ:

Որպեսզի պատկերացնեք այն զորությունը, որն այդ դեպքում անցնում է ձեր տնօրինության տակ, ես այսպիսի օրինակ կբերեմ:

Կարմա փոխակերպող ձեր կենտրոնական չակրայի 10 բոպե տևած բաբախումը հավասարարժեք է մանուշակագույն բոցի պատվիրանի 400-ժամյա ընթերցման:

Դա, հիրավի, ամենահզոր գործիքն է, պաշտելիներս, և այդ գործիքը պահ է տրված ձեր ներսում:

Այսօրվա զրույցի նպատակն էր ձեզ համար բացել ձեր հետագա քայլի հեռանկարներն ու հնարավորությունները: Սիրելիներս, ձեզնից շատերը պատրաստ են այդ քայլին, շատերն էլ գտնվում են իրենց չակրաները բացելու ճանապարհի կեսին:

Դուք պետք է գիտենաք, թե ինչի համար պետք է մղվեք դեպի այդ հաջորդ քայլը: Ձեր տնօրինմանն է հանձնվում մի զորություն, որը լիովին վերահսկելի է ձեր ԵՍ ԵՄ Ներկայության կողմից: Եվ եթե դուք փորձեք այդ զորությունն օգտագործել ոչ Աստծո Կամքին համապատասխան, ապա ձեր չակրաները պարզապես կդադարեն բաբախել: Եվ եթե նույնիսկ ձև գտնեք շրջանցելու Տիեզերական Օրենքը և օգտագործեք Աստծո էներգիան ձեր անձնական նպատակներով, ապա ձեր չակրաները կփակվեն, և տեսանելի ապագայի համար ձեզ կմերժվի Աստծո էներգիայի մատչելիությունը:

Աստված պատրաստ է ձեզ տալ ամենակատարյալ գործիքը, որը Երկրի համար այս ծանր ժամանակներում այդքան անհրաժեշտ է ձեզ: Վերցրեք այն: Օգտագործեք: Եվ միայն ձեզնից է կախված, սիրելիներս. կստանաք այդ կատարյալ գործիքը ձեր տնօրինության տակ, թե՞ ոչ:

Ահա ես ասում եմ ձեզ՝ ժամը հասել է, և դուք կարող եք ձեր տնօրինման տակ ունենալ Աստծո այդ հզորագույն զենքը:

Ձեզ անհրաժեշտ է միայն ընտրություն կատարել, մղվել դեպի ձեռնադրումների Ուղին և պատվով անցնել այն բոլոր ձեռնադրումները, որոնք Աստված թույլ կտա անցնել:

ԵՍ ԵՄ Էլ Մորիան, մինչ նոր հանդիպում
ձեռնադրումների Ուղու վրա

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԲՈՒԴԴԱ

30 ապրիլի, 2005 թ.

ՁԱՆԱՑԵՔ ՀԱՐՄԱՐՎԵԼ ՆՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ: ՓՈԽԵՑԵՔ ՁԵՐ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ԵՍ ԵՄ Տիեզերական Բուդդան: Այդպես է կոչվում իմ պաշտոնը Ատվածային Հիերարխիայում, որը գոյություն ունի համայն տիեզերքում:

ԵՍ ԵՄ Բուդդան, և, շնորհիվ այն ամենաթափանցության, որը հատուկ է ինձ ու իմ բնույթն է հանդիսանում, ես կարող եմ ներկա լինել համայն տիեզերքի ցանկացած կետում, ինչպես և կարող եմ ներկա լինել բոլոր կենդանի էակների մեջ:

Միակ տեղը, որտեղ ես չեմ կարող ներկա լինել, ձեր աշխարհն է և մյուս թանձր աշխարհները, որոնց թրթռանքները չափազանց ցածր են իմ ներկայության համար:

Ուստի ես կարող եմ ներկա լինել միայն այն կենդանի էակների մեջ, որոնք իրենց գիտակցությամբ հասել են Բուդդայի մակարդակին և ցանկացել են Երկրի վրա մարմնավորվել անցումային այս բարդ ժամանակներում՝ որպես Երկրի մարդկությանն անշահախնդիր ծառայելու ակտ:

Երկրի մարդկության համար Աստծո Պլանն այն է, որ Բուդդաներ դառնան բոլոր այն կենսահոսքերը, որոնք այժմ բնակեցնում են Երկիր մոլորակը: Գիտակցության այդ մակարդակը կարող է կոչվել նաև Աստծո գիտակցություն: Եվ մարդկության զարգացման այս փուլը համապատասխանում է Աստծո մտահղացմանը, որի համաձայն մարդն իր զարգացմամբ կարող է բարձրանալ էվոլյուցիոն զարգացման նոր աստիճանի վրա և դառնալ աստվածամարդ:

Բոլորովին գաղտնիք չէ, որ գիտակցության այն մակարդակը, որն այժմ ունի մարդկությունը, շատ քիչ է տարբերում ձեզ կենդանիներից: Նաև գաղտնիք չի լինի, եթե ասեմ, որ շատ կենդանի էակներ, որոնց դուք անասուններ եք համարում, հասել են իրենց գիտակցության զարգացման անհամեմատ ավելի բարձր աստիճանի, քան մարդկանցից շատերը:

Ես նկատի ունեմ կետաձկների որոշ տեսակների ու դելֆիններին: Իրենց զարգացման մակարդակով այդ կենդանի էակները բավականին առաջ են անցել իրենց եղբայրակիցներից, որոնք քայլում են Երկրի վրայով: Նրանց էներգետիկական համակարգը՝ նրանց չակրաները, թույլ են տալիս միանալ համաշխարհային և համատիեզերական տվյալների բանկին: Եվ մենք այդ էակների ֆիզիկական ձևերն օգտագործում ենք, որպեսզի պատկերացում ստանանք Երկրի իրադրության մասին: Գտնվելով օվկիանոսի դժվարամատչելի, անմարդաբնակ շրջաններում՝ մեր հավատարիմ աշխատակիցները պահում ու պաշտպանում են Երկիր մոլորակի հավասարակշռությունը: Ես հուսով եմ, որ Երկրի մարդկությունն այնուամենայնիվ կհասնի գիտակցության այն մակարդակին, որը երբեմն անվանվում է բուդդայական գիտակցություն, և որը Երկրի մարդկությանը թույլ կտա անցնել էվոլյուցիոն զարգացման նոր մակարդակի վրա:

Ձեր թերզարգացած գիտակցությամբ դուք մոլորակի վրա պահպանում եք տեխնոկրատական քաղաքակրթություն:

Եվ ես եկել եմ ձեզ ասելու, որ Երկիր մոլորակի համար նախատեսված Աստծո մտահղացման մեջ չի մտնում ձեր տեխնոկրատական քաղաքակրթության պահպանումը:

Այն, ինչ չի համապատասխանում Աստծո մտահղացմանը, կսրբվի Երկրի երեսից:

Ձեր մոլորակից բացի, համայն տիեզերքում շատ կան այնպիսի քաղաքակրթություններ, որոնք կանգնել են տեխնոկրատական զարգացման ուղու վրա: Եվ բոլոր այդ քաղաքակրթություններին բնորոշ է կտրվածությունը համատիեզերական տեղեկատվական բազայից:

Ես ստիպված եմ կիրառել այս տեխնիկական տերմինները, որպեսզի ձեր լեզվով ձեզ հասցնեմ այն տեղեկատվությունը, որի կարիքը դուք ունեք:

Դուք միանում եք համատիեզերական տեղեկատվական բազային ձեր գիտակցության զարգացման այն փուլում, որը համապատասխանում է Բուդդայի գիտակցության մակարդակին: Գիտակցության զարգացման այդ մակարդակում դուք դառնում եք աստվածամարդիկ: Ձեր չակրաները բացվում են, ինչը ձեզ հնարավորություն է տալիս ազատորեն տեղեկատվություն փոխանակել ողջ տիեզերքի հետ՝ համայն տիեզերքի ցանկացած էակի հետ, որը հասել է գիտակցության զարգացման համանման մակարդակի:

Ձեզ համար դադարում են գոյություն ունենալ տարածական ու ժամանակային սահմանները: Ձեզ համար մատչելի է դառնում ցանկացած տեղեկատվություն, որը գոյություն ունի համայն տիեզերքի գրադարաններում ու պահոցներում:

Իհարկե, բուդդայական գիտակցության զարգացման տարբեր աստիճաններ կան: Եվ առաջին փուլում դուք կարող եք չտիրապետել բոլոր ունակություններին, և ձեր տեղեկատվական դաշտը դուրս չի գա ձեր մոլորակի շրջանակներից: Բայց աստիճանաբար դուք կընդարձակեք ձեր գիտակցությունը և նախ դուրս կգաք ձեր արեգակնային համակարգության մակարդակի վրա, հետո՝ ձեր գալակտիկայի մակարդակի և ապա՝ գալակտիկաների ձեր համակարգի մակարդակի վրա:

Ձեր գիտակցության աճի հնարավորություններն անսահմանափակ են, և երբ ձեր գիտակցության աճը կհասնի այս տիեզերքին, դուք կծնվեք նոր տիեզերքում, որը կհամապատասխանի ձեր գիտակցության նոր մակարդակին, կամ էլ, ըստ ձեր ցանկության, Բուդդայի պաշտոն կստանձնեք ստորին տիեզերքների համար, որպեսզի այդ տիեզերքներում զարգացող կենդանի էակների համար պահպանեք հավասարակշռությունը:

Իմ այսօրվա այցի նպատակն է ձեզ տեղեկատվություն տալ ձեր զարգացման հաջորդ փուլի մասին:

Իսկ այդ փուլը կապված չէ ձեր տեխնոկրատական քաղաքակրթության հետ: Ըստ այդմ՝ այն ամենը, ինչը չի համապատասխանում Աստծո մտահղացմանը և իրենից ներկայացնում է Աստծո Կամքին չհամապատասխանող գաղափարների ու զարգացման հիմնադրույթների արմատավորում, աստիճանաբար կփոխարինվի էվոլյուցիոն, Աստծո Կամքին համապատասխանող հիմնադրույթներով ու զարգացման ուղղություններով:

Այն, ինչ չափազանց շատ կդիմադրի, կամ արհավիրքների շղթայով կհեռացվի ֆիզիկական ոլորտից, կամ էլ իր թրթռանքով կձգվի դեպի այն տեխնոկրատական կղզյակները, որոնք գոյություն ունեն այս տիեզերքում, և որոնց օրերը նույնպես հաշված են:

Ես այժմ ձեզ համար նկարագրեցի այն պլանը, որով պետք է ընթանա Երկիր մոլորակը: Սակայն, խնդրում եմ, մի՛ մոտեցեք այդ պլանին թվարկության երկրային չափանիշներով: Այդ բոլորը տեղի կունենա, բայց տեղի կունենա ժամանակի այնպիսի բոլորաշրջանների ընթացքում, որոնք անհամատեղելի են կենդանական մարդու կյանքի շրջանի հետ:

Ժամանակի հաշվման ձեր համակարգը հարմարեցված չէ այն բանին, որ ձեզ տրվեն ճշմարիտ նշաձողեր ու ժամկետներ: Սակայն այն բանի համար, որպեսզի մղվեք, որպեսզի ձեր գիտակցության մեջ պահպանեք այն նշաձողը, դեպի ուր պետք է ընթանաք, կոնկրետ ժամկետներ իմանալու հարկ չկա:

Մի փոքր էլ ևս մի ցավոտ հարցի մասին: Ձեր աչքի առաջ է շատ կենդանիների տեսակների օրինակը, որոնք վերանում են՝ չհարմարվելով գոյատևման նոր պայմաններին:

Միշտ էլ ծանր է նայել բնաջնջման պատկերին: Սակայն այն, ինչն անկենսունակ է նոր պայմաններում, կամ պետք է վերանա, կամ ձևափոխվի: Ճիշտ նույն կերպ էլ մարդ-կենդանին է՝ տեսակ, որն այս պահին դուք եք ներկայացնում: Դուք կամ պետք է հարմարվեք ձեր մոլորակի գոյատևման նոր պայմաններին, կամ էլ այդ տեսակը ենթակա կլինի բնաջնջման:

Հասկացեք, գոյատևման պայմանները փոխելը ձեր ուժերից վեր է: Այս տիեզերքում կա ինչ-որ բան, որը չի ենթարկվում ձեր կարգավորմանը, ինչպես ծորակի ջուրը կամ ձեր բնակարանի ջերմաստիճանը: Կա համատիեզերական Օրենք, որը կարգավորում է ձեր մոլորակի գոյության պայմանները: Եվ այժմ մենք պարզապես բարձրացրել ենք ձեր պլանի թրթռանքները: Դուք դա չեք կարող չզգալ:

Ըստ այդմ՝ խնդրում եմ, ջանացեք հարմարվել նոր պայմաններին: Փոխեցեք ձեր գիտակցությունը: Ձեզ տրվում են բանալիները, թե ինչպես փոխեք ձեր գիտակցությունը:

Դուք ունեք բոլոր անհրաժեշտ ղեկավարող ցուցումները, իսկ հետևել դրանց, թե ոչ՝ դուք ինքներդ եք ընտրում: Դա ձեր ազատ կամքն է, և դուք կարող եք գործել՝ ըստ ձեր ազատ կամքի այնքան ժամանակ, քանի դեռ մոլորակի արտաքին պայմանները թույլ են տալիս դա անել:

Ես ձեզ տվեցի ձեր զարգացման հեռանկարները, և ես նախազգուշացրի ձեզ սպառնացող վտանգների մասին: Իսկ այժմ ես լռում եմ և լքում ձեզ: Ինձ համար այսօր շատ հաճելի էր այս դեսպանորդի միջոցով ձեզ հետ զրուցելը:

ԵՍ ԵՄ Տիեզերական Բուդդան

ՏԵՐ ՀԻՍՈՒՍ

1 մայիսի, 2005 թ.

ԵՍ ԻՆՁ ՎՐԱ ՎԵՐՑՐԻ ԱՇԽԱՐՀԻ ՄԵՂՔԵՐԸ, ԲԱՅՑ ԻՄ ԱՐԱԾԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆ ԱՅՆ ԷՐ, ՈՐ ՁԵԶ ՑՈՒՅՑ ՏՎԵՑԻ ՈՒՂԻՆ

ԵՍ ԵՄ Հիսուս Քրիստոս՝ դեսպանորդ Տատյանայի միջոցով այսօր ձեզ այցի եկածը:

ԵՍ ԵՄ եկողը հենց այսօր, երբ ուղղափառ քրիստոնյաները նշում են Զատկի լուսավոր տոնը՝ ի հիշատակ խաչելությունից հետո իմ հարության: Խաչելության և հարության խորհրդանիշները, ինչպես ձեզ հայտնի է, չեն վերաբերում միայն այն իրադարձությանը, որը տեղի ունեցավ 2000 տարի առաջ:

Դրանք այն խորհրդանիշներն են, որոնք վերաբերում են նաև նրանց, ովքեր ներկայումս ապրում են Երկրի վրա: Եվ ձեզնից յուրաքանչյուրը պետք է անցնի իր խաչելությունն ու իր հարությունը: Ուստի այսօրվա տոնը թող ձեզ համար ծառայի որպես հիշեցում ձեր ձեռնադրումների Ուղու և այդ Ուղու այն փորձությունների մասին, որոնք սպասվում են ձեզ:

Դա չի նշանակում, պաշտելիներս, որ դուք անպայման կխաչվեք հենց այնպես, ինչպես ես խաչվեցի: Նաև չի նշանակում, որ դուք հարություն կառնեք հենց այնպես, ինչպես ես հարություն առա: Բայց այդ իրադարձություններն անպայման տեղի կունենան ձեր ձեռնադրումների ավարտական փուլում: Ձեր խաչելությունը կկայանա, երբ դուք կախված կլինեք կյանքի ու մահվան սահմանագծի խաչի վրա՝ հավերժական կյանքի և ձեր աշխարհի մահկանացու գոյության միջև: Դուք կգիտակցեք ձեզ շրջապատող ֆիզիկական աշխարհի անցողիկությունը և կզգաք հավերժական աշխարհի հպումը: Եվ այն զգացողությունները, որոնք դուք կապրեք ձեր այդ ձեռնադրման ընթացքում, համեմատելի կլինեն խաչելության այն ընթացքի հետ, որն ինձ վիճակվեց ապրել: Ձեր ֆիզիկական մարմինն ու ձեր բոլոր նուրբ մարմինները կտառապեն: Դուք կզգաք ոչ միայն ձեր ցավը, այլ նաև ամեն մի կենդանի էակի ցավը, որը տառապում է ձեր աշխարհում: Դուք լիովին կզգաք ձեր աշխարհի ողջ անկատարությունը:

Դուք կբախվեք ձեր շրջապատի գիտակցության այդ անկատար վիճակներին և ընտրություն կկատարեք զոհաբերել ինքներդ ձեզ, զոհաբերել ամեն ինչ, նույնիսկ ֆիզիկական մարմինը, որպեսզի օգնեք ձեր շրջապատի տառապող էակներին, որոնց հայտնի չեն իրենց տառապանքների պատճառները:

Այո՛, պաշտելիներս, այն մարդիկ, որոնք արդեն

պատրաստ են արթնացմանը, որոնց ժամկետը հասել է, այնպիսի ահավոր տանջանքներ ու տառապանքներ են զգում, որ պատրաստ են լինում ընդունելու յուրաքանչյուրի օգնությունը, ով կբացատրի իրենց տառապանքի պատճառները:

Եվ լավ կլինի, եթե նրանց կողքին հայտնվի մեկը, որն արդեն գիտակցել է երկու աշխարհների միջև գտնվելու վիճակը և ընտրություն կատարել Աստծո Աշխարհի օգտին:

Պաշտելինե՛րս, ձեզնից շատերն արդեն ապրել են իրենց խաչելությունը, և շատերն էլ արդեն մոտ են գտնվում իրենց խաչելությունն անցնելուն: Դա ձեր գիտակցության այն վիճակն է, երբ կգիտակցեք ձեր առաքելությունը և ամբողջովին ինքներդ ձեզ կզոհաբերեք հանուն բոլոր կենդանի էակների բարօրության: Իսկ այդ կենդանի էակները, փոխանակ երախտագիտություն հայտնելու ու ձեզ գովաբանելու, կձգտեն ստորացնել ձեզ ու ցավ պատճառել, կհետապնդեն ձեզ ու կձգտեն պատժել:

Եվ այն րոպեին, երբ կթվա, թե այլևս ուժ չունեք հաղթահարելու ձեր բոլոր ուժերի այդ անմարդկային լարումը, դուք կգիտակցեք, որ այդ մարդիկ չգիտեն, թե ինչ են անում: Եվ դուք կներեք նրանց բոլորին, դեռ ավելին, կուզենաք ձեզ վրա վերցնել նրանց բոլոր այն մեղքերը, որոնք շղարշում են նրանց աչքերը և չեն թողնում տեսնել Ճշմարտությունը:

Եվ ահա այդ ժամանակ մատերիայի խաչի վրա դուք կանցնեք ձեր խաչելությունը:

Իսկ դրանից անմիջապես հետո պատրաստ կլինեք հարությանը, որն Աստծո Կամքի հետ լիակատար համահնչունության վիճակն է և մարդկային մտքերից ու զգացմունքներից լիակատար մաքրված լինելը:

Հիրավի, հարություն է դա, որովհետև ձեր Հոգին հնարավորություն է ստանում գործելու ձեր միջոցով: Եվ դուք անխոցելի եք դառնում ձեր դեմ ուղղված բոլոր նետերի հանդեպ: Ֆիզիկական աշխարհում չի լինում այլևս ոչինչ, որ կարողանա ձեզ վնաս պատճառել:

Դուք հարություն եք տալիս ձեր հոգևոր էներգիաներին և դրանք պահպանում եք ֆիզիկական ոլորտում: Եվ ձեզ շրջապատող զազիր ամայությանը պատկանող ոչինչ այլևս չի կարող ձեզ վրա ազդեցություն գործել: Ընդհակառակը, պաշտելինե՛րս, հենց միայն ձեր ներկայությամբ դուք ունակ եք դառնում չեզոքացնելու ձեր աշխարհի ցանկացած անկատարության դրսևորում:

Եվ դուք ձեր ծառայությունն իրագործելու լրացուցիչ հնարավորություն եք ստանում, իսկ այն օգնությունը, որն այդ ընթացքում կարողանում եք ցուցաբերել մարդկանց, հենց Երկնքի օգնությունն է լինում: Քանզի ձեր մեջ այլևս ոչինչ չի մնում, որով ձեր գիտակցության վիճակը տարբերվեր Աստվածայինից:

Մի՛ հավատացեք նրանց, ովքեր ձեզ կասեն, թե եղել է միայն մեկ Աստծո Որդի, և միայն Նա է կարողացել իր վրա վերցնել աշխարհի բոլոր մեղքերը: Այո՛, ես վերցրի աշխարհի մեղքերը, բայց իմ արածի գլխավոր մասն այն էր, որ ձեզ ցույց տվեցի այն Ուղին, որով դուք պետք է ընթանաք և արդեն իսկ ընթանում եք:

Ես ձեզ ուղի տվեցի, Վարդե Ուղին, որի վրա սփռված են վարդեր և փշեր: Եվ չկա այլ ուղի, որով ընթանալով՝ դուք կարողանայիք հասնել ձեր Երկնավոր Հոր Արքայությանը:

Պաշտելինե՛րս, ես լի եմ ձեր նկատմամբ Սիրո զգացումով: Ես տեսնում եմ ձեր ծառայությունը, տեսնում եմ նաև, թե որքա՛ն դժվար է ձեզ համար ձեր ժամանակներում: Իրադարձություններն այնքան արագ են զարգանում, որ ձեր գիտակցությունը հազիվ է հասցնում հարմարվել դեկորացիաների արագ փոփոխությանը:

Եվ նրանք, ովքեր ծառայելու Ուղու վրա են և վստահորեն առաջ են ընթանում, կստանան իրենց ընտրած Ուղու ճշմարտացիության հաստատումը՝ որպես մեղմ բերկրանքի, աննկարագրելի երանության պահերի զգացողություն: Պաշտելինե՛րս, ամո՛ւր հիշեք այդ պահերը, կլանե՛ք այդ երանության վիճակները ձեր բոլոր բջիջներով ու ձեր էության բոլոր ատոմներով: Որսացե՛ք երանության այդ րոպեները: Դրանք ձեզ ուժ, եռանդ և հնարավորություն կտան, որ անցնեք ձեր թեստերը և Ուղու ձեր բոլոր փորձությունները:

Թող Սերը ձեր մշտական ուղեկիցը լինի ձեր կյանքի բոլոր պահերին: Իսկ եթե դուք Սիրո զգացում չեք ապրում, ապա խնդրեցե՛ք ինձ, դիմեցե՛ք ինձ, և ես ինձնից կախված ամեն ինչ կանեմ, որ ձեզ վերադարձնեմ ձեր Սերը:

Սերը ձեր Ուղու այն նշաձողն է, որը հաստատում է, որ դուք ընթանում եք ճիշտ ուղով:

Դուք այդ զգացմունքը չպետք է կապեք կոնկրետ մարդու հետ և չպետք է պահանջեք պատասխան սեր: Չնայած երբեմն հենց կոնկրետ մարդու նկատմամբ Սերն է, որ ձեզ փրկում է ձեր փորձությունների դժվարին շրջանում:

Երբ սիրում եք, ձեզ այլևս ոչինչ պետք չէ: Դուք պարզապես պատրաստ եք լինում ապրելու և երանություն զգալու այդ վիճակով: Եվ ձեր բոլոր խնդիրները, ձեր և շրջապատող աշխարհի բոլոր անկատարությունները լուծվում են այդ համապիտանի լուծիչով, որն ի սկզբանե հատուկ է համայն տիեզերքին:

Աստծո Ճշմարիտ Սիրո Բոցն ունակ է տեղ գտնել միայն այն մարդկանց սրտերում, որոնք չեն կորցրել իրենց կապն աստվածային աշխարհի հետ: Եվ հենց այդ զգացմունքն է, որ կարող է բարձրացնել ձեր թրթիռները և դրանք համապատասխանեցնել ֆիզիկական ոլորտի անընդհատ բարձրացող թրթռանքների հետ: Նրանք, ովքեր ունակ են ընկալելու Սիրո էներգիան, իրենց ավելի ու ավելի առանձնացված կզգան ձեր աշխարհից: Եվ վաղ թե ուշ նրանք կորոշեն կամ հնազանդվել Սիրո էներգիային, կամ էլ ընդմիշտ

լքել այն աշխարհը, որում այլևս չեն կարողանում մնալ՝ թրթռանքների չափազանց մեծ տարբերության պատճառով:

Պաշտելիներս, ես ուրախ էի օգտվել այս հնարավորությունից և հանդիպել ձեզ մի օրվա ընթացքում, երբ, համոզված եմ, այս թելադրությունները կարդացողներից շատերը նշում են իմ հարության իրողությունը: Թույլ տվեք ինձ ևս միանալ այդ տոնակատարությանը և նշել ձեզնից նրանց հաղթանակը, ովքեր իրենց գիտակցության մեջ հասել են աստվածային թրթիռների հարությանը, ովքեր լիովին համահունչ են ինձ հետ և մյուս Համբարձյալ Վեհապետների հետ:

Դա մեծ հաղթանակ է, պաշտելիներս, որովհետև դուք հասել եք այն վիճակին, որը մեզ թույլ է տալիս ներկա գտնվել ձեր տաճարներում:

Եվ երևի դուք ինձ չեք հավատա, եթե ասեմ, որ Երկնքում մնացել է իմ շատ ավելի քիչ մասը՝ համեմատած իմ այն մասի հետ, որը Երկրի վրա գտնվում է ձեր տաճարներում, նրանց տաճարներում, ովքեր հրավիրել են ինձ մուտք գործել իրենց տաճարը, և որոնց թրթիռներն ինձ թույլ են տալիս դա անել:

Գաղտնիքի կարգով նաև կասեմ, որ Համբարձյալ Վեհապետներից շատերը, ովքեր պահպանել են իրենց կապը չհամբարձված մարդկության հետ, նույնպես գտնվում են ձեր մեջ՝ ձեր մարմիններում և ձեր եղբայրների ու քույրերի մարմիններում:

Աշխարհները մերձենում են: Հասել է ժամանակը, երբ մեր աշխարհներն իրենց թրթիռներով ավելի ու ավելի կմերձենան իրար: Եվ, պաշտելիներս, ավելի ու ավելի շատերը ձեզնից կապ կունենան մեզ հետ և կգիտակցեն այդ կապն իրենց արտաքին գիտակցությամբ:

Ես ուրախ եղա մեր այսօրվա հանդիպման առիթով: Ես ձեզ եմ առաքում իմ սրտի Սերը և ընդունում ձեր սրտերի Սերը:

ԵՍ ԵՄ Հիսուս՝ ձեր Եղբայրը

ՏԵՐՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԱՈՒԹԱՄԱ ԲՈՒԴԱ

2 մայիսի, 2005 թ.

ԲՈԼՈՐ ԿԵՆԴԱՆԻ ԷԱԿՆԵՐԻՆ ԾԱՌԱՅԵԼՈՒ ՁԵՐ ԱՄԵՆ ՄԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՔՐԱՑՆՈՒՄ Է ՍՊԱՌՆԱՑՈՂ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐՀԱՎԻՐՔԻ ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԵՍ ԵՄ Տերն Աշխարհի Հաութամա Բուդդան՝ այս դեսպանորդի միջոցով ձեզ այցի եկածը:

ԵՍ ԵՄ եկել, որպեսզի ձեզ տեղեկացնեմ որոշ իրադարձությունների մասին, որոնք տեղի են ունեցել և պատրաստվում են տեղի ունենալ Երկիր մոլորակի վրա:

Դուք գիտեք, որ այս պահին ես զբաղեցնում եմ Աշխարհի Տիրոջ պաշտոնը, և այդ պաշտոնը ենթադրում է Երկիր մոլորակի հավասարակշռության պահպանություն:

Բոլորովին վերջերս՝ 2003 թվականի վերջին, Երկիր մոլորակը կանգնած էր բարդ իրադրության առջև: Ահռելի արհավիրքների մի ամբողջ շարք պետք է տեղի ունենար՝ կապված մարդկության բացասական էներգիաների հավասարակշռման անհնարինության հետ:

Ոչինչ չկասկածող մարդկությունը շարունակում էր իր տոնական կյանքը: Մարդկանց առանձնապես չէին մտահոգում մեր տված մարգարեությունները ու կանխատեսումները: Էներգետիկական հավասարակշռության խախտվածությունն այնպիսի բնույթ էր կրում, որ այն կարող էր հանգեցնել նույնիսկ Երկրի վրա գոյություն ունեցող քաղաքակրթության լիակատար ավերմանը:

Իսկ ինչո՞ւ ոչինչ տեղի չունեցավ: Դուք կարող եք հրաշքից խոսել, կարող եք խոսել այն մասին, որ մարգարեությունները չիրականացան:

Սակայն հրաշքներ, այն ըմբռնմամբ, ինչպես դուք եք ենթադրում, երբեք չեն լինում: Ամեն մի հրաշքի համար հարկ է լինում վճարել:

Եվ, եթե այն էներգիան, որը թանձր օղակով շրջապատել է մոլորակը, չի ենթարկվում փոխակերպության, և Լույսի էներգիան չի բավականացնում, որպեսզի վերացնի մոլորակի վրա գոյություն ունեցող նեգատիվի գերակշռությունը, ապա պետք է փորձ ձեռնարկվի, որպեսզի վերականգնվի անհրաժեշտ հավասարակշռությունը: Ձեզ հայտնի է, որ համամոլորակային աղետների շարքի հետ

կապված ենթադրյալ իրադարձությունները մենք նախապես կանխատեսել էինք: Եվ մենք պատրաստվում էինք այդ իրադարձություններին: Մանուշակագույն բոցի շնորհը, որը մարդկությանը տրվել էր անցյալ դարի վերջին, հավասարակշռող գործոններից մեկն էր:

Եվ եթե մանուշակագույն բոցն օգտագործվեր մեր պլաններին համապատասխան, ապա արհավիրքների վտանգը կարող էր ամբողջությամբ չեզոքացվել: Բայց դուք գիտեք, որ դա տեղի չունեցավ: Եվ 2003 թվականին աշխարհը կանգնած էր կործանման առաջ: Հիմա արդեն ես կարող եմ այդ մասին ասել: Իսկ ինչ տեղի ունեցավ: Ինչո՞ւ արհավիրք չեղավ, համենայն դեպս, այն արհավիրքը, որը կարող էր սպառնալ գոյություն ունեցող քաղաքակրթությանը:

Որպես Տերն Աշխարհի, ում հիմնական պարտականությունների մեջ է մտնում այս մոլորակի հավասարակշռության պահպանումը, ես զոհաբերեցի իմ բոլոր մարմինները՝ իմ նվաճումների ամբողջ մոմենտումը: Ես Ջոհասեղանին դրեցի այն ամենը, ինչը կազմում էր իմ անհատականությունը: Իսկ քանի որ Լույսի մոմենտումը, որին ես տիրապետում էի, հսկայական էր, ապա այն բավականացրեց, որպեսզի արհավիրքը կանխարգելվի:

Դուք կհարցնեք՝ ինչի՞ համար էր պետք այդպիսի զոհողությունը: Չէ՞ որ մարդու հոգին անմահ է, և մարդկությունը կշարունակեր գոյատևել մոլորակի նուրբ ոլորտում:

Պաշտելիներս, մարդկությունն իր զանգվածով պատրաստ չէ նուրբ ոլորտում գոյատևելուն: Եվ, զրկվելով ֆիզիկական հիմքից, նա միլիոնավոր տարիներով հետ կընկներ Աստծո Պլանից: Ուստի իմ զոհողությունը լիովին արդարացված էր, և այն կայացավ: Դուք ապրելու հնարավորություն ձեռք բերեցիք:

Սակայն Աստծո ողորմածությունը սահման չունի, և, Մեծ Կենտրոնական Արևի Կարմայական խորհրդի որոշմամբ, իմ կենսահոսքի մատրիցային համապատասխան, վերականգնվեցին իմ բոլոր մարմինները: Եվ իմ մարմինների վերականգնման նպատակով էներգիա օգտագործվեց պաշտելի Սանատ Կումարայի կաուզալ մարմնից:

Ես հառնեցի, ինչպես փյունիկ: Եվ նորից հնարավորություն ստացա ծառայելու Երկիր մոլորակի բոլոր կենդանի էակներին:

Այս տիեզերքի բոլոր հրաշքները տեղի են ունենում շնորհիվ ինքնազոհողության և Լույսի Էակների մի ողջ Հիերարխիայի ծառայության: Եվ ամեն մի Էակ, ով կանգնած է գիտակցության զարգացման ավելի բարձր աստիճանի վրա, պատրաստ է զոհաբերելու իրեն՝ դրդված սիրուց ու կարեկցանքից այն էակների նկատմամբ, ովքեր կանգնած են իրենց զարգացման ավելի ցածր աստիճանի վրա:

Ես այս խոսակցությունը վարեցի այն բանի համար, որպեսզի դուք մտորեք ձեր արարքների մասին: Ձեզնից յուրաքանչյուրը կարող է իր լուման ներդնել բացասական էներգիաներից բաղկացած թանձր էներգետիկական կեղևի ձևավորման գործում: Նաև ձեզնից յուրաքանչյուրը կարող է նպաստել Երկիր մոլորակը շրջափակող այդ կեղևի լուծմանը: Ամեն ինչ ձեզնից է կախված, պաշտելիներս: Դուք տեսնում եք, որ Երկնոլորտներն, ուժերի ներածին չափ, ամեն ինչ անում են: Չե՞ք մտածել արդյոք, որ Աստծո ողորմածությունը կարող է սահման ունենալ:

Ես եկել եմ՝ ձեզ ասելու, որ Լույսի այն մոմենտումը, որը ես զոհաբերեցի Երկրի իրադրության կայունացման համար, սպառել է իր էներգետիկական հնարավորությունը: Եվ այս պահից սկսած՝ ձեզնից է կախված, թե մոտակա ժամանակներում ինչպիսի էներգիաների կուտակումը կգերակշռի Երկրի առաջայում:

Որպեսզի հետագայում կանխարգելվի այն մեծ լարվածությունը, որը կարող է հանգեցնել գլոբալ արհավիրքի, մենք որոշում ենք ընդունել՝ թույլատրել ավելի մանր արհավիրքներ՝ նման Ասիայի հարավում տեղի ունեցած երկրաշարժին և այդ երկրաշարժի առաջացրած ցունամիին, որը տեղի ունեցավ անցյալ տարվա դեկտեմբերի վերջին:

Ըստ այդմ՝ ամեն անգամ, երբ այս կամ հետագա տարիների ընթացքում տեղի կունենան բնական արհավիրքներ, տարերային աղետներ, տեխնածին համաղետներ, պատերազմներ, ահաբեկչական գործողություններ, սոցիալական պայթյուններ և եղանակային արտառոց պայմաններ, թող դրանք ձեզ հիշեցնեն Երկիր մոլորակի բարդ իրադրության և այն պատասխանատվության մասին, որը դուք կրում եք՝ հանուն այս մոլորակի ապագայի:

Ես հաշվի եմ առնում, որ Երկիր մոլորակի մարդկանցից շատերն ունակ չեն հասկանալու այն կապը, որ գոյություն ունի իրենց գործողությունների, մտքերի, զգացմունքների և Երկրի վրա տեղի ունեցող արհավիրքների միջև: Սակայն նույն այն օրենքը, որը գործում է համայն տիեզերքում, տարածվում է նաև այս մոլորակի վրա:

Ձեզնից նրանք, ում գիտակցությունն ավելի զարգացած է, պարտավոր են ծառայել այն անհատներին, որոնց գիտակցությունը դեռևս չի հասել այս մոլորակի վրա գոյություն ունեցող ամեն ինչի միջև փոխադարձ կապի գիտակցմանը:

Ահա թե ինչո՞ւ ենք մենք այս թելադրություններում նորից ու նորից կրկնում ձեր մտքերի, հույզերի ու գործերի համար ձեր պատասխանատվության մասին՝ ձեր կյանքում գործած բոլոր արարքների համար. Աստծո էներգիայից ձեր ծախսած ամեն մի էրգի համար:

Եվ, ինչպես միշտ, ում գիտակցությունն ավելի բարձր է, նրա վրա աշխատանքի ավելի մեծ մաս ու պատասխանատվություն է դրվում Երկրի իրավիճակի կայունացման գործում:

Ես եկա Վեսակ ամսին, երբ ո՞չ միայն բուդդա-

յականները, այլ նաև աշխարհի շատ երկրների մարդիկ նշում են իմ ծննդյան օրը, իմ պայծառացումը և Հավերժական Լույսի հետ իմ միաձուլումը:

Այժմ դուք կարող եք այդ իրողություններին ավելացնել նաև իմ նոր ծննդի օրը, երբ հնարավորություն ստացա շարունակելու մարդկությանն ծառայելը՝ շնորհիվ ինձ ցուցաբերված ողորմածության և այն խնամակալության ու օժանդակության, որը ցուցաբերեց Սանատ Կումարան՝ իմ հավերժական Գուրուն և ինձ ամենամոտ Վեհապետը:

Ես հուսով եմ, որ ձեր համայնքներում տիրապետող կլինի փոխօգնության, իրար օժանդակելու և ծառայելու ոգին:

Մերձավորին, բոլոր կենդանի էակներին ծառայելու ձեր ամեն մի գործողությունը բարձրացնում է Երկիր մոլորակի թրթռանքները և փոքրացնում սպառնացող հերթական արհավիրքի հավանականությունը:

Ձեր հոգևոր առաջընթացի մասին դատեցեք ոչ թե այն ժամաքանակով, որ ծախսում եք աղոթքների ու մտասևեռումների վրա, այլ այն օգնությամբ, որը ցուցաբերում եք բոլոր կենդանի էակներին՝ ներառյալ մարդկանց, կենդանիներին ու բույսերին: Ձեր հոգևոր առաջընթացի մասին դատեցեք այն մտքերով ու հույզերով, որոնք գերակշռում են ձեր գիտակցության մեջ:

Դրանք էլ հենց այն պտուղները կլինեն, որոնցով կոչ էր անում դատել Հիսուս:

Ես հրաժեշտ եմ տալիս ձեզ:

ԵՍ ԵՄ Հաութամա Բուդդան,
մնում եմ աշխարհի հետ

ԶՈՐԱՎՈՐ ՏԻԵԶԵՐՔ

3 մայիսի, 2005 թ.

ԴՈՒՔ ԱՊՐՈՒՄ ԵՔ ԶԱՐՄԱՆԱԼԻ ՕՐՀՆՅԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ: ԴՈՒՔ ԱՆՆԱԽԱԴԵՊ ՆԵՐՔԻՆ ԱՃԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՔ

ԵՍ ԵՄ Զորավոր Տիեզերքը՝ այս օրով ձեզ այցի եկածը:

Ես եկել եմ, որպեսզի մի փոքր լայնացնեմ ձեր աշխարհընկալման սահմանները: ԵՍ ԵՄ Տիեզերական Էակ: Եվ ԵՍ ԵՄ՝ համայն տիեզերքում բնակվողս: Եվ համայն տիեզերքն իմ տունն է:

Եվ սա, հիրավի, հրաշք է, որ ես այսպես հեշտ կարող եմ գալ ձեզ մոտ՝ ձեր երկրային տները, և տալ իմ Ուսմունքը: Երկնքի ողորմածությունը, հիրավի, անսահման է:

Դուք ձեր գիտակցությունը կապում եք ձեր աշխարհի հետ և մտածում եք ձեր աշխարհի սահմաններում: Ուստի, եթե ես խոսեմ այնպիսի բաների մասին, որոնցից դուք չնչին պատկերացում անգամ չունեք, ապա այդ տեղեկատվությունը կանցնի ձեր գիտակցության կողքով՝ նրանում որևէ հետք չթողնելով:

Տիեզերքը ծայրեծայր լցված է էներգիայով, ինչպես և Տիեզերքը ծայրեծայր լցված է տեղեկատվությամբ: Այդ տեղեկատվությունն անընդհատ հոսքով տառացիորեն անցնում է ձեր միջով: Տիեզերքի ոչ մի գաղտնիք անմատչելի չէ: Եվ միայն ձեր թրթիռները, ձեր թրթիռների մակարդակն է, որ ձեզ հեռացնում են Տիեզերքի բոլոր գաղտնիքներից:

Եվ ձեզնից յուրաքանչյուրը, բարձրացնելով իր թրթիռները, իր համար մատչելի է դարձնում գիտելիքների նորանոր մակարդակներ: Դուք ձեր գիտակցության մեջ անվերջ մագլցում եք դեպի հավերժական Ճշմարտությունը: Եվ դեպի Աստծո Ճշմարտություն տանող այդ ուղին ձեզնից պահանջում է բոլոր ուժերի լարում: Միայն մշտական լարվածության վիճակ ապրելով և մշտապես ինքն իրեն հաղթահարելով եք դուք աճում և բարձրանում ավելի ու ավելի վեր՝ դեպի աստվածային գիտակցության գագաթը:

Եվ դուք անցնում եք մի աշխարհից մյուսը, ճանապարհորդում եք համայն տիեզերքով, այնուհետև հնարավորություն եք ձեռք բերում ճանապարհորդելու նաև այլ տիեզերքներում:

Հավանաբար ձեզնից շատերի համար անսպասելի կլինի, եթե ասեմ, որ ամեն ինչ գտնվում է ձեր ներսում: Եվ աշխարհներն են միանում ձեր ներսում: Եվ ձեր բոլոր նվաճումներն են կուտակվում ձեր ներսում: Դուք բացարձակապես եզակի եք: Եվ դուք իսկապես ստեղծված եք ըստ Աստծո պատկերի և նմանության: Ըստ էության՝ դուք հենց Աստվածներ եք:

Դուք հենց ի սկզբանե ծնվել եք որպես Աստվածներ և ցանկացել եք արարել այն պատրանքային աշխարհը, որի մեջ ապրում եք: Եվ ահա, վերջապես, դուք ձեր պատրանքում խաղալուց

կշտացել եք: Եվ հասել է ժամանակը վերադառնալու իրականությանը՝ ձեր հարազատ աշխարհը:

Դուք գիտեք, որ ձեր կառուցվածքը նման է գեղջկատիկնիկի: Դուք ունեք ֆիզիկական մարմին, բայց ունեք նաև ուրիշ՝ ավելի նուրբ մարմիններ, որոնք կազմում են ձեր աուրան:

Դուք ունեք աստեղային մարմին, մենտալային մարմին, եթերային մարմին: Դուք գիտեք, որ այդ նուրբ մարմիններն իրար հետ միացած են չակրաների համակարգով: Ձեզ հայտնի են յոթ հիմնական չակրաներ, որոնք դասավորված են ողնաշարի երկայնքով:

Ձեր գիտակցության մակարդակն իրականում որոշվում է ձեր չակրաների մաքրությամբ: Եվ, որքան ավելի մեծ թվով չակրաներ են բացված, այնքան ավելի մեծ ծավալի տիեզերական տեղեկատվություն է ձեզ համար մատչելի:

Այսօր ես ուզում եմ խոսել գաղտնի ճառագայթների չակրաների մասին: Այդ չակրաները տեղաբաշխված են ձեր հիմնական չակրաների միջև: Եվ այդ չակրաները կապված են ձեր բարձրագույն մարմինների՝ ձեր Ես-Քրիստոսի, կառուզալ մարմնի և ձեր ԵՍ ԵՄ Ներկայության հետ:

Մոլորակի վրա բավականին շատ մարդիկ կան, որոնց յոթ հիմնական ճառագայթների չակրաները բաց են: Եվ գալիս են նոր ռասայի մարդիկ, որոնք ի ծնե բացված ունեն և՛ յոթ հիմնական ճառագայթների, և՛ նույնիսկ գաղտնի ճառագայթների չակրաները: Այդ մարդկանց բնորոշ է այն, որ նրանց համար մատչելի է այնպիսի տեղեկատվություն, որը մատչելի չէ մարդկության հիմնական զանգվածի համար: Ինչպես հիշում եք, ես ասացի, որ տեղեկատվության համար մուտքը ազատ է: Ամբողջ տեղեկատվության մուտքը: Բայց այդ տեղեկատվությունը ձեզ համար մատչելի է դառնում, երբ բարձրացնում եք ձեր թրթիռների մակարդակը:

Իրականում դուք ամենազգայուն էակն եք հանդիսանում: Ձեզ պետք չէ ունենալ ոչ մի կատարյալ համակարգիչ և տվյալների բազա, ոչ մի կապի միջոց: Ձեզ ընդամենն անհրաժեշտ է բարձրացնել ձեր թրթիռների մակարդակը: Եվ ձեզ համար մատչելի է դառնում համատիեզերական տվյալների բանկը: Դուք պարզապես իմանում եք: Եվ երբեմն նույնիսկ չեք կարողանում հասկանալ, թե ինչպե՞ս է, որ իմանում եք:

Իսկ ամբողջ գաղտնիքը ձեր գաղտնի ճառագայթների չակրաների մեջ է: Հատկապես այդ չակրաների միջոցով է ձեզ համար մատչելի դառնում տիեզերական տվյալների բանկը, և դուք մուտք եք ստանում դեպի այն գիտելիքները, որոնք պահպանվում են ձեր կառուզալ մարմնում:

Քանի դեռ ձեր աշխարհի ընդհանուր իրադրությունը չի փոխվել, դուք չեք կարողանա լիովին դրսևորել ձեր ունակությունները, նույնիսկ եթե բաց են գաղտնի ճառագայթների ձեր չակրաները: Ձեր տեխնոկրատական քաղաքակրթությունը չափազանց շատ խանգարումներ է ստեղծում: Այդ խանգարումներն ունեն ռադիոալիքների և տարբեր ճառագայթումների տեսք, բայց ամենամեծ խանգարումները ստեղծվում են մարդկանց մտքերով, քանզի մտքերի հաճախականությունն ամենաշատն է մոտ այն հաճախականություններին, որոնց վրա աշխատում են ձեր չակրաները:

Ձեր չակրաների միջոցով Աստծո Աշխարհը ներթափանցում է ձեր ֆիզիկական աշխարհի մեջ: Ձեր ներսում միանում են աշխարհները: Ահա թե ինչու է ամենակարևորը հանդիսանում ձեր գիտակցության զարգացման մակարդակը, որն անմիջականորեն կապված է ձեր չակրաների մաքրության և դրանց բացված լինելու հետ: Իսկ գաղտնի ճառագայթների ձեր չակրաների միջոցով իրականանում է հավերժական մարդու ծնունդը:

Այժմ ձեր մեջ շատ է մարմնականը, ծանրը, մարդկայինը, եսասիրականը: Ֆիզիկական աշխարհում դուք աստիճանաբար հրաժարվում եք ձեր խաղի այդ պարագաներից: Ժամանակի հետ ձեզ այլևս ֆիզիկական մարմին պետք չի լինի: Այնուհետև դուք հրաժեշտ կտաք ձեր աստեղային, մենտալային և նույնիսկ եթերային մարմիններին: Եվ, նման այն բանին, ինչպես հարսնյակից թիթեռն է ծնվում, դուք թափ կտաք ձեր թևերն ու կթռչեք տիեզերք: Դուք նոր գոյություն ձեռք կբերեք նոր մարմիններում: Քանզի ձեր ներկայիս մարմինները պետք են միայն այն բանի համար, որ ապրեք ֆիզիկական աշխարհում: Եվ, երբ վրա կհասնի տիեզերական պահը, դուք հրաժեշտ կտաք ձեր այդ մարմիններին և կապրեք այլ մարմիններում՝ ձեր իրական մարմիններում: Եվ ձեզ համար այլևս գոյություն չեն ունենա տարածության ու ժամանակի սահմանափակումներ: Քանզի տարածությունն ու ժամանակն ընդամենը բեմանկարներ են, որոնց խորապատկերում տեղի է ունենում ձեր անմահ մասի զարգացումը:

Եվ կգա պահը, երբ դուք կհիշեք ֆիզիկական մարմիններում լինելու ձեր դրդեները, որովհետև ձեր տիեզերական գիտակցության բարձրությունից ձեր երկրային կյանքերը կթվան ընդամենը մի քանի դրդեներ, որոնք դուք անցկացրել եք հոծ աշխարհում: Դուք կհիշեք ձեր երկրային փորձը, և ձեզ համար անհասկանալի կլինի, թե ինչո՞ւ չէիք տեսնում ձեր անցյալն ու ապագան, ինչո՞ւ էիք այդքան կույր ու սահմանափակ:

Սակայն հատկապես ինքնահաղթահարմամբ է տեղի ունենում հավերժական զարգացումն ու կատարելագործումը: Տիեզերքը կդադարի գոյություն ունենալ, եթե կորցնի ինքնազարգացման և ինքնակատարելագործման ունակությունը:

Եվ համայն տիեզերքի նկատմամբ գործում է ճիշտ նույն սկզբունքը, որը գործում է այն մարդկանց կյանքի նկատմամբ, ովքեր չեն ուզում զարգանալ, ովքեր խավարասերների նման կույ՛ն են եկել իրենց նեղ գիտակցության ճեղքում և չեն ուզում Լույս աշխարհ դուրս գալ:

Այն ամենը, ինչը չի ուզում հետևել համայն

տիեզերքի գլխավոր օրենքին, ինքնազարգացման ու ինքնակատարելագործման օրենքին, որոշակի սահմանից այն կողմ այլևս չի կարող գոյություն ունենալ:

Սիրեցե՛ք ձեր բոլոր ուժերի ու հնարավորությունների լարումը: Սիրեցե՛ք ձեր մղումն ու այն արգելքների կատաղի հոսքը, որ հաղթահարում եք:

Օրհնեցե՛ք այդ արգելքները, օրհնեցե՛ք ձեր թշնամիներին, օրհնեցե՛ք ձեր կյանքի բոլոր հանգամանքներն ու դժվարությունները, քանզի դրանք օգնում են ձեզ աճել ու հաղթահարել ինքներդ ձեզ:

Զարգացած անհատները ձգտում են ծնունդի արժանանալ հնարավորին չափ ծանր կյանքային պայմաններում: Նրանք զգացել են ինքնահաղթահարման համը և հաճույք են ստանում խոչընդոտներից:

Դուք ապրում եք զարմանալի օրհնյալ ժամանակներում: Դուք անսնախադեպ ներքին աճի հնարավորություն ունեք: Եվ ինչ-որ տեղ ես նույնիսկ նախանձում եմ ձեզ: Գաղտնիքի կարգով ասեմ, որ յուրաքանչյուր էակ, ով հասել է գիտակցության համբարձյալ վիճակին, ձգտում է ձեռքից բաց չթողնել ամենաչնչին հնարավորությունը, որ այս դժվարին ժամանակներում հայտնվի ձեր մեջ, որպեսզի մեկ անգամ ևս փորձի իրեն և հնարավորություն ունենա օգնելու այն կենսահոսքերին, որոնք կորցրել են ապրելու ու զարգանալու իրենց կամքը:

Ձեր զարգացման գործընթացն այն փուլն է մտել, երբ ձեր գիտակցությունը դժվարությամբ կհարմարվի արտաքին կյանքի փոփոխվող պայմաններին: Իսկ այդ սրընթաց փոփոխությունները կստիպեն ձեզ կենտրոնանալ էվոլյուցիայի տեսակետից ամենագլխավորի վրա և դեն նետել բոլոր ձեր հին խաղալիքներն ու ոչ պետքական հրապուրանքները:

Աստված ամեն ինչ կանխատեսել է: Եվ միլիոնավոր Լույսի Էակներ հոգատարությամբ պաշտպանում են ձեզ և հետևում, որպեսզի դուք ձեր գիտակցության մեջ առավելագույնս անվտանգ անցում կատարեք դեպի ձեր զարգացման նոր՝ ավելի որակյալ մակարդակ:

Ես իմ օգնությունն եմ առաջարկում ձեզ՝ ձեզնից յուրաքանչյուրին, ով կդիմի ինձ, և ես մատնացույց կանեմ այն ամենագլխավոր թերությունը՝ այն հատկանիշը, որը տվյալ պահին խանգարում է ձեր զարգացմանն ու առաջընթացին: Իսկ երբ դուք ճանաչեք ձեր ներսի գլխավոր թշնամուն, ապա կարող եք խնդրել ցանկացած Վեհապետի, որը գործ ունի այդ հատկանիշների հետ, որպեսզի նա օգնի ձեզ՝ ձեր մեջ հաղթահարելու այդ հատկանիշը: Բայց ես ձեր փոխարեն կփորձեի ձեր թերություններից ինքս գլուխ հանել:

Այսպիսով՝ դուք արտաբերում եք.

«Հանուն ԵՍ ԵՄ ՈՐ ԵՄ-ի, Ջորավո՛ր Տիեզերք, օգնի՛ր ինձ տեսնելու իմ ամենագլխավոր թերությունը, որը խոչընդոտում է դեպի Ասված տանող Ուղով իմ առաջընթացին»:

Կրկնեցե՛ք այս կոչը 9 օրվա ընթացքում երեք անգամ, և ես ձեզ խոստանում եմ, որ ձեր կյանքում տեղի կունենա մի որևէ դեպք, որը թույլ կտա ձեզ ուշադրություն դարձնել ձեր թերության վրա:

Եվ ես համոզված եմ, որ դուք անպայման կհաղթահարեք այն: Դուք պարզապես այլ ելք չունեք:

Ես ձեզ հաջողություններ եմ մաղթում ձեր Ուղու վրա: Ինձ համար հաճելի էր Երկրի մարդկանց հետ զրուցելը:

ԵՍ ԵՄ Էլ Մորիա Խանը

ՄԵԼՔԻՍԵԴԵԿ

4 մայիսի, 2005 թ.

ԻՄԱՍՏՈՒՆ ՄԱՐԴՆ ԱՍՏԾՈՒՆ ՓՆՏՐՈՒՄ Է ԻՐ ՍՐՏՈՒՄ



ԵՍ ԵՄ Մելքիսեդեկը: ԵՍ ԵՄ՝ Աստծո այս դեսպանորդի միջոցով ձեզ այցի եկածը:

Ես հազվադեպ եմ գալիս ու հաղորդակցվում Երկրի մարդկանց հետ, իսկ այսօրվա հաղորդակցությունը բացառություն է:

Հնարավոր է՝ դուք լսել եք Մելքիսեդեկի միաբանության հոգևորականության մասին: Բայց արդյոք շատե՞րն են ձեզնից գլխի ընկնում, թե ինչի մասին է խոսքը:

Իմ միաբանությունը չի պատկանում որոշակի դավանաբանության: Եվ Մելքիսեդեկի հոգևորականի կոչումը շնորհվում է անհատին՝ հատուկ հոգևոր նվաճումների հիման վրա, այլ ոչ թե այն արտաքին պաշտոնի հիման վրա, որը մարդը զբաղեցնում է արտաքին եկեղեցում: Դուք կզարմանաք, բայց Երկրի վրա գոյություն ունեցող կրոնական դավանաբանությունների բարձրագույն հոգևոր առաջնորդներից և ոչ մեկը չի պատկանում Մելքիսեդեկի կոչման հոգևոր դասին:

Ես ձեռնադրում եմ իմ հոգևորականներին ներքին մակարդակների վրա, և հիմնական որակը, որին ես ուշադրություն եմ դարձնում, լիակատար և անվերապահ նվիրվածությունն է Աստծո Կամքին:

Այն անհատների համար, ովքեր արժանի են դարձել նվիրաբերվելու Մելքիսեդեկի կոչման հոգևորականի աստիճանին, պարտադիր պայման է յոթ հիմնական ճառագայթների և հինգ գաղտնի ճառագայթների փորձաքննություններով անցնելը: Ըստ այդմ՝ իմ հոգևորական դասի մոտ բացված են ողնաշարի երկայնքով դասավորված բոլոր 12 չակրաները: Սակայն, գլխավոր պահանջը 13-րդ ճառագայթի կամ վեցերորդ գաղտնի ճառագայթի փորձաքննությամբ անցնելն է:

Այո՛, պաշտելինե՛րս, ես վեցերորդ գաղտնի ճառագայթի կամ 13-րդ ճառագայթի Հիերարխն եմ: Եվ իմ ճառագայթի չակրան գտնվում է ձեր երրորդ աչքի ու զարկերակային չակրայի միջև:

Դուք կզարմանաք, բայց այդ չակրան չի կարող բացվել այն մարդկանց մոտ, ովքեր իրենց դրել են ավանդական կրոնական դավանաբանությունների շրջանակներում, իսկ պատճառն այն է, որ աշխարհում գոյություն ունեցող կրոնական դավանաբանություններից և ոչ մեկը չի բավարարում Աստծուն ճշմարտապես ծառայելու պահանջներին:

Չափազանց շատ են այն դոգմաներն ու սահմանափակումները, որոնք այդ դավանաբանությունների հետևորդներին հեռացնում են Աստծուն ճշմարտապես ծառայելուց ու ճշմարտապես երկրպագելուց: Որպես կանոն, իմ հոգևորականները ճգնավորներ, յոգեր կամ մեկուսակյաց վանականներ են, ովքեր, չնայած կարող են պատկանել որևէ ավանդական դավանանքի, բայց հետևում են ի՛մ պատգամներին, ի՛մ խրատներին և վարվեցողության ի՛մ կանոնակարգին: Իսկ վարվեցողության իմ կանոնակարգը շատ խիստ է: Նախ և առաջ, դա լիակատար նվիրվածությունն է Աստծո Կամքին և Աստվածամոր էներգիան անարատ պահելուն:

Իմ ճառագայթը աստվածային ծառայության և աստվածային մաքրության ճառագայթն է:

Սակայն ես մտադիր չեմ ձեզ հակադրության մղել որևէ պաշտոնական կրոնի կամ դավանաբանության դեմ: Կրոնները կան, և անօգուտ է նրանց դեմ պայքարելը կամ նրանց հակադրվելը:

Ձեր քաղաքակրթության մեջ գոյություն ունեցող բոլոր ինստիտուտները, ներառյալ նաև եկեղեցու ինստիտուտը, հարմարեցված են ձեր միջին գիտակցությանը և արտացոլում են ձեր գիտակցության մակարդակը:

Եվ եթե մարդն իր գիտակցության մեջ կոշտ սահմանափակումներ ունի՝ կապված Հավատի, Աստծո, հասարակության մեջ վարվելակերպի բարոյական նորմերի մասին պատկերացումների հետ, ապա միայն նա ինքը կարող է փոխել իր գիտակցությունը, հաղթահարել այդ սահմանափակումները և դուրս գալ դրանց սահմաններից: Եվ այդ ուղու առաջին քայլը կլինի իր գիտակցությանը բնորոշ սահմանափակումների գիտակցումը և դրանց հաղթահարման ցանկությունը:

Հենց դա էր լինում, պաշտելինե՛րս, բոլոր կրոնական պատերազմների պատճառը, երբ մարդ-

կանց գիտակցության սահմանափակումները՝ երբեմն նույնիսկ դիտավորյալ սարքած, կառավարող կրոնական վերնախավի կողմից օգտագործվում էին՝ մարդկանց հետ մեքենայություններ անելու և իրենց շահադիտական նպատակներով այդ մարդկանց օգտագործելու համար:

Ինձ համար ցավալի է դիտելը, թե ինչպես ես ամբողջովին մտացածին սահմանափակումները մինչև հիմա պատճառ հանդիսանում կրոնական անհանդուրժողականության և կրոնական հակադրությունների համար: Պաշտելիներս, Աստված չունի սահմանափակումներ, և գոյություն ունեցող կրոնական հայացքների մեծամասնությունը ժամանակի ընթացքում կվերանա: Դրանք միայն Աստծո Ճշմարտության ժամանակավոր հանդերձանքներ են, որոնք առկա են պատմական զարգացման տվյալ փուլում:

Եվ այն մարդկանց համար, որոնց գիտակցության մակարդակը բավականաչափ բարձր է, այլ հակասություններ գոյություն չունեն ցանկացած կրոնի և ցանկացած աշխարհընկալման համակարգի միջև, բացի ամենակարևոր հակասությունից, որի հետ հնարավոր չէ հաշտվել: Ես մոտեցա, պաշտելիներս, շատ նուրբ և նրբանկատություն պահանջող հարցի: Ես նախապես ասացի, որ Մելքիսեդեկի ուխտի հոգևորականությունն անվերապահորեն նվիրված է Աստծո Կամքին: Եվ մշտապես հարցն այն է եղել, թե ինչպես հասկանալ Աստծո Կամքը:

Իրոք, պաշտելիներս, քանի դեռ համապատասխան ձեռնադրումներ չեք անցել, դուք չեք կարող վստահ լինել, որ Աստծո Կամքի մասին ձեր ըմբռնումն ու պատկերացումը համապատասխանում են Ճշմարտությանը:

Եվ շատ են այն մարդիկ, ովքեր օգտվում են մարդկային զանգվածների տգիտությունից, ներառյալ նաև Աստծուն ըմբռնելու հարցում եղած տգիտությունից, որպեսզի հասնեն իրենց շահադիտական նպատակներին:

Եվ Հավատի ճշմարիտ ու կեղծ ըմբռնումներին հարող մարդկանց միջև եղած սահմանն անցնում է ոչ թե ինչ-որ կրոնների կամ հավատալիքների միջով, այլ այդ սահմանը, պաշտելիներս, անցնում է մարդկանց սրտերի միջով: Եվ, իհարկե, գոյություն ունեն բազմաթիվ ճշմարիտ սպասավորներ: Բայց և ավելի մեծ թիվ են կազմում այն կեղծ սպասավորները, որոնք իրենց ներսում Աստծուց ոչինչ չունեն, սակայն բոլորից շատ են խոսում Աստծո ու ծառայության մասին:

Դուք կարող եք լսել ճիշտ խոսքեր, նույնիսկ կարող եք տեսնել ճիշտ արարքներ, բայց այդ մարդիկ չեն հետևի Աստծո ճշմարիտ Կամքին և չեն հանդիսանա ճշմարիտ սպասավորներ:

Կամ արդյոք, պաշտելիներս, ձեր աշխարհում մի որևէ չափանիշ, որով կարողանայիք առաջնորդվել, որպեսզի ձեր գիտակցության մեջ առանձնացնեք Աստծո ճշմարիտ սպասավորներին կեղծերից:

Այս հարցը ձեր ժամանակներում ձեռք է բերում առաջնահերթ նշանակություն: Սակայն այդ հարցի պատասխանը 2000 տարի առաջ տվել է Հիսուս: Պտուղներո՛վ պետք է դատել:

Ոչ թե գործերով, խոսքերով, արարքներով, այլ հենց պտուղներով: Որովհետև դուք կարող եք լսել ճիշտ խոսքեր, տեսնել ճիշտ արարքներ, բայց այդ արարքների արդյունքը կլինի փտած:

Ըստ այդմ՝ դուք չեք կարող դատել կարճ ժամանակահատվածի սահմաններում: Չնայած ժամանակն արագացել է, և այժմ պտուղներն անհամեմատ ավելի արագ են հասունանում, ինչը կապված է ընդհանուր առմամբ Երկիր մոլորակի կարմայի արագացված վերադարձի հետ:

Այն, ինչը համապատասխանում է Աստծո Կամքին և Աստծուն ծառայելուն, կապրի դարերով և ավելի երկար, քան այն սպասավորները, որոնք այս կամ այն Ուսմունքի կամ Հավատի կրողներն են: Իսկ այն ամենը, ինչն Աստծուն ծառայելուն չի համապատասխանում, շատ շուտով երևան կհանի իր փտած պտուղները:

Իսկ ձեզնից նրանք, ովքեր անհամբեր են, ովքեր ուզում են անհապաղ պատասխան ստանալ այս կամ այն կրոնական ուղղության կամ աղանդի՝ Աստծո Կամքի հետ համապատասխանության մասին, կարող են կողմնակի ճանապարհով պատկերացում կազմել այդ մասին՝ ուսումնասիրելով քարոզվող ուսմունքի հիմնական դրույթները:

Եվ այժմ ես կթվարկեմ այդպիսի մի քանի անուղղակի հայտանիշներ:

Դուք գիտեք, որ տեղի է ունեցել դարաշրջանների հերթափոխություն: Եվ տիեզերական բոլորաշրջանը պտույտ է կատարել: Սկսվել է պատրանքի հետհավաքման հսկայական տևողությամբ բոլորաշրջանը: Ուստի այն ամենը, ինչն ուղղված է պատրանքի հետհավաքմանը, անուղղակիորեն կարող է վկայել Աստծո Կամքի հետ համապատասխանելու մասին:

Ես դա կբացատրեմ օրինակով: Ձեր մեջ կա հավերժական մաս և կա անցողիկ մաս:

Եվ եթե դուք չափազանց շատ հոգածություն եք տեսնում՝ ուղղված արտաքին բարգավաճմանն ու բարեհաջողությանը, ապա ավելի մանրամասն կենտրոնացեք ուսմունքի այն դրույթների վրա, որոնք կապված են ձեր աշխարհին պատկանող ցանկացած գերակայությունների հաստատման հետ: Դա կարող է լինել ծեսերին ու եկեղեցական դոգմաներին չափից շատ հետևելը, մարմնական տաճարի առողջության մասին չափից շատ հոգալը կամ ֆիզիկական ոլորտում անհոգ գոյություն ապահովելու ձգտումը:

Ձեր էգոն, ֆիզիկական աշխարհի հետ ձեր ցանկացած կապվածությունը պետք է հաղթահարվեն: Պարզե՛ք, թե ի՞նչ է ասվում ձեր կողմից հետազոտվող ուսմունքում ձեր էգոյի հաղթահարման, ձեր անիրական մասից հրաժարվելու մասին:

Եվ ցանկացած կրոնի ցանկացած դրույթին

այժմ դուք կարող եք մոտենալ ձեզ տրված՝ այս նոր դարաշրջանի համապիտանի չափանիշով: Զգտեցեք պատկերացում ստանալ՝ չառաջնորդվելով ձեր արտաքին գիտակցությամբ, այլ առավելագույնս ձեր գիտակցությունը մոտեցնելով Աստծո Ճշմարտությանը: Եվ միշտ իմացեք. ձեր սահմաններից դուրս չկա ոչինչ, որ կարողանա վնասել ձեզ կամ որևէ վնաս հասցնել ձեր հոգուն:

Միայն ձեր սեփական արատներն ու անկատարություններն են ձեզ քաշում դեպի այս կամ այն կրոնը, այս կամ այն դավանաբանությունը: Ուստի նախքան որևէ կրոնական կազմակերպության մեջ մտնելը անկեղծ ու անկողմնակալ կերպով զրուցեք ինքներդ ձեզ հետ: Ինչն է ձեզ առաջնորդում, ինչն է ձեզ ստիպում միանալ այդ ուսմունքին կամ աղանդին:

Առողջությունը վերականգնելու ձգտումը:

Նյութական վիճակի բարելավումը:

Ձեր աշխարհում ինքնարտահայտման հասնելու ձգտումը:

Մերձավորին օգնելու ցանկությունը:

Որքան ձեր շարժառիթն ավելի մոտ լինի աստվածայինին, այնքան ավելի մեծ կլինի հավանականությունն այն բանի, որ այն ուսմունքը, որին նախընտրում եք հետևել, առավելագույն չափով համապատասխանի Աստծո Ճշմարտությանն ու Ճշմարիտ Հավատին:

Մի՛ մոռացեք, որ աշխարհում ամենայն ինչ իրար է ձգում ըստ թրթռանքի: Եվ դուք ձգվում եք հատկապես դեպի այն հավատը կամ կրոնական հոսանքը, որը ձեր զարգացման տվյալ փուլի տվյալ պահին ունակ է ձեզ տալ լավագույն ուսմունքն ու լավագույն խրատը:

Եվ ոչ մի կրոն կամ կրոնական ուղղություն, որը սխալ եք համարում, չէր կարող գոյություն ունենալ, եթե այն չհենվեր այն մարդկանց էներգիայի վրա, ովքեր սնուցում են այդ կրոնն ինչպես իրենց հոգևոր էներգիայով, այնպես էլ նյութական էներգիայով՝ իրենց փողերի ու նվիրաբերությունների տեսքով:

Իմաստուն մարդն Աստծուն փնտրում է այն միակ տեղում, որտեղ Նա գտնվում է՝ իր սրտում: Պակաս իմաստուն մարդն իմաստություն է փնտրում իրենից դուրս՝ արտաքին կրոններում ու դավանաբանություններում: Եվ նա իր դասերն է ստանում այդ Ուղու վրա:

Մելքիսեդեկի ուխտի հոգևորականները ծառայում են այն Միասնական ու Անբաժանելի Աստծուն, որ գտնվում է յուրաքանչյուր կենդանի էակի սրտում:

Ես ձեզ այսօր կարևոր խրատ տվեցի: Կարծում եմ, որ այն ձեզ համար օգտակար կլինի որպես ուղենիշ՝ նոր կրոնների, դեսպանորդների ու աղանդների ծովում:

ԵՍ ԵՄ Մելքիսեդեկը

ՎԵՀԱՊԵՏ ԷԼ ՄՈՐԻԱ

5 մայիսի, 2005 թ.

ՁԵԶՆԻՑ ՆՐԱՆՑ ՀԱՄԱՐ, ՈՎՔԵՐ ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՀԵՏԵՎԵԼ ԱՍՏԾՈ ԿԱՄՔԻՆ, ԵՍ ԱՅՆՊԻՍԻ ՀՈԳԱՏԱՐ ԴԱՅԱԿ ԿԼԻՆԵՄ, ՈՐԻ ՆՄԱՆԸ ՁԵՔ ԳՏՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ԵՍ ԵՄ Էլ Մորիան՝ իմ դեսպանորդի միջոցով կրկին ձեզ այցի եկածը:

Վերջին օրերի լարվածությունը չի հապաղի իր ազդեցությունը թողնել աշխարհի իրադրության վրա:

Տարածական հոսանքները լարված են: Զգում եք այդ լարվածությունը: Դուք չեք կարող դա չզգալ:

Ձեզ շրջապատող իրականությունը, որը նախկինում ձեզ ծանոթ էր թվում, այժմ թվում է անծանոթ և օտար: Երկրի թրթռումների փոփոխությունը դուք ընկալում եք որպես ձեր, ձեր զգացողությունների և շրջապատող ամեն ինչի միջև անհամապատասխանություն:

Թվում է, թե ամեն ինչ նախկինի պես է, բայց ինչ-որ բան այն չէ: Եվ չկա ֆիզիկական ոլորտում ու ձեր գիտակցության մեջ տեղի ունեցողի բացատրությունը: Ձեր գիտնականները փորձում են Երկրի վրա տեղի ունեցողը բացատրել իրենց սարքավորումների ցուցմունքների օգնությամբ: Անսովոր ցուցմունքներ են, ինչպիսիք դեռևս չէին եղել ժամանակակից գիտության գոյության ողջ պատմության ընթացքում:

Այո՛, պաշտելինե՛րս, երբ մարդկությունը բախվում է Աստծո Պլանների իրականացմանը, ապա մնում է միայն հնազանդվել Աստծո Կամքին: Չափազանց երկար տևեց մատերիայի մեջ խորա-

նալը, դուք վարժվել էիք այն բանին, որ ձեր մտքերն ու ցանկությունները հլու կերպով իրականացվում են մատերիայով և արտացոլվում մատերիայում, ինչպես հայելում: Եվ ահա՝ ինչ-որ բան փոխվել է:

Լինում են ժամանակահատվածներ, երբ մարդկությանը թույլ է տրվում փորձարարություն անել, բայց ժամկետը լրանում է, և իրադրությունը փոխվում է: Դուք, ինչպես և ձեր գիտնականները, չեք կարող բացատրել այն, ինչ տեղի է ունենում մոլորակի վրա: Կա ինչ-որ բան, որը ոչ մի կերպ չի հնազանդվում մարդկանց կամքին: Եվ եթե Աստված Երկիր մոլորակի համար պլանավորել է բոլորաշրջանների հերթագայություն, ապա դա տեղի կունենա՝ անկախ ձեր ցանկությունից:

Եկել է Աստծո Կամքին հնազանդվելու ժամանակը: Համայն տիեզերքում գոյություն ունի Օրենք, և այն, ուզեք թե չուզեք, պետք է գործի: Ուստի ես թախանձագին առաջարկում եմ ձեզ՝ ձեր սրտում որոշեք, թե ինչն է, որ ձեր կյանքում ընթանում է Երկրի էվոլյուցիայի սույն փուլի համար նախատեսված Աստծո Կամքին համապատասխան, և ինչն է, որ ձեր կյանքում հակասում է Աստծո Կամքին:

Ես հասկանում եմ, որ ձեզ համար դժվար է ձեր գիտակցության մեջ տարբաժանել ձեր անձնական ցանկություններն ու ձգտումները և ձեր կենսահոսքին վերաբերող Աստծո Կամքը: Սակայն պահի կենսական պահանջը հենց այն է, որ ձեր ներսում սահմանազատվի ու առանձնացվի ձեր էգոյին ենթարկվողն Աստծո Օրենքին ենթարկվողից: Եվ որքան արագ կարողանաք դա հասկանալ, այնքան ավելի արագ կազատվեք ձեր մեջ եղած այն ամենից, ինչն Աստծուց չէ:

Եվ այդ զանազանման ու ճանաչման գործընթացներն այնքան նրբին են ու երկրային տրամաբանությանը չենթարկվող, որ մոտակա ժամանակներում ձեզ կվիճակվի լուրջ կենսական փորձություններ անցնել, որոնք վերջապես ձեզ կստիպեն մտորել ձեր իսկ ներսում անիրականը իրականից առանձնացնելու մասին:

Պաշտելիներս, բոլոր արտաքին դրսևորումներն անսերդաշնակ են, բոլոր եղանակային անոմալիաները, արհավիրքները տեղի են ունենում Աստծո Կամքի հետ ձեր գիտակցության անհամապատասխանության հետևանքով: Գոյություն ունի վեկտոր, որը նախանշում է Երկիր մոլորակի զարգացման ուղղությունը: Կան նաև ձեր մղումների վեկտորները: Եվ եթե ձեր մղումների վեկտորները չեն համընկնում էվոլյուցիայի հիմնական ուղղության հետ, որը նախանշված է այս մոլորակի համար, ապա ձեր մղումների վեկտորների ուղղությունները կոպտորեն կշտկվեն արտաքին ուժերի կողմից: Եվ եթե ձեզ շրջապատող արտաքին աշխարհում դուք հանդիպեք չափազանց մեծ դիմադրության, ապա մտորեք այն մասին, թե արդյո՞ք ամեն ինչ անում եք Աստծո Կամքին համապատասխան:

Սակայն ներկայումս առկա է լրիվ հակառակ միտումը, և այն բավականին ուժեղ է: Դա այն է, որ երբ ձեր մղումները լրիվ համապատասխանում են Աստծո Կամքին, և ձեր մղումների վեկտորն ուղղված է հարկ եղած ուղղությամբ, դուք շրջապատվում եք այնպիսի ուժերով, որոնք չեն ուզում փոխվել և ենթագիտակցական կամ լիովին գիտակցական մակարդակով զգում են, որ դուք իրենց համար վտանգի աղբյուր եք: Դուք աշխարհ եք բերում փոփոխությունների աստվածային էներգիա, բարեփոխումների թարմ շունչ: Ուստի և դիմադրության կհանդիպեք այն ուժերի կողմից, որոնք չեն ուզում որևէ բարեփոխություն:

Ըստ այդմ՝ ես նորից ձեզ վերադարձնում եմ այն մտքին, որ ձեր կյանքում ձեզ մշտապես հարկավոր է տարբերակում մտցնել: Երկրի վրա գտնվելու ձեր ամեն րոպեին, ամեն վայրկյանին դուք ընտրություն եք կատարում, որը փոխում է ոչ միայն ձեր, այլ նաև ամբողջ մոլորակի ապագան:

Եվ երբ ես ձեզ առաջարկեցի իմ հովանավորչությունը, ապա դա արեցի, որպեսզի զարգանալու հնարավորություն տամ այն ամենին, ինչը գործում է աստվածային զարգացման վեկտորի ուղղությամբ: Եվ ես կգործադրեմ բոլոր մատչելի միջոցները, որպեսզի ձեզ պաշտպանեմ այն ուժերի ավելորդ դիմադրությունից, որոնք հակադրվում են էվոլյուցիայի ընդհանուր ընթացքին:

Սակայն եթե դուք հովանավորչություն եք խնդրել անձնական շահի, անձնական բարգավաճման ու հաջողության համար, ապա ես կրկին հսկողության տակ կառնեմ ձեզ, բայց այդ իրավիճակում իմ օգնությամբ կնպաստեմ, որ բախվեք ձեր կյանքի բոլոր այն ներքին ու արտաքին հանգամանքներին, որոնք ձեզ կստիպեն մտորել՝ արդյո՞ք իրականում դուք վարվում եք Աստծո Կամքին համապատասխան:

Միայն մշտական լարվածություն ու զարգացում, և ոչ մի հանգիստ, պաշտելիներս:

Դուք ձեր աշխարհն եք եկել գործելու համար, և, ցանկանաք թե ոչ, պետք է գործեք:

Հնարավոր չէ խաբել Աստծուն, պաշտելիներս, հնարավոր չէ խաբել ինձ: Ես կարդում եմ ձեր սրտերը և տեսնում ձեր իրական շարժառիթներն ու մղումները:

Եվ եթե դուք ձեր կյանքում բախվում եք անհաղթահարելի խոչընդոտների, ապա նախ և առաջ պետք է զանազանեք՝ այդ խոչընդոտները ձեր շարժման ուղղության, ձեր մղումների վեկտորի սխալ ընտրության հետևանք են, թե՞ դրանք խավարի ուժերի դիմադրության հետևանք են, որոնք խոչընդոտում են ձեզ հատկապես այն պատճառով, որ ձեր մղումները լիովին համապատասխանում են Աստծո Կամքին:

Եվ եթե ձեր կյանքի խոչընդոտներն առաջացել են խավարի ուժերի դիմադրությամբ, ապա կո՛չ հղեք, խնդրեցե՛ք իմ օգնությունը, և անհաղթահարելի խոչընդոտները կվերացվեն Լույսի զորա-

խմբերի կողմից, և դա տեղի կունենա այնքան արագ, որքան թույլ են տալիս արտաքին հանգամանքները, նաև այնքան բնականորեն, որ որոշ ժամանակ անց դուք կմոռանաք, որ ոչ վաղ անցյալում ձեր առջև ծառացել էին անհաղթահարելի խոչընդոտներ:

Իսկ ձեզնից նրանք, ովքեր ուզում են անձնական օգուտ ստանալ իմ հովանավորչությունից, շատ շուտով ստիպված կլինեն մտորել իրենց շարժառիթների մասին և վերանայել Երկնքի օգնության նկատմամբ իրենց սպառողական մոտեցումը:

Ըստ այդմ, պաշտելինե՛րս, մի՛ փորձեք Աստծուն ստիպել, որ խաղա ձեր խաղի կանոններով:

Խաղի կանոնները մեկընդմիշտ հաստատվել են մատերիական տիեզերքի արարման պահին: Եվ այժմ, այդ կանոններին համապատասխան, վրա է հասել տիեզերական այն պահը, երբ դուք պետք է հրաժարվեք ձեր բոլոր անձնական մղումներից և ձեր ներսի Աստծո Կամքին չհամապատասխանող ամեն ինչից:

Իհարկե, դա մի անգամվա գործ չէ և կզբաղեցնի անհամեմատ ավելի մեծ ժամանակահատված, քան ձեր երկրային մեկ կյանքը: Բայց միշտ հիշեք, որ ժամանակը կարճացվում է ընտրյալների համար, և եթե դուք ցանկանում եք ավարտել ձեր էգոյի գոյության բոլորաշրջանը և վերջնականապես հրաժեշտ տալ նրան հենց այս կյանքում, ապա ձեզ կցուցաբերվի Երկնքի ամբողջ հնարավոր օգնությունը: Բայց մի՛ մոռացեք, որ դրանով դուք ընտրում եք ձեր կարմայի արագացված վերադարձի տարբերակը, ինչը կարող է լուրջ բարդություններ առաջացնել ձեր կյանքում:

Ուստի մեծամասնության համար այդ արագացված ուղին կիրառելի չէ: Քանզի նրանց կարման այնքան ծանր է, որ մեկ կյանքի ընթացքում այդ կարմայի վերադարձը ֆիզիկապես ուղղակի հնարավոր չէ կազմակերպել այն բնական օրենքների պատճառով, որոնք գոյություն ունեն մատերիական աշխարհում: Էլ չասած, որ ձեր ֆիզիկական մարմինը պարզապես չի դիմանա կարմայի նմանատիպ արագացված վերադարձին:

Ես այսօր ձեզ բացատրեցի այն չափորոշիչները, որոնցով ես առաջնորդվում եմ իմ օգնությունը ցուցաբերելիս: Եվ առավել մանրամասն ձեզ բացատրեցի, թե որն է իմ օգնությունը: Ես օգնում եմ նախ և առաջ ձեր հոգուն և ձեր ներսի անմահ մասին: Ձեր ֆիզիկական մարմինը և այն ամենը, ինչ կապված է ֆիզիկական աշխարհում ձեր մարմնի հանդարտ ու փթթուն գոյատևման հետ, ես պարզապես հաշվի չեմ առնում:

Ձեր ֆիզիկական մարմինը պետք է աշխատունակ վիճակում լինի, եթե միայն կատարում եք Աստծո Կամքը, այլ ոչ թե օգտագործում եք ձեր ֆիզիկական տաճարը, որ ձեր աշխարհում ինչ-ինչ հաճույքներ ստանաք:

Ըստ այդմ՝ եթե որևէ մեկն իր կյանքում որևէ խոչընդոտի չի հանդիպում և իր կյանքը նվիրել է հաճույքներ ստանալուն, ապա ես կմտածեի՝ կենդանի՞ է արդյոք այդ մարդը: Ներքին մարդն արդյոք չի՞ լքել նրան, որպեսզի արտաքին կաղապարը հանգիստ իր դարն ավարտի: Արդյոք ապագա ունի՞ այդ մարդը, թե՞ արդեն մեռած է և ճոխության մեջ անց է կացնում իր դարը՝ սոսկ Երկնքի անսահման ողորմածության շնորհիվ: Ի վերջո, յուրաքանչյուրն ստանում է այն, ինչին արժանի է, և այն, ինչին ձգտում է:

Իմ այսօրվա զրույցը, հնարավոր է՝ ձեզ երևաց խիստ ու անզիջում: Ինչ արած, իմ խնդիրների մեջ չի մտնում հաճոյախոսել ու դայակություն անել նրանց, ովքեր չեն ուզում հետևել Աստծո Կամքին ու համայն տիեզերքի Օրենքին: Իսկ ձեզնից նրանց համար, ովքեր պատրաստ են հետևել Աստծո Կամքին, ես այնպիսի հոգատար դայակ կլինեմ, որի նմանը չեք գտնի ֆիզիկական ոլորտում:

ԵՍ ԵՄ Էլ Մորիա Խանը

ՏԵՐ ՄԱՅՏՐԵՅԱ

6 մայիսի, 2005 թ.

ՁԵՐ ԽՆԴԻՐՆ Է ԱՌԱՆՁՆԱՆԱԼ ԱՇԽԱՐՀԻՑ ԵՎ ԹՈՒՅԼ ՏԱԼ ԱՍՏԾՈՒՆ ԼԻՆԵԼ ՁԵՐ ՄԵՋ

ԵՍ ԵՄ Մայտրեյան՝ այս դեսպանորդի միջոցով ձեզ այցի եկածը:

ԵՍ ԵՄ եկել, որպեսզի զրուցեմ այն մասին, թե մոտակա ժամանակներում ինչպես են զարգանալու իրադարձությունները Երկրի վրա: Գաղտնիք չէ, որ ձեզնից շատերն իմ անմիջական ղեկավարությամբ ձեռնադրումներ են անցնում: Դուք ձեր արտաքին գիտակցությամբ դա կարող եք գիտակցել կամ ոչ: Բայց ես գալիք Բուդդան եմ, և ձեզ նախապատրաստում եմ եկող դարաշրջանին: Դուք Մայտրեյայի մարտիկներն եք: Ես ձեզ նախապատրաստում եմ ներքին մակարդակներով, և դուք անցնում եք ձեր ձեռնադրումները:

Աշակերտներին ներկայացվող իմ պահանջներն ինչո՞վ են տարբերվում մյուս Վեհապետների ներկայացրած պահանջներից:

Ձեզ հայտնի է, որ Վեհապետների մեծ մասը ձեզ ուսուցանում կամ ձեռնադրում է որոշակի ճառագայթներով և պարտավոր է ձեզ օժտել այդ ճառագայթներին հատուկ որոշակի աստվածային հատկանիշներով:

Իսկ Իմ աշակերտներն արդեն ուսուցանված են լինում յոթ հիմնական ճառագայթներով և անցած են լինում գաղտնի ճառագայթներով ձեռնադրումների մեծ մասը:

ԵՍ ԵՄ այն Վեհապետը, որը ձեռնադրում է բոլոր գաղտնի ճառագայթներով:

Ես իմ աշակերտներին նախապատրաստում եմ, որ իրենց ներսում ունենան իմ ներկայությունը: Դուք լսել եք մարգարեություններ և գիտեք, որ մոտենում է Մայտրեյայի դարաշրջանը: Բոլորը սպասում են Մայտրեյայի գալստյանը: Եվ ահա հասել է իմ գալստյան վերաբերյալ ձեզ գիտելիքներ տալու ժամանակը: Իմ աշակերտների հետ համատեղ ես պետք է նախապատրաստեմ Երկրի վրա մարմին առնելս: Ես չեմ կարող գալ Երկիր՝ առանց կանխավ նախապատրաստելու իմ գալուստը:

Ես իմ ուղին հարթում եմ իմ այն աշակերտների միջոցով, որոնք նախապատրաստել են իրենց տաճարներն իմ ներկայության համար: Կարող եմ ներկա գտնվել միայն այն աշակերտներիս ներսում, որոնք իրենց տաճարները նախապատրաստել են այնպես, որ բաց լինեն ինչպես յոթ հիմնական ճառագայթների, այնպես էլ գաղտնի ճառագայթների չակրաները: Ահա այդպիսի սաների տաճարներում է, որ ես կարող եմ ներկա գտնվել: Նրանք այն նոր ռասայի ներկայացուցիչներ են, որն արդեն գալիս է Երկիր: Դրանք իմ սաներն են՝ իմ աշակերտները, որոնք իմ ղեկավարությամբ ձեռնադրումներ են անցել շատ հազարամյակների ընթացքում: Իմ ընտրյալներն են ու նվիրյալները:

Ես գալիս եմ իմ այն աշակերտների միջոցով, ովքեր ի վիճակի են ինձ թույլ տալու, որ ներկա գտնվեմ իրենց տաճարներում, և ես հարթում եմ իմ ուղին, որ մարմնավորվեմ Երկրի վրա: Իմ գալուստը հնարավոր չէ, եթե դուք ձեր գիտակցությամբ պատրաստ չեք ինձ ընդունելու: Ոստի միակ բանը, որ խոչընդոտում է Երկրի վրա իմ մարմնավորվելուն, ձեր գիտակցության մակարդակն է:

Ես մեծ ուրախությամբ այցելում եմ Երկիր նրանց միջոցով, ովքեր գոնե կարճ ժամանակով ինձ թույլ են տալիս ներկա գտնվել իրենց տաճարներում: Նրանց մարմինների միջոցով ես ծանոթանում եմ Երկրի ընթացիկ իրադրությանը:

Դեռ շատ տարիներ կանցնեն, մինչև կկարողանամ ամբողջովին մարմնավորվել Երկրի վրա և կանգնել մարդկանց առջև իմ ողջ փայլով և զորությամբ: Մարմնավորված յուրաքանչյուրից է կախված իմ գալստյան և իմ մարմնավորման ժամկետը:

Իսկ մինչ այդ ես կշարունակեմ գալ և ներկա գտնվել իմ աշակերտների մարմնական տաճարներում:

Գոյություն ունեն տիեզերական ժամկետներ, և իմ գալստյան ժամկետն արդեն մոտ է: Մոտ է՝ տիեզերական չափանիշներով, բայց և բավականաչափ հեռու է, եթե իմ գալստյան ժամկետը դիտենք երկրային չափանիշներով:

Ես կգամ, երբ Երկրի վրա բնակվող մարդկության մեծամասնությունն ունակ կլինի ընդունել իմ գալուստը: Իսկ դա կլինի ոչ ավելի շուտ, քան մարդիկ գիտակցորեն կհրաժարվեն իրենց իսկ անիրական մասից, կձերբազատվեն իրենց էգոյից՝ իրենց կենդանական մասից, որն իշխող դիրք է գրավել և շահագործում է իրենց հարյուրավոր հազարամյակներ:

Դուք բոլորդ պետք է դեն նետեք ձեր այդ կենդանական մասը: Դուք պետք մարտնչեք ձեր մարմնական խելքի գազանի ու ձեր կենդանական կրքերի դեմ: Դուք պետք է հաղթեք: Ձեզնից նրանց, ովքեր ողջ կմնան այդ ճակատամարտում, ովքեր կհաղթեն իրենց ներսի անիրական մասին,

ես կդիմավորեմ՝ որպես հաղթող մարտիկների: Ես խոստանում եմ, որ կդիմավորեմ ձեզնից յուրաքանչյուրին՝ իմ հաղթող մարտիկներին, և կշնորհավորեմ նրանց հաղթանակը:

Դուք դեռևս ժամանակ ունեք մինչև ժամկետի լրանալը: Եվ ես եկել եմ իմ մարտիկներին հիշեցնելու, թե ովքեր են իրենք իրականում:

Ձեզնից շատերը հայտնվել են մարտիկին ոչ վայել դիրքերում: Ես եկել եմ ձեզ հիշեցնելու, որ ձեզ շրջապատող աշխարհի թրթռանքը ճահճի պես ձեզ ցած է քաշում:

Վտանգն այն է, որ սկզբում դուք ուղղակի մի թեթև հնազանդվում եք շրջապատող աշխարհի թրթռանքին. ձեր էներգետիկան մի փոքր անկում է կատարում, և դուք դա նույնիսկ չեք էլ նկատում: Այնինչ արդեն սկսում եք ցած սահել ձեր գիտակցությամբ: Եվ կամաց-կամաց համաշխարհային գիտակցության տիղմն ավելի ու ավելի ուժեղ է ձգում ձեզ, այնքան, որ այլևս չեք կարողանում զանազանել Լույսը խավարից, Բարին չարից:

Ձեր աշխարհի ամեն ինչը թշնամություն է անում ձեզ: Այն ամենը, ինչը պատկանում է ձեզ շրջապատող աշխարհին, այն ամենը, ինչ ձեր աշխարհում բարձր վարկ ունի և միլիոնավոր մարդկանց համար ծառայում է որպես հրապուրանքի ու ձգտումների առարկա, հենց այն բաներն են, որոնցից դուք պետք է հրաժարվեք:

Եվ եթե ձեզ համար դժվար է հրաժարվել ձեր շրջապատի պատրանքից՝ դրա ներսում գտնվելով, ապա վարվեք այնպես, ինչպես բոլոր ժամանակներում վարվել են մենակյաց վանականներն ու յոգերը: Առանձնացեք աշխարհից, որքան հնարավոր է: Ստեղծեք համայնքներ ու ավաններ, որոնք կտրված են մեծ բնակավայրերից: Թող այդ համայնքները ձեր հոգիների համար ծառայեն որպես կամերտոններ: Նա, ով համտեսել է լիարժեք աստվածային թրթիռներ՝ թեկուզ կարճ ժամանակով գտնվելով Հոգու այդպիսի համայնքում, ունակ կդառնա մի ամբողջ տարվա ընթացքում ճանաչելու շրջապատող աշխարհի թշնամական թրթռանքները և հեռու մնալու դրանցից:

Ձեր խնդիրն է շրջապատող աշխարհի թրթռանքից հեռու մնալ այնքանով, որքանով դա հնարավոր է: Իսկ երբ այնքան կոփված կլինեք, որ կկարողանաք դիմակայել արտաքին աշխարհի բացասական թրթիռներին, դուք կարող եք դուրս գալ աշխարհ: Եվ այլևս ձեզնից դուրս գտնվող ոչինչ չի կարողանա ձեզ վնաս հասցնել: Քանզի Աստված Ինքն է ներկա ձեր ներսում:

Երբ դուք ունակ լինեք երկար ժամանակով մաքուր պահել ձեր աուրան ու չակրաները, ապա կվերածվեք անոթի, որում կարող է ներկա գտնվել Աստված: Երբ ձեր ներսում որևէ արատ չունեք, ապա ձեր աշխարհում չկա ոչինչ, որ կարողանա ձեզ վնաս պատճառել: Դուք միասնական եք Աստծո հետ. ո՞վ կհամարձակվի ձեր դեմ դուրս գալ:

Եթե ձեր ներսում արտաքին աշխարհից ոչինչ չունեք, ապա ով էլ և ինչպես էլ ջանա ձեզ վնաս պատճառել, ոչինչ չի ստացվի: Քանզի դուք անարատ եք, և ձեզ հետ է Աստված:

Եվ ձեր դեմ ուղղված բոլոր հարվածները կանդրադառնան ձեր աուրայից և բաժին կհասնեն ձեր թշնամիներին: Ֆիզիկական ոլորտի բոլոր գործողությունները կուղղվեն ձեր թշնամիների դեմ: Իսկ դուք նույնիսկ չեք էլ նկատի ձեր թշնամիներին:

Քանզի իրականում դուք թշնամիներ չունեք: Իսկ այն անհատները, որոնք թշնամական զգացմունքներ են տածում ձեր նկատմամբ, արժանի են միայն խղճահարության: Նրանք այնպիսի գոռոզության են հասել, որ հանդգնում են դուրս գալ Աստծո դեմ:

Այսպիսով, ձեր խնդիրն է առանձնանալ աշխարհից և թույլ տալ Աստծուն լինել ձեր մեջ: Եվ այս պահին ձեզ համար այլ խնդիր չկա, հավատացեք ինձ:

Ես կգամ ձեր աշխարհ միայն այն ժամանակ, երբ մարդկության մեծամասնության գիտակցությունը պատրաստ կլինի իմ գալստյանը, և մարդկությունն ինձ սպասելիս կլինի:

Իսկ եթե գամ ժամկետից շուտ, ապա ձեզնից ոչ ոք ինձ չի ճանաչի, որովհետև ձեր աչքերը չեն կարողանա տեսնել ինձ, և ձեր ականջները չեն կարողանա լսել ինձ:

Ըստ այդմ՝ պատրաստեցեք ձեր տաճարներն իմ ներկայության համար, պատրաստեցեք ձեր տաճարները մյուս Վեհապետների ներկայության համար, պատրաստեցեք ձեր տաճարները ձեր ներսում Աստծո ներկայության համար:

Ամենայն ինչ Աստված է, իսկ բոլոր նրանք, ովքեր իրենց գիտակցությամբ մտադիր չեն հնազանդվել համայն տիեզերքի Օրենքին և Աստծո Կամքին, թող իմանան, որ իրենց արդեն շատ քիչ ժամանակ է մնացել այդ աշխարհում մնալու համար: Եվ հենց ինքը՝ աշխարհը, անճանաչելիորեն կփոխվի՝ շնորհիվ ձեր ջանքերի և ձեր նվաճումների: Ես շնորհակալություն եմ հայտնում Տեր Մայտրեյայի բոլոր այն մարտիկներին, որոնք ներկայումս գտնվում են մարմնավորման մեջ և լսում են ինձ:

ԵՍ ԵՄ Մայտրեյան

ՍԱՆԱՏ ԿՈՒՄԱՐԱ

7 մայիսի, 2005 թ.

ԵՍ ՀԱՄԲԵՐՈՒԹՅԱՄԲ ՍՊԱՍՈՒՄ ԵՄ, ԹԵ ՁԵԶՆԻՑ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԸ ԵՐԲ ՊԱՏՐԱՍՏ ԿԼԻՆԻ ՄԻԱՆԱԼՈՒ ԼՈՒՅՍԻ ՀԻԵՐԱՐԽԻԱՅԻՆ ԵՎ ԴԱՌՆԱԼՈՒ ԱՌԱՋԱՊԱՀՆ ԱՅՆՏԵՂ, ՈՐՏԵՂ ՀԵՆՑ ՀԻՄԱ ԻՆՔԸ ԳՏՆՎՈՒՄ Է

ԵՄ ԵՄ Սանատ Կումարան՝ իմ դեսպանորդի միջոցով նորից եկածը:

ԵՍ ԵՄ եկել, որ խոսեմ մեր շարժման ուղիների զարգացման մասին, արտաքին կազմակերպության այն հատվածի զարգացման ուղիների մասին, որը հայտնի է ձեզ որպես Լույսի Հիերարխիա կամ Մեծ Սպիտակ Եղբայրություն:

Դուք տեղյակ եք մեր գործողությունների հստակ կազմակերպվածությանը և գիտեք մեր կառույցի հիերարխիկության մասին:

Երբ մեր մարդիկ խոսում են դեմոկրատական սկզբունքներից, որոնք, իբր, պետք է հաստատվեն մեր արտաքին կազմակերպություններում, ապա մենք չենք կարողանում զսպել մեր ժպիտը:

Ո՛չ, գոյություն ունի ստորինի խիստ ենթակայություն վերինին: Եվ ենթակայության այդ սկզբունքը քննարկման ենթակա չէ: Դուք կարող եք զբաղվել դեմոկրատական սկզբունքների վրա հիմնված ցանկացած կազմակերպության ստեղծմամբ ու զարգացմամբ: Բայց այդ կազմակերպությունը ոչ մի առնչություն չի ունենա մեր Հիերարխիայի հետ:

Մեր կազմակերպությունները միշտ հիմնված են եղել նրանց անդամների՝ այս տիեզերքի բարձրագույն Օրենքին ամբողջովին ենթարկվելու սկզբունքի վրա: Իսկ այս տիեզերքի Օրենքը ենթադրում է զարգացման ավելի ցածր մակարդակի վրա գտնվողի ենթակայություն բարձրի վրա գտնվողին: Ձեզ կարող է թվալ, թե իմ պատգամի այս դրույթը հակասում է նախկինում տրված ուսմունքին, որտեղ խոսվում էր այս տիեզերքում բարձրագույնի կողմից ցածրագույնին ծառայելու մասին:

Պաշտելինե՛րս, դա թվացյալ հակասություն է:

Սկզբում դուք կամավոր կերպով հանձնում եք ձեր էգոն, վերցնում եք ձեզ վրա որոշակի պարտավորություններ, որոնք վերաբերում են ձեր ծառայությանը, և հետո ստանում եք ամբողջ անհրաժեշտ օգնությունը: Օգնություն, որն առնչվում է ձեր ծառայությանը, այլ ոչ թե ձեր այն պատկերացրածին, ինչը դուք ակնկալում եք ստանալ ձեր ծառայության դիմաց: Եթե ձեզ մոտ մտքեր են ծագում ծառայության ընթացքում ցանկացած նյութական կամ իշխանական առավելություններ ձեռք բերելու մասին, ապա ավելի լավ է հեռու մնաք մեր արտաքին կազմակերպություններից:

Չարժե խաղալ մեզ հետ ձեր կանոններով: Ժամանակի ընթացքում բոլոր նման խաղացողները գիտակցում են կարմայի այն ամբողջ ծանրությունը, որը նրանք ստեղծում են՝ խաղալով դեսպանորդի դեր, խաղալով Հիերարխիային, Աստծուն ծառայողի դեր:

Նրանք, ովքեր իրենց ծառայության մեջ անկեղծ են ու անշահախնդիր, Աստծո Կամքին համահունչ, իրենց բոլոր նախաձեռնություններում և ձգտումներում ստանում են մեր օգնությունն ու օժանդակությունը:

Նա, ով ձգտում է որևէ առավելություն ստանալ հատկապես ի՛ր անձի համար, կդրվի այնպիսի խիստ պայմանների մեջ, որոնցում ստիպված կլինի վերջնական ընտրություն կատարելու, թե ում է ծառայելու: Մտադի՛ր է արդյոք նա ծառայել Աստծուն, թե՞ դեռևս շարունակելու է ծառայել իր էգոյին: Եվ այն գործառույթներն, ինչ դուք տեսնում եք այն կազմակերպություններում, որոնք իրենց հռչակել են որպես մեր արտաքին կազմակերպություններ, ոչ այլ ինչ են, եթե ոչ հատիկը որոմից ջոկելու գործընթաց՝ ինչպես կազմակերպության ներսում, այնպես էլ այն անհատականությունների սրտերում, որոնցից կազմված են այդ կազմակերպությունները:

Եթե դուք ուզում եք Աստծուն ստիպել խաղալ ձեր կանոններով, դե ինչ, դուք կստանաք այն բանի լրիվ պատրանքը, թե դա ձեզ հաջողվել է: Դուք լիովին կստանաք այն արտաքին տպավորությունը, որն ինչպես ձեզ, այնպես էլ ձեզ օժանդակող մարդկանց կապացուցի, թե դուք մեծ նվաճումների եք հասել ձեր ճանապարհին: Սակայն մեծ տարբերություններ կան արտաքին նվաճումների և ներքին նվաճումների միջև: Եվ ինչպիսի կոչումներ էլ ինքներդ ձեզ շնորհեք, ինչպիսի ճոխ հագուստներ էլ հագնեք, ինչպիսի մանր-մունր զարդերով էլ պճնեք ձեզ ու ոսկե հորթին պաշտելու ձեր վայրը,

դրանք որևէ կերպ չեն անդրադառնա ձեր նվաճումների մակարդակի վրա: Իսկ ճշմարիտ Քրիստոսը՝ ոտաբոբիկ ու հասարակ շապիկը հագին, կունենա իր նվաճումները, որոնք, սակայն, նկատելի կլինեն նրանց, ում աչքերը բաց են, իսկ ականջները պատրաստ են Ճշմարտությունը լսելու:

Երբեք մի՛ փնտրեք մեր ուսմունքի ճշմարտացիության մասին արտաքին, տպավորիչ հավաստիացումներ: Ես ձեզ ավելին կասեմ՝ մարդկության զարգացման մակարդակը ներկայումս այնպիսին է, որ այնտեղ, որտեղ կենտրոնացված են հավատացյալների մեծ զանգվածներ ու մեծ հարստություններ, որոնք ձեր տեսանկյունից հանդիսանում են տվյալ կրոնի կամ հավատի ճշմարտացիության ու հենց Աստծո կողմից օժանդակված լինելու անհերքելի ապացույցներ, իրականում ամենանվազ կերպով է արտահայտված Աստծո Ճշմարտությունը, և ամենանվազ կերպով է ներառված աստվածային Սկիզբը: Քրիստոսը դրսևորում է իրեն հանդարտ զրույցով սակավաթիվ և անկեղծ աշակերտների շրջապատում:

Մարդկային ամբոխը հավաքվում է կա՛մ մեսիային տեսնելու, կա՛մ նրան խաչելու համար: Եվ մարդկանց մեծ մասի համար էական նշանակություն չունի՝ իրական Քրիստոս-մեսիայի՞ն են նայում, թե՞ հանրահայտ էստրադային աստղին: Շատ տխուր բան է զանգվածային գիտակցությանը ենթարկված մարդկային անհատներին հետևելը: Եվ մարդկանց մեծ մասի գիտակցությունն այնքան հեռու է աստվածայինից, որ ավելի լավ է՝ հեռու մնաք մարդկային ամբոխներից:

Ես իմ սրտում ունեմ Նոր Դարաշրջանի մտահղացումը: Ես տեսնում եմ հիասքանչ բացվող ծաղիկներ մեր այն մարդկանց սրտերում, որոնք հասել են Քրիստոսի գիտակցության մակարդակին: Ես տեսնում եմ այդ բացվող ծաղիկները մոլորակի տարբեր անկյուններում: Յուրաքանչյուր այդպիսի Քրիստոս-գիտակցություն կարող է և պետք է դառնա այն սկզբնական բյուրեղ-սաղմը, որի շուրջ կհավաքվեն նորանոր աշխատակիցներ, և ֆիզիկական ոլորտում ի հայտ կգա հիասքանչ բյուրեղ՝ Սուրբ Հոգու համայնք՝ կազմված մեր նվիրյալ աշխատակիցներից, որոնք այլ նպատակ չունեն, բացի Աստծուն և Եղբայրությանը ծառայելուց:

Դուք կարող եք կառուցել ձեր համայնքներն արտաքին դեմոկրատական սկզբունքներով, բայց այդ համայնքներում գլխավորողն ու կառավարողը թող լինի Քրիստոսը:

Վրա է հասել համագործակցության նոր փուլ, և Քրիստոս-էակները ֆիզիկական ոլորտում նախ պետք է համախմբվեն փոքր կազմակերպություններում ու խմբերում, որոնք կծառայեն որպես սաղմեր ու մատրիցաներ՝ որպես ապագա հասարակության կառույցի նախատիպ:

Դուք չեք կարող փոխել Երկրի վրա եղած բոլոր կառավարությունների և բոլոր մարդկանց գիտակցությունը: Բայց դուք կարող եք ձեր իսկ գիտակցությունը փոխել այնքան, որ այն թույլ տա ձեզ Սուրբ Հոգու Համայնքում միավորվելու ձեզ նման Քրիստոս-էակների հետ: Ես ասում եմ ձեզ՝ դա է, որ այժմ ելնում է առաջին պլան: Կրե՛ք ձեր սրտերում այն կազմակերպության մտահղացումը, որի կազմում ոչ թե միլիոններ են, հազարներ, այլ սակավաթիվ Քրիստոս-էակներ, որոնք իրենց կյանքը նվիրել են Աստծո Կամքի կատարմանը և Հիերարխիայի՝ ֆիզիկական օկտավայի համար նախատեսված պլանների իրականացմանը: Յուրաքանչյուր այդպիսի Քրիստոս-էակ ներքին կապ կունենա Եղբայրության հետ: Եվ դուք կկարողանաք արտաքին գործունեության մեջ առաջնորդվել այն սկզբունքներով ու պատգամներով, որոնք կստանաք ձեր ներխոկումների և մեզ հետ ունեցած ներքին շփման գործընթացների ընթացքում:

Հավատացե՛ք, որ միայն ձեր էգոն և ստորին չորս մարմինների, աուրայի, չակրաների անբավարար մաքրությունն են խանգարում մեզ, որ իրականացնենք այս պահի համար նախատեսված մեր պլանները:

Դուք ձեր ներսում պետք է ունենաք կամերտոնային ճշտությամբ հնչող ձայն, որը համահունչ է ձեր Բարձրագույն Ես-ի՝ ձեր ներսի Աստծո հետ: Եվ այդ ճշգրիտ նոտայի միջոցով դուք ունակ կլինեք ֆիզիկական ոլորտում համագործակիցներ գտնելու, հասկանալու տվյալ պահի Աստծո Պլանը և գործելու՝ ձեր շրջապատի աշխարհին տալով ձեզ նմանվելու և ձեզնով կողմնորոշվելու ճշմա-րիտ օրինակ:

Դուք պետք է սկսեք. մի՛ սպասեք ձեզնից դուրս որևէ հրամանի: Բոլոր ուղեցույցներն ու ցուցումներն այն մասին, թե ինչն ինչպես անել, դուք կստանաք ներսից՝ ձեր սրտից:

Հենց միայն սկսեք գործել և հավատացած եղեք, որ բոլոր Համբարձյալ Դասերը պատրաստ կլինեն ձեր պլանների և մտահղացումների իրականացման գործում օգնելու ձեզ:

Մենք սկսում ենք մեր շարժման նոր փուլ: Եվ այն սկսվում է այնտեղ, որտեղ դուք այժմ գտնվում եք, և ժամանակի այն պահից, երբ դուք ձեր սրտում կարտաբերեք.

«Ես պատրաստ եմ, Տեր: Վերցրո՛ւ ինձ, Տեր, ահա՛ իմ գիտելիքները, իմ ունակությունները: Օգտագործի՛ր ինձ, Տեր, Քո պլանների իրականացման համար: Ահա՛ իմ Ես-ը, Տեր: Ես հնազանդվում եմ Քո Կամքին և Օրենքին: Չկա՛ այլևս իմ մեջ ոչինչ, որ Աստծուց չէ: Չկա՛ ոչինչ, որ մեզ բաժանի: Մենք միասնական ենք»:

Դուք կսխալվեք, անկում կապրեք, բայց պետք է շարունակեք ընթանալ: Եվ դեպի Ճշմարտություն ձեր ընթացքն այնքան ավելի հաջող կլինի, որքան ավելի մաքուր ու անկեղծ կլինի ձեր ընթացքի շարժառիթը:

Դուք միայնակ եք մինչև այն պահը միայն, քանի դեռ ձեր ներսում չեք զգացել միասնությունն Աստծո հետ, իսկ այդ միասնության միջոցով դուք

միասնական եք դառնում յուրաքանչյուրի հետ, ում թրթիռները համահունչ են ձեր թրթիռների հետ: Այո՛, պաշտելինե՛րս, դուք քիչ եք, բայց մարմնավորված եք բավարար քանակով, որպեսզի սկսեք գործել և Սուրբ Հոգու համայնքներ ստեղծեք հենց այն վայրերում, որտեղ այս պահին գտնվում եք:

Համախմբման այս ազդակը ես տալիս եմ ձեզ իմ սրտից: Եվ ես համբերությամբ սպասում եմ, թե ձեզնից յուրաքանչյուրը երբ պատրաստ կլինի միանալու Լույսի Հիերարխիային և դառնալու առաջապահն այնտեղ, որտեղ ինքը հենց հիմա գտնվում է:

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան

ՎԵՀԱՊԵՏ ԿՈՒԹՀՈՒՄԻ

8 մայիսի, 2005 թ.

ՄԵՆՔ ԳԱԼԻՍ ԵՆՔ, ՈՐՊԵՍԶԻ ՁԵՐ ՄԵՋ ԱՐԹՆԱՑՆԵՆՔ ԱՍՏՎԱԾԱՅԻՆԸ

ԵՍ ԵՄ Կութհումին՝ այս դեսպանորդի միջոցով նորից ձեզ այցի եկածը:

ԵՍ ԵՄ եկել, որպեսզի որոշ բացատրություններ տամ այն Ուսմունքի վերաբերյալ, որը տվեցի իմ նախորդ այցի ընթացքում *: Այն վերաբերում էր երկվորյակ բոցերին:

Ձեզնից շատերի համար անսպասելի էր լսել այդ Ուսմունքի այնպիսի մեկնաբանություն, ինչպիսին տվեցի անցած անգամ:

Սակայն վաղ թե ուշ ինքներդ ձեր և ձեր հոգու մասին ունեցած ձեր պատկերացումները պետք է ընդլայնվեն:

Դուք բոլորովին էլ այն չեք, ինչի հետ ձեզ նույնացնում եք ձեր արտաքին գիտակցությամբ: Դուք անսահման հզորության տեր եք:

Ձեր ներսում՝ ձեզնից յուրաքանչյուրի ներսում, Աստված դառնալու կարողություն է դրված:

Դուք, ըստ էության, հենց աստվածներ եք, որ կաք: Եվ ձեր խնդիրն է աստիճանաբար տիրապետել ձեր մեջ եղած Աստվածայինին և այն մտցնել ձեր արտաքին գիտակցության մեջ:

Հավատացեք, դուք ոչ թե այն մարդիկ եք, որ պատրաստվում են Աստծո դեր խաղալ, այլ այն աստվածներն եք, ովքեր ժամանակավորապես եկել են, որ մարդկանց դերեր խաղան: Ձեր Աստվածայնությունը թաքցրված է ձեր արտաքին գիտակցությունից, իսկ ձեր ունակությունները ձեր մեջ քնած են մնում, քանի դեռ ամբողջությամբ ձեր աշխարհում չեք կատարել ձեր դերը:

Միլիոնավոր տարիներ առաջ ձեր հոգիների սերմերը ցանվել են ձևավորվող մոլորակներում: Ձեր անմահ մասնիկը՝ ձեր մոնադան, անցել է զարգացման բոլոր փուլերով և մատերիական տիեզերքի ձևավորման բոլոր շրջափուլերով: Դուք եղել եք և՛ քար, և՛ բույս, և՛ միջատ, եղել եք ցածրագույն կենդանական աշխարհի ներկայացուցիչ, եղել եք նաև բարձր զարգացած կենդանի: Դուք անցել եք զարգացման բոլոր փուլերը: Անցել եք այդ փուլերը ոչ միայն այս մոլորակի, այլ նաև ուրիշ մոլորակների վրա: Այդ ամենի համար պահանջվել են միլիարդավոր երկրային տարիներ:

Աստծո մասնիկը, որը ձեր հիմքն է կազմում, աստիճանաբար զգեստավորվել է մատերիական աշխարհում ձեր գոյության բոլոր փորձառությունների արդյունքներով:

Դա նման է այն բանին, երբ դուք գալիս եք խոշոր միավորման մի գործարանում աշխատելու: Ձեզ հայտնի է, որ որոշ ժամանակ անց դուք պետք է դառնաք այդ գործարանի տնօրենը: Բայց, որպեսզի լավ ղեկավար դառնաք, դուք որոշել եք անցնել ծառայողական աստիճանի բոլոր փուլերը՝ սկսել հասարակ բանվորից, անցնել մանր ու միջին օղակների ղեկավարների պաշտոններով, մինչև որ հասնեք տնօրենի պաշտոնին:

Եվ գործարանում աշխատելու ձեր բոլոր փուլերում դուք ձեռք եք բերում գիտելիքների նոր նշույլներ ու փորձ, որոնք ձեզ են փոխանցվում այն մարդկանցից, ովքեր աշխատանքի փորձ ու հմտություններ ունեն իրենց մասնագիտության բնագավառում: Պատկերացրեք, որ դուք եկել եք նախագծային բաժինը, և այդ բաժնի ղեկավարը ձեզ հետ բազմաթիվ ժամեր է անցկացնում՝ ծանոթացնելով ձեզ նախագծման գործի այն նրբություններին ու հմտություններին, որոնք ինքը ձեռք է բերել իր պաշտոնում գտնվելու երկար տարիների ընթացքում:

Տես 2055 թ-ի ապրիլի 26-ին տված Կութհումիի տված թելադրությունը:

Եթե համեմատենք մարդու պաշտոնում Երկրի վրա ձեր գտնվելու հետ, ապա ձեր էվոլյուցիոն զարգացման որոշակի փուլում դուք ներքին դաստիարակ եք ստացել՝ հանձին ձեր Ես-Քրիստոսի, որն ավելի բարձր էակների դասին է պատկանում և միլիոնավոր տարիներ առաջ անցել է իր զարգացման մարդկային փուլը: Եվ այդ բարձր զարգացած էակը ձեզ է շնորհել իր մի մասնիկը, որն էլ հենց ձեր դաստիարակն է, ձեր ամենամերձավոր և ամենալավ ընկերը: Եվ միաժամանակ դուք բանականություն եք ստացել, այն բանականությունը, որով մարդը տարբերվում է անասունից, և որն իրավամբ նաև ձեզ գայթակղողն է: Քանզի, ձեռք բերելով բանականություն և միաժամանակ ունենալով ազատ կամք, մարդն իր բանականությունը կարող է օգտագործել ինչպես ֆիզիկական աշխարհում ինքն իրեն սպասարկելու, այնպես էլ էվոլյուցիոն ուղով ընթանալու և Աստծո մեջ ինքն իրեն կատարելագործելու նպատակներով: Դուք ձեր բանականությամբ տարբերվում եք անասուններից, բայց միաժամանակ, ձեր ազատ կամքին համապատասխան, ձեզ թույլ է տվում օգտագործել բանականությունը, որպեսզի զուտ կենդանական հաճույքներ ստանաք կյանքից և ֆիզիկական ոլորտում ձեզ շրջապատեք բոլոր այն վայելքներով, որոնք ձեր խելքին փչում են:

Այժմ եթե վերադառնանք նախագծողական բաժնում ձեր մասնագիտացման օրինակին, ապա կստացվի, որ դուք նախագծման բնագավառի ձեր ստացած գիտելիքներն օգտագործում եք ինչ-որ բան նախագծելու համար, որպեսզի ստեղծեք մի մեքենա, որն իրականացնի ձեր բոլոր ցանկությունները: Հիմա պատկերացրեք, որ դուք ձեռնամուխ եք եղել այդ մեքենայի նախագծմանը՝ դրա մեջ ներդնելով նախագծողական բաժնում առկա բոլոր հնարավորությունները, իսկ հետո՝ նաև ամբողջ գործարանի հզորությունը:

Հականալի է, որ վաղ թե ուշ ձեր գործողությունները կկասեցվեն, քանի որ դրանք չեն համապատասխանում այն նպատակին, որի համար ստեղծված է գործարանը:

Եվ դուք ստիպված կլինեք կամ ենթարկվել այն նպատակին, որի համար ձեզ հրավիրել են աշխատելու, կամ էլ լքել այն ֆիրման, որում սկսել էիք աշխատել:

Ահա ճիշտ այդպես էլ ձեր էվոլյուցիոն զարգացման այսօրվա փուլում ձեր առջև խնդիր է դրված՝ կամ հրաժարվել ֆիզիկական աշխարհի ձեր անհագ ցանկությունների բավարարումից և կենտրոնանալ այն խնդրի վրա, որի կատարման համար ձեր անմահ մասը հայտնվել է այդ աշխարհում (որպեսզի մասնագիտացում ձեռք բերի), կամ էլ դուք պետք է լքեք այդ աշխարհը: Քանզի ձեր հետաքրքրությունները հակասում են համայն տիեզերքի մտահղացմանը, և ձեր գործողություններն անհրաժեշտաբար պետք է կասեցվեն: Միակ տարբերությունն այն է, որ համայն տիեզերքում ուրիշ գործարան չկա, որտեղ կարողանայիք գործի ընդունվել:

Ձեր էվոլյուցիոն զարգացման որոշակի փուլում ձեզ խելք է տրվել, և մարդկության զարգացման ամբողջ այս հսկայական պատմական ժամանակահատվածի ընթացքում ձեր խնդիրն այն է եղել, որ տիրապետեք ձեր խելքին և նրա զուտ մարմնական, կենդանական հակումները ենթարկեք Աստծո առաջնորդությանը:

Հասել է այն փուլը, երբ դուք պետք է հրաժարվեք ձեր խելքի մարմնական մասից և ամբողջովին ենթարկվեք աստվածային բանականությանը: Եվ մեկը, և՛ մյուսն առկա են ձեր ներսում: Ձեզ մնում է միայն ձեր գիտակցության մեջ դրանք իրարից առանձնացնել և կամավորապես հրաժարվել այն ամենից, ինչը ձեզ կխանգարի ձեր էվոլյուցիոն զարգացման հաջորդ փուլում, երբ դուք մարդ-կենդանուց անցում կկատարեք դեպի աստվածամարդը: Եվ այդ փուլում դուք կզգաք ձեր ընկերոջ ու դաստիարակի՝ ձեր Ես-Քրիստոսի կարիքը, ով համբերատար կերպով սպասում է, թե երբ վերջապես ուշադրություն կդարձնեք իր վրա և ունակ կլինեք ուսուցում անցնել իր անմիջական ղեկավարությամբ:

Եկել է մանկական խաղալիքներից բաժանվելու ժամանակը, որոնցով լեփ-լեցուն է ձեր մատերիական աշխարհը, և հայացքն ուղղելու դեպի իրական աշխարհը:

Ահա հենց ձեր Ես-Քրիստոսն է ձեր այն մասը, որի հետ մոտակա ժամանակներում ձեր գիտակցությամբ դուք պետք է միավորվեք: Հենց նա է ձեր իսկական երկվորյակ բոցը՝ ձեր հոգու փեսան:

Տեսնում եք, թե ինչքան պարզ է ամեն ինչ, սիրելինե՛րս: Աստծո մասին Ուսմունքն իրականում շատ պարզ է: Եվ այդ Ուսմունքն ընկալելու ամբողջ բարդությունը սոսկ այն է, որ դուք ձեր արտաքին խելքով պետք է ըմբռնեք բաներ, որոնք ձեր աշխարհին չեն պատկանում: Իսկ դա հնարավոր է անել միայն օգտվելով այն աստվածային ունակություններից, որոնք առկա են ձեր ներսում, բայց մարդկության մեծամասնության մոտ քնած վիճակում են:

Մենք գալիս ենք, որպեսզի արթնացնենք ձեր քնած ունակությունները: Մենք գալիս ենք, որպեսզի արթնացնենք ձեր մեջ եղած Աստվածայինը: Հասել է ձեր ժամանակը, որպեսզի կամավոր կերպով ենթարկվեք Բարձրագույն բանականությանը, որը ձեր ներսում դրսևորում է Բարձրագույն Կամքը:

Ես ուրախ եղա ձեզ որոշ լրացուցիչ բացատրություններ տալ, որոնք վերաբերում են ձեր հոգու էվոլյուցիոն զարգացման ընթացիկ փուլին:

ԵՍ ԵՄ Կութհումին՝
ձեր ուղու վրա մշտապես ձեզ հետ

ՎԵՀԱՊԵՏ ՆԻԿՈԼԱՅ ՌԵՐԻԽ

9 մայիսի, 2005 թ.

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՍՏԾՈ ՄՏԱՀՂԱՑՈՒՄԸ՝ ԴԱ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՀԱՄԱՅՆՔՆ Է

ԵՍ ԵՄ Նիկոլայ Ռերիխը՝ այս դեսպանորդի միջոցով ձեզ այցի եկածը:

Ես եկել եմ այս հիշարժան օրով, երբ ոչ միայն Ռուսաստանում, այլ նաև ամբողջ աշխարհում նշում են Երկրորդ համաշխարհային պատերազմում տարած հաղթանակը:

Ես ուզում եմ ձեզ տալ այն իրադարձությունների պատկերացումը, որոնց վկաները դարձաք անցյալ դարում:

Ես ուզում եմ տալ այդ իրադարձությունների նկատմամբ իմ տեսակետը, որը ձեռք բերեցի համբարձվելուց հետո: Եվ հնարավոր է՝ այսօրվա իմ մտքերը ձեզ կթվան հակասող այն մտքերին, որոնք ես արտահայտել եմ մարմնավորման մեջ եղած ժամանակ, կամ հակասող այն մտքերին, որոնց դուք հանդիպել եք Վեհապետների՝ ուրիշ դեսպանորդների միջոցով տրված թելադրություններում:

Ես կջանամ մատուցել ձեզ Ռուսաստանի մասին իմ մտորումների արգասիքը: Եվ, ինքներդ դատեցեք՝ վերցնե՞լ այդ մտքերը՝ որպես հիմք ձեր գործունեության համար, թե՞ անտեսել դրանք:

Դուք գիտեք, որ ես շատ էի սիրում Ռուսաստանը և շատ էի ցավում, որ իմ կյանքի մեծ մասի ընթացքում չկարողացա ֆիզիկապես ներկա գտնվել այդ երկրի տարածքում:

Եթե մեր առաքելությունը, որը Վեհապետների հանձնարարությամբ մենք նախաձեռնել էինք անցյալ դարի 20-ական թվականներին, պսակվեր հաջողությամբ, ապա Ռուսաստանի պատմության ողջ հետագա ընթացքն ու համաշխարհային պատմության հետագա ընթացքը կարող էր այլ լինել: Ես խոսում եմ այն ժամանակվա Սովետական Ռուսաստանի կառավարությանը սուրբ արկղիկի և Մահաթմաների ուղերձի հանձնման առաքելության մասին:

Մեր առաքելությունը չհաջողվեց, և Ռուսաստանի իրադրության վրա ազդելու՝ Լույսի ուժերի փորձը հետաձգվեց անորոշ ժամանակով: Իսկ նոր փորձ ձեռնարկելուն խանգարեց իմ մահը: Դուք գիտեք, որ ես ամբողջ սրտով ձգտում էի դեպի Ռուսաստան, երբ այդ ահավոր պատերազմում հաղթանակն արդեն կայացել էր:

Ես կուզենայի արտահայտել իմ մտորումները Ռուսաստանի իրավիճակի վերաբերյալ՝ հենվելով ոչ թե արտաքին, այլ ներքին իրադարձությունների վրա, որոնք ընկած էին անցյալ դարում Ռուսաստանում տեղի ունեցածի հետևում՝ հեղափոխության, ցարական ընտանիքի գնդակահարության, Հայրենական մեծ պատերազմի, նոր հեղափոխության և այն վերնախավի իշխանության, որն այժմ հաստատվել է:

Միայն երկու ուժեր են կանգնած այդ բոլոր իրադարձությունների հետևում: Երկու ուժեր, որոնց փոխազդեցությունը, եթե ներդաշնակացված չէ, հանգեցնում է ահավոր ցնցումների և միլիոնավոր մարդկային կյանքերի կորուստների:

Մի ուժը պատրանքներ է բազմապատկում, իսկ մյուս ուժն ուղղված է պատրանքի հետ-հավաքմանը:

Դուք կարող եք այդ ուժերն անվանել Բարու և չարի ուժեր, բայց դա այնքան էլ ճիշտ չի լինի: Քանզի, եթե Բարու, Ընդհանուր Բարօրության գաղափարներն ընկնում են այն ուժերի իշխանության տակ, որոնք պատրանք են ստեղծում, ապա վերածվում են իրենց հակապատկերին: Իսկ չարի գաղափարները, եթե հայտնվում են լուսավոր ուժերի գործունեության ոլորտում, նույնպես վերածվում են իրենց լրիվ հակապատկերին:

Դուք գիտեք, որ աշխարհը շարժում են գաղափարները, իսկ գաղափարներն իրագործում են մարդիկ: Ըստ այդմ՝ ինչպիսին էլ լինի գաղափարը, եթե չկա դրա կատարողը, ապա այն չի կենսագործվի: Եվ, եթե գաղափարն ինքնին լավն է, բայց կատարողները ներքուստ փտած են, փտած են իրենց գիտակցության մեջ, ապա գաղափարն էլ իր հերթին կաղավաղվի և կվերածվի իր լրիվ հակապատկերին:

Իսկ էներգիան աշխարհ է գալիս միայն մարդկանց միջոցով: Էներգիան, Աստծո Էներգիան մուտք է գործում աշխարհ մարդկանց սրտերի միջով: Ուստի դուք ինքնե՛րդ եք կառավարում այն, ինչին ուղղված է ձեր էներգիան:

Ձեզ հայտնի է, որ մենք պաշտպանում էինք այն վերափոխումները, որոնք սկիզբ առան Ռուսաստանում հեղափոխությունից հետո: Եվ դրա մեջ շատերը հակասություն են տեսնում: Թո՛ւյլ տվեք որոշ բացատրություններ տալ:

Համայնքի գաղափարը, Սուրբ Հոգու Համայնքի գաղափարը մշտապես պաշտպանվել է իմ կողմից՝ որպես հասարակության կառավարման առավել ճշմարիտ և արդար եղանակ: Դուք կարող եք այդ մասին կարդալ Ագնի Յոգայի գրքերում:

Սակայն, եթե Համայնքի գաղափարն իրականացվում է այնպիսի մարդկանց կողմից, ովքեր

խավարի ուժերի ազդեցության տակ են, ապա այդ գաղափարի կենսագործումից ոչ մի լավ բան դուրս չի գա: Ուստի մենք ապավինեցինք մտավորականությանը՝ այն մարդկանց, ովքեր կարող էին, իրենց գիտակցությունը փոխելուն զուգընթաց, ազդել պատմության ընթացքի վրա՝ ոչ թե անմիջականորեն մասնակցելով կառավարմանը, այլ անուղղակիորեն՝ օգտագործելով արվեստը, գիտությունը, կրթական ու առողջապահական համակարգերը:

Մենք տեսնում էինք, որ դա կարելի է անել: Բայց այն մարդիկ, ովքեր օգտվեցին համայնքի գաղափարից, որպեսզի իշխանության գան և օգտվեն այդ իշխանության պտուղներից, ամեն ինչ արեցին, որպեսզի հասարակական կյանքի բոլոր բնագավառները ողողվեն խոսքով ճշմարիտ, բայց բոլորովին անկյանք լոզունգներով, քանզի մերժվել էր գլխավորը, որը պետք է դրված լինի ցանկացած համայնքի հիմքում՝ Հիերարխիայի հետ կապն ու աստվածային ծառայությունը:

Ըստ այդմ՝ մենք ականատեսը դարձանք ահավոր հրեշի, որն ամբողջ 20-րդ դարի ընթացքում գոյատևեց Ռուսաստանում: Վիշապ՝ առյուծի մռութով: Իսկ այժմ մեր աչքի առաջ է այդ հրեշի բաց գազանային երախը: Եվ հուսալքությունն է տիրում, և հասարակության առավել լուսավորյալ մասի գիտակցության մեջ չկա հետագա ճանապարհի ըմբռնումը:

Շունչը պահել է Ռուսաստանը: Կարծես ժամանակը կանգ է առել: Ոչինչ չի փոխվում: Կփոխվեր, իհարկե, բայց չգիտեն, թե ո՞ր կողմ պետք է շարժվել:

Եվ այն, ինչ այժմ տեղի է ունենում, հանդիսանում է այն ուժերի սանձարձակ վարքի դրսևորումը, ովքեր նպաստում են պատրանքին: Իսկ դուք գիտեք, որ, Աստծո Մտահղացման համաձայն, այդ ուժերի իշխանությանը քիչ ժամանակ է մնացել: Ահա և նրանք հասել են իրենց վայրագության վերջաբանին: Ահա և չարացել են ու ամոթ չունեն, դեն են նետել ցանկացած բարոյականություն ու պատկառանք: Մեծ փորձության միջով է անցնում Ռուսաստանը: Դուք գիտեք, որ Աստված սիրում է Ռուսաստանը, և Աստված իր սիրելիներին առաքում է ամենադժվարին փորձությունները, քանզի փորձություններով է, որ մենք աճում ենք, և փորձություններով է կոփվում մեր Հոգին: Իսկ նրանք, ովքեր լալիս ու հեծեծում են՝ ասելով, թե կորավ Ռուսաստանը, պարզապես ընկել են պատրանքի ուժերի ազդեցության տակ:

Ձեր Հոգին, ձեր Աստվածայնությունը, ձեր ներսի Աստվածն է այն, որի վրա դուք պետք է կենտրոնացնեք ձեր ուշադրությունը:

Դուք, հիրավի, Հոգու հսկաներ եք, իսկ այն կավե ոտքերով ածդահաները, որոնք շրջապատել են ձեզ և այժմ իշխում են Ռուսաստանում, կփլվեն ու մաս-մաս կլինեն՝ հենց որ հսկաները թափ տան իրենց ուսերը:

Ռուսաստանի վերաբերյալ Աստծո մտահղացումը Սուրբ Հոգու Համայնքն է՝ հիմնված աստվածային սկզբունքների, աստվածային ազատության, դեմոկրատիայի և Համայնքի յուրաքանչյուր անդամի մասին հոգածության վրա:

Այդ Համայնքը կհոչակվի վերևից, այլ ոչ թե կհաստատվի հերթական հեղաշրջման կամ հեղափոխության արդյունքում: Աստծո Ուղին մարդկանց գիտակցության աստիճանական փոփոխության ուղին է: Եվ մարդկային գիտակցության փոփոխությունները, եթե դրանք ընդգրկում են երկրի բնակչության նշանակալի տոկոսին, կարող են հանգեցնել կատարյալ աստվածային հրաշքի:

Կառավարման ամենակատարյալ ձևը չի դիմանա, եթե այն արձագանք չգտնի մարդկանց գիտակցության ու սրտերի մեջ:

Ուստի ձեր առաջնահերթ խնդիրն է Սուրբ Հոգու համայնքների ստեղծումն ամենուրեք՝ յուրաքանչյուր քաղաքում ու գյուղում:

Միաբանվեք: Կարդացեք «Համայնք» գիրքը: Կարդացեք «Ագնի Յոգա»-ի գրքերը: Դրանք ձեզ համար են տրված:

Մտորեք այն սկզբունքների մասին, որոնք պետք է դրվեն Համայնքի հիմքում:

Տվեք աշխարհին դրա կերպը Համացանցի միջոցով, երեխաների կրթության միջոցով:

Դուք պետք է երկիրը սնուցեք կառավարման նոր գաղափարով, Ընդհանուր Բարօրության, Բարու գաղափարներով:

Ես ձեզ տեղյակ եմ պահում, որ բոլոր Երկնային Դասերն սպասում են ձեր գործողություններին, որպեսզի ձեզ ցուցաբերեն ողջ օգնությունը:

Համայնքի գաղափարը նոր չէ: Եվ քիչ բան է պահանջվում: Պետք է պարզապես վերցնել և Համայնք կազմակերպել հենց այնտեղ, որտեղ այժմ գտնվում եք: Սկսեք այդ գործը, պաշտելիներս:

Մտածեք հապա, ինչո՞ւ է Համայնքի գաղափարը մշտապես այդպիսի դիմադրության հանդիպում ողջ աշխարհում: Ինչո՞ւ Համայնքի գաղափարը ոչ մի կերպ չի կարողանում իր արմատները տարածել աշխարհի որևէ երկրում: Որովհետև դա կառավարման նոր եղանակ է, որը պետք է փոխարինի գոյություն ունեցող կառավարման եղանակին: Եվ իշխանություն ունեցողները շատ լավ են հասկանում, որ Համայնքը վերջ կտա իրենց մեքենայություններին, իրենց ֆինանսական հսկողությանը, իրենց կառավարմանը: Քանզի նրանք միայն ունակ են կառավարելու՝ իրենց իշխանությունը հիմնելով մարդկանց ցածրակարգ, կենդանական բնազդների վրա: Եվ նրանք ոչինչ չեն կարող հակադրել Աստվածամարդուն, որին օժանդակում են բոլոր Երկնոլորտները:

Խորհեցեք այն մասին, թե ինչպես գիտելիք տալ նոր սերնդին. խորհեցեք այն մասին, թե ինչպես ստեղծել Սուրբ Հոգու Համայնք: Եվ մոտակա ժամանակի ձեր ամենագլխավոր խնդիրը միաբանվելն է: Լուսակիրների միաբանվելը ոչ թե չարի դեմ պայքարի սկզբունքների, այլ սիրո, փոխօգնության,

բարեսրտության ու կարեկցանքի սկզբունքների վրա: Եվ նույնիսկ այն դեպքում, երբ դուք միայնակ եք, և ձեր շուրջը ոչ ոք չկա, որոնց հետ կարողանայիք միավորվել Համայնքում, իմացեք, որ դուք ինքներդ Սուրբ Հոգու Համայնք եք ներկայացնում, եթե ձեր կյանքն ու շրջապատի մարդկանց հետ ձեր փոխհարաբերությունները կառուցում եք Ընդհանուր Բարօրության, Բարու և Սիրո սկզբունքների վրա: Եվ այնտեղ, որտեղ գտնվում եք, բոլոր Երկնային Դասերը գալիս են, որպեսզի պաշտպանեն ձեր ուղին: Համայնքը, Բարօրությունը, Բարին սկիզբ կառնեն ձեր սրտերից: Ձեր խնդիրն է պարզապես բացել ձեր սրտերը և դրանցում տեղ տալ Աստվածայինին:

Աչքը վախենում է, ձեռքն՝ անում: Ճանապարհը գնացո՛ղն է հաղթահարում:

ԵՍ ԵՄ Նիկոլայ Ռերիխը

ՏԵՐ ՍՈՒՐԻԱ

10 մայիսի, 2005 թ.

ԵՍ ՁԵԶ ՀԵՐԹԱՊԱՀՆԵՐ ԵՄ ՆՇԱՆԱԿՈՒՄ ԵՐԿԻՐ ՄՈԼՈՐԱԿԻ ՎՐԱ

ԵՍ ԵՄ Սուրիան՝ Մեծ Կենտրոնական Արևից Աստծո այս դեսպանորդի միջոցով ձեզ այցի եկածը:

Այն ժամանակից ի վեր, երբ այս դեսպանորդի միջոցով մենք սկսեցինք ուղերձներ տալու մեր աշխատանքը, դուք կարողացել եք ծանոթանալ վերջին նորություններին և տեղեկատվության այն տարատեսակներին, որոնց մենք հնարավոր էինք համարում ձեզ ծանոթացնել:

Այսուհետ ևս մենք կշարունակենք մեր աշխատանքը: Հետևեցե՛ք թելադրություններին: Փորձեք ոչ միայն ընկալել այն բովանդակությունը, որը մակերեսի վրա է, այլ նաև թելադրությունները կարդալիս տեսնել տողատակերը:

Երկնային ցանկացած ճշմարիտ ուղերձի նախ և առաջ բնորոշ է բազմապլանայնությունը՝ երկրորդ, երրորդ և չորրորդ իմաստներով հագեցած լինելը:

Այո՛, պաշտելինե՛րս, չնայած թվացյալ պարզությանն ու շարադրանքի մատչելիությանը, այդ ուղերձները պարունակում են տեղեկատվություն, որը կանցնի ձեր արտաքին գիտակցության կողքով և կստիպի, որ արթնանան ձեր հոգիների խորքային շերտերը: Եվ մեր գլխավոր խնդիրներից մեկը հենց ձեր քնած աստվածային ունակությունների արթնացումն է, որպեսզի դուք կարողանաք քայլ անել դեպի ձեր ֆիզիկական աշխարհի սահմաններից դուրս և ճանաչեք մի այլ աշխարհ՝ Աստծո Աշխարհը, որը միշտ գոյություն է ունեցել ձեր կողքին, բայց գերադասել եք այն չնկատել կամ էլ ձևացրել եք, թե այն գոյություն չունի:

Այնքան հեշտ էր ձեզ համար տրվել ձեր աշխարհի պատրանքին, խաղալ ձեր դերերն ու խաղալ ձեր խաղալիքներով: Նուրբ աշխարհները մատչելի չեն ձեր ֆիզիկական զգացողությունների համար: Դուք չեք կարող դրանք շոշափել, տեսնել կամ լսել: Եվ որպեսզի սկսեք հաղորդակցվել Աստծո Աշխարհի հետ, դուք պետք է այնքան նրբացնեք ձեր ֆիզիկական զգայարանները, որ դրանք ընկալունակ դառնան նուրբ թրթիռների նկատմամբ: Ձեր զգայնության տիրույթն ընդլայնվում է, և դուք սկսում եք զգալ նուրբ աշխարհը:

Դուք սկսում եք զգալ հոտեր, նրբագույն բույրեր, որոնց աղբյուրը բացակայում է ձեր շրջապատում: Դուք տեսնում եք հիասքանչ գույներ, որոնք փողփողում ու հառնում են ձեր ներքին տեսադաշտում. տեսնում եք ցոլքեր և այլ լուսային երևույթներ: Դուք սկսում եք լսել ոլորտների երաժշտությունը՝ մեր աշխարհի հնչյունները:

Սակայն ամենագլխավորը, դեպի ուր դուք պետք է մղվեք ձեր ողջ էությամբ, Աստծուն ձեր ներսում զգալն է: Կատարելապես երանելի մի զգացողություն, որը համեմատելի է, գուցե թե, միայն առաջին սիրո առարկայի՝ ձեր սրտի սիրեցյալի վրա մտասևեռվելու հետ: Եվ այդ զգացողությունն այնքան վերամբարձ է, որ դուք վախենում եք ձեր շնչառությամբ, ձեր մի որևէ անզգույշ շարժմամբ փախցնել այդ զգացողությունը:

Ձեր աշխարհը լեփ-լեցուն է կոպիտ թրթռանքով: Եվ ձեր աշխարհի խառնաշփոթի պայմաններում շատ դժվար է համալարվել աստվածային տոնայնության հետ: Ահա թե ինչո՛ւ ենք մենք ձեզ խորհուրդ տալիս հնարավորին չափ շատ ժամանակ անցկացնել բնության գրկում, անդորրության մեջ: Խոտերի սոսափյունը, թռչունների դայլայլը, նույնիսկ միջատների բզզոցը մեր աշխարհին ավելի մոտ ձայներ են:

Սովորե՛ք լսել բնության ձայները, սովորե՛ք մտասևեռվել բնությամբ, ձեզ շրջապատող բնու-

թյան պատկերներն անցկացնել ձեր միջով, ձեր գիտակցության միջով:

Երբ դուք անդորրության մեջ եք գտնվում մեղմահոս գետի ափին, ծովափին, անտառում կամ դաշտում, ապա իրապես գտնվում եք Աստծո Տաճարում: Եվ պետք է կատարյալ աստվածային սարսուռ զգաք ձեր մասին Աստծո հոգածությունից, որ ձեզ համար կառուցել է ամենակատարյալ Տաճարները:

Հիրավի, բնության գիրկ ձեր այցելելը պետք է նմանվի Տաճար այցելելուն:

Երախտապարտ եղեք Աստծուն՝ անդորրության յուրաքանչյուր րոպեի համար, երբ գտնվում եք Նրա Տաճարում և երանավետ սարսուռ եք զգում: Քանզի նուրբ աշխարհը չի կարող ձեզ մերձենալ, երբ գտնվում եք քաղաքում կամ նույնիսկ ոչ մեծ ավանում: Միայն բնության գրկում գտնվելու դեպքում է, երբ չկան, այսպես կոչված, քաղաքակրթության հետքեր, որ դուք ունակ եք դառնում շփման եզրեր գտնելու մեր աշխարհի բարձր թրթիռների հետ: Մարդկանցից շատերի համար մեր աշխարհի թրթիռներն անտանելի են:

Ուստի երբ նրանք հայտնվում են բնության գրկում, ձգտում են կրկին իրենց զգայարանները խլացնել ոռք երաժշտությամբ, ծխախոտով, ալկոհոլով, խորոված մսի հոտով: Բնության գրկում հանգստանալու զանգվածաբար տարածված տեսակի ծանոթ պատկեր է, այնպես չէ՞: Իսկ ամբողջ բանը, պաշտելիներս, թրթռանքների չհամընկնելու մեջ է: Շատ մարդիկ այնպես են կապկպվել ֆիզիկական ու աստեղային ոլորտների ցածրակարգ թրթիռներով, որ բնության գրկում անդորրության մեջ գտնվելը նրանց համար ուղղակի տանջանք է:

Ըստ այդմ՝ եթե դուք ձգտում եք Աստծո հետ հաղորդակցության, եթե ձգտում եք մեր աշխարհի հետ հաղորդակցվելուն, ապա շաբաթվա ընթացքում գոնե մեկ անգամ ժամանակ ու հնարավորություն գտեք դուրս գալու բնության գիրկը, մտասևեռվելու արևի, քամու շրշյունի, դաշտային ծաղիկների բուրմունքի վրա:

Եվ այդ բնական պատկերների ու ձայների միջավայրում ձեզ համար անհամեմատ ավելի հեշտ կլինի որսալ մեր աշխարհի թրթռանքը: Հասել է Աստծո կողմից ձեզ համար նախատեսված բնական կենսակերպին վերադառնալու ժամանակը:

Ելնելով ներդաշնակության այն աստիճանից, որը դուք ունակ եք զգալ՝ ժամերով ինքներդ ձեզ հետ կամ բնության գրկում գտնվելու ընթացքում, կարող եք անուղղակիորեն դատել ձեր հոգևոր նվաճումների մակարդակի մասին: Կարող եմ վստահ ասել, որ աստեղային ու ֆիզիկական ոլորտներին կապկպված մարդը նույնիսկ հինգ րոպե չի կարող հանգիստ նստել և մտասևեռվել բնության պատկերների վրա: Միայն այն մարդկանց հոգիներն են խաղաղվում ու երանություն զգում բնության հետ շփվելուց, որոնք պատրաստ են Աստծո Աշխարհի հետ հաղորդակցվելուն:

Ձեր քաղաքները խավարի ուժերի այնպիսի մեծ քանակի կուտակումներ են, որ ուղղակի ապշել կարելի է, թե դուք ինչպես եք կարողանում գոյատևել զանգվածային գիտակցության այդ ապականոցներում և, այսպես կոչված, ժամանակակից քաղաքակրթության պայմաններում:

Նոր գիտակցության ընձյուղները պետք է իրենց համար ճանապարհ հարթեն բնության անդորրության մեջ: Եվ ժամանակի ընթացքում նոր քաղաքակրթությունը կգա՝ փոխարինելու գոյություն ունեցող քաղաքակրթությանը: Ներկայիս քաղաքակրթությունից այն կտարբերվի հատկապես հենց մարդ-բնություն փոխհարաբերությունների ներդաշնակությամբ:

Եվ, հավատացեք ինձ, բոլոր դաժան կլիմայական ու ծայրահեղ եղանակային պայմանները ձեր անկատար գիտակցության հետևանքներն են: Հենց որ փոխեք ձեր գիտակցությունը (նկատի ունեմ ամբողջ մարդկության հավաքական գիտակցությունը), ապա կփոխվեն նաև ձեր աշխարհում գոյության պայմանները: Եվ տարրոգիները, որոնք հազարներով կործանվում ու տառացիորեն խելակորույս են լինում ձեր քաղաքակրթության արատավորությունից, կկարողանան շատ արագ աստվածային կարգ ու կանոն հաստատել Երկրի վրա: Երկիր մոլորակի կլիման կդառնա այնքան մեղմ, և գոյության պայմաններն՝ այնքան հարմարավետ, որ դուք կարիք չեք ունենա այդքան ջանք ու էներգիա ծախսելու, որ ջեռուցեք ձեր բնակարանները:

Նայեք ձեր շուրջը: Դուք և միայն դուք եք պատասխանատու ձեր աշխարհի անկատարության համար: Դուք և միայն դուք եք պատասխանատու բոլոր փոթորիկների, տարերային աղետների, ցունամիների, ծայրահեղ եղանակային պայմանների համար: Դա ձեր ձեռքի գործն է, ձեր գիտակցության գործը:

Եվ չսպասեք, թե Համբարձյալ Դասերը կգան և կարգ ու կանոն կհաստատեն ձեր տանը: Ո՛չ, պաշտելիներս, դա ձեր մոլորակն է՝ ձեր հարազատ տունը, և ինքներդ պետք է կարգ ու կանոն հաստատեք այդտեղ:

Հասել է ձեր գիտակցությունն այն ամբողջ աղբից մաքրելու ժամանակը, որ կուտակել եք միլիոնավոր տարիներ Երկրի վրա ունեցած ձեր մարմնավորումների ընթացքում: Այժմ դուք պետք է մաքրեք ինչպես ձեր գիտակցությունը, այնպես էլ ձեր տունը՝ Երկիր մոլորակը: Դուք պատասխանատո՛ւ եք մոլորակի մաքրության համար: Ուստի ես ձեզ հերթապահներ եմ նշանակում Երկիր մոլորակի վրա:

ԵՍ ԵՄ Սուրիան

ՍԱՆԱՏ ԿՈՒՄԱՐԱ

11 մայիսի, 2005 թ.

ՈՒՍՄՈՒՆՔ ՃՇՄԱՐԻՏ ԵՎ ԿԵՂԾ ԴԵՍՊԱՆՈՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան՝ իմ դեսպանորդի միջոցով նորից ձեզ այցի եկածը:

ԵՍ ԵՄ եկել, որ հերթական անգամ վկայեմ այն օրհնյալ ժամանակի մասին, որում դուք ապրում եք: Դուք հասկանում եք, որ ամեն անգամ, երբ մենք գալիս ենք թելադրություն տալու, գալիս ենք որոշակի նպատակով: Եվ այս թելադրության նպատակն է պահպանել օկտավաների միջև էներգիաների փոխանակման ձեռք բերված հաշվեկշիռը:

Դուք հիշում եք, որ բացի տեղեկատվական և էներգետիկական բաղադրիչներից, այս թելադրություններով իրականացվում է նաև օկտավաների միջև էներգիաների փոխանակման գործառույթ: Մեր նպատակն է Լույսի կետ ստանալ աշխարհների միջև: Եվ այդ կետը մեզ համար ձեռք է բերում անվերապահ կարևորություն: Դրանով հանդերձ՝ մենք հաստատում ենք մեր ներկայությունը ձեր աշխարհում և մարմնավորված դեսպանորդին հնարավորություն ենք տալիս հասնելու մեր օկտավային: Եվ այն, ինչ ի զորու է անել մեկը, վաղ թե ուշ ի զորու կլինեն անելու բոլորը:

Լինել և մնալ աշխարհների միջև կետում. ահա այն, ինչին դուք պետք է հասնեք եթե ոչ այս մարմնավորման, ապա ձեր հաջորդ որևէ վերամարմնավորման ընթացքում:

Դեսպանորդը չի վարում այնպիսի պաշտոն, որը պահանջում է ակնածանք և պաշտում. դեսպանորդի պատմուճանն ու պաշտոնը նրան ընդամենը հնարավորություն են ընձեռում ավելի որակյալ ձևով իրականացնելու իր ծառայությունը հանուն Աստծո:

Դեսպանորդի պատմուճանը թույլ է տալիս փոխել տարածության թրթռանքը, և մենք հնարավորություն ենք ունենում ներկա գտնվելու և տալու մեր ուղերձներն այդ կետում, որտեղ միանում են աշխարհները:

Մտածե՛ք այն մասին, որ ձեզնից յուրաքանչյուրը կարող է դառնալ այդ կետը: Եվ իրականում դա ընդամենը ձեր ընտրության, ձեր ցանկության և ձեր ձգտումների առկայության հարցն է:

Շատ բաներ հարկ կլինի զոհաբերել դեսպանորդի պատմուճան վաստակելու համար: Հարկ կլինի հրաժարվել այն ամենից, ինչով կապված եք ձեր աշխարհին: Եվ եթե ձեզնից որևէ մեկը ցանկանում է կանգնել դեսպանորդության ուղու վրա, ապա անձամբ ես ինքս կզբաղվեմ նրա ուսուցմամբ կա՛մ անմիջականորեն, կա՛մ հենց այս դեսպանորդի միջոցով: Ժամանակն է հրաժեշտ տալու ձեր աշխարհին հատուկ հերթական հորինվածքին, թե դեսպանորդն առանձնահատուկ մարդ է: Իրոք, կան ձեր անցյալի կարմայի հետ կապված որոշակի սահմանափակումներ, որոնք կարող են ձեզ արգելակել դառնալու մեր դեսպանորդը: Բայց դա չի կարող խանգարել ձեզ ավելի սահմանափակ տեսքով իրագործելու ձեր ծառայությունը, որն, այնուամենայնիվ, իր որակով առավելագույնս նման լինի դեսպանորդի ծառայությանը:

Կուզենայի այսօր բացատրություններ տալ մի հարցի մասին, որը վերաբերում է ձեր աշխարհում լայնորեն քննարկվող մի թեմայի: Դա կեղծ դեսպանորդության, կեղծ ուսուցիչների և կեղծ ուղու հարցն է:

Եվ ես մտադիր եմ այսօր ձեզ համար վերջնականապես լուսաբանել այդ հարցը: Ինչպես դեսպանորդության, այնպես էլ ձեր աշխարհին վերաբերող ցանկացած հարցում առկա է ճիշտ նույնպիսի երկակիություն:

Հիրավի, կան դեսպանորդներ, որոնք ներկայացնում են Լույսի Ուժերը, Լույսի Ուժերի Հիերարխիան, և կան դեսպանորդներ, որոնք, չնայած ասում են, թե ներկայացնում են նույն այդ հիերարխիան, բայց իրականում լավագույն դեպքում ներկայացնում են իրենք իրենց, իսկ վատագույն դեպքում իրենց դրել են այն ուժերի տրամադրության տակ, որոնց կարելի է անվանել խավարի ուժեր: Ես կգերադասեի դրանք անվանել պատրանք բազմապատկող ուժեր, այսինքն՝ ուժեր, որոնք տվյալ պահին իրենց հակադրում են Աստծո՝ այս տիեզերքի էվոլյուցիայի տվյալ փուլի համար նախատեսված պլաններին:

Ո՞րն է տարբերությունը կեղծ և ճշմարիտ դեսպանորդների միջև:

Ինչո՞վ պետք է առաջնորդվեք դուք ձեր ընտրության մեջ: Այս հարցը շատ կարևոր է: Որովհետև ձեր ընտրությունից, թե ո՞ր դես-պանորդին հետևեք, կախված է, թե ո՞ր կողմում կհայտնվեք հատիկը որոմից զատելու այս պահին: Դուք կարող եք ձևացնել, թե ձեզ պետք չէ որևէ ընտրություն կատարել և առավելություն տալ որևէ դեսպանորդի, կամ որ դուք վստահում եք միայն ձեր ներսում գտնվող Աստծուն ու ձեր Ես-Քրիստոսին:

Սակայն մարդկանց մեծամասնությունն այնուամենայնիվ չունի այդ կապը և, հետևաբար, նրանք ստիպված են այս կամ այն կերպ առաջնորդվել տեղեկատվությամբ, որն իրենց է հասնում դրսից՝ մարդկանցից, որոնք հոչակում են

իրենց որպես մեր դեսպանորդներ և ուսուցիչներ:

Ո՞րն է չափանիշը, և ո՞րն տարբերակումը:

Նախ և առաջ՝ ճշմարիտ դեսպանորդը երբեք չի ստիպի հետևել կամ չհետևել իրեն: Դեսպանորդի խնդիրն է պարզապես տեղեկատվություն հասցնել ֆիզիկական ոլորտ և որպես կողմնորոշիչ ծառայել տարբեր կրոնական հոսանքների և ուսմունքների ծովում: Նա չունի ձեր օժանդակության և ձեր կարիքը՝ որպես իր հետևորդների: Դուք ինքներդ եք ձեր ազատ կամքով որոշում կայացնում՝ տվյալ դեսպանորդի միջոցով ձեզ հասած տեղեկատվությունն ընդունե՞լ որպես կյանքի ուղեցույց, թե՞՝ ոչ:

Պարտադիր են այնպիսի հատկանիշները, ինչպիսիք են անշահախնդրությունն ու անուն վաստակելու կամ հռչակ ձեռք բերելու ցանկության բացակայությունը:

Միակ խնդիրը, որ մենք ողջունում ենք, որ իրագործի դեսպանորդը, բոլոր մատչելի միջոցներով Ուսմունքի հնարավորինս լայն տարածումն է:

Եթե անցնենք դեսպանորդների այն տարատեսակների քննարկմանը, որոնք նվիրվել են մեզ ընդդիմադիր ուժերին ծառայելուն, ապա նրանց հատուկ է հակառակ ձգտումը՝ շրջապատվել հետևորդներով ու աշակերտներով և օգտագործել այդ հետևորդներին՝ սեփական իշխանությունը բազմապատկելու, ֆիզիկական աշխարհում սեփական բարեկեցությունը վերահսկելու և մեծացնելու համար: Քանի որ մեզ ընդդիմադիր ուժերը չունեն իրենց էներգիայի աղբյուրը (նրանք գերադասել են իրենք իրենց կտրել այս տիեզերքի միակ էներգիայի աղբյուրից՝ Աստծո էներգիայից), ապա իրենց գոյությունը պաշտպանելու համար նրանց անհրաժեշտ է ձեր էներգիան՝ ձեր ճանաչման, ձեր պաշտման, ձեր նվերների և ձեր տասանորդի տեսքով: Նման մարդիկ կօգտագործեն իրենց ամբողջ ազդեցությունը, որպեսզի ձեզ համար ինքնուրույնաբար Լույսի Ուժերի հետ շփվելը մատչելի չլինի: Իսկ այդ շփման ուղին ձեզ ուսուցանել նրանք չեն կարող, որովհետև իրենք իսկ այդ շփումը չունեն: Այն ամենը, ինչ նրանք կարող են անել, ձեզ կցելն է իրենց էգրեգորին, որը ձևավորվել է հետևորդների էներգիայով, այն հետևորդների, որոնք նվիրաբերում են իրենց էներգիան կեղծ դեսպանորդներին ու կեղծ ուսուցիչներին:

Ձեզ համար դժվար կլինի տարբերակումը, որովհետև արտաքնապես բոլորը նույն կերպ են երևում: Դուք լսում եք ճիշտ խոսքեր. տեսնում եք ճիշտ կատարվող գործողություններ. կարող եք նույնիսկ ապրել կրոնական զմայլանքի վիճակ: Բայց ձեր հոգևոր առաջընթացը կեղծ ուսուցիչների ղեկավարությամբ հնարավոր չէ: Լավագույն դեպքում դուք տեղում կդոփեք, իսկ վատագույն դեպքում կկորցնեք ձեր նվաճումների ամբողջ պաշարը:

Պաշտելինե՛րս, եթե դուք ընտրել եք ճշմարիտ ուսուցիչ և առաջնորդվում եք մեր դեսպանորդի միջոցով ձեզ հասած խոսքերով, ապա ձեր ճիշտ ընտրության հետևանքներն ի հայտ կգան ո՛չ տասը տարի անց և ո՛չ հաջորդ կյանքում: Դուք ներքին փոփոխություններ կզգաք արդեն մոտակա մի քանի ամսվա ընթացքում:

Այո՛, հնարավոր են թեստեր, հնարավոր է հետընթաց, և՛ պայքար, և՛ վեճ ձեր իսկ էգոյի հետ, որը ձեր անհիրական մասն է: Եվ այդ վեճերը, այդ թեստերը, այդ պայքարը կարող են լինել բավականին ցավագին: Բայց դուք պետք է հասկանաք, որ առանց այդ պայքարի ձեր անհիրական մասը չի կարող լքել ձեզ, և դուք չեք կարողանա հաղթանակ տոնել այդ անհիրական մասի նկատմամբ, եթե մշտապես հագուրդ տաք ձեր էգոյին և ձեր ցանկություններին:

Որպեսզի թարախը դուրս հոսի, երբեմն անհրաժեշտ է լինում կտրվածք անել, իսկ դա կարող է լինել ցավոտ ու բավականին տհաճ: Բայց եթե դուք չազատվեք թարախից, որն առկա է ձեր օրգանիզմում, ապա բորբոքումը կարող է տարածվել ձեր ողջ մարմնում և ձեզ կորստյան մատնել:

Երկակիության ձեր աշխարհում ոչ միշտ է, որ այն ինչ տհաճ է, վնասակար է, և ոչ միշտ է, որ այն ինչ հաճելի է, օգտակար է:

Դրա համար էլ, պաշտելինե՛րս, զանազանելու կարողությունն այն հատկանիշն է, որը դուք պետք է խնդրեք որպես այն ողորմածությունը, որ պետք է ձեզ պարգևվի առաջին հերթին:

Ես պետք է անդրադառնամ ևս մի կարևոր հարցի: Դեսպանորդը մարդ է՝ կանգնած լեռան կատարին: Եվ բոլոր կայծակները, բոլոր մրրիկներն առաջին հերթին խփում են նրան:

Ուստի շատ քիչ են այն մարդիկ, որոնք, գտնվելով ձեր աշխարհում, ունակ են դիմանալու աստվածային գիտակցության գագաթին: Եվ շատ մարդիկ, որոնք անցել են մեր թեստերը և վաստակել դեսպանորդի իրենց պատմուճանը, հետագայում ընդունակ չեն եղել պահելու իրենց գիտակցությունը հարկ եղած մակարդակի վրա և զրկվել են պատմուճանից:

Ուստի, սիրելինե՛րս, ես շատ լավ եմ հասկանում ձեր դժվարությունները, որոնք կապված են ձեր աշխարհի երկակիության հետ, նաև այն, որ երբեմն անհնար է լինում ճշգրիտ պատկերացում ստանալ այս կամ այն մարդկանց, իրադարձությունների և իրերի էության մասին:

Ես կարող եմ ձեզ ասել, որ ձեր Բարձրագույն Ես-ը գիտե Ճշմարտությունը: Եվ, ըստ այդմ, դուք պետք է վստահեք միայն ձեր Բարձրագույն Ես-ին, այլ ոչ թե արտաքին տպավորություններին, բառերին և նույնիսկ այս կամ այն մարդկանց նախաձեռնած գործունեությանը, որոնք իրենց հռչակել են որպես մեր դեսպանորդներ ու ձեր ուսուցիչներ:

Կեղծ դեսպանորդներն ու կեղծ ուսուցիչները սնվում են ձեր էներգիայով: Եվ այն ամենը, ինչ նրանք կարող են ձեզ սովորեցնել, ուղղված է ձեր էգոն աճեցնելուն: Ցավոք, այն մարդը, որի էգոն չափազանց մեծ է, չի կարող զանազանել ո՛չ մեր

թրթիռները, ոչ էլ մեր իսկական դեսպանորդներին: Բայց մենք գիտենք, որ կյանքի փորձություններն ու իրադրությունները վաղ թե ուշ նրան կբերեն մեր դեսպանորդի մոտ:

Եվ բոլոր իրենց բաժին հասած փորձություններից հետո նրանք շնորհակալ կլինեն այն հնարավորության համար, որ պարզապես նստեն Գուրուի ոտքերի մոտ և լսեն Ճշմարտության խոսքերը: Եվ տառապանքներով կոփված նրանց սրտերն արդեն չեն խաբվի ոչ Գուրուի արտաքին տեսքով, ոչ էլ նրանով, որ այս աշխարհի ուժեղները չեն ընդունում իրենց Գուրուին:

Աղաչեցեք զանազանելու շնորհի համար, և ձեզ կտրվի այն, ինչ խնդրում եք:

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան

ՎԵՀԱՊԵՏ ՊՈՂՈՍ ՎԵՆԵՏԻԿՑԻ

12 մայիսի, 2005 թ.

ՈՒՍՄՈՒՆՔ ԱՍՏՎԱԾԱՄՈՐ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՍԻՆ

ԵՍ ԵՄ Պողոս Վենետիկցին՝ ձեզ այցի եկածը:

ԵՍ ԵՄ Երրորդ Ճառագայթի, Սիրո Ճառագայթի Վեհապետը: Երկրի վրա հազիվ թե գտնվեն մյուս ճառագայթների այնքան աղավաղումներ, որքան հանդիպում ենք Սիրո Ճառագայթի առումով: Եթե աշխարհի երկիմաստության պատճառով աղավաղվեին բոլոր մյուս Աստվածային հատկանիշները, բայց հաջողվեր իր նախաստեղծ վիճակով պահպանել մեն-միայն Աստվածային Սիրո հատկանիշը, ապա ամբողջ աշխարհը ձեռք կբերեր այլ ուրվագծեր: Սեր: Սիրո, Ճշմարիտ Սիրո, Աստծո Սիրո հատկանիշ, դա է, որ այժմ աղետալիորեն պակասում է ձեր աշխարհում:

Ես եկել եմ Սեր հաստատելու: Ես եկել եմ Սեր տալու ձեզ: Աշխարհներն արարվում են Սիրով, և աշխարհները քայքայվում են Սիրո պակասության պատճառով: Ըստ այդմ՝ հասել է Սիրո մասին և ձեր կյանքում նրա դրսևորման մասին լրջորեն խորհելու ժամանակը:

Իրականում մարդկանց մեծամասնության մոտ լրիվ արգելափակված է սրտի չակրան, որով իրականացվում է Սիրո էներգիայի փոխանցումը ֆիզիկական աշխարհին: Ուստի դուք Սիրո պակասություն եք զգում և այդ պակասությունը փորձում եք փոխհատուցել տարօրինակ գործողություններով՝ խթանելով զուտ ֆիզիոլոգիական բնազդը: Հավատացեք ինձ. ձեր աշխարհում Աստծո էներգիայի աղավաղումների մեծագույն մասը կապված է Աստվածամոր էներգիայի, կամ, այլ կերպ ասած, սեռական էներգիայի ոչ ճիշտ օգտագործման հետ:

Աստված ձեզ տվել է Սրբազան Կրակ՝ Սրբազան Կրակի Բոց, որը ձեզ դարձնում է Աստվածների պես: Եվ, հավատացեք ինձ, այդ բոցն ու այդ էներգիան այն բանի համար չի տրվել ձեզ, որ դրանք օգտագործեք ձեր հաճույքի համար: Որքան ավելի անմիտ ձևով եք դուք օգտագործում Սրբազան Կրակը, այնքան ավելի մեծ կարմա եք ստեղծում: Ձեր զանգվածային լրատվական միջոցները, հասարակության մեջ վարվելակերպի ստերեոտիպերը, նույնիսկ հագուստի ու պահվածքի ձևը խթանում են սեռական էներգիայի ոչ ճիշտ օգտագործումը: Կանցնի որոշ ժամանակ, և դուք ունակ կդառնաք հասկանալու Աստծո կողմից ձեզ շնորհված Սրբազան Կրակի իսկական նշանակությունը:

Իսկ այժմ հարկ է, որ դուք հասկանաք, որ ամեն անգամ, երբ ձեր այդ շնորհն օգտագործում եք ոչ նրա աստվածային նշանակությանը համապատասխան, դուք կարմա եք ստեղծում: Կարմա եք ստեղծում, որովհետև Աստծո էներգիան վատնում եք դատարկ, զուտ կենդանական հաճույքներ ստանալու համար: Ի դեպ, կենդանիներն այդ իմաստով ձեզնից անհամեմատ ավելի գիտակից են վարվում: Համենայն դեպս, նրանք սեռական էներգիան օգտագործում են տարվա փուլերի շրջանակներում՝ դրան հատկացված ժամանակի ընթացքում:

Սեռական ակտի ժամանակ տեղի է ունենում Աստծո էներգիայի վիթխարի արտահոսք: Աստծո էներգիայի այդ արտահոսքը կարելի է համեմատել գերնոր աստղի բռնկման հետ: Եվ ձեզ հայտնի է, որ ուր կենտրոնացված է ձեր ուշադրությունը, այնտեղ էլ հոսում է ձեր էներգիան: Եվ եթե Աստծո էներգիայի արտահոսքի պահին դուք մտածում եք ձեր կամ ձեր զուգընկերոջ հաճույքի մասին, ապա ձեր սեռական էներգիան օգտագործում եք ո՛չ ըստ նշնակության: Ձեզնից շատերի համար իմ խոսքերը կարող են թվալ իրենց ունեցած գիտակցության շրջանակներում բոլորովին չտեղավորվող: Ես լիովին ինձ հաշիվ եմ տալիս, որ իմ խոսքերը շատերի համար տարօրինակ կհնչեն: Սակայն ես ձեզ պետք է իրազեկ պահեմ Աստծո Էթիկայի ամենատարրական հիմունքներին, որոնց ծանոթ են նույնիսկ կենդանիները, բայց ինչ-որ պատճառով մոռացել է մարդկությունը:

Ամեն ինչ այս աշխարհում պատկանում է Աստծուն: Եվ դուք էլ Աստծո մասնիկներն եք: Ուստի, այն ամենը, ինչ դուք անում եք՝ ձեր բոլոր գործողությունները, պետք է համաձայնեցված լինեն Աստծո Օրենքի հետ և տեղավորվեն այդ Օրենքի շրջանակներում: Եթե դուք որևէ բան եք անում առանց Աստծո Կամքի, ապա դրանով խախտում եք համայն տիեզերքի Օրենքը և ստեղծում կարմա:

Ըստ այդմ՝ որքան էլ տարօրինակ թվան իմ ցուցումներն ու հանձնարարականները, խնդրո՛ւմ եմ, սկզբի համար գոնե պարզապես լսե՛ք դրանք:

Նախքան սեռական ակտը սկսելը, խընդրում եմ, հո՛գ տարեք այն մասին, որպեսզի ձեր գործողությունները համապատասխան լինեն Աստծո Կամքին: Դուք պետք է օրինական կապի մեջ լինեք ձեր զուգընկերոջ հետ: Դուք չպետք է սեռական կապի մեջ մտնեք պատահական զուգընկերոջ կամ ձեզ հետ միևնույն սեռն ունեցող մարդու հետ:

Ինչո՞ւ է անհրաժեշտ ունենալ մշտական զուգընկեր, որի հետ ձեր կապն օրինականացված է:

Բանն այն է, որ ձեր ամուսնական պարտքի կատարման ժամանակ ձեր և ձեր զուգընկերոջ միջև տեղի է ունենում էներգիաների փոխանակություն: Եթե մարդկանց սովորական շփումների ընթացքում մշտապես էներգիաների փոխանակություն է տեղի ունենում, ապա սեռական հարաբերությունների ժամանակ ձեր այդ էներգիաների փոխանակությունը բազմակիորեն ուժեղանում է: Փաստորեն, դուք փոխանակում եք ձեր բոլոր էներգիաները՝ և՛ լավերը, և՛ վատերը: Դուք ձեզ վրա եք վերցնում մեկդ մյուսի կարման և ձեր ձեռք բերած վաստակը կիսում եք ձեր զուգընկերոջ հետ: Եվ եթե դուք օրինական ամուսնական կապի մեջ եք, ապա ձեր համատեղ կյանքում դուք հնարավորություն ունեք բեռնաթափելու ոչ միայն ձեր, այլ նաև ձեր կողակցի կարման, եթե այդ կարման չի գերազանցում ձեր ունեցածին:

Այժմ պատկերացրեք, որ դուք կենակցում եք շատ զուգընկերների հետ: Պատկերացրեք նաև, որ նրանցից շատերի բեռնաթափված կարմայի տոկոսն անհամեմատ ավելի ցածր է, քան ձերը: Եվ նրանց կարմայական պարտքերն անհամեմատ ավելի ծանր են, քան ձերը: Հնարավոր է, որ նրանք մարմնավորվել են, որպեսզի բեռնաթափեն սպանության, դավաճանության և նմանատիպ ուրիշ վատթարագույն կարմայի տեսակներ: Եվ ահա դուք, միանգամայն անմտորեն նրանց հետ սեռական հարաբերության մեջ մտնելով, նրանց կարմայի մի մասը վերցնում եք ձեզ վրա: Եվ եթե նաև ունեք ձեր օրինական ընտանիքը, ապա այդ կարման տեղափոխում եք այնտեղ: Եվ դրանից հետո դեռ զարմանում եք, թե ինչո՞ւ են ձեր կյանքում խնդիրներ ծագում:

Սեռական էներգիան նույն բնույթն ունի, ինչ այն էներգիան, որը ձեր աշխարհում օգտագործվում է ստեղծագործական ասպարեզում, ստեղծագործության մեջ: Եվ երբ դուք ձեր սեռական կարողությունն օգտագործում եք վայելքների նպատակով, ապա դրանով ձեզ զրկում եք ստեղծագործական էներգիայից, ինքներդ սահմանափակում եք ձեր զարգացումը: Եվ, փաստորեն, բնակչության մեծամասնությունն արդեն իր հասուն տարիքում սեռական էներգիայի չարաշահման պատճառով այնքան է ցամաքած լինում, որ բոլորովին ունակ չի լինում ստեղծագործական գործունեության: Նրանք ուղղակի ունակ չեն լինում ո՛չ միայն մասնակցելու Աստծո արարչությանը, այլ նաև ձեր աշխարհում որևէ սովորական ստեղծագործական աշխատանք կատարելու:

Իմ այսօրվա թելադրության նպատակը ձեր առջև մի շատ կարևոր հարց դնելն էր: Եվ ես դա անում եմ բացահայտ և, որքան հնարավոր է, անմիջական ձևով, քանի որ, նորից եմ կրկնում, մարդկության կողմից աղավաղված էներգիայի մեծագույն մասն աղավաղվել է հատկապես Աստվածամոր էներգիայի չարաշահման միջոցով:

Ձեր ամուսնական փոխհարաբերությունների ամեն մի գործողությունը դուք պետք է կատարեք հանուն Աստծո: Աղոթքով դիմե՛ք Աստծուն և ձեր սեռական կապից արտազատված Սրբազան Կրակը նվիրաբերեք Աստծուն: Հիշե՛ք՝ որտեղ կենտրոնացված է ձեր ուշադրությունը, այնտեղ էլ հոսում է ձեր էներգիան: Եվ եթե ձեր Սրբազան Կրակի արտազատման ժամանակ այդ արտազատումը նվիրաբերեք Աստծուն, ապա դրանով դուք ձեր ամբողջ արտազատած էներգիան կառաքեք դեպի Լույսի բարձրագույն ոլորտները: Եվ այդ էներգիան հետո կվերադառնա ձեզ՝ որպես օրհնանք ձեր զավակների և ձեզ համար:

Աշխատեցեք Աստվածամոր էներգիան օգտագործել միայն մանկածնության նպատակով: Եվ եթե սկզբնական շրջանում ձեզ համար դժվար կլինի այդպիսի սահմանափակումը, ապա աշխատեցեք բավարարվել շաբաթվա մեջ մեկ-երկու անգամ կապ ունենալով: Մի՛ մոռացեք, թեկուզ մտովի, ձեր ամբողջ արտազատած էներգիան

առաքել Աստծուն: Խնդրեք Աստծուն, որ այդ էներգիան, որպես օրհնանք, վերադառնա ձեզ, ձեր զավակներին, ձեր ընտանիքին:

Միշտ հիշեք, որ ֆիզիկական ոլորտում ձեր յուրաքանչյուր գործողությունը կարող է ծառայել և՛ բարուն, և՛ չարին:

Եվ ձեր՝ ֆիզիկական աշխարհում լինելու ամեն րոպեին, ամեն վայրկյանին դուք Աստծո էներգիա եք ստանում և այն ուղղում եք կամ պատրանք ստեղծելուն, եթե այն նստում է ձեր աշխարհում և բազմապատկում պատրանքը, կամ էլ այն առաքում եք Աստծո Աշխարհ՝ բազմապատկելով Երկնային ձեր գանձերը, ստեղծելով բարի կարմա, բազմապատկելով ձեր վաստակը:

Եվ ձեր կյանքում անկյունաքարային կլինի այն, թե ինչպես կօգտագործեք ձեր սեռական էներգիան:

Ես կուզենայի, որ դուք ուշադրությամբ ծանոթանաք այսօրվա իմ դասախոսությանը և ջանաք իմ տված բոլոր հանձնարարականները կիրառել ձեր կյանքում:

ԵՍ ԵՄ Պողոս Վենետիկցին

ՊԱՇՏԵԼԻ ՀԵԼԻՈՍ

13 մայիսի, 2005 թ.

ԲԱՑԵՔ ՁԵՐ ՍՐՏԵՐԸ ԵՐԿՆՔԻ ԱՆՍԱՀՄԱՆ ՈՂՈՐՄԱԾՈՒԹՅԱՆ ԱՌՋԵՎ

ԵՍ ԵՄ Հելիոսը: Ես իմ ողջույնն եմ հղում ձեզ մեր արեգակնային համակարգության Արեգակից...

Ես եկել եմ, որպեսզի ոչ մեծ մի Ուսմունք տամ Արեգակի բնույթի մասին: Դուք ամեն օր տեսնում եք արևը, և ձեզ համար այնքան բնական է թվում արևածագն ու մայրամուտը դիտելը, որ դրա վրա առանձնապես ուշադրություն չեք դարձնում:

Սակայն Արեգակը հանդիսանում է մեր արեգակնային համակարգության այն կենտրոնը, առանց որի կյանքի գոյությունն անհնարին կլիներ արեգակնային համակարգության՝ ինչպես ձեր ֆիզիկական տեսողության համար տեսանելի, այնպես էլ անտեսանելի մոլորակների վրա: Ուստի ինձ վրա՝ որպես էակի, որն իր ներկայությամբ ոգեշնչում է Արեգակին, մեծ պատասխանատվություն է դրված:

Բոլոր այն գործընթացները, որոնք տեղի են ունենում ֆիզիկական արևի վրա, և որոնք, ինչպես ապացուցել են ձեր գիտնականները, ազդում են Երկիր մոլորակի իրադարձությունների վրա, նուրբ աշխարհում տեղի ունեցող գործընթացների հետևանք են:

Արեգակը բանական և շատ բարձր զարգացած էակներով բնակեցված աստղ է: Ուստի այն պրոցեսները, որոնք տեղի են ունենում արեգակնային համակարգությունում, մեր հսկողության տակ են գտնվում: Եվ, որքան էլ ձեր գիտնականներն ապացուցեն, թե այդպիսի բարձր ջերմաստիճանների պայմաններում կյանքի գոյությունը հնարավոր չէ, ահա, ես այստեղ եմ, ես գոյություն ունեմ և ցուցաբերում եմ իմ օգնությունն ու խնամակալությունն արեգակնային համակարգության բոլոր մոլորակներին՝ ներառյալ նաև ձեր Երկրին:

Ձեր մոլորակը փոփոխություններ է կրում, և մոտ ապագայում, իհարկե, տիեզերական չափանիշներով վերցրած, ձեր մոլորակի վրա ձեզ սպասում են լուրջ փոփոխություններ: Դա կվերաբերի Երկիր մոլորակը բնակեցնող բոլոր կենդանի էակներին: Եվ Արեգակն իր ճառագայթմամբ, մագնիսական ու գրավիտացիոն դաշտերով, ինչպես նաև ավելի նուրբ դաշտերով, որոնք ձեր գիտնականները դեռևս չեն կարողանում գրանցել, Երկրին սպասվող փոփոխություններում վերջին դերը չէ, որ պիտի խաղա:

Մի՛ վախեցեք այն փոփոխություններից, որոնք սպասվում են Երկրին: Դրանք տեղի կունենան շատ հազարամյակների ընթացքում, ձեր շատ մարմնավորումների ընթացքում: Եվ այդ փոփոխությունները կնպաստեն այն բանին, որ ձեր տեխնոկրատական քաղաքակրթության հետքերը ջնջվեն նոր սերունդների ու նոր ռասաների հիշողությունից: Երկրի ապագայի ճշգրտումն արդեն սկսվել է, և մեզ հաջողվեց խուսափել մոլորակի կործանումից: Ըստ այդմ՝ ապագայի համար նա-

խատեսված բոլոր փոփոխությունները կկրեն պլանային բնույթ: Երկիրն աստիճանաբար կմաքրվի ձեր քաղաքակրթության ազդեցության հետևանքներից և ձեռք կբերի ավելի բնական տեսք, ավելի մեղմ կլիմա, և Երկրի վրա ապրելն ինքնին կդառնա ավելի անվտանգ ու ավելի հաճելի:

Տիեզերական չափանիշներով՝ այդ ամենը կլինի մոտ ապագայում: Եվ այդ բոլոր փոփոխությունները տեղի կունենան ձեր գիտակցության փոփոխման միջոցով, ձեր մտածողությամբ ու սրտերով: Իսկ ձեր գիտակցության փոփոխությունն ընթանում է շատ գործոնների ազդեցությամբ, և գլխավորը գործոնն հանդիսանում է ձեր Արեգակը, այն պրոցեսները, որոնք տեղի են ունենում Արեգակի վրա, ինչպես ֆիզիկական, այնպես էլ ավելի նուրբ ոլորտներում:

Նույնիսկ այս թելադրությունների ընդունումն է տեղի ունենում արևային էներգիայի օգնությամբ և իմ անմիջական մասնակցությամբ: Ես ներկա եմ լինում յուրաքանչյուր թելադրության հաղորդման ընթացքում: Այո՛, պաշտելինե՛րս, մեր ուղերձների հաղորդման անհրաժեշտ պայմանն է արևային էներգիան, որը մենք օգտագործում ենք հաղորդվող տեղեկատվության ուժեղացման համար:

Եվ ճիշտ այնպես, ինչպես արևն առանց բացառության լույս է տալիս բոլորին, այնպես էլ այս թելադրությունները, որոնք արդեն երեք ամիս է՝ ամեն օր տալիս ենք, տրվում են բոլորի համար՝ առանց որևէ սահմանափակման:

Եվ ճիշտ այնպես, ինչպես արևը որոշների վրա բարերար ազդեցություն է գործում, իսկ ուրիշների համար՝ կործանարար, այդպես էլ այս թելադրությունների ազդեցությունն է:

Կան մարդիկ, որոնց համար այս թելադրությունները պարունակում են Աստծո կատարյալ, կենարար էներգիայի նեկտար: Նրանք պատրաստ են ամեն օր ըմպել այդ նեկտարը և չհագենալ: Նմանապես կան և ուրիշ մարդիկ, ովքեր այս թելադրություններում պարունակվող էներգիայի ազդեցության տակ ապրում են շատ բացասական ներքին վիճակներ: Նրանք ավելի ու ավելի են գլորվում դեպի քննադատության, դատապարտման և նույնիսկ չարամտության դիրքերը:

Դա Աստվածային Էներգիայի հատկությունն է, պաշտելինե՛րս, այն ավելի է արագացնում ներքին գործընթացները, որոնք ընթանում են ձեր էության մեջ: Եվ եթե դուք ամբողջ սրտով ու ամբողջ էությամբ մղված եք դեպի Լույսը, Արեգակը, Բարին և Աստված, ապա լրացուցիչ Աստվածային Էներգիան կարագացնի ձեր բարի մղումները, և դուք անմասնակցելի ազդակ կստանաք ձեր աճի ու զարգացման համար: Իսկ եթե ձեր ներսում բույն են դրել նախանձի, մեղադրանքի, եսասիրության, ատելության չար էներգիաները (քիչ չեն այն բացասական հույզերը, որոնք գոյություն ունեն Երկրի վրա), ապա Աստվածային Էներգիան կուժեղացնի ձեր բոլոր բացասական հատկանիշները, և այն, ինչը նախկինում թաքնված էր ձեր արտաքին ցուցադրական աստվածապաշտության աստվածավայել դիմակի տակ, այլևս չի կարողանա թաքուն մնալ ու ջրի երես կելնի:

Եվ ձեր բացասական հույզերն ու մտքերը կդրսևորվեն ձեր արարքներում, ձեր խոսքերում, այն ամենում, ինչ անում եք:

Եվ դա նախ և առաջ ձեզ համար ազդանշան պետք է հանդիսանա, որպեսզի վերլուծեք՝ ամե՞ն ինչն է արդյոք բարեհաջող ընթանում ձեր ներսում: Չե՞ք շեղվել արդյոք ուղղությունից: Չի՞ եկել արդյոք ժամանակը, որպեսզի սևեռուն ուշադրություն դարձնեք ձեր բացասական հատկանիշների վրա և վերջնականապես ու անվերադարձ ձևով ձերբազատվեք դրանցից:

Ըստ այդմ, պաշտելինե՛րս, այս թելադրությունները կարդալու ընթացքում ուշադրությամբ հետևե՛ք ձեր վիճակի փոփոխությանը և ժամանակին ճիգեր գործադրեք, որպեսզի արմատախիլ անեք այն նվազագույն թերությունն ու նվազագույն բացասական էներգիան, որը բույն է դրել ձեր աուրայում և ճյուղարձակել ձեր արտաքին գիտակցության մեջ:

Այո՛, պաշտելինե՛րս, Աստծո էներգիան նախ և առաջ տրվում է ձեզ այն բանի համար, որ դուք ի հայտ բերեք ձեր անկատարությունները և ժամանակին միջոցներ ձեռնարկեք, որպեսզի ձերբազատվեք դրանցից: Ձեզնից նրանց, որոնց վրա այս թելադրություններն այն աստիճանի բացասական ազդեցություն են գործում, որ պարզապես չեն կարողանում կարդալ դրանք, քանզի իրենց միջից տառացիորեն դուրս է հորդում չարության, ատելության, տարակուսանքի ու մեղադրանքի ալիքը, ես խորհուրդ կտայի միառժամանակ դադարեցնել թելադրությունների ընթերցումը: Դա անհամեմատ ավելի լավ կլինի, քան իր շուրջը բացասական թրթիռներ տարածելն ու Աստծո էներգիայի սխալ դասակարգումը:

Ձեզ հարկավոր է աշխատել ինքներդ ձեզ վրա: Օգնության համար դիմե՛ք Վեհապետներին, խնդրե՛ք, որ օգնեն ձեզ՝ ազատվելու ձեր բացասական մտքերից ու զգացմունքներից: Խնդրեք ոչ թե դեպքից դեպք, այլ ամեն օր: Եվ ես հավատում եմ, որ կգա պահը, երբ դուք կկարողանաք վերադառնալ այս թելադրությունների ընթերցմանը և երանություն ստանալ նրանցում պարունակվող Աստծո էներգիայի նեկտարից: Միայն նրա վրա, ով ամբողջապես մեռած է և կամավորապես՝ իր ազատ կամքով, հրաժարվել է իր էվոլյուցիոն հետագա զարգացումից, այս թելադրությունները ոչ մի ազդեցություն չեն գործի:

Եթե այս թելադրությունները կարդալիս դուք ոչինչ չեք զգում և այդ ընթերցումից ո՛չ տեղեկատվական, ո՛չ էներգետիկական սնունդ չեք ստանում, ապա ես կարող եմ միայն ցավակցել ձեզ: Դուք իրապես կատարել եք ձեր ընտրությունը, և այդ ընտրությունը հեռու է կանգնած այս մոլո-

ռակի և այս տիեզերքի հիմնական էվոլյուցիոն ընթացքից:

Եվ նույնիսկ այն, ինչը հոգևոր իմաստով մեռած է, այնուամենայնիվ ստանում է արևի Լույս: Որովհետև արևի բնույթն այն է, որ լուսավորի, տա ջերմություն և էներգիա: Եվ համաձայնեք, որ դուք չեք կարող արևին կշտամբել, որ նա իր ճառագայթներով չափազանց դաժանաբար է ազդում ձեզ վրա: Ճիշտ նույն կերպ դուք չեք կարող կշտամբել մեզ ու դեսպանորդին այն թելադրությունների համար, որոնք մենք տալիս ենք:

Եվ իրոք, դա այն ողորմածությունն է, որը ձեզ ցուցաբերում են Երկնոլորտները: Եվ այդ ողորմածության ողջ նշանակությունը կկարողանաք գնահատել միայն որոշակի ժամանակ անցնելուց հետո:

Տիեզերական Էակների խնամք տածող ու հոգատար ձեռքերն օրվա մեջ 24 ժամ պատրաստ են ձեզ ցուցաբերել ամբողջ անհրաժեշտ օգնությունը: Եվ միայն դուք եք որոշողը՝ օգտվե՞լ այդ օգնությունից, թե՞ մերժել այն:

Բացե՛ք ձեր սրտերը Երկնոլորտների անսահման ողորմածության առջև և մոտեցրե՛ք ձեր չակրաները դեպի ձեզ հորդող Աստծո էներգիայի անսպառ հոսքին, Լույսի հեղեղին:

ԵՍ ԵՄ Հելիոսը՝ արևային Լույսի ու
Աստծո էներգիայի հորձանքում
ձեր առջև կանգնածը

ՎԵՀԱՊԵՏ ԷԼ ՄՈՐԻԱ

14 մայիսի, 2005 թ.

ՄՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ, ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՎԻՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ. ԱՀԱ ԱՅՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ ՄԵՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ

ԵՍ ԵՄ Էլ Մորիան՝ իմ դեսպանորդի միջոցով կրկին ձեզ այցի եկածը:

ԵՍ ԵՄ՝ նույնքան իրական, եթե ոչ ավելի, քան այն ամենը, ինչ ձեզ շրջապատում է ձեր պատրանքային աշխարհում: Եվ այն ուսուցումը, որն անցնում են մեր աշակերտները, նախ և առաջ, կապված է ձեր գիտակցության ընդլայնման և մեր աշխարհը ձեր գիտակցության մեջ ընդունելու հետ, աշխարհ, որը, գտնվելով ձեր զգայարանների ընկալունակության սահմաններից դուրս, դրանով պակաս իրական չի դառնում:

Ես եկել եմ, որ աշխարհների միջև հաղորդակցության ըմբռնումը տամ, որպեսզի այն ամրապնդեք ձեր գիտակցության մեջ:

Մենք մշտապես ձեր կողքին ենք ձեր երկրային գործերի ու հոգսերի ընթացքում, բայց մենք չենք կարող ձեզ շեղել ձեր հոգսերից, եթե միայն ինքներդ չեք ուզում խնդրանքով դիմել մեզ:

Հավատացե՛ք, մեր աշխարհը մշտապես ձեր կողքին է: Եվ մենք իրարից բաժանված ենք միայն ձեր թրթիռների մակարդակով: Բարձրացրե՛ք ձեր թրթիռները, մղվե՛ք մեզ հետ հաղորդակցության, և դուք կստանաք այն, ինչին ձգտում եք:

Ամբողջ դժվարությունն այն է, որ դուք անկարող եք ձեր արտաքին գիտակցության մեջ ընդունել մեր ներկայությունն ու մեզ հետ հաղորդակցվելու հնարավորությունը: Դուք նշաններ եք խնդրում, և մենք նշաններ ենք տալիս: Դուք օգնություն եք խնդրում, և մենք տալիս ենք այդ օգնությունը: Դուք խնդրում եք մեզ հետ հաղորդակցություն, և մենք մտնում ենք ձեզ հետ հաղորդակցության մեջ: Բայց ինչո՞ւ եք այդ ամենը խնդրելուց անմիջապես հետո մոռանում ձեր խնդրանքի մասին: Երբ մենք ձեր կանչով գալիս ենք, ձեր գիտակցությունն արդեն այնքան է խորասուզված լինում ձեր պատրանքային աշխարհի մեջ, որ այլևս ունակ չեք լինում մեզ լսելու:

Ըստ այդմ՝ ես եկել եմ, որպեսզի ձեզ հիշեցնեմ ձեր գիտակցության ու մտածողության կարգապահության մասին, ինչը դուք պետք է պահպանեք, եթե ուզում եք աշակերտել մեզ: Մենք կարիք չունենք այնպիսի աշակերտների, որոնք ասում են, թե ուզում են մեր աշակերտները լինել, օգնություն են խնդրում, բայց մի քանի ժամ անց նրանց գիտակցությունն այնքան է կլանված լինում իրենց շրջապատի պատրանքով, որ մոռանում են իրենց բոլոր խնդրանքների, խոստումների, երդումների ու հավաստիացումների մասին:

Մեզ աշակերտներ պետք են, բայց եթե դուք իրոք ուզում եք ուսում ստանալ Համբարձյալ Վեհապետների ղեկավարությամբ, ապա բարի եղեք դրա համար գոնե նվազագույն ջանք գործադրել:

Հիշե՛ք, որ դուք պետք է կամենաք մեր աշա-

կերտները լինել ոչ դեպքից դեպք, երբ պատահաբար մեր մասին հիշում եք ձեր առօրյա ունայնության մեջ: Ո՛չ, դուք պետք է մշտապես հիշեք, թե ինչին եք ուզում հասնել և դեպի ուր եք մղվում: Դուք ձեր գիտակցությունը միշտ պետք է ուղղված պահեք դեպի մեր աշխարհը՝ անկախ այն բանից, թե կյանքի ինչպիսի բարդ իրադրությունների եք հանդիպում:

Մղվածություն, կայունություն և նվիրվածություն. ահա այն հատկանիշները, որոնք անհրաժեշտ են մեր աշակերտներին:

Դուք կարող եք զբաղվել ձեր առօրյա գործերով և կատարել ձեր ընտանեկան պարտականությունները, բայց ձեր մտքում մշտապես պետք է պահեք մեր աշխարհի պատկերը: Դուք միշտ մեզ հետ պետք է համահունչ լինեք:

Դրանով դուք կկարողանաք զարգացնել զգոնությունը մեր կարիքների ու ժամի պահանջի նկատմամբ:

Մենք շուրջօրյա հսկողություն ենք իրականացնում մոլորակում՝ միայն կարճատև հանգիստ թույլ տալով մեզ, երբ հարկ է լինում խորասուզվել նիրվանայի մեջ:

Ինչն է ձեզ խանգարում, որ մեզնից օրինակ վերցնեք: Օրվա ընթացքում պահպանեք ձեր զգոնությունն ու մղվածությունը, որպեսզի հենց որ ձեր օգնության կարիքը զգացվի, կամ ձեր դաս առնելու ժամը հասնի, բաց չթողնեք այդ պահն այն պատճառով, որ չափազանց կլանված կլինեք դատարկ խոսակցություններով, անհարկի վեճերով կամ հերթական սերիալի դիտումով:

Երբ դուք ուզում եք մեր աշակերտները դառնալ և ստանալ մեր առաջնորդությունը, խրատն ու օգնությունը, ինչո՞ւ եք կարծում, որ ազատվում եք մեր նկատմամբ ունեցած փոխադարձ պարտավորություններից:

Մենք կարող ենք գալ և ձեզ դաս, հանձնարարություն կամ տեղեկատվություն տալ օրվա ցանկացած պահի: Ուստի մեր աշակերտները դառնալու դեպքում դուք պարտավոր եք մշտապես զգոնություն պահպանել:

Երբ դուք ուսում եք ստանում դպրոցում կամ համալսարանում, ապա պարտավոր եք լինում հաճախել պարապմունքներին և լսել ուսուցիչներին: Իսկ ուսուցիչները ձեր ծուլության համար կարող են ձեզ պատժել և նույնիսկ հեռացնել պարապմունքներից: Ինչո՞ւ եք կարծում, որ մեր ղեկավարությամբ ուսում ստանալը պակաս պատասխանատու գործ է:

Երբ դուք գիտելիք եք ստանում ձեր ուսումնական հաստատություններում, ապա մեծ մասամբ այնպիսի գիտելիքներ եք ստանում, որոնք պետք են գալիս ընթացիկ կյանքում: Իսկ մենք տալիս ենք այնպիսի գիտելիքներ, որոնք ձեզ պետք կգան ձեր բոլոր կյանքերի ընթացքում: Նման պարագայում արժե՞ արդյոք բաց թողնել պարապմունքներ և թերանալ պարտականություններում:

Մեր ուսուցման առանձնահատկությունն այն է, որ մենք ձեզ ուսուցանում ենք՝ չկտրելով ձեզ կյանքի ձեր պարտականություններից: Դուք կարող եք լինել աշխատանքի վայրում և ստանալ մեր ուսուցումը: Կարող եք տանը մնալ, խնամել ձեր երեխաներին և ուսուցում անցնել մեր ղեկավարությամբ:

Ըստ այդմ՝ դուք մշտապես պետք է զգոնություն պահպանեք և սպասեք մեր հանձնարարություններին, ցուցումներին և մեր առաքած տեղեկատվությանը:

Մենք մեր աշակերտների հետ չենք հաղորդակցվում իրենց լեզվով: Մենք մեր գիտելիքներն ու տեղեկատվությունն առաքում ենք էներգիայի տեսքով՝ որպես մեղմ հովի շունչ, լույսի թեթև առկայծում, նուրբ ցանկության առաջացում կամ ինչ-որ գործ կատարելու եռանդի դրսևորում: Մեր աշակերտներին մենք շատ հազվադեպ ենք խոսքով ինչ-որ բան ասում: Իսկ մեր խոսքերը ձեր գլխում հայտնվում են այնքան բնականորեն, որ կարծես դրանք ձեր սեփական մտքերը լինեն: Եվ միայն որոշ ժամանակ անցնելուց հետո եք դուք հասկանում, որ այդ մտքերը մեր կողմից են առաքվել ձեզ:

Ըստ այդմ՝ դուք մշտապես պետք է զգոնություն պահպանեք և պատրաստ լինեք մեր տեղեկատվությունն ու ցուցումները ստանալուն:

Մի՛ ակնկալեք, որ ես կամ Վեհապետներից որևէ մեկն իր ողջ հասակով կհայտնվի ձեր առջև ու կզրուցի ձեզ հետ՝ իր ուսմունքը տալով ու ձեր հարցերին պատասխանելով: Մենք զուրկ ենք ֆիզիկական մարմնից, ուստի շատ հազվադեպ ենք ջանք ու էներգիա ծախսում, որ թանձր աստեղային մարմնով երևանք մեր աշակերտներին: Եթե ուզում եք մեզնից ուսում ստանալ, ապա պետք է այն աստիճանի նրբացնեք ձեր ընկալունակությունը, որ զգայուն դառնաք և՛ մեր խոսքերի, և՛ մեր կարիքների, և՛ մեր պահանջների նկատմամբ:

Զարգացրեք ձեր մեջ զանազանելու շնորհը: Աստեղային ոլորտի շատ էակներ կարող են ձեր գլխին չար կատակ խաղալ՝ ներկայանալով որպես Վեհապետներ: Նրանցից շատերը բարեհաճությամբ աչքի չեն ընկնում, շատերն էլ պարզապես չար են ու վրիժառու:

Թե ում հետ գործ կունենաք նուրբ ոլորտում, ձեզ համար գնահատման լավագույն հայտանիշը կլինի ձեր սեփական գիտակցության վիճակը: Գիտեք, որ *նմանը զնմանն գտանէ*: Եվ եթե ձեր ներսում դուք անհավասարակշիռ եք, անսերդաշնակ, ապրում եք մարդկանց բնորոշ կամայական բացասական հույզեր, ապա հազիվ թե հաղորդակցվեք իսկական Համբարձյալ Վեհապետների հետ: Ըստ այդմ՝ օրվա ընթացքում ուշադրություն դարձրեք ձեր գիտակցության մակարդակի վրա:

Ձեր գիտակցությունը շատ շարժուն է: Կարելի է ասել, որ օրվա ընթացքում դուք ձեր գիտակցության սանդղակով սահում եք ամենացածր մակարդակից մինչև ամենաբարձրը: Ձեր գիտակցության

մակարդակի վրա ազդեցություն են գործում բոլոր այն բաները, որոնց հետ կյանքում դուք առնչվում եք՝ մարդիկ, որոնց հետ հպվում եք ձեր աուրաներով, ֆիլմերը, որ դիտում եք, երաժշտությունը, որն ունկնդրում եք: Ձեր աշխարհում տառացիորեն ամեն ինչ ազդում է ձեզ վրա: Ուստի ձեր առաջնահերթ խնդիրն այն է, որ օրվա մեծ մասի ընթացքում ձեր գիտակցության մակարդակը պահեք ձեզ համար մատչելի ամենաբարձր մակարդակի վրա: Եվ օրվա ընթացքում միշտ ժամանակ գտեք, որպեսզի գոնե մի քանի րոպեով առանձնանաք և վերլուծեք օրվա ընթացքում ունեցած ձեր վիճակը՝ ձեզ այցելած բոլոր մտքերը, հույզերը, պատկերները:

Մշտապես վերլուծե՛ք ձեր վիճակը և բազմակի անգամ ստուգե՛ք ձեր զգացողությունները:

Մենք մշտապես ձեր կողքին ենք, և միայն ձեր թրթիռների, ձեր գիտակցության մակարդակը թույլ չի տալիս ձեզ, որ տեսնեք ու լսեք մեզ:

Եվ առաջին բանը, որ դուք պետք է անեք, մեր ներկայությունը, մեր թրթիռները զգալ սովորելն է:

Մեր լավագույն աշակերտները երբեք չեն լքում իրենց դետքը: Նրանք մշտապես մեզ հետ համահնչունություն են պահպանում և օրվա մեջ 24 ժամ պատրաստ են անհրաժեշտ ցուցումներ ստանալ մեզնից: Ըստ այդմ՝ նախքան Վեհապետներից նեղանալը, որ իբր նրանք ձեզ վրա հարկ եղած ուշադրությունը չեն դարձնում կամ չեն ցուցաբերում անհրաժեշտ օգնություն, ուշադրությամբ վերլուծեք ձեր ներքին վիճակը:

Բաց չե՛ք թողել արդյոք մեր խրատներն ու մեր օգնությունն այն պատճառով, որ զբաղված եք եղել կյանքի ծանր պայմաններից տրտնջալով և չափազանց շատ ուշադրություն հատկացնելով ձեզ շրջապատող պատրանքին:

Ես այսօրվա խրատները տվեցի այն հույսով, որ դուք կհասկանաք այն դժվարությունները, որոնք մեր առջև ծագում են. դուք օգնություն եք խնդրում, մենք ցուցաբերում ենք այդ օգնությունը, իսկ դուք այն պարզապես չեք նկատում, քանի որ չափազանց շատ եք զբաղված լինում երկրային խնդիրներով:

ԵՍ ԵՄ Էլ Մորիան

ԵՍ ԵՄ ՈՐ ԵՄ

15 մայիսի, 2005 թ.

ՀԱՍԵԼ Է ԺԱՄԸ, ԵՐԲ ԱՍՏԾՈ ԼԻԱԿԱՏԱՐ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՔ Է ԴԻՄԵՔ ՁԵՐ ԻՍԿ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍԻՆ

ԵՍ ԵՄ ՈՐ ԵՄ, խոսում եմ քո ներսից:

Մինչ այժմ ինչ մենք անում էինք, ընդամենը նախապատրաստություն էր նոր տեղեկատվության քո ընկալման համար: Եվ այսօր ես փորձ կանեմ քո արտաքին գիտակցությանը հասցնել նոր տեղեկատվության մի մասն այն տեսքով, որն առավելագույնս մատչելի կլինի քո ընկալմանը:

Աշխարհների միջև հաղորդակցության ամբողջ բարդությունն այն է, որ մեր աշխարհներին ընորոշ են տարբեր թրթռանքներ: Եվ երբ մենք քո թրթիռները բարձրացնում ենք այնպիսի մակարդակի վրա, որ ունակ դառնաս ընկալելու Լույսի բարձր ոլորտներից բխող տեղեկատվությունը, ապա շրջապատի աշխարհի հետ քո թրթիռների անհամապատասխանությունն իր ազդեցությունն է թողնում քո շրջապատի ամեն ինչի վրա և անձամբ քեզ վրա:

Քո աշխարհը չի կարող դիմանալ թրթռումների նույնիսկ կարճաժամկետ բարձրացմանը: Ակնթարթորեն թելադրությունների ընդունման վայրն են ներխուժում բոլոր այն ուժերը, որոնք ընդդիմանում են Լույսի ուժերին: Ուստի չափազանց դժվար է լինում պահպանել համակշռությունն ու հավասարակշռությունը:

Ըստ այդմ՝ այնքան կարևոր չէ թելադրությունների տեղեկատվական բաղադրիչը, որքան ֆիզիկական ոլորտում Լույսի կիզակետի ամրագրման փաստը, ինչպես նաև կարևոր է այդ Լույսի կիզակետի կայուն օգտագործման հնարավորությունը երկար ժամանակահատվածի ընթացքում: Մենք հնարավորություն ունենք բացահայտելու մեզ ընդդիմադիր ուժերին և միջոցներ ձեռնարկելու նրանց հավասարակշռման, չեզոքացման և վերաբևեռացման համար:

Ողջ դժվարությունն այն է, որ ֆիզիկական աշխարհի հոծության պատճառով հնարավոր չէ ձեր աշխարհի վրա անմիջական ազդեցություն գործել մեր աշխարհում գտնվող Լույսի Էակների օգնությամբ:

Ձեր աշխարհը ձևավորվել է որպես մարդ-

կային էակների գիտակցության արտացոլանք: Եվ, աստվածային կերպերից մարդու գիտակցության հեռանալուն զուգընթաց, մատերիան ավելի ու ավելի է թանձրացել և ի վերջո ձևավորվել է մի թանձր վարագույր, որով մեր աշխարհները բաժանվում են իրարից: Դա զուտ էներգետիկական վարագույր է, որի միջով մեր աշխարհների հաղորդակցությունը ծայրահեղ դժվարացել է:

Եվ, չնայած Լույսի Էակների՝ ձեր աշխարհում հայտնվելու ձգտմանը, նրանք չեն կարող դա իրագործել ձեր աշխարհի ցածր թրթռանքների պատճառով: Նույնը վերաբերում է նաև մարդկային էակներին: Մարմնավորված վիճակում նրանք չեն կարող անցնել վարագույրով: Համենայն դեպս՝ առանց որոշակի պատրաստվածության և այն Համբարձյալ Էակների ղեկավարությամբ ուսուցում անցնելու, որոնք գտնվում են վարագույրից այն կողմ:

Երկնային աշխարհը չի կարող անմիջական ազդեցություն գործել երկրային աշխարհի վրա: Եվ, որպեսզի հսկողություն իրականացվի, որ ձեր աշխարհի զարգացման ուղղությունը համապատասխանի Աստծո Օրենքներին, մենք ստիպված ենք դիմել միջնորդների օգնությանը, այն մարդկանց օգնությանը, ովքեր որոշակի ուսուցում են ստացել և ունակ են իրենց գիտակցությունը վեր հանելու Համբարձյալ Էակների մակարդակին:

Աշխարհների փոխներթափանցումը նման է սուզման գործընթացին: Բարձր զարգացած Լույսի Էակները մարմնավորվելով սուզվում են ձեր աշխարհ՝ մարմնավորման հետ մեկտեղ իրենց վրա վերցնելով որոշակի կարմա՝ տարբեր տեսակի անկատարությունների տեսքով: Ահա թե ինչու են ասում, որ մարմնավորված ոչ մի կատարյալ էակ չկա: Կատարյալ էակները պարզապես չեն կարող գտնվել ձեր աշխարհում:

Բայց իրենց զարգացմանը և ուսուցում անցնելուն զուգընթաց Լույսի աշխատակիցները վերականգնում են իրենց գիտելիքներն ու կարողությունները և սուզվում են արդեն մեր աշխարհը՝ օգտագործելով մեդիտատիվ գործառություններն ու գիտակցության փոփոխված վիճակները:

Մոլորություն է այն, որ Լույսի աշխատակիցները լրիվ կատարյալ են՝ մի-մի աստվածներ:

Կատարելությունը տեղ չունի ձեր աշխարհում: Համենայն դեպս՝ խիտ բնակեցված վայրերում:

Դրանում է Լույսի աշխատակիցներին ճանաչելու և մարդկանցից զանազանելու դժվարությունը, ովքեր որոշել են ծառայել մեզ հակադիր ուժերին, այն ուժերին, որոնք պատրանք են ստեղծում:

Երբ ձեր գիտակցությունը հասնում է զարգացման որոշակի մակարդակի, դուք ունակ եք դառնում զանազանելու, թե մարդկանցից ով ինչ ուժերի հաղորդիչ է: Սակայն մարդկության զարգացման այս փուլում սովորական մարդու համար անհնարին է որոշելը, թե որ ուժերի ներկայացուցչի հետ ինքը գործ ունի:

Իրադրությունը բարդանում է նաև նրանով, որ մարմնավորման մեջ մտնող ցանկացած մարդ ենթարկվում է երկու հակադիր ուժերի ազդեցությանը: Ըստ էության, այդ ուժերի հակամարտությունն ընթանում է յուրաքանչյուր մարդու ներսում: Ես նկատի ունեմ պատրանքներ բազմացնող և պատրանքը հետհավաքող ուժերի հակամարտությունը:

Ուստի ժամանակի յուրաքանչյուր տվյալ պահին մարդու մեջ կարող են գերակշռել այս կամ այն ուժերը: Օրինակ՝ դեռևս երեկ դուք գործ ունեիք մի մարդու հետ, ում մեջ գերակշռում էին Լույսի ուժերը, այսինքն՝ նրան կարելի էր համարել լուսավոր մարդ: Բայց անցնում է մի գիշեր, և ներքին պայքարի արդյունքում այդ մարդու մեջ լրիվ կամ մասնակիորեն հաղթանակ են տոնում խավարի ուժերը:

Դուք նույն մարդու հետ գործ ունեք, և արտաքնապես էլ ոչինչ չի փոխվել, բայց իր էությամբ նա արդեն բոլորովին ուրիշ մարդ է: Եվ այդ ներքին էությունը վաղ թե ուշ կսկսի իրեն դրսևորել: Բայց հարկ կլինի, որ անցնի մի ամսից ավել, գուցե նույնիսկ մի ամբողջ տարի, մինչև որ այդ փոփոխությունը մարդու մոտ նկատելի դառնա: Ահա հենց դրանում է ձեր աշխարհի հետ փոխազդեցության բարդությունը: Փաստորեն ձեր ֆիզիկական մարմինը պարզապես մի մեխանիզմ է՝ ռոբոտ, որը ղեկավարվում է այն ուժերի կողմից, որոնց ազդեցության տակ մարդը որոշել է մտնել:

Ահա թե ինչու է ձեզ մշտապես ասվում, որ դուք պետք է առաջնորդվեք ձեր սրտի՝ ձեր Բարձրագույն Ես-ի պատասխաններով: Ձեր Բարձրագույն Ես-ը միշտ գիտի այն հարցի պատասխանը, թե ում հետ գործ ունեք, և թե ինչ ուժեր են գտնվում այն մարդու թիկունքում, ով կանգնած է ձեր առջև:

Եվ, ցավոք, ուրիշ ավելի հուսալի և ճշմարիտ եղանակ չկա, որպեսզի կողմնորոշվեք ձեր աշխարհում:

Ըստ այդմ՝ այն ողջ ճշմարիտ ուսմունքը, որը տրվում է մեր կողմից, ուղղված է ձեր Բարձրագույն Ես-ի հետ ձեր կապի զարգացմանը: Որպեսզի դուք կույր կատվաձագերի պես չվազվզեք մի ուսուցչից դեպի մյուսը, մի հավատից դեպի մյուսը, մի կրոնական հոսանքից դեպի մյուսը: Մեր խնդիրն է, որ դուք կարողանաք կողմնորոշվել ո՛չ միայն արտաքին ուսմունքների հարցում, այլ նաև յուրաքանչյուր ուսմունքի ներսում: Քանզի ճշմարիտ ուսմունքների հետևորդների մեջ կան մարդիկ, ովքեր գործում են խավարի ուժերի կողմից, և այն ուսմունքների հետևորդների կազմում, որոնք դուք սխալ եք համարում, կան լիովին լուսավոր սպասավորներ:

Ձեր աշխարհում չկա, և չի կարող լինել միանշանակություն: Եվ այսօրվա զրույցի նպատակը սև-սպիտակ աշխարհի տեսիլքի մատուցումը չէ, որում կռվում են երկու հակադիր սկիզբներ, իսկ ճակատի գիծը այդ երկու հակամարտող կողմերի միջև պարզորոշ գծագրված է:

Ձեր աշխարհն, իրոք, իրենից ներկայացնում է երկու սկիզբների և երկու ուժերի պայքարի թատերաբեմ: Սակայն մարդկային գործունեության ոլորտների մեջ ներթափանցման նրբերանգներն ու նրբություններն այնքան խորամանկորեն են միահյուսված, որ հնարավոր չէ արագ և առանց կորուստների հետ քանդել այդ խորամանկ հյուսվածքը:

Ըստ այդմ՝ մարդկության էվոլյուցիոն զարգացման ընթացքը նպատակ ունի ձեզ սովորեցնել գլուխ հանել կյանքի գոբելենի նրբություններից, զանազանել ձեզ շրջապատող իրականության լույսի և ստվերի նվազագույն նրբերանգները և, ի վերջո, անսխալ որոշել ուղին ու շարժման ուղղությունը:

Իսկ մինչ այդ դուք կհայտնվեք զանազան կարմայական իրադրությունների մեջ և կընկնեք տարբեր ուժերի ազդեցության տակ:

Եվ այն բանին զուգընթաց, որ կհաղթահարեք ձեր խոչընդոտներն ու կզանազանեք լույսի և ստվերի նրբերանգները ձեր շրջապատի աշխարհում և, առաջին հերթին, ձեր ներսում, դուք կստանաք մաքուր աստվածային տեսողություն և ձեռք կբերեք անգնահատելի փորձ, որը կհանդիսանա ձեր գանձը Երկնոլորտներում: Այն գանձը, որին ոչ ժանգն է սպառնում, ոչ ցեցը:

Եկել է այն փուլը, երբ դուք պետք է հեռանաք սև-սպիտակ մտածողությունից և ինքնուրույնաբար գտնեք ճշմարտության հատիկները: Ձեր զարգացման ներկայիս փուլը բնորոշվում է հենց նրանով, որ դուք ունեք բազմաթիվ ուսուցիչներ և բազմաթիվ հոսանքներ: Եվ, որպեսզի գլուխ հանեք այդ ողջ բազմազանությունից, ձեզ միայն մեկ կողմնորոշիչ է հարկավոր, որը մշտապես ձեզ հետ է՝ ձեր Բարձրագույն Ես-ը:

Ուստի ձեզնից նրանք, ովքեր կկանգնեն իրենց Բարձրագույն Ես-ի հետ կապ հաստատելու ուղու վրա, էվոլյուցիոն զարգացման այս փուլում առավելություն կստանան այն մարդկանց նկատմամբ, ովքեր հին ձևով կփնտրեն այն արտաքին ուսուցչին, այն արտաքին կազմակերպությունը, որը կկարողանա իրենց տալ լիարժեք Աստծո Ճշմարտություն: Սակայն եկել է ժամանակը, երբ լիարժեք Աստծո Ճշմարտության խնդրով դուք պետք է դիմեք ինքներդ ձեզ՝ ձեր իսկ Բարձրագույն մասին:

Դուք կարող եք շրջել աշխարհով մեկ՝ փնտրելով ձեր հարցերի պատասխանները: Դուք կարող եք այցելել հարյուրավոր ուսուցիչների և հազարավոր կազմակերպություններ, բայց այն, ինչն իսկապես ձեզ անհրաժեշտ է անել այս փուլում, դա ձեր միակ իսկական Գուրուին դիմելն է, ով բնակվում է ձեր սրտում և սպասում է, որ տա ձեզ իր խրատներն ու ուսուցումը:

ԵՍ ԵՄ ՈՐ ԵՄ

ՎԵՀԱՊԵՏ ԼԱՆԵԼԼՈ

16 մայիսի, 2005 թ.

ՈՒՍՄՈՒՆՔ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ, ՊԱՅՔԱՐԻ ԵՎ ՍԱՄՄԻԹ ԼԱՅԹՀԱՈՒԶԻ ԴԵՐԻ ՄԱՍԻՆ

ԵՍ ԵՄ Լանելլոն՝ այս դեսպանորդի միջոցով նորից ձեզ այցի եկածը:

ԵՍ ԵՄ եկել, որ կարևոր Ուսմունք տամ դեսպանության էության մասին: Դուք գիտեք, որ Ամերիկայում իմ վերջին մարմնավորման ընթացքում ես կատարեցի Մեծ Սպիտակ Եղբայրության դեսպանորդի պարտականություն: Ավելի ուշ իմ այդ պաշտոնը կիսեցի կողակցիս՝ Էլիզաբեթի հետ:

Ով ինչպես էլ վերաբերվի դեսպանությանը, ես ձեզ ամենայն պատասխանատվությամբ և որոշակիությամբ պետք է ասեմ, որ այդ պաշտոնը ծայրահեղ պատասխանատու պաշտոն է, և այն պահանջում է լիակատար ինքնահրաժարում և լիակատար ու անվերապահ նվիրվածություն Եղբայրությանը:

Պատժի խստության առումով՝ իր վրա վերցրած պարտավորություններից խույս տալու համար սովորական մարդկանց կրած սովորական կարմայական պատիժը չի կարելի համեմատել այն մարդկանց կրած պատժի հետ, ովքեր դեսպանորդի պատմուճան են կրում: Եվ այն մարդու պատասխանատվությունը, ով հանձն է առել այդ պաշտոնում ծառայել Եղբայրությանը, հիրավի, հսկայական է: Խոսքը նուրբ ոլորտից մարդկանց տեղեկատվություն հաղորդելու մասին է, և այդ տեղեկատվության որակն ամբողջովին որոշվում է դեսպանորդի անձնական հատկանիշներով: Եվ վարվելակարգից շեղվելու դեպքում դեսպանորդի կարման անհամեմատ ավելի ծանր է, քան սովորական մարդկանց նմանատիպ խախտումների կարման: Սակայն դեսպանորդը նույնպես, ինչպես մարմնավորված ցանկացած ուրիշ մարդ, ենթա-

կա է ֆիզիկական աշխարհին բնորոշ բոլոր ուժերի ազդեցությանը: Եվ դուք գիտեք նաև այն մասին, որ այնտեղ, որտեղ տեղի է ունենում մեծ քանակությամբ Լույսի ձերբազատում, հակադիր ուժերը, որոնք ձգտում են, այդ լույսից օգտվելով, ի չիք դարձնել դրա ազդեցությունը, Լույսի ուժերի նկատմամբ գերակշռություն են ունենում: Ուստի դեսպանորդն այն մարդն է, ով առաջինն է դիմագրավում խավարի ուժերի բոլոր հարվածներին ու հարձակումներին:

Դա է ամենահիմնական վտանգներից մեկը և հիմնական դժվարություններից մեկը: Ամեն օր ենթարկվելով հարձակումների ու հակամարտության՝ շատ դժվար է դիմանալ գայթակղությանն ու բացահայտ մարտի ու պայքարի մեջ չմտնել թշնամական ուժերի հետ: Ահա հենց այդտեղ է սպառնում ամենագլխավոր գայթակղությունը: Քանզի, հենց որ դուք ենթարկվում եք պայքարի էներգիային ու մարտի մեջ մտնում, ձեր թրթիռներն ակնթարթորեն ցածրանում են, և դուք այլևս չեք կարող երաշխավորել աստվածային ցուցումների և Աստծո Ճշմարտության անխաթար ու ճիշտ փոխանցումը ֆիզիկական օկտավային: Այսպիսով, դեսպանորդի հիմնական խնդիրներից մեկն այն է, որ իր գիտակցությունը մշտապես պահի այնպիսի մակարդակի վրա, որի դեպքում հնարավոր չէ բացահայտ մարտի մեջ մտնելը:

Դա շատ դժվար է բացատրել, պաշտելիներս: Մի կողմից՝ դուք մշտապես գտնվում եք թշնամական էներգիաների կիզակետում: Դուք, տառացիորեն, ձեզ վրա ֆիզիկապես զգում եք այդ թշնամական ուժերի ազդեցությունը՝ շնորհիվ ձեր զանազանման շնորհի, տեսնում եք, թե ինչպես են այդ ուժերը գործում ձեր մերձավորների միջոցով, որոնք գտնվում են ձեր շրջապատում: Եվ միաժամանակ դուք պետք է լիակատար չեզոքություն պահպանեք և ինքներդ ձեզ թույլ չտաք որևէ քայլ՝ մարտի մեջ մտնելու ուղղությամբ: Դուք գտնվում եք մարտի կենտրոնում և միաժամանակ մարտի նկատմամբ պահպանում եք լիակատար անջատվածություն: Չեք միջամտում դրան: Ամենից առաջ՝ ձեր էներգիայի ոչ մի էրգը չեք ներդնում մարտի շարունակման գործում: Իսկ, հենց որ դուք թույլ տաք ձեր էներգիային մասնակցություն ունենալ այդ մարտում, որն ընթանում է ձեր շուրջը, ապա ակնթարթորեն սխալ կդասակարգեք ձեր էներգիան: Դուք ձեր էներգիան կմղեք դեպի պայքար և, հետևաբար, կմղեք դեպի այս աշխարհի բացասական հատկանիշների շատացում և պատրանքների բազմապատկում:

Ես այսպես մանրամասնորեն կանգ առա պայքարի հարցի վրա, որովհետև հենց դա է եղել այն վճռորոշ հարցը, որի վրա սայթաքել է Սամմիթ Լայթհաուզը:

Դուք գիտեք, որ սև մոգությունը սպիտակ մոգությունից տարբերվում է միայն մեկ բանով՝ թեկուզ մեկ չար մտքի առկայությամբ: Տվյալ դեպքում, երբ դուք ձեր սրտում սկսում եք խթանել, ինչպես ձեզ է թվում, բարեպաշտ զայրույթն ու բարեպաշտ կռիվը խավարի ուժերի դեմ, ապա կանգնում եք սայթաքուն ուղու վրա և սկսում եք ձեր էներգիան հատկացնել ոչ թե բարի նպատակների համար, այլ խավարի ուժերի այն նպատակների համար, որոնք բազմապատկում են պատրանքը: Սա շատ նուրբ հարց է, և շատ լուսակիրներ մինչև այժմ էլ համարում են, որ իրենք պետք է բարեպաշտ պայքար մղեն հանուն Լույսի և առաջ մղեն Բարու սկզբունքները՝ կապանքի տակ առնելով չարն ու դրա հետևորդներին, կապանքի տակ առնելով սրբապիղծների սերմը:

Հենց որ սկսում եք օգտագործել պատգամների էներգիան, որպեսզի մարտնչեք, ապա դուք սխալ եք դասակարգում Աստծո էներգիան, դուք զբաղվում եք սև մոգությամբ:

Հարցի նրբությունն այն էր, որ, պահպանելով բացարձակ հավասարակշռություն և լիակատար հանդարտություն, աղոթքի էներգիան առաքվեր Հրեշտակների Դասին, Միքայել Հրեշտակապետի Հրեշտակներին, որպեսզի իրե՛նք իրականացնեին խավարի ուժերին կապանքի տակ առնելու իրենց աշխատանքը: Եվ, որպեսզի առաքվեր աղոթքի էներգիան, տվյալ դեպքում, իրոք, պահանջվում էր անցնել ածելու սայրի վրայով՝ սրտում պահպանելով սիրո և ներդաշնակության զգացումը:

Հենց որ ցանկացած դատաստանակոչի ընթացքում դուք թույլ եք տալիս ցանկացած բացասական միտք, ապա ինքնաբերաբար պայքարի մեջ եք ներքաշվում և ստեղծում կարմա: Այդ դեպքում դուք բարի կարմա ստեղծելու փոխարեն բացասական կարմա եք առաջացնում, որը բացասական էներգիայի տեսքով նստում է ձեր չորս ստորին մարմիններում: Եվ, ձեռնադրումների ուղով առաջընթացի փոխարեն դուք երկար տարիներով, հնարավոր է նաև՝ երկար մարմնավորումներով, արգելակում եք ձեր առաջխաղացումը:

Ինչ-որ մի պահի՝ արդեն իմ անցում կատարելուց հետո, Սամմիթ Լայթհաուզի համայնքին չհաջողվեց պահպանել պահանջվող հավասարակշռությունն ու բալանսը: Ցավոք, այն, ինչ հիմա մեր աչքի առաջ է, հանդիսանում է աղոթքի էներգիայի սխալ օգտագործման հետևանք: Ջինը բաց էր թողնվել շշից, և, որպեսզի նրա ճամփան փակվի, պահանջվեց դուրս հանել էներգիան պատգամների մեծ մասից և մասամբ դադարեցնել մանուշակագույն բոցի շնորհի ազդեցությունը:

Դուք գիտեք, որ պաշտելի Սեն Ժերմենը զրկվեց իր կաուզալ մարմնի մի մասից: Դուք տեսնում եք նաև, թե ինչպես սխալ գործողությունների հետևանքներն ընկան դեսպանորդի վրա, ով դեռևս մարմնավորման մեջ է գտնվում և բեռնաթափում է իր ուսերին ընկած ծանր կարման:

Բնականաբար այն կարման, որը ստեղծվել էր և տարեցտարի աճում էր ձյունահյուսքի պես, խանգարեց եթերային օկտավաներից տեղեկատվու-

թյան որակյալ փոխանցմանը: Եվ, որքան էլ ողբալիորեն ծանր էր դա անելը, դեսպանորդի պատմուճանը հետ վերցրվեց Էլիզաբեթից, իսկ թելադրություններ տալը հարկ եղավ դադարեցնել:

Սակայն այն բարի կարման, որը կապված էր թելադրությունների և ուսմունքների անսխալ լայն տարածման հետ, պետք է որ գերազանցի Սամմիթ Լայթհաուզի գործունեության բացասական ազդեցությանը, և ես կարծում եմ, որ վերջին հաշվով Կարմայական Վարչությունը բարեհաճ վերաբերմունք կցուցաբերի թույլ տված սխալների ու վրիպումների նկատմամբ:

Փաստորեն գլխավորը ոչ թե սխալների առկայությունն է, այլ սխալներից դաս առնելու և անգնահատելի փորձ ձեռք բերելու կարողությունը: Եվ Սամմիթ Լայթհաուզը ոչ միայն Միացյալ Նահանգների, այլ նաև ողջ աշխարհի մարդկանց համար ընձեռեց հսկայական, ոչնչի հետ չհամեմատվող մի հնարավորություն, որ նրանք ուսուցում և փորձառություն ստանան և դաս առնեն սեփական սխալներից:

Այն մարդկանց համար, ովքեր իրենց գիտակցությանը թույլ չտվեցին ենթարկվել զարմանալի արագությամբ նոր եկեղեցու շրջանակներում ձևավորված նոր կրոնական վերնախավին, նրանց համար, ովքեր համահունչ մնացին իրենց սրտերի ներսում գտնվող Աստծո Ճշմարտությանը, այդ փորձությունները զգալի թռիչք տվեցին աստվածային գիտակցության զարգացմանը: Մենք ֆիզիկական աշխարհ ենք գալիս այն բանի համար, որպեսզի ուսում ստանանք, զարգանանք և վեր հանենք մեր գիտակցությունը: Ուստի գլխավոր նպատակն ի կատար ածվեց՝ շնորհիվ այն կազմակերպության, որն իմ կողմից ստեղծվեց 1958 թվականին՝ Էլ Մորիայի և մյուս Վեհապետների ղեկավարությամբ:

Եվ այն զոհողությունները, որոնք հարկ եղավ անել, արդարացվեցին, քանի որ շատ անհատների հաջողվեց իրենց գիտակցության զարգացման գործում մեծ նվաճումների հասնել: Իսկ այդ զարգացումը շարունակվում է, և մենք հնարավորություն ունենք շարունակելու մեր ուսուցումն այն ամենով, ինչ տեղի է ունենում մեր շուրջը, այդ թվում նաև այն մարդկանց համար, ովքեր մտնում են Սամմիթ Լայթհաուզ կազմակերպության մեջ, կամ էլ արդեն դուրս են եկել այնտեղից:

Ինչ էլ որ տեղի ունենա, պաշտելիներս, Աստված բոլոր հանգամանքներն այնպես շուռ կտա, որ ձեր հոգին ստանա լավագույն դասը և աճելու ու զարգանալու լավագույն հնարավորությունը:

Արդ, հարկ չկա տխրելու: Անցյալը տրված է այն բանի համար, որպեսզի նրանից անհրաժեշտ դասեր քաղենք և առաջ ընթանանք՝ ուղու վրա երբեք կանգ չառնելով՝ բացի կարճատև հանգստի և տեղի ունեցող իրադարձությունների վերլուծության դեպքերից:

Ներկայումս ձևավորված իրադրության մեջ ոչ մի ցավալի բան չկա: Այո՛, ֆիզիկական ոլորտում ոչ ամեն ինչն է լավ երևում, բայց այն փորձը, որը ձեռք են բերել լուսակիրները, հիրավի, անգնահատելի է:

Ուստի խնդրում եմ, դադարե՛ք տրտնջալ: Եվ շարունակե՛ք Աստծո մեջ անընդհատ կատարելագործվելու և անխոնջ զարգանալու ձեր ուղին:

ԵՍ ԵՄ Լանելլոն՝ ձեզ հետ ձեր ուղու վրա

ՍԱՆԱՏ ԿՈՒՄԱՐԱ

17 մայիսի, 2005 թ.

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿՈՒԶԵՆԱՅԻ ՁԵՋ ՏԱԼ

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան՝ իմ դեսպանորդի միջոցով եկածը:

ԵՍ ԵՄ եկել, որ ոչ մեծ մի Ուսմունք տամ Աստծո, Վեհապետների, ձեր իսկ Բարձրագույն մասի հետ ձեր փոխհարաբերությունների վերաբերյալ: Լինելով կյանքի խորքում՝ օրվա ունայնության մեջ, երբեմն ձեզ համար դժվար է լինում աստվածային տոնայնության հետ համալարվելը, ունայնության և ձեզ շրջապատող աշխարհի թատերաբեմի հետևում այն հավերժականն ու անանցը նշմարելը, որը մշտապես գոյություն ունի, բայց թաքցված է ձեր աչքից: Դրա համար է այդքան կարևոր Աստծո հետ համալարվելը: Կարողացե՛ք դիտել ձեր շուրջը տեղի ունեցող իրադարձությունները, ինչպես էկրանի միջով, կարծես գտնվում եք թատրոնում, իսկ ձեր շրջապատի մարդիկ դերասաններ են:

Եվ եթե խորանաք ձեր կյանքի իմաստի մեջ, ապա իրականում դուք եկել եք այդ աշխարհը, որպեսզի խաղաք որոշակի դերեր: Կյանքի ընթացքում ձեր դերերը կարող են փոփոխություններ կրել: Հնարավոր է նույնիսկ, որ միևնույն օրվա ընթացքում տարբեր դերեր խաղաք: Բայց խաղի

զգացողությունը ձեզ երբեք չպետք է լքի: Որովհետև Աստված ստեղծել է այս աշխարհը՝ որպես մի վիթխարի բեմ, որի վրա դուք կարող եք խաղալ ձեր դերերը և միաժամանակ ուսում ստանալ:

Եթե դուք կարողանաք երկար ժամանակով ձեր գիտակցության մեջ պահել այդ բեմի պատկերը, որի վրա խաղում եք ձեր դերերը, ապա շուտով կկարողանաք հասկանալ, թե ով է այդ հոյակերտ թատրոնի Բեմադրիչը: Իսկ այդ Բեմադրիչը խնդիր չի դրել ստիպելու ձեզ խաղալ նախօրոք գրված սցենարով: Ո՛չ, Նրա ընդհանուր մտահղացման սահմաններում դուք հնարավորություն ունեք դրսևորելու սեփական ստեղծագործական գործունեությունը: Դուք կարող եք հանձն առնել նոր դերեր, կամ փոխել այն դերերը, որոնք կատարում էիք նախկինում:

Եվ կգա պահը, երբ ձեզ կձանձրացնի սեփական իմպրովիզացիան, և դուք ուղղակիորեն կդիմեք Ռեժիսորին ու կմտնեք նրա հետ ստեղծագործական հարաբերությունների մեջ: Դուք կփորձեք հասկանալ Նրա մտահղացումը, և որքան խորն ըմբռնեք Արարչի մտահղացումը, այնքան ձեր գործողություններն ավելի շատ կհամապատասխանեն Նրա մտահղացմանը:

Եվ ձեզ համար ձանձրալի կլինի խաղալ այն դերերը, որոնք այդքան հաճույքով դուք նախկինում խաղում էիք, որովհետև ձեզ կդյութի և ձեր ողջ ուշադրությունը կգրավի ձեր առջև բացված մտահղացման այն պատկերը, որն արարված է այս տիեզերքի համար: Եվ որքան խորը դուք կկլանվեք այդ մտահղացմամբ, այնքան ավելի ու ավելի կարևոր դերեր կխաղաք:

Աշխատեցե՛ք ձեր կյանքում դուրս չգալ խաղի սահմաններից: Չափազանց լուրջ մի՛ ընդունեք այն ամենը, ինչը շրջապատում է ձեզ: Միշտ հիշեք, որ ձեզ շրջապատող պատրանքը ժամանակավոր է և ստեղծված է այնքան ժամանակի համար, քանի դեռ ձեր գիտակցությունն ունակ չի լինի հայացք նետելու պատրանքից այն կողմ և նրա հետևում նշմարելու Աստծո իրական Աշխարհն ու իրական Կյանքը:

Ձեր ներքին վիճակով են որոշվում կյանքի այն իրադրությունները, որոնցում գտնվում եք: Եվ քանի դեռ ձեզ շրջապատող պատրանքն ընդունում եք որպես իրականություն, չեք կարող հրաժեշտ տալ այդ պատրանքին: Հիշեցե՛ք, որ այս աշխարհում ամեն ինչ իրար կողմ է ձգվում՝ ըստ թրթռանքի: Եվ, փաստորեն, ձեր գիտակցությամբ դուք մագնիսացնում եք այն իրադրությունները, որոնցում հայտնվում եք կյանքի ընթացքում: Սակայն ձեր գիտակցության մեջ պատրանքից ազատվելը բավականաչափ դժվար կլինի: Ի վերջո դրա համար կպահանջվի որոշակի ժամանակ: Բանն այն է, որ ձեր գիտակցության մեջ պարունակվում են այն իրադրությունների էներգետիկական գրառումները, որոնցում դուք Աստծո Կամքին համապատասխան չեք վարվել: Եվ այդ գրառումները միայն մի մարմնավորման ընթացքում չէ, որ կուտակվել են այնտեղ: Ըստ այդմ՝ այնքան ժամանակ, քանի դեռ այդ գրառումները չեն վերափոխվել՝ ըստ աստվածային չափորոշիչների՝ ձեր կենսահոսքի համար Աստծո Մտահղացմամբ նախատեսվածին համապատասխան, դուք կընկնեք կյանքի այնպիսի իրադրությունների մեջ, որոնք ձեզ կընձեռեն լավագույն հնարավորություններ, որպեսզի վերամշակեք ձեր բացասական գրառումները կամ կարման:

Այս տեզերքին վերաբերող կարմայի օրենքների և Աստծո Օրենքների պարզ իմացությունը մեծ չափով կրճատում է ձեր երկրային ուղին: Սակայն մարդկության մեծագույն մասը գերադասում է ուսումնասիրել այլ կարգի տեղեկատվության մեծ զանգված և զուտ մարդկային օրենքները: Այլ կերպ ասած՝ մարդկությունն այնքան է կլանվել իր խաղով, որ դադարել է գիտակցել, որ դա ընդամենը խաղ է: Մենք գալիս ենք նորից ու նորից, որ հիշեցնենք իրական աշխարհի մասին, ձեր առաքելության մասին, ինչպես և ձեր ուղու մասին: Քչերն են, որ ունակ են կտրվելու պատրանքից և ուշադրություն դարձնելու մեր խոսքերին ու մեր Ուսմունքին:

Սակայն մենք ոչ մի տեղ չենք շտապում: Մարդկությունը ժամանակի պաշար ունի իր զարգացման համար: Եվ վաղ թե ուշ բոլորը կավարտեն երկրային դպրոցը: Համենայն դեպս՝ ձեզնից նրանք, ովքեր ընդունակ կլինեն հետագա ուսուցման համար:

Եվ եթե չլիներ տիեզերական բոլորապտույտների հերթագայումն ու այդ բոլորապտույտներին հետևելու անհրաժեշտությունը, մենք ձեզ նեղություն չէինք տա այս ուղերձների ընթերցման գործով և ձեզ չէինք շեղի ձեր պատրանքներից:

Պատկերացրեք դերասանների, որոնք այնպես են մտել դերի մեջ, որ շարունակում են խաղալ, թեև բեմադրությունն արդեն ավարտված է: Ահա մարդկությունն այժմ հիշեցնում է այդպիսի դերասանների:

Որպեսզի ինչ-որ բան սովորեք, ձեզ անհրաժեշտ է պահպանել մանկան գիտակցության վիճակը՝ խաղային վիճակը: Բայց դուք չպետք է թույլ տաք պատրանքին, որ ամբողջությամբ կլանի ձեր գիտակցությունը նույնիսկ այն ժամանակ, երբ խորասուզված եք կյանքի հորձանուտում:

Ահա այն հանձնարարականները, որոնք կուզենայի ձեզ տալ:

Համաձայն տիեզերական բոլորապտույտների օրենքի՝ մոտակա ժամանակում ձեր գիտակցությունը պետք է կրի նշանակալի փոփոխություններ: Եվ դուք, ամենայն հավանականությամբ, արդեն զգում եք այդ փոփոխությունները: Դրանք հնարավոր չէ չնկատել: Բարձրանում են Երկրի թրթռումները: Եվ ձեզնից նրանք, ում գիտակցությունը պատրաստ չէ անցնելու էվոլյուցիոն զարգացան նոր փուլին, իրենք իրենց զգում են ո՛չ իրենց ամանում: Նրանք փորձում են արհեստականորեն իջեցնել իրենց թրթիռները՝ օգտագոր-

ծելով այն միջոցները, որոնք նախկինում իրենց հաճույք էին պատճառում: Իր գոյության ընթացքում մարդկությունը ձեռք է բերել միջոցների մի ողջ զինանոց, որով ուղեփակում է բարձրագույն ունակությունները: Դրանք են ալկոհոլը, թմրանյութերը, ծխախոտը, սեքսը, մոլախաղերը:

Սակայն այդ միջոցներն օգտագործել շարունակելն այլևս ձեզ չի բավարարի:

Աստվածային կենարար, բարձր թրթռանքները, որոնք աստիճանաբար գալիս են Երկիր, ավելի ու ավելի շատ կազդեն մարդկանց վրա, և թրթիռների իջեցումն ավելի ու ավելի շատ դուրս կմղի ձեզ ընդհանուր թրթռանքի խորապատկերից: Դուք ստիպված կլինեք հրաժարվելու այն ամենից, ինչը չի համապատասխանում Աստծո Մտահղացմանը: Իհարկե, թրթիռների բարձրացման գործընթացն աստիճանական բնույթ ունի: Եվ ակնթարթորեն ազատվել հին սովորություններից մարդկությունը չի կարող: Բայց յուրաքանչյուր ոք, ով իր ներսում ներքին մղում ու ցանկություն է զգում կտրվելու հին սովորություններից ու կապվածություններից, կստանա մեր օգնությունն ու օժանդակությունը: Եվ դուք կզարմանաք, թե որքան հեշտ է ձեզ հաջողվում ազատվել ձեր սովորություններից:

Նամակ գրեք ինձ կամ ցանկացած այլ Վեհապետի, որի հետ դուք առանձնահատուկ հարազատություն եք զգում: Թվարկեք բոլոր այն սովորություններն ու կապվածությունները, որոնցից կուզենայիք ազատվել:

Խնդրեք պահապան հրեշտակներին նամակը հասցնել ըստ հասցեի, որից հետո վառեք այն:

Այդ պահից սկսած ձեր պարտականությունների մեջ կմտնի ամեն օր պահպանել վնասակար սովորություններից և կապվածություններից ազատվելու ձեր մտադրությունը:

Դուք կարող եք կազմել Վեհապետներին ուղղված ձեր նամակի պատճենը և ամենօրյա աղոթքի ծեսից առաջ կարդալ ձեր խնդրանքը:

Կանցնի մի քանի ամիս, և դուք կազատվեք ձեր այդ սովորություններից և կապվածություններից: Անհրաժեշտ է միայն, պաշտելիներ, ձեր ուժգին ցանկության առկայությունը: Եթե դուք ծանրաբեռնված եք չափից ավելի շատ սովորություններով, ապա կարող եք խնդրանքով դիմել, որպեսզի ազատվեք սկզբում դրանցից մեկից, հետո մյուսից, մինչև որ կազատվեք բոլոր սովորություններից:

Մի՛ մոռացեք, որ, վնասակար սովորություններից բացի, դուք ունեք նաև գիտակցության կայուն վիճակներ, որոնք խանգարում են ձեզ՝ յուրացնելու աստվածային թրթռանքները: Դա կարող է լինել վիատությունը, ինքնախղճահարությունը, մեղադրումը, նախանձը և այլն: Եվ դուք կարող եք ցանկություն հայտնել, որպեսզի ազատվեք նաև ձեր զարգացումն արգելակող ներքին էներգիաներից ու պատնեշներից:

Ամեն ինչ կարելի է փոխել, պաշտելիներ: Եվ Երկինքը պատրաստ է դրա համար ցուցաբերելու ամբողջ օգնությունը: Բայց դուք պետք է կատարեք առաջին քայլը և ցանկություն դրսևորեք ազատվելու ձեր թերություններից:

Եվ այսպես, դուք նախ և առաջ գիտակցում եք, որ ձեր ներսում առկա է որևէ բացասական հատկանիշ կամ վնասակար սովորություն: Այնուհետև ցանկություն եք հայտնում ազատվելու այդ թերությունից, որը խանգարում է ձեր առաջընթացին:

Դրանից հետո պահպանում եք այդ թերությունից ազատվելու մտադրությունն այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է, որպեզի ձեր աուրայում փոխակերպության ենթարկվեն այն էներգիաները, որոնք նպաստում են այդ թերության դրսևորմանը:

Ես ցանկանում եմ ձեզ հաջողություն մաղթել՝ ինքներդ ձեզ և ձեր թերությունների վրա տարվող աշխատանքում:

Սակայն, խնդրում եմ, ձեր մեջ չափից դուրս շատ թերություններ մի՛ փնտրեք: Դրանով դուք ավելի կաճեցնեք ձեր թերությունները:

Եթե ձեր ուշադրությունը մշտապես կենտրոնացնեք հրաշալի բաների վրա, այն է՝ բնություն, երաժշտություն, արվեստ, և խուսափեք այն ամենից, ինչն անկատար է, ապա բացասական էներգիաների փոխարինումը տեղի կունենա բնականորեն և առանց ձեր կողմից նշանակալի ջանքերի կիրառման:

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան

ԱՄԻՏԱԲՀԱ ԲՈՒԴԴԱ

18 մայիսի, 2005 թ.

ՈՒՍՄՈՒՆՔ ՆԵՐԽՈԿՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԵՍ ԵՄ Ամիտաբհան՝ այս դեսպանորդի միջոցով ձեզ այցի եկածը:

Արևմուտքի մարդկանցից շատերն իմ մասին չեն լսել: Ես արևելքում հայտնի եմ՝ որպես հինգ Դհիանի Բուդդաներից մեկը:

Իմ կոչումն է ծառայել հինգ գաղտնի ճառագայթներից մեկին: Դուք կարող եք կանչել ինձ, եթե ձեզ տիրում են մարդկային կրքերը: Ցանկացած մարդկային կիրք կարող է հաղթահարվել: Եվ դուք մարմնավորվում եք այն բանի համար, որպեսզի հաղթահարեք ձեր կրքերը, ազատվեք կրքերից:

Որպես կանոն, բոլոր կրքերը կապված են ձեր սեռական էներգիայի չարաշահման հետ: Եվ իմ ճառագայթի բոլոր աղավաղումները կապված են կամ ձեր ցանկությունների չբավարարման, կամ ավելորդ ցանկությունների հետ:

Իմ չակրան գտնվում է ողնաշարի հիմնամասի չակրայի և հոգու նստավայրի չակրայի միջև: Եվ այդ չակրան կապված է ձեր բարձրագույն Ես-Քրիստոսի հետ:

Ես ուսուցանում եմ ներխոկման գործառությունը, որով դուք կարող եք ազատվել ձեր մարդկային ցանկություններից ու կրքերից:

Ըստ այդմ՝ ես կհամարեմ, որ այսօրվա զրույցի խնդիրը լուծված է, եթե դուք յուրացնեք ներխոկումային գործառության նշանակությունը և որոշում կայացնեք իրականացնել այդ գործառությունը ձեր կյանքում:

Ցանկացած ներխոկման խնդիրն ու նպատակն է հասնել չմտածելու վիճակին՝ մտածողության լիակատար հանգստին:

Երբ ձեզ հաջողվում է հանդարտեցնել ձեր մտածողությունը, ապա դուք ձեր ներքին զգացմունքները բերում եք ներդաշնակության վիճակի: Դուք հավասարակշռում եք ձեր ներքին էությունը և հանդարտեցնում ձեր ցանկությունները:

Քանի դեռ ձեր գիտակցությունը զբաղված է ձեզ շրջապատող ֆիզիկական աշխարհի առարկաներով, դուք չեք կարող ձեր գիտակցությունը վեր հանել այնպիսի բարձրության վրա, որտեղից կարող եք անցնել ուրիշ՝ իրական աշխարհ և մնալ նրանում:

Ամեն մի ներխոկումային գործառություն ուղղված է այն բանին, որ հասնեք ձեր գիտակցության այնպիսի մակարդակի, որը ձեզ թույլ է տալիս դուրս գալ ձեր աշխարհի սահմաններից:

Երբ դուք ձեռք եք բերում ներխոկման ունակություն, ապա ձեզ մատչելի են դառնում Բարձրագույն աշխարհների էներգիաներն ու գիտելիքները:

Ներխոկումների բնագավառում ձեզնից յուրաքանչյուրի ձեռք բերած նվաճումները կարող են իրարից տարբերվել: Դուք կարող եք հասնել տարբեր ոլորտների և Բարձրագույն աշխարհների մասին կազմել տարբեր պատկերացումներ: Սակայն ձեր գործառության մեջ հիմնականը կլինի ձեր գիտակցության վրա նուրբ աշխարհի թողած ազդեցությունը: Դա տեղի է ունենում ձեր արտաքին գիտակցության համար աննկատելի կերպով: Դուք պարզապես հնարավորություն եք ստանում լինելու ավելի բարձր թրթռանքներով աշխարհներում և սնուցվում եք այդ աշխարհների էներգիաներով: Բարձրագույն աշխարհների բարձր թրթռանքների ազդեցությամբ ձեր գիտակցությունը սահուն կերպով փոխվում է: Ձեզ պետք չէ իմանալ այն մեխանիզմը, թե ինչպես է դա տեղի ունենում:

Ձեր գիտակցության վրա Բարձրագույն աշխարհների էներգիաների ազդեցությունը կարելի է համեմատել ձեր մաշկի վրա արևի թողած ազդեցության հետ: Դուք պարզապես պառկում եք արևի տակ, և ձեր մաշկը դառնում է հարթ ու արևառված:

Ճիշտ նույն կերպ նուրբ էներգիաների ազդեցությամբ ձեր գիտակցությունը հարթվում է, զրկվում իր թերություններից ու նրբանում այնպես, որ ունակ դառնա նոր տեղեկատվության ընկալմանը: Ձեր գիտակցությունն ընդլայնվում է, և վերանում են այն արգելապատնեշները, որոնք նախկինում խանգարում էին ձեզ՝ ընկալելու ակնհայտ ճշմարտությունները:

Իհարկե, ներխոկումային գործառությունը պահանջում է զգալի ժամանակ և փորձառու դաստիարակի առկայություն:

Արևելյան շատ ուսուցիչներ, ովքեր տիրապետել են ներխոկումային գործառությանը, աշակերտներ են հավաքագրում և ուսուցանում այն հնարքները, որոնց իրենք տիրապետում են:

Շատ տարիներ են պահանջվում այդ գործառությանը տիրապետելու համար: Սակայն դա ամենակարճ ճանապարհն է, որը կարող է հանգեցնել ձեր գիտակցության ընդլայնմանը, և ինձ հայտնի չէ մի որևէ ուրիշ ուղի, որը լինի նույնքան արդյունավետ:

Պատմականորեն այնպես է ստացվել, որ մարդկության արևմտյան հատվածին մատչելի չի դարձել ներխոկումային գործառությունը: Արևմուտքում ավելի շատ շեշտը դրվում է աղոթքի վրա:

Սակայն հատկապես լավագույն աղոթքային գործառությունները բերում են հենց նրան, որ մարդն անջատում է իր արտաքին գիտակցությունը, բարձրացնում է իր թրթիռները և ուղղակի կապի մեջ մտնում բարձրագույն ոլորտների հետ:

Այդ ընթացքում տեղի է ունենում էներգիայի անմիջական փոխանակում ձեր իսկ բարձրագույն մասի և Բարձրագույն աշխարհների հետ:

Սակայն աղոթքը, ծանրաբեռնված լինելով բառերով, հաճախ ձեր մտածողությանը թույլ չի տալիս կտրվել ձեր շրջապատի աշխարհից:

Կա նաև կարճ աղոթքների բազմակի կրկնման գործառությունը: Չմտածելու և ավտոմատիզմի հասցված աղոթքների կրկնությունը նույնպիսի ազդեցություն ունի, ինչպիսին ունի մանտրաների ընթերցման գործառությունը: Այդպիսի գործառությունն ինքնին շատ արժեքավոր է: Բայց այն պետք է դիտարկել որպես ներխոկման սոսկ նախապատրաստական փուլ:

Ձեր ներխոկումային վարժությունների ընթացքում ինչո՞ւ է անհրաժեշտ, որ ձեր կողքին ունենաք հմուտ դաստիարակ կամ ուսուցիչ:

Դուք գիտեք, որ անտեսանելի աշխարհն ունի թրթռանքի տարբեր հաճախականություններ: Այն շերտավոր թխվածքի նման բաժանված է շերտերի: Եվ վտանգն այն է, որ դուք կարող եք ընկնել ոչ շատ բարձր էներգիաների ազդեցության տակ և կապի մեջ մտնել ոչ բարյացակամ էակների հետ: Իսկ այդ էակները կարող են ձեզ ուսուցանել ոչ ամենալավ բաները և սնուցել ձեզ ոչ լավագույն էներգիաներով:

Ամեն ինչ կախված է սկզբնական, արդեն նվաճված գիտակցության մակարդակից: Եթե դուք մուտք եք գործում ներխոկման վիճակի մեջ շատ լավ, հավասարակշիռ վիճակով՝ լի աստվածայինով և համալարված աստվածային տոնայնության հետ, ապա դուք, ամենայն հավանականությամբ, կընկնեք բարձրագույն թրթիռների և մաքուր էներգիաների ազդեցության ոլորտը:

Իսկ եթե ձեռնամուխ լինեք ներխոկման՝ լցված եսասիրական ցանկություններով ու հակումներով, ապա դուք, ամենայն հավանականությամբ, այդ ներխոկման ընթացքում միայն ձեր բացասական գծերի ուժեղացումը կստանաք:

Վերջին հաշվով, ամեն ինչ որոշում է այն, թե որքանով եք դուք ունակ ներխոկումից առաջ հաղթահարելու ու հնազանդ դարձնելու ձեր էգոն:

Ըստ այդմ՝ ցանկացած ներխոկումային գործառություն, ինչպես ձեր աշխարհում ամեն ինչ, կրում է երկակի բնույթ, և ձեր ստացած արդյունքն ամբողջովին որոշվում է ձեր շարժառիթներով ու ձեր ներքին մղումներով:

Եթե դուք ձեռնամուխ լինեք ներխոկման, որպեսզի տիրապետեք այն հնարքներին, որոնք թույլ են տալիս վերահսկել մարդկանց կամ որպեսզի ձեռք բերեք այնպիսի ունակություններ, որոնք թույլ կտան ձեզ արտոնյալ դիրք գրավել ձեր աշխարհում, ապա ձեր ներխոկման ընթացքում դուք կարմա կստեղծեք: Քանզի կօգտագործեք Աստծո էներգիան ձեր էգոյի փառաբանման համար:

Ցանկացած ներխոկումային գործառության պետք է ձեռնամուխ լինել միայն Աստծո Կամքին լիովին հնազանդվելու և Նրա զորության նկատմամբ ակնածանքի վիճակում:

Միայն այն դեպքում, երբ մաքուր են ձեր շարժառիթներն ու ցանկությունները, դուք կկարողանաք վեր հասել ձեր գիտակցությունն այնպիսի բարձր թրթիռների աստիճանի, որ ձեզ համար մատչելի դառնան Աստծո այն կատարյալ էներգիաները, որոնք ձեզ կվերակերտեն որպես նորացված էությամբ Աստվածամարդ:

Եվ այդ դեպքում, որքան շատ ժամանակ դուք գտնվեք ներխոկման մեջ, այնքան ձեր թրթիռներն ավելի ու ավելի շատ կմերձենան կատարյալ աստվածային կերպերին:

Նման դեպքում մի՛ վախեցեք ձեր իրականությունից չափազանց շատ կտրվելուց: Քանզի, հենց որ դուրս գաք ներխոկման վիճակից, ձեր գիտակցությունն արագընթաց վերելակի պես կհայտնվի ձեր պլանում: Որոշ ժամանակ անց դուք արդեն ունակ կլինեք հասկանալու, թե որտեղ եք գտնվում:

Սկզբում ձեզ համար դժվար կլինի թրթիռների այդպիսի փոփոխությանը դիմանալը: Դուք լրիվ չափով ձեզ վրա կզգաք սուզվելու այդ վիճակը: Նախ՝ դուք դեն եք նետում ձեր բոլոր մտքերն ու զգացմունքները և սուզվում բարձրագույն իրականության մեջ: Այնուհետև՝ աստիճանաբար այդ իրականությունից վերադառնում եք ձեր աշխարհ՝ կրկին պարուրվելով ձեր երկրային մտքերով ու զգացմունքներով:

Նմանատիպ գործառությունը թույլ կտա ձեզ մշտապես գիտակցել միաժամանակ երկու աշխարհներում ձեր գտնվելը: Ինչպես ցանկացած այլ գործառություն, ներխոկումային գործառու-

թյունը նույնպես պահանջում է պարապմունքների մշտականություն և կանոնավորություն: Կլիներ իդեալական, եթե այդ գործառությանն ամեն օր հատկացնեիք 1,5-2 ժամ:

Սակայն եթե ֆիզիկական աշխարհում ձեր գտնվելու պայմանները ձեզ այդ թույլ չեն տալիս, ապա կարող եք շաբաթվա մեջ մեկ անգամ բավարարվել պարապմունք անցկացնելով: Սակայն պարապմունքների կանոնավորությունն ու մղվածությունն անհրաժեշտ պայման են ձեզ համար:

Ես գիտեմ, որ ձեզնից շատերն օրվա մեջ մեկ ժամ և ավելի տրամադրում են աղոթքներին: Գուցե իմաստ ունի աղոթքին հատկացված ժամանակի մի մասը հատկացնել ներխոկումային գործառությանը: Ասենք՝ 15-20 րոպե:

Ձեր Բարձրագույն Ես-ը միշտ գիտի, թե տվյալ պահին ձեր հոգու զարգացման համար ինչն է առավել կարևոր և անհրաժեշտ: Ուստի ականջալուր եղեք ձեր ներքին զգացողություններին: Որպեսզի այնպես չստացվի, որ դուք ձեզ զրկեք ձեզ այդքան անհրաժեշտ աղոթքային գործառությունից՝ ներքին սահմանափակումների պատճառով ունակ չլինելով ներխոկումային որակյալ գործառության:

Այսօր ես շոշափեցի շատ կարևոր հարցեր՝ կապված ներխոկումային գործառության հետ: Եվ ես ուրախ կլինեմ, եթե ձեզնից որևէ մեկին իմ խրատներն օգտակար լինեն:

Իրականում կան շատ մարդիկ, որոնք այժմ մարմնավորվել են արևմուտքում, բայց անցյալում բազմիցս մարմնավորվել են արևելքում, որոնց ընթացքում արդեն լիովին տիրապետել են ներխոկումային գործառությանը: Նման դեպքում ձեզ ընդամենը հարկավոր է մի քիչ շարժել ձեր գիտակցությունը, որպեսզի հիշեք այն հմտությունները, որոնք ձեռք եք բերել անցյալում: Ահա մեծ մասամբ հենց այդ մարդկանց է, որ ես դիմեցի այսօր:

ԵՍ ԵՄ Ամիտաբհան

ՎԵՀԱՊԵՏ ԿՈՒԹՀՈՒՄԻ

19 մայիսի, 2005 թ.

ՁԱՆԱՑԵՔ ՕՐՎԱ ՄԵԾ ՄԱՍԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՊԱՀՊԱՆԵԼ ՆԵՐՔԻՆ ՀԱՆԳՍՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿ

ԵՍ ԵՄ Կութհումին՝ նորից ձեզ այցի եկածը: Այսօր եկել եմ, որպեսզի ոչ մեծ մի Ուսմունք տամ, որը, հնարավոր է, ձեզ անսպասելի կթվա, սակայն ցանկալի է, որ դուք ուշադրությամբ ծանոթանաք այն ամենին, ինչն անհրաժեշտ է, որ ես տվյալ փուլում հասցնեմ ձեր գիտակցությանը:

Գիտեք արդյոք, որ երկրաշարժի և դրան հետևած ցունամիի տեսքով անցյալ տարվա վերջին տեղի ունեցած իրադարձությունն ամբողջովին պայմանավորված էր մարդկային գիտակցության անկատարությամբ:

Մարդկությունը զարմանալի համառությամբ շարունակում է բացասական էներգիաների հրեշավոր կուտակումներ առաջացնել, որոնք թանձր օղակով շրջափակել են ողջ երկրագունդը: Եվ այդ էներգիան խոչընդոտում է նորացման էներգիայի ներթափանցումը: Այլ կերպ ասած՝ լարվածություն է առաջանում այն ուժերի միջև, որոնք ձգտում են պահպանել մոլորակի ներկայիս վիճակը, և այն ուժերի, որոնք ձգտում են նպաստել Երկիր մոլորակի էվոլյուցիոն պլանին:

Մի կողմից՝ դուք ականատես եք լինում մոլորակի թրթռումների անընդհատ ու անշեղ բարձրացմանը: Եվ մյուս կողմից՝ զանգվածային գիտակցության և այն հին կարծրատիպերի միջոցով որոնք պինդ նստած են մարդկանց գիտակցության մեջ, նախկինի պես ստեղծվում են բացասական էներգիայի կուտակումներ: Որտեղից է ծագում բացասական էներգիան:

Այս տիեզերքի ամբողջ էներգիան կենտրոնացված է միայն մեկ աղբյուրում: Եվ դա Աստծո էներգիան է: Այդ էներգիան ձեզ է հասնում բյուրեղյա լարով, և դուք ձեր ազատ կամքի օգնությամբ տնօրինում եք այն: Եվ եթե դուք այդ էներգիան վատնում եք ձեր բոլոր եսասիրական մղումների բավարարման կամ բացասական զգացմունքների ու հատկանիշների, վնասակար կայուն սովորությունների պահպանման համար, ապա դրանով քվեարկում եք հնի օգտին: Եվ ձեր էներգիան ուղղում եք այն բանին, որ նպաստեք այս մոլորակում բացասական էներգիակուտակների ամրակայմանը:

Ըստ այդմ՝ երբ փոփոխությունների դրական էներգիան բախվում է մարդկության ծնած բացասական էներգիային, ապա դա նման է դառնում հակադիր լիցքեր ունեցող երկու ամպերի հան-

դիպմանը: Գիտեք, թե նման դեպքում ինչ է տեղի ունենում: Ամպրոպ և կայծակ: Ահա նման մի բան է տեղի է ունենում Երկիր մոլորակի վրա: Երբ բախվում են տարբեր պոտենցիալ ունեցող էներգիաների երկու կուտակներ, ապա դրան հետևում են զանազան արհավիրքներ, տարերային աղետներ, փոթորիկներ: Ձեզ թվում է, թե տարերքը կույր է և անկառավարելի: Սակայն դա այնքան էլ այդպես չէ: Որպես կանոն, մեզ հաջողվում է դրսևորված բացասական էներգիայի կուտակները տեղայնացնել իրենց ձևավորման վայրերում: Ուստի տարերային աղետներից տուժում են հենց այն շրջանները, որոնք իրենց գիտակցությամբ նպաստել են տվյալ բացասական էներգակուտակների ձևավորմանը:

Ժամանակն է, պաշտելիներս, հրաժեշտ տալու այն տեսակետին, որ դուք կարող եք մեղանչել՝ օրվա մեծ մասի ընթացքում թույլ տալ կամայական անբարեկիրթ արարքներ, անաստվածահաճո մտքեր ու զգացմունքներ, իսկ հետո նստել ու աղոթել, որպեսզի փոխակերպության ենթարկեք ձեր ու ձեր մերձավորների ստեղծած կարման:

Անշուշտ, աղոթքների օգտակարությունն անկասկած է, անվիճելի ու անառարկելի: Աղոթքների օգտակարությունը քննարկման ենթակա չէ: Բայց տվյալ իրադրության պայմաններում աղոթելը քիչ է, պաշտելիներս:

Ի՞նչ իմաստ ունի սկզբում բացասական էներգակուտակներ առաջացնել, իսկ հետո դրանց դեմ պայքարել:

Հասել է ժամանակը, երբ դուք պետք է գիտակից ձևով մոտենաք այն ամենին, ինչ անում եք օրվա ընթացքում: Ցանկացած բացասական միտք պետք է արմատախիլ արվի ձեր գիտակցության միջից հենց սաղմնավորման պահին: Հեռու՛ պահեք ձեզ այն ամենից, ինչը նպաստում է ձեր գիտակցության մեջ բացասական մտքերի ու հույզերի պահպանմանը: Հատուկ ուշադրություն հատկացրեք ձեր զավակներին: Առանց հսկողության մի՛ թողեք նրանց օրվա մեծ մասի ընթացքում: Հիշե՛ք. այն բանից կախված, թե ինչպես կկարողանաք ուղղություն տալ նրանց, համայն տիեզերքի օրենքների վերաբերյալ ինչպիսի գիտելիքներ կտաք, համապատասխան պտուղներ էլ կքաղեք մի քանի տարի անց, երբ ձեր զավակները կհասունանան և իրենց վրա պատասխանատվություն ու ծառայություն կստանձնեն՝ ի բարօրություն Երկրի էվոլյուցիայի: Ձեզնից յուրաքանչյուրը պատասխանատու է մոլորակի ապագայի և այն բանի համար, թե մոտակա մի քանի ամիսների ընթացքում ինչպես կզարգանան իրադարձությունները:

Հիշե՛ք, որ այն լարվածությունը, որը լիցքաթափվեց Ասիայի հարավում անցյալ տարվա վերջին, նորից աճում է: Եվ, ըստ էության, ձեր յուրաքանչյուր բացասական գործողությամբ, յուրաքանչյուր բացասական մտքով ու հույզով դուք անխոնջ կերպով մոտեցնում եք նոր արհավիրք:

Ձանացե՛ք օրվա մեծ մասի ընթացքում պահպանել ներքին հանգստության և ներդաշնակության վիճակ: Մի՛ մոռացեք, որ ձեր շուրջն ուրիշ մարդիկ էլ են ապրում: Օրվա ընթացքում դուք ձեր աուրայով հպվում եք հազարավոր մարդկանց հետ, եթե ապրում եք խոշոր քաղաքում: Եվ երբ ձեզ հաջողվում է ձեր ներսում պահպանել ներդաշնակ վիճակ, ապա ձեր այդ վիճակով դուք տառացիորեն վարակում եք հազարավոր մարդկանց, որոնց հետ օրվա ընթացքում ձեր աուրայով շփման մեջ եք մտնում:

Եվ ճիշտ նույնպիսի արդյունք է դիտվում նաև այն դեպքում, երբ հանդիպում եք մարդու, որը նման է ամպրոպաբեր ամպի ու ման է գալիս, թե ում գլխին կոտրի իր չարությունը: Բայց այդ դեպքում ինքներդ եք այդ մարդուց վարակվում բացասական էներգիաներով:

Պաշտպանե՛ք ձեր ներաշխարհն ամեն տեսակի բացասական էներգիաների ներխուժումից: Հատուկ հոգածությո՛ւն դրսևորեք ձեր զավակների նկատմամբ:

Դուք կարող եք ասել, թե ձեզնից ոչինչ կախված չէ, և որ ամեն ինչում մեղավոր է ձեր կառավարությունը, որը հարկ եղած չափով հոգ չի տանում ձեր մասին, թույլ չի տալիս ձեզ արժանավայել կյանքով ապրել:

Թույլ տվեք ձեզ հետ չհամաձայնել: Այս աշխարհում ամեն ինչ իրար է ձգվում՝ ըստ թրթռանքի, և դուք ունեք հենց այն կառավարությունը, որը կարող է գոյատևել միայն շնորհիվ այն բանի, որ բնակչության մեծամասնությունը հնարավոր է համարում համակերպվել գործող կառավարության և նրա քաղաքականության հետ:

Դուք մշտապես էներգափոխանակության մեջ եք գտնվում հազարավոր մարդկանց հետ և, դրանով հանդերձ, նրանց հետ մշտապես կարմա եք փոխանակում: Ի՞նչ եք կարծում. դրսևորվո՞ւմ է արդյոք ընտանիքի կարմա, քաղաքի, երկրի, մոլորակային կարմա: Պատկերացրեք մի մարդու, ով լիակատար կերպով ազատվել է իր սեփական կարմայից: Ձեր կարծիքով, այնուհետև ի՞նչ տեղի կունենա այդ մարդու հետ: Նա կհամբարձվի՞ արդյոք:

Միանգամայն հնարավոր է. նման մարդը կարող է համբարձվել: Բայց համարձակվում եմ ձեզ վստահեցնել, որ նա, ով ազատվել է իր սեփական կարմայից, ձեռք է բերում բոլորովին նոր, ընդլայնված գիտակցություն: Նա իր գիտակցությամբ ելնում է մի այլ, ավելի բարձր մակարդակի վրա և հասկանում, որ միայնակ հնարավոր չէ փրկվել: Ամենայն ինչ Աստված է, և իր գիտակցության նոր մակարդակի վրա մարդն ավելի շատ է զգում ողջ կենդանականի միասնությունը: Եվ, ամենայն հավանականությամբ, նման մարդը կմնա մարմնավորման մեջ՝ անկախ այն բանից, թե այդ որոշման մասին իր արտաքին գիտակցությունը գիտի՞, թե՞ ոչ: Այդպիսի մարդն իր ընտրությամբ շարունակում է մնալ ձեր աշխարհում:

Ամեն օր նա իր աուրայի մեջ է ներքաշում իր շրջապատի մարդկանց բացասական էներգիաները և վերամշակում դրանք: Այդպիսի մարդը նման է սպունգի: Հենց որ նա հպման մեջ է մտնում մարդկանց աուրաների հետ, որոնք հագեցած են չափազանց մեծ քանակի բացասական էներգիայով, իր վրա է վերցնում այդ էներգիայի մի մասը և չեզոքացնում բացասական էներգիան: Տեղի է ունենում այն, ինչ դուք անվանում եք քաղաքի, երկրի, մոլորակի կարմայի փոխակերպություն:

Ըստ այդմ, պաշտելիներս, շատ բան կախված է ձեզնից յուրաքանչյուրից, ձեր ներդաշնակությունն ու հավասարակշռությունը պահպանելու կարողությունից՝ անկախ ցանկացած արտաքին պայմաններից: Եվ եթե դուք զգում եք վհատություն, ուրախության բացակայություն, անառիթ թախիծ, ապա, ամենայն հավանականությամբ, դուք ընկել եք բացասական էներգիայի խոշոր կուտակի ազդեցության տակ: Եվ դրանով իսկ այնպես եք ծանրաբեռնել ձեր աուրան, որ ձեզ հարկ կլինի որոշ ժամանակով ներանձնանալ կամ առանձնանալ բնության գրկում, որպեսզի վերականգնեք ներքին հանգստությունն ու հավասարակշռությունը:

Սովորեք ճանաչել ձեր ներքին վիճակն ու այն պատճառները, որոնք հանգեցնում են ձեր գիտակցության աններդաշնակ վիճակին:

Դուք ծառայության մեջ եք լինում անընդհատ՝ օրվա մեջ 24 ժամ, երբ հասնում եք ձեր գիտակցության որոշակի մակարդակի, որը թույլ է տալիս ձեզ վրա վերցնել քաղաքի, երկրի, մոլորակի կարման և բեռնաթափել այն: Դա շատ կարևոր ծառայություն է, սիրելիներս: Ես տվեցի ձեզ այս-օրվա հանձնարարականներն այն ակնկալիքով, որ ձեզնից նրանց, ովքեր այդպիսի կարևոր ծառայություն են իրականացնում, բացատրեմ այդ ծառայության իրականացման մեխանիզմը:

Եվ եթե դուք արդեն գիտեք ձեր ծառայության մասին, ապա կկարողանաք ժամանակին միջոցներ ձեռնարկել, որ վերականգնեք ձեր թրթիռներն ու ձեր էներգիաները: Զգոնությամբ ունկնդրեք ձեր օրգանիզմին, և եթե ձեզ համակում է վհատությունը, ապա միջոց գտեք, որպեսզի վերականգնեք ձեր ներքին ներդաշնակությունն ու անդորրությունը: Մեկի համար դա ներխոկումը կլինի, մյուսի համար՝ զբոսանքը բնության գրկում, մի ուրիշի համար՝ մեղմ երժշտության ունկնդրումը կամ խաղը երեխաների հետ:

Խուսափեք երկար ժամանակով գիտակցության բացասական վիճակում գտնվելուց: Մարեք ձեր ներսում բոլոր բացասական թրթիռները, հենց որ դրանք հայտնվում են: Թույլ մի՛ տվեք, որ դրանք ամբողջությամբ տիրեն ձեր էությանը:

Եվ հիշեք, որ ծայրահեղ դեպքում հնարավորություն ունեք օգնություն հայցելու Համբարձյալ Դասերից: Եվ մենք մեր նվիրյալ սպասավորներին կցուցաբերենք ողջ այն օգնությունը, որ թույլ է տալիս Տիեզերական Օրենքը:

ԵՍ ԵՄ Կութհումին՝ ձեր եղբայրը

ՍԱՆԱՏ ԿՈՒՄԱՐԱ

20 մայիսի, 2005 թ.

ԵՍ ԿԼԻՆԵՄ ՁԵԶՆԻՑ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻ ՀԵՏ, ՔԱՆԻ ԴԵՌ ԲՈԼՈՐԴ ՏՈՒՆ ՉԵՔ ՎԵՐԱԴԱՐՁԵԼ

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան՝ իմ դեսպանորդի միջոցով նորից ձեզ այցի եկածը:

ԵՍ ԵՄ եկողը, որպեսզի ձեզ խրատեմ, ուսուցանեմ և ձեզ համար հասանելի դարձնեմ Աստծո Իրականությունը՝ մի այլ աշխարհ, որը գոյություն ունի ձեր աշխարհի հետ միաժամանակ և տարբերվում է ձեր աշխարհից միայն իր թրթռանքով:

Յուրաքանչյուր պահի, երբ դուք գտնվում եք ձեր աշխարհում, միաժամանակ կարող եք լինել նաև մեր աշխարհում: Եվ գոյություն ունի ձեր մի մասը, որը մշտապես գտնվում է Բարձրագույն աշխարհներում: Ձեր այդ մասը ֆիզիկական օկտավայում մարմնավորված լինելու ամբողջ ժամանակահատվածի ընթացքում պահպանում է կապն ու փոխազդեցությունը Բարձրագույն իրականության հետ:

Երբ վրա է հասնում տիեզերական ժամկետը, ձեր Բարձրագույն մասերը, զգեստավորվելով ավելի թանձր մարմիններով, սուզվում են մատերիայի մեջ:

Շրջապատող աշխարհի խտացմանը զուգընթաց ձեր Բարձրագույն և ստորագույն մասերի միջև կապն աստիճանաբար խախտվում է. սկզբում դառնում է հազիվ նշմարելի, ապա լրիվ անհետա-

նում է: Եվ երբ ձեր աշխարհի մատերիականությունը հասնում է իր բարձրագույն կետին, դուք կորցնում եք կապը ձեր Բարձրագույն մասի հետ:

Ըստ այդմ՝ բոլոր ճշմարիտ հոգևոր ուղեցույցները, որոնք գոյություն ունեն ձեր աշխարհում, ուղղված են այդ ներքին կապի վերականգնմանը: Հենց որ հիշում եք, թե ով եք իրականում, հենց որ հնարավորություն եք ստանում շփվելու ձեր իսկ Բարձրագույն մասի հետ, դուք ընդունակ եք դառնում, ըստ ձեր ցանկության, փոփոխելու ձեր թրթիռները:

Դուք շարունակում եք գտնվել ձեր ֆիզիկական աշխարհում, բայց և միաժամանակ ձեր գիտակցությունն այնքան է բարձրանում, որ որոշակի պահերի դուք ունակ եք դառնում տեղեկատվություն և գիտելիք ստանալու մեր աշխարհից:

Բոլոր ժամանակներում շատ կարկառուն գործիչներ օժտված են եղել ինքնակամ կերպով, բարձրացնելու իրենց թրթիռները և իրենց արթմնի գիտակցության վիճակում հայտնվելու վերին, եթերային օկտավաներում: Հենց այստեղից էին նրանք քաղում և շարունակում են քաղել իրենց ոգեշնչումը՝ արվեստի, ստեղծագործության իրենց նմուշները, գիտական իմացություններն ու գյուտերը:

Յուրաքանչյուր հայտնագործություն միշտ արվել է այնպիսի մարդու կողմից, որն այս կամ այն կերպ կարողացել է մուտք գործել մեր իրականություն:

Եվ այժմ աշխարհների փոխներթափանցման և ձեր գիտակցության կողմից մեր աշխարհը թափանցելու ունակությունները բազմակի կուժեղացվեն:

Դուք ստանում եք Սուրբ Հոգու շնորհներ և ձեռք եք բերում հիրավի կախարդական ընդունակություններ: Այդ ամենը ձեզ սպասվում է մոտ ապագայում: Միակ բանը, որ ձեզ արգելակում է, ձեր կապվածությունն է ֆիզիկական աշխարհի հետ, ինչպես նաև ձեր թերությունները:

Դուք պետք է ունակ դառնաք տարբերելու ձեր մեջ այն բաները, որոնք Աստծուց չեն, և հրաժարվեք դրանցից: Սկզբում դուք կկարողանաք շփվել մեզ հետ և ձեր Բարձրագույն մասի հետ՝ վարելով լրիվ մեկուսացված կյանք և հրաժարվելով ինչպես զանգվածային մշակույթի, այնպես էլ այդ մշակույթի մեջ խրված մարդկանց ազդեցությունից: Դա նման է ուղի հարթելուն, երբ ուղի հարթողները մագլցում են աստվածային գիտակցության լերկ ժայռերը: Եվ այդ ուղի հարթողների ջանքերն ու աշխատանքը, հիրավի, տիտանական են և պահանջում են բոլոր ուժերի, Աստծո կողմից տրված բոլոր կարողությունների ներդրում:

Ձեր ժամանակներում քչերին է հաջողվում բարձրանալ աստվածային գիտակցության գագաթը: Եվ ուղին այնքան դժվարին է, որ ամեն մի ակնթարթի հնարավոր է պոկվել ու չկարողանալ մնալ հասած բարձրության վրա:

Սակայն նրանց համար, ովքեր հետևում են ուղի հարթողներին, անհամեմատ ավելի հեշտ կլինի: Ես արդեն կանխատեսում եմ մոտակա ժամանակներում Երկրի տարբեր անկյուններում համայնքների առաջացում, որոնք կազմված կլինեն Քրիստոսի գիտակցության որոշակի մակարդակով օժտված մարդկանցից:

Այդ համայնքներն ապագա բնակավայրերի և մարդկային հասարակության ապագա կառույցների համար նախատիպեր և մատրիցաներ կդառնան: Համակցելով իրենց մեջ արտադրական պարտավորություններն ու հոգևոր ծառայությունը՝ այդ համայնքները լրիվ ինքնուրույն ու անկախ կլինեն շրջապատող աշխարհից:

Ես կանխատեսում եմ, որ Սուրբ Հոգու այդպիսի համայնքների ձևավորման վայրերում կհաստատվեն պետական, աշխարհիկ կառույցների բոլորովին նոր սկզբունքներ: Եվ այն տեղերում, որտեղ կգերակշռեն նմանատիպ համայնքները, պայմաններ կստեղծվեն Ոսկե դարի գալստյան համար:

Ես հուսով եմ, որ նմանատիպ համայնքներ կստեղծվեն նախ և առաջ Ռուսաստանի տարածքում: Որովհետև այդ երկիրն իր պատմական ավանդույթներով միշտ հակված է եղել դեպի համայնական տնտեսավարումը: Բարդությունն այն էր, որ որոշ ուժեր միշտ հմտորեն կարողացել են օգտվել այդ ազգային առանձնահատկությունից և նենգափոխել համայնական աշխատանքի նկատմամբ մարդկանց հակումն իրենց շահատենչ նպատակների համար:

Ես ուզում եմ նաև ձեր ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, որ չի կարող իդեալական համայնք լինել այնքան ժամանակ, քանի դեռ համայնական հասարակության ամեն մի անդամ չի հասել Քրիստոսի կեցության որոշակի մակարդակի և չի դադարել օգտագործել համայնական աշխատանքի ու արարման պտուղներն իր շահադիտական ու եսասիրական նպատակների համար:

Եվ վերստին ձեզնից յուրաքանչյուրի առջև առաջին պլանում հառնում է Աստծո մեջ կատարելագործվելու ձեր անձնական ձգտման հարցը՝ սեփական էգոյից հրաժարվելն ու չորս ստորին մարմինների մաքրության մասին հոգ տանելը:

Կա կարևոր մի պահ, որի վրա ուզում եմ սևեռել ձեր ուշադրությունը: Իրականում կա երկու ուղի, որոնք տանում են դեպի Աստծո մեջ կատարելագործում: Առաջինը կապված է առանձնացման ու աղոթքի հետ, և դա համեմատաբար հեշտ ուղի է: Կա և երկրորդ ուղին, երբ դուք աշխատում եք ձեզ վրա՝ առանց հեռանալու ձեր սովորական կյանքից:

Ուղիներից յուրաքանչյուրն ունի և դրական, և բացասական կողմեր: Եվ եթե ձեզ համար միակ արգելքը, որ սկսեք լրջորեն ձեզ վրա աշխատել, ձեր շրջապատն է, որում ձեր Ուղու ներկա փուլում գտնվում եք, և դուք ինքնաբերաբար հետ եք կանգնում լուրջ զբաղմունքից՝ պատճառաբանելով, որ

արտաքին պայմանները թույլ չեն տալիս դա անել, ապա ես ձեզ պետք է հիշեցնեմ, որ այն պայմանները, որոնցում գտնվում եք, հենց համապատասխանում են ձեր գիտակցության մակարդակին և ձեր կարմայի դրական ու բացասական մասերի հարաբերակցությանը:

Ըստ այդմ՝ ձեզնից յուրաքանչյուրի մեկնարկային պայմանները տարբեր են իրարից: Եվ դուք ստիպված եք հաղթահարելու ձեր արտաքին պայմանների ու կարմայական հանգամանքների ստեղծած անհարմարությունները:

Սակայն պետք է գիտակցեք, որ այս և նախորդ կյանքերում կատարած ձեր նախընտրանքներով ինքներդ եք վաստակել այն հանգամանքները, որոնցով շրջապատված եք ձեր կյանքում: Եվ անհամահունչ շրջապատի մասին ձեր տրտունջը պարզապես արդարացում է ձեր էգոյի համար, որպեսզի դուք ոչինչ չանեք: Իսկ շատերն իրենց արտաքին կյանքի հանգամանքների համար պարզապես իջնում են մինչև Աստծուն ու Վեհապետներին ուղղակի մեղադրելու մակարդակին: Ուստի ձեր Ուղու առաջին քայլը կլինի հնազանդվել այն հանգամանքներին, որոնցում սկսվում է ձեր Ուղին, և որոշում կայացնել ընթանալու այդ Ուղով, որը հետադարձ ճանապարհով ձեզ տանում է Աստծո մոտ՝ անկախ ձեր արտաքին կյանքի բոլոր հանգամանքներից:

Հավատացե՛ք ինձ, որ եթե ձեր Ուղու վրա դրսևորեք նպատակամղվածություն և վճռականություն, ապա դուք կստանաք ամբողջ անհրաժեշտ օգնությունը: Եվ ժամանակի ընթացքում կարմայի ցանկացած, նույնիսկ շատ ծանր սահմանափակումները ձեր կյանքի հանգամանքներում ավելի մեղմորեն կարտահայտվեն: Եվ ձեր գիտակցության փոփոխությանը զուգընթաց դուք կստանաք այն ամենը, ինչն անհրաժեշտ է ձեր հոգևոր առաջընթացի և Աստծո մեջ կատարելագործվելու համար:

Բոլոր արգելքներն ու սահմանափակումները ձեր մեջ են: Եվ բոլոր սահմանափակումները կապված են ձեր չորս ստորին մարմիններում բացասական էներգիայի կուտակված լինելու հետ:

Փորձեք պատկերացնել, որ ձեր ստորին չորս մարմինները մի ձեղնահարկ են, որտեղ մի քանի հարյուրամյակի ընթացքում կուտակվել են բոլոր ոչ պետքական իրերը: Ժամանակի ընթացքում այդ ձեղնահարկն այնքան է խառնշտորվել ու փոշեկոլոլ դարձել, որ պարզապես անհնարին է դարձել այնտեղ մուտք գործելը: Մարդկանց մեծամասնության համար ստորին չորս մարմինները հենց այդպիսի ձեղնահարկերի են նման: Ուստի ձեզ անհրաժեշտ է մի գեղեցիկ օր որոշում կայացնել և ցաք ու ցրիվ անել ձեր ձեղնահարկի կարմայական կուտակումները:

Իհարկե, դա ձեզ չի հաջողվի անել մեկ օրում, հնարավոր է՝ նույնիսկ մի քանի տարում: Բայց որքան շուտ որոշում կայացնեք և սկսեք գործել, այնքան շուտ կվերջացնեք մաքրազարդման կեղտոտ ու հոգնեցուցիչ աշխատանքը ձեր գիտակցության ու ենթագիտակցության մեջ, ուր նախանձելի համառությամբ դուք խցկել եք ձեր բոլոր հոգեբանական խնդիրները Երկրի վրա մարմնավորվելու ձեր ամբողջ ժամանակահատվածի ընթացքում:

Եվ, բնականաբար, երբ ձեր ենթագիտակցությունից մեկը մյուսի հետևից դուրս կլողան ձեր խնդիրները, ապա ստիպված կլինեք նշանակալից ջանքեր գործադրելու, որպեսզի հաղթահարեք այդ խնդիրները և ընդմիշտ հրաժեշտ տաք դրանց: Դա նման է այն բանին, որ դուք հին իրեր եք հանում ձեր ձեղնահարկից, և դրանք ցավագին հիշողություններ են արթնացնում ձեր մեջ՝ երբեմն անտանելի ցավ պատճառելով:

Սակայն ահա դուք լցվում եք վճռականությամբ և դեն եք նետում անպետք իրերը՝ դրա հետ մեկտեղ ազատվելով բացասական էներգիայի այն բաժնեմասից, որն առկա է ձեր մեջ:

Արդ, ես կուզենայի նախապես զգուշացնել նրանց, ովքեր պատրաստվում են հաճելի ժամանցի դեպի Տուն տանող Ուղու վրա: Չակնկալե՛ք հեշտ ճանապարհ: Պատրա՛ստ եղեք ցանկացած անակնկալի: Դուք դեռ չգիտեք, թե ինչ էներգիաներ գլուխ կբարձրացնեն ձեր կարմայի կուտակների տակից: Դուք կկատարեք արարքներ, որոնց համար չեք գտնի տրամաբանական բացատրություն: Կբախվեք մարդկանց, որոնց նկատմամբ կտածեք բուռն, ոչնչով չպատճառաբանված զգացմունքներ: Ձեզ հետ տարօրինակ բաներ կկատարվեն: Եվ դուք պետք է պատրաստ լինեք այդ ամենին:

Ձեր գիտակցության մեջ դուք պետք է միշտ հիշեք Աստծո մոտ վերադառնալու ձեր որոշման մասին, բարձրացնեք ձեր գիտակցությունը մինչև Բարձրագույն աշխարհների ըմբռնման աստիճանին: Նաև միշտ պետք է հիշեք, որ միայնակ չեք: Մենք ուշադիր հետևում ենք յուրաքանչյուրին, ով խիզախել է մագլցել աստվածային գիտակցության ժայռի վրա, և ի վերջո մենք միշտ ձեռք կմեկնենք ծայրահեղ իրադրության պահին: Երբ ձեր դիտավորությունները մաքուր են, դուք վախենալու ոչինչ չունեք:

Ձեր ձգտումների մաքրությունը ձեզ պարուրում է Լույսի անխոցելի պաշտպանությամբ:

Մեզնից յուրաքանչյուրը Երկրի վրա լինելու ընթացքում անցել է այդ նույն Ուղով: Ուղին փորձվա՛ծ է: Ուրեմն՝ պատրաստվեք և քաջաբար կանգնե՛ք Ուղու վրա:

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան,
կլինեմ ձեզնից յուրաքանչյուրի հետ,
քանի դեռ բոլորդ չեք վերադարձել Տուն

ՎԵՀԱՊԵՏ ԷԼ ՄՈՐԻԱ

21 մայիսի, 2005 թ.

ԴՈՒՔ ՊԵՏՔ Է ԳՈՐԾԵՔ, ԳՈՐԾԵՔ ԵՎ ԷԼԻ ԳՈՐԾԵՔ

ԵՍ ԵՄ Էլ Մորիան՝ իմ դեսպանորդի միջոցով եկածը:

Հանգամանքների բերումով՝ այսօր ես ստիպված եմ կարճ ուղերձ-խրատ տալ: Ընկալե՛ք այն՝ ամենայն ուշադրությամբ ու լրջությամբ:

Շարադրանքի սեղմությունը նպաստում է դյուրահասությանը:

Հրատապությունն ստեղծում է անհրաժեշտ լարվածություն:

Տարածությունը լարված է: Հոսանքներն՝ ուժեղացված: Լուրերը մեր աշխարհից ժամանակին են տրվում:

Եղե՛ք զգոն: Պատրաստվեցե՛ք գործողությունների:

Երկրային գործերի ընդհանուր անդորրը խաբուսիկ է: Սպասվում են փոփոխություններ, սպասվում են իրադարձություններ, որոնք կտպավորվեն իրենց թվացյալ դրամատիկությամբ ու անելանելիությամբ:

Սակայն վերացնում ենք անպետքն ու իր դարն ապրածը: Հոգում ենք նորի ու առաջավորի մասին:

Նրանք, ովքեր մեզ հետ են իրենց մղումներով ու իրենց ծառայությամբ, անհանգստանալու բան չունեն: Նրանք, ովքեր լկտիաբար են վերաբերվում Աստծո Մտահղացմանը և իրենց համարում են աստված, իրենց տեղը կդրվեն:

Չեմ ուզում ահաբեկել իմ ուղերձով: Ամեն ոք ստանում է այն, ինչին արժանի է, և յուրաքանչյուրը գիտե իր սրտում, թե որքանով են իր գործողությունները համապատասխանում Բարձրագույն Օրենքին:

Կա խիզախում Լույսի, երբ սպասավորներն իրենց ողջ էներգիան ուղղում են Ընդհանուր Բարօրությանը, Բարուն:

Կա խավարի խիզախում, երբ անհատը մարտահրավեր է նետում Լույսի ուժերին և անմիջապես չպատժվելու հանգամանքն ընկալում որպես լուսավոր ուժերի անզորություն իր լկտիության դեմ:

Անկախ այն բանից, թե նման հայհոյախոսները որևէ կրոնի շրջանակներում են, թե գերադասում են իրենց մութ գործերն անել աշխարհիկ կառավարիչների ստվերում, նրանց ժամկետն սպառված է, և մոտենում է վարձահատույց լինելու ժամանակը:

Հրեշտակները խստորեն գրառում են բոլոր հայհոյախոսություններն ու բոլոր անաստված գործերը: Այլ ուղի ընտրելու հնարավորությունը միշտ էլ առկա է: Միշտ հնարավորություն կա զղջալու և հնազանդորեն կրելու հասանելիք պատիժը:

Ամեն անգամ ասում ենք, և ամեն անգամ չեն հավատում, որ իրենց կվերաբերի: Մարդկային հիշողությունը կարճ է: Եվ, երբ գալիս է հաշիվը փակելու ժամանակը, զարմանում են. «Մի՞թե այդքան պարտքեր ունենք»:

Ըստ այդմ՝ նախքան պարտք անելը մտածե՛ք: Ժամանակը հոսում է անընդհատ ու անողոք: Աստծո էներգիայի հոսքն անկասելի է: Հնարավոր չէ կանգնեցնել և ժամանակը:

Ուստի լինելիության յուրաքանչյուր պահի մտորե՛ք ձեր ուշադրության ուղղության մասին: Ուր ուղղված է ձեր ուշադրությունը, այնտեղ էլ հոսում է ձեր էներգիան: Եվ եթե դուք մի պահ կանգ առնեք և անկողմնակալ կերպով խորհրդածեք, թե ինչի մասին էիք մտածում օրվա ընթացքում, ապա սարսափը կպատի ձեզ: Ձեր ուշադրության 90 տոկոսը դուք բևեռել էիք բաների, որոնք նույնիսկ արժանի չեն ձեր մեն մի հայացքին:

Մտքերի և հույզերի նկատմամբ հսկողությունն այժմ ելնում է առաջին պլան:

Հնար չկա հետաձգելու հատուցումը: Ձեր արարքների կարմայի վերադարձի ժամկետը կարճացված է: Դեռ չհասցրած ձեր մութ գործը անել՝ կստանաք հատուցումը: Եվ հարկ չի լինի որևէ մեկին հարց ուղղել. «Ինչի՞ համար, Տե՛ր Աստված»:

Աշխարհի դաժան պայմանները ստիպում են թույլ տալ կոշտ և արագ պատասխան գործողություններ:

Ավարտվել է երեխայության ժամանակաշրջանը: Եվ չի լինի արդեն այն հոգատար մայրիկը, որ իր վրա վերցնի ձեր հոգսի բեռը:

Արդեն հասուն եք, և հարկ կլինի պատասխան տալ ամեն մի արարքի, ամեն մտքի և գիտակցության մեջ թույլ տրված ամեն ինչի համար, ինչը չի համապատասխանում Աստծո Կամքին:

Նախքան նոր շինարարություն սկսելն անհրաժեշտ է մաքրել տարածքն ու շինհրապարակը:

Այդ է հիմա մեր հոգսը, և այդտեղ ենք ջանքեր գործադրում: Տեսե՛ք, զգո՛ն եղեք, հանկարծ Աստծո ցախավելի տակ չհայտնվեք...

Նախազգուշացնում եմ, որովհետև այս օրերին շատ բան ձեզնից է կախված: Նշանակություն ունի ոչ միայն ձեր վաստակը, այլ նաև երկկողմանի ջանքերի հարաբերակցությունը: Սպասելու ժամանակ չկա, երբ կարման փոխակերպության մեջ է: Ներկա ժամանակի առանձնահատկությունն

այն ամենի արագ վերադարձն է, ինչը կուտակված է: Չեք հասցնի աղոթք սկսել, արդեն կստեղծվի ձեր արագ արձագանքը պահանջող իրադրություն:

Միշտ հիշե՛ք. դուք թեստեր եք անցնում և կարմա եք բեռնաթափում՝ անկախ այն բանից, որ անսպասելի իրադրության մեջ կարող եք և դրսևորել ոչ ճիշտ արձագանք: Դուք բեռնաթափում եք կարման և թեստեր եք անցնում, երբ ճիշտ դասեր եք քաղում այն իրադրությունից, որին կյանքում բախվում եք:

Ես հետևում եմ իմ բոլոր խնամարկյալներին, ովքեր խնդրել են իմ հովանավորչությունն ու պաշտպանությունը: Բայց դա չի նշանակում, որ ես նրանց հեռու կպահեմ դժվարություններից ու անհաջողություններից: Աստված ամենամեծ փորձություններն առաքում է նրանց, ում հատկապես շատ է սիրում:

Քանզի միայն դժվարություններ հաղթահարելով է, որ դուք աճում եք, բազմապատկում ձեր ունակությունները, աճ ապրում գիտակցությամբ:

Կարևոր է ձեզ տալ այն խոչընդոտների ըմբռնումը, որոնք ձեզ հանդիպում են, և հարկ եղած պահին ձեզ հիշեցնել դրանց հաղթահարման կարևորության, անկոտրում կամքի, մղվածության և խիզախության մասին:

Իմ աշակերտների մեջ չկան նվնվացողներ ու ծույլեր: Կասեմ. «Հապճեպ առա՛ջ»: Եվ բոլոր իմ աշակերտները պատրաստ կլինեն:

Կարելի է ընթացքում գոտևորվել, և կարելի է ընթացքում կողմնորոշվել, թե ինչպես ճիշտ գործել: Ուստի զգո՛ն եղեք: Ակնկալում եմ ձեզնից շարժունություն, հենց որ կանչեմ:

Մի՛ սպասեք, որ կգամ ու կգոռամ ձեր ականջին: Այլ նայեք իմ պատկերին և կիմանաք, թե որն է անհետաձգելին, ինչը պետք է անել:

Դատարկ խոսակցությունների ժամանակ չկա: Ընթացիկ իրադրությունը գործողություններ է պահանջում: Ըստ այդմ՝ դուք պետք է գործեք, գործեք և էլի գործեք. օգտագործեք Երկրի վրա գտնվելու ձեր ամեն մի րոպեն:

Խորհեցե՛ք: Հազար տարի սպասել եք գործել սկսելու հնարավորությանը: Եվ ահա պահը հասել է: Հասել է գործելու ժամանակը: Ուստի մի՛ տրտնջացեք, թե չեք հասցրել նախապատրաստվել, թե ծակ տրեխներով եք և բոլոր իրերը դեռ չեք հավաքել խուրջինի մեջ:

Դե՛ն նետեք ձեր բոլոր իրերը: Ձեզ ոչինչ պետք չի գա, բացի ձեր ծառայելու ցանկությունից և սրտի կրակից:

Հոգ մի՛ տարեք այն մասին, թե ինչ կլինի վաղը կամ վաղը չէ մյուս օրը: Մի՛ մտածեք այն մասին, թե ինչ է եղել երեկ և նախանցած օրը:

Դրանք խանգարում են ուղու վրա: Մտածեք միայն այն մասին, ինչ տեղի է ունենում հիմա, և գործադրեք բոլոր ջանքերը հնարավորին չափ որակյալ ծառայություն իրականացնելու համար:

Մի՛ ստիպեք ինձ սուրհանդակ ուղարկել ձեզ մոտ, որ հիշեցնի ձեր առաքելության մասին: Բոլոր գիտելիքներն ու ողջ պլանը միշտ ձեզ հետ են՝ ձեր սրտերում:

Կասեմ. «Հապճե՛պ»: Կասեմ. «Հրատա՛պ»: Եվ կպահանջվի անել այն ամենը, ինչ պարտավոր եք անել: Ահա հենց հիմա հասել է այն պահը, հանուն որի դուք մարմնավորվել եք: Ամեն ինչ կարելի է փոխել: Գլխավոր աղբահանության ժամն է Երկրում: Ելեք ձեր գիտակցության ձեղնահարկերը: Իջեք ձեր մութ ցանկությունների նկուղները: Դուրս հանեք կեղտոտ սպիտակեղենը:

Ամեն ինչ կլվանանք, կմաքրենք, կչորացնենք: Ձեր հին հագուստեղենից անմաքուր ու անլվա ոչինչ չի մնա:

Եվ մի՛ երկնչեք ձեր եսասիրական մտքերի ու զգացմունքների փալաս-փուլուսից բաժանվելուց:

Ամեն ինչ կվառվի ձեր ծառայության բոցի և ձեր սրտերի կրակի մեջ: Անկատարությունը տեղ չունի նոր աշխարհում:

Ասում եմ ձեզ՝ լուսաբացը մոտ է. պահն է վեր կենալու ու գործելու:

Նոր ժամանակներ են գալիս... Դիմավորե՛ք...

ԵՍ ԵՄ ԷԼ Մորիան,
դիմեցի իմ հավատարիմ աշակերտներին

ՏԵՐ ՀԻՍՈՒՍ

22 մայիսի, 2005 թ.

ՁԵՌՆԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՈՒՂԻՆ, ՈՐԸ ԵՍ ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՄ, ԱՍՏԾՈ ԿԱՄՔԻՆ ԼԻՈՎԻՆ ՀՆԱԶԱՆԴԵԼՈՒ, ԼԻԱԿԱՏԱՐ ԻՆՔՆԱՆՎԻՐՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԶՈՀՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆ Է

ԵՍ ԵՄ Հիսուս՝ ձեր ավագ եղբայրն ու դաստիարակը, որ եկել եմ այս դեսպանորդի միջոցով:

ԵՍ ԵՄ եկել՝ զրուցելու հավերժական մի թեմայով, որը հրատապ կլինի, քանի դեռ չեք զգեստավորվել հարսանեկան հանդերձանքով և համբարձվել դեպի Լույսը:

Մինչ այդ զբաղված կլինեք հավերժականն անցողիկից, Բարձրագույն աշխարհին պատկանողն անցողիկ աշխարհին պատկանողից առանձնացնելով:

Ձեր իրականությունը ձեզ պարուրում է պատրանքի մշուշով և շեղում ձեզ այն աշխատանքից, որի համար կոչված եք: Սակայն, որքան երկար էլ որ թափառեք պատրանքային աշխարհում, վաղ թե ուշ ձեր դեգերումներին վերջ կտրվի: Ճշմարտություն որոնող նվիրյալներից շատերի սխալն ու մոլորությունն այն է, որ համարում են, թե Տունդարձի Ուղին մշտական երանության ու սիրո վիճակ է: Դա ճիշտ է, բայց ճիշտ է այնքանով, որքանով որևէ բան կարող է ճիշտ ու իրական լինել ձեր աշխարհում:

Երանության, բերկրանքի, սիրո ու խաղաղվածության վիճակն այն բանի նշանն է, որ դուք ճշմարիտ Ուղու վրա եք և որ ընտրել եք ճշմարիտ ճանապարհ: Սակայն ձեր աշխարհում չի հաջողվի մշտապես պահպանել հոգու կայուն վիճակ: Եվ ես այսօր նպատակ ունեմ խրատել ձեզ և զգուշացնել գիտակցության այն հնարավոր ցածրակարգ վիճակներից, որոնց դուք կարող եք հանդիպել ձեր Ուղու վրա: Եվ միշտ չէ, որ այդ վիճակները կվկայեն ձեր Ուղուց շեղված լինելը: Ձեր Ուղու ողջ ընթացքում ձեզնից միշտ պահանջվում է մշտապես վերլուծել և մշտապես զանազանել ձեր վիճակները:

Պատկերացրեք, որ դուք իսկապես Ուղու վրա եք, և ձեր ընթացքի սկիզբը համընկել է այն ժամանակի հետ, երբ շողում է արևը, քամի չկա և շրջապատն ախորժաբույր է ու փթթուն: Դուք դա կարող եք դիտարկել որպես Ճշմարիտ Ուղու նշան: Եվ հանկարծ, որտեղից որտեղ, ամպեր են հավաքվում, քամի է բարձրանում, ճայթում է ամպրոպը: Սակայն այդ ամենը դեռ չի խոսում այն մասին, որ դուք շեղվել եք Ուղուց: Դուք առաջվա պես ընթանում եք ճիշտ ուղղությամբ՝ չնայած այն բանին, որ փոխվել են արտաքին հանգամանքները, և, եղանակի փոխվելուն զուգընթաց, փոխվել է և ձեր տրամադրությունը:

Ճիշտ նույն ձևով ձեր կյանքում կարող եք ունենալ ձեր գիտակցության ամենավերամբարձ վիճակներ: Դուք կարող եք գտնվել երանության գագաթնակետում: Եվ հանկարծ, բոլորովին անառիթ, ձեր վիճակը կարող է վատանալ: Անհասկանալի պատճառով զգում եք անառիթ թախիծ, վհատություն, ձեր գոյության անիմաստության զգացում ու հավատի պակաս:

Միշտ չէ, պաշտելիներ՝ նմանատիպ հայտանիշներն այն բանի նշանն են, որ դուք շեղվել եք Ուղուց: Ուղղակի պահը գալիս է, և դուք սկսում եք անցնել ձեր թեստերն ու փորձաքննությունները: Դուք լսել եք Տեր Մայտրեյայի գաղտնի ծեսերի դպրոցի մասին, լսել եք նաև ձեռնադրման դպրոցների մասին, որոնք եղել են բոլոր ժամանակներում:

Եթե դեպի Աստված տանող ճանապարհն իրենից ներկայացներ մշտական երանության ու բարեշնորհության վիճակ, ապա էլ ինչո՞ւ պետք է զգացվեր այդ ձեռնադրումների դպրոցների կարիքը: Եվ ընդհանրապես, ինչի՞ համար են պետք ձեռնադրումները:

Դուք ձեր ներսում երկու մարդ ունեք: Մեկը մահկանացու է, մյուսը՝ անմահ: Եվ այդ երկուսը Երկիր մոլորակի վրա գտնվելու միլիոնավոր տարիների ընթացքում այնպես են միահյուսվել իրար, որ ջանքերի զգալի գործադրում է պահանջվում, որ իրարից առանձնացվեն: Նրանցից մեկին վիճակված է մնալ Երկրի վրա և վերադառնալ Երկրին, որտեղից ինքը վերցված է: Մյուսին էլ վիճակված է շարունակել իր գոյությունն ուրիշ, լինելիության Բարձրագույն ոլորտում:

Եվ երբ դուք ձեր ներսում սկսում եք այդ երկուսին իրարից առանձնացնելու գործընթացը, նախ և առաջ՝ ձեր գիտակցության մեջ, ապա բավականին դժվար է լինում: Բառացիորեն հարկ է լինում կենդանի կտրվածք անել: Դուք սովոր եք ձեզ նույնացնել այն անհատի հետ, որին տեսնում եք հայելու մեջ: Եվ իրականում ձեռնադրումների

ձեր անցած բոլոր աստիճանները հենց այն նպատակն են հետապնդում, որ ձերբազատվեք հայելու մեջ արտացոլվողի հետ ինքներդ ձեզ նույնացնելուց: Ահա թե ինչու են ասում՝ եթե ուզում ես տեսնել թշնամուդ, ապա մոտեցիր հայելուն:

Իրապես, այն, ինչը շատ կյանքերի ընթացքում դուք դիտարկել եք որպես ձեր ինքնությունը, փաստորեն ինքներդ չեք, այլ ձեր այն մասն է, որից դուք պետք է հրաժարվեք, դադարեք ձեզ նույնացնել դրա հետ:

Եվ ձեր ներսի այն մասը, որը դիմադրում է նոր անհատականության ձեռքբերման գործընթացին, վեր կելնի ձեր էության խորքերից՝ անգիտակցականից ու ենթագիտակցականից, և կսկսի բողոքել: Եվ ձեր արտաքին գիտակցության մեջ դուք չեք կարողանա մինչև վերջ հասկանալ ձեր վհատության, հուսահատության, ձեր ծայրահեղ ճնշվածության ու անելանելի վիճակների պատճառը:

Դժվար է վերլուծության ենթարկել, թե տիեզերական ժամկետին համապատասխան, որ արդեն մոտեցել է, ինչպիսի էներգիաներ են ակտիվացել ձեր չորս ստորին մարմիններում: Իսկ այդ էներգիաներն իրենցից ներկայացնում են ձեր իսկ անիրական մասը: Եվ յուրաքանչյուր թեստի խնդիրն այն է, պաշտելիներս, որ դուք հիշեք, որ ընդամենն աշակերտ եք ուղու վրա և հանձնում եք հերթական քննությունը: Եվ, որքան էլ ձեզ իրական թվա ձեր վիճակը, դուք պետք է միշտ հիշեք, որ ընդամենը թեստ եք անցնում:

Եվ որքան ավելի մեծ դժվարությամբ ձեր արտաքին գիտակցության մեջ հրաժարվեք այն էներգիաներից, որոնք ակտիվացել են ձեր մեջ, այնքան ավելի երկար կտևի ու կձգձգվի ձեր թեստը:

Առավել առաջադեմ աշակերտները միշտ հիշում են այն մասին, որ Աստված իրավունք ունի իրենց փորձելու՝ տալով, թվում է, թե, գիտակցության համար միանգամայն անտանելի վիճակներ: Եվ բոլոր ուժերի առավելագույն լարվածության ընթացքում, երբ թվում է՝ արևն այլևս երբեք չի շողա, նրանք մոտենում են զոհասեղանին և ասում իրենց սրտերում.

«Տե՛ր, ես գիտեմ, որ իմ վիճակն իրական չէ: Գիտեմ, Տե՛ր, որ սա ընդամենը թեստ է: Ես պատրաստ եմ, Տե՛ր, դիմանալ այն բոլոր փորձություններին, որոնք առաքում ես ինձ: Եվ ես կձգտեմ անցնել դրանք: Իրավասու՛ ես Դու, Տե՛ր, ինձ ենթարկելու ցանկացած փորձության: Եվ ես երախտապարտ եմ բոլոր փորձությունների համար, որոնք Դու առաքում ես ինձ: Քանզի գիտեմ, որ Դու սիրում ես ինձ և հոգում իմ մասին: Խնդրո՛ւմ եմ, Տե՛ր, օգնի՛ր ինձ դիմանալու այս փորձությանը մինչև վերջ»:

Բոլոր թեստերը տրվում են ըստ միակ հատկանիշի՝ որ հրաժեշտ տաք ձեր իսկ անիրական մասին, առաջին հերթին՝ ձեր գիտակցության մեջ:

Երկնքի անսահման ողորմածության շնորհիվ դուք հնարավորություն ունեք անցնելու ձեր բոլոր թեստերը, փորձությունները և հանձնելու ձեր քննությունները՝ չկտրվելով սովորական կյանքից: Դուք շարունակում եք ապրել ձեր սովորական կյանքով, բայց եթե ներքին մակարդակներով ձեռնադրումներ անցնելու ցանկություն եք հայտնել՝ գտնվելով առօրյա կյանքում, ապա այդպիսի հնարավորություն ձեզ կտրվի: Անկախ այն բանից՝ ձեր խնդրանքի մասին ձեր արտաքին գիտակցությունը տեղեկացված կլինի, թե ոչ: Ուստի ես այսօր եկել եմ, որպեսզի ձեզնից նրանց, ովքեր ապրում են անառիթ մռայլ վիճակներ և ունենում զանազան հոգեբանական խնդիրներ, բացատրեմ այդ վիճակների պատճառը:

Այո՛, պաշտելիներս, դուք որոշել եք ուսուցում անցնել ձեռնադրումների դպրոցում՝ չհեռանալով սովորական կյանքից: Դուք ընտրել եք արագացված Ուղին: Ձեր հոգին ցանկություն է հայտնել ձեռնադրումներ անցնել հենց այս կյանքում, որպեսզի չսպասի հաջորդ մարմնավորմանը՝ չակնկալելով ձեռնադրումների դպրոցում գտնվելու հարմարավետ պայմաններ՝ անդորրության մեջ ինչ-որ տեղ, ժամանակակից քաղաքակրթության այունազարդ ճանապարհներից հեռու:

Եվ այդ ձեռնադրումների Ուղին՝ Վարդե Ուղին, հենց այն Ուղին է, որով պետք է անցնեք բոլորդ: Ես այլ ուղի չգիտեմ: Միշտ էլ ձեր իրական մասի առանձնացումը ձեր իսկ անիրական մասից ուղեկցվում է շատ ցավագին ու տհաճ ապրումներով: Ձեր նմանատիպ վիճակների և՛ տևողությունը, և՛ ծանրությունը կորոշվեն ձեր իսկ անիրական մասի դիմադրության աստիճանով: Ամեն ինչ կորոշվի նրանով, պաշտելիներս, թե որքան է ուժեղ ձեր էգոն:

Դուք գիտեք, որ ինձ հաջողվեց հրաժեշտ տալ իմ անիրական մասին 40 օրվա ընթացքում, երբ ես գտնվում էի անապատում: Սակայն ձեզ հայտնի է նաև, որ դրան հետևեցին իմ ծառայությունը, պայծառակերպությունը, խաչելությունը, հարությունը և համբարձումը:

Քանի դեռ դուք գտնվում եք Երկիր մոլորակի ֆիզիկական ոլորտում, դուք մշտապես փորձություններ ու թեստեր կանցնեք: Իսկ երբ բաժանվեք ձեր իսկ անիրական մասից, չեք կարողանա պարզապես ձեռք թափ տալ մնացած մարդկության վրա և խրվել ձեր տաքուկ անկյունը՝ Երկնքում ինչ-որ տեղ:

Հույս մի՛ կապեք այն բանի հետ, պաշտելիներս, որ ձեր համբարձմամբ կավարտվի ձեր զարգացումը, ձեր լարվածությունը, աշխատանքն ու պատասխանատվությունը: Ամեն ինչ դեռ նոր կսկսվի: Եվ որքան մեծ լինեն ձեր կարողությունները, այնքան ավելի մեծ բեռ կվերցնեք ձեզ վրա, ավելի մեծ ծառայություն կիրականացնեք: Պետք է սիրել լարվածությունը: Պետք է սիրել ծառայությունը:

Եվ ձեր Սիրո բարձրագույն արտահայտու-

թյունը կլինի այն, որ կարեկցեք ամբողջ մարդկությանը, բոլոր կենդանի էակներին և պատրաստ լինեք ինքներդ ձեզ զոհաբերելու՝ հանուն մարդկության փրկության: Պետք է պատրաստ լինեք զոհաբերելու ձեր ողջ ժամանակը, ձեր բոլոր նվաճումներն ու ձեր բոլոր մարմինները:

Ձեռնադրումների Ուղին, որը ես ուսուցանում եմ, Աստծո Կամքին լիովին հնազանդվելու, լիակատար ինքնանվիրման և ինքնազոհողության Ուղին է:

Այլ Ուղի չկա, պաշտելիներս, և մեր խնդիրն է ուղղորդել ձեզ այդ Ուղու վրա և ցուցաբերել ամբողջ անհրաժեշտ օգնությունը:

ԵՍ ԵՄ Հիսուս, խոսեցի ձեզնից յուրաքանչյուրի նկատմամբ Սիրո ամենաբարձր կետից

ՀԱՈՒԹԱՄԱ ԲՈՒԴԴԱ

23 մայիսի, 2005 թ.

ՄԵՐ ԽՆԴԻՐՆ Է ՍՆՈՒՑԵԼ ԵՐԿԻՐԸ ՆՈՐ ԹՐԹՌԱՆՔՈՎ, ՆՈՐ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԱՇԽԱՐՀԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՈՐ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔՈՎ

ԵՍ ԵՄ Հաութամա Բուդդան՝ նորից եկածը:

Ձեզ հետ ունեցած իմ նախորդ հանդիպումից հետո Երկիր մոլորակի նուրբ ոլորտում ձեզ հետ տեղի են ունեցել մի շարք իրադարձություններ: Եվ ես կուզենայի համառոտ կերպով ծանոթացնել ձեզ տեղի ունեցածի հետ: Կուտակված բացասական էներգիաները, որոնք անխուսափելիորեն պետք է հանգեցնեն հերթական արհավիրքի, հաջողվեց տեղայնացնել այդ բացասական էներգիաների առաջացման վայրերում:

Ըստ այդմ՝ այն ամենը, ինչը մեզ չի հաջողվի չեզոքացնել ու անվտանգ դարձնել, հետևանք կթողնի ամենից առաջ այն մարդկանց վրա, ովքեր ծնունդ են տվել իրենց մտքերի ու զգացմունքների հրեշներին:

Ինչպես Նոյի ժամանակներում էր, նախազգուշացվում ու ակնարկներ են արվում տարբեր մարդկանց միջոցով: Բայց մարդիկ գերադասում են ականջները փակել ու ոչինչ չլսել: Աչքերը փակել ու ոչինչ չտեսնել: Որոշ մարդիկ դրսևորում են լիակատար անփութության ու անպատասխանատվության հրաշքներ, որոշ մարդիկ էլ՝ հերոսության ու ինքնազոհության հրաշքներ, որպեսզի կանխարգելեն անխուսափելին:

Ամեն ոք գործում է այնպես, ինչպես գերադասում է գործել: Եվ յուրաքանչյուրը գործում է այն բանին համապատասխան, թե ում խորհուրդներով է գերադասում առաջնորդվել իր կյանքում:

Մոտենում են այն իրադարձությունները, որոնք նորից ի ցույց կհանեն Երկրի բնակչության մեծ մասի թրթիռների անհամապատասխանությունը Նոր Դարաշրջանի թրթիռներին, որոնք հասել են և շարունակում են հասնել Երկիր:

Եվ այդպիսով, ընթանալով հաջորդական մոտարկումների ուղով, կիրագործվի այն, ինչը պետք է իրագործվի Երկիր մոլորակի վրա: Պաշտելի՛ սաներս, երբեք չի կարելի գնալ Աստծո Կամքին հակընդդեմ, երբեք չի կարելի գործել այն պլաններին հակառակ, որոնք Երկիր մոլորակի համար նախատեսված են Բարձրագույն Օրենքով:

Այսպիսով, յուրաքանչյուրի մեջ խթանվում են ճշմարիտ մղումներն ու աստվածային հատկանիշները: Եվ յուրաքանչյուրը հնարավորություն է ստանում դրսևորելու իր ներքին էությունը:

Ինչո՞ւ է տրվում Ուսմունք այն մասին, որ դուք պետք է հոգ տանեք միայն ձեր մասին՝ ձեր մտքերի ու զգացմունքների մասին: Ինչո՞ւ դուք չեք կարող ղեկավարել ուրիշ անհատների և ստիպել նրանց, որ վարվեն այնպես, ինչպես ձեզ ճիշտ է թվում: Որովհետև այն ամենը, ինչը մոլորակի վրա յուրաքանչյուր անհատի հետ տեղի է ունենում և տեղի կունենա, որոշվում է իրենց աուրայում՝ իրենց ուժային դաշտում, այս կամ այն էներգիաների առկայությամբ:

Եթե դուք ձեր մեջ շատ բացասական էներգիա եք պահում, և այն կուտակել եք Երկրի վրա ունեցած շատ մարմնավորումների ընթացքում, ապա, որքան էլ փորձեք խուսափել այն բանից, որը, ձեր կարմային համապատասխան, պետք է ձեզ հետ տեղի ունենա, միևնույնն է, ոչինչ չի ստացվի: Եվ, մյուս կողմից, եթե դուք նախապես հոգացել եք ձեր մտքերի ու զգացմունքների մասին, եթե արդեն ձերբազատվել եք ձեր կարմայական բեռի մեծ մասից, ապա, ով էլ որ ուզենա ձեզ վնասել, չի կարողանա:

Ձեր թշնամիները ջանքեր կգործադրեն, որ-

պեսզի վնասեն ձեզ, բայց եթե ձեր աուրայում չկա ոչինչ, որից կարելի է կառչել, նրանց գործողությունները ձեզ որևէ վնաս չեն պատճառի, այլ, ընդհակառակը, օգտակար կլինեն:

Դրանում է գաղտնիքն այն բանի, որ մարդիկ գոյատևում են այնպիսի պայմաններում, որոնցում հնարավոր չէ գոյատևել: Դրանով է բացատրվում նաև այն, որ մարդկանց հետ կատարվում է մի բան, որը որևէ կերպ չի անդրադառնում նրանց շրջապատում եղած մյուս մարդկանց վրա:

Ուստի բոլորովին իմաստ չունի ջանք թափել, որ ապացուցեք ինքներդ ձեզ և շրջապատի մարդկանց, թե ինչքան լավն եք դուք և լիովին Աստծուն նվիրված: Բոլոր ձեր արարքները, մտքերն ու զգացմունքները պահպանվում են ձեր աուրայում և, այսպես կոչված, ակաշայի ժամանակագրություններում: Ըստ այդմ՝ համայն տիեզերքում գործող Տիեզերական Օրենքի հետ կամայական խաղեր խաղալը պարզապես անիմաստ է: Դրա համար է ասվում, որ դուք հոգ տանեք միայն ձեր մտքերի ու զգացմունքների մասին, այն մասին, թե ինչպես եք վարվում և ինչ եք անում:

Դուք չեք կարող օգնել մի մարդու, ով չի ցանկանում ընդունել ձեր օգնությունը: Դուք ուժով չեք կարող որևէ մեկին ստիպել, որ կիսի ձեր համոզմունքները: Բայց դուք միշտ հնարավորություն ունեք ձեր գիտելիքների գանձերը կիսելու նրանց հետ, ովքեր պատրաստ են ձեզ լսելու: Եվ այստեղ գաղտնիքն այն է, որ այն մարդը, ով պատրաստ է ընդունելու ձեր հոգածությունն ու ձեր գիտելիքները, ունի այնպիսի գիտակցություն ու թրթիռներ, որոնք իր համար դա հնարավոր են դարձնում: Եվ այդ գիտակցությունն ու թրթիռները նա ձեռք է բերել ոչ մեկ մարմնավորման ընթացքում:

Ըստ այդմ՝ ջանք մի՛ թափեք ձեր հայացքները պարտադրելու նրանց, ովքեր չեն ուզում ձեզ լսել: Ավելի լավ է՝ ձեր շրջապատում գտնեք այնպիսի մարդկանց, ովքեր հոգնել են ձեր աշխարհում թագավորող անելանելիությունից, այն գաղջ մթնոլորտից, որը շրջապատում է իրենց: Այդպիսի մարդկանց համար ձեր մատուցած գիտելիքները կխաղան հրաշագործ բալասանի դեր, որը կթեթևացնի իրենց գոյությունը, կապաքինի իրենց այն վերքերը, որոնք ձեռք են բերել ձեր աշխարհի ո՛չ ամենալավ կողմերի հետ շփվելուց:

Դուք միշտ հնարավորություն ունեք ձեր շրջապատում գտնելու գոնե մեկ մարդու, ով ունի ձեր օգնության ու ձեր այն գիտելիքների կարիքը, որոնք դուք կարող եք տրամադրել իրեն: Ցավոք, մարդկության գիտակցության մակարդակն այնպիսին է, որ մարդկության միայն աննշան մասն է ունակ յուրացնելու այն գիտելիքները, էներգիաներն ու տեղեկատվությունը, որոնք պարունակվում են այս դեսպանորդի միջոցով ներկայումս տրվող մեր թելադրություններում:

Մենք լիովին գիտակցում ենք, որ հնարավոր է՝ մենք կկարողանանք արթնացնել մի քանի հազար կամ տասնյակ հազար մարդկանց գիտակցությունը՝ ամբողջ աշխարհի մասշտաբով:

Բայց, հավատացե՛ք ինձ, պաշտելի՛ սաներս, սկզբի համար դա միանգամայն բավարար է:

Եվ այն տեղեկատվությունը, և՛ այն թրթիռները, և՛ այն գիտելիքները, որոնք ունակ են յուրացնելու քչերը, ովքեր նախապես պատրաստել են իրենց տաճարներն այդ տեղեկատվության ընդունման համար, կպահպանվեն նրանց էներգետիկական դաշտում՝ նրանց աուրայում:

Երկրի մարդիկ նուրբ ոլորտում շատ են կապված իրար հետ: Կա կոլեկտիվ անգիտակցական մարդկության հասկացողությունը. երբ գիտելիքը, որը մեզ հաջողվում է խցկել մեկ-երկու մարդկանց գլուխը, տարածվում է՝ անկախ մարդկանց մեծամասնության գիտակցությունից: Եվ, եթե նրանք ինչ-որ տեղ լսեն Երկրի համար բոլորովին նոր գիտելիքներ, մարդկանց մեծ մասի մոտ այնպիսի զգացում կառաջանա, որ իրենք այդ մասին արդեն լսել են կամ ինչ-որ տեղից գիտեն, բայց հազիվ թե նրանք կարողանան ձեզ ասել այն աղբյուրը, որից քաղել են այդ գիտելիքները:

Մեր աշխարհի թրթռումներն ունակ են հասնելու շատ անհատների, նույնիսկ եթե սկզբնապես նրանց արտաքին գիտակցության մեջ դա արձագանք չի գտնում: Հիշեք, որ մարդու կառուցվածքը նման է գեղջկատիկնիկի, և մարդու առավել նուրբ մասը շատ զգայուն է այն ամենի նկատմամբ, ինչը տեղի է ունենում Երկրի տեղեկատվական դաշտում:

Ձեր ֆիզիկական մարմինն ու ձեր արտաքին զգայարանները հանդիսանում են դինոզավրեր, որոնք ոչ մի կերպ չեն կարող հարմարվել արագ փոփոխվող իրականությանը, ձեր աշխարհի արագ փոփոխվող թրթռանքին: Եվ, ինչպես ժամանակին ոչնչացան դինոզավրերը, այնպես էլ ժամանակի ընթացքում դուք ստիպված կլինեք հրաժեշտ տալ ձեր ֆիզիկական մարմիններին:

Այդ նպատակով մենք ձեզ տալիս ենք ներխոկումների մասին ուսմունքը, ձեր գիտակցությունն ուղղում ենք դեպի նուրբ աշխարհները: Աստիճանաբար ձեր գիտակցության կենտրոնը կթեքվի դեպի ձեր ավելի նուրբ մարմինների կողմը: Եվ դուք ձեռք կբերեք ավելի մեծ շարժունակություն, թեթևություն: Ըստ էության, մարմնավորման մեջ գտնվելու ընթացքում ձեր ֆիզիկական մարմինը ձեր հիմնական հոգածության առարկան է: Եվ Երկրի վրա գտնվելու ժամանակի մեծ մասում դուք ստիպված եք լինում խնամել ձեր մարմինները՝ դրանք մաքրելով, դրանց կերակրելով, հագցնելով, բուժելով:

Կարո՞ղ եք պատկերացնել, թե ինչքան սրընթաց կդառնա մարդկության էվոլյուցիան, երբ նա ազատվի իր մարմիններից և, դրանով հանդերձ՝ ազատվի մարմնի մասին հոգալուն հատկացվող ժամանակի անհրաժեշտությունից:

Եվ դուք շատ կզարմանաք, եթե ասեմ, որ իրականում դուք վաղուց ազատված կլինեիք ձեր

ֆիզիկական մարմիններից և էվոյուցիան կշարունակեիք ավելի նուրբ ոլորտում, բայց ձեզ ետ է պահում ու ստիպում նորից ու նորից մարմնավորվել ֆիզիկական մարմնի հետ ձեր կապվածությունը և ձեր կապվածությունն այն ամենի նկատմամբ, ինչը գոյություն ունի ֆիզիկական ոլորտում:

Միակ բանը, որն արգելակում է ձեր զարգացումը, ձեր գիտակցության մակարդակն է և ձեր կապվածության աստիճանը ձեր արտաքին անձի՝ ձեր էգոյի, ձեր իսկ այն մասի հետ, որը գոյություն ունի ֆիզիկական ոլորտում և այդ պլանի հետ կապված ավելի նուրբ ոլորտներում՝ մենտալայինում և աստեղայինում:

Եվ բոլոր արհավիրքները, և՛ բոլոր համաղետները կարելի կլիներ կանխել, եթե մարդկությունը կարողանար հրաժեշտ տալ իր ստորին մասին:

Ձեր աշխարհի բոլոր աններդաշնակ դրսևորումները կապված են երկրացիների աններդաշնակ ու անկատար գիտակցության հետ: Եվ իրոք, ձեզնից յուրաքանչյուրից է կախված այն ամենը, ինչ տեղի է ունենում, և այն ամենը, ինչ տեղի կունենա Երկիր մոլորակի վրա: Դուք պարզապես կարդում եք այս թելադրությունները, պարզապես յուրացնում եք այն տեղեկատվությունը, որը պարունակվում է այս թելադրություններում, իսկ այն ազդեցությունը որը դուք կթողնեք Երկրի վրա տեղի ունենալիք իրադարձությունների վրա, նման կլինի ցնցարգելիչի ազդեցությանը: Դուք կմեղմեք բոլոր արհավիրքները, բոլոր աղետները:

Մեր խնդիրն է այն մարդկանց գիտակցության միջոցով, ովքեր ունակ են ընկալելու մեր տված գիտելիքները, Երկիրը սնուցել նոր գիտելիքներով, նոր թրթռանքով, նոր գիտակցությամբ և աշխարհի նկատմամբ նոր վերաբերմունքով:

Դուք շատ շուտով կտեսնեք, թե ինչպես ձեր շուրջն ամեն ինչ կսկսի փոխվել: Եվ դա, հիրավի, նման կլինի հրաշքի, բայց այդ հրաշքը, պաշտելիներս, տեղի կունենա միայն ձեր մասնակցությամբ:

ԵՍ ԵՄ Հաութամա Բուդդան

ՎԵՀԱՊԵՏ ԼԱՆԵԼԼՈ

24 մայիսի, 2005 թ.

ՓՈԽԵՔ ՁԵՐ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ, ԿԵՆՍԱԿԵՐՊԸ

ԵՍ ԵՄ Լանելլոն՝ այս դեսպանորդի միջոցով նորից ձեզ մոտ եկածը:

Ես պետք է ձեզ որոշակի Ուսմունք տամ, որը, հուսով եմ, Աստծո Իրականության ճանաչման ներկա փուլում ձեզ համար օգտակար կլինի: Դուք գիտեք, որ Աստծո Իրականության ճանաչումն աստիճանական գործընթաց է: Դուք չեք կարող միանգամից ճանաչել Աստծո Ճշմարտությունն իր լրիվ ամբողջականությամբ: Դա նման կլիներ այն բանին, որ դուք փորձեիք փոքր ծավալ ունեցող կավե անոթի մեջ տեղավորել ավելի մեծ ծավալ, քան այն կարող է տանել: Անոթը կարող է ճաք տալ: Ուստի, երբ ձեր արտաքին գիտակցությամբ սկսում եք ճանաչել որևէ հասկացություն, ուսմունք կամ գիտելիք, դուք չեք կարող միանգամից ընկալել դրա ամբողջ ծավալը:

Ձեր գիտակցությունը պետք է կրի աստիճանական փոփոխություններ, ձևափոխություններ: Այդ դեպքում Աստծո Ճշմարտության ճանաչման գործընթացը ձեզ համար կընթանա քիչ թե շատ անցավ կերպով:

Աստծո Իրականությանը բնորոշ շատ բաներ, որոնք ստանում եք ձեր մարդկային գիտակցությամբ, կարող են առաջացնել վանում և հակակրանք: Բանն այն է, որ մարդկային գիտակցությունը գտնվում է որոշակի ժամանակային և տարածական շրջանակներում և սահմանափակված է այդ շրջանակներով: Երբ դուք կարողանաք ձեր գիտակցության մեջ հաղթահարել ժամանակային և տարածական շրջանակները, Աստծո Իրանության ընկալման ձեր տիրույթը կընդլայնվի: Իսկ մինչ այդ դուք ստանում եք գիտելիքների նշույլներ, և նույնիսկ այդ նշույլները, եթե չեն համապատասխանում այլ աղբյուրներից նախկինում ստացած ձեր գիտելիքներին, կարող են առաջացնել հակակրանք և նույնիսկ ագրեսիվ վերաբերմունք:

Ցավոք, իրականության ընկալման ձեր գիտակցության տիրույթը շատ և շատ սահմանափակ է: Բայց դա այնքան էլ լուրջ խոչընդոտ չէր հանդիսանա և աստիճանաբար կարելի կլիներ էլի ու էլի տալ նոր գիտելիքներ՝ ընդլայնելով ձեր աշխարհընկալման սահմանները: Սակայն իր գիտակցությամբ մարդկությունը հակված է շատ բաներ ընդունել որպես դոգմա՝ այդ դոգմայից յուրաքանչյուր շեղումը դիտարկելով որպես սրբապղծություն ու հավատապղծություն: Ամբողջ բանը ձեր գիտակցության աղջամուղջի մեջ է: Երբ ձեր գիտակցությունը խրված է տգիտության մեջ, դուք

հակված եք դատապարտելու այն ամենը, ինչը չի համապատասխանում նախկինում ստացած ձեր պատկերացումներին ու հասկացողությանը: Տգիտության դեմ միակ դեղը գիտելիքի Լույսն է: Եվ ձեր ներքին արգելապատնեշների, ներքին սահմանափակումների ու ներքին խոչընդոտների հաղթահարումը մշտապես եղել է հոգևոր որոնողների գլխավոր և առաջնահերթ խնդիրը:

Եթե անկողմնակալ հայացքով դիտեք մարդկության պատմությունը, հատկապես կրոնի պատմությունը, ապա կկարողանաք հասկանալ, որ երկպառակությունների մեծ մասը, այդ թվում նաև կրոնական երկպառակտությունների, ծագել են այն բանից, որ մարդիկ հակված չեն եղել ընդունելու ուրիշ մարդկանց կարծիքը և հակված չեն եղել ջանքեր գործադրելու, որպեսզի այս կամ այն հարցի վերաբերյալ գտնեն ընդհանուր մոտեցումներ:

Յուրաքանչյուրը պնդել է իր տեսակետը և հաշվի չի առել ուրիշի տեսակետը: Ըստ այդմ՝ ձեր ժամանակների առաջնահերթ խնդիրն է ընդհանուր հպման կետերի որոնումը տարբեր կրոնական հոսանքների և տարբեր նոր ուսմունքների միջև:

Խնդիրը ցանկացած կրոնական համակարգին բնորոշ սահմանափակումներից վեր կանգնելն է: Եվ տարբեր հայացքների միջև կամուրջներ ու անցուղիներ ստեղծելու գործում գլխավորն ու ելակետայինն այն պետք է լինի, որ գիտակցվի այն պարզ փաստը, որ մարդկությունն իր զարգացման ներկա փուլում անկարող է 100 տոկոսանոց հավաստիությամբ նկարագրել Աստծո Ճշմարտությունն՝ իր լրիվ ամբողջության մեջ: Սկզբի համար դուք կարող եք համաձայնվել, որ չարամտություն չկա այն բանում, որ ինչ-որ մեկն Աստծո Ճշմարտությունը հասկանում է այս կերպ, մյուսը՝ այլ կերպ: Ի վերջո, յուրաքանչյուր անհատ յուրահատուկ է և ամեն ինչ դիտարկում է իր տեսանկյունով:

Եվ շատ կարևոր կլինի ընդունումը, որ մյուս մարդիկ իրավունք ունեն յուրահատուկ ձևով բեկելու Աստծո Ճշմարտությունը: Ներկա փուլում կարևոր նշանակություն կունենա անկողմնակալության, հավատի նկատմամբ հանդուրժողականության հատկանիշը: Հատկապես այդ հատկանիշի բացակայությունն է պատճառ հանդիսանում այնպիսի սարսափելի երևույթի համար, ինչպիսին ահաբեկչությունն է: Հատկապես այլ տեսակետի նկատմամբ դոգմատիկ վերաբերմունքն ու անհանդուրժողականությունն են հանգեցնում կրոնական ծայրահեղությունների ու թշնամանքի բորբոքմանը:

Հապա մտածեք, մի՞թե այդքան կարևոր է պնդել որևէ կրոնի ճշմարտացիությունը, եթե գոյություն ունեցող կրոններից և ոչ մեկը գոնե մի քանի տոկոսով չի արտացոլում Աստծո Ճշմարտությունն իր ամբողջության մեջ:

Աստծո Ճշմարտությունը գոյություն ունի՝ անկախ մարդկանց գիտակցությունից: Եվ մենք բոլորս մանուկներ ենք Աստծո Ճշմարտության ճանաչման հարցում: Հենց որ դուք սկսում եք պնդել, թե աստվածային կառույցի ձեր ըմբռնումը հանդիսանում է ամենաճիշտն ու կատարյալը, ապա դրանով իսկ դուք ի չիք եք դարձնում Աստծո Ճշմարտությունը ճանաչելու ձեր հնարավորությունը: Խորհեցեք՝ մյուս մարդկանց տեսակետի նկատմամբ նման անհանդուրժողականությունը չի՞ հանդիսանում արդյոք գոռոզության և այն հատկանիշների դրսևորման արդյունք, որոնք բնորոշ են ձեր իսկ անիրական մասին:

Ըստ այդմ՝ բոլոր կրոնական վեճերը, պատերազմներն ու երկպառակությունները, կրոնական ֆանատիզմի, ծայրահեղականության ու անհանդուրժողականության բոլոր դրսևորումները հանդիսանում են սոսկ այն առանձին անհատների եսասիրական մղումների արդյունք, որոնք առաջնորդում են կրոնական աղանդներ, խմբեր և նույնիսկ այնպիսի ավանդական ու համեմատաբար հին կրոններ, ինչպիսիք են քրիստոնեությունը, իսլամը և այլն: Հավատացեք ինձ, Աստծո Ճշմարտությունը մեծ մասամբ ոչ մի ընդհանուր բան չի ունենում այն պատկերացումների, դոգմաների և դրույթների հետ, որոնք բնորոշ են համաշխարհային կրոնների մեծամասնության, եթե չասենք՝ բոլորի համար:

Այդ պատճառով, հիմնական խնդիրներից մեկը, որը կոչված էր լուծելու անցյալ դարում Վեհապետների օգնությամբ իմ կողմից ստեղծված Սամմիթ Լայթհաուզ կազմակերպությունը, հանդիսանում էր հատկապես մարդկանց գիտակցության ընդլայնումն այնքանով, որպեսզի հասկացվի այն ընդհանուր էությունը, որն ընկած է ցանկացած կրոնի և կրոնական դոգմայի հետևում: Եվ տալ ձեզ այն պատկերացումը, որ ամենագլխավորն Աստծո հետ ձեր անձնական փոխհարաբերություններն են, Աստծո մեջ ձեր սեփական զարգացումն ու Աստծո Ճշմարտության ձեր ըմբռնումը: Դա ձեր ստեղծագործ գործունեությունն է, ձեր զարգացումն ու ձեր հոգևոր աշխատանքը: Եվ ոչ մի կրոնական համակարգ չի կարող փոխարինել ձեր անմիջական միստիկական փորձին, ձեր իսկ Բարձրագույն մասի և Համբարձյալ Դասերի հետ ձեր հաղորդակցությանը:

Սակայն, հենց որ նոր կազմակերպությունն ստեղծվեց, անմիջապես վրա հասան բոլոր այն ուժերը, որոնք իրենց խնդիրը տեսնում էին նոր, հենց նոր ստեղծված դավանաբանության հռչակման մեջ, որը բացարձակ ճիշտ է ու անսխալական, և տրված է հետագա 2000 տարիների համար:

Պաշտելիներս, Սամմիթ Լայթհաուզ կազմակերպության հիմքում իմ կողմից դրված սկզբունքների այդպիսի հրեշավոր ու արագ աղավաղում չէին սպասում նույնիսկ այն Վեհապետները, ովքեր հովանավորում էին այդ կազմակերպությանը: Եվ, իհարկե, ո՛չ նրանք, ո՛չ ես այժմ ցանկություն չունենք որևէ ընդհանուր բան ունենալու այդ կազմակերպության և նրա առաջնորդների հետ:

Աստծո Ճշմարտությունը գալիս է Երկիր՝ թույլտվություն չհարցնելով որևէ կրոնական առաջնորդից կամ ղեկավարից: Աստծո Ճշմարտությունը ճյուղարձակում է մարդկանց սրտերում, և մեծ նշանակություն չունի ո՛չ ձեր պաշտոնը, ո՛չ էլ ձեր սոցիալական դրությունն ու սոցիալական կարգավիճակը: Մեզ համար անհամեմատ ավելի հեշտ է ուղի գտնել դեպի ամենասովորական մարդկանց սրտերը, ովքեր իրենց չեն ծանրաբեռնել որևէ կրոնական դոգմայով ու կանոնով, քան փորձ կատարել, որպեսզի մեզ լսեն այն կրոնական առաջնորդներն, ովքեր թաղված են եկեղեցական կրոնով ու եկեղեցական հագուկապով ծանրաբեռնված դոգմայական ուղեբեռի տակ:

Դեպի Աստված տանող ուղին մշտապես ձեր ներսում է գտնվում՝ ձեր սրտերում: Եվ Աստծո ձայնը դուք կարող եք լսել ձեր սրտի անդորրության մեջ: Ուստի ձեր հիմնական խնդիրը կլինի ձեր սրտին ունկնդրելը: Սովորե՛ք լսել ինքներդ ձեզ՝ ձեր իսկ Բարձրագույն մասին, և աստիճանաբար հրաժարվել այն ամենից, ինչը ծանրաբեռնում է ձեզ և խանգարում այդ կապի հաստատմանը:

Դուք ինքներդ եք ընտրություն կատարում ձեր աշխարհի ամեն ինչի և ձեր ներսի մեղմ ներքին ձայնը լսելու հնարավորության միջև:

Անկեղծ եղեք ինքներդ ձեզ հետ: Անկեղծորեն հարցրե՛ք ինքներդ ձեզ՝ պատրա՞ստ եք արդյոք հրաժարվելու ձեզ շրջապատող աշխարհի ամեն ինչի հետ ձեր ունեցած կապվածությունից՝ ընտանիքից, աշխատանքից, կարողությունից, ձեր սովորություններից՝ ներառյալ հեռուստադիտումը, ռադիոհաղորդումների ունկնդրումը, ծխելը, ընկերների ու ծանոթների հետ դատարկաբանելը: Պատրա՞ստ եք արդյոք հրաժարվելու այդ ամենի հետ ունեցած կապվածությունից՝ փոխարենը ստանալով մի բան՝ կապ ձեր իսկ իրական մասի հետ:

Մի՛ խաբեք ինքներդ ձեզ:

Եթե ձեզնից դուրս կա ինչ-որ բան, որը ձեզ համար ավելի նշանակալից է, քան ձեր իսկ Բարձրագույն մասի հետ կապը, ապա ձեր ժամանակը դեռ չի հասել: Բայց գուցե արժե՞, այնուամենայնիվ, մի փոքր մի կողմ հրել ձեր իսկ այն մասը, որը չի ուզում կանգնել Լույսի տակ և խոչընդոտում է ձեր զարգացմանն ու հոգևոր աճին:

Եթե դուք ինքներդ ձեր նախաձեռնությամբ չսկսեք ձերբազատվել ձեր այդ անիրական մասից, ապա, միևնույնն է, արտաքին պայմանները ձեզ կստիպեն հրաժարվել ձեր էգոյից: Եվ, որքան շատ դիմադրեք, այնքան ավելի դրամատիկ զարգացում կունենան ձեր կյանքի իրադարձությունները, որպեսզի վերջապես կանգնեք հոգևոր զարգացման ուղու վրա:

Ես այսօր կարևոր նշանակություն ունեցող մեծ քանակի տեղեկատվություն հաղորդեցի ձեզ: Եվ ես հուսով եմ, որ դուք ոչ միայն կխորհրդածեք դրա շուրջ, այլ նաև վերջապես ձեր կյանքում կսկսեք առաջնորդվել ճշմարիտ հավատի սկզբունքներով, այլ ոչ թե կրոնական դոգմաներով ու կանոններով: Խնդրում եմ, տարբերակում կատարեք ձեր սրտում և թույլ մի՛ տվեք, որ ձեզ հիմարացնեն այն մարդիկ, ովքեր ասում են, թե մտահոգված են ձեր հոգու փրկությամբ: Միայն դուք ինքներդ եք այն մարդը, ով կարող է փրկել ձեր հոգին: Եվ ձեր հոգու փրկությունը դուք որևէ գումարով չեք կարող գնել աշխարհի և ոչ մի խանութում:

Փոխեցե՛ք ձեր գիտակցությունը, ձեր մտածելակերպն ու կենսակերպը, աստիճանաբար ձերբազատվե՛ք այն ամենից, ինչը որևէ կերպ չի նպաստում ձեր հոգևոր առաջընթացին:

ԵՍ ԵՄ Լանելլոն, ուրախ եղա մեր այսօրվա հանդիպման համար

ՎԵՀԱՊԵՏ ԷԼ ՄՈՐԻԱ

25 մայիսի, 2005 թ.

ՎԱՌԵՑԵ՛Ք ՁԵՐ ՋԱՀԵՐՆ ՈՒ ԸՆԹԱՑԵ՛Ք, ՆՎԻՐԱԲԵՐԵ՛Ք ՁԵՐ ՀՈՒՐՆ ԱՇԽԱՐՀԻՆ

ԵՍ ԵՄ Էլ Մորիան՝ իմ դեսպանորդի միջոցով ձեզ այցի եկածը:

Այսօրվա հանդիպումն ամբողջությամբ նվիրված կլինի մեր գործերին՝ կապված Ռուսաստանի և այն խնդիրների հետ, որոնք մենք պետք է լուծենք այդ երկրում, որպեսզի ապահովենք մեր պլանների իրականացումը:

Դուք գիտեք, որ վերջին մեկուկես հարյուրամյակի ընթացքում մենք փորձել ենք կենսագործել մեր պլանները՝ կապված այդ երկրի հետ, որն առանձնահատուկ ու եզակի դիրք է գրավում այլ երկրների շարքում: Եվ ամեն անգամ, երբ մենք ձեռնամուխ էինք լինում մեր պլանների իրականացմանը՝ գտնելով այն հաղորդիչը, որի միջոցով

դա կարող էինք անել, մեզ հակադիր ուժերը կատաղի հարձակման էին անցնում, և մենք ստիպված էինք լինում նահանջել: Սակայն հնարավոր չէ անվերջ խուսափել սեփական ճակատագրից: Եթե կա Աստծո Պլանն այդ երկրի՝ Ռուսաստանի համար, իսկ ես ասում եմ ձեզ, որ այդպիսի պլան կա, ապա այն պետք է իրականացվի: Եվ Ուղու բոլոր խոչընդոտները միայն կոփում են մարտիկին: Խոչընդոտներն անհրաժեշտ են, որպեսզի ձեռք բերվի հմտություն, լավագույն կարողություն:

Եվ եթե դուք, ձեր ծնողները և ձեր պապերը չանցնեիք այն ամենով, ինչով անցաք վերջին հարյուր տարում, ապա հազիվ թե այժմ կարողանայիք հասկանալ մեր Ուսմունքը:

Մոլորություն է կարծել, թե մենք պարտություն ենք կրել: Այդ պարտությունը, պաշտելիներս, միայն ֆիզիկական ոլորտում է: Եվ բոլոր այն զոհերը, որ եղան պատերազմների, հեղափոխությունների ու հալածանքների տարիներին, եղան միայն ֆիզիկական ոլորտում: Իսկ եթե դիտարկեք այն, ինչ տեղի է ունեցել նուրբ ոլորտում, ապա կտեսնեք հոգիների վիթխարի աճ: Կտեսնեք այն հնարավորությունները, որոնք այդ աճի համար ընձեռված են եղել հոգիներին:

Կտեսնեք նաև, որ որոշ մարդիկ իրենց զոհաբերեցին հանուն Ընդհանուր Բարօրության ու Բարու այն դեպքում, երբ մյուսները, ֆիզիկական ոլորտի վաղանցիկ օգուտի հետևից ընկնելով, ահավոր հանցանքներ գործեցին և կարմա կուտակեցին:

Եվ այդպես է եղել նորագույն պատմության ողջ ընթացքում:

Աստված ուզում է, որ դուք զարգանաք: Աստված ուզում է, որ դուք կատարելագործվեք ու աճ ապրեք:

Եվ քանի որ Աստված սիրում է Ռուսաստանն ու նրա բնակիչներին, ապա Նա այդ երկրի ժողովրդին հնարավորություն է տվել անցնելու արագացված թեստերի ու արագացված զարգացման ուղով: Շատ բան է ապրվել. շատ մեծ կսկիծներ և շատ մեծ տառապանքներ վիճակվեց ապրել: Եվ այժմ երկիրը գտնվում է խոր հոգևոր ճգնաժամի և խոր լճացման մեջ:

Եվ դա այն անաստվածության կարմայի հետևանքն է, որը թույլ տվեցին մարդիկ: Պատկերացրեք, որ հատկապես հիմա է ծնվում այն մարդկանց սերունդը, ովքեր մարտնչում էին իրար դեմ քաղաքացիական կռվի դաշտերում և հանդիպում իրար հալածանքների տարիների հարցաքննությունների ընթացքում:

Կարո՞ղ եք պատկերացնել, որ հենց հիմա դպրոցի միևնույն դասասեղանի մոտ նստում են նախկին զոհն ու իր դահիճը: Սպանողները և նրանք, ովքեր սպանվել ու տանջահար են արվել: Իսկ կարման ոչ մի տեղ չի կորել: Կարման մնացել է և բեռնաթափում է պահանջում:

Ձեզ հայտնի է, որ եթե ճոճանակը շատ է շեղվում մի կողմի վրա, ապա, համաձայն ֆիզիկայի օրենքի, հավասար լայնույթով այն պետք է շեղվի նաև մյուս կողմի վրա: Եվ եթե վերջին հարյուր տարվա ընթացքում դուք վկա եք եղել, թե ինչպես է ճոճանակը շեղվում անաստվածության, անհավատության ու համայն տիեզերքի Բարձրագույն Օրենքի ժխտման կողմը, ապա դա նշանակում է, պաշտելիներս, որ հաջորդ հարյուր տարվա ընթացքում Ռուսաստանին կվիճակվի Հավատն առ Աստված և Բարձրագույն Օրենքը: Եվ քանի որ անցած 100 տարիներն անհետևանք չեն անցել մարդկանց հոգիների զարգացման առումով, ապա այդ հոգիների ձեռք բերած փորձն այլևս թույլ չի տա իրենց գլխին փաթաթել կույր հավատ ու արտաքին եկեղեցու որևէ կույր դոգմա:

Ուստի մենք նոր շրջան ենք սկսում լիակատար հոգևոր վակուումի վիճակում, և մեզ համար ավելի հեշտ կլինի ներկայումս Ռուսաստանում ապրող սերնդի մարդկանց ուղեղներում ու սրտերում նոր գիտելիքի, նոր գաղափարների և աշխարհակառույցի նոր ըմբռնման տնկարան հիմնելը:

Ֆիզիկական ոլորտի ոչ մի ավերմունք և մարդկանց մտքերի ոչ մի անելանելիություն խոչընդոտ չեն հանդիսանում: Ամենակարևորը մարդկային ուղեղներում և սրտերում մղումների սաղմնավորումն է՝ գիտելիքի հուր և աստվածային ազատության բոց վառելը:

Դուք սովոր եք հենվել արտաքինի վրա: Սովոր եք կառուցել ձեր պլանները՝ հիմնվելով ձեր խելքով ձեռք բերված արտաքին գիտելիքի վրա: Եկել է ժամանակը, երբ դուք պետք է հնարավորություն տաք Աստծուն գործելու ձեր միջոցով: Եվ այն ամենը, պաշտելիներս, ինչ անհրաժեշտ է դրա համար, լիակատար հրաժարումն է ձեր էգոյից, այս աշխարհի հետ ունեցած ձեր բոլոր կապվածություններից: Դուք ձեր տաճարները պետք է տրամադրեք Աստծո առաջնորդությանը: Մեզ խանգարում է ձեր էգոն, ձեր խելքի ունայնությունը, ձեր ունայն հարցախուզությունը:

Դուք պետք է պարզապես հույսներդ դնեք Աստծո Կամքի վրա: Դուք պետք է լիովին ենթարկվեք Աստծո Կամքին:

Աստծո Կամքը չի դրսևորվում արտաքին եկեղեցիներում: Ֆիզիկական ոլորտում չկա որևէ կազմակերպություն, որն արտահայտեր Աստծո Կամքը: Աստծո Կամքը, պաշտելիներս, դրսևորվում է միայն ձեր միջոցով, ձեր սրտերի՛ միջոցով: Ուստի դուք ձեր ողջ սրտով պետք է ցանկաք տրամադրել ձեր բոլոր ստորին մարմինները, որպեսզի ձեր երկրի համար իրականանա Աստծո Կամքը:

Դուք պետք է համակված լինեք Աստծո Կամքի կատարմամբ: Պետք է համակված լինեք Աստծո հնազանդ գործիքը դառնալու մղումով, որով կիրականացվի Աստծո մտահղացումը ձեր երկրում:

Ես ձեզ չեմ խնդրում, որ դուք ձեր կամքը ենթարկեք որևէ արտաքին կազմակերպության: Ես

ձեզ չեմ խնդրում, որ որևէ խրատ ստանալու համար դիմեք այս դեսպանորդին, ում միջոցով ես տալիս եմ սույն թելադրությունը:

Ո՛չ, պաշտելիներս, դուք այլևս ձեր և Աստծո միջև ոչ մի միջնորդի կարիք չունեք: Ձեր և Համբարձյալ դասերի միջև միջնորդի կարիք չունեք:

Ձեր Բարձրագույն Ես-ն ու ձեր Պահապան Հրեշտակը մշտապես գիտեն ձեր կենսահոսքի աստվածային պլանը: Եվ հարկ չկա գնալու դեսպանորդների, պայծառատեսների և պաշտամունքի սպասավորների մոտ, որպեսզի իմանաք ձեր կենսահոսքի աստծվածային պլանը: Ամեն ինչ գրառված է ձեր սրտում:

Ասացեք խնդրեմ, ձեզնից շատերն են արդյոք վերջերս զրուցել իրենց սրտերի հետ: Շատերն են արդյոք փորձել հասկանալ, թե ինչ է ասում իրենց սիրտը:

Դուք ձեր կյանքում այնքան եք զբաղված, որ չեք կարող գոնե հինգ րոպե առանձնանալ ինքներդ ձեր անդորրության մեջ, ունայնությունից հեռու: Ձեր սիրտն անընդհատ ուզում է զրուցել ձեզ հետ: Բայց դուք նրան չեք լսում: Դուք գերադասում եք լսել ձեր ընկերներին, ծանոթներին, դիտել հեռուստացույց, լսել ձեր ահավոր երաժշտությունը կամ փորձում եք գիտելիքներ քաղել թերթերից, գրքերից, ամսագրերից:

Պաշտելիներս, ձեր աշխարհում չկա որևէ տեղեկատվության աղբյուր, որ ձեզ հաղորդեր ձեր կյանքի պլանը՝ այն, թե ինչու եք մարմնավորվել, և թե այժմ ու մոտ ապագայում ձեզ ինչ է վիճակված անել:

Դուք չեք կարող այդ մասին լսել ռադիոյից, չեք կարող այդ մասին իմանալ հեռուստատեսային ծրագրերից: Դուք այդ մասին չեք կարդա որևէ գրքում:

Ձեր սիրտն իր մեջ պահում է ձեզ համար այնքա՛ն անհրաժեշտ, գաղտնախորհուրդ տեղեկատվությունը և վառվում է այդ տեղեկատվությունը ձեզ հետ կիսելու ցանկությամբ:

Բոլոր Համբարձյալ Դասերը, պաշտելիներս, պատրաստ են ցուցաբերել ողջ հնարավոր օգնությունը՝ ձեր այն գործին օգնելու համար, որի կատարման նպատակով դժվարին այս ժամանակներում դուք մարմնավորվել եք Երկիր մոլորակի վրա:

Ինչո՞ւ եք անտեսում Երկնքի օգնությունը:

Մինչև ե՞րբ պետք է վազվզեք ձեր թշվառ աշխարհով մեկ՝ կյանքի իմաստի փնտրտուքով տարված: Դուք ձեզ շրջապատող աշխարհում երբեք չեք գտնի կյանքի իմաստը: Ես դա ձեզ ասում եմ ամենայն պատասխանատվությամբ: Քանզի անցողիկը չի կարող ժառանգել անանցը: Ձեր բնույթն, ըստ էության, աստվածային է: Եվ դուք պետք է վերադառնաք ձեր աստվածային էությանը:

Ֆիզիկական ոլորտում կյանքի իմաստի ձեր որոնումն ի սկզբանե դատապարտված է ձախողման: Միակ ճշմարիտ Ուղին գտնվում է ձեր ներսում՝ ձեր սրտերում: Շատ են ճամփաները ձեր աշխարհում, որոնցով մարդիկ գերադասում են քայլել մարմնավորումից մարմնավորում, կյանքից կյանք: Եվ միակ ճշմարիտ ճանապարհը մերժվում է նրանց կողմից: Աստված համբերատար է, պաշտելիներս: Եվ, որքան էլ թափառեք արտաքին աշխարհում, կգա ժամանակը, և դուք կվերադառնաք Տուն:

Ուստի մոտակա ժամանակի ձեր հիմնական խնդիրն է շոշափել այդ ճանապարհը ձեր սրտում: Եվ շատ մոլորյալ հոգիների համար դուք այդ Ուղու վրա կկարողանաք վերածվել կենդանի ուղեցույցի:

Երբ դուք սկսեք ընթանալ Տունդարձի այդ Ուղով, ստիպված կլինեք հրաժարվել ավելորդ խուրջինից, որը ձեզ ծանրաբեռնում է և կապում ֆիզիկական աշխարհի հետ:

Ձեր թրթիռները կսկսեն բարձրանալ, ձեր մտքերն ու զգացմունքները կզուլալվեն, և դուք Ուղու վրա կծառայեք որպես լուսատուներ նրանց համար, ովքեր դեռևս շարունակում են խարխափել խավարում:

Աշխարհի բոլոր հրաշքներն ու բոլոր գանձերը թաքցրված են ձեր սրտերի խորքում: Եվ երբ ձեզ հաջողվի ձեր մղման միջոցով վառել ջահը ձեր սրտում, ապա ամեն ինչ կփոխվի և՛ ձեր ներսում, և՛ ձեր շուրջը:

Մեզ անհրաժեշտ են նվիրյալ աշխատակիցներ: Մեզ անհրաժեշտ են Լույսի մարտիկներ, որոնց վրա մենք կարող ենք հույս դնել ձեր երկրին և ամբողջ մարդկությանը վերաբերող մեր պլանների կենսագործման ընթացքում:

Վառեցեք ձեր ջահերն ու ընթացեք, նվիրաբերե՛ք ձեր հուրն աշխարհին:

ԵՍ ԵՄ Էլ Մորիան,
ձեզ եմ տալիս գիտելիքի հուրը

ՏԵՐ ՍՈՒՐԻԱ

26 մայիսի, 2005 թ.

ՈՒՍՄՈՒՆՔ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՄԱՅԻ ՄԱՍԻՆ

ԵՍ ԵՄ Սուրիան՝ ձեզ հետ հանդիպելու համար Մեծ Կենտրոնական Արևից այս դեսպանորդի միջոցով նորից եկածը:

ԵՍ ԵՄ եկել՝ կարմային և նրա փոխակերպությանը վերաբերող կարևոր Ուսմունքից ձեզ որոշ տեղեկություններ հաղորդելու նպատակով:

Եթե Երկիրը դիտարկեք հավերժության հասած Լույսի Մեծ Էակների տեսանկյունից, ապա ամբողջ մոլորակը, ձեզ շրջապատող ամեն ինչ և ձեր չորս ստորին մարմինները ոչ այլ ինչ են, եթե ոչ կարմա: Աստծո այն էներգիան, որը ծախսում են մարմնավորված անհատները՝ տիեզերական այս բոլորաշրջանում հարկադրված լինելով գտնվելու տիեզերքի ցածրագույն, թանձր ոլորտներում, այդ մարմնավորված անհատների գիտակցության միջով անցնելով ու բեկվելով, խտանում է և նրանց շուրջը գոյացնում համապատասխան մատերիական աշխարհ:

Այդ աշխարհը չդրսևորված վիճակից աստիճանաբար անցնում է դրսևորված վիճակի՝ մարմնավորված անհատների համար ստեղծելով վիթխարի թատերաբեմ: Եվ դուք, մի մարմնավորումից մյուսին անցնելով, հայտնվում եք այդ թատերաբեմում, որպեսզի խաղաք ձեր դերերը:

Ուստի ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ ձեզ շրջապատող ամբողջ մատերիական աշխարհն իրենից ներկայացնում է կարմա կամ թանձրացված էներգիա, որը կազմավորվել է ձեր սխալ գործողություններով, մտքերով ու զգացմունքներով:

Սակայն դուք, նույնիսկ ձեր այս կյանքի կենսական փորձից ելնելով, կարող եք հասկանալ, որ հազիվ թե որևէ բան կարողանաք սովորել, եթե ձեր կյանքի ընթացքում որևէ իրական բան չձեռնարկեք: Հայտնվելով մարմնավորման մեջ՝ Դուք մշտապես սովորում եք և կյանքի փորձ կուտակում: Դուք դա չեք կարող չանել, քանզի մատերիական աշխարհում եք հայտնվում հենց այն նպատակով, որ ուսում առնեք, անհրաժեշտ փորձ ձեռք բերեք:

Եվ երբ ձեր գիտակցությամբ հասնեք հարկ եղած մակարդակին, դուք կկարողանաք ձեր գիտակցության միջոցով կառավարել ձեզ շրջապատող աշխարհի իրավիճակը: Դուք կկարողանաք ձևափոխության ենթարկել ձեզ շրջապատող աշխարհը՝ ձեր էության միջով անցկացնելով Աստծո էներգիան, և, քանի որ ձեր գիտակցությամբ հասած կլինեք բավարար բարձր մակարդակի, ապա ձեր թրթիռները նույնպես կլինեն համապատասխան չափով բարձր: Եվ, ձեր թրթիռները ձեզ շրջապատող աշխարհի վրա հավելելով, դուք կկարողանաք ձևափոխել ֆիզիկական աշխարհը և այն ավելի ու ավելի մոտեցնել Աստծուն:

Ահա հենց սա՛ է վիթխարի երևութականությունը՝ Աստծո խաղը: Ներկա գտնվելով ձեզնից յուրաքանչյուրի մեջ՝ սկզբում Տերը պատրանքն է ստեղծում, ապա հետ հավաքում այն: Դա նման է այն բանին, երբ երեխան ավազից ամրոց է կառուցում և նորից քանդում, որպեսզի կառուցի մի ուրիշ, ավելի կատարյալ ամրոց: Եվ յուրաքանչյուր անգամվա հետ նրա ստեղծագործությունն ավելի ու ավելի է մոտենում կատարելությանը՝ իր կատարելության աստիճանով գերազանցելով նախորդին:

Դուք նման եք աստվածների, ուստի ձեր կյանքում հնարավորություն ունեք արարելու և ստեղծելու կատարյալ կերպեր:

Որոշ անհատներ գերադասում են ընթանալ իրենց սեփական ուղով և իրենց կյանքն ու իրենց շրջապատող իրականությունը կառուցում են այնպիսի չափորոշիչներով, որոնք հեռու են կատարելությունից: Աստված ձեզ թույլատրում է փորձարարություն անել: Ի վերջո ինքներդ վաղ թե ուշ կկարողանաք համոզվել, թե ձեր ստեղծածներից որն է, որ իր գեղեցկությամբ, ներդաշնակությամբ դուրս չէ կատարելության շրջանակներից, և որն է, որ փուչ է, այլանդակ և կարիք ունի ձևափոխության:

Ըստ այդմ՝ եթե դուք գերադասում եք ձեր կյանքում առաջնորդվել ցածրակարգ, այլ ոչ թե աստվածային չափորոշիչներով, ապա դա ձեզ թույլ է տրվում:

Դուք ձեր աշխարհում եք հայտնվել, որպեսզի սովորեք զանազանել աստվածային կերպերը նրանց այլանդակ նմանակումներից: Եվ պետք է սովորեք ձեր այդ ձեռքբերումը կիրառել կյանքի բոլոր բնագավառներում: Երկակի աշխարհի պայմաններում ամեն ինչ երկու երես ունի. այն, ինչ լավ է թվում, կարող է լինել վատ, իսկ այն, ինչ վատ է թվում, կարող է անգնահատելի օգուտ տալ ձեր հոգու զարգացմանը:

Ուստի ձեզ խորհուրդ է տրվում երբեք չդատել ձեր մարմնական խելքով: Ամենավերջին աղքատը (ձեր գիտակցության չափանիշով) կպարզվի, որ

հոգևոր մեծահարուստ է և իր կառուցել մարմնում տիրում է, հիրավի, անգնահատելի գանձերի: Եվ այդ անհատականությունը հատուկ մարմնավորվել է, որպեսզի աղքատ ապրելակերպի փորձ ձեռք բերի, քանզի նրա նախկին արքայական մարմնավորումներն իրեն այդ հնարավորությունը չեն ընձեռել: Աղքատիկ ապրելակերպի ընդունումը գիտակցության մեջ և այդ վիճակին համակերպվելը բարձր հոգևոր նվաճման վկայություն է: Եվ շատ բարձրագույն հոգիներ, մարմնավորվելով և իմանալով, թե որքան բարձր գին ունի նման փորձը, հրաժարվել են իրենց ողջ կարողությունից ու սոցիալական կարգավիճակից և վերածվել աղքատների: Պատմական շարադրանքներից դուք շատ այդպիսի օրինակներ գիտեք: Ես կհիշատակեմ միայն Ֆրանչեսկո Ասիզեցուն և Հաութամա Բուդդային:

Եվ եթե դուք հանդիպեիք իր փորձությունների շրջանում անտառում նստած Հաութամային, ապա հավանաբար կմտածեիք, որ դա մի աննշան, ձեր ուշադրությանը ոչ արժանի աղքատ է: Եվ դրանով իսկ կսխալվեիք և ձեռքից բաց կթողնեիք մեծագույն և հինավուրց այդ հոգու հետ շփվելու ձեր հնարավորությունը:

Այդ պատճառով է, որ ձեզ անհրաժեշտ է ունենալ զանազանման շնորհ:

Եվ հաջորդ օրինակը, ձեզ հայտնի են մարդիկ, ովքեր տիրում են մեծ հարստության: Իսկ գիտե՞ք արդյոք, որ նրանցից շատերն այդ հարստությունն ստացել են որպես մեծագույն փորձություն: Եվ գիտե՞ք արդյոք, թե նրանց համար որքան ծանր է տանել իրենց հարստության բեռը:

Այնուհանդերձ կարող եմ ձեզ ասել, որ ինչպես հարուստ մարդկանց, այնպես էլ աղքատ մարդկանց մեջ կան բարձր հոգիներ և կան նաև հոգիներ, որոնք վաղուց է, ինչ խուսափում են բոլոր հոգիների համար Աստծո նախանշած Ուղուց:

Ձեր աշխարհի հակադրություններն ու այն անդունդը, որը գոյություն ունի հարուստների ու աղքատների միջև, վկայում են ձեր աշխարհի կարմայի անհավասարակշռվածության մասին: Եվ միևնույն ժամանակ դա շատ լավ պայմաններ է ստեղծում ձեր հոգիների զարգացման համար:

Այո՛, պաշտելինե՛րս, որքան էլ իմ այս պնդումը ձեզ տարօրինակ թվա, ձեր կարման շատ լավ պայմաններ է ստեղծում ձեր հոգիների զարգացման համար:

Կարման ձեզ համար այն մարզիչն է, որը մշտապես ձեզ ծանրաբեռնում է և չի թողնում թուլանալ: Արդյունքում դուք մշտապես գտնվում եք լավագույն մարզավիճակում և մշտապես պատրաստ եք լինում աստվածային հատկանիշների ձեռքբերման գործում ինքներդ ձեզ գերազանցելու:

Ինչպես մեծ հարստությունը, այնպես էլ ծայրահեղ աղքատությունը ծանր կարմայի հետևանք են: Լինում է այնպես, որ մարդն ինքն է վաստակել այդ կարման, բայց լինում և այնպես, որ անհատը կամովին իր վրա է վերցնում այդպիսի ծանր կարման, որպեսզի իր մարմնավորման ընթացքում այն բեռնաթափի և դրանով թեթևացնի մարդկության կարման:

Պետք է կարողանալ տարբերել:

Իսկ հարստության ու աղքատության նկատմամբ ձեր ամենալավ վերաբերմունքը կլինի այն, որ նույնպիսի հանգիստ վերաբերմունք դրսևորեք և՛ ճոխության, և՛ ընչազրկության նկատմամբ:

Ամենագլխավորը ձեր մտածողության վիճակն է: Եվ եթե դուք միատեսակ եք ընկալում և՛ հարստությունը, և՛ աղքատությունը, ապա դա վկայում է այն մասին, որ արտաքին դրսևորումների նկատմամբ դուք կապվածություն չունեք: Դուք պետք է ձեր մեջ անկողմնակալ վերաբերմունք զարգացնեք ձեզ շրջապատող մարդկանց նկատմամբ:

Ո՛չ հարստությունը, ո՛չ աղքատությունը չեն վկայում հոգու զարգացման մասին, բայց հարստության ու աղքատության նկատմամբ ձեր վերաբերմունքը վկայում է ձեր հոգևոր նվաճումների մակարդակի մասին:

Եվ երբ մարդկության մեծամասնությունն իր գիտակցության մեջ ճիշտ կվերաբերվի աղքատության ու հարստության հարցին, դա կլինի այն բանի նշանը, որ մարդկությունն արդեն բեռնաթափել է համաշխարհային կարմայի այդ տեսակը: Եվ Երկրի վրա այլևս չեն լինի ո՛չ հարուստներ, ո՛չ աղքատներ:

Ուստի, եթե խոսենք անկեղծ, ապա որոշների հարուստ լինելն ու մյուսների աղքատ լինելը պարզապես ձեր անկատար գիտակցության հետևանքներից մեկի դրսևորումն է: Եվ, ձեր գիտակցության մեջ հաղթահարելով այդ անկատարությունը, ձեր կյանքում դուք այլևս չեք տեսնի ո՛չ անհարկի աղքատություն, ո՛չ էլ չափազանց հարստություն:

Ըստ այդմ՝ հարուստների կամ աղքատների դեմ պայքարելը ոչ մի իմաստ չունի:

Իմաստ ունի միայն ձեր անկատար գիտակցության դեմ պայքարելը, որը մերժում է աղքատությունը և մղվում հարստության կողմը:

Այսպիսով, հարուստներ ու աղքատներ այլևս չեն լինի, երբ մարդկության մեծ մասի գիտակցությունը ճիշտ վերաբերմունք կմշակի աղքատության ու հարստության նկատմամբ:

Ինչպես ձեր աղքատության, այնպես էլ հարստու թյան արմատը ձեր աշխարհի իրեղենի հետ ունեցած ձեր կապվածության կարման է: Երկուսից մեկը՝ կամ դուք այդ կարման կամավոր կերպով ձեզ վրա եք վերցնում, որպեսզի այն բեռնաթափեք, կամ էլ շարունակում եք կարմա կուտակել՝ մարմնավորումների ընթացքում սխալ օգտագործելով Աստծո էներգիան:

Եվ այսպես, այն ամենը, ինչ ձեզ շրջապատում է՝ ամեն մի հատկանիշը, ձեր աշխարհի ամեն մի դրսևորումը, յուրաքանչյուր միտքն ու զգացմունքը, հանդիսանում է ինչպես ձեր կարմայի, այնպես

էլ ողջ մարդկության կարմայի հետևանքը: Իսկ այդ ամենն իրար հետ ստեղծում են այն հետևանկարը՝ այն թատերաբեմը, որը ձեր հոգուն հնարավորություն է տալիս ստանալու ամենաորակյալ ուսուցումն ու զարգացում ապրել:

Ձեր կյանքը ձեզ կարող է թվալ կատարելապես անելանելի: Ուստի, թերևս, ձեզ համար մեծ մխիթարություն կլիներ, եթե ասեի, որ շատ Լույսի Էակներ նախանձում են ձեզ, որ դուք այդպիսի լավ հնարավորություններ ունեք ձեր հոգու զարգացման համար: Եվ նրանցից շատերը հաճույքով իրենց տեղը ձեզ հետ կփոխեին, եթե Աստծո Օրենքը դա թույլատրեր:

Ուստի ձեր խնդիրն է ավելի լայն հայացք ձեռք բերել ձեր հոգու, ինչպես նաև ողջ մարդկության և համայն տիեզերքի զարգացման վրա:

Եվ ես ուրախ կլինեմ, եթե այսօրվա մեր զրույցը նպաստի ճիշտ ուղղությամբ ձեր գիտակցությունը փոխելու գործին:

ԵՍ ԵՄ Սուրիան, ձեզ իմ ողջույնն եմ հղում
Մեծ Կենտրոնական Արևից

ՏԵՐ ՄԱՅՏՐԵՅԱ

27 մայիսի, 2005 թ.

ՈՒՍՄՈՒՆՔ ՍԻՐՈ ԵՎ ԿՅԱՆՔԻ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԵՍ ԵՄ Տեր Մայտրեյան՝ այս դեսպանորդի միջոցով նորից եկածը:

Մեր հաղորդակցության քաղցրությունն ու այն տեղեկատվությունը, որը մտադիր եմ ձեզ հետ կիսել, ձեզ համար օգտակար կլինեն:

Այնքան հազվադեպ է վիճակվում հաղորդակցվել չհամբարձված մարդկության հետ: Եվ այնքան հազվադեպ է ձեզ վիճակվում հաղորդակցվել Համբարձյալ Դասերի հետ, որ ոչ մի տեղեկատվություն չի լինի ավելորդ, և քաղցր կլինի այն ժամանակը, որը դուք կծախսեք՝ այս թելադրություններն ընթերցելով:

Ես ուզում եմ ձեզ հետ խոսել մի նյութի շուրջ, որն առավելագույն կարևորություն ունի: Եվ ես ուզում եմ զրուցել ձեզ հետ այդ նյութի շուրջ, որովհետև ձեզ համար այժմ դրանից ավելի կարևոր բան չկա:

Եթե հրաշք կատարվեր, և բոլոր մարդիկ հանկարծ սկսեին Սեր զգալ, ապա, կարող եմ ձեզ հավաստիացնել, տեղի կունենար ակնթարթային կերպափոխության հրաշք: Սերն այն հատկանիշն է, որի նկատմամբ ձեր աշխարհն ունի խրոնիկական անբավարարություն: Բայց իրականում Սերը նաև այն հատկանիշն է, որն ի սկզբանե հատուկ է եղել ձեր աշխարհին: Եվ այն, որ դուք մշտապես Սիրո անբավարարություն եք զգում, խոսում է այն մասին, որ դուք ընթանում եք սխալ Ուղով:

Ա՜խ, եթե դուք կարողանայի՜ք զգալ այդ հիասքանչ, ամենագրավիչ զգացմունքը... Ձեր միտքն ու ձեր հուզական մարմիններն այդ դեպքում մշտապես կլինեին բարձրաթրթիռ վիճակում: Ձեր թրթիռները մշտապես կլինեին ձեզ համար մատչելի ամենաբարձր սահմանի վրա:

Իսկ ձեզ ուրիշ ի՞նչ է պետք, պաշտելի՜ներս:

Երբ մարդ համակվում է բարձր թրթիռներով, երբ նա լի է Աստծո Սիրով, ապա ապրում է անառիթ երջանկության վիճակ, կյանքն իմաստավորվում է, լցվում հանգստությամբ, ներդաշնակությամբ:

Ես նկատի չունեմ այն որակը, որը Երկրի բնակչության մեծամասնությունը սեր է անվանում, և որն իրականում ոչ մի կապ չունի Աստծո ճշմարիտ, մաքուր Սիրո հետ:

Ես ամենայն որոշակիությամբ ու հավաստիությամբ կարող եմ ձեզ ասել, որ իսկական Սիրո զգացմունքը ձեր աշխարհի համար նույնպիսի հազվադեպ երևույթ է, ինչպիսին Համբարձյալ Դասերի հետ ձեր հանդիպելը:

Եվ եթե թեկուզ և կարճ ժամանակով դուք կարողանայիք ձեր թրթիռները վեր հանել մինչև Աստծո Սիրո աստիճանը, ապա համարյա ակնթարթորեն հաղորդակցության մեջ կմտնեիք Համբարձյալ Դասերի հետ:

Համբարձյալ Դասերը շատ զգայուն են Սիրո հատկանիշի նկատմամբ: Ուստի մենք ձեզ խնդրում ենք մեզ առաքել ձեր Սերը: Մեզ համար ավելի բարձր երանություն չկա, քան ձեր Սերն զգալը:

Բազմաթիվ դեսպանորդների միջոցով տրված շատ Ուսմունքներում ասվել է, որ Սերը բանալի է: Այժմ դուք հասկանո՞ւմ եք, թե ինչու է Սերը բանալու դեր խաղում:

Որովհետև այդ զգացմունքն ունակ է ակնթարթորեն վեր հանելու ձեր թրթիռները և դրանք մոտեցնելու Լույսի եթերային օկտավաների թրթիռներին: Եվ դրանից հետո դուք ունակ եք դառնում կապ հաստատելու այն Վեհապետի հետ, որի

նկատմամբ տվյալ պահին աստվածային Սեր եք տածում:

Մեր աշխարհի հետ հաղորդակցվելուն ձեր պատրաստ լինելու ազդանշանը կլինի այն, որ դուք ունենաք Սիրո, ճշմարիտ Սիրո, Աստծո Սիրո զգացմունք: Նույն այդ Սիրո զգացմունքը բացարձակ անթափանց պաշտպանություն է ստեղծում այն հարձակումների դեմ, որոնք կարող են լինել կամայական բացասական ուժերի ու էներգիաների կողմից և այն անհատների կողմից, որոնք ենթարկվել են այդ ուժերի ազդեցությանը:

Ըստ այդմ՝ շատ հեշտ է որոշել այն ուղղությունը, որով ընթանում եք: Եթե դուք զգում եք անառիթ Սեր, բերկրանք ու անդորրություն՝ ուրեմն ընթանում եք ճիշտ ուղղությամբ: Դուք պատրաստ եք լինում գրկելու ողջ աշխարհը և օգնություն ցուցաբերելու ողջ աշխարհին: Ձեզ պարուրում է ոչ մի պատճառ չունեցող առատաձեռնություն, բերկրանք, անվերջ ձեր Լույսը, ձեր Սերը տալու ցանկություն, նվիրաբերելու ձեր Սերն աշխարհին՝ փոխարենը ոչինչ չպահանջելով:

Եվ, հակառակը, երբ մոլորվել եք և գնում եք ոչ այն ուղղությամբ, ապա դուք կզգաք Սիրո անբավարարություն և դրա հետևանքով՝ կասկածամտություն, վախ, մեղադրում:

Սիրով լեցուն յուրաքանչյուր մարդ իր թրթիռներով այնքան կտարբերվի ձեզնից, որ նրա ներկայությունը ձեզ կգրգռի: Ինչպես տեսնում եք, Ուղու հավաստիության հայտանիշը, որով ընթանում եք, շատ պարզ է:

Դուք կամ ունեք Սիրո զգացմունք, կամ չունեք այդ զգացմունքը:

Իսկ քանի որ այդ ազնիվ զգացմունքն ապրելու ունակ է Երկրի մարդկանց շատ փոքր տոկոսը, ապա դրանով դուք կարող եք դատել, թե որքան մարդիկ են ընթանում ճիշտ Ուղով:

Եթե դուք արդեն սովոր եք Սիրո զգացմանը, ապա Սիրո բացակայությունը ընկալում եք որպես մեծ անբավարարություն: Դուք ակնթարթորեն զգում եք, որ Սերը ձեզ չի բավականացնում: Կարող եմ գաղտնիքի կարգով ասել, որ երբ Ուղու վրա դուք անցնում եք ձեր թեստերը, Սիրո զգացմունքն արգելափակվում է: Այդ դեպքում ձեր թրթիռները ցածրանում են, դուք հայտնվում եք անելանելիության վիճակում և ընկնում եք բոլոր այն բացասական հույզերի ազդեցության տակ, որոնք բնորոշ են ձեր աշխարհին և անկատար, բացասական էներգիաների տեսքով առկա են ձեր աուրայում:

Սակայն Ուղու վրա թեստեր անցնելը ձեզ համար շատ կարևոր ու անհրաժեշտ բաղադրիչ է:

Ձեր թեստերն իրենցից ներկայացնում են քննություններ: Շատ հեշտ է ապրել կյանքն ու ճիշտ որոշումներ ընդունել, եթե ձեր թրթիռները ներդաշնակ են ու բարձր: Սակայն աններդաշնակ գիտակցության վիճակում հայտնվելով նմանատիպ իրադրություններում՝ դուք արդեն դժվարանում եք ճիշտ ընտրություն կատարել: Դա նման է բազմապատկման աղյուսակի քննությանը: Հիշո՞ւմ եք, թե որքա՞ն դժվար էր լինում պատասխանել, թե ինչի է հավասար հինգ անգամ վեցը կամ յոթ անգամ ութը, երբ կանգնած էիք լինում դասարանի առաջ, և բոլորը ձեզ էին նայում: Չնայած երբ տանը հանգիստ իրադրության մեջ էիք լինում, առանց դժվարության գտնում էիք պատասխանները:

Թեստերը ձեզ անհրաժեշտ են, որպեսզի, լինելով կյանքի զանազան իրադրություններում, դուք կարողանաք ճիշտ ընտրություն կատարել: Դուք միշտ պետք է ընտրեք ամենավերին՝ աստվածային Ուղին: Որքան էլ ուժեղ լինի ձեզ շրջապատող պատրանքը, դուք մշտապես պետք է հիշեք, որ կա մի այլ՝ Բարձրագույն իրականություն: Եվ այդ իրականությունն էլ հենց ձեր իսկական Տունն է: Իսկ այդ աշխարհում դուք պարզապես օտարականներ եք:

Եվ երբ դուք հաջողությամբ հանձնում եք ձեր թեստը, Սիրո զգացմունքն ակնթարթորեն ձեզ է վերադարձվում: Հենց դրանով էլ դուք միշտ կարող եք իմանալ՝ թեստը հանձնե՞լ եք, թե՞ ոչ և որքա՞ն հաջող ու արագ:

Ձեզնից շատերը ցանկություն են հայտնում ծառայելու Համբարձյալ Դասերին: Եվ ձեզնից շատերի մղումը լիովին անկեղծ է: Սակայն դուք մոռանում եք, որ նախքան ավտոմեքենա, գնացք կամ ինքնաթիռ վարելը պետք է ուսում ստանաք և քննություն հանձնեք վարելու իրավունքի համար: Նույն բանը ձեզ առաջարկվում է նախքան կարևոր ծառայություն ձեզ վստահելը: Ձեզ առաջարկվում է ուսուցում անցնել և հանձնել մի շարք ավարտական քննություններ:

Սակայն մարդկանցից շատերը, հենց որ թեստերն ու կյանքի փորձություններն սկսվում են, մոռանում են Համբարձյալ Դասերին ու Երկրի մարդկությանը ծառայելու իրենց ցանկության մասին: Եվ ձախողում են իրենց թեստերը, և՛ կտրվում են ավարտական քննություններից:

Իսկ հետո նրանք շատ են զարմանում, որ իրենք ծառայելու պատրաստակամություն են հայտնել, բայց իրենց մերժել են:

Ախր, մենք ինչպե՞ս կարող ենք վստահել ու պատասխանատու գործ հանձնարարել, եթե գոնե մի քանի ամիս դուք ընդունակ չեք հիշելու ձեր խնդրանքների, ձեր ցանկությունների մասին, որոնք արտահայտել եք զոհասեղանի առաջ:

Իսկ շատ անհատներ այնպես են ահաբեկվում թեստերից ու դրանց հետ կապված կյանքի փորձություններից, որ պատրաստ են հրաժարվել և՛ իրենց խնդրանքներից, և՛ իրենց երդումներից, և՛ իրենց խոստումներից, որոնք տվել են զոհասեղանի առաջ կամ մեզ ուղղված նամակներում:

Եվ երբ որոշ ժամանակ անց նրանք հիշում են ծառայելու իրենց ցանկության մասին, պարզվում է, որ հնարավորությունը բաց է թողնված, և տիե-

զերաշրջաններն ու երկրային ժամկետներն արդեն թույլ չեն տալիս ձեռնադրումների նոր շրջան սկսել: Եվ շատ ցավալի է, որ մեր սաներից շատերը բաց են թողնում հնարավորություն հնարավորության հետևից, և ողջ կյանքը, հոգու զարգացման տեսակետից, անցնում է դատարկ:

Ըստ այդմ՝ եղեք մշտարթուն: Երբ գա թեստեր ու ձեռնադրումներ անցնելու ձեր հերթը, հետ մի՛ դարձեք ընտրված Ուղուց: Հիշե՛ք Սիրո այն զգացմունքի մասին, որը ձեր ուղեցույց աստղն էր և առաջ էր մղում ձեզ, և ցանկացած իրադրության մեջ փորձե՛ք կայացնել այն որոշումը, որը հետ կվերադարձնի ձեր Սիրո զգացմունքը:

Չեն լինում հեշտ թեստեր, և չեն լինում հեշտ փորձություններ ու քննություններ: Բայց այդպիսին է համայն տիեզերքի Օրենքը: Եվ դուք պետք է անհրաժեշտ թեստեր անցնեք նախքան ձեզ զենք վստահելը: Եվ հիշե՛ք, որ չկա այնպիսի թեստ, որը հնարավոր չլինի անցնել: Ձեզ տրվում է ուղիղ այնքան, որքանին դուք կարող եք դիմանալ՝ եթե նույնիսկ գտնվում եք ձեր ուժերի ու հնարավորությունների սահմանագծի վրա:

ԵՍ ԵՄ Մայտրեյան՝
Ձեր նկատմամբ Սիրով

ՏԵՐ ՀԻՍՈՒՍ

28 մայիսի, 2005 թ.

ՁԵՐ ԱՇԽԱՐՀԸ ԵՆԹԱԿԱ Է ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ, ՈՐԸ ԿԱՐՈՂ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ ՄԻԱՅՆ ՁԵՐ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

ԵՍ ԵՄ Հիսուս՝ այս օրով ձեզ այցի եկածը:

Այսօրվա իմ զրույցի բովանդակությունը մի նյութի մասին է, առանց որի Ուղով ձեր առաջընթացը պակաս հաջող կլինի: Ուստի դուք պետք է ժամանակ գտնեք և մանրազնին կերպով ծանոթանաք այս նյութին:

Դուք գիտեք, որ ես քայլեցի Երկրի վրա 2000 տարի առաջ: Եվ բազմաթիվ մարդկանց աչքում այդ իրադարձությունն այնքան նշանակալից եղավ, որ նրանցից շատերը պաշտեցին ինձ՝ որպես Աստծո Որդու և Փրկչի: Եվ նրանց այդ հավատը հիմք ծառայեց այն կրոնի համար, որը ձեզ հայտնի է որպես քրիստոնեություն:

Բայց պետք է ձեզ ասեմ, որ քրիստոնեությունն իր ողջ պատմության ընթացքում չի արտացոլել այն Ուսմունքի էությունը, որը ես ուսուցանում էի՝ գտնվելով Երկրի վրա:

Ես առանձնապես ցանկություն չունեմ ձեր ուղեղներում ու սրտերում անվստահություն սերմանելու քրիստոնեության, ինչպես և ցանկացած ուրիշ համաշխարհային կրոնի նկատմամբ: Պարզապես ես կցանկանայի ուղղորդել ձեր միտքը և ձեր ուշադրությունը կենտրոնացել ոչ թե Ուսմունքի այն արտաքին դրսևորման վրա, որը ներկայացված է բոլոր արտաքին քրիստոնեական եկեղեցիներում, այլ իմ Ուսմունքի ներքին էության վրա: Եվ ձեզ համար պարզ կդառնա, թե ինչու ինձ խաչեցին:

Իսկ իմ Ուսմունքի ներքին էությունն այն էր, որ ձեր աշխարհը ժամանակավոր աշխարհ է, և դուք պետք ձեզ նախապատրաստեք փոխադրվելու մի նոր աշխարհ՝ Աստծո Աշխարհը, որը ձեր իսկական Տունն է, որտեղից դուրս եք եկել, և որտեղ կվերադառնաք: Ըստ այդմ՝ աշխարհում չկա այն կրոնը, որն արտացոլեր իմ Ուսմունքի էությունը:

Գաղտնիքն այստեղ այն է, որ ամեն մի կրոն Աստծո Ճշմարտության բեկումն է մարմին առած մարդկանց ուղեղներում, որոնք փորձում են իրենց բառերով ձևակերպումներ տալ Աստծո Ճշմարտությանը: Եվ քանի որ այդ մարդկանց գիտակցությունը հեռու է կատարյալ լինելուց, ապա և Ճշմարտությունը, որը նրանք ներկայացնում են արտաքին կրոնի տեսքով, նույնպես հեռու է Աստծո իրական Ճշմարտությունից:

Ուստի Աստված միշտ աշխարհ է առաքում իր դեսպանորդներին ու մարգարեներին, որպեսզի թարմացնի ճշմարիտ Հավատն ու ճշմարիտ կրոնը: Կրոն՝ հիմնված ոչ թե կուռքի ու ձեր սահմաններից դուրս գտնվող ինչ-որ բանի պաշտման վրա, այլ կրոն՝ հիմնված ձեր ներսում, ձեր սրտերում առկա Միասնականի պաշտման վրա: Սրտի կրոն, որն ուսուցանում է համընդհանուր Սեր ամենայն արարվածի նկատմամբ և կյանք կրող բոլոր մասնիկների միասնականություն:

Այդ Հավատում կամ կրոնում տեղ չունի մի մարդկային անհատի գերազանցությունը մի ուրիշ մարդկային անհատի նկատմամբ: Այդ Հավատում

կամ կրոնում բոլորը բացարձակ հավասար դիրք են գրավում Միասնական Արարչի՝ Ստեղծարար Աստծո առաջ: Եվ բոլորը Տիրոջ տաճարի սպասավորներն են:

Քանի որ մարդու գիտակցությունն անկատար է, ապա այդ անկատարությունը մարդկանց անհավասարության պատճառ է հանդիսացել, ունեցվածքային անհավասարության, որը մարդկանց բաժանել է ունևորների ու աղքատների, և սոցիալական անհավասարության, որը հանգեցրել է տարբեր սոցիալական շերտերի ու խավերի առաջացման՝ ստեղծելով կրթության, տեղեկատվության, տարբեր նյութական բարիքների անհավասար, ոչ միատեսակ մատչելիություն բնակչության տարբեր շերտերի համար:

Ձեր աշխարհին հատուկ յուրաքանչյուր անհավասարություն ձեր անկատար գիտակցության հետևանքն է: Իրականում դուք բոլորդ բացարձակապես հավասար եք ձեր Հոր առաջ: Եվ ձեզնից յուրաքանչյուրին Երկնավոր Հայրը հավասարապես է սիրում և հոգ է տանում յուրաքանչյուրիդ մասին:

Սակայն ի սկզբանե ձեզ հատուկ անհատական առանձնահատկությունների պատճառով դուք ձեզ համար ստեղծում եք այն կարմայական պայմանները, որոնք ծնում են սահմանափակումներ: Եվ ժամանակի ընթացքում դուք հայտնվում եք ձեր գիտակցության զարգացման տարբեր աստիճանների վրա: Որոշ անհատներ Ուղով առաջընթացի ավելի մեծ հնարավորություն են ստացել՝ շնորհիվ իրենց նախորդ մարմնավորումների ընթացքում ձեռք բերած վաստակի: Որոշ անհատներ էլ հետ են ընկել իրենց զարգացման ճանապարհին, և նրանց գիտակցությունը շատ դժվար է ըմբռնում նույնիսկ ամենատարրական գիտելիքները:

Ըստ այդմ, պաշտելինե՛րս, Աստված թույլ է տալիս տարբեր դավանանքների, տարբեր կրոնների այսպիսի բազմազանություն, նույնիսկ եթե դրանցից շատերը չափազանց աղավաղում են Աստծո Իրականությունը: Քանզի որևէ մեկի համար այս կամ այն մոտեցումը կարող է լավագույնը լինել տվյալ անհատի գիտակցության զարգացման այդ փուլում:

Մենք լիովին հաշվի ենք առնում, որ ներկայումս այս դեսպանորդի միջոցով տրվող թելադրությունները հասկանալի կլինեն շատ քիչ թվով մարդկանց: Մյուս մարդկանց, հատկապես նրանց, ովքեր շատ ամուր են իրենց գիտակցությունը շղթայել ինչ-որ կրոնական հիմնադրույթի, այս թելադրությունները ոչինչ չեն տա, բացի գրգռվածությունից և այն մարդու հետ հաշվեհարդար տեսնելու ցանկությունից, որի միջոցով այս թելադրությունները տեղ են հասնում:

Եվ չի բացառվում, որ նորից հայտնվեք նույնպիսի իրավիճակի առջև, ինչպիսին ստեղծվեց 2000 տարի առաջ, երբ կատաղած ամբոխը գոչում էր. «Խաչե՛լ դրան»:

Հնարավոր է՝ գործն այս անգամ չհասնի ուղղակի ֆիզիկական հաշվեհարդարին: Բայց այն նեգատիվ ուժերը, որոնք գործում են ձեր աշխարհում, հոգ են տարել, որպեսզի սև մոգության ու կախարդության մի ամբողջ զինանոց մատչելի դառնա ամեն մի ցանկացողի համար: Նայեցե՛ք ձեր գրախանութների դարակներին: Գրքերի այն առատության մեջ, որոնցով դրանք ծանրաբեռնված են, հազիվ թե գտնեք մի քանի տասնյակ գրքեր, որոնք իրոք անհրաժեշտ են ձեր հոգևոր զարգացմանը և հոգևոր առաջընթացին: Գրքերի 90 տոկոսը հոգևոր փոխնակներ են, որոնց ընթերցումը լավագույն դեպքում անօգտակար է, իսկ վատագույն դեպքում ուղղակի կործանարար ազդեցություն կթողնի ձեր գիտակցության, ձեր մտածելակերպի վրա և տառացիորեն ձեզ կծրագրավորի ոչ ճիշտ արարքների կատարման ուղղությամբ:

Ուստի ես միշտ հսկայական բերկրանք եմ ապրում, երբ նուրբ ոլորտից տեսնում եմ, թե ինչպես ևս մեկին մատչելի են դառնում մեր թելադրությունները համացանցի խորքերում դրանք պարունակող կայքի որոնման արդյունքում: Ինձ համար այդ մարդը նմանվում է ձեր աշխարհի խավարում բանականության, սիրո, մղվածության, հավատի հանկարծակի բռնկված կրակի լեզվակի:

Եվ ես, դիտելով, թե ինչպես են ավելի ու ավելի շատանում նման լեզվակներն այն երկրներում, որտեղ հասկանում են ռուսաց լեզուն, որով տրված են այս թելադրությունները, շատ եմ ցավում, որ առայժմ մեզ չի հաջողվում գտնել այն հուսալի մարդկանց, ովքեր կկարողանային դրանք թարգմանել աշխարհի այլ լեզուներով: Ուստի խնդրում եմ ձեզնից նրանց, ովքեր իրենց մեջ ցանկություն, մղում և հնարավորություն են տեսնում աշխարհի այլ լեզուներով թարգմանություն կատարելու կամ թարգմանությանն աջակցելու համար. նեղություն մի՛ համարեք, խնդրեմ, կատարել իմ խնդրանքն ու կարևոր ծառայություն մատուցել աշխարհին:

Այս թելադրությունները նման են թարմ քամու, որը ներխուժում է մարդկության գաղջ մթնոլորտը: Եվ որոշների համար փոփոխությունների այդ թարմ քամին օգտակար է, քանզի նրանց դուր է գալիս ընդառաջ դուրս գալ այդ քամու պոռթկումներին, և այդ քամու մեջ կանխազգում են այն նորը, որն անխուսափելիորեն կանցնի Երկրով: Եվ արդեն իսկ անցնում է նրանց մտքերի ու սրտերի միջով, ովքեր կարդում են այս թելադրությունները: Մյուս կողմից՝ շատերին էլ այդ թարմ քամին այնքան ուժեղ կգրգռի, որ նրանք կուզենան ամեն գնով փակել մարդկային գիտակցությունը նորացնող ու բուժող այդ աղբյուրը: Քանզի նրանք այդ աղբյուրից բխող վտանգ են զգում, զգում են այն ուժը, որը կարող է խորտակել իրենց սովորական կյանքի դրվածքը և ստիպել հարմարվելու նոր աշխարհին ու այդ աշխարհում գոյատևելու նոր պայմաններին:

Նրանք կարող են, ինչպես 2000 տարի առաջ, գործադրել իրենց ջանքերը, որպեսզի ֆիզիկապես վերացնեն Լույսի աղբյուրը կամ միջոցներ ձեռնարկեն, որպեսզի այն խլացնեն իրենց անաստված գործողություններով: Սակայն հիշեցեք Տեր Սուրիայի զգուշացումը: Յուրաքանչյուր ոք, ով որևէ գործողություն կձեռնարկի մեր դեսպանորդի դեմ, ձեռք կբերի ձեր աշխարհին հատուկ կարմայի ամենածանր տեսակը՝ անաստվածության կարմա:

Յուրաքանչյուր ոք, ով բացահայտ կամ իր գիտակցության մեջ պայքարում է ընդդեմ Աստծո և Նրա Օրենքի, նման է քաղցկեղային ուռուցքի, որը ենթակա է բուժման. իսկ եթե բուժման չի ենթարկվում, ապա անհրաժեշտ է շտապ վիրահատություն կատարել, որպեսզի այդ ուռուցքը հեռացվի Աստծո Օրգանիզմից: Դա կարվի և արվում է արդեն՝ հանուն Տիեզերական Օրգանիզմի առողջության, որի մի մասն էլ ձեր մոլորակն է:

Ձեր իրական թշնամիները նիստեր չեն գումարում կառավարությունում ինչ-որ տեղ և չեն գլխավորում որևէ կրոն կամ դավանանք: Ձեր իրական թշնամիները, որոնց դեմ դուք պետք է անզիջում պայքար մղեք, գտնվում են ձեր ներսում: Եվ, առաջին հերթին, դա ձեր տգիտությունն է և ձեր գիտակցությունը փոխել չցանկանալը: Եվ դուք հազար պատճառ կգտնեք, որպեսզի արդարացնեք ձեր բոլոր գործողությունները, ձեր բոլոր բացասական հատկանիշները, մտքերն ու զգացմունքները, փոխանակ հրաժարվեք ձեր անկատարությունից և ձեր աշխարհի հետ ունեցած ձեր բոլոր կապվածություններն ու ձեր բոլոր թերությունները դնեք ձեր ներսի՝ ձեր սրտի մեջ գտնվող ճշմարիտ Աստծուն ծառայելու զոհասեղանին:

Ես գիտեմ, որ ձեզնից յուրաքանչյուրի համար կգա այն օրը, երբ բանականության Լույսը կլուսավորի ձեր էության խավարը, և դուք կանեք ձեր վերջնական ընտրությունը՝ այլևս երբեք ձեզ չբաժանելով այն Աստծուց, որի մի մասնիկն էլ դուք եք: Եվ դուք ձեր կյանքի ու ձեր գոյության իմաստը կգտնեք Աստծո Կամքին լրիվ հնազանդվելու և ձեզ շրջապատող իրականության մեջ այդ Կամքի կատարման գործին ծառայելու մեջ:

Ձեր աշխարհը ենթակա է փոփոխության, որը կարող է իրականացվել միայն ձեր գիտակցության փոփոխման ճանապարհով: Ահա սա էր այն պարզ ճշմարտությունը, որը ես եկա ուսուցանելու 2000 տարի առաջ, և մարդիկ գերադասեցին խաչել ինձ, քան թե փոխել իրենց գիտակցությունը:

Դե ինչ, դուք նորից կանգնած եք այդ նույն երկընտրանքի առաջ և նորից պետք է կատարեք ձեր ընտրությունը:

Ըստ այդմ՝ ես մաղթում եմ ձեզ, որ կատարեք ճիշտ ընտրություն, վերջապես հնազանդվեք Աստծո Կամքին և Նրա անկեղծ սպասավորները դառնաք հավիտյան:

ԵՍ ԵՄ Հիսուս

ՎԵՀԱՊԵՏ ԼԱՆԵԼԼՈ

29 մայիսի, 2005 թ.

ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ՍԻՐՈ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ ՁԵՐ ԱՇԽԱՐՀԻՑ ԴՈՒՐՍ ՄՂԵԼ ԱՄԲՈՂՋ ԱՆԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԵՍ ԵՄ Լանելլոն՝ նորից ձեզ այցի եկածը:

ԵՍ ԵՄ եկել, որ ձեզ հնարավորություն տամ ծանոթանալու Ռուսաստանի և աշխարհի իրադրության վերաբերյալ իմ մտքերին ու մտորումներին: Եվ ձեր ազատ կամքն է՝ ի գիտություն ընդունել իմ մտորումները, թե՞ ոչ, դրանցով կյանքում առաջնորդվել, թե՞ դեռ նետել: Ցավոք, դուք հազվադեպ եք ականջալուր լինում այն խորհուրդներին, որոնք ստանում եք մեզնից:

Եվ այն տեղեկատվությունը, որը պարունակվում է այս թելադրություններում, ձեզնից շատերի համար ոչնչով չի տարբերվում այն տեղեկատվությունից, որը դուք ստանում եք զուտ մարդկային աղբյուրներից: Դրա պատճառը ձեր Հավատի անբավարարությունն է: Դուք ձեր մարդկային խելքով ոչ մի կերպ չեք կարողանում հավատալ, որ Համբարձյալ Դասերը հենց այսպես, հասարակ ձևով, կարող են գալ և զրուցել ձեզ հետ:

Տեղի է ունենում ճիշտ այն, պաշտելիներս, ինչը դուք թույլ եք տալիս ձեր գիտակցության մեջ: Եվ եթե դուք ձեր արտաքին գիտակցության մեջ անվերջ կրկնում եք, թե այս Ռուսաստանում երբեք ոչինչ չի փոխվի և չի լինի ավելի լավ, ապա միամտություն կլիներ սպասել, որ ձեր շուրջը տեղի կունենան ինչ-որ փոփոխություններ: Սկզբում ձեր գիտակցությունը պետք է ընդունի փոփոխությունները, որից հետո տեղի ունենա այդ փոփոխությունների նստեցումը ֆիզիկական ոլորտում:

Մի՛ մոռացեք, որ էներգիան, Աստծո էներգիան, կարող է մուտք գործել ձեր աշխարհ միայն այն բյուրեղյա լարով, որն ամրացված է ձեր սրտում՝ ձեր սրտի գաղտնի մենաստանում: Եվ Աստծո էներգիան, որը մուտք է գործում ձեր աշխարհ ձեր սրտերի միջով, գունազարդվում է ձեր մտքերով, զգացմունքներով ու մղումներով: Եվ եթե դուք ձեր գիտակցության մեջ մշտապես կրկնում եք և ձեր գլխում մշտապես պահում եք Ռուսաստանի ապագային վերաբերող ամենավատ մտքերն ու ամենավատ կանխազգացումները, ապա այդքանից հետո ձեզ տարօրինակ չի՞ թվում արդյոք ինչ-որ դրական փոփոխություններ ակնկալել ձեր երկրում:

Ուստի այն, ինչ մոտակա ժամանակներում ձեզ անհրաժեշտ է սովորել, ձեզ շրջապատող իրականության նկատմամբ դրական տրամադրվածություն մշակելն է: Դուք պետք է դրական պատկերի աճ խթանեք ձեր գիտակցության մեջ՝ ձեր երկրի, ձեր բնակավայրի, վերջապես, ձեր ընտանիքի ապագայի համար:

Սովորություն դարձրեք ամեն անգամ ձեր ծառայության ավարտից հետո ներխոկում անել՝ ի բարօրություն Ռուսաստանի: Միացրեք ռուս երգահանների՝ Ռախմանինովի, Չայկովսկու երաժշտությունը կամ հանրահայտ համաշխարհային երգահանների՝ Բախի, Բեթհովենի, Մոցարտի երաժշտությունը: Խորհրդածեք, թե ինչպիսի՞ն դուք կուզենայիք տեսնել ձեր երկրի ապագան:

Մի՛ խուսափեք առաջին հայացքից չափազանց ֆանտաստիկ թվացող գաղափարներ արտահայտելուց: Ձեր գիտակցության մեջ կառուցեք ձեր երկրի համար երջանիկ ապագա: Եթե ձեզ համար դժվար է կենտրոնանալ ամբողջ երկրի վրա, ապա կարող եք մտորել այն գործունեության մասին, որը կարող է իրականացնել ձեր խումբը:

Եվ եթե որևէ խմբի անդամ չեք, ապա ձեր գիտակցության մեջ կարող եք ապագա կառուցել ձեր ընտանիքի, ձեր հարազատների ու մերձավորների և, վերջապես, անձամբ ձեզ համար: Եթե ձեր երևակայությունը չի բավականացնում, որ երջանիկ ապագա կառուցեք ձեր երկրի, ընտանիքի և ձեզ համար, ապա մտածեք այն մասին, թե ձեզ համար ի՞նչ է իրենից ներկայացնում երջանկությունը: Ի՞նչը դուք կուզենայիք ձեր կյանքում փոխել, որպեսզի մշտապես զգաք երջանկության, հանգստության, ներդաշնակության, սիրո վիճակ:

Նույնիսկ գտնվելով գիտակցության վերամբարձ վիճակում և հեռու վանելով ծանր մտքերն ու զգացմունքները՝ դուք ձեր աշխարհի համար վերածվում եք Լույսի աղբյուրի: Պատկերացրեք, թե ինչպես է անընդհատ հոսքով ձեր սրտի մեջ լցվում Աստծո մաքուր էներգիան: Եվ դուք այդ էներգիայի սեփականատերն եք: Եվ ձեզ վրա է դրված այդ էներգիան մաքուր ու անեղծ պահելու լիակատար պատասխանատվությունը:

Զգացեք, թե ինչպես է այդ էներգիան լցվում ձեր աուրայի մեջ: Ձեր աուրան ընդարձակվում է, հարթվում: Ձեր ողջ մարմինն ընկղմվում է երանության, լիության վիճակի մեջ: Դուք հանգստություն եք զգում և վստահություն՝ ձեր, ձեր ապագայի նկատմամբ: Հասկանում եք, որ Աստված հոգում է ձեր մասին Երկրի վրա գտնվելու ամեն պահի ընթացքում: Եվ ձեզ անհրաժեշտ է միայն զգայուն լինել և լսել այն խորհուրդները, որոնք ստանում եք ձեր իսկ Բարձրագույն մասից: Ձեր Բարձրագույն Ես-ը միշտ գիտի, թե ինչ պետք է անեք: Մի՛ համառեք, լսե՛ք նրա խորհուրդները, ընդունե՛ք նրա օգնությունը ձեր երկրային գործերում:

Երբ դուք լի եք հանգստության ու սիրո զգացումով, ապա փորձեք ձեր այդ զգացումը տարածել այն սեղյակով մեկ, որտեղ գտնվում եք: Այնուհետև պատկերացրեք, որ ձեր աուրան շարունակում է ընդլայնվել և ընդգրկել այն տունը, որտեղ ապրում եք: Հետո ձեր աուրան լայնանալով ընդգրկում է արդեն հարևան տները, ապա ողջ քաղաքը: Եվ ամեն մարդ, ով հայտնվում է ձեր աուրայի դաշտի ազդեցության տակ, դառնում է նույնքան հանգիստ, ներդաշնակ և հավասարակշռված, որքան դուք ինքներդ: Բոլոր վատ ու տագնապալից մտքերը լքում են յուրաքանչյուր մարդու, ով ընկնում է ձեր աուրայի դաշտի ազդեցության տակ:

Ձեր սրտի ամեն զարկի հետ ձեր աուրան ընդարձակվում է էլի ու էլի: Ձեր ամեն ներշնչման ու արտաշնչման հետ ձեր աուրայի ազդեցության գոտին ավելի ու ավելի է մեծանում:

Դուք կարող եք պատկերացնել, որ ձեր աուրայի ազդեցության տակ է ընկնում ձեր ամբողջ երկիրն ու ամբողջ երկրագունդը:

Ամբողջ աշխարհը մշտապես զգում է Սիրո, անդորրության պակաս: Դուք կարող եք ձեր Սերը նվիրել ամբողջ աշխարհին, ամեն մի կենդանի էակի, որը գտնվում է Երկիր մոլորակի վրա:

Պատկերացրեք, թե որքան շատ կան Երկիր մոլորակի վրա էակներ, որոնք հենց հիմա զգում են ձեր օգնության կարիքը: Եվ հենց այս պահին ձեր սրտից բխած Սիրո ալիքները կարող են կանխել որևէ մեկի մահը կամ թեթևացնել որևէ մեկի տառապանքները:

Նվիրաբերե՛ք ձեր Սերն աշխարհին: Դա այն է, ինչ կարող եք անել աշխարհի համար, և ձեզնից չի պահանջվի որևէ լրացուցիչ ծախս:

Առաքե՛ք ձեր Սերը ձեր երկրի նախագահին: Առաքե՛ք ձեր Սերը բոլոր այն մարդկանց, ովքեր իշխանություն ունեն և որոնցից կախված է ձեր երկրի իրադրության փոփոխությունը:

Երբ մեկը զգում է իր հասցեով առաքված Սեր, ապա դա նրան ուժ ու վստահություն է հաղորդում, որպեսզի իրականացնի ճիշտ, աստվածային գործողություններ: Աղոթե՛ք, որպեսզի ձեր կառավարիչներն ունակ լինեն իրենց սրտերի մեջ աստվածային իմաստություն ստանալ, որպեսզի նրանց սրտերը բաց լինեն աստվածային առաջնորդության համար: Ձեր երկիրը ձեր երեխան է՝ ձեր համայնական զավակը: Եվ ձեզնից յուրա-

քանչյուրի վրա պատասխանատվություն է ընկած հոգալու ձեր երեխայի մասին:

Այժմ ձեր երկիրը նման է անապաստան երեխայի, ով ոչ մեկին պետք չէ, և ում բոլորն անիծում են: Փոխեցեք ձեր վերաբերմունքը ձեր երեխայի նկատմամբ, և իրավիճակը ձեր երկրում կփոխվի:

Ես այսօր ուղղություն տվեցի ձեզ ձեր ամենօրյա աշխատանքի համար: Դուք կարող եք ինքներդ կազմել ներխոկման բովանդակությունն ու կրկնել այն:

Միակ պայմանը ձեր զգացմունքների անկեղծությունն ու մաքրությունն է: Դուք չեք կարող Սեր խաղալ, չեք կարող հոգածություն խաղալ ձեր երկրի համար: Դուք դա պետք է անեք անկեղծ: Անկեղծությամբ հղեք ձեր Սերը դեպի այն աներդաշնակ իրավիճակը, որը ծագում է ձեր երկրում: Ջերմությունն զգացեք ձեր սրտում: Զգացեք, թե ինչպես են Աստծո Սերն ու ներդաշնակությունն Աստծո Աշխարհից ներթափանցում ձեր աշխարհ:

Այժմ դուք կարող եք այդ Սերն ու ներդաշնակությունը սփռել ձեր ամբողջ երկրում, ամբողջ աշխարհում: Եվ, երբ դուք ձեր կյանքում կբախվեք որևէ աներդաշնակ իրավիճակի, միշտ հիշեցեք ներխոկման ընթացքում ձեր սրտում ապրած այդ Սիրո զգացմունքը և ձեր սրտից այդ Սերն առաքեք դեպի տվյալ աներդաշնակ իրավիճակը:

Դուք չեք կարող մարտնչել ողջ աշխարհի անկատարության դեմ, բայց կարող եք ձեր Սիրո օգնությամբ ձեր աշխարհից դուրս մղել ամբողջ անկատարությունը:

ԵՍ ԵՄ Լանելլոն՝ ձեր նկատմամբ սիրով լի

ՎԵՀԱՊԵՏ ՆԻԿՈԼԱՅ ՌԵՐԻԽ

30 մայիսի, 2005 թ.

ԵՍ ՀԱՎԱՏՈՒՄ ԵՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՄԵԾ ԱՊԱԳԱՅԻՆ ԵՎ ԿՈՒՉԵՆԱՅԻ ԻՄ ՀԱՎԱՏԻ ՄԻ-ՄԻ ՄԱՍՆԻԿՈՎ ՕԺՏԵԼ ՁԵՋՆԻՑ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻՆ

ԵՍ ԵՄ Համբարձյալ Վեհապետ Նիկոլայ Ռերիխը, ձեզ այցի եմ եկել այս դեսպանորդի միջոցով:

Այնքա՛ն շատ բան կուզենայի ասել Երկրի մարդկանց, ովքեր այժմ գտնվում են մարմնավորման մեջ: Իսկ պետք է ասել ամենաանհրաժեշտը. տալ հատկապես այն խորհուրդներն ու հանձնարարականները, որոնցից ներկայումս հարկավոր է օգտվել:

Նախկինում ասվածին անհրաժեշտ է ավելացնել տառացիորեն մի քանի հասկացություններ ու լուսաբանումներ, որոնք ձեզ այնքա՛ն անհրաժեշտ են: Եթե ես հիմա մարմնավորման մեջ լինեի, ապա իմ բոլոր ուժերը, իմ ողջ էներգիան և բոլոր դրամական միջոցներս կներդնեի միայն մի բանում. անվճար կրթության համակարգ ստեղծել այն տարիքի երեխաների համար, երբ նրանք առավել ընկալունակ են ցանկացած տեղեկատվության նկատմամբ, և երբ նրանց միտքը դեռ չի խցանված ստահոդ տեղեկատվության այն հոսքով, որը դուրս է հորդում զանգվածային լրատվության համաշխարհային միջոցներից:

Ես առավելագույն ջանքեր կգործադրեի, որպեսզի հանդիպեմ այն մարդկանց հետ, որոնց ձեռքում է իշխանությունը, ինչպես նաև այն մարդկանց հետ, ովքեր տիրապետում են ֆինանսական միջոցների: Հարկավոր է գտնել պետք եղած բառերը, հարկավոր է ջանալ համոզել, որպեսզի ստեղծվեն կրթական հաստատություններ այն երեխաների համար, ովքեր ունակ են ուսանելու և ունեն պրպտուն միտք: Դա պետք է լինի գլոբալ հումանիտար կրթություն՝ արվեստների պատմության, համաշխարհային պատմության, կրոնի պատմության, ժամանակակից հաղորդակցության միջոցների պարտադիր ուսուցմամբ: Հատկապես լայն մոտեցում ցուցաբերելով ստեղծագործության այն լավագույն նմուշօրինակների ուսումնասիրմանը, որոնք կան և՛ գիտության մեջ, և՛ արվեստում, որոնց տիրապետում է մարդկությունն իր զարգացման ներկա փուլում, և որոնք մարդկությունը ժառանգել է նախորդ սերունդներից:

Կրթությունը պետք է կրի բազմակողմանի համահումանիտար բնույթ: Արդեն ձևավորված սերնդին բնորոշ, կրոնական դոգմաներից ու անելանելիության շղարշից զերծ մանկական պրպտուն միտքն ունակ է սպունգի պես ներծծել այն բոլոր գիտելիքներն ու հասկացությունները, որոնք ունի մարդկությունը:

Մարդը, ով ստացել է լիարժեք կրթություն և, գլխավորը, պատկերացում է ստացել Աստծո Օրենքի մասին, կծառայի որպես այն հիմնակա-

ռույցը, այն հիմքը, որի վրա մենք կկարողանանք վեր խոյացնել ապագայի շենքը, այն Նոր Դարաշրջանի շենքը, որը գալիս է փոխարինելու հնին:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել կրոնի բնագավառին վերաբերող կրթությանը: Երբեք չի կարելի երեխայի գիտակցության մեջ ամրագրել Երկրի վրա արդեն գոյություն ունեցող որևէ կրոնի հիմունքները: Բայց պետք է գիտելիք և պատկերացում տալ Հավատի հիմունքների մասին: Աստվածային զգացումն ի սկզբանե հատուկ է աշխարհ եկած յուրաքանչյուր երեխայի: Հատկապես այն հոգիներին, որոնք պատկանում են նոր՝ Վեցերորդ Արմատական Ռասային և արդեն սկսել են մարմնավորվել Երկրի վրա:

Եվ այդ աստվածային զգացումը՝ Հավատն Աստծո Օրենքի ու Աստծո Արդարության նկատմամբ, պետք է ազատ զարգացում ստանան երեխայի գիտակցության մեջ՝ չենթարկվելով որևէ կրոնական դոգմայի ազդեցությանը: Երեխայի բաց գիտակցությունն ունակ է շատ արագ գտնելու այն ընդհանուր էությունը՝ ընդհանուր Սկզբնաղբյուրը, որը գոյություն ունի բոլոր կրոնների ու դավանանքների հետևում: Եվ դա է հատկապես այն, ինչը ներկա փուլում անհրաժեշտ է Ռուսաստանին:

Պատմականորեն Ռուսաստանը նախապատրաստվել է այն բանին, որ առաջինն ընդունի այն Նոր Հավատը, որը որևէ գոյություն ունեցող դավանաբանության չի պատկանում, այլ իր մեջ ներառում է դրանք բոլորը:

Կրոնական հիմքի վրա ծագած ցանկացած հակասություն հանդիսանում է մարդկանց գիտակցության սահմանափակության դրսևորում: Անմաքրաբարո մարդիկ օգտագործում են մարդկային գիտակցության սահմանափակությունը, որպեսզի կրոնական դոգմաների ու կանոնների միջոցով հաստատեն իրենց իշխանությունը: Այդ անմաքրաբարո մարդկանց և նրանց միջոցով գործող ուժերի խնդիրն այն է, որ բարուրեն մարդկանց միտքը և խցկեն այն դոգմաների ու կանոնների արկղի մեջ, որոնք բնորոշ են ներկայումս Երկրի վրա գոյություն ունեցող կրոններից յուրաքանչյուրին:

Եվ մարդը ստիպված է լինում իր վրա զգալ հակադիր ուժերի ազդեցություն: Մի կողմից՝ պաշտոնական կրոնի դոգմաների ու սահմանափակումների ճնշող ազդեցությունը, մյուս կողմից՝ կատարյալ անսահման և ոչ մի սահմանափակում չճանաչող աստվածային գիտակցության, որի մի մասն էլ ինքն է հանդիսանում: Եվ դա իր Բարձրագույն, Աստվածային Ես-ն է: Այդ հակասությամբ երկփեղկված մարդիկ ստիպված են, իրոք, ամբողջ կյանքն անցկացնել մուրճի ու զնդանի արանքում:

Կանխազգում եմ պաշտոնական կրոնի ուժեղ դիմադրությունը ապագայի կրթական հաստատությունների ստեղծման ընթացքում: Կանխազգում եմ, թե որքան դժվար կլինի մտադրվածն իրականացնելն ու պլանի կենսագործումը:

Սակայն երեխաներից յուրաքանչյուրն, ով լիարժեք կրթություն կստանա, կկարողանա ազդեցություն գործել և մասնակցել երկրի հազարավոր ու միլիոնավոր քաղաքացիների համար կենսական կողմնորոշիչների ձևավորման գործին՝ անկախ գործունեության այն բնագավառից, որտեղ նա կնախընտրի ներդնել իր ուժերը:

Երեխաների կրթության մասին հոգածությունն այն խնդիրն է, որն իր նշանակությամբ ու կարևորությամբ չի կարող համեմատվել որևէ այլ բանի հետ: Այն երկիրը, որտեղ հոգ չի տարվում ապագայի մասին, չի կարող կենսունակ երկիր լինել:

Ժամանակն է առօրեական նիստուկացի մեջ վերադարձնել այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են արժանապատվությունն ու պատիվը: Հասարակությունը բարոյական կողմնորոշիչների շտապ վերականգնման կարիք ունի: Ես լիովին հաշվի եմ առնում, որ այն, ինչ խնդրում եմ և ինչի մասին վարում եմ իմ այսօրվա զրույցը, շատ դժվար կլինի իրագործել: Երկիրն ամբողջությամբ և նրա յուրաքանչյուր քաղաքացին կրում են իրենց վրա անաստվածության կարման, որը Ռուսաստանն իր վրա է վերցրել 1917 թվականի հեղափոխությունից և ցարական ընտանիքի գնդակահարությունից հետո: Եվ այդ կարման ձեզնից շատերին թույլ չի տալիս տեսնել հեռանկարներն ու փակում է ձեր առաջ այդ երկրի ապագային վերաբերող Աստծո Տեսլականը: Եվ եթե դուք ձեզ լրիվ անզոր եք զգում և անհնարին եք համարում այդ երկրի դրական զարգացման պայմանների ստեղծման գործում ձեր ուժերի ներդրումը, ապա ոչ մի դեպքում մի՛ հուսալքվեք և մի՛ վհատվեք: Հավատացեք այն հրաշքին, որը կփրկի Ռուսաստանը: Ձեր հավատն առ այն աստվածային հրաշքը, որն անպայման կիրականանա և կփրկի Ռուսաստանը, հնարավորություն է ստեղծում Համբարձյալ Դասերի համար, որ միջամտեն երկրի ընթացիկ իրավիճակին:

Երբեմն ճիշտ ժամանակին արված և հարկ եղած ուղղվածությունն ունեցող մի ելույթը բավարար է լինում, որպեսզի դուք, պաշտելիներս, ձեր գիտակցության մեջ ընդունեք Ռուսաստանի համար հրաշքի երևույթի հնարավորությունը:

Աղոթեցե՛ք և ձեր ամենօրյա աղոթքներում խնդրեցե՛ք Աստծուց Ռուսաստանի փրկությունը, որպեսզի Աստված ողորմած լինի և հրաշք թույլ տա Ռուսաստանի համար:

Չափազանց ծանր է այն կարման, որը Ռուսաստանը ստեղծել է անաստվածության ժամանակներում: Սակայն, այդ կարման պետք է ընդունել խոնարհությամբ: Զղջացե՛ք: Հատկապես զղջումն ու անցյալում կատարած մեղքերի ընդունումն են հանդիսանում այն հանգամանքը, որը թույլ կտա Համբարձյալ Դասերին միջամտել ձեր երկրի իրավիճակին և հրաշք իրականացնելու:

Հույս մի՛ կապեք Ամերիկայի և Եվրոպայի հետ: Հույս մի՛ կապեք, որ ինչ-որ մեկը կգա և կփրկի Ռուսաստանը: Ռուսաստանը կհառնի, ինչպես

Փյունիկը մոխրից, և հատկապես նրանն է առաքելությունը, որպեսզի ուղի ցույց տա ամբողջ աշխարհին, այդ թվում և Ամերիկային ու Եվրոպային:

Ռուսաստանին վերաբերող բոլոր մարգարեությունները գրված են ռուսական ժողովրդական հեքիաթներում: Հիշեք Իվանին, ով այնքան պառկեց վառարանին, որ վառարանն ինքը սկսեց շարժվել առաջ, և Իվանը կերպափոխվեց ու սկսեց հրաշքներ գործել: Ռուսական ժողովրդական հեքիաթներում գրի է առնված Ռուսաստանին վերաբերող մարգարեություն: Ես ասում եմ ձեզ այն մասին, ինչը կանխորոշված է, այն մասին, ինչը նախապատրաստվում է, և այն մասին, ինչն ի կատար կածվի Ռուսաստանի համար:

Ես չեմ խոսում հեռավոր լուսավոր ապագայի մասին և կոչ չեմ անում նախապատրաստել ձեր թոռներին, որ նրանք պիտի ապրեն կոմունիզմի օրոք: Ես խոսում եմ հրաշքի մասին, որը տեղի կունենա ներկայումս ապրող սերնդի մարդկանց աչքի առաջ:

Քեզ տեսնեմ, Իվա՛ն, ելի՛ր վառարանի վրայից: Եկե՛լ է քո ժամանակը: Էլ կողքի մի՛ պառկիր: Մեծ անելիքներ կան մարդկության գիտակցության վերափոխման գործում...

Դուք կգիտակցեք այն ուժն ու էներգիան, որը հատուկ է Ռուսաստանի ժողովրդին: Եթե չլիներ Ռուսաստանի այդ մեծ առաքելությունը, արդյոք խավարի ուժերն այդքան ջանքեր կգործադրե՞ին, որպեսզի վերջին 150 տարիների ընթացքում ճնշեն Ռուսաստանի տարածքում ի հայտ եկած Նոր Աշխարհի ամեն մի ծլարձակումը:

Ես հավատում եմ Ռուսաստանի մեծ ապագային և կուզենայի իմ Հավատի մի-մի մասնիկով օժտել ձեզնից յուրաքանչյուրին:

ԵՍ ԵՄ Նիկոլայ Ռերիխը

ՎԵՀԱՊԵՏ ԿՈՒԹՀՈՒՄԻ

31 մայիսի, 2005 թ.

ՈՒՍՄՈՒՆՔ ԿԱՐՄԱՅԻ ՄԱՍԻՆ

ԵՍ ԵՄ Կութհումին՝ այս դեսպանորդի միջոցով նորից ձեզ այցի եկածը:

ԵՍ ԵՄ եկել, որ ձեզ ոչ մեծ մի Ուսմունք տամ և ամրապնդեմ այն գիտելիքները, որոնք տրվել են նախորդ թելադրությունների միջոցով: Լույսի Դասերն աննկատ կերպով ներկա են ձեր մեջ և օգտագործում են ներկայության ամեն մի հնարավորություն, հենց որ պատուհան է ստեղծվում՝ մաքուր թրթիռների տարածք, որը մեզ համար հնարավոր է դարձնում ձեր աշխարհում ներկա լինելը:

Մեր աշխարհներն իրար փոխհարստացնում են: Ձեր աշխարհը մի՛ համարեք դժոխածին:

Այո՛, այն իրավիճակը, որը ներկայումս դիտվում է ձեր աշխարհում, շա՛տ ցավալի է, բայց միշտ այդպես չի մնա: Եվ ձեր աշխարհի մաքրագործումը, և՛ դրան անխուսափելիորեն հետևող ֆիզիկական ոլորտի թրթիռների բարձրացումը մարդկության հետագա էվոլյուցիոն առաջընթացի անհրաժեշտ պայմաններն են:

Քանի որ ձեր կարման, ինչպես առանձին անհատի, այնպես էլ ընդհանուր մոլորակի կարման, շատ մեծ է, ապա խտացված էներգիան՝ սառած կարմայի տեսքով, ստեղծել է ձեր թանձր աշխարհը:

Երբ մարդկության գիտակցության բարձրացման, սխալ գործողություններից հրաժարվելու և մտքերն ու զգացմունքները ճիշտ, աստվածային համալարման մեջ պահելու միջոցով կարման բեռնաթափվում է, ֆիզիկական աշխարհի թանձրությունն աստիճանաբար պակասում է և ի վերջո անհետանում: Բայց շատ ավելի վաղ, քան Երկիր մոլորակի ֆիզիկական ոլորտը կանհետանա, կյանքն այդ ոլորտից կտեղափոխվի ավելի նուրբ ոլորտներ: Ներկայումս այդ ոլորտները բավականաչափ մոտեցել են իրար: Հատկապես շատ են մերձեցել աստեղային ու մենտալային ոլորտները: Դուք կարող եք անշարժ նստել տանը կամ թեկուզ աշխատանքի վայրում, իսկ այդ ընթացքում ձեր մենտալային և աստեղային մարմինները կարող են ճանապարհորդել մենտալային և աստեղային ոլորտներում: Իսկ այդ ճամփորդությունները կա՛մ կարող են հասնել ձեր արտաքին գիտակցությանը՝ գիտակցվել ձեր արտաքին խելքով, կա՛մ էլ չգիտակցվել:

Դուք ամեն գիշեր դուրս եք գալիս ձեր մարմնից և ճանապարհորդում աստեղային ոլորտում: Եվ այդ դեպքում նույնպես, ձեր արտաքին գիտակցությունը ոչ միշտ է գիտակցում, թե գիշերով որտեղ եք ճանապարհորդել և ում հետ հանդիպել: Կան որոշ անհատներ, ովքեր ունակ են հիշելու իրենց երազները և նույնիսկ երազի ընթացքում գիտակցորեն տեղաշարժեր կատարելու և հանդիպելու իրենց ուզած մարդկանց հետ:

Այդ գործունեությունը, ինչպես ձեր աշխարհին բնորոշ ցանկացած այլ գործունեություն, կարող է օգտագործվել և՛ բարի, և՛ չար նպատակներով:

Ամեն ինչ կախված է այն բանից, թե ինչ նպատակով, ինչ շարժառիթներով առաջնորդվելով է մարդն ի կատար ածում իր աստեղային ճամփորդությունները: Արդյոք իր շահադիտական նպատակներո՞վ է ուզում ազդեցություն գործել այն անհատների վրա, որոնց հետ հանդիպում է, թե՞ դա անում է մոլորակի բարօրության համար:

Ավելի նուրբ մարմիններով ֆիզիկական մարմնից դուրս կատարվող ճամփորդությունները բնական բաներ են: Եվ դրանք տեղի են ունենում անկախ այն բանից, թե ձեր արտաքին գիտակցությամբ դուք այդ գիտակցո՞ւմ եք, թե՞ ոչ:

Սակայն ձեզ պետք է նախազգուշացնեմ, որ եթե դուք գիտակցված ձևով մտնում եք աստեղային ոլորտ, որպեսզի ազդեք որևէ անհատի վրա կամ նույնիսկ վնասեք նրան, ապա ձեր գործողությունները կառաջացնեն ճիշտ նույնպիսի կարմա, ինչպիսին կառաջանար, եթե դուք այդ նույն գործողությունները կատարեիք օրը ցերեկով՝ արթմնի վիճակում, գտնվելով ֆիզիկական ոլորտում:

Եթե ձեր արտաքին գիտակցությունը չի գիտակցում, թե ինչ եք անում աստեղային ոլորտում, ապա դա նույնպես ձեր արարքների կարմայական պատասխանատվությունից չի ազատում ձեզ:

Ավելին ասեմ, շատ անհատներ քնի մեջ անհամեմատ ավելի մեծ կարմա են ստեղծում, քան իրենց գիտակցության արթմնի վիճակում: Ճիշտ նույն կերպ, եթե դուք տանն եք գտնվում և այդ ընթացքում անգիտակցական ելք եք թույլ տալիս դեպի աստեղային կամ մենտալային ոլորտ, և ձեր մտքերն ու զգացմունքներն ուղղված են որևէ անհատի դեմ, ապա կարմա եք ստեղծում:

Եթե ձեր գիտակցության մեջ մտովի պատկերացնում եք, թե ինչպես եք վրեժ լուծում կամ մտնում սեռական հարաբերության մեջ, ապա նույն կարման եք ստեղծում, ինչ որ կստեղծեիք, եթե այդ բաներն իրապես անեիք ֆիզիկական ոլորտում:

Ահա թե ինչու մենք չենք հոգնում նորից ու նորից ձեզ համար կրկնելուց, որ դուք մշտապես պետք է վերահսկեք ձեր մտքերն ու զգացմունքները: Ձեր գիշերային քնի ժամանակ դուք ձգվում եք դեպի աստեղային ոլորտի այն շերտերը, որոնց իրենց որակով համապատասխանում են քնելուց առաջ ունեցած ձեր մտքերի թրթիռները: Եթե դուք քնելուց առաջ սարսափի ֆիլմ եք դիտել կամ եղել եք հարբածների ընկերախմբում, ապա կձգվեք դեպի աստեղային ոլորտի այն շերտերը, որտեղ կշարունակեք ձեր երեկոյան զվարճությունները: Եվ այնտեղ կստեղծեք նույնպիսի կարմա, ինչպիսին կստեղծեիք, եթե այդ ամենն անեիք ֆիզիկական ոլորտում:

Ըստ այդմ՝ շատ կարևոր է օրվա ընթացքում ձեր պահվածքը, և հատկապես կարևոր է ձեր պահվածքը քնելուց առաջ:

Ամենից լավն աղոթելը կլիներ կամ, եթե քնելուց առաջ աղոթելու սովորություն չունեք, ապա գոնե հանդարտ երաժշտություն լսելը կամ բնության գրկում զբոսնելը: Նաև օգտակար կլինի, եթե քնելուց առաջ ձեր երեխաների համար կարդաք մի լավ, բարի հեքիաթ:

Եվ, իհարկե, պարտադիր է քնելուց առաջ հրեշտակներին խնդրելը, որ նրանք ուղեկցեն ձեզ դեպի Լույսի եթերային օկտավաները, դեպի Եղբայրության սրբազան մենաստանները: Դուք նույնիսկ կարող եք կոնկրետ ասել, թե ձեր քնի ընթացքում ո՞ր Վեհապետի հետ կուզենայիք հանդիպել և ո՞ր հարցի պատասխանն ստանալ:

Եթե դուք քնելուց առաջ ինձ տվել եք որևէ կոնկրետ հարց, ապա առավոտյան ձեր առաջին միտքը պետք է լինի այն, որ կենտրոնանաք և հիշեք այն պատասխանը, որը ստացել եք ինձնից ձեր քնի ընթացքում:

Որպես կանոն, բոլորին, ովքեր իրենց քնի ընթացքում հասնում են իմ մենաստանը և տալիս ինձ իրենց հարցերը, ես պատասխան տալիս եմ: Եվ ձեզնից է կախված անմիջապես արթնանալուց հետո այդ պատասխանը հիշելն ու գրի առնելը:

Տեսնո՞ւմ եք, թե որքա՞ն տարբեր ձևերով կարող եք անցկացնել ձեր ժամանակը քնի ընթացքում: Եվ դուք ինքներդ եք ընտրում, թե ինչպես օգտագործեք ձեր գիշերային քունը: Բառացիորեն ինքներդ եք քնելուց առաջ ձեզ ծրագրավորում, թե ինչ պիտի անեք գիշերային քնի ընթացքում:

Ուստի ես էլի՛ ու էլի՛ եմ կրկնում. ձեզ անհրաժեշտ է մշտապես, ամեն րոպե հսկել ձեր մտքերն ու զգացմունքները: Միշտ հիշեք, որ եթե այն իրավիճակները, որոնք պտտվում են ձեր ուղեղում, կարմայորեն պատժելի են, ապա դուք կարմա եք ստեղծում՝ պարզապես մտածելով այդ իրավիճակների մասին: Կարմա ստեղծելու մեխանիզմն այդ դեպքում հետևյալն է. Աստծո էներգիան, որն Աստծո Աշխարհից բյուրեղյա լարով հասնում է ձեր ստորին չորս մարմիններին, գունազարդվում է ձեր մտքերով ու զգացմունքներով: Եվ եթե ձեր մտքերն անկատար են, ապա դուք սխալ դասակարգում եք տալիս Աստծո էներգիային:

Շատ կարևոր է ժամանակի յուրաքանչյուր պահի ձեր գիտակցության վիճակը հսկողության տակ պահելը: Ձեր գիտակցությունն այնքան շարժուն է, որ նույնիսկ աղոթելիս հաջողեցնում եք այնքան կարմա ստեղծել, որ կարելի ապշած մնալ:

Ահա թե ինչու է ձեզ ասվում ներխոկումային գործառության մասին՝ որպես միտքը հանդարտեցնող հնարավոր եղանակներից մեկը:

Միայն այն դեպքում, երբ ձեզ հաջողվում է հանդարտեցնել ձեր բոլոր ունայն մտքերն ու զգացմունքները և հասնել ձեր մտքի լիակատար անդորրությանը, դուք ունակ եք դառնում հասնելու ավելի բարձր, եթերային օկտավաներին և երկար ժամանակով մնալու այնտեղ: Դուք ունակ եք դառնում հանդիպելու Վեհապետների հետ, զրուցելու և զբոսնելու նրանց հետ Լույսի եթերային օկտավաներում:

Ուստի եթե ուզում եք անուղղակի ձևով դատել

ձեր հոգևոր նվաճումների մասին, ապա լարեք զարթուցիչը, որպեսզի ժամը մեկ այն զնգա: Եվ հենց որ լսեք զարթուցիչի ազդանշանը՝ փորձեք հիշել, թե այդ պահին ինչ էիք մտածում: Եթե ձեր մտքերն այդ պահին բարձր, հոգևոր բովանդակություն ունենան, ապա թղթի վրա կամ հիշողության մեջ դա նշեք մեկ թվանշանով: Իսկ եթե ձեր մտքերն անորակ բնույթ կրեն, նշեք զրո թվանշանով:

Բավարար կլինի, եթե օրվա մեջ տասն անգամ իմ առաջարկած մեթոդով բռնեցնեք ձեր մտքերը: Դրանից հետո բոլոր մեկերը գումարեք, վերջում զրո ավելացրեք, և այդ թիվը ցույց կտա ձեր բեռնաթափած կարմայի մոտավոր տոկոսը: Օրինակ՝ եթե տասից վեց անգամ ձեր մտքերը վերամբարձ բնույթ են կրել, ապա ձեր կողմից բեռնաթափած կարմայի մոտավոր տոկոսը հավասար է 60-ի:

Ոչ մի հակասություն չկա այն բանում, եթե մի օր դուք բեռնաթափած կարմայի տոկոսը ստանաք 10, իսկ հաջորդ օրը՝ 70: Իրականում ձեր կարման օրվա ընթացքում փոխվում է: Կարման էներգիա է, և եթե դուք օրվա մեծ մասն անց եք կացրել բնության գրկում ու չեք շփվել ոչ մեկի հետ, ապա ձեր բեռնաթափած կարմայի տոկոսը մոտ կլինի այն իրական թվին, որին դուք հասել եք ձեր զարգացման ներկա փուլում: Եթե օրվա ընթացքում դուք շփվում եք հազար ու մի մարդու հետ, ապա ամեն անգամ նրանց աուրաներին հպվելով, նրանց հետ զրույցի մեջ մտնելով կամ համատեղ աշխատանք կատարելով՝ դուք նրանց հետ էներգիա եք փոխանակում: Այդպիսով, ամեն անգամ դուք կարմա եք փոխանակում այն մարդկանց հետ, որոնց հետ օրվա ընթացքում կապի մեջ եք մտնում:

Ահա թե ինչու են բոլոր մենակյաց վանականները, մարգարեները, յոգերն ապրել առանձնացված՝ գերադասելով չշփվել մարդկանց հետ:

Ահա թե ինչու, գտնվելով Երկրի վրա, դուք չեք կարող ձեզ վրա չկրել ձեր ընտանիքի, ձեր քաղաքի և համամոլորակային կարման:

Երկրի մարդկությունը կարմայորեն շատ է միահյուսված: Եվ պահանջվում է ունենալ հոգևոր նվաճումների բարձր աստիճան, որպեսզի ձեռք բերվի շրջապատի մարդկանց կարմայից անկախ լինելու ունակություն:

Նաև մի՛ մոռացեք, որ ձեր աշխարհում գործում է նմանության օրենքը: Դուք ձգվում եք դեպի այն մարդիկ, դեպի այն իրավիճակները, որոնք հարմար են գալիս, որ բեռնաթափեք ձեր կարման:

Բուդդան քայլում է Երկրի վրայով, և որևէ կարմայական իրավիճակ նրա վրա որևէ ազդեցություն չի գործում: Նա քայլում է Երկրի վրայով բոլորից աննկատ, և ոչ մի բացասական էներգիա չի կառչում նրանից: Սակայն սկզբում, որպեսզի Բուդդան կարողանա մուտք գործել ձեր աշխարհ, նա պետք է իր վրա անկատարություն՝ կարմա վերցնի: Նման այն բանին, երբ սուզակը սուզվելուց առաջ քար է առնում իր ձեռքերի մեջ:

Այդ պատճառով ձեզ թախանձագին խնդրվում է չդատել և ոչ մի մարդու: Դուք երբեք չեք կարող ասել՝ ձեր առջև Բուդդա՞ է կանգնած, թե՞ ամենավերջին մեղսագործը: Քանզի և՛ մեկը, և՛ մյուսը երբեմն ծանրաբեռնված են լինում միևնույն չափի կարմայով: Բայց նրանցից առաջինը գիտակցաբար է իր վրա վերցնում մարդկության կարման՝ ելնելով մարդկության նկատմամբ կարեկցանքից և նրան օգնելու ցանկությունից, իսկ մյուսն իր տգիտության երեսից է կարմայով ծանրաբեռնվում:

Այսօր ես շոշափեցի արդեն ձեզ հայտնի հարցերի մի մասը: Եվ մենք իրար հետ նոր տեսանկյունից քննարկեցինք շատ հարցեր: Կարմայի հետ կապված հարցերը շատ խրթին են, և ես գլուխ եմ խոնարհում Կարմայական Վարչության անդամների առջև՝ նկատի ունենալով այն դժվարությունները, որոնց բախվում են նրանք իրենց աշխատանքի ընթացքում:

ԵՍ ԵՄ Կութ-հումին

ՊԱՇՏԵԼԻ ԱԼՖԱ

1 հունիսի, 2005 թ.

ՈՒՂԵՐՁ ԵՐԿՐԻ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆԸ

ԵՍ ԵՄ Ալֆան՝ Երկրի մարդկության համար Ուղերձով եկածը:

ԵՍ ԵՄ եկել, որ կարևոր Ուղերձ տամ, որը ժամանակի այս պահին կօգնի ձեզ՝ պահպանելու ձեր մղման կիզակետը: Կենտրոնացե՛ք ձեր սրտի վրա: Միայն դուք եք և ձեր սիրտը, պաշտելի՛ներս:

Ձեր աշխարհում չկա ուրիշ ոչինչ: Ձեր սրտում է գտնվում դեպի Աստծո իրական աշխարհը տանող միակ մուտքը: Այն ամենը, ինչը ձեզ շրջապատում է ձեր ֆիզիկական աշխարհում, լոկ ծառայում է այն բանին, որ օգնի ձեզ՝ զարգանալու, աճ ապրելու, ինքներդ ձեզ հաղթահարելու և մեծացնելու ձեր գիտակցությունը, ձեր նվաճումները:

Դուք ճամփորդներ եք, որ մշտապես գտնվում եք անընդհատ շարժման մեջ: Նույնիսկ այն դեպքում, երբ դուք գտնվում եք հանգստի վիճակում, ձեր

աշխարհում հաղթահարում եք վիթխարի տարածություններ՝ ձեր մոլորակի, արեգակնային համակարգության ու գալակտիկայի հետ միասին սլանալով հազարավոր և միլիոնավոր կիլոմետրեր:

Դա արտաքին տիեզերքն է: Բայց կա մի ուրիշ՝ ներքին տիեզերք, և այդ տիեզերքի մուտքը գտնվում է ձեր ներսում՝ ձեր սրտի մեջ:

Ձեր հաջորդ քայլը պետք է լինի այն, որ հայտնաբերեք դեպի այլ աշխարհ տանող այդ մուտքը, Աստծո Աշխարհի մուտքը: Աշխարհ, որ ենթակա չէ ժամանակին և չունի տարածություն: Ամենիմացության և ամենայն կատարելության Աշխարհը: Այն Աշխարհը, որից ամեն ինչ սկիզբ է առնում, և ուր վերադառնում է ամեն ինչ: Ձեր Աշխարհն է դա, ձեր Տունը, ձեր իսկական Իրականությունը, որտեղից դուրս եք եկել և ձեզ համար ստեղծել ձեր ֆիզիկական աշխարհը:

Միլիոնավոր Լույսի էակներ աշխատել են և այժմ էլ աշխատում են դրսևորված տիեզերքի՝ արտաքին աշխարհի, ստեղծման վրա: Եվ ձեզնից յուրաքանչյուրն իր հերթին աշխատում է իր գիտակցության վրա՝ անկախ այն բանից, գիտակցում է դա, թե ոչ: Երեխան կարող է չգիտակցել աշխարհակառույցն իր ողջ բարդությամբ, բայց նա ծնվել է և հայտնվել այդ դրսևորված աշխարհում: Հետո երեխան մեծանում է, գիտելիքներ ձեռք բերում և գիտակցորեն մասնակցում աշխարհի կառուցմանն ու նրա գործունեությանը:

Դուք երեխաներ եք: Գիտակցության ձեր ունեցած մակարդակով դուք չեք կարող գիտակցորեն մասնակցել աշխարհների արարման և այդ աշխարհները կարգ ու կանոնի ու մաքրության մեջ պահելու գործին: Բայց ահա եկել է ժամանակը, երբ դուք պետք է հասունանաք:

Որպեսզի մուտք գործեք հասուն մարդկանց աշխարհը, ձեր ավարտական քննությունը կլինի այն, որ ձեր սրտի մեջ գտնեք այն մուտքը, որը տանում է դեպի Աստծո իրական Աշխարհը:

Ես մեծ հույսեր ունեմ, որ դուք բոլորդ, որ կարդում եք այս տողերը, կկարողանաք հանձնել ձեր ավարտական քննությունը, մի քննություն, որը ձեզ իրավունք է տալիս Աստծո հետ համատեղ արարել և գիտակից կերպով կյանքի կոչել այս տիեզերքի համար նախատեսված Աստծո Պլանը: Դուք պետք է անցնեք նեղ գաղտնի դռնով, որը թաքցված է ձեր սրտում՝ նրա գաղտնի մենաստանում:

Եվ ով էլ որ ձեզ կանչի դեպի տիեզերքի հրապուրիչ հեռուները, դեպի այն հեռավոր աշխարհների ճանաչումը, որոնք գտնվում են ձեզնից դուրս, մի՛ հավատացեք նրան: Բոլոր աշխարհները, հեռավոր և այլ աշխարհների բոլոր մուտքերը գտնվում են ձեր սրտում: Ձեր սրտում գտնվող դռան բանալին Սերն է:

Իսկ դուռը բացողը կլինի ձեր գիտակցությունը, ձեր աստվածային գիտակցությունը:

Ձեր արտաքին գիտակցությունն ու ձեր արտաքին խելքը ձեզ կխոչընդոտեն: Եվ ձեր ուղու վրա ձեր առջև կդնեն նորանոր խոչընդոտներ:

Բայց այժմ դուք գիտեք, թե որտեղ է գտնվում դեպի այն Աշխարհը տանող գաղտնի դուռը, որտեղից եկել եք և ուր պետք է վերադառնաք: Ձանացեք ձեր կյանքի փորձությունների ընթացքում չկորցնել այդ դռան բանալին: Եվ ջանացեք ձեր գիտակցությունից հեռացնել այն ամենը, ինչը խանգարում է ձեզ ներս անցնելու այդ նեղ դռնով: Ձեր աշխարհում չկա ոչինչ, որ ձեզ պետք գա Աստծո իրական Աշխարհում, բացի ձեր այն արժեքավոր փորձից, որը դուք արդեն ձեռք եք բերել և շարունակում եք ձեռք բերել ժամանակի ու տարածության մեջ ձեր թափառումների ընթացքում:

Եվ, եթե կարողանայիք հիշել, ապա ես ձեզ ուղարկել եմ ձեր աշխարհը, որպեսզի գանձ ձեռք բերեք: Իսկ այդ գանձն իրենից ներկայացնում է ձեր կաուզալ մարմինը: Դա ձեր մեծագույն գանձն է, անգին գանձը, ձեր այն գանձը, որը չի վախենում ո՛չ ժանգից, ո՛չ ցեցից:

Ձեզնից շատերն արդեն գտել են իրենց գանձը, որի համար ձեզ բոլորիդ ուղարկել եմ այդ աշխարհ: Եվ արդեն պետք է վերադառնաք Տուն: Հիշեցե՛ք, թե ովքեր եք դուք, և թե ինչու եք մեկնել ձեր աշխարհում ճամփորդելու:

Հասել է Բարձր իրականության արթնացման ժամը: Ժամկետը մոտեցել է, և ժամկետը հասել է:

Ձեզ Ուղին ցույց է տրված: Դուք գիտեք Ուղին: Դուք ունեք անհրաժեշտ ամեն բան, որպեսզի վերադառնաք Տուն: Ես կանչում եմ ձեզ, զավակնե՛րս:

Ես կարոտել եմ ձեզ: Լսո՞ւմ եք ինձ...

Եվ, եթե ձեզնից որևէ մեկն իր թափառումների ընթացքում գանձեր չի գտել, ապա մի՛ վշտացեք: Ես ձեզ կընդունեմ և առանց գանձերի: Միայն թե Տու՛ն վերադարձեք: Գտե՛ք ձեր սրտի գաղտնի դուռը:

Ես սպասում եմ ձեզ, զավակնե՛րս:

ԵՍ ԵՄ Ալֆան՝
ձեր Երկնավոր Հայրը

ՏԵՐ ՄԱՅՏՐԵՅԱ

2 հունիսի, 2005 թ.

ԵՍ ՁԵԶ ԿՀԻՇԵՑՆԵՄ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՀԱՆԴԻՊԵՔ ԻՆՁ ՀԵՏ ԵՎ ԻՆՉՊԵՍ ԸՆԴՈՒՆՎԵՔ ԳԱՂՏՆԻ ԾԵՍԵՐԻ ԻՄ ԴՊՐՈՑԸ

ԵՍ ԵՄ Մայտրեյան՝ այս դեսպանորդի միջոցով նորից ձեզ այցի եկածը:

ԵՍ ԵՄ եկել՝ խրատ, ուսուցում, հասկացում տալու անհրաժեշտությունից դրդված: Ձեր գիտակցությունը մշտական հղկման կարիք ունի: Կարիք ունեք, որ ձեր գիտակցությունն ամեն օր ոռոգվի մեր Էներգիայով և մեր Իմաստությամբ: Հազարավոր ու միլիոնավոր տարիներ դուք Իմաստություն եք ստանում Աստվածային Աղբյուրից: Ձեր կյանքերի ընթացքում լինում են ժամանակաշրջաններ, երբ ինքներդ ձեզ զրկում եք Երկնքի Իմաստության մատչելիությունից: Եվ նման դեպքում շատ ցավալի է լինում դիտելը, թե ինչպես եք դուք թափառում մոլորությունների անտառում՝ տեղ ու դադար չգտնելով: Իմ աշակերտներից շատ-շատերը նույնիսկ Ուսմունքի և Իմաստության պտուղները ճաշակելուց հետո ինչ-ինչ պատճառներով լքել են իմ դասերը և չեն ցանկացել հաճախել իմ պարապմունքներին: Ես շատ եմ ափսոսում: Անկեղծորեն ափսոսում եմ: Բայց նաև անկեղծ հույս ունեմ, որ կանցնի մի որոշ ժամանակ, և իմ աշակերտները կվերադառնան: Ես սիրում եմ իմ բոլոր աշակերտներին: Եվ ձեր աշխարհում չկա ոչինչ, որն իր ուժով ու զորությամբ կարելի լիներ համեմատել իմ Սիրո զորության հետ:

Շատերը չեն հասկանում, որ այն փորձություններն ու թեստերը, որոնք տալիս եմ իմ աշակերտներին, և որոնք թվում են իրենց համար շատ խիստ ու անտանելի ծանր, ես տալիս եմ՝ այդ անհատների հոգիների նկատմամբ իմ անսահման Սիրո զգացումից ելնելով: Ես թեստեր եմ տալիս այն հատկանիշների վերաբերյալ, որոնք ձեր մշակման կարիքն ունեն: Այն հատկանիշների վերաբերյալ, որոնց հետ դուք պետք է աշխատեք առաջին հերթին, և որոնց վրա դուք պետք է կենտրոնացնեք ձեր ուշադրությունը:

Ցավոք, ստացվում է այնպես, որ ձեր այդ հատկանիշները, որոնց մասին հիշեցում եք ստանում, հենց այն հատկանիշներն են լինում, որոնք ձեր ամենամեծ թերություններն են, և որոնց հետ դուք ամենաշատն եք կապված:

Դրա համար էլ իմ թեստերը ձեզ համար այդքան ցավոտ են լինում: Ուստի լքում եք ձեռնադրումների Ուղին և հեռանում, որպեսզի թափառեք տգիտության ու տառապանքների անտառում:

Շատերը ինձ մոտ են վերադառնում միևնույն կյանքի ընթացքում մի քանի անգամ և կյանքից կյանք, բայց հետո նորից են լքում իմ դասերը:

Անսահման համբերություն պետք է ունենալ, որպեսզի հնարավոր լինի աշխատել բազմաթիվ համառ աշակերտների հետ, և միայն այդ անհատների հոգիների նկատմամբ տածած իմ Սիրո զգացումն է, որ ինձ թույլ է տալիս նորից ու նորից նրանց ընդունել իմ դպրոցը, կրկին պարապմունքներ անցկացնել, գիտելիքներ տալ և ուսուցանել:

Ես եկել եմ, որպեսզի խրատ տամ այն հատկանիշի ձեռքբերման վերաբերյալ, որն առավել կարևոր է, և որի կարիքը դուք ամենաշատն ունեք:

Ձեր միտքը շատ շարժուն է, և դուք չեք կարողանում երկար ժամանակով կենտրոնանալ որևէ բանի վրա: Դուք գտնում եք նոր ուսմունք ու նոր գիրք: Սկզբում հրապուրվում եք և հետաքրքրություն ցուցաբերում, բայց անցնում է որոշ ժամանակ, և ձեր մղումը հանգչում է: Մղման կայծը մարում է՝ այդպես էլ բոց չտալով: Ինչո՞ւ է այդպես լինում:

Ձեզ աշակերտական կարգապահություն է պետք: Եթե դուք ամեն օր չհաղթահարեք ձեր անսանձ միտքը, ապա ձեր մարմնական խելքն ամբողջովին կտիրի ձեզ, և դուք կդադարեք ձեր սեփական ճակատագրի տերը լինելուց: Ձեր ունայն միտքն ամեն օր ձեր ձեռքը կտա նորանոր ուսմունքներ, գիտելիքներ, տեղեկատվություն, զվարճալիքներ: Եվ դուք անվերջ ձեռք կմեկնեք մեկ մեկին, մեկ մյուսին, մեկ երրորդին: Ցավալի է տեսնել, թե ինչպես են ձեզնից շատերն իրենց ողջ կյանքի ընթացքում վազում մի ուսմունքից դեպի մյուսը, մեկ այս գիրքն են վերցնում, մեկ այն գիրքը, հետաքրքրվում են մեկ մի ուսուցչով, մեկ մյուսով:

Կարծես ձեր կյանքում ընկած լինեք քամու բերանը: Եվ այդ ամենն այն պատճառով, որ ձեզ պակասում է մտքի կարգապահությունը:

Գործնականում ամեն մի ուսմունքում, որին ձեզ մոտեցնում է քամին, դուք կարող եք գտնել Ճշմարտության գոնե մի հատիկ: Բայց ձեր նկրտումը չի բավականացնում, որպեսզի աննշան ճիգեր գործադրեք Ճշմարտության այդ հատիկները գտնելու համար: Ի վերջո դուք մերձենում եք այն ուսուցչին ու այն ուսմունքին, որոնք ձեզնից ոչ մի ջանք չեն պահանջում: Եվ ինքներդ ձեզ սփոփում եք, թե ահա վեջապես գտաք այն, ինչ փնտրում էիք: Դուք ուտիճի պես խցկվում եք ճեղքը և չեք ուզում Լույսի

երես տեսնել: Եվ ամեն ինչի մեղավորը նորից ձեր խելքն է, որը նման դեպքում դրսևորում է ծուլության ու փոխվել չցանկանալու իր հատկանիշը:

Բոլոր այն աշակերտները, որոնք լքել են ինձ ու իմ պարապմունքները, դեգերում են տարբեր ուսմունքների ու աղանդների միջև կամ խցկվել են այս կամ այն կրոնական խմբի կամ աղանդի մեջ և այլևս չեն ուզում նախաձեռնություն ցուցաբերել, չեն ուզում առաջ շարժվել: Մի դեպքում նրանք փորձում են հանգստություն գտնել իրենց հոգու համար, և դա նրանց ստիպում է վազվզել աշխարհով մեկ՝ հոգևոր համադարման գտնելու հույսով: Մյուս դեպքում նրանք իրենք իրենց ներշնչում են, թե արդեն գտել են բոլոր դժբախտությունների համադարմանն ու ճշմարիտ ուսմունքը, և հիմա իրենց խնդիրն է նստել ու սպասել պայծառացման:

Կա միայն մեկ Ուղի, որը ձեզ վերադարձնում է Տուն՝ ձեր իսկական աշխարհը, ձեր ճշմարիտ իրականությունը: Եվ այդ Ուղին ձեր էգոյից ազատվելու Ուղին է: Եվ ուրիշ ուղի ու այլ հնարավորություն չկա, որ վերադառնաք Տուն: Սակայն Աստված այնպես է ամեն ինչ կանխատեսել ու դասավորել, որ ինչ ուղով էլ որ գնաք, միևնույնն է, կհասնեք ձեր նպատակին: Եվ որքան էլ թափառեք մոլորությունների անտառի թավուտներում, միևնույնն է, ի վերջո ելք կգտնեք ու կվերադառնաք Տուն: Բացառություն են կազմում գուցե թե միայն այն հոգիները, որոնք համառորեն չեն ուզում հետևել Աստծո Օրենքին: Բայց այժմ ես նրանց մասին չեմ խոսում: Ես ուզում եմ, որ այս զրույցը հասնի իմ այն աշակերտների գիտակցությանը, ովքեր հաճախել են իմ դասերին, իմ ղեկավարությամբ ուսում ստացել, բայց գերադասել են խուսափել դժվարություններից ու փորձություններից և ընտրել ավելի հեշտ ուղի: Բայց ուր էլ որ գնաք, ինչի հետ էլ ձեր կյանքում բախվեք, բոլոր հանգամանքները կդասավորվեն այնպես, որ ստիպված կլինեք հրաժեշտ տալ ձեր էգոյին:

Ձեր աշխարհում ձեր գոյությունն ինքնաբերաբար դեպի ձեզ է քաշում այնպիսի իրադրություններ, որոնք ստիպում են ձեզ հրաժեշտ տալ ձեր այն հատկանիշներին, որոնք ես մատնացույց էի անում իմ թեստերով ու փորձաքննություններով, բայց դուք չցանկացաք միանգամից հրաժեշտ տալ դրանց՝ գերադասելով փախչել ձեռնադրումներից և ընտրել ավելի հեշտ ուղի:

Պաշտելի՛ սաներս, դուք փախչելու տեղ չունեք: Դուք չեք կարող հեռու փախչել այն էներգիայից, որն առկա է ձեր ներսում, քանի դեռ ձեր ազատ կամքով չեք գերադասի հրաժեշտ տալ այդ էներգիային, որքան էլ որ դա ձեզ համար ցանկալի չլինի, և որքան էլ որ դա ձեզ համար ցավոտ ու դաժան լինի:

Իմ Դպրոցի ձեռնադրումների Ուղին ավելի կարճ է, բայց և ավելի ցավոտ: Եվ միայն ձեր էգոն ու ձեր ինքնախղճահարությունն են ձեզ ստիպում փախչել իմ ձեռնադրումներից և խուսափել ինձնից: Բայց ես միշտ պատրաստ եմ ձեզ հետ ընդունել իմ Գաղտնի Ծեսերի Դպրոցը: Եվ եթե տգիտության անտառում ձեր դեգերումների ընթացքում հասցրել եք մոռանալ, ապա ես ձեզ կհիշեցնեմ, թե ինչպես հանդիպեք ինձ հետ և հայտնվեք իմ Դպրոցում:

Ներկա ժամանակի պահանջից ելնելով՝ հարկ չկա գնալ որևէ այլ երկիր կամ աշխարհի ծայրը, որպեսզի ընդունվեք Գաղտնի Ծեսերի իմ Դպրոցը: Ես ինքս կգամ ձեր կանչով, երկրագնդի որ կետում էլ գտնվելիս լինեք:

Ձեզ միայն հարկավոր է նախապատրաստել ինքներդ ձեզ իմ ներկայության համար: Քանի դեռ գտնվում եք ձեր մարդկային մտքերի ու զգացմունքների շրջապատում, ես չեմ կարող մոտենալ ձեզ: Ինձ անհրաժեշտ է, որ դուք թեկուզ կարճ ժամանակով լրիվ հրաժարվեք ձեր մտքերից ու զգացմունքներից: Ինձ անհրաժեշտ է, որ դուք ձեր թրթիռները բարձրացնեք ձեզ համար մատչելի ամենաբարձր մակարդակի վրա:

Ես չեմ կարող լինել մարդաշատ վայրերում, չեմ կարող լինել այնտեղ, որտեղ միացված է որևէ ժամանակակից բարձրախոս սարք: Ես չեմ կարող լինել ձեզ հետ, եթե զբաղված եք ինչ-որ գործով, որը կարող է շեղել ձեր ուշադրությունը: Դուք պետք է լիովին կենտրոնացած լինեք ձեր սրտի վրա: Եվ պետք է լինեք լիակատար անդորրության ու ներդաշնակության վիճակում: Այդ վիճակում դուք կարող եք կանչ հղել և հրավիրել ինձ ձեր տաճարը՝ հանուն ԵՍ ԵՄ ՈՐ ԵՄ-ի: Եվ ես կհայտնվեմ ձեր սրտում և կտամ այն խրատը, որի կարիքը դուք ամենաշատն ունեք. կտամ ձեզ այն գիտելիքն ու ուսումը, որը ձեզ անհրաժեշտ է: Իմ աշակերտները ճանաչում են իմ թրթիռները: Եվ իմ աշակերտները պատրաստ են իմ գալստյանն սպասելու շատ ամիսներ ու տարիներ, մինչև որ ես, նրանց վիճակից ու մղման աստճանից ելնելով, հարմար կգտնեմ շարունակել իմ ուսուցումը:

Ես գալիս եմ ձեր աշխարհ իմ աշակերտների միջոցով:

Ըստ այդմ՝ կոչ եմ հղում իմ այն աշակերտներին, որոնք թափառում են մոլորությունների անտառում, որ կանգ առնեն և մտածեն՝ չի՞ եկել արդյոք այն պահը, երբ պետք է վերադառնալ Գաղտնի Ծեսերի Դպրոց և կրկին նստել դասասեղանի առաջ:

ԵՍ ԵՄ Տեր Մայտրեյան՝
ապագա Բուդդան

ՎԵՀԱՊԵՏ ԼԱՆԵԼԼՈ

3 հունիսի, 2005 թ.

ԵՍ ՁԵՋ ՄԱՂԹՈՒՄ ԵՄ ՀԱՂԹԱՆԱԿ

ԵՍ ԵՄ Լանելլոն՝ այս դեսպանորդի միջոցով նորից ձեզ այցի եկածը:

Այսօր մեզ վիճակված է նորից խոսել ձեր Ուղու և ձեր ծառայության մասին: Ամեն անգամ, երբ մենք գալիս ենք թելադրություն տալու, մենք միայն մի նպատակ ենք հետապնդում՝ բարձրացնել ձեր գիտակցությունը, ձեր հայացքն ուղղել Երկնոլորտներին, պոկել ձեզ ձեր հետաքրքրությունների սովորական շրջանակներից:

Ձեզ շրջապատող կյանքում այնքա՛ն քիչ են աստվածային թրթիռներով լեցուն իրական արժեքները: Այն ամենը, ինչը ձեզ շրջապատում է, համապատասխանում է մարդկանց զանգվածային գիտակցության մակարդակին, և, որպեսզի դուք կարողանաք դուրս պրծնել ձեզ շրջապատող հաղորդակցության շրջանակից, տեղեկատվական դաշտից և ընդհանրապես այն ամենից, ինչը շրջապատում է ձեզ, դուք ստիպված եք լինում և ստիպված կլինեք նշանակալի ջանքեր գործադրել:

Երբ դուք ամբողջ սրտով ուզում եք փոխել ձեր գիտակցությունը և այն մոտեցնել Աստծուն, տառացիորեն պետք է ուժով ստիպեք ինքներդ ձեզ հրաժարվել սովորական կենսակերպից, ձեր ստանդարտ վարվելակերպից և ձեր սովորություններից: Դուք պետք է ուրիշ մարդ դառնաք: Կարելի է շրջապատի ամեն ինչը փոխել, բայց ամենադժվարը ձեր գիտակցությունը փոխելն է:

Ժամանակակից մարդկանցից շատերն իրենց շրջապատում են նորօրյա տեխնիկայի հրաշալիքներով՝ գերժամանակակից համակարգիչներով, աուդիո և վիդեո տեխնիկայով, բայց նրանց գիտակցության մակարդակը մնում է այն վայրենու գիտակցության մակարդակին, որը, քարանձավում՝ խարույկի մոտ, նստած, դափի ու թմբուկի հնչյունների տակ խժռում է իր բաժին միսը:

Դուք կարող եք երթևեկել ամենաժամանակակից մեքենայով, հագնվել ամենանորաձև կերպով, բայց ձեր գիտակցությունը նախկինի պես կմնա նույն քարանձավային մակարդակին:

Այդ պատճառով ձեր ժամանակներում, ինչպես երբեք, շատ դժվար է Ուղին: Չափից շատ գայթակղություններ են ձեզ շրջապատում, և չափազանց դժվար է պահպանել բարձր հոգևոր մակարդակ՝ գտնվելով ձեր քաղաք-ջունգլիների կյանքի թավուտում:

Ձեզ շրջապատող ողջ իրականությունը ենթակա կլինի փոփոխման: Մարդը պետք է բացի իր աստվածային ներուժը և մերձենա բնությանը: Կյանքը պետք է հնարավորին չափ պարզ լինի և հարուստ ներքին բովանդակությամբ, այլ ոչ թե արտաքին զվարճանքներով, որոնք, եթե խորը մտածենք, նման են վայրենու զվարճանքներին: Եվ այն, որ ժամանակակից մարդը վզից տարբեր զարդարանքներ է կախում, շատ է նմանվում այն վայրենու վարքին, որը զարդանախշում է իրեն:

Թե ինչպես է մարդը հագնվում, ինչ երաժշտություն է լսում, ինչ կենսակերպ է գերադասում ունենալ, դրանցից կարելի է դատել նրա հոգևոր նվաճումների մակարդակի, նրա հոգևոր առաջընթացի կամ հետընթացի մասին:

Եվ եթե դուք մարդկային հասարակությանը նայեիք համբարձյալ գիտակցության մեր վիճակի դիրքերից, ապա առաջին բանը, որ աչքի կզարներ, այն է, որ մարդկությունն իր զարգացման մակարդակով միջին հաշվով չի գերազանցում վայրենիների զարգացման մակարդակին:

Եվ ձեզ համար շատ դժվար է լինում հրաժարվել ձեզ շրջապատող արդուզարդից, կյանքի նմանակումից: Եթե դուք ուշադրությամբ վերլուծեք այն ամենը, ինչը շրջապատում է ձեզ ձեր կյանքում, ինչով եք զբաղվում օրվա մեծ մասի ընթացքում, ապա անկողմնակալ լինելու դեպքում դուք զարմանքով կնկատեք, որ այն ժամանակի 90 տոկոսը, որն անց եք կացնում Երկրի վրա, ձեր կողմից ծախսվում է լիովին անտեղի՝ Աստծո մեջ ձեր ինքնակատարելագործվելու տեսակետից:

Իսկ իրականում այն բանի համար, որ Աստծո մեջ ինքնակատարելագործվեք, բոլորովին կարիք չկա, որ դուք գնաք անապատ կամ սար բարձրանաք՝ ներխոկում անելու համար:

Ձեր իրականության պայմաններում ընթացող ձեր կյանքը լավագույն պայմաններն է մատուցում ձեզ, որպեսզի ինքնակատարելագործվեք Աստծո մեջ, զարգացնեք ձեր գիտակցությունը:

Ամբողջ բանը ճիշտ տեսակետից նայելն է այն ամենին, ինչը տեղի է ունենում ձեր շուրջն ու ձեր կյանքում: Ամբողջ բանն այն է, թե ինչպես եք դուք արձագանքում այն ամենին, ինչը ձեզ հետ տեղի է ունենում, թե ինչպես եք ընկալում ձեզ շրջապատող իրականությունը:

Եթե Աստծո Պլանի ձեզ վերաբերող մասն այնպիսին լիներ, որ պետք է պահպանեք Երկիր մոլորակի համակշռությունը՝ մշտապես գտնվելով ներխոկման մեջ, ապա ծնված կլինեիք Տիբեթում կամ Հնդկաստանում ինչ-որ տեղ:

Սակայն դուք ծնվել եք Ռուսաստանում կամ

Ամերիկայում կամ Եվրոպայում: Եվ դուք պետք է ի կատար ածեք ձեր առաքելությունը հենց այնտեղ, որտեղ ծնվել եք:

Եվ լայն առումով ձեր աստվածային պլանը հանգում է միայն մի բանի՝ պահպանել ձեր գիտակցության մակարդակը հնարավորին չափ բարձր մակարդակի վրա, ձգտել հասնելու աստվածային գիտակցության մակարդակին՝ դուրս չգալով կյանքի թավուտից:

Ճիշտ չի լինի, եթե այս թելադրություններում պարունակվող հանձնարարականները դուք ընկալեք այն ձևով, որ դուք պետք է բնակություն հաստատեք անտառում ինչ-որ տեղ և ներխոկում անեք: Ո՛չ: Դուք պետք է գտնվեք կյանքի հորձանուտում, կատարեք ձեր առօրեական պարտականություններն ընտանիքում ու աշխատանքի վայրում և միաժամանակ մշտապես պահպանեք ձեր գիտակցությունը հնարավորին չափ բարձր մակարդակի վրա:

Ձեր առօրյա կյանքում դուք պետք է իրականություն դարձնեք վարվելակերպի աստվածային չափորոշիչներն ու ամենաբարձր բարոյական ու հոգևոր չափանիշները:

Իմանալ պատվիրաններն ու պահպանել պատվիրանները, դրանք երկու միանգամայն տարբեր բաներ են: Դուք կարող եք շատ լավ տեղյակ լինել վարվելակերպի կանոններին ու ստանդարտներին և նույնիսկ ուշադրությամբ հետևել, թե ինչպես են ձեր ընկերներն ու ծանոթները խույս տալիս վարվելակերպի այդ ստանդարտները պահպանելուց, բայց նաև, չգիտես ինչու, համարել, որ ինքներդ կարող եք խախտել այդ ստանդարտները: Ձեր մարմնական խելքը հեշտությամբ կարող է ձեզ համոզել, որ դուք վարվեք այնպես, ինչպես ձեզ հաճելի է, նույնիսկ եթե դա չի համապատասխանում այն բարոյական պահանջներին, որոնք դուք բացարձակ ճիշտ եք համարում և պատրաստ եք հետևել դրանց:

Ուստի դուք պետք է ուշադիր դիտեք ինքներդ ձեզ և որսաք այն պահերը, որոնցում մշտապես սայթաքում եք:

Դուք գիտեք, որ չպետք է ոչ մեկին մեղադրեք, չպետք է ոչ մեկին դատեք: Բայց նայեք ինքներդ ձեզ: Օրվա մեջ քանի՞ անգամ դուք գնահատական տվեցիք ուրիշ մարդկանց վարմունքին, քանի՞ անգամ ձեզ շրջապատողներին համարեցիք ընկած հրեշտակ կամ մարդ, որի վրա Աստված արդեն խաչ է քաշել:

Դուք նախանձելի դյուրությամբ մեղադրանք եք կարդում ուրիշների հասցեին, բայց ինչո՞ւ է ձեզ համար այդքան դժվար ձեր սեփական արարքներին օբյեկտիվ գնահատական տալը:

Սարսափելի ոչինչ չկա այն բանում, որ դուք սխալ եք թույլ տվել և նույնիսկ լուրջ մեղք եք գործել: Եվ նույնիսկ կարևոր չէ, թե ձեր կյանքում քանի անգամ եք գործել այդ մեղքը: Անհամեմատ ավելի կարևոր է այն, որ դուք կարողանաք հաղթահարել ձեր թերությունը, վեր բարձրանաք դրանից:

Հետ մի՛ նայեք դեպի ձեր անցյալը և կրկին ու կրկին մի՛ վերլուծեք ձեր սխալ արարքների մանրամասները: Ձեր խնդիրն է գնահատական տալ ձեր հատկանիշին, ասել ինքներդ ձեզ, որ այդ հատկանիշը ոչ աստվածային է, և ընդմիշտ հրաժեշտ տալ դրան: Ահա դա է հոգևոր որոնողի իսկական վարվելակերպը: Կարևոր չէ, թե ձեր մասին ինչ կմտածեն շրջապատի մարդիկ: Կարևոր է միայն այն, թե ինչպիսին եք դուք իրականում:

Դատե՛ք ինքներդ ձեզ ամենախիստ օրենքներով, աշխատեցե՛ք ինքներդ ձեզ վրա այնքան ժամանակ, քանի դեռ չեք հաղթահարել ձեր բոլոր թերությունները:

Եվ միշտ հիշեք, որ քանի դեռ մարմնավորման մեջ եք, դուք չեք կարող կատարյալ լինել:

Որպեսզի մնաք մարմնավորման մեջ, դուք մշտապես պետք է ձեզ վրա վերցնեք բացասական էներգիայի որոշակի բաժին և այն ձևափոխեք կատարյալ աստվածային էներգիայի ձեր արարքների, մտքերի ու զգացմունքների միջոցով:

Երբ դուք բեռնաթափում եք ձեր անձնական կարման, ապա ձեզ վրա եք վերցնում ձեր քաղաքի, երկրի, մոլորակի կարմայի մի մասը:

Դուք մշտապես գտնվում եք անկատար էներգիաների շրջապատում և ձեր գիտակցության, ձեր հասկացողության միջոցով հաղթահարում եք բոլոր արգելապատնեշներն ու խոչընդոտները և, դրանով հանդերձ, ձևափոխության եք ենթարկում այն բացասական էներգիաները, որոնք թափանցում են ձեր աուրայից ներս: Դրանով դուք վաստակ եք ձեռք բերում, գանձեր եք կուտակում ձեր կաուզալ մարմնում:

Ըստ այդմ՝ ձեր գիտակցության մեջ դուք կարող եք մշտապես պահել մարտիկի, ասպետի կերպարը, ով մարտնչում է աշխարհի ողջ անկատարության դեմ: Դուք ձեր մեջ եք ներառում անկատարությունը և այն հաղթահարում: Դուք ընդունում եք այն նետերը, որոնք ուղղված են ձեր դեմ և դրանք վերածում եք վարդի թերթերի սիրո էներգիայի, նվիրվածության միջոցով: Ձեր խիզախության ու պատվի միջոցով: Ձեր այն հատկանիշների միջոցով, որոնք հատուկ են իսկական մարտիկին: Լույսի յուրաքանչյուր այդպիսի մարտիկն ունակ է իր վրա վերցնելու մոլորակային կարմայի հսկայական բեռ:

Երբեք մի՛ մոռացեք, որ կարմայի փոխակերպությունն իրականացվում է ոչ միայն պատգամների, աղոթքների ընթերցմամբ ու ներխոկումով: Դուք մշտապես իրականացնում եք ձեր ծառայությունը՝ գտնվելով կյանքի բովում, կատարելով ճիշտ ընտրություններ և անձնական օրինակով ուրիշներին ցույց տալով Ուղին:

Աղոթքներն ու ներխոկումներն օժանդակ միջոցներ են, որոնք օգնում են ձեզ՝ պահպանելու ձեր գիտակցությունը բարձր մակարդակի վրա, սակայն հիմնական ճակատամարտը տեղի է ունե-

նում ձեր առօրյա կյանքում՝ կենսական մանրուքների ու խառնաշփոթի մեջ:

Կար ժամանակ, երբ կարման հանգուցալուծվում էր մարտի ընթացքում, ճակատամարտերի դաշտերում: Այժմ դուք գտնվում եք նույն այդ ճակատամարտի դաշտում, և դուք դրսևորում եք քաջության ու հերոսության հրաշքներ՝ մարտնչելով ձեր կենսական խնդիրների ու խառնափնթորությունների դեմ, զոհաբերելով ձեր բարեկեցությունն ու ձեր ազատ ժամանակը՝ հանուն ձեր աշխարհում Աստվածային հաստատման:

Ես ձեզ մաղթում եմ հաղթանակ...

Հաղթանակ՝ ձեր թերությունների նկատմամբ և հաղթանակ՝ ձեր առօրյա կյանքում աստվածային սկզբունքների հաստատման գործում:

ԵՍ ԵՄ Լանելլոն
Միշտ Հաղթանակ...

ՀԱՈՒԹԱՄԱ ԲՈՒԴԱ

4 հունիսի, 2005 թ.

ՄԵՆՔ ՀԱՄԲԵՐՈՒԹՅԱՄԲ ՍՊԱՍՈՒՄ ԵՆՔ ՁԵՐ ԱՐԹՆԱՑՄԱՆՆ ՈՒ ՊԱՏՐԱՍՏ ԼԻՆԵԼՈՒՆ

ԵՍ ԵՄ Հաութաման՝ նորից ձեզ այցի եկածը:

Ամենակարևորը յուրաքանչյուր մարդկային անհատի գիտակցությունն է: Ձեր գիտակցությունը հենց այն է, ինչը կվերստեղծի ձեզ այնպիսին, ինչպիսին այժմ կաք: Ձեր գիտակցությունը կգոյատևի Բարձրագույն աշխարհներում: Ուստի միակ բանը, հանուն որի իմաստ ունի ապրել ձեր աշխարհում, ձեր գիտակցության զարգացումն է: Հարկավոր է զանազանել ինտելեկտը գիտակցությունից: Հարկավոր է տարբերակում մտցնել ձեր հմտությունների, ունակությունների և ձեր գիտակցության միջև:

Գոյություն ունի ձեր գիտակցության ստորին մասը, որն իր մեջ պահում է ձեր այն հմտություններն ու փորձը, որոնք անհրաժեշտ են, որպեսզի պահպանվի ֆիզիկական աշխարհում ձեր գոյությունը: Գոյություն ունի նաև ձեր գիտակցության Բարձրագույն մասը, որն անհրաժեշտ է, որպեսզի պահպանվի ձեր գոյությունը նուրբ աշխարհներում:

Եվ ձեր գիտակցության այդ մասն ունի զարգացման կարիք: Դուք չեք կարող, օրինակ, անմիջապես նստել օդանավի ղեկի առաջ ու թռչել: Որպեսզի դա անեք, նախ պետք է ուսում ստանաք և պատկերացում կազմեք օդանավ վարելու մասին: Միայն դրանից հետո դուք կարող եք սավառնել: Եվ ճիշտ նույն կերպ ձեր գիտակցության այն մասը, որը ձեզ պետք կգա նուրբ աշխարհներում գտնվելու ընթացքում, կարիք ունի ուսուցման և փորձի կուտակման:

Դժվարությունն այստեղ այն է, որ դուք պետք է հմտություն ձեռք բերեք լինելու մի աշխարհում, որի մասին չեք կարող պատկերացում կազմել ձեր ֆիզիկական զգայարանների օգնությամբ: Ձեր ֆիզիկական զգայարանների՝ իրականության ընկալման տիրույթը սահմանափակ է: Դուք կարող եք զգալ միայն այն, ինչը թրթռում է մատերիական աշխարհին հատուկ ցածր հաճախականություններով: Սակայն ձեր ներսում վիթխարի ներուժ է ներդրված: Եվ թրիթռների ընկալման ձեր զգայարանների տիրույթը հիմա արդեն կարող է ընդարձակվել: Եվ շատ մարդիկ արդեն տեսնում են բաներ, որոնք ուրիշները չեն տեսնում: Այն սահմանագիծը, որով նուրբ աշխարհները բաժանվում են ձեր ֆիզիկական աշխարհից, աստիճանաբար լղոզվում է: Նուրբ աշխարհների ընկալման ձեր զգայնությունը ճնշված է ձեր աշխարհում ձեզ շրջապատող իրադրությամբ: Մարդկանց մեծ զանգվածի մեջ մշտապես գտնվելն ու միացված բարձրախոսներով ինքներդ ձեզ խլացնելն իջեցնում են ձեր թրթիռներն ու ձեզ թույլ չեն տալիս լայնացնել աշխարհընկալման ձեր տիրույթը:

Մարդկային օրգանիզմն իր ներսում ունի բոլոր անհրաժեշտ գործիքներն ու զգայարանները, որոնք նրան թույլ են տալիս գտնվել նուրբ աշխարհներում և ընկալել դրանք: Եվ միայն ձեր՝ Երկրի վրա գտնվելն է խանգարում ձեզ՝ արդեն իսկ տեսնել ու լսել Համբարձյալ Դասերին, հաղորդակցվել Վեհապետների հետ:

Ուստի ներկայումս նշանակալի ջանքեր են պահանջվում, որպեսզի հաստատվի այդպիսի կապ: Պահանջվում են շատ մեծ սահմանափակումներ, որոնք դուք պետք է դնեք ձեզ վրա, որպեսզի հասնեք Համբարձյալ Դասերի հետ կապին: Եվ, նախ և առաջ, դա վերաբերում է մարդկանց հետ ունեցած կապին և լրատվական զանգվածային միջոցների ցանկացած ազդեցության բացառմանը:

Եվ որքան մոտ գտնվեք բնությանը, այնքան ձեզ համար ավելի հեշտ կլինի այդ կապի հաստատումը: Մեր աշխարհների տարբերությունը թրթռումների մակարդակի տարբերության մեջ է: Ուստի, բարձրացնելով ձեր թրթիռները, դուք ինքնաբերաբար, համարյա անխուսափելիորեն, մեր աշխարհի հետ հաղորդակցվելու ունակություն եք ձեռք բերում:

Եվ, ըստ էության, ներկայումս մարմնավորված յուրաքանչյուր մարդ ունակ է կապ հաստատելու Համբարձյալ Դասերի հետ:

Բայց, որպեսզի մեր հաղորդակցությունը կայանա, ձեզ անհրաժեշտ է շատ բան զոհաբերել այն ամենից, ինչը գտնվում է ձեր աշխարհում:

Ձեզ անհրաժեշտ է մեծ ուշադրություն հատկացնել ձեր շփումների շրջանակին, ձեր բոլոր կապերին:

Ձեզ անհրաժեշտ է բացառել այն ամենը, ինչը կարող է ազդել ձեզ վրա, և ինչը պատկանում է ձեր աշխարհի զանգվածային մշակույթին:

Ամեն ինչ նշանակություն ունի. նույնիսկ ձեր կերած կերակուրի թրթիռները: Չե՞ք կարծում, արդյոք, որ մարդը կերակուր պատրաստելիս այն հագեցնում է իր էներգիաներով: Եվ, եթե կերակուր պատրաստող մարդն աչքի չի ընկնում իր մտքերի մաքրությամբ, ապա դուք, ամեն անգամ սնվելով նրա պատրաստած կերակուրով, ձեր օրգանիզմը կսնուցեք այդ կերակուրի ցածրորակ էներգիաներով: Սկզբնական շրջանում դուք կարող եք օրհնել ձեր կերակուրն ամեն անգամ այն ընդունելուց առաջ, որպեսզի այն մաքրեք բացասական էներգիաներից: Ձեր զարգացման ավելի ուշ շրջանում արդեն դուք ստիպված կլինեք լրիվ հրաժարվել այն բոլոր կերակուրներից, որոնք պատրաստվել են ձեզ անծանոթ մարդկանց կողմից և հնարավոր է, որ անցնեք ձեր սեփական ձեռքերով կերակուր պատրաստելուն: Երբ դուք հասնում եք որոշակի մաքրության աստիճանի, որը թույլ է տալիս ձեզ հաղորդակցվել Համբարձյալ Դասերի հետ, ապա դուք կարող եք թունավորվել ցածրակարգ թրիթռներով կերակուրից, նույնիսկ եթե դա թարմ պատրաստված կերակուր է և կարծես բոլոր իր զուտ ֆիզիկական չափանիշներով չի կարող ձեզ վնասել:

Ուստի այն մարդիկ, ովքեր լրջորեն որոշել են կանգնել հոգևոր ուղու վրա, պետք է մեծ չափով հոգ տանեն ֆիզիկական աշխարհում իրենց ունեցած շրջապատի մասին:

Իհարկե, իդեալական կլիներ, եթե այդպիսի հոգևոր զարգացած մարդիկ ապրեին քաղաքակրթությունից հեռու՝ առանձին համայնքներով: Եվ ժամանակի ընթացքում այդպիսի կենտրոններ կստեղծվեն՝ մեծ զարգացում ստանալով:

Որոշակի հանձնարարականներ չկան, թե ձեզնից յուրաքանչյուրն ինչպես կառուցի իր կյանքը՝ բացի այն ընդհանուր հանձնարարականներից, որոնք մենք տալիս ենք: Բայց, թե ինչպես օգտվեք այդ հանձնարարականներից կոնկրետ ձեր կյանքում, դուք պետք է ինքներդ որոշեք: Միշտ հիշեք, որ երբեք ոչ մի բանում հարկ չկա բռնանալ ինքներդ ձեզ վրա: Աստծո Օրենքներով իսկական էվոլյուցիոն զարգացումը որևէ ստիպողականություն կամ հարկադրանք չի պահանջում ո՛չ ուրիշ մարդկանց կողմից, ո՛չ՝ ձեր:

Եթե դուք պատրաստ չեք անցնելու ավելի բարձր փուլին, ապա հարկ չկա, որ կիրառեք այն սահմանափակումները, որոնք չեք կարող ձեզ վրա վերցնել ձեր գիտակցության անպատրաստ լինելու պատճառով: Դուք պետք է իմանաք, թե դեպի ուր է հարկավոր մղվել, բայց չպետք է բռնանաք ինքներդ ձեզ վրա:

Եթե դուք ունեք ինչ-որ ներքին անկատարություն, որը խոչընդոտում է ձեզ բարձրանալու հաջորդ աստիճանի վրա, ապա միայն հենց այն, որ դուք գիտակցել եք ձեր ներսի այդ անկատարությունը, այն բանի երաշխիքն է, որ դուք վաղ թե ուշ կձերբազատվեք այդ անկատարությունից:

Եթե ձեր անոթում կեղտաբիծ է առաջացել, ապա այն հենց առաջին անգամից կարող է և չմաքրվել: Բայց եթե դուք ամենօրյա ջանքեր գործադրեք, որպեսզի ազատվեք այդ կեղտաբծից, ապա վաղ թե ուշ ձեր անոթը կմաքրվի: Ճիշտ նույն սկզբունքն է գործում նաև ձեր գիտակցության փոփոխման հարցում: Դուք անընդհատ ձեր կյանքի ընթացքում փոխում եք ձեր գիտակցությունը: Կարևորն այն է, որ իմանաք, թե ինչին պետք է ձգտեք, և դրսևորեք ամենօրյա մղվածություն:

Նկատի ունեցեք, որ ձեզնից յուրաքանչյուրը գտնվում է զարգացման տարբեր աստիճանի վրա: Ուստի այն, ինչը մեկին հեշտությամբ է տրվում, մյուսի համար կարող է լինել անհաղթահարելի խնդիր: Եվ կարող են անցնել շատ կյանքեր, մինչև որ մարդն ունակ դառնա բարձրանալու իր գիտակցության զարգացման հաջորդ աստիճանի վրա:

Երկիրը համապատասխան հնարավորություններ է ընձեռում այն անհատների զարգացման համար, որոնք գտնվում են իրենց գիտակցության զարգացման տարբեր փուլերում:

Եվ եթե մարդն իր գիտակցության զարգացման մակարդակով պատրաստ չէ Համբարձյալ Դասերի հետ հաղորդակցվելուն, ապա, օրինակ, այս թելադրությունները նրա համար կլինեն բոլորովին անհասկանալի ու ձանձրալի: Դրանք ընթերցելուց նա ունակ չի լինի անձամբ իր համար որևէ օգուտ զգալ: Ճիշտ նույն կերպ, եթե մարդը գտնվում է իր հոգևոր զարգացման շատ բարձր փուլում, ապա նրան նույնպես այս թելադրությունները ոչ մի նոր բան չեն տա:

Բայց կան մարդիկ, ովքեր սպասում են ամեն մի թելադրությանը և զգում են, թե ինչպես է ամեն թելադրության հետ իրենց աուրայի մեջ ներարկվում Աստծո էներգիայի հոսքը:

Պետք է շատ համբերատար լինել: Պետք է

շատ սիրող ու կարեկցող լինել այն մարդկանց նկատմամբ, որոնք իրենց գիտակցությամբ անկարող են ընկալել այն թրթիռները, որոնք պարունակվում են այս թելադրություններում:

Կգա ժամանակը, և նրանք նույնպես ունակ կլինեն զգալու այն քնքուշ ու սիրագորով էներգիան, որը մենք առաքում ենք ձեզ:

Ճշմարիտ այգեպանը երբեք չի հարկադրում վարդին, որպեսզի այն փթթի: Ժամանակը կգա, և կոկոնը կբացվի արևի գորովալից ճառագայթների ու նոր օրվա հանդեպ:

Ըստ այդմ՝ մենք համբերությամբ սպասում ենք ձեր արթնացմանն ու պատրաստ լինելուն: Եվ միայն առաքում ենք մեր Սիրո ու օրհնանքի մեղմ ճառագայթները ձեր աշխարհին, ձեր էությանը:

Ձեր գիտակցությունը նման է վարդի կոկոնի, որն ուր որ է պետք է բացվի: Եվ ես լռում եմ այն կանխավայելմամբ, որ անդորրության մեջ երբևէ կփթթի ձեր գիտակցության ծաղիկը՝ իր շուրջը տարածելով ձեր անուշ բուրմունքը:

ԵՍ ԵՄ Հաութամա Բուդդան

ՏԵՐ ՀԻՍՈՒՍ

5 հունիսի, 2005 թ.

ԴՈՒՔ ՊԵՏՔ Է ՍՈՎՈՐԵՔ ՁԵՐ ԹՇՆԱՄԻՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ՈՉ ՄԻ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԶԳԱՑՄՈՒՆՔ ՉՏԱԾԵԼ

ԵՍ ԵՄ Հիսուս՝ այս օրով ձեզ այցի եկածը:

Դուք սպասո՞ւմ էիք ինձ: Կարիք զգո՞ւմ էիք արդյոք մեր ուսուցումն ու մեր խրատները շարունակելու:

Շատ գայթակղություններ կան ձեր աշխարհում, և գայթակղությունների առատության այդ խորապատկերի վրա շատ դժվար է զանազանել մեր աշխարհին հատուկ ճշմարիտ թրթիռներն այն ավելի ցածր թրթիռներից, որոնք հատուկ են աստեղային ու մենտալային ոլորտներին: Իսկ զանազանելը ձեզ համար անհրաժեշտություն է: Քանզի եթե դուք ձեր գիտակցության մեջ չընտրեք ընթացքի հստակ ուղղություն, ապա կհետաձգեք Ուղով ձեր առաջընթացը:

Ըստ այդմ՝ այս թելադրությունները կարդացող ձեզնից յուրաքանչյուրի առաջ կանգնում է այս ուղերձների ճշմարտացիության հարցը: Ես լիովին գիտակցում եմ, թե ինչպիսի դժվարության եք բախվում. իրոք, ինչպե՞ս զանազանել:

Նախ և առաջ հարկ է, որ դուք ուշադրություն դարձնեք ուղերձների տեղեկատվական բաղադրիչին: Պարունակո՞ւմ է արդյոք տեղեկատվական մասը որևէ բան, որը հակասում է ձեր ներքին կողմնորոշիչներին: Քանի որ ձեզնից մեծ մասի մոտ ուժեղ է մարմնական խելքը, ապա ձեզ համար ամենահեշտը կլինի վերլուծության ենթարկել հատկապես հենց տեղեկատվական բաղադրիչը: Եվ եթե դուք չեք գտնում որևէ թերի կողմ կամ ձեր ներքին համոզմունքների հետ մեծ հակասություն, ապա կարող եք ձեռնամուխ լինել այս թելադրությունների մյուս բաղադրիչների վերլուծությանը:

Կա՞մ արդյոք այս թելադրություններում որևէ բան, որը բռնանում է ձեր ազատ կամքին: Կա՞մ արդյոք որևէ բան այս դեսպանորդի միջոցով մեր կողմից տրվող Ուսմունքում, որն ստիպում է ձեզ վարվել որոշակի ձևով: Կա՞մ որևէ բան, որն ստիպում է ձեզ վարվել ի հեճուկս ձեր հետաքրքրությունների: Խնդրո՛ւմ եմ, մի՛ շփոթեք ձեր հետաքրքրությունները, որոնք ունեք՝ որպես ճամփա ելած աշակերտ, այն հետաքրքրությունների հետ, որոնք ունի ձեր էգոն: Ձեր էգոյի հետաքրքրություններն ուղղակի հակադիր են ձեր իսկ Բարձրագույն մասի հետաքրքրություններին: Ուստի և ձեր ներսի հենց այս հակասությունն է խոչընդոտում սույն թելադրությունների ընկալումը: Դուք սկսում եք կասկածել և փորձում եք այս թելադրությունների աղբյուրի ճշմարտացիության կամ կեղծության հավաստումը փնտրել ձեր մերձավորների ու ծանոթների շրջանում: Եվ մոռանում եք, որ ամեն ինչ կախված է այն բանից, թե ինչն է ձեր մեջ գերակշռում: Եթե ձեր մեջ գերակշռում է ձեր մարմնական խելքը՝ ձեր էգոն, ապա, ամենայն հավանականությամբ, դուք կփնտրեք և կգտնեք այն բանի հաստատումը, որ այս թելադրությունների աղբյուրը ոչ աստվածային է, և չարժե ականջ դնել այն տեղեկատվությանը, որն առկա է դրանցում:

Ձեր մարմնական խելքը շատ ձեռնահաս ու ճկուն է դառնում, երբ հարցը վերաբերում է ձեր էության մեջ նրա գլխադասային դիրքի ոտնահարմանը: Այն կգործադրի բոլոր ջանքերը, որպեսզի գտնի ցանկացած ապացույց, որ այս թելադրություններն ընդհանրապես չպետք է կարդալ:

Քանզի այս թելադրություններում պարունակվող տեղեկատվությունը և, հատկապես, էներգիան, ձեր մարմնական խելքի համար տառացիորեն հավասարազոր են մահվան:

Միայն այն դեպքում, երբ մոտ եք ձեր էգոյի նկատմամբ հաղթանակին, դուք կկսեք փնտրել և գտնել այս թելադրությունների ճշմարտացիության հաստատումը: Վերջին հաշվով, այս թելադրությունները, եթե դրանք կարդացվեն կանոնավորապես, այն գործառույթն են իրականացնում, որ ձեր ներսի իրական մասն առանձնացնեն ձեր ներսի ամբողջ անիրական մասից:

Եվ երբ դուք ձեռնամուխ եք լինում վճռելու այս ուղերձների ճշմարտացիության կամ կեղծության հարցը, դուք փաստորեն կամ սկսում եք մարտնչել ձեր էգոյի դեմ, կամ էլ, ընդհակառակը, խրախուսում եք նրան:

Իսկ գիտե՞ք, որ ցանկացած ճշմարիտ Ուսմունքի ամենագլխավոր տարբերակիչ առանձնահատկությունը հենց այն է, որ դրանով կարելի է հասնել ձեր ներսում իրականն անիրականից ջոկելու, ձեր հոգում հատիկը որոմից ջոկելու խնդրի իրականացմանը:

Ըստ այդմ՝ եթե նույնիսկ այս թելադրությունները ձեզ գրգռում են ու կասկածներ առաջացնում, միևնույնն է, այս թելադրությունների ընթերցումից ձեր հոգու ստացած օգուտն անառարկելի կլինի: Այլ բան է, որ ձեր անիրական մասը փորձում է և կփորձի ձեզ համոզել, որ ձեզ հարկավոր է պայքարի մեջ մտնել այս թելադրությունների աղբյուրի հետ, և դուք կսկսեք ձեր ներսում զգալ արդարացի զայրույթ, ձեզնից կախված ամեն ինչ կանեք, որպեսզի զրպարտեք և՛ դեսպանորդին, և՛ մեր աշխարհի հետ ունեցած նրա կապը:

Տվյալ դեպքում ֆիզիկական ոլորտում դուք ստանում եք ձեր մտքերի, զգացմունքների ու գործողությունների տեսքով արտահայտված ստույգ նշան, որը մեր խոսքերից ու զրույցներից էլ ավելի լավ ասում է ձեզ, որ ձեր ներսում ինչ-որ բան կարգին չէ, և որ դուք անհապաղ օգնության կարիք ունեք:

Ցանկացած ագրեսիվություն, ցանկացած բուռն զգացմունք, որն ունենում եք այս թելադրությունները կարդալիս, նախ և առաջ նշան է հենց ձեզ համար, որ դուք անհապաղ պետք է սկսեք աշխատել ինքներդ ձեզ վրա:

Եվ այսպես, դուք վերլուծել եք թելադրությունների տեղեկատվական բաղադրիչը և ձեր արտաքին գիտակցությամբ հասկացել, որ դրանցում չի պարունակվում որևէ բան, որը ձեզ համար անընդունելի լինի: Եվ այնուամենայնիվ դրանք ընթերցելիս դուք բացասական զգացում եք ապրում: Դա խոսում է այն մասին, որ ձեր ներսում պայքար է սկսվել՝ իրական մասի անջատում ձեր իսկ անիրական մասից: Ուստի թելադրությունը հասել է իր նպատակին:

Ձեզ անհրաժեշտ է միայն ձեր մեջ ուժ ու արիություն գտնել, որպեսզի փորձեք բարձր կանգնել այդ իրավիճակից և այն վերլուծեք անկողմնակալ ձևով՝ բարձրացնելով ձեր գիտակցությունը և գոնե մի որոշ ժամանակով լռեցնելով ձեր էգոյին:

Իսկ այն անհատները, որոնք, տեղեկատվական մասը վերլուծելով և կարդալու ընթացքում հետևելով իրենց արձագանքին, չեն նշմարել որևէ բացասական բան, որը բացասական վերաբերմունք է առաջացնում իրենց մեջ, լիովին պատրաստ են աշակերտելու ուղով հետագա առաջընթացին:

Եվ նրանք կա՛մ արդեն մեր աշակերտներն են, կա՛մ էլ լիովին պատրաստ են, որպեսզի դառնան որևէ Համբարձյալ Վարպետի սան:

Այսպիսով, մենք հնարավորություն ունենք փնտրելու մեր աշակերտներին, այս թելադրությունների միջոցով կապ հաստատելու նրանց հետ և աշխատելու մեր այն աշակերտների հետ, որոնք գտնվում են մարմնավորման մեջ:

Ներբազգաց, զգայուն սրտերի համար մեր կողմից թելադրություններով տրված մի փոքրիկ ակնարկը բավարար է, որպեսզի փոխվի իրենց տեսանկյունը և իրենց պրպտուն հայացքի ու անկեղծ սրտի համար բացվի այն, ինչը նախկինում փակ է եղել վարագույրով:

Ուստի, ինչպես 2000 տարի առաջ, այնպես էլ ձեր ժամանակներում մենք լայնորեն ուռկան ենք նետում և հնարավորություն ունենք որսալու այն հոգիներին, ովքեր պատրաստ են ընթանալու մեր Ուղով:

Մեր աշակերտները կարողանում են զանազանել աստեղային ոլորտի թրթիռները Բարձրագույն օկտավաների թրթռումներից: Մեր աշակերտները կարողանում են տարբերել կարգապահության այն պահանջները, որոնց պետք է ենթարկվեն, այն պահանջներից, որոնցով իրենց կամքն են թելադրում կեղծ ուսուցիչներն ու կեղծ դեսպանորդները:

Մեր աշակերտները կարողանում են տարբերել՝ թելադրությունները կարդալիս էներգիա ստանո՞ւմ են, թե՞ զրկվում են էներգիայից:

Եվ ես պետք է ձեզ ասեմ, որ երբ դուք այս թելադրությունները կարդալիս բացասական հույզեր եք ունենում, ապա կամավոր կերպով ձեր էներգիան տալիս եք խավարի ուժերին:

Ըստ այդմ՝ ձեզնից պահանջվում է ուշադիր վերլուծել, թե ինչ է կատարվում ձեր ներսում ու ձեր շուրջը՝ թելադրությունները կարդալու սկզբի պահից սկսած:

Այս թելադրությունների միջոցով դուք ուսում եք ստանում, գիտելիքներ, և դուք փոխում եք ձեր գիտակցությունը՝ պարզապես կանոնավոր կերպով կարդալով դրանք և հետևելով այն հանձնարարականներին, որոնք շարադրված են դրանցում: Ամեն ինչից զատ թելադրություններն ընթերցելուն զուգընթաց դուք մեծ քանակությամբ Լույս եք ստանում, և ձեր ստացած այդ Լույսը կարող է ձեր դեմ հանել խավարի այն ուժերին, որոնք գտնվում են ձեր շրջապատում: Ձեր թանձր աշխարհում

Լույսի յուրաքանչյուր աղբյուր խավարի ուժերին գրգռում է ու մղում ակտիվ գործողությունների՝ ուղղված Լույսի այդ աղբյուրի դեմ:

Եվ երբ բոլոր կողմերից հարձակումների կենթարկվեք խավարի ուժերի կողմից, հիշեցեք այն Ուսմունքը, որը տվել եմ 2000 տարի առաջ: Եվ եթե հարվածում են ձեր ձախ այտին, ապա կիրառեք բոլոր ժամանակների ամենաուժեղ զենքը՝ դեմ տվեք մյուս այտը:

Դուք պետք է սիրեք ձեր թշնամիներին: Դուք պետք է օրհնեք ձեր թշնամիներին: Ձեր թշնամիները ձեզ հնարավորություն են տալիս մարելու ձեր կարմայական պարտքերը, դաս քաղելու ու փորձաքննություն անցնելու: Ես գիտեմ, որ շատ իրավիճակներում ձեզ համար ծանր կլինի խոնարհությամբ ու երախտագիտությամբ ընդունել ձեր հասցեին ուղղված բոլոր հանդիմանությունները, հարձակումներն ու սպառնալիքները: Բայց դուք պետք է սովորեք ձեզ բաժին հասած ամեն ինչն ընդունել հնազանդությամբ ու խոնարհությամբ: Դուք և միայն դուք եք որոշողը, թե որքանով կարող եք ձեզ պաշտպանել ձեր իշխանական մարմինների ու կառույցների օգնությամբ, որոնք կոչված են լուծելու բոլոր վեճերն ու բախումները: Սակայն դուք պետք է սովորեք ոչ մի բացասական զգացմունք չտածել ձեր թշնամիների նկատմամբ: Այն մարդիկ, ովքեր հարձակվում են ձեզ վրա, նեղացնում են ձեզ, վիրավորում ու ստորացնում, դժբախտ են իրենց էությամբ:

Նա, ում սրտում ներկա է Աստված, երբեք իրեն թույլ չի տա վնաս պատճառել ուրիշ մեկին:

Ըստ այդմ՝ այն ամենը, ինչ դուք կարող եք անել, երբ ձեզ վրա հարձակվում են ձեր թշնամիները, դա նրանց ներելն ու նրանց համար աղոթելն է: Քանզի նրանք չգիտեն, թե ինչ են անում: Նրանց գիտակցությունը մթագնված և երբեմն լրիվ տիրված է լինում խավարի ուժերի կողմից, և նրանք, հիրավի, իրենք իրենց հաշիվ չեն տալիս իրենց գործողությունների համար:

Միայն տգիտությամբ մթագնված մարդը կարող է հնարավորություն տալ խավարի ուժերին, որ գործեն իր միջոցով և կատարեն անվայել արարքներ՝ վնաս պատճառելով սուրբ անմեղներին:

Լինում է այնպես, որ Աստված ընտրում է ձեզ, որպեսզի կրակն ընդունեք ձեզ վրա և խավարի ուժերի թիրախ դառնաք, որոնք գործում են այլ մարդկանց միջոցով և նրանց օգտագործում չարամիտ հարձակումներ իրականացնելու նպատակով: Աստված ձեզ է ընտրել, որպեսզի փորձի ձեզ և միաժամանակ հնարավորություն ստեղծի, որ ի հայտ գան այն ուժերը, որոնք տվյալ իրադրության մեջ պատռում են իրենց երկերեսանիության ու բարեպաշտության դիմակը՝ բացելով իրենց գազանային երախը:

Հանձնեցեք ձեզ Աստծո հոգածությանը: Աստված հոգում է իր բոլոր գառների համար: Պատրաստ եղեք զոհաբերելու ձեր մարմինը, բայց պաշտպանելու հոգին: Ճշմարտությունը միշտ այնտեղ է, որտեղ աշխարհի ապականությունների կողքին պահպանվում են ամենավեհ զգացմունքներ: Հիշեք, որ դուք պատասխանատվություն եք կրում միայն ձեր ու ձեր արձագանքի համար: Եվ որքան էլ ձեզ համար անարդարացի թվա ուրիշ մարդկանց վերաբերմունքը ձեր նկատմամբ, ներեցեք նրանց:

Սիրեցեք ձեր թշնամիներին: Քանզի միայն ձեր սերն ու զիջողամտությունն են, որ երբեմն ունակ են փրկելու այն հոգիների կյանքը, որոնք զավթված են տգիտության կողմից ու չգիտեն, թե ինչ են անում: Իսկ ձեր աղոթքը ձեր թշնամիների համար երբեմն թույլ է տալիս կանգնեցնել աստվածային արդարադատության ձեռքը և ևս մի հնարավորություն տալ այդ հոգուն՝ Կյանքը շարունակելու համար:

Ես ուրախ եղա՝ ևս մեկ անգամ ձեզ դաս տալով: Նաև պատրաստ եմ խորը գլուխ խոնարհել ձեզնից շատերի հոգիների առաջ, քանզի ձեր տառապանքները, տրտմությունն ու դառնությունները երբեմն գերազանցում են իմ այն տառապանքները, որոնք ես կրեցի խաչի վրա:

ԵՍ ԵՄ Հիսուս

ՎԵՀԱՊԵՏ ԿՈՒԹՀՈՒՄԻ

6 հունիսի, 2005 թ.

ՈՒՍՄՈՒՆՔ ԲԱՐԻ ԿԱՐՄԱՅԻ ՄԱՍԻՆ

ԵՍ ԵՄ Կութհումին՝ նորից ձեզ այցի եկածը:

Իմ այսօրվա գալստյան նպատակն է ձեզ ծանոթացնել աշխարհակառույցին վերաբերող ևս մի հայացքի հետ: Մեր իրականության հետ շփվելուց ստացած ձեր զգացողությունները ոչ միշտ են արտացոլում իրերի իսկական վիճակը: Դուք սովոր եք ձեր աշխարհընկալումը հիմնել ձեր զգայարանների վրա՝ լրիվ վստահելով դրանց: Եվ իրոք, ինչից ելնելով դուք պետք է հավատաք այս բանին, ինչը չեք տեսնում, և առաջնորդվեք մեր հանձնարարականներով այն դեպքում, երբ նույնիսկ հնարավորություն չունեք ուղղակիորեն հանդիպելու մեզ հետ՝ շրջանցելով այս դեսպանորդին:

Սակայն դա ձեր հավատամքի հարցն է: Կամ դուք հավատում եք, որ ձեզ շրջապատող աշխարհը ողջ Արարչագործությունը չէ, այսինքն՝ իրականում Արարչագործությունն անհամեմատ ավելի լայնարձակ է, կամ չեք հավատում դրան: Դուք չեք կարող սկսել ճանաչել այն, որի գոյությանը չեք հավատում: Եվ չեք կարող շոշափել այն, որի մասին հաստատ համոզված եք, որ գոյություն չունի: Սակայն հենց որ սկսում եք հավատալ Աստծո իրական Աշխարհին, որը չեք կարող տեսնել և զգալ ձեր զգայարաններով (դրանից այն պակաս իրական չի դառնում), դուք միանգամից ու համարյա անմիջապես սկսում եք պատկերացում ստանալ մեր աշխարհի մասին:

Նուրբ աշխարհները հպվում են ձեզ, և դուք էլ մշտապես շփման մեջ եք նուրբ աշխարհների հետ: Բայց դուք պարզապես ուշադրություն չեք դարձնում մեր իրականության վրա: Այնինչ ձեզնից յուրաքանչյուրի հետ մեր հաղորդակցությունը ոչ միայն հնարավոր է, այլև այն մշտապես տեղի է ունենում: Եվ ճիշտ այնպես, ինչպես դուք չեք նշմարում ռադիոալիքները, որոնք մշտապես անցնում են ձեր մարմնի միջով, այդպես էլ մեր աշխարհի թրթիռները մշտապես հպվում են ձեզ, իսկ դուք դրանք չեք նկատում: Եվ, եթե դուք հարկ եղածին պես նախապատրաստեք ձեր տաճարը և, գլխավորը, հավատաք մեր աշխարհի իսկությանը, ապա անխուսափելիորեն կկարողանաք զգալ մեր աշխարհը: Պատկերացրեք, որ ես հնարավորություն ունեմ ձեզ հետ զրուցելու: Գալիս և նստում եմ ուղիղ ձեր դիմաց: Դուք ինձ չեք տեսնում: Չեք տեսնում երկու պատճառով: Առաջինն այն է, որ չեք սպասում իմ գալստյանը և ձեր գիտակցության մեջ պատրաստ չեք դրան: Իսկ երկրորդ պատճառն այն է, որ դուք ձեր ֆիզիկական զգայարաններով չեք ընկալում իմ ներկայությունը:

Մեզ իրարից բաժանող այդ երկու պատճառներից որն է առավել էականն ու դժվար հաղթահարելին:

Կասեմ ձեզ, որ առաջինը: Երբ ձեր գիտակցությունը պատրաստ է նուրբ աշխարհն ընկալելուն, պատրաստ է Համբարձյալ Դասերի հետ հաղորդակցվելուն, ապա դուք կսկսեք ձեր հաղորդակցությունը՝ անկախ այն բանից, թե ձեր զգայարաններն այդ հաղորդակցությունն ընկալո՞ւմ են, թե՞ ոչ:

Ձեր օրգանիզմն ունի չբացահայտված ունակություններ, քնած, ննջող ունակություններ, որոնք թույլ են տալիս ձեզ լսել՝ չունկնդրելով, տեսնել՝ չնայելով, իմանալ ու տեղեկատվություն ստանալ համարյա ակնթարթորեն՝ առանց մտքերի ու խոսքերի, առանց ձեր ֆիզիկական զգայարանների մասնակցության:

Դա ձեզ ֆանտազիա է թվում, բայց եթե անդրադառնաք մեծ գյուտերի ու հայտնագործությունների պատմությանը, ապա զարմանալի օրինաչափություն կհայտնաբերեք: Բոլոր այդ գյուտերն ու հայտնագործությունները գյուտարարների գլխում հայտնվել են չգիտես, թե որտեղից: Մարդն ունեցել է մտքերի որոշակի համալարվածություն՝ կապված մարդկային գործունեության որևէ բնագավառի հետ և հանկարծ պայծառացում է ապրել մի գիտելիքի տեսքով, որն իր գլխում ծագել է ինչոր անհայտ տեղից:

Իհարկե, շատ դժվար է հասկացություն տալ մի մարդու, որն, օրինակ՝ գիտելիքներ չունի համակարգչային ծրագրավորումից, որը գյուտարարական նշանակություն ունի ժամանակակից գիտելիքների այնպիսի բնագավառի համար, ինչպիսին համացանցն է կամ ժամանակակից կապի միջոցները: Բայց նա, ով արդեն տիրապետում է համապատասխան գիտելիքների, կարող է իր գործունեության բնագավառի հետ կապված նոր գիտելիք ստանալ, որը մուտք է գործում նրա արտաքին գիտակցության մեջ:

Եվ նման շատ բաներ են տեղի ունենում լիովին ինքնաբերաբար: Իսկ գյուտ անող մարդը երբեմն նույնիսկ չի էլ խորհում այն մասին, թե ինչպես այդ գյուտը հայտնվեց իր գլխում:

Ճիշտ նույն կերպ, պատկերացում ունենալով Համբարձյալ Դասերի մասին, դուք կարող եք մեզնից տեղեկատվություն ստանալ, որը հանկարծ հայտնվում է ձեր գլխում, և դուք, նույնիսկ չհասկանալով, թե դա ինչպես տեղի ունեցավ, կարող

եք ձեր գործունեության մեջ առաջնորդվել այդ տեղեկատվությամբ:

Եթե դուք ուշադիր խորհրդածեք, ապա, հավանաբար, ձեզնից յուրաքանչյուրը կհիշի մի քանի դեպք, թե ինչպես է ինքը պարզապես հրաշքով գտել կորած իրեր կամ գլխի ընկել, թե ինչպես պետք է վարվել ծագած դժվարին կացության մեջ: Կամ տառացիորեն հրաշքով գտել է իր առջև ծառացած կենսական բարդ խնդրի հանգուցալուծումը: Բոլոր այդ հրաշքները ձեր կյանքին նուրբ ոլորտի կողմից միջամտելու արդյունք են: Եվ ձեզ համար այդ հրաշք պատահականություններն իրականանում են կամ շնորհիվ ձեր Բարձրագույն Ես-ի, կամ Համբարձյալ Դասերի միջամտությամբ:

Գործը բարդանում է նաև նրանով, որ ժամանակը տարբեր կերպ է հոսում մեր ու ձեր աշխարհներում: Ուստի այն պահը, երբ դուք խնդրում եք ինչ-որ բան, կարող է ամենևին չհամընկնել այն պահի հետ, երբ ստանում եք ձեր խնդրածը: Բնականաբար, ձեր խնդրանքները կարող են ի կատար ածվել միայն այն դեպքում, եթե դուք տիրապետում եք բարի կարմայի այնպիսի քանակության, որը բավարար է դրանց իրականացման համար:

Գործնական մարդն անմիտ բան է համարում ջանք թափելը, որպեսզի բարի գործեր կատարի միանգամայն անշահախնդիր ձևով՝ առանց հուսալու, որ մոտ ապագայում իր այդ բարի արարքի համար որևէ հատուցում կստանա: Իսկ ձեր անվճռականության և անշահախնդիր ձևով բարի գործեր կատարելու ձեր ցանկության բացակայության պատճառը նորից Աստծո Օրենքին ձեր չենթարկվելն է:

Դուք համարում եք, որ եթե փող եք նվիրաբերել եկեղեցուն, մանկատանը կամ որևէ բարեգործական կազմակերպության, ապա անմիջապես Աստծո կողմից կստանաք ձեր այն փողերի բազմակի փոխհատուցումը, որոնք ծախսել եք բարեգործական նպատակով:

Ամեն ինչ, պաշտելիներս, կախված է այն շարժառիթից, որով նվիրաբերում եք ձեր փողերը: Եթե դրանք նվիրաբերում եք՝ նպատակ ունենալով դրա փոխարեն անպայման ինչ-որ բան ստանալ, փող եք նվիրաբերում, որպեսզի Աստված մոռանա ձեր գործած մեղքը, կամ որպեսզի բոլորը տեսնեն, թե որքան առատաձեռն եք դուք, ապա ձեր այդ զոհողությունը բարի կարմա չի ստեղծի ձեզ համար:

Դուք պարզապես պետք է բարի գործեր կատարեք և չմտածեք այն հետևանքների ու առավելությունների մասին, որոնք ձեր զոհողությունն ապագայում հետ կբերի ձեզ:

Այդ դեպքում դուք, իրոք, բարի կարմա եք ստեղծում: Եվ ձեր այդ բարի կարման կարող է ձեզ օգնության հասնել, երբ հայտնվեք բարդ իրադրության մեջ և Աստված կանչեք՝ խնդրելով Նրա օգնությունը: Աստված կօգնի՛ ձեզ: Աստված չի կարող չօգնել ձեզ: Բայց օգնության համար կօգտագործվի ձեր կառուցալ մարմնում կուտակված այն էներգիան, որը ձեր բարի կարմայի պաշարն է:

Եվ եթե ձեր խնդրանքի պահին դուք չունենաք բարի կարմայի բավարար քանակություն, ապա չեք ստանա այն օգնությունը, որի կարիքն ունեք ու խնդրել եք:

Դուք ստանում եք միայն այն, ինչ առաքում եք աշխարհին: Եվ եթե դուք ձեր ողջ այս կյանքում և նախորդ կյանքերում ոչ մի բարի գործ չեք արել, ապա ինչո՞ւ եք կարծում, որ հենց որ օգնության կարիք ունենաք, Աստված կարձագանքի ձեր խնդրանքին:

Ուստի, եթե ես լինեի մարմնավորման մեջ, ապա ձեր փոխարեն կձգտեի իմ բոլոր ուժերը, իմ ողջ էներգիան ու բոլոր դրամական միջոցներս ներդնել, որպեսզի օգնեմ բոլոր կենդանի էակներին, որոնք օգնության կարիք ունեն: Նման դեպքում ձեր բարի գործերն էներգիայի տեսքով կուտակվում են ձեր կառուցալ մարմնի մեջ: Իսկ դա նման է այն բանին, որ դուք փող եք հետ գցում սև օրվա համար: Միայն թե դուք ձեր փողը հետ եք գցում էներգիայի տեսքով և ուրիշ աշխարհում: Եվ ձեր աշխարհում չկա դրանից ավելի ապահով տեղ, որ կարողանաք պահել այդ էներգիաներն ու ձեր այդ խնայողությունները:

Իսկ ձեր այդ էներգիան Աստծուն ուղղված ձեր կոչով միշտ կարող եք պահանջել այն պահին, երբ Աստծո օգնության կարիքն ունեք:

Ըստ այդմ, երբ դուք Աստված եք կանչում ու ասում. «Տե՛ր Աստված, օգնի՛ր ինձ», և միաժամանակ Երկնային ձեր պահոցում բավարար քանակի էներգիա չկա ձեզ օգնություն ցույց տալու համար, ապա ոչ թե Աստծուց նեղացեք, այլ ինքներդ ձեզնից, որովհետև հատկապես հենց դո՛ւք չեք հոգացել ձեր մասին և չեք կուտակել բավարար քանակի բարի կարմա, Երկնքում չեք ստեղծել ձեր վաստակի պահուստային ֆոնդը:

Ես ձեզ այսօր շատ կարևոր Ուսմունք տվեցի բարի կարմայի մասին: Եվ ես հուսով եմ, որ այդ Ուսմունքը դուք կկիրառեք գործնականում: Պատկերացրեք, թե որքա՛ն լավ կլիներ, եթե ձեր կյանքում դուք առաջնորդվեիք այդ Ուսմունքով: Որքա՛ն հրաշալի կլիներ, եթե Երկրի բոլոր մարդիկ ձեռնամուխ լինեին բարի կարմա ստեղծելու գործին: Ձեզնից յուրաքանչյուրն անհրաժեշտ օգնություն կստանար այն մարդկանցից, ովքեր տառացիորեն կվազվզեին Երկրով մեկ, որպեսզի գտնեն նրանց, ում օգնություն է պետք: Եվ դրանից զատ՝ եթե դուք բարի կարմայի անհրաժեշտ քանակություն ստեղծեիք, ապա միշտ կկարողանայիք օգնության խնդրանքով դիմել Աստծուն և կստանայիք այդ օգնությունը:

Ես ձեզ հաջողություններ եմ մաղթում բարի կարմա ստեղծելու ձեր գործում: Եվ թող որ այսուհետ՝ մինչև ձեր կյանքի ավարտը, դուք միայն բարի կարմա ստեղծեք:

ԵՍ ԵՄ Կութհումին

ՎԵՀԱՊԵՏ ԿՈՒԹՀՈՒՄԻ

7 հունիսի, 2005 թ.

ԿԱ ՈՒՂՈՒ ՄԻ ՀԱՏՎԱԾ, ՈՐԸ ԴՈՒՔ ՉԵՔ ԿԱՐՈՂ ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ՄԻԱՅՆԱԿ՝ ԱՌԱՆՑ ՈՒՂԵԿՑՈՐԴԻ

ԵՍ ԵՄ Կութհումին՝ նորից ձեզ այցի եկածը:

ԵՍ ԵՄ եկել, որ շարունակեմ ձեզ ուսուցանել: Ինչպես գիտեք, մենք ձգտում ենք մեզնից կախված ամեն ինչ անել, որպեսզի բոլոր այն գիտելիքները, որոնք դուք ստանում եք այս թելադրությունները կարդալու ընթացքում, ձեր կողմից դյուրությամբ յուրացվեն՝ որևէ գրգռվածություն չառաջացնելով:

Ձեր ուսուցման գործընթացը նման է փոքրիկ երեխաներին կերակրելուն: Մենք մանրազնին կերպով ընտրում ենք ձեր սնունդը և հետևում, որ դուք ո՛չ գերսնուցվեք, ո՛չ էլ թերսնուցվեք: Աշակերտների մասին հոգալը Ուսուցչի ամենագլխավոր պարտականությունն է: Սակայն երբեմն ձեր հոգիների մասին մեր հոգածությունը դուք ընկալում եք որպես պատիժ կամ ձեր անկախության ոտնահարում:

Իրապես, երբ դուք ամուր կանգնում եք Ուղու վրա, ապա ակնկալվող հարմարավետության ու ձեզ մշտապես ուղեկցող երանության ու ներդաշնակության զգացմունքի փոխարեն դուք սկսում եք բախվել միանգամայն անհասկանալի բաների, որոնց մասին հարկ է, որ մեր կողմից լրացուցիչ բացատրություն տրվի: Հենց մենք տեսնում ենք, որ աշակերտը պատրաստ է, և Ուղով ընթանալու նրա ձգտումը հասել է որոշակի մակարդակի, մենք այդ աշակերտին վերցնում ենք ուժեղացված խնամքի տակ: Եվ այդ պահից սկսած՝ աշակերտն այլևս չի կարող ասել, որ լրիվ չափով ինքն է իր ազատ կամքի տերը: Այստեղ, սիրելիներս, շատ նուրբ մի պահ կա: Դուք ունեք ազատ կամքի իրավունք, բայց ձեր Ուղու վրա կա որոշակի մի փուլ, երբ դուք պետք է զիջեք ձեր ազատ կամքը, որպեսզի շարունակեք Ուղով ձեր առաջընթացը: Մի պահ պատկերացրեք, որ դուք սար եք բարձրանում և հասել եք ձեր Ուղու շատ վտանգավոր հատվածին: Ձեր առջև ուղղաձիգ ժայռեր են և անդունդներ: Դուք կարող եք առաջվա պես ինքնուրույն շարժվել առաջ, բայց ձեր կողմից ավելի խելացի կլինի վստահել փորձառու հրահանգչին՝ ուղեկցորդին, ով ձեզ կառաջնորդի հետագա առաջխաղացման ընթացքում: Եվ ահա դուք ձեզ հանձնում եք այդ հրահանգչի կամքին: Ստիպված եք ենթարկվել նրա ցուցումներին ու խորհուրդներին: Նա ուշադրությամբ հետևում է ձեր շարժմանը և հուշում, թե որտեղ դնեք ձեր ոտքը, որտեղ փոխեք շարժման ուղղությունը, որպեսզի ավելի արագ հասնեք նպատակին: Իսկ ձեր հիմնական նպատակն աստվածային գիտակցության գագաթին հասնելը պետք է լինի:

Նման հրահանգչի կամ ուղեկցորդի դուք կարող եք հանդիպել նաև ձեր ֆիզիկական ոլորտում: Սակայն մենք պետք է նշենք, որ շատ մաքուր ուղեկցորդների՝ Ուսուցիչների, որոնց դուք կարող եք լիովին վստահել, ֆիզիկական ոլորտում շատ դժվար է գտնել: Միայն եզակիները կարող են ձեզ մանրամասն խրատներ տալ ձեր Ուղու մասին, երբ դուք արդեն մոտ եք գագաթին: Եվ այստեղ լիակատար համանմանություն է առկա այն հրահանգիչ-լեռնագնացների հետ, ովքեր ունակ են նվաճելու աշխարհի ամենաբարձր գագաթը՝ Ջոմոլունգման: Ներկայումս Երկրի վրա բնակվում են միլիարդավոր մարդիկ, բայց միայն եզակիները կարող են նվաճել Ջոմոլունգմայի գագաթը:

Այդ միլիարդավոր մարդկանց մեջ ձեր ուղեկցորդներին զանազանելը շատ դժվար է: Եվ շատ ու շատ մարդիկ ձեզ կասեն, որ հենց իրենք են իսկական հրահանգիչ-ուղեկցորդներ՝ պատկառելի գումարի դիմաց առաջարկելով, որ իրենց մոտ ուսուցում անցնեք: Եվ նրանցից շատերը, լինելով ինքնակոչ ուսուցիչներ, նմանապես ձեզնից կպահանջեն իրենց ազատ կամքին լիակատար ենթարկվածություն:

Նորից եմ կրկնում. իրոք, Ուղու վրա կա մի փուլ, երբ դուք պետք է մասամբ կամ լրիվ հրաժարվեք ձեր ազատ կամքից և ձեր կամքը ենթարկեք Ուսուցչի կամքին: Եվ շատ մեծ քանակի բախտախնդիրներ ու կեղծ ուսուցիչներ հենց այդ ճշմարտությունից են օգտվում, որպեսզի իրենց տնօրինման տակ ունենան լուսավոր հոգիների և օգտվեն նրանց լույսից:

Ուրեմն ո՞րն է Ելքը: Ինչպես միշտ, ելքը ձեր զանազանելու կարողության մեջ է՝ Լույսը խավարից ջոկելու ձեր ունակության մեջ: Ըստ էության, հիմնական հատկանիշը, որը պահանջվում է ունենալ Ուղով ընթանալու համար, ձեր զանազանելու կարողությունն է: Պետք է ունենալ կարգապահություն, ունենալ նվիրվածություն, մղվածություն ու կայունություն, բայց ամենից առաջ պետք է ունենալ զանազանելու կարողություն: Քանզի երբ դուք հասնում եք ձեր Ուղու վտանգավոր հատվածին, և ձեր առաջ ու ձեր շուրջը միայն լերկ ժայռեր են, ապա ձեր կյանքն ամբողջությամբ կախված կլինի այն մարդուց, որին դուք հանձնել եք ձեր ազատ կամքը:

Ըստ այդմ, մենք նախապես ձեզ զգուշացնում եք Ուղու այդ վտանգավոր հատվածի մասին, չնայած ձեզնից շատերի համար այդ դժվարին հատվածը ժամանակային առումով դեռևս շատ հեռու է:

Իսկ ինչպե՞ս ի կատար ածեք ձեր զանազանումը: Կարծում եմ, ավելորդ չի լինի կրկնել, որ ճշմարիտ Ուսուցիչը երբեք ներկա չի լինի այնտեղ, որտեղ հոծ ամբոխներ են հավաքված: Ճշմարիտ Ուսուցիչն իր ուսուցման դիմաց երբեք փող չի վերցնի: Եվ ճշմարիտ Ուսուցիչը երբեք չի խթանի ձեր հպարտության ու ձեր էգոյի աճը:

Սակայն իմ մատնանշած հայտանիշների մեջ էլ դուք կարող եք գտնել հակասություն: Օրինակ՝ դուք կարող եք ասել, որ Հիսուս ուսուցանում էր ամբոխին: Կարող եք ասել, որ Հիսուս նվիրատվություն էր ընդունում և ապրում էր նվիրատվությամբ:

Դա հենց այն դժվարությունն է, որ դուք կրում եք ֆիզիկական աշխարհում. միշտ կա կանոն, և կա այդ կանոնից բացառություն:

Դրա համար էլ դժվա՛ր է Ուղին, և դրա համար էլ քչերն են առայժմ իրենց թույլ տալիս ընթանալ այդ Ուղով:

Մենք կարող ենք ձեզ առաջարկել, որ դուք ուղղակի կապ հաստատեք Համբարձյալ Դասերի հետ: Եվ մենք այս թելադրությունները տալիս ենք, որպեսզի ձեզ համար հեշտացնենք այդ կապի ստեղծումը: Սակայն ձեզ հայտնի է, որ ձեր թրթիռների մակարդակը որոշվում է ձեր գիտակցության մակարդակով: Եվ քանի որ նմանը նմանին է ձգում, ապա դուք շատ հեշտորեն կարող եք փոխազդեցության մեջ մտնել աստեղային ոլորտի ո՛չ ամենալուսավոր ուժերի հետ, եթե ձեր թրթիռների մակարդակը թույլ չտա ձեզ բարձրանալու մինչև Լույսի եթերային օկտավաները:

Վերջին հաշվով, ամեն ինչ ինքներդ եք որոշում: Եվ տիեզերքում չեք գտնի մի էակ, որը ձեր փոխարեն անցնի ձեր Ուղին:

Դուք կարող եք օգնություն խնդրել և օգնություն ակնկալել: Բայց ինքներդ պետք է առաջ ընթանաք և ձեր ընտրությունն ինքներդ պետք է կատարեք: Մեր խնդիրը միայն այն է, որ առավելագույնս հեշտացնենք և անվտանգ դարձնենք ձեր Ուղին: Եվ միշտ հիշեք, որ ձեր ամենագլխավոր թշնամին ու ախոյանը թաքնված է ձեր ներսում. դա ձեր մարմնական խելքն է՝ ձեր էգոն: Այն ամենը, ինչը թույլ է տալիս ձեզ ձերբազատվել ձեր էգոյից, օգտակար է ձեզ համար. այն ամենը, ինչն ուժեղացնում և ամրապնդում է ձեր էգոն, Աստծուց չէ:

Ըստ այդմ՝ արդեն նվաճումների բարձր աստիճանի հասած աշակերտներ կան, ովքեր, երբ հասնում են Ուղու այն հատվածին, որտեղ պետք է ամբողջությամբ ենթարկվեն Ուսուցչի կամքին, երբեմն գերադասում են խուսափել հետագա առաջխաղացումից: Աշակերտի գիտակցության մեջ դժվարությամբ է արձագանք գտնում այն միտքը, որ Ուսուցիչը կարող է և ցավ պատճառել աշակերտին:

Ուսուցիչը տեսնում է ձեր թերությունները, և երբեմն, որպեսզի դուք ձերբազատվեք ձեր թերություններից, Ուսուցիչը ձեզ շատ ցավոտ թեստ է տալիս: Իսկ ձեր էգոն այդ թեստն ընկալում է որպես վիրավորանք կամ սպառնալիք:

Եթե դիմում եք վիրաբույժին, և նա առաջարկում է ձեզ շատ բարդ վիրահատության ենթարկել, ապա դուք ձեր ազատ կամքով կարող եք համաձայնել վիրահատությանը կամ էլ հրաժարվել դրանից: Կարող եք ձեզ հանձնել վիրաբույժի իշխանությանը, կամ էլ հրաժարվել վիրահատությունից: Դուք ինքներդ եք դա որոշում:

Բայց այն բանից հետո, երբ պառկած եք վիրահատության սեղանին և ամբողջությամբ վստահել եք վիրաբույժին, ձեզնից այլևս ոչինչ կախված չէ: Դուք արդեն կատարել եք ձեր ընտրությունը:

Նույնը տեղի է ունենում նաև այն դեպքում, երբ վստահել եք ճշմարիտ Ուսուցչին, և այդ Ուսուցիչը ցավագին վիրահատության է ենթարկում ձեզ՝ հեռացնելով ձեր էգոն: Եվ դուք գիտակցաբար եք գնում այդ վիրահատությանը, որովհետև հասկանում եք, որ ձեր հետագա առաջընթացն ու հենց ձեր հետագա կյանքն անհնարին կլինի, եթե դուք հենց հիմա չձերբազատվեք ձեր էգոյից: Կա Ուղու մի հատված, որը դուք չեք կարողանա հաղթահարել միայնակ՝ առանց ուղեկցորդի: Եվ հենց որ դուք մոտենում եք այդ հատվածին, հայտնվում է Ուսուցիչը: Այդ մասին կա մի իմաստուն խոսք. «Եթե աշակերտը պատրաստ է, ապա հայտնվում է և Ուսուցիչը»:

Ձեր խնդիրը զանազանելն է: Նաև այն, որ, փոխանակ վեր բարձրանալու, սայթաքուն ճանապարհով ցած չսահեք: Եվ միշտ չէ, որ կարող եք ձեր Ուղու վրա զանազանել ձեր շարժման ճիշտ ուղղությունը:

Բոլոր հանձնարարականներն արդեն ձեզ տրված են: Նաև զգուշացված եք բոլոր վտանգներից: Այնուամենայնիվ ջանացեք ձեր Ուղով առաջընթացի ողջ ընթացքում պահպանել ձեր Հավատն ու Սերը: Նաև ես մաղթում եմ, որ Աստծո Իմաստությունը ձեր Ուղու վրա միշտ ուղեկից լինի ձեզ:

ԵՍ ԵՄ Կութհումին

ՏԵՐ ՀԻՍՈՒՍ

8 հունիսի, 2005 թ.

ՈՒՍՄՈՒՆՔ ԲՈՒԺԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԵՍ ԵՄ Հիսուս՝ նորից եկածը:

Ըստ հաստատված ավանդույթի՝ ես Ուսմունք կտամ: Այսօրվա մեր ուսուցման թեման բուժարարությունն է: Դուք գիտեք, որ երբ 2000 տարի առաջ գտնվում էի մարմնավորման մեջ, ես հաջողությամբ բուժում էի: Իմ հրաշագործ բուժարարության համբավն ինձնից առաջ էր ընկած: Ուր էլ գնայի, միշտ գտնվում էին մարդիկ, ովքեր հավատում էին, որ ես կարող եմ իրենց բուժել, և կային նաև մարդիկ, ովքեր չէին հավատում բուժման հրաշքին:

Ուստի ես միշտ հարցնում էի, թե տվյալ մարդը հավատո՞ւմ է արդյոք, որ կարող է բուժվել: Նաև միշտ հարցնում էի, թե ուզո՞ւմ է արդյոք բուժվել: Առաջին հայացքից, այդ երկու պահը կարող են աննշան թվալ և պարզապես հերթապահ արտահայտություններ, սակայն հատկապես այդ երկու պահն են իրենց մեջ պարունակում բուժման բանալին:

Ձեր գիտակցությունը պետք է պատրաստ լինի բուժմանը: Եթե ձեր գիտակցությունն ինչ-ինչ պատճառներով չի կարող հավատալ ձեր բուժման հնարավորությանը, ապա ձեզ չի կարող օգնել նույնիսկ Աստված:

Կա նաև հաջորդ պահը. դուք պետք է կամենաք բուժվել և պետք է բուժում խնդրեք: Եթե դուք բուժում չեք խնդրում, ապա նույնիսկ Աստված անկարող կլինի ձեզ օգնել, քանզի ազատ կամքի օրենքն անխափան կերպով գործում է համայն տիեզերքում:

Շատ են այն պատճառները, որոնցից ելնելով, դուք չեք ուզում բուժվել: Պատճառներից մեկն այն է, որ ձեր հոգին կամավոր կերպով իր վրա հիվանդություն է վերցրել՝ որպես բեռ, որպեսզի բեռնաթափի աշխարհի կարման կամ ձեր սեփական ծանր կարման, որը ձեռք եք բերել անցյալում: Շատ լուսավոր հոգիներ, երբ մարմնավորվում են, իրենց վրա են վերցնում ծանր հիվանդություններ ու ի ծնե հաշմություն, որպեսզի տառապանքներով քավեն աշխարհի մեղքերը: Իրենց արտաքին գիտակցությամբ նրանք կարող են չգիտակցել իրենց վրա վերցրած ծանր բեռը, բայց, որպես կանոն, նման հոգիները բուժվել չեն ուզում և բուժում չեն խնդրում: Եվ նման հոգիներին օգնել կարելի է միայն այն դեպքում, եթե նրանց բուժման համար խնդրում են մերձավորները, որոնց համար սիրելի մարդու տառապանքներն անտանելի բեռ են դարձել:

Այսպիսով, մարդը պետք է հավատա բուժմանը, նաև պետք է խնդրի բուժվելու համար: Միայն այն դեպքում, երբ այդ երկու պայմանը բավարարված են, կարելի է ձեռնամուխ լինել բուժման գործին: Ամեն անգամ բուժումից առաջ պետք է տարբերել մարդու հիվանդության պատճառը: Բարձրագույն Օրենքը ձեզ և՛ կարող է թույլ տալ, և՛ կարող է թույլ չտալ բուժումն իրականացնել:

Անշուշտ, որպեսզի բուժեք որևէ մեկին, դուք պետք է բուժարարի պատմուճան ունենաք, որը ձեզ թույլ կտա բուժումն իրականացնել Աստծո ողորմածության և Աստծո էներգիայի օգնությամբ:

Կեղծ են բոլոր մյուս բուժարարական գործառությունները, որոնք պարզապես մի շարք արհեստական հնարքներով մի տեղից մյուսն են տեղաշարժում հիվանդության պատճառ հանդիսացող բացասական էներգիան կամ ժամանակավորապես կանգնեցնում են այդ էներգիայի ազդեցությունը:

Բուժարարության հարցերը շատ նուրբ են և շատ լուրջ: Ուստի ես անհանգստությամբ եմ հետևում այն նորահայտ բուժարարներին, ովքեր փորձարարություն են անում Աստծո էներգիայի հետ և երբեմն նույնիսկ չեն անցել այն սկզբնական ձեռնադրումները, որոնք թույլ են տալիս գործ ունենալ ապաքինող Աստվածային Էներգիայի հետ:

Շատ, այսպես կոչված, բուժարարների ընդհանրապես մատչելի չէ Աստծո էներգիան, և բոլոր նրանց ձեռնածությունները, եթե նույնիսկ ժամանակավոր թեթևացում են բերում, փաստորեն ավելի են ծանրացնում հիվանդի վիճակը:

Թույլ տվեք բացատրել:

Ձեր հիվանդության պատճառն այն բացասական էներգիան է, որը կուտակված է լինում ձեր աուրայում ձեր այն սխալ արարքների, մտքերի ու հույզերի պատճառով, որոնք դուք թույլ եք տալիս այս կյանքում և թույլ եք տվել նախորդ կյանքերում: Ես այժմ նկատի ունեմ մարդկության մեծ մասի հիվանդությունների պատճառները, այլ ոչ թե այն դեպքը, երբ մարդը դիտմամբ հիվանդությունն իր վրա է վերցրել՝ որպես բեռ:

Ձեր այդ բացասական էներգիան, որը ձեր հիվանդության իրական պատճառն է և ձևավորվել է որպես ձեր սխալ գործողությունների հետևանք, պետք է դուրս հանվի ձեր աուրայից: Այնժամ դուք կբուժվեք:

Ձեր բուժման համար անհրաժեշտ աստվածային ողորմածությունը ձեզ կարող է ցուցաբերվել

կամ ոչ: Ամեն ինչ կախված է այն կարմայի ծանրությունից, որը, փաստորեն, ձեր հիվանդության պատճառն է հանդիսացել:

Ըստ այդմ՝ բուժման թույլտվությունը պետք է ստացվի վերևից: Այն մարդիկ, ովքեր իրենց բուժարարի տեղ են դնում, որպես կանոն, չեն ունենում ձեռնադրումների այն մակարդակը, որն իրենց թույլ կտար իմանալ Աստծո Կամքը կոնկրետ ամեն մի բուժվող մարդու վերաբերյալ: Սակայն փող աշխատելու ցանկությունը նրանց դրդում է այն բանին, որ, կիրառելով որոշակի հնարքներ, կատարեն էներգիայի տեղաշարժ՝ ժամանակավորապես թեթևացնելով հիվանդի վիճակը: Բուժման ընթացքում կիրառվող հնարքների մի մասը ստեղծում են կարմա, որն ընկնում է նման բուժարարի վրա: Առավել ճարպիկ բուժարարները կարող են նույնիսկ խուսափել իրենց վրա ընկնող կարմայից, բայց դրանով նրանք ավելի են ծանրացնում այն հիվանդի կարման, որն օգնության խնդրանքով դիմել է իրենց:

Երբ Բարձրագույն Օրենքն իսկական բուժարարին թույլ է տալիս բուժում անել, ապա, որպես կանոն, բուժելու որոշումը կայացվում է այն բարի կարմայի հիման վրա, որը բուժվողն ունի, և որը կարող օգտագործվել նրա բուժման համար: Կամ այն դեպքում, եթե մարդու հոգին կամ հենց ինքը՝ մարդը, լիովին գիտակցել են, որ այն արարքները, որոնք հանգեցրել են հիվանդության զարգացմանը, եղել են սխալ, և ինքն արդեն իր արտաքին գիտակցությամբ հաստատ որոշել է այլևս չկրկնել նման արարքներ:

Ահա թե ինչու էի բուժելուց հետո ես ասում. «Գնա և այլևս մեղք մի գործիր»:

Իսկական բուժարարը լավ է զանազանում մարդկանց հիվանդության պատճառները և տեսնում, թե ում կարելի է օգնել և ում՝ ոչ: Բուժման համար օգտագործվում է Աստծո էներգիան: Իսկական բուժարարը հիվանդի մոտից հեռացնում է բացասական էներգիան և նրա աուրան լցնում Աստծո մաքուր էներգիայով: Դա կարելի է իրականացնել և՛ մտովի, և՛ ուղղակի ձեռքը դնելով հիվանդի վրա:

Բուժման էությունը բուժարարի և բուժվողի միջև էներգիաների փոխանակման մեջ է: Տեղի է ունենում բացասական էներգիայի ներհոսք դեպի բուժարարը և Աստծո էներգիայի արտահոսք բուժարարից հիվանդին: Էներգիաների փոխհոսքի այդ գործընթացը կարգավորվում է Բարձրագույն Օրենքով: Այդ դեպքում կարմա չի ստեղծվում, այլ բուժման ընթացքում հիվանդին ցուցաբերվում է իրական օգնություն: Քանի որ այն մարդը, որն ունի բուժարարի պատմուճան, բարձրագույն ձեռնադրումներ է անցել, որպեսզի պատմուճան ձեռք բերի, ապա բացասական էներգիան իր վրա վերցնելը, որպես կանոն, չի կարող վնասել նրան: Բուժարարի չակրաների միջոցով տեղի է ունենում ցանկացած բացասական էներգիայի փոխակերպում, ձևափոխություն, այրում: Ըստ էության, հիվանդից վերցրած բացասական էներգիայի ոչնչացումը նման է այն գործընթացին, երբ հոգևոր բարձր զարգացման հասած մարդիկ իրենց վրա են վերցնում համաշխարհային կարման, որպեսզի փոխակերպության ենթարկեն այն:

Որքան բարձր է բուժարարի հոգևոր զարգացման մակարդակը, այնքան նրա աուրայում ավելի արագ է տեղի ունենում բացասական էներգիայի ձևափոխությունը:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ եթե բուժում ստացած մարդն այնուամենայնիվ շարունակի իր այն արարքները, որոնք իր տկարության պատճառն են եղել, ապա հիվանդությունն այս կամ այն ձևով նորից կվերադառնա նրան:

Ուստի իրականում մարդու բուժումը տեղի է ունենում հենց իր օգնությամբ՝ իր գիտակցության օգնությամբ: Եվ որքան բարձր է մարդու գիտակցության մակարդակը, այնքան ավելի հեշտ է նրան օգնություն ցուցաբերելը: Բուժումը սերտորեն կապված է մարդու գիտակցության մակարդակի հետ:

Իսկ գիտակցության մակարդակ ասելով՝ չպետք է հասկանալ ինտելեկտի, խոսքի և մարմնական խելքի զարգացածությունը: Հասարակ մարդկանցից շատերը, որոնք առանձնապես մեծ կրթվածություն չունեն, երբեմն անհամեմատ ավելի բարձր գիտակցության մակարդակ են ունենում, քան այն մարդիկ, որոնք փայլուն կրթություն են ստացել և բարձր պաշտոններ են զբաղեցնում:

Հնարավոր է՝ ձեզնից յուրաքանչյուրի առջև ծառացել է բուժարարներին և պայծառատեսներին դիմելու խնդիր: Եվ գուցե դիմել եք նման բուժարարների: Հնարավոր է նույնիսկ, որ որոշ չափով ազատված լինեք ձեր տկարություններից: Բայց և այնպես պետք է ծայրահեղ զգույշ լինել ամեն տեսակի բուժարարների ու պայծառատեսների դիմելիս: Քանզի նրանցից շատերը չունեն այն հոգևոր նվաճումները, որոնք թույլ կտային իրենց բուժարարություն անել Աստծո անվամբ և Աստծո էներգիայի օգնությամբ:

Իսկ եթե ձեր հոգևոր նվաճումների մակարդակը գերազանցում է բուժարարի հոգևոր նվաճումների մակարդակը, ապա, այսպես կոչված, բուժման սեանսի ժամանակ տեղի կունենա լրիվ հակառակ գործընթաց: Ոչ թե բուժարարը ձեզնից բացասական էներգիա կվերցնի, այլ դուք ինքներդ ձեր աուրայի մեջ կներքաշեք այն բացասական էներգիան, որն առկա է նման բուժարարի աուրայում: Եվ դեռ լավ կպրծնեք, եթե միայն այդ բուժարարի բացասական էներգիան վերցնեք, այլ ոչ թե բոլոր այն հիվանդների էներգիաները, որոնք վերջին շրջանում այցելել են նրան:

Անուղղակիորեն բուժարարի իսկության մասին կարելի է դատել հետևյալ երկու բանով: Իսկական բուժարարը բուժում է ոչ թե ձեր մարմինը, այլ ձեր հոգին: Այսինքն՝ նա ձեզ օգնում է պարզելու այն պատճառները, որոնք հանգեցրել

են հիվանդության: Նա ձեզ կհուշի ձեր այն թերությունները, որոնք իրապես ձեր հիվանդության պատճառն են: Եվ երկրորդ՝ քանի որ բուժարարությունն Աստծո շնորհ է, ապա իսկական բուժարարը երբեք ձեզնից փող չի վերցնի բուժման համար: Նա իր շնորհը ձեռք է բերել՝ որպես նվեր, որպես նվեր էլ տալիս է: Այնուամենայնիվ երբեք մի' մոռացեք, որ դուք այս կամ այլ կերպ պետք է վարձահատույց լինեք ձեր բուժման համար: Եվ միշտ հիշեք, որ Աստված է իրական բուժողը, իսկ բուժարարը միայն իրեն դնում է Բարձրագույն Ուժերի տրամադրության տակ, որպեսզի իրականացնի իր ծառայությունը և թեթևացնի մյուս մարդկանց տառապանքները:

Այսօր շատ կարևոր զրույց կայացավ բուժարարության մասին: Եվ ես կարծում եմ, որ ձեզնից ամեն մեկն այս զրույցից կքաղի իրեն անհրաժեշտ օգուտը:

ԵՍ ԵՄ Հիսուս՝ ձեր հոգու բուժարարը

ՎԵՀԱՊԵՏ ԷԼ ՄՈՐԻԱ

9 հունիսի, 2005 թ.

ԱՅԺՄ ՌՈՒՍԱՍՏԱՆՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ Է ՀԻՄՆԱՐԱՐ ՄԱՔՐՈՒՄ

ԵՍ ԵՄ Էլ Մորիան՝ նորից եկածը:

Միայն ասել ձեզ, թե կարևոր է այս թելադրությունները տալն ու դրանք ընթերցելը նշանակում է ոչինչ չասել: Ամեն անգամ մենք նշանակալի ջանքեր ենք գործադրում, որպեսզի հաղթահարենք մատերիայի և այն հանգամանքների դիմադրությունը, որոնք կապված են մեր ուղերձները ֆիզիկական օկտավային փոխանցելու հետ:

Բարդությունն այն է, որ ուղերձների փոխանցումը հնարավորինս ճշգրիտ համապատասխանի ներկա օրվա խնդրին: Իսկ օրակարգում դրված հիմնական խնդիրը երկրացիների գիտակցությունը փոխելն է, դրա մակարդակի բարձրացումը, տարողունակության ընդլայնումը: Ձեր գիտակցությունն այն միակ խոչընդոտն է, որը խանգարում է մեզ հետ ձեր հաղորդակցությանը և Երկիր մոլորակի իրադրության փոփոխությանը:

Ուստի ես գալիս եմ և նորից ու նորից կրկնում եմ՝ գործադրեք ձեր անմիջական ջանքերը: Ձերբազատվեք ձեր գիտակցության բոլոր այն ոչ պետքական ու դարն ապրած բաներից, որոնք տեղ չունեն Նոր Աշխարհում:

Թվում է, թե Ռուսաստանի զարգացումը հասել է փակուղու: Թվում է, թե ոչինչ չի փոխվում, և վատ է ամեն ինչ: Սակայն մի՛ դատեք արտաքին դրսևորումներով: Քանզի յուրաքանչյուր մարդու ներսում, Ռուսաստանի տարածքում մարմնավորված յուրաքանչյուր լուսակիրի ներսում գիտակցության փոփոխության առումով տեղի են ունենում վիթխարի տեղաշարժեր: Հսկայական աշխատանք է տարվում այն փորձի իմաստավորման համար, որը ձեռք է բերվել վերջին հարյուր տարում: Կա հայտնի մի խոսք. «Բացասական արդյունքը նույնպես արդյունք է»: Եվ այդ խոսքն ամենից հարմարն է գալիս այն իրադարձություններին, որոնք վերջին հարյուր տարում անցան Ռուսաստանի գլխով:

Հնարավոր չէ, պաշտելիներս, Նոր աշխարհի չափանիշներին համապատասխանող հասարակություն կառուցել՝ չհիմնվելով Աստծո Հավատի վրա: Ճշմարիտ Հավատի, այլ ոչ թե այն հավատի, որն օրինաչափորեն իր հետ սրբեց-տարավ 1917 թվականի հեղափոխությունը:

Ռուս ժողովուրդը միշտ էլ ներընկալողաբար զգացել է, որ ոչ մի պաշտոնական կրոն՝ իր ողջ հիերարխիայով և դոգմաներ հաստատելու ձգտմամբ, չի համապատասխանում ռուսական լայն հոգու պահանջներին:

Այդ առումով կարելի է ասել, որ ռուս մարդու գիտակցության տարողությունը վերջին տասնամյակների ընթացքում հսկայական համամասնությամբ ընդարձակվել է:

Շղթայակապ անող դոգմայից ազատվելու և գիտակցության մեջ այդ դոգման հաղթահարելու համար երբեմն անհրաժեշտ են լինում արտաքին պայթյուններ և սոցիալական ցնցումներ: Եվ այդ գործընթացը նման է այն հիմնարար մաքրմանը, որը դուք իրականացնում եք ձեր տներում: Առաջին հայացքից կարող է թվալ, թե ձեր շուրջը լիակատար խառնաշփոթ ու քաոս է տիրում: Բոլոր իրերն իրենց նախկին տեղերից տեղաշարժված են: Եվ անհնարին է դարձել դրանք գտնելը: Որոշ իրեր արդեն հնամաշ են և փոխարինման կարիք ունեն: Եվ դուք դրանք դուրս եք շպրտում: Իհարկե, դժվար է բաժանվել սիրելի իրերից, որոնք երկար տարիներ հավատով ու ճշտով ծառայել են ձեզ, և որոնց հետ տառացիորեն ֆիզիկապես

կապվել եք: Սակայն ժամկետը հասել է, և դուք թափ եք տալիս հին իրերը՝ ոչ պետքականները դեն նետելով: Փոշիները վերցնում և փայլեցնում եք այն իրերը, որոնք դեռ կարող են ծառայել: Եվ կրկին մեկ առ մեկ ամեն ինչ իր տեղն եք դնում:

Այժմ Ռուսաստանն իրականացնում է հիմնարար մաքրում: Արժեքների վիթխարի վերագնահատում է ընթանում: Ընդ որում այդ հիմնարար մաքրմանը մասնակցում է Ռուսաստանի ողջ ժողովուրդը: Այդ պատճառով երկիրը փնթի տեսք ունի: Նույն պատճառով մոայլ են դեմքերը: Հիմնարար մաքրումը հասել է իր գագաթնակետին: Եվ, թվում է՝ վերջ չկա այդ հոգնեցուցիչ աշխատանքին:

Շատերը փորձում են վերադառնալ իրենց նախապապերի հին հավատին: Վերադառնում են նորից վերաշինված տաճարները: Ականջ են դնում իրենց ներսին, հոտոտում են եկեղեցական բույրերը: Եվ կա այն կանխազգացումը, որ հատկապես Աստծո հետ է կապված Ռուսաստանի ապագան, Աստծո ճշմարիտ Հավատի հետ: Այնուհանդերձ հոգին հանգստություն չի գտնում հին հավատում: Բառացիորեն մարդկանց ամբոխներ են զբաղված նոր հոսանքների, նոր կրոնների որոնման գործով: Եվ խավարի ուժերը հաճկատարորեն դեմ են տալիս հավատի փոխնակներ, գեղեցիկ բաներ, որոնք, սակայն, միանգամայն անօգտակար են հոգու զարգացման համար: Հսկա երկրի ժողովուրդը որոշում է, թե ինչի վրա կանգ առնի: Ի՞նչը պետք է ընտրել և ինչի՞ց հրաժարվել:

Գուցե պետք է ինչ-որ բան թողնե՞լ. սրբել փոշու շերտը և դնել դարակի՞ն:

Նույնը վերաբերում է սոցիալական կյանքին: Կեղծ համայնավարական իշխանության այդքան տարիներից հետո ոմանք փորձ են անում վերադառնալ նույն համայնքին՝ այն կառուցելով նոր սկզբունքների վրա: Մյուսները վերհիշել են է՛լ ավելի հին ժամանակները և փորձում են դիրք գրավել նոր վերնախավի կազմում, երկրում մտցնել այն նույն անհավասարությունը, որը հատուկ էր ցարական ռեժիմի վերջին տարիներին:

Եվ նորից այն տպավորությունն է, որ ինչ-որ բան այն չէ: Ժողովրդական մի իմաստուն խոսք կա, որն ասում է՝ հնարավոր չէ երկու անգամ նույն գետը մտնել:

Եվ չափազանց ցավոտ է հին իրերին հրաժեշտ տալը, ափսոս է դեն նետելը: Այնուհանդերձ, որքան ավելի արագ ժողովրդի ընդհանրական գիտակցությունը մաքրվի ինչպես եկեղեցական, այնպես էլ աշխարհիկ կյանքի հին, անպետք դոգմաներից, այնքան ավելի արագ ու հաջող կերպով նորն իր սահմանագծերը կնվաճի մարդկանց գիտակցության մեջ:

Բերկրանքով ենք դիտում նորի, առաջադեմի ծլարձակումները շատ մարդկանց սրտերում ու մտքերում: Մեր աշակերտները ո՛չ քուն ունեն, ո՛չ դադար: Մեր իսկական աշակերտները շուրջօրյա աշխատանքի մեջ են: Մեր պահնորդները շուրջօրյա կանգնած են իրենց պահակակետում: Հարազատ ամրոցը պետք է զերծ պահվի այն ամենից, ինչն օտար է Նոր Աշխարհին, բոլոր այն գաղափարներից, որոնք ներթափանցում են քաղաքակիրթ Եվրոպայից ու Ամերիկայից: Այնուհանդերձ, ես պետք է ասեմ, որ ողջ այդ արևմտյան քաղաքակրթության թիկունքում չկա ոչինչ, որի կարիքը զգացվեր ապագա հասարակության մեջ: Եվ, որքան էլ ձեզ տարօրինակ թվա, ես պետք է ասեմ, որ և՛ Եվրոպան, և՛ Ամերիկան իրենց հոգևոր զարգացման և գիտակցության մակարդակով ընդմիշտ հետ են մնացել Ռուսաստանից: Դուք դա հիմա չեք տեսնում՝ գտնվելով այն հիմնարար մաքրման խառնաշփոթի մեջ, որն այժմ ի կատար եք ածում: Բայց, հավատացեք ինձ, կանցնի ընդամենը մի քանի տարի, և գիտակցության այն փոփոխությունները, որոնք այժմ ընթանում են չտեսնված արագությամբ՝ ուղղակի յոթմղոնանոց քայլերով, կսկսեն արտահայտվել ձեզ շրջապատող կյանքում: Այն ամենը, ինչ ձեզ շրջապատում է, ձեր գիտակցության արտացոլանքն է: Եվ այն, ինչը հիմա դուք տեսնում եք ձեր շուրջը, այն գիտակցության արտացոլանքն է, որը ռուսական հասարակությունն ուներ կեղծ համայնավարության՝ այսպես կոչված, սոցիալիզմի օրերին:

Մատերիան տիեզերքի ամենահիներտ մասն է: Եվ որպեսզի գիտակցության փոփոխությունը ֆիզիկական աշխարհում դրսևորվի, պետք է տարիներ անցնեն: Նախկինում գիտակցության փոփոխության արտացոլանքն ավելի շատ ժամանակ էր պահանջում դրսևորման համար, քան հիմա: Ժամանակը փոխվել է: Եվ մարդկանց գիտակցության ամեն մի փոփոխություն համարյա ակնթարթորեն հանգեցնում է ֆիզիկական ոլորտի փոփոխության: Ակնթարթորեն, իհարկե, տիեզերական մասշտաբներով: Սակայն արագացման գործընթացը, աշխարհի թրթռումների բարձրացման գործընթացը տեղի է ունենում անշեղորեն ու մշտապես: Ուստի ամեն տարվա հետ փոքրանում է այն ժամկետը, որն անհրաժեշտ է, որպեսզի գիտակցության փոփոխությունն իր դրսևորումը գտնի ֆիզիկական ոլորտում:

Ըստ այդմ՝ ձգտեցեք փոխել ձեր գիտակցությունը: Կարգ ու կանո՛ն մտցրեք ձեր գիտակցության մեջ: Ձեր անցյալը՝ ձեզ օրինակ. այն Հավատը, որ տապալվել է, որի վերկանգնման համար փորձեր են ձեռնարկվում, և որն այլևս չի կարող բավարարել մարդկանց: Քանզի մարդկանց գիտակցությունն ընդլայնվել է, և հին շրջանակներն արդեն փոքր են գալիս:

Կար կեղծ համայնավարություն, իսկ հիմա չկա: Քանզի իսկական համայնքը կարող է հիմնվել միայն ճշմարիտ Հավատի վրա:

Մի ուրիշ օրինակ կարող են ծառայել հին կարգերը, երբ քչերը տիրում էին ամեն ինչին, իսկ մարդկանց զանգվածները սովի էին մատնված: Եվ այդ կարգերը ևս չեն կարող նորից կյանքի կոչ-

վել: Որովհետև չեն համապատասխանում կյանքի պահանջներին:

Ճշմարիտ Հավատի վրա հիմնված իսկական համայնքի համակցումը հասարակության այնպիսի սոցիալական կառուցվածքի հետ, որտեղ հոգ է տարվում և օգնություն ցուցաբերվում նրա բոլոր անդամներին՝ հատուկ ուշադրություն հատկացնելով երեխաներին ու անկարողներին. հասարակության յուրաքանչյուր անդամի համար ազատ զարգացման, լավագույն անվճար ուսուցման, լավագույն բժշկական սպասարկում ստանալու հնարավորություն: Բոլոր այն լավը, ինչ կար կեղծ համայնավարության ժամանակ, դրված ճշմարիտ հավատի ռելսերի վրա, կտա Նոր Դարաշրջանի հասարակության ապագա կառուցվածքի այն կերպը, որը մենք ունենք մեր սրտերում:

Սոցիալական և գույքային անհավասարությունը կհաղթահարվի կրթության համակարգի փոփոխմանը զուգընթաց, որը ապագա սերնդին պատկերացում կտա այս տիեզերքում գործող Աստծո Օրենքների մասին, նաև գլխավոր օրենքների՝ կարմայի կամ հատուցման օրենքի և վերամարմնավորման կամ հոգիների զարգացման օրենքի մասին:

Ճշմարիտ Հավատի բոլոր հիմունքները պետք է վերադարձվեն հասարակությանը: Եվ ամեն մարդ պետք է պատկերացում ստանա բոլորաշրջանների հերթագայության, սեփական էգոյից ձերբազատվելու անհրաժեշտության, Աստծո մեջ կատարելագործվելու անհրաժեշտության մասին:

Տալիս ենք կողմնորոշիչներ: Տալիս ենք հիմունքներ: Տալիս ենք ցուցումներ:

Նրանց համար, ովքեր լսում են: Նրանց համար, ովքեր ըմբռնում են: Նրանց համար, ովքեր պատրաստ են:

ԵՍ ԵՄ Էլ Մորիան

ՋՈՐԱՎՈՐ ՀԱՂԹԱՆԱԿ

10 հունիսի, 2005 թ.

ՀԱՍԵԼ Է ՀԱՂԹԱՆԱԿԻ ԺԱՄԸ...

ԵՍ ԵՄ Ջորավոր Հաղթանակը... ԵՍ ԵՄ եկել...

Տարածության ու ժամանակի հաղթահարումն այս անգամ կապված է ձեզ ուրախալի լուր հաղորդելու կենսական անհրաժեշտության հետ... Ձեր մոլորակն անցում է կատարում ձեր էվոլյուցիայի նոր փուլին, և դա տեղի է ունենում տառացիորեն հենց հիմա:

Մոտակա ժամերի ընթացքում ձեզնից յուրաքանչյուրն արդեն կարող է զգալ նշանակալի փոփոխություններ: Դուք պետք է ունկնդրեք ինքներդ ձեզ: Դուք պետք է զգաք ձեզ, հասկանաք ձեզ: Դուք այն չեք, ում տեսնում եք հայելու մեջ. դուք հզոր հոգևոր էակներ եք, և գալիս է այնպիսի մի փուլ, երբ դա պետք է զգաք: Համենայն դեպս ձեզնից նրանք, ովքեր պատրաստ են ընթանալու այս տիեզերքի էվոլյուցիոն Ուղով, որին նախապատվություն են տալիս այս տիեզերքի բոլոր բանական էակները:

Դուք թևակոխում եք այն մակարդակի վրա, որը ձեզ թույլ կտա, առանց նախկին ջանքերի, ի կատար ածել ձեր կապը ձեր իսկ Բարձրագույն մասի հետ: Բոլոր ժամանակներում եղել են մարդիկ, ովքեր հատուկ տեղ են գրավել և իրենց մեջ պահպանել են աշխարհների միջև հաղորդակցության գաղտնիքը նույնիսկ այն ժամանակ, երբ վարագույրն ուներ առավելագույն թանձրություն:

Որպեսզի ձեզ համար պատկերավոր լինի, այդ վարագույրն առաջ նման էր անթափանց պատի, իսկ այժմ գալիս է մի ժամանակ, երբ այդ վարագույրը նման է դառնում ցանցկեն քողի, որի միջով դուք կարող եք տեսնել և մասնակի պատկերացում կազմել մեր աշխարհի մասին:

Եվ ես այժմ եկել եմ հատկապես այն բանի համար, որ ձեզ հաղորդեմ այդ հնարավորության մասին: Մեր աշխարհները սահմանազատող վարագույրն ուր որ է կպատռվի: Ձեր գիտակցությունը միակ խոչընդոտն է, որը խանգարում է ձեզ տեսնելու մեր աշխարհը և հաղորդակցվելու մեր աշխարհի հետ: Նուրբ էներգիաները թափանցում և անցնում են ձեր միջով՝ տառացիորեն կերտելով ձեր գիտակցությունը. նոր գիտակցությունը. Նոր Դարաշրջանի մարդու գիտակցությունը:

Համբարձյալ Դասերն իրենցից կախված ամեն ինչ անում են, որ ձեզ հաղորդակից դարձնեն մեր աշխարհի հետ: Եվ եթե դուք ձեր հաղորդակցման հնարավորության նկատմամբ գործադրեիք թեկուզ հազարերորդական մասն այն ջանքերի, որոնք գործադրում ենք մենք, ապա ձեր գիտակցության մեջ կկարողանայիք համարյա կայծակնային թռիչք կատարել դեպի անսահմանություն՝ դեպի մեր աշխարհները: Ձարմանահրաշ ժամանակներ են գալիս: Նայեցեք պատուհանից դուրս: Արդյո՞ք նույն աշխարհն եք տեսնում: Յուրաքանչյուրին հնարավորություն է տրված: Եվ յուրաքանչյուրն ինքն է որոշում կայացնում՝ հենվելով ազատ կամքի օրենքի վրա:

Ես եկել եմ՝ որպես այն աստղը Բեթղեհեմի, որն ազդարարեց Հիսուս Քրիստոսի Ծնունդը: Եվ ձեզնից նրանք, ովքեր հաղթել են իրենց մահկանացու գիտակցությանը, հնարավորություն կստանան օժտվելու Քրիստոսի բանականությամբ:

Ձեր գիտացությունն ընկալունակ կդառնա այնպիսի ըմբռնման համար, որը նախկինում ձեզ համար մատչելի չէր: Ձեր առաջընթացը ֆիզիկական ոլորտում չէ, որ տեղի է ունենում: Դուք ելնում եք աստվածային գիտակցության գագաթը ձեր այն հաղթանակների օգնությամբ, որոնց մեկը մյուսի հետևից հասնում եք ձեր անիրական մասի, ձեր մահկանացու մարմնական խելքի նկատմամբ:

Ձեր միջից փայլում է Քրիստոսի բանականությունը: Այն ծնվում է ձեր մեջ, և այն դուրս է հորդում դեպի ձեր աշխարհ ձեր աչքերի փայլի տեսքով, ձեր ծառայության, ձեր այն արարքների տեսքով, որոնք դուք կատարում եք՝ հանուն համայն կյանքի բարօրության:

Պաշտելիներս, հնարավոր չէ չնկատել այն փոփոխությունները, որոնք տեղի են ունենում ձեզնից նրանց հետ, ովքեր արդեն պատրաստ են: Ովքեր ոչ միայն հայտնել են Ուղով ընթանալու իրենց պատրաստակամությունը, այլ նաև հաստատուն կերպով ընթանում են՝ կանգ չառնելով և ուշք չդարձնելով մանր ու մեծ խոչընդոտներին:

Եվ եթե ոմանք այդպես արագ են ընթանում դեպի աստվածային գագաթը, ապա մյուսներն այդ նույն ժամանակ գերադասում են թանկարժեք ժամանակը վատնել նույն այն հաճույքների ու զվարճալիքների որոնման վրա, որոնք Ուղուց հանել են ամենալուսավոր հոգիներին: Պատրանքը դեռ ուժեղ է, բայց ժամանակը կարճվել է ընտրյալների համար, և, եթե դուք նախկինում միայն կարդում ու կրկնում էիք այս խոսքերը, ապա այժմ ձեր աչքով կարող եք տեսնել ու հավատալ այն փոփոխություններին, որոնք մոտ ժամանակում սպասվում են ձեզ: Ասվել է՝ երկուսը արտում կլինեն. մեկը կվերցվի, մյուսը կթողնվի. երկուսը ջրաղացում աղալիս կլինեն. մեկը կվերցվի, մյուսը կթողնվի: Այդպես էլ տեղի է ունենում: Բա՛ց արեք ձեր աչքերը և լա՛վ նայեք չորս կողմը:

Եվ, եթե իմանաք, թե ինչին ուշադրություն դարձնեք, ապա կտեսնեք, թե ինչպես ոմանք գործադրում են իրենց բոլոր ուժերն ու հնարավորությունները և ծախսում իրենց ողջ ժամանակը, որպեսզի անընդհատ շարժվեն առաջ ու առաջ: Բայց, այդ նույն ժամանակ մյուսները փորձում են մի նեղ ճեղք գտնել, որ խցկվեն այնտեղ ու սպասեն, մինչև անցնի այս փոփոխությունների ժամանակը:

Իսկ այս ժամանակը կարող է վերածվել վիթխարի հաղթանակի ժամանակի, որին հասնում են ոմանք, բայց նաև ժամանակի, որի ընթացքում մյուսները պարտություն են կրում:

Ձեզնից յուրաքանչյուրը հաղթանակի հասնելու ներուժ ունի: Բայց ոմանք մղվում են դեպի այդ հաղթանակը և դրան հասնելու համար կիրառում են իրենց բոլոր ուժերը, իսկ մյուսները գերադասում են թեք ընկնել վառարանի կողքին՝ մտածելով, որ այս բոլոր փոփոխություններն իրենց կողքով կանցնեն և առաջվա պես պետք չի լինի որևէ բան անել:

Պաշտելիներս, երբեք մի՛ մոռացեք, որ դուք բոլորդ գտնվում եք Աստծո որովայնում: Դուք բոլորդ կազմում եք Աստծո միասնական մարմինը, և գալիս է մի պահ, երբ ձեզանից շատ քիչ բան է կախված լինում: Ձեզ վիճակված է հաղթել: Եվ դուք այլ ընտրություն չունեք՝ բացի ձեր հաղթանակից:

Ըստ այդմ՝ հեռացե՛ք վառարանի մոտից, դուրս եկեք փողոց և կանգնեք բարեփոխումների թարմ քամուն դեմ հանդիման: Դուք նման եք ծովախորշում կանգնած այն առագաստանավին, որը չէր կարողանում տեղից պոկվել քամու բացակայության պատճառով: Եվ ահա եկել է պահը, երբ փչում է հնարավորության քամին՝ պատրաստ ուղղելու ձեր առագաստը և հասցնելու ձեզ պատրանքային աշխարհում ձեր ճամփորդության նպատակակետին: Իսկ ձեր ճամփորդության նպատակը վերադառնալն է այն իրական աշխարհը, որտեղից դուրս եք եկել և դեպի ուր ընթանում եք անսասանորեն՝ տիեզերական բոլորաշրջանների օրենքին համապատասխան:

Ուստի ձեր էության առագաստով որսացե՛ք տիեզերական հնարավորության քամին: Քանզի հաջորդ տիեզերական հնարավորությունը կծագի հաջորդ տիեզերական բոլորաշրջանի ընտրյալների համար, և դուք ինքներդ ձեզ դատապարտում եք դժնդակ աշխարհներում երկարատև ու ձանձրալի լինելիության: Ուստի հաղթանա՛կն ընտրեք և շարժվեք դեպի ձեր Հաղթանակը: Ես եկել եմ՝ տեղյակ պահելու տիեզերական հնարավորության մասին, որը վրա է հասնում: Եվ որն արդեն հասել է նրանց համար, ովքեր պատրաստ են այն ընդունել: Հասե՛լ է հաղթանակի ժամը...

Հաղթանակ նրանց համար, ովքեր պատրաստ են, և նրանց համար, ովքեր այժմ համաձայն են ընդունելու իրենց հաղթանակը:

Հզոր մղման ազդակն այսօր գիշերվա ընթացքում ձեր գիտակցության մեջ ձեզ կտեղափոխի ձեր էվոլյուցիոն զարգացման հաջորդ փուլի վրա:

Եվ դուք հստակորեն կտեսնեք նպատակը, կտեսնեք Նոր Աշխարհը, որն իր ուրվագծերը կդրսևորի նախ ձեր գիտակցության մեջ, որից հետո աստիճանաբար ձեր գիտակցության միջոցով կդրսևորվի նաև Երկրի ֆիզիկական ոլորտում:

ԵՍ ԵՄ Հաղթանակը...

ՎԵՀԱՊԵՏ ԼԱՆԵԼԼՈ

11 հունիսի, 2005 թ.

ԿՈՒԶԵՆԱՅԻ ՄՈՏԵՆԱԼ ՈՒ ԳՐԿԵԼ ԵՐԿԻՐ ՄՈԼՈՐԱԿՈՒՄ ԱՅԺՄ ՄԱՐՄՆԱՎՈՐՎԱԾ 144 000 ՔՐԻՍՏՈՍԱՅԻՆ ԷԱԿՆԵՐԻՑ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻՆ

ԵՍ ԵՄ Լանելլոն՝ նորից եկածը:

Ձեզ շրջապատող աշխարհի իրավիճակն անսկատելի կերպով փոխվել է: Հազիվ թե առօրեական ունայնությամբ տարված որևէ մեկը նկատեց այն կարևոր փոփոխությունները, որոնք տեղի ունեցան: Իրադարձությունները չեն շտապի դրսևորվել, սակայն սկիզբը դրված է, և գործընթացն անկասելիորեն սկսել է ծավալվել:

Եթե մարդիկ ավելի շատ վստահեին իրենց Բարձրագույն մասին, ապա ստիպված կլինեին ընդունել, որ կան որոշակի ժամկետներ, կա որոշակի պլան՝ համաձայն որի ամեն ինչ ծավալվում է, և որի վրա է հիմնված ամբողջ Արարչագործությունը: Ուստի նրանք, ովքեր ներկայումս հասել են գիտակցության որոշակի մակարդակի, որը համապատասխանում է Երկրի էվոլյուցիոն զարգացման ներկա փուլի համար նախատեսված աստվածային պլանին, կարող են ձեռնամուխ լինել այն գիտելիքների, ուսմունքների ու հասկացությունների ըմբռնմանը, որոնք իրենց մատչելի են դառնում՝ շնորհիվ ընձեռված տիեզերական հնարավորության: Իսկ նրանք, ովքեր չեն կարողացել իրենց գիտակցությամբ տեղ գտնել այդ նեղ միջանցքում, ստիպված կլինեն բավարարվել խղճուկ գոյությամբ՝ գետնի տակ ապրող կույր կուղբերի նման:

Բոլոր հնարավորություններն ու դռները բացվում են ձեր ներսում: Միայն ձեր գիտակցությամբ է որոշվում աստվածային հիերարխիայի ձեր աստիճանը և ձեր այն ծառայության չափը, որն Աստված կարող է հնարավորություն տալ ձեզ իրագործելու:

Ձեր կողմից խելացի չէր լինի դատապարտելն ու չհոգալն այն անհատների մասին, ովքեր իրենց գիտակցությամբ չեն կարողացել հաղթահարել անհրաժեշտ սահմանագիծը: Նրանք դժբախտ են իրենց էությամբ և նման են այն երկտարեցիներին, ովքեր վերջապես գլխի են ընկել, որ իրենց ծուլության երեսից մեծ հիմարություն են թույլ տվել, քանի որ ստիպված են լքել իրենց համադասարանցիներին և հայտնվել իրենցից փոքրերի շրջապատում, որտեղ իրենք մտավոր հետամնացի ու թերզարգացածի համբավ ունեն:

Սակայն շատերն իրենց զարգացման մակարդակով այդպես էլ մինչև իրենց կյանքի ավարտը գլխի չեն ընկնի, թե ինչ հնարավորություն են ունեցել և ինչից զրկվել:

Այս աշխարհում ամեն ինչ ենթակա է զարգացման բոլորաշրջանի: Եվ, զգու՛յշ եղեք, թե չէ՝ կարող եք մի գեղեցիկ պահի ծնունդ առնել այն ավստրալիացի բնիկների շրջապատում, ովքեր նիզակներով որսի են դուրս գալիս և նույնիսկ ունակ չեն պատկերացում կազմելու այն աշխարհի մասին, որում իրենց հետ միաժամանակ մարդիկ ապրում են ինչ-որ տեղ Ամերիկայում կամ Եվրոպայում:

Էվոլյուցիան ձգվում է միլիոնավոր տարիներ և զարգացման հնարավորություն է ընձեռում նույնիսկ ամենադանդաղկոտներին ու ծույլերին: Սակայն գալիս է մի պահ, երբ նույնիսկ ամենամարդասիրական Տիեզերական Օրենքն էլ այլևս ունակ չի լինում զարգացման հնարավորություն ընձեռելու, քանի որ ժամկետները լրացել են, և բոլորաշրջանը փոխվել է:

Ես շատ եմ ափսոսում այն բանի համար, որ շատ քիչ քանակությամբ հոգիներ են ոտք դրել գիտակցության զարգացման նոր աստիճանի վրա: Այնուամենայնիվ, նույնիսկ հոգիների այդ քանակությունն արդեն բավարար է, որպեսզի Երկրի փոփոխություններն արագանան, և այն ձևափոխությունները, որոնք նախանշված են, հաջողությամբ սկսվեն ու ավարտվեն: Ես բերկրանքով եմ նայում այն մարմնավորված հոգիներին, ովքեր իրենց մեջ կարողացել են այնքան ուժ ու մղվածություն գտնել, որ հաղթանակի հասնեն իրենց իսկ նկատմամբ՝ իրենց էգոյի նկատմամբ, և բարձրանան հաջորդ աստիճանի վրա:

Եվ ես կանխազգում եմ, որ շատ շուտով այդ հոգիների միջև կհատատվեն բարեկամության, համագործակցության և փոխօգնության հարաբերություններ, որտեղ էլ երկրագնդի վրա այդ հոգիները գտնվելիս լինեն: Ըստ էության, դուք վկա եք մարդկանց նոր ռասայի ծննդին, որը տառացիորեն այսօր՝ գիշերով, ծնվել է հին, հինգերորդ արմատական ռասայի գրկում: Իրենց գիտակցության մեջ մարդիկ անցում կատարեցին, անցում նոր աստիճանի վրա: Եվ, շատ շուտով, ներքին փոփոխություններն իրենց դրսևորումը կգտնեն ֆիզիկական ոլորտում: Ամենագլխավորը ձեր իսկ այն մասի հաղթահարումն էր, որը ձեզ կապում էր

Երկրի և այն ավանդական հարաբերությունների հետ, որոնք ներկայումս տիրապետող են մարդկանց միջև:

Եվ ձեր զգացած առաջին բանն այն կլինի, որ կփոխվեն մարդկային հարաբերությունները: Այն մարդկանց հարաբերությունները, ովքեր անցել են նոր աստիճանի վրա: Դուք դա կտեսնեք, եթե նույնիսկ զանազանման չափազանց մեծ շնորհի չեք տիրապետում: Ձեզ համար ավելի հեշտ կլինի իրար հետ պայմանավորվելը: Դուք կզգաք, որ ընդհանուր գործ եք անում, և կարևոր չէ, թե ընդհանուր գործի ո՞ր մասն եք դուք անում: Նոր Աշխարհի կառուցմանն առնչվող ցանկացած գործ պատվաբեր է: Նույնիսկ եթե պարզապես մեխ եք խփում: Դուք Սեր կզգաք, անառիթ Սեր բոլոր այն մարդկանց նկատմամբ, որոնց հետ ընդհանուր գործ եք անում: Դուք բավարարվածություն կզգաք համայնքի յուրաքանչյուր անդամին ծառայելուց: Իրենց գիտակցությամբ նոր աստիճանի հասած մարդիկ իրար նկատմամբ կլինեն ամենամոտ հարազատների պես: Դուք սրտով կզգաք յուրաքանչյուրին, ով կարողացել է հաղթանակ տոնել ինքն իր նկատմամբ: Դուք դա կզգաք այնպիսի որակներից ելնելով, ինչպիսիք են անշահախնդրությունը, օգնելու ու տալու ցանկությունը և այն կատարյալ անվերապահ Սերը, որը տառացիորեն ողողում է ձեր ողջ էությունը:

Ցանկացած գործ, որը դուք միասին կնախաձեռնեք, հաջողությամբ կպսակվի: Քանզի դուք չէ, որ գործն անում եք, այլ Աստված, ում դուք թույլ եք տալիս ձեր միջոցով անել այդ գործը:

Ձեր Բարձրագույն մասը, շնորհիվ ձեր ձեռք բերած աստիճանի, կկարողանա մասնակցություն ունենալ ձեր բոլոր գործերում և ֆիզիկական ոլորտի ձեր բոլոր միջոցառումներում: Եվ ձեր բոլոր նախաձեռնությունները հաջողությամբ կպսակվեն, քանզի ձեր միջոցով գործող Աստված չի կարող պարտություն կրել: Ձեզ վիճակված է հաղթել, քանի դեռ Աստծո հետ եք...

Եվ թույլ տվեք ինձ շնորհավորել ձեզ ձեր Հաղթանակի կապակցությամբ... Երբեք մի՛ մոռացեք, որ ձեր այդ հաղթանակը, չնայած ձեռք է բերված ձեր նվաճումների շնորհիվ, այնուամենայնիվ պատկանում է Աստծուն: Որովհետև ամեն ինչ այս աշխարհում պատկանում է Աստծուն: Եվ դուք ձեռք եք բերում ծառայելու ավելի ու ավելի մեծ հնարավորություն, երբ ունակ եք ամեն ինչ զոհաբերելու՝ հանուն Աստծո: Աստված խանդոտ է: Նա մարդուն պահանջում է ամբողջությամբ: Եվ ձեր անիրական եսի որքան ավելի մեծ մասից դուք ունակ լինեք հրաժարվելու, այնքան ավելի ու ավելի մեծ չափով կվերածվեք Աստծո, այնքան ավելի մեծ կլինի Աստծո մասի ներկայությունը ձեր մեջ:

Իրենց գիտակցությամբ նոր աստիճանի հասած մարդիկ, շնորհիվ այդ աստիճանի վրա ձեռք բերած հատկանիշների, ավելի հաջողակ կլինեն իրենց բոլոր գործերում ու նախաձեռնություններում: Քանզի այն, ինչը նախկինում նրանց ներսում խանգարում էր հաջող աշխատանքին, այժմ գոյություն չունի կամ անհամեմատ ավելի քիչ խոչընդոտներ է ստեղծում կյանքում ու գործունեության մեջ: Ձեր սնապարծությունն ու բոլոր մյուս թերություններն այլևս որևէ ազդեցություն չեն գործում ձեր բոլոր գործերի և այն ամենի վրա, ինչ դուք անում եք: Քանզի դուք կարողացել եք ձեր ներսում վեր կանգնել դրանցից: Դուք դա կզգաք ձեր կոլեկտիվների փոխված մթնոլորտից: Դուք կզգաք, որ կան մարդիկ և ամբողջ կոլեկտիվներ, որոնց հետ լինելը ձեզ համար հեշտ է ու հանգստավետ:

Այդպիսի կոլեկտիվների՝ համայնքների, ստեղծման գործընթացը կընթանա միանգամայն բնականորեն: Քանզի գիտեք, որ նմանը նմանին է ձգտում:

Եվ այն, ինչը չի դիմանա ձեր թրթիռներին, աստճանաբար կհեռանա ձեզնից: Երկիրը շատ հյուրընկալ մոլորակ է: Եվ նա իր հարկի տակ է առել շատ կենսահոսքերի, որոնք բոլորը գտնվում են իրենց զարգացման տարբեր փուլերում:

Սակայն ամեն անգամ, երբ նշանակալի քանակությամբ անհատներ ձեռք են բերում Քրիստոսի գիտակցության մակարդակ, դա լիակատար բարերար ազդեցություն է գործում ամբողջ մոլորակի վրա: Քանզի նուրբ ոլորտում բոլոր մարդիկ շատ սերտորեն կապված են իրար հետ:

Ուստի ձեր կողմից Քրիստոսի գիտակցության մակարդակին հասնելն անգնահատելի բարիք է հանդիսանում ամբողջ մոլորակի համար:

Ես չեմ կարողանում զսպել իմ բերկրանքն ու հուզմունքը: Եվ ես կուզենայի մոտենալ ու գրկել Երկիր մոլորակի վրա այժմ մարմնավորված 144 000 Քրիստոսային էակներից յուրաքանչյուրին:

Դա ձեր հաղթանակն է... Բայց նաև մեր հաղթանակն է: Քանզի Համբարձյալ Դասերն անխոնջ կերպով ջանացել են այն բանի համար, որ ֆիզիկական ոլորտում ձեր հաղթանակն իրականություն դառնա:

Ես շնորհավորում եմ ձեզ...

Եվ ես սրբում եմ ուրախությանս արցունքներն այտերիս վրայից:

ԵՍ ԵՄ Լանելլին

ՏԵՐ ՍՈՒՐԻԱ

12 հունիսի, 2005 թ.

ՆՈՐ ՓՈՒԼԸ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԿՏԱ, ՈՐ ՁԵԶ ԶԳԱՔ ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ԵՐԿՈՒ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒՄ

ԵՍ ԵՄ Սուրիան՝ Մեծ Կենտրոնական Արևից եկածը...

Պաշտելիներս, հասել է այն պահը, որին սպասում էին Համբարձյալ Դասերը, և որը շրջադարձային կլինի այս մոլորակի էվոլյուցիայի համար: Նման պահերը միայն մեկ անգամ չեն լինում և յուրաքանչյուր այդպիսի պահը ելակետային է դառնում հետագա առաջընթացի համար: Դա նման է այն բանին, երբ առագաստանավն առաջ է ընթանում քամու պոռթկումների շնորհիվ: Ահա հիմա էլ քամու հզոր պոռթկումն ուղղորդել է ձեր հնարավորության առագաստը: Եվ միայն այն դեպքում, երբ սպասում եք քամու պոռթկմանը, բացում առագաստները և նախապատրաստվում նավարկության, դուք կարողանում եք օգտվել ձեզ ընձեռված Տիեզերական հնարավորությունից:

Դժվարին Ուղի է սպասում ձեզ: Կլինեն փոթորիկներ ու մրրիկներ: Բայց գլխավորն այն է, որ դուք պատրաստ եք Ճամփորդության և բացել եք ձեր էության առագաստները:

Ալիքներն ու փոթորիկները ձեր անխուսափելի ուղեկիցներն են պատրանքային աշխարհում: Թանձր մատերիայի մշտական դիմադրությունն առաջացնում է անհրաժեշտ լարվածություն, որի շնորհիվ զարգացնում եք ձեր մտքերը, ամրացնում ձեր կամքը և մղվում դեպի հաղթանակ՝ հաղթահարելով բոլոր խոչընդոտները:

Ձեր էության առագաստանավը երբեք նավաբեկության չի ենթարկվի, եթե ձեր գիտակցության մեջ պահպանեք ճշմարիտ կերպերը: Գլխավորը ձեր մեջ գիտակցությունն է, և այն ամենը, ինչը ձեզ հետ տեղի է ունենում, ինչպես և ձեր կյանքի բոլոր հանգամանքները որոշվում են ձեր գիտակցության մակարդակով: Եվ դուք ինքներդ եք ընտրում՝ ընթանալ Բարձրագույն Ուղով, թե անբովանդակ կյանք վարել որևէ հարմարավետ անկյունում:

Նրանք, ովքեր հաճելի ու անբովանդակ կյանքն են ընտրում, վաղ թե ուշ կզգան հրող ուժեր, որոնք կստիպեն իրենց առաջ շարժվել: Իսկ չափազանց ծույլերից շատերը պարզապես կոպտորեն դուրս կքշվեն իրենց տաքուկ անկյուններից, կարթնացվեն, ոտքի կհանվեն և Ուղով առաջ կմղվեն:

Դուք ճամփորդներ եք և մշտապես պետք է գտնվեք ընթացքի մեջ՝ երբեք կանգ չառնելով:

Ուստի ձեզնից նա, ով իր գիտակցության մեջ համարում է, որ արդեն հասել է ամեն ինչին և հիմա պետք է հանգստանա, անհապաղ պետք է իր գիտակցության մեջ անհրաժեշտ շտկումներ անի:

Հանգստի վիճակն իրականում պատրանք է: Դուք երբեք հանգստի մեջ չեք գտնվում: Նույնիսկ մտասևեռման ընթացքում, երբ ազատվում եք ձեր բոլոր մարդկային մտքերից ու զգացմունքներից, դուք վիթխարի թռիչք եք գործում այնպիսի աշխարհներում, ուր չկա տարածություն և ժամանակ:

Հեռավոր, նուրբ, հրե աշխարհներով ձեր տեղաշարժվելու ամբողջ մեխանիզմը թաքցված է ձեր ներսում: Այդ տեղաշարժերը դուք կատարում եք ձեր գիտակցությամբ: Ուստի միակ բանը, որ ձեզ պետք է մտահոգի, դա ձեր գիտակցության մակարդակն է:

Ամեն ինչ ձեր աշխարհում ունի սկիզբ և վերջ: Եվ ձեր մահից հետո միայն ձեր գիտակցությունը շարունակություն կունենա:

Մեծ նշանակություն ունի ձեր կուտակած փորձը: Անշուշտ, որքան շատ եք գործում ձեր աշխարհում, այնքան ավելի մեծ փորձ եք ձեռք բերում: Ֆիզիկական աշխարհը ձեզ զարգացման հսկայական հնարավորություններ է տալիս: Ֆիզիկական աշխարհը տառացիորեն լեփ-լեցուն է տարատեսակ առարկաներով, որոնց նկատմամբ կարող եք գործադրել ձեր ջանքերը: Ազդելով ֆիզիկական աշխարհի վրա՝ դուք կարող եք ձևափոխել այն:

Ձեր յուրաքանչյուր գործողությունը կարող է բարձրացնել ձեր գիտակցությունը, հանգեցնել ձեր գիտակցության՝ ձեր անմահ մասի աճին: Բայց նաև ձեր յուրաքանչյուր գործողությունը կարող է հանգեցնել պատրանքի աճին: Ամեն ինչ կախված է ձեր ջանքերի ուղղությունից: Դուք նման եք ծորակի, որի միջով հոսում է Աստծո Էներգիան: Եվ դուք այդ Էներգիայի հոսքը կարող եք ուղղել ինչպես ձեր գիտակցության աճի, այնպես էլ պատրանքի բազմացման կողմը:

Ամբողջ երևակված աշխարհը մի բեմ է, որն անհրաժեշտ է ձեր զարգացման համար, և որն ինքներդ եք ձևավորում, երբ Աստծո Էներգիան ուղղում եք պատրանքի բազմացման կողմը:

Երբ դուք հասնում եք ձեր չակրաների ու մարմինների մաքրության որոշակի աստիճանի, ապա ձեր գիտակցության մեջ դուք հաղթում եք ձեր իսկ անիրական մասին: Եվ որքան ավելի եք բարձ-

բացնում ձեր գիտակցությունը, այնքան ավելի ու ավելի շատ որակներ կարող եք ձեռք բերել, որոնք պատկանում են Աստծո Աշխարհին:

Ձեր և մեր աշխարհները թշնամական չեն: Նրանք իրար փոխլրացնում են: Ուստի բոլոր այն անսերդաշնակ դրսևորումները, որոնք գոյություն ունեն ձեր աշխարհում, ժամանակի ընթացքում կենթարկվեն ձևափոխությունների: Իսկ ձեր աշխարհի ձևափոխությունը կարող է իրականացվել միակ ճանապարհով՝ ձեր գիտակցության միջոցով: Այն կառավարում է Աստծո էներգիայի հոսքը, որն ամբողջ տիեզերքի համար ընդհանուր, միակ Աղբյուրից թափանցում է ձեր էության մեջ:

Եթե դուք կենտրոնանաք ձեր պատրանքային աշխարհի վրա, ապա վաղ թե ուշ կբախվեք այն պարզ ճշմարտությանը, որ ֆիզիկական աշխարհում չկա մի բան, որը կարողանար ձեզ բավարարել: Դուք կարող եք վատնել ձեր ամբողջ կյանքը (ճիշտ այնպես, ինչպես ձեր նախորդ մարմնավորումներով արդեն վատնել եք հազարավոր կյանքեր), որպեսզի գտնեք կյանքի իմաստը: Եվ ֆիզիկական աշխարհում գտնվող յուրաքանչյուր էակի համար միշտ գալիս է մի պահ, երբ նա հասկանում է, որ այն, ինչին ինքը ձգտում է, իրականում գտնվում է ֆիզիկական աշխարհի սահմաններից դուրս:

Սկզբում դուք ձեռք եք բերում ձեր աշխարհի երկակի ընկալում: Սկսում եք տարբերել ֆիզիկական աշխարհին պատկանող երևույթներն այն երևույթներից, որոնք պատկանում են ավելի նուրբ աշխարհներին: Այնուհետև դուք սկսում եք տեսնել ֆիզիկական աշխարհում տեղի ունեցողի պատճառները: Դուք սկսում եք տեսնել արարքների հետևանքները և սկսում եք գիտակցել, որ շրջապատող աշխարհի նկատմամբ ձեր վերաբերմունքի փոփոխությունը փոխում է ձեր մտքերը, ձեր արարքներն ու զգացմունքները:

Եվ մի գեղեցիկ պահի սկսում եք գիտակցել, որ ձեր ֆիզիկական ընկալումներից զատ դուք նմանապես ընկալունակ եք դառնում նաև նուրբ աշխարհների նկատմամբ:

Եվ հենց որ ձեռք եք բերում այդ ընկալունակությունը, դուք սկսում եք ավելի ու ավելի լավ պատկերացնել նուրբ աշխարհները: Իսկ դրանք այնքան առավելություններ ունեն ձեզ շրջապատող ֆիզիկական ոլորտի համեմատ, որ դուք սկսում եք ավելի ու ավելի շատ ժամանակ հատկացնել նուրբ աշխարհի հետ հաղորդակցությանը:

Եվ գալիս է այն պահը, երբ միաժամանակ հայտնվում եք երկու աշխարհներում: Դուք վերածվում եք երկու աշխարհների միջև եղած կետի: Միանգամայն հստակ գիտակցում եք, որ ձեր ներսում միանում են աշխարհները: Եվ հասկանում եք, որ Աստված հենց այդպե'ս կարող է գործել ձեր միջոցով: Եվ ձեզ հաճելի է լինում զգալ ձեր միասնությունն Աստծո հետ, համայն տիեզերքի հետ: Դուք հասկանում եք, որ ոչ մի սահմանազատում չկա ձեր և մյուս կենդանի էակների միջև: Եվ ձեռք եք բերում անսահման կարեկցանքի զգացում բոլոր այն կենդանի էակների նկատմամբ, որոնք գտնվում են իրենց գիտակցության զարգացման այն փուլի վրա, որն իրենց թույլ չի տալիս զգալ Կյանքի այդ միասնականությունը:

Եվ ահա, հայտնվելով աշխարհընկալման այդ փուլում, դուք վերջապես սկսում եք հասկանալ մեզ՝ Էակներիս, որ գտնվում ենք վարագույրից այն կողմ: Մենք հասկանում ենք ամեն ինչ, բայց հնարավորություն չունենք գործելու ձեր աշխարհում: Դուք չունեք նման հասկացողություն, բայց փոխարենը հնարավորություն ունեք գործելու ձեր աշխարհում:

Ուստի հաջորդ փուլը, որն արդեն վրա է հասնում, թույլ կտա ձեզ ստանալ մեր հասկացողությունը՝ թափանցելով վարագույրից այն կողմ, ինչպես նաև թույլ կտա մեզ գործել ձեր միջոցով, եթե դուք մեզ թույլ տաք ներկա լինել ձեր էության մեջ:

Այդպես է իրականանում աշխարհի զարգացումը: Այդպես են աշխարհները ներթափանցում իրար մեջ:

Եվ նոր փուլը, որն արդեն սկսվել է, հնարավորություն կտա ձեզ զգալու միաժամանակ երկու աշխարհներում: Սկզբում դա մատչելի կլինի միայն եզակիներին: Հետո ավելի ու ավելի շատ մարդիկ կհասնեն գիտակցության այդ վիճակին: Ամենաբարձր գագաթը նվաճելը միշտ էլ դժվար է լինում առաջինի համար: Հետևից ընթացողների համար միշտ ավելի հեշտ է: Եվ շատ շուտով այն, ինչը զուտ երևակայության արդյունք էր թվում, դառնում է սովորական մի բան:

Ձեզ բարի երթ... Եվ ձեր կայմերի վրա վեր հանեք դրոշակները, որպեսզի հեռվից տեսանելի լինեք: Որպեսզի յուրաքանչյուրն, ով ցանկանում է միանալ ձեզ և կանգնել ձեր դրոշի տակ, ցանկացած պահի դա անելու հնարավորություն ունենա:

Աստված սահմանափակումներ չունի: Բոլոր սահմանափակումները ձեր գիտակցության մեջ են և շրջապատի աշխարհի ձեր ընկալման մեջ:

ԵՍ ԵՄ Սուրիան՝
Մեծ Կենտրոնական Արևից
ձեզ մոտ ժամանածը

ՄԱՅՐ ՄԱՐԻԱՄ

13 հունիսի, 2005 թ.

ՇԱՏ ՇՈՒՏՈՎ ԿՍԿՍՎԻ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ՝ ՄՈՐ ԵՐԿՐԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ

ԵՍ ԵՄ Մայր Մարիամը՝ այս դեսպանորդի միջոցով ձեզ այցի եկածը:

Ես ուրախ եմ մեր այսօրվա հանդիպման համար: Ուրախ եմ հատկապես այսօրվա հանդիպման համար, քանզի այն պահից սկսած, երբ ես վերջին անգամ այցելեցի ձեզ, շատ բան է փոխվել: Եվ ես շնորհակալություն եմ հայտնում բոլոր նրանց, ովքեր մեր հանդիպումից հետո իրենց ամբողջ ազատ ժամանակը նվիրաբերել են Վարդարանների ընթերցմանը: Ես խոստացել էի գալ և ձեզ վարդ նվիրել: Ձեզնից շատերին ես տառացիորեն ծածկել էի վարդերով: Եվ եթե դուք ձեր հոգու աչքերով կարողանայիք նկատել այն, ինչ տեղի է ունենում ձեր շուրջը, ապա կտեսնեիք, որ ամբողջ սենյակը, որտեղ ընթերցում էիք Վարդարանները, տառացիորեն լցված է վարդերով:

Ես շնորհակալ եմ ձեզնից: Անչափ երախտապարտ եմ յուրաքանչյուրին, ով արձագանքեց իմ խնդրանքին:

Ամբողջ այն էներգիան, որը դուք անշահախնդիր կերպով առաքեցիք ինձ, իմ կողմից ներդրվել է ձեր կյանքի այնպիսի պայմանների ստեղծման մեջ, որոնք թույլ կտան ձեզ հասնել ավելի մեծ ըմբռնման, տեղի ունեցող իրադարձությունների ավելի մեծ գիտակցման:

Վարդարանների ընթերցման ընթացքում Իմ Սերն անփոփոխ կերպով հասնում էր ձեզ: Ես էլ զգում էի ձեր Սերը: Օ՜, դուք չեք կարող պատկերացնել իմ ապրած երանությունը, երբ իմ սրտին է հասնում ձեր Սերը:

Ձեր Սերը թափանցում է վարագույրից այս կողմ՝ անուշաբույր խնկահոտի պես պարուրելով ինձ: Ես միշտ կարող եմ զանազանել, թե հատկապես ում սիրտն է ինձ առաքում այդ Սերը, և միշտ կարողանում եմ առաքել իմ օրհնանքը ձեր սրտին, ձեր կենսահոսքին:

Թող օրհնյալ լինեն բոլոր այն նվիրյալ ու կարեկից սրտերը, որոնք օրվա ունայնության մեջ ժամանակ են գտնում մի պահ դադար տալու և ինձ առաքելու իրենց Սերն ու Վարդարանների Էներգիան:

Եկեք չընդհատենք Լույսի այդ հոսքն ու էներգիաների այդ փոխանակությունը մեր օկտավաների միջև:

Պատկերացրեք, որ ինձ ուղղված ձեր յուրաքանչյուր աղոթքն ավելի ու ավելի շատ է բարակացնում մեր աշխարհների միջև եղած քողը: Եվ երկրագնդի վրա կան տարածքներ, որտեղ ձեր աղոթքների ուժը մեր աշխարհների հաղորդակցությունն այնքան է մատչելի դարձրել, որ դուք կարող եք զգալ իմ հպումն ու իմ այն վարդերի բույրը, որոնք շաղ եմ տալիս ձեզ համար:

Պաշտելինե՛րս, մի՛ դադարացրեք ձեր աղոթքները:

Ես առաջվա պես զգում եմ ձեր Սիրո ու ձեր աղոթքների կարիքը: Ձեզ հայտնի է, որ կարևոր իրադարձություններ են տեղի ունեցել Երկրում, և ես ուրախ եմ ողջունել ձեզնից նրանց, ովքեր հասել են իրենց գիտակցության զարգացման հաջորդ փուլին: Ես նաև ուրախ եմ, որ նրանցից շատերն, ովքեր իրենց ժամանակը նվիրում էին Վարդարանների ընթերցմանը, կարողացան բարձրանալ այդ աստիճանի վրա:

Ազդեցություն են գործել նաև իմ աղոթքները, որոնք այդ ընթացքում ես կարդում էի ձեզ ու ձեր մերձավորների համար:

Այժմ ես իմ ուշադրությունն ուղղում եմ Մոր երկրի՝ Ռուսաստանի վրա: Դուք գիտեք, որ Ռուսաստանն այն երկիրն է, որն ունի իմ առանձնահատուկ խնամակալությունը:

Եվ Ռուսաստանի վերևում իմ ներկայությունը կարող է ուժեղացվել միայն այն դեպքում, եթե այդ երկրի հնարավորինս շատ ուստրեր ու դուստրեր դեպի ինձ դարձնեն իրենց ուշադրությունը և առաքեն ինձ Վարդարանների էներգիան:

Դուք գիտեք, որ ուղղափառ եկեղեցին Վարդարաններ կարդալու ավանդույթ չունի: Ուստի ձեզնից նրանք, ովքեր խստորեն պահպանում են ուղղափառ ավանդույթները, կարող են Վարդարաններ չկարդալ, այլ միայն նայել իմ պատկերին և առաքել ինձ իրենց Սերը. ես մշտապես կզգամ դա:

Աստծո աշխարհում սահմանափակումներ չկան: Բոլոր սահմանափակումներն ինքներդ եք հորինել՝ ավանդույթներ ստեղծելով: Ուստի ես ձեզ խնդրում եմ ուղղակի առաքել ինձ ձեր Սերը:

Հիշո՞ւմ եք Սերաֆիմ Սարովսկուն: Հիշո՞ւմ եք իմ սրբապատկերի առաջ նրա՝ ինձ ուղղված աղոթքը, որը «Գորովանք» անունն է կրում:

Նույնիսկ եթե աղոթք չէր մրմնջում, նրա աչքերն արցունքով էին լցվում, և նա հայտնվում էր իմ նկատմամբ Սիրո կատարյալ երանելի վիճակի մեջ: Սերաֆիմ Սարովսկին իմ ամենանվիրյալ սպասավորներից մեկն էր:

Մինչև հիմա հիշում եմ անտառում ունեցած մեր հաղորդակցության րոպեները: Չեք կարող պատկերացնել, թե դա ինչ անպատմելի հրաշք է, որ Տերը տալիս է մեզ: Սիրո միջոցով մենք կարող ենք վերացնել բոլոր այն պատնեշները, որոնք ընկած են մեր աշխարհների միջև: Եվ չկա ավելի բարձր, ավելի հաճելի ու երանելի բան, քան այն հաղորդությունը, որը կարող ենք նվիրել իրար:

Մենք գտնվում ենք այն սահմանագծի երկու կողմերում, որը բաժանում է մեր աշխարհներն իրարից, սակայն այդ սահմանագիծն անհապաղ բարակում է մեր Սիրո ամենազոր ուժով: Պաշտելիներ, Սիրո ուժի դեմ ոչ մի պատնեշ չի կարող դիմանալ:

Սերն ընդունակ է հրաշքներ գործելու ինչպես ձեր, այնպես էլ մեր աշխարհում: Եվ Սերն այն ուժն է, որը կարող է թափանցել վարագույրից այս կողմ:

Երբ դուք հարմար պահ գտնեք և, առօրյա ունայնությունից ազատվելով, կանգնեք իմ պատկերի առաջ, ապա, խնդրում եմ, մի՛ մտածեք, թե ես հեռու ինչ-որ տեղում եմ գտնվում: Ես լսում եմ ձեր սրտի անկեղծ կանչը: Եվ ես այնտեղ եմ, որտեղ դուք եք: Ես լսում եմ ինձ ուղղված ձեր ամեն մի խոսքը: Անկախ այն բանից՝ այդ խոսքը հնչում է ձեր սրտում, թե՞ բարձրաձայն եք արտաբերում:

Եվ եթե ձեր շունչը պահեք ու կենտրոնանաք, ապա կարող եք ձեր կողքին զգալ իմ ներկայությունը՝ որպես թեթև, հազիվ նկատելի ամպ. կամ կարող եք զգալ վարդի նուրբ բուրմունք, զգալ իմ հպումը:

Ձեր աղոթքի ընթացքում ես սիրում եմ դիտել ձեր դեմքերը: Երբեմն ինձ թույլ եմ տալիս ձեր Վարդարան կարդալու ընթացքում մոտենալ ձեզ, շոյել, համբուրել: Շատերդ զգում եք իմ հպումը և նույնիսկ փորձում եք քշել ինձ, ինչպես ձանձրացնող ճանճի: Օ՜, եթե միայն տեղ տայիք ձեր գիտակցության մեջ այն մտքին, որ ոչ թե ճանճ, այլ հենց ինքը՝ Մայր Մարիամն է մոտեցել, որ համբուրի ձեզ... Երևի ձեզ կզգայիք շատ անհարմար ու ծիծաղելի վիճակում:

Մեր աշխարհներն անհամեմատ ավելի մոտ են, քան դուք կարող եք պատկերացնել:

Եվ արդեն հիմա՝ ձեր աղոթքի ընթացքում, դուք կարող եք զգալ իմ ներկայությունը: Երկրի մարդկանց համար չկա ավելի մոտիկ Վերին էակ, քան ես: Ես արձագանքում եմ տառացիորեն ձեր բոլոր կանչերին: Եվ շատ եմ ափսոսում, որ երբեմն ձեր կարման այնքան ծանր է լինում, որ չեմ կարողանում ցուցաբերել ձեր խնդրած օգնությունը: Սակայն Աստծո համար անհնարին ոչինչ չկա: Եվ այնժամ, երբ ձեր անցյալի սխալների գիտակցումը տեղի ունենա նոր մակարդակով, հնարավոր է, որ Կարմայական Վարչության որոշումը փոխվի, և ինձ թույլ տրվի ձեզ ցուցաբերել այդ օգնությունը:

Ես շատ ուրախ եմ, որ վերջին 100 տարվա մեջ առաջին անգամ հնարավորություն ունեմ ավելի ու ավելի հաճախ ներկա գտնվելու Ռուսաստանի հողում՝ մի երկրում, որն ունի իմ առանձնահատուկ խնամակալությունը: Ուստի մի՛ կորցրեք ձեր հույսերը: Ձեր բոլոր աղոթքները տեղ են հասել, և Ռուսաստանի հողին օգնություն է շտապում: Եվ այդ օգնությունը տեղ կհասնի տիեզերական չափանիշներով շատ կարճ ժամկետում: Ամեն ինչ կփոխվի: Եվ շատ շուտով կսկսվի Ռուսաստանի՝ Մոր երկրի վերածնունդը:

Իսկ առայժմ, խնդրում եմ, մի՛ կանգնեցրեք աղոթքի անիվը: Եվ եթե դուք ձեր զբաղվածության պատճառով չկարողանաք շատ ժամանակ հատկացնել աղոթքին, ապա, կարծում եմ, գոնե ժամանակ կգտնեք օրվա ունայնության մեջ հայացք ձգելու իմ պատկերին կամ սրբապատկերին և առաքելու ինձ ձեր Սերը:

Դա ընդամենը մի վայրկյան կտևի: Բայց եթե օրվա ընթացքում ձեր Սերն առաքեք ինձ ընդամենը մի քանի անգամ, ապա դա կփոխարինի ձեր՝ Վարդարան ընթերցելուն և աղոթքներին:

Միշտ ձեզ մոտ ունեցեք իմ պատկերը: Պահեցեք իմ պատկերը ձեր պայուսակում, թալիսմանի մեջ: Միշտ հիշեք, որ այնտեղ, որտեղ ֆիզիկական աշխարհում գտնվում է իմ կիզակետը, ես կարող եմ հաստատել իմ ներկայությունը՝ շնորհիվ այն էներգիայի, որը դուք առաքում եք ինձ:

Դիմացնք, պաշտելիներ: Քիչ է մնացել սպասելու: Դուրս եկեք արշալույսին և զգացե'ք այն քաղցր ակնթարթը, երբ արևը դեռ դուրս չի եկել հորիզոնի հետևից, բայց շրջապատում կանխազգացվում է արևածագը:

Ահա նույն կերպ ամբողջ աշխարհը գտնվում է Արևագալի սպասման այդ կետում: Հավատի Արևի, Սիրո Արևի, Հույսի Արևի ծագելուն է սպասում աշխարհը:

Եվ ձեր գիտակցության լուսաբացը նույնքան անխուսափելի է, որքան Արեգակի ծագումը, որի կանխազգացումը կա ձեր էության մեջ:

ԵՍ ԵՄ Մայր Մարիամը՝ միշտ ձեզ սիրող և մեր հանդիպմանն սպասող

ՎԵՀԱՊԵՏ ԿՈՒԹՀՈՒՄԻ

14 հունիսի, 2005 թ.

ՈՒՍՄՈՒՆՔ ԲՈՒԴԴԱՅԻ ԵՎ ԲՈՒԴԴԱՅԻ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՃԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵՍ ԵՄ Կութհումին՝ նորից եկածը:

Համաձայն ավանդույթի՝ ես Ուսմունք կտամ: Սակայն այս Ուսմունքի ընկալման գործը կարող է դժվար լինել ձեր արտաքին գիտակցության համար: Այս Ուսմունքը Բուդդայի մասին է՝ ձեր Ուղու այն փուլի մասին, որին դուք անխուսափելիորեն վաղ թե ուշ պետք է հասնեք և կհասնեք:

Ձեզնից յուրաքանչյուրը Բուդդա դառնալու ներուժ ունի: Ճիշտ նույն կերպ, ինչպես յուրաքանչյուր սերմ ներուժ ունի բույսի վերածվելու և, իր հերթին, տալու իր սերմերը:

Սոսկ գիտակցության մակարդակով է, որ դուք տարբերվում եք Բուդդայից:

Որոշ սերմեր հայտնվում են բարենպաստ պայմաններում և աճում են շատ արագ: Ուրիշ սերմերի համար էլ շատ ջանք է պահանջվում, որպեսզի աճեն: Սակայն երբեք չպետք է մոռանալ, որ բոլորդ գտնվում եք մի այգում, որի այգեպանը հենց ինքը՝ Տեր Աստված է: Եվ Նա չափազանց հոգատար այգեպան է: Ուստի, նույնիսկ եթե Բուդդայի վերածվելը ձեզնից շատ ջանքեր է պահանջելու, ապա միևնույնն է, Բուդդա կդառնաք: Չեք կարող Բուդդա չդառնալ, որովհետև դա ձեր զարգացման բնական ու օրինաչափ աստիճանն է: Այժմ ես չեմ ուզում անդրադառնալ այն հոգիներին, որոնք չեն ուզում զարգանալ և ընթանալ այն Ուղով, որն իրենց համար պլանավորված է: Ձեզ հայտնի է, որ իրականում ոչ բոլոր սերմերն են ծլում. կա սերմերի որոշակի տոկոս, որոնք հասուն բույս չեն դառնում: Կա նաև բույսերի որոշակի տոկոս, որոնք չորանում են՝ այդպես էլ չհասնելով պտղաբերության փուլին:

Բայց դուք պետք է իմանաք, թե դեպի ուր մղվեք: Դուք պետք է ձգտեք Բուդդա դառնալ:

Իրականում Բուդդայի գիտակցությունն այն մակարդակն է, որին հասնելով՝ դուք նմանվում եք այն բույսին, որը թևակոխում է իր պտղաբերման փուլը: Եվ երբ մարդկային էակը հասնում է Բուդդայի գիտակցության մակարդակին, նա ունակ է դառնում իր գիտակցությամբ օժտելու միլիոնավոր էակների, որոնք գտնվում են իրենց էվոլյուցիոն զարգացման ավելի ցածր փուլերում: Դա շատ նման է այն բանին, թե ինչպես է հասունացած բույսը ցրիվ տալիս իր սերմերը: Բուդդան ցանում է իր գիտակցության սերմերը մարդկային էակների մեջ: Եվ այդ սերմերը մարդկային էակի ներսում որոշ ժամանակ գտնվում են թաքնված վիճակում: Բայց տիեզերական ժամկետներին համապատասխան՝ գալիս է մի ժամանակահատված, երբ Բուդդայի այդ սերմերը սկսում են ծլարձակել մարդկային էակի ներսում:

Բուդդան իր Բանականության կայծերը սփռում է մարդկային էակների մեջ: Ժամկետը հասնում է, և Բանականության այդ կայծերը սկսում են հուրհրատել և նկատելի դառնալ: Ձեզնից յուրաքանչյուրի մեջ թաքնված է Բուդդայի սերմը կամ Բանականության կայծը, որը երկրային չափանիշներով միլիոնավոր տարիներ առաջ պահ է տրվել ձեր էության ներսում: Եվ այժմ մոտեցել է այն ժամկետը, երբ Բուդդայի գիտակցության այդ կայծը սկսում է իրեն դրսևորել:

Դա նույնական չէ ինտելեկտի հետ: Եվ դա սոսկ այն կարողությունները չեն, որոնցով գոյատևում եք ֆիզիկական աշխարհում: Դա այն Բանականությունն է, որը գտնվում է ձեր ներսում և նույնական է Աստծո Բանականության հետ: Դա ձեր ներսում այն է, որը ձեզ հնարավորություն է տալիս հասնելու զարգացման աստվածային փուլին և վերածվելու Աստվածամարդու:

Ճիշտ այնպես, ինչպես սերմը զոհում է իրեն, որպեսզի հնարավորություն տա բույսին աճելու, նույն կերպ էլ Բուդդան է զոհում իրեն, որպեսզի աճի հնարավորություն տա Բանականության այն սերմերին, որոնք գտնվում են միլիոնավոր կենդանի էակների մեջ: Դա բարձրագույն ինքնազոհողություն է, որին դուք ունակ եք դառնում, երբ հասնում եք Բուդդայի գիտակցության մակարդակին:

Հատկապես հենց Լույսի մեծագույն Էակների ինքնազոհաբերության շնորհիվ է, որ միլիոնավոր տարիներ առաջ մարդկությունը Բանականություն ձեռք բերեց և այդ Բնանականության շնորհիվ սկսեց տարբերվել կենդանիներից:

Ձեր բանականությունը դուք ձեռք բերեցիք վիթխարի ինքնազոհաբերության արդյունքում, որն ի կատար ածվեց այն մեծագույն Լույսի Էակների կողմից, ովքեր տարրալուծվեցին Երկրի մարդկության մեջ այն հույսով, որ երբևիցե իրենց ցանած սերմերը կծլեն և կտան Բուդդայի գիտակցության աճ: Եվ յոթ մեծագույն Լույսի Էակների փոխարեն տիեզերքը կստանա միլիոնավոր Բուդդաներ:

Այդպես է տեղի ունենում զարգացումը, այդպես են բազմապատկվում նվաճումները:

Սակայն այն փուլերի միջև, երբ սերմերը ցանվում են, և երբ բույսերն ունակ են դառնում պտուղ տալու, ժամանակահատվածներ են պահանջվում՝ բնական ժամկետներ: Երկրի մարդկության համար դրանք կազմում են միլիոնավոր տարիներ:

Աստծո Ալքիմիան այնպիսին է, որ Լույսի այն Էակները, որոնք սկզբնապես զոհաբերեցին իրենց, որպեսզի Երկրի մարդկությանն օժտեն Բանականությամբ, ցրվել են Երկրի մարդկության մեջ՝ միլիոնավոր կենսահոսքերի մեջ: Եվ նրանք կկարողանան լրիվ վերականգնել իրենց անհատականությունը միայն այն բանից հետո, երբ բոլոր մարդկային էակները, որոնք այդ ժամանակի ընթացքում մնացած կլինեն Երկրի վրա, կհասնեն Բուդդայի գիտակցության մակարդակին:

Յուրաքանչյուր Համբարձյալ Վեհապետի ներսում կա ավելի բարձր Լույսի Էակի կայծ, և երբ մարդը հասնում է գիտակցության համբարձյալ վիճակի մակարդակին, նա ունակ է դառնում վերադարձնելու Բանականության այն կայծը, որը որպես թթխմոր է ծառայել իր էության խորքերում և որի շնորհիվ իրականացել է նրա զարգացումը: Ամեն համբարձման դեպքում Երկնոլորտները ցնծում են: Ամեն համբարձում հնարավորություն է ընձեռում ավելի ու ավելի ամբողջանալու այն Մեծ Հոգիներին, ովքեր միլիոնավոր տարիներ առաջ մարդկությանն օժտել են Բանականությամբ:

Սակայն երբ մարդկային էակը հասնում է Բուդդայի զարգացման փուլին, ապա ինքը նույնպես հետևում է այն օրինակին, որը ցույց են տվել մեծ Լույսի Էակները: Եվ Բուդդայի գիտակցության մակարդակին հասած յուրաքանչյուր Համբարձյալ Վեհապետ հնարավորություն ունի իր մասնիկներով օժտելու մարմնավորված այն անհատներին, որոնց հետ տվյալ Համբարձյալ Վեհապետը կարմայորեն կապված է եղել, և որոնց կյանքի հետ Երկիր մոլորակի վրա գտնվելու իր պատմությունը շատ սերտորեն միահյուսված է:

Անշուշտ, ձեր կենսահոսքը պետք է տա իր համաձայնությունը, որպեսզի ձեր մեջ ներկա լինի Համբարձյալ Վեհապետի մի մասնիկը:

Ես ձեզ ավելին կասեմ: Ամեն մի մարգարե, դեսպանորդ, մեսիա իր մեջ ունեցել է ավելի Բարձր Էակի ներկայություն: Երբեմն դա եղել է ոչ թե մեկ, այլ մի քանի Բարձր Էակի ներկայություն: Մարմնավորված անհատի տաճարում Լույսի Էակի ներկայությունը պայմանավորված է այդ անհատի նվաճումների աստիճանով: Դուք ձեր ներսում չեք կարող պահել Բարձր Էակի Լույսի առկայություն, եթե պատրաստ չեք դրան, եթե դեռ չեք հասել ձեր չորս ստորին մարմինների որոշակի մաքրության մակարդակին և, համապատասխանաբար, չունեք գիտակցության բարձր մակարդակին բնորոշ թրթիռների բարձր մակարդակ:

Այս գիտելիքը, որն այսօր ձեզ տալիս եմ, նոր չէ: Այն հայտնի է եղել և ուսուցանվել է բոլոր հայտնի Գաղտնի Ծեսերի Դպրոցներում և իր արձագանքներն ունի շատ գրքերում ու գիտական աշխատություններում:

Ամեն ինչ փոխվում է, և գալիս է այն փուլը, երբ այն, ինչ մատչելի էր լինում շատ քիչ թվով առաջադեմ աշակերտների, այժմ մատչելի է դառնում շատ շատերի համար: Եվ միայն ձեր գիտակցության մակարդակն է ձեզ բաժանում այն հնարավորությունից, որ լիակատար չափով գնահատեք Արարչի ողջ մեծությունը, Նրա հոգածությունն ամեն մի կենդանի էակի նկատմամբ և այն հնարավորությունները, որոնք տիեզերքում բնակվող բոլոր հոգիների զարգացման համար ընձեռում է տիեզերական Օրենքը:

Այսօր ես ձեզ ծանոթացրի Բուդդայի և Բուդդայի գիտակցության աճեցման գեղեցիկ լեգենդին:

Երբ սերմը ծլում է, և բույսը սկսում է աճել, այն բազմաթիվ խոչընդոտների է հանդիպում իր զարգացման ընթացքում: Տեսնում է և՛ երաշտ, և՛ ջրհեղեղ, և՛ այրող արև, և՛ վնասատու միջատներ: Նմանապես ամեն մի անհատ Երկիր մոլորակի վրա իր զարգացման ընթացքում բախվում է շատ խոչընդոտների և ստիպված է լինում դրանք հաղթահարել: Սակայն այդ խոչընդոտներն անհրաժեշտ են ձեր գիտակցության աճի համար: Դուք Բուդդա եք դառնում միայն այն բանից հետո, երբ հաղթահարում եք բոլոր խոչընդոտները: Բուդդա եք դառնում միայն այն բանից հետո, երբ ձեր գիտակցությամբ դուրս եք գալիս պատրանքային աշխարհի շրջանակներից:

Իսկ այժմ՝ ամենագլխավորը, ինչ ես պետք է ձեզ ասեմ: Այս Ուսմունքը, որը հենց նոր ստացաք, ոչ այլ ինչ է, քան Լյուցիֆերի անկման և անկյալ հրեշտակների վերաբերյալ մի ուրիշ տեսակետ:

Եվ նույն իրադարձությանը վերաբերող երկու տարբեր հայացքների առկայության օրինակի հիման վրա դուք կարող եք դատել, թե որքա՞ն կարող է մարդկային միտքն անճանաչելի դարձնելու չափ աղավաղել նույնիսկ Ոգու ամենամեծ սխրանքը:

Իրապես, յուրաքանչյուրն ամեն ինչ իրենով է չափում, և յուրաքանչյուրը մյուսների մեջ տեսնում է իր սեփական թերությունները:

Ըստ այդմ՝ թե եղած երկու առասպելներից ո՞րը կընդունի ձեր արտաքին խելքը, շատ բան կհուշի հենց ձեր մասին:

Յուրաքանչյուր իրադարձություն, որը տեղի է ունենում մատերիական տիեզերքում, երկու երես ունի, օժտված է երկակիությամբ: Եվ որքան ավելի բարձր մակարդակի է հասնում ձեր գիտակցությունը, այնքան ավելի ու ավելի քիչ բացասական բաներ եք տեսնում ձեզ շրջապատող իրականության մեջ և ավելի ու ավելի շատ եք տեսնում դրականը՝ աստվածայինը:

Եվ երբ ձեր գիտակցությունը կմաքրվի և ձեռք կբերի բավականաչափ բարձր աստիճանի մաքրություն, ապա դուք զարմանքով կհայտնաբերեք, որ ձեր շուրջն ամեն ինչ փոխվել է: Եվ ձեզ շրջա-

պատող անկյալ հրեշտակների փոխարեն, որոնց դեմ անխոնջ կերպով մարտնչում էիք, դուք կտեսնեք տառապող մարդկային էակների, որոնք ձեր օգնության կարիքն ունեն:

Բայց որպեսզի տեղի ունենա ձեր և ձեր գիտակցության փոխակերպությունը, դուք պետք է ցանկանաք Ուղով առաջ ընթանալ, պետք է համարձակ կանգնեք փոփոխությունների քամու առջև և չվախենաք ոչնչից: Ձեր աշխարհում ձեզ ոչինչ չի սպառնում, բացի ձեր իսկ անիրական մասից, որը դեպի ձեր աշխարհն է քաշում բոլոր բացասական իրավիճակներն ու հանգամանքները:

Ես մաղթում եմ, որ դուք լուսավորության հասնեք հենց այս կյանքի ընթացքում: Ես և բոլոր Համբարձյալ Դասերը պատրաստ ենք ծառայելու ձեզ և ցուցաբերելու ամբողջ պահանջվող օգնությունը:

Սակայն երբեք մի՛ մոռացեք. հնարավոր չէ օգնել այն անհատին, ով օգնություն չի խնդրում և համարում է, որ ինքը մեր օգնության կարիքը չի զգում:

Միշտ հիշեք, որ դուք դեռ մանուկներ եք Աստծո Ճշմարտության ճանաչման հարցում, և ձեր գիտակցության զարգացման ներկա փուլում նույնիսկ այն Ճշմարտությունը, որն այսօր ես ձեզ տվեցի, ձեզ կթվա անհասկանալի ու տարակուսելի: Բայց կանցնի ընդամենը մի քանի տարի, և այս Ճշմարտությանն իրազեկ կդառնա ամեն մի դպրոցական:

ԵՍ ԵՄ Կութհումին

ՍԱՆԱՏ ԿՈՒՄԱՐԱ

15 հունիսի, 2005 թ.

ՏԵՂԻ Է ՈՒՆԵՆՈՒՄ ՃԻՇՏ ԱՅՆ, ԻՆՉԸ ԿԱՐՈՂ ԵՔ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԱՄԱՐԵԼ ՁԵՐ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան: ԵՍ ԵՄ ձեզ այցի եկողը:

Ամեն անգամ իմ և մյուս Լույսի Էակների գալստյամբ ձեր գիտակցությունն ունակ է դառնում ավելի ու ավելի շատ տեղեկատվություն իր մեջ ներառել՝ անկախ այն բանից, թե այդ տեղեկատվությունը տեղ է հասնում բառերի, պատկերների թե էներգիայի տեսքով: Ինքնին կարևորն այստեղ մեր աշխարհների միջև ընթացող փոխանակությունն է:

Սույն թելադրությունների նկատմամբ ձեր մշտական ուշադրությունն իրենից ներկայացնում է էներգիա, որը դուք առաքում եք մեր աշխարհ: Դեպի ուր կենտրոնացված է ձեր ուշադրությունը, այնտեղ էլ հոսում է ձեր էներգիան: Սա հայտնի ճշմարտություն է: Եվ ճիշտ նույն կերպ այն ուշադրությունը, որը մենք ձեզ ենք հատկացնում այս թելադրությունները տալու ժամանակ, ուղղված է ձեր աշխարհին:

Իմ ուշադրության էներգիան ես առաքում եմ ձեզ: Ձեր ուշադրության էներգիան դուք առաքում եք ինձ: Այդ եղանակով մենք կարող ենք էներգիաների փոխանակություն կատարել մեր օկտավաների միջև: Եվ որքան մեծ քանակի Լույսի Էակներ ու մարմնավորված անհատներ մասնակից դառնան էներգիաների այդ փոխանակությանը, այնքան մեր աշխարհներն իրար ավելի մոտ կլինեն: Մեր աշխարհների միջև էներգափոխանակությունը մտահղացվել է այս տիեզերքի արարման հենց ամենասկզբին: Եվ մատերիականության այն կետը, որին այժմ դուք հասել եք, խոչընդոտում է այդ փոխանակությանը: Ուստի մեր աշխարհների միջև էներգափոխանակության վերականգնման ամեն մի փորձ փոխադարձ օգուտ է բերում մեր աշխարհներին:

Աշխարհները միավորվում են էներգափոխանակության միջոցով: Մեր աշխարհ չեն կարող ներթափանցել այն էներգիաները, որոնք գունազարդված են անկատարությամբ: Միայն այն էներգիաները կարող են թափանցել վարագույրից այս կողմ, որոնք իրենց մեջ կրում են Բարին և երանգավորված են Սիրով:

Իսկ մեր էներգիաները, որոնք մենք անխոնջ կերպով առաքում ենք ձեր աշխարհ, մարդկանց մեծ մասը չի կարող զգալ, քանի որ դրանք շատ նուրբ են ընկալման համար: Իսկ ձեր զգայարանները դեռևս հասու չեն այդ էներգիաների ընկալմանը: Սակայն առավել զգայուն անհատներն այնուամենայնիվ կարող են զգալ մեր թրթռանքը՝ չնայած այն աղավաղումներին, որոնք անխուսափելիորեն առաջանում են, երբ էներգիան վարագույրի միջով թափանցում է ձեր աշխարհ: Որքան էլ կատարյալ լինի հաղորդիչը, մեր էներգիաների ամեն մի հաղորդիչն իր աղավաղումներն է մտցնում: Ձեր աշխարհում չկա կատարելություն: Եվ յուրաքանչյուր ոք, ով իր թրթիռներով մոտե-

նում է մեր աշխարհին, այլևս չի կարող գտնվել ձեր աշխարհում:

Մեր աշխարհների փոխներթափանցման գործընթացը շատ երկարատև բնույթ է կրում և տևում է միլիոնավոր տարիներ:

Դուք չեք կարող ակնթարթորեն ձեռք բերել գիտակցության այն մակարդակը, որը բնորոշ է մեր աշխարհին: Ձեր էության համար դա նման կլինի գերնոր աստղի բռնկման:

Իսկ մենք չենք կարող հայտնվել ձեր աշխարհում: Մեզ համար դա նման կլիներ մահվան: Ուստի կան բազմաթիվ եղանակներ, որոնք մեզ թույլ են տալիս անուղղակիորեն ներթափանցել ձեր աշխարհ՝ օգտվելով այն անհատներից, որոնց թրթիռների հաճախականությունը մեզ թույլ է տալիս գոնե կարճատև ժամանակահատվածի ընթացքում ներկա լինել իրենց ներսում:

Դուք նույնպես ունակ եք թափանցելու մեր աշխարհը: Եվ որքան ավելի բարձր գիտակցության մակարդակի կարողանաք հասնել մտասևեռումից առաջ, այնքան ավելի բարձր աշխարհներ կթափանցեք:

Դուք սոսկ թանձրամարմին էակներ չեք: Եթե դուք ձեզ ընկալում եք որպես այդպիսի էակներ՝ ապա միայն ձեր գիտակցության սահմանափակության պատճառով: Դուք ավելի շատ հիշեցնում եք ամպ կամ էներգակուտակ, որն ունակ է թափանցելու ու ներքաշվելու մեր աշխարհի մեջ: Եվ երբ դուք ձեր գիտակցությունը տեղափոխում եք մեր աշխարհ, ապա վերջինս ձեզ համար ձեռք է բերում նույն թանձրությունը, ինչ որ ունի ձեր ֆիզիկական աշխարհը:

Ամբողջ գործը ձեր գիտակցության մեջ է, և տեղի է ունենում ճիշտ այն, ինչը կարող եք հնարավոր համարել ձեր գիտակցությամբ: Ըստ այդմ՝ ձեզ ասվում է գիտակցության ընդլայնման մասին, ձեր գիտակցությունը վեր հանելու մասին, ավելի բարձր աստիճանի վրա բարձրանալու մասին:

Եթե դուք մեր աչքերով նայեիք Երկրի վրայի ձեր գործունեությանը, ապա կզարմանայիք, թե որքա՜ն սահմանափակ է ձեր գոյաձևը: Դուք, ինչպես զնդանում, կալանված եք ձեր ֆիզիկական ձևի մեջ: Եվ դուք չեք կարող դուրս պրծնել ձեր զնդանից, քանի դեռ ձեզ չի տիրի ազատության ձգտման ազդակը: Ես այժմ խոսում եմ ձեր կողմից ընդունված արտահայտչաձևերով և որոշակի ակնարկներ եմ անում: Ո՛չ այն պատճառով, որ չեմ կարող ձեզ ավելին ասել: Ես ձեզ կարո՛ղ եմ անհամեմատ ավելին ասել: Բայց ձեր գիտակցությունը չի կարող ընկալել այն, ինչը նրա մեջ առայժմ չի կարող տեղավորվել:

Ըստ այդմ՝ մարդկային գիտակցության էվոլյուցիան շատ աստիճանական է: Եվ դա շատ է հիշեցնում մարդկային հասարակության էվոլյուցիան: Եթե ընդամենը մի քանի տասնյակ տարի առաջ որևէ մեկը փորձեր ձեզ բացատրել, թե ինչպես է աշխատում համացանցը կամ բջջային հեռախոսը, դուք դա ֆանտաստիկա և անիրականանալի երազանք կհամարեիք: Բայց սկզբում մեր կողմից պատկերը ներարկվում է այն մարդկանց գլուխների մեջ, որոնք ունակ են այդ պատկերն ընկալելու, դրանից հետո այն սկսում է մարմին առնել, ստանալ դետալներ, նոր մանրամասներ:

Ըստ այդմ՝ անխոնջ կերպով շատ և շատ մարդկանց միջոցով մենք առաքում ենք ձեր մոլորակի ապագայի պատկերները:

Դուք ստանում եք այդ պատկերները ձեր գիշերային քնի և արթնության ժամանակ: Իմ հարազատ Վեներա մոլորակի նուրբ էներգիաները մոտեցել են, և նրանք վսեմացնում են ձեր մոլորակի ավելի կոպիտ թրթռումները՝ միախառնվելով դրանց հետ և աստիճանաբար փոխելով ձեր մոլորակին բնորոշ հիմնական, տիրապետող թրթիռը:

Երկիր մոլորակը շատ հյուրընկալ ու աղուհացով է: Բազմաթիվ կենսահոսքեր են այստեղ գտել իրենց բնակատեղին: Եվ մարդկանց մի մասի գիտակցությունն արդեն պատրաստ է նոր մակարդակին անցնելու համար, մոտ է այդ մակարդակին կամ արդեն անցել է նոր մակարդակի վրա: Կան նաև մարդիկ, որոնց գիտակցությունը բոլորովին չի արթնացել:

Սակայն մենք արդեն հոչակել ենք Հաղթանակ: Եվ ձեռք բերված հաղթանակն իրականում շատ նշանակալից է: Երկիր մոլորակի վրա մարմնավորված 144 000 էակներ հասել են Քրիստոսային գիտակցության մակարդակին: Դա նշանակում է, որ այդ էակների միջոցով մենք կարող ենք ուժեղացնել մեր ներկայությունը Երկիր մոլորակի վրա:

Բոլոր այդ էակներն ունակ են հորիզոնական մակարդակով իրար հետ կապ ստեղծելու: Այդ էակների կողմից ստեղծված բոլոր կազմակերպությունները ու նրանց կողմից իրականացվող բոլոր նախագծերը կկարողանան կրել մեր օկտավայի բարձր թրթռումները: Ըստ այդմ՝ շատ շուտով նույնիսկ այն անհատները, որոնց գիտակցությունը գտնվում է խոր քնի մեջ և անկարող է զգալ մեր էներգիաները, կկարողանան ստանալ մեր թրթռումները, որոնք մարմնավորված Քրիստոս-էակների կողմից հարմարեցված կլինեն նրանց ընկալմանը:

2000 տարի առաջ Քրիստոսը եկավ Երկիր և տվեց իր Ուսմունքը: Այժմ պատկերացրեք 144 000 էակների, որոնք ներկայումս իրականացրել են իրենց Քրիստոս-ներուժը: Որքա՜ն ավելի ունակ կլինեն այդ Քրիստոս-էակներն ազդելու աշխարհի ու նրա զարգացման վրա:

Տառացիորեն մարդկային գործունեության յուրաքանչյուր ոլորտ կլինի այդ Քրիստոս-էակների ազդեցության տակ, էակների, որոնք ցրված են ամբողջ երկրագնդով մեկ և ամենաբազմազան գործունեություն են ծավալում յուրաքանչյուրն իր մասնագիտական բնագավառում:

Գիտակցության փոփոխության գործընթացը հնարավոր չէ չափել ֆիզիկական սարքերով: Դուք

պարզապես ավելին տեսնելու ունակություն եք ձեռք բերում: Դուք տեսնում եք արարքների պատճառները, տեսնում եք և հետևանքները: Դուք տեսնում եք, թե ինչպես կարելի է շտկել և ուղղել ձեզ շրջապատող կյանքի ցանկացած աններդաշնակ դրսևորում: Եվ երբ դուք աստիճանաբար ազատվում եք ձեր կյանքի ոլորտների բոլոր ծայրահեղ, բացասական դրսևորումներից, ապա դրանով հանդերձ բացասական ազդեցություններից ազատում եք շատ հոգիների և, առաջին հերթին, երեխաներին ու երիտասարդությանը:

Մեղմ երաժշտությունը, բնության հետ շփումը երեխայի հոգու վրա ավելի շատ դրական ազդեցություն կարող են թողնել, քան դուք կարող եք պատկերացնել: Եվ ճիշտ նույն կերպ, երբ դուք չեք հոգում այն մասին, թե ինչ երաժշտություն են լսում ձեր երեխաները, ինչ շրջապատում են անցկացնում իրենց ազատ ժամանակը, ապա դրանով դուք աճեցնում եք ձեր ապագա խնդիրների նախահիմքերը:

Վերացրեք այն ամենը, ինչը կյանքում պետք չէ ձեզ, առանց որի դուք կարող եք գոյատևել, և դուք շատ ազատ ժամանակ ձեռք կբերեք հոգևոր զարգացման համար, հաղորդակցության համար, ներխոկման համար: Հասարակ շատ բաներ, որոնք դուք ձեր կյանքում կարող եք անել, և որոնք ոչ միայն մեծ ֆինանսական ծախսեր չեն պահանջում, այլ նաև ազատում են ձեզ շատ ծախսերից, կարող են ձեր կյանքում տառացիորեն հեղափոխական փոփոխություններ առաջացնել, խթանել ձեր գիտակցության աճը:

Վերանայեք ձեր սովորույթներն ու սովորությունները, ձեր մեջ ուժ գտեք ազատվելու բոլոր այն ոչ պետքական բաներից, որոնք չեն նպաստում ձեր հոգևոր զարգացմանը:

Խորհուրդները շատ պարզ են, և դրանց իրականացումը ձեզ կհասցնի երաշխավորված արդյունքի: Եվ դուք կարող եք մտորել և հասկանալ, թե ինչն է ձեզ խանգարում իրագործելու այս պարզ խորհուրդները: Այդ հարցի պատասխանն ակնհայտ է. դա ձեր էգոն է, որը հազար պատճառ ու պատրվակ է գտնում, միայն թե ձեր կյանքում դուք ոչինչ չփոխեք:

Եվ ահա դուք այժմ տեսնում եք ձեր իսկական թշնամուն, ձեր միակ թշնամուն. ձեր էգոն՝ ձեր իսկ անհիրական մասը ձեր իսկական և միակ թշնամին է: Ըստ այդմ՝ ձեր շուրջը ոչ մի ուրիշ թշնամի մի՛ փնտրեք: Ձեր ամբողջ շրջապատը պարզապես համապատասխանում է ձեզ՝ ըստ ձեր թրթիռների մակարդակի:

Եվ այս խորհուրդները, որ տալիս եմ, բառ առ բառ համընկնում են այն խորհուրդներին, որոնք ես տվել եմ Երկրի մարդկանց այն ժամանակ, երբ մարմնավորման մեջ էի Երկիր մոլորակի վրա: Անցել են միլիոնավոր տարիներ: Եվ ես բառ առ բառ կրկնում եմ նույն խորհուրդները: Եվ եթե ես ձեր տեղը լինեի, ապա ամոթից կկարմրեի: Սակայն դուք շարունակում եք ոչինչ չանել և սփոփել ձեր էգոյին: Դուք երբևէ չե՞ք մտածել, որ ձեր ազատ կամքով իրականացվող ձեր փորձերին կարող է վերջ տրվել...

Դուք երբևէ չե՞ք մտածել, որ այգեպանը երբեմն պետք է կտրտի չորացած ճյուղերը և վառի, որպեսզի վարակը չտարածվի առողջ բույսի վրա:

Իսկ չի՞ եկել արդյոք այդ աշխատանքը կատարելու ժամանակը: Գուցե սկսվե՞լ է արդեն:

Դուք միշտ ունեք այն Ուղու վրա վերադառնալու հնարավորությունը, որը նախատեսված է ձեզ համար, և որը կբերի ձեզ Տուն: Խնդրում եմ մտորել խոսքերիս մասին: Արդյո՞ք շատ բան է պահանջվում զոհաբերել, որպեսզի ձերբազատվեք այն ամենից, ինչը խանգարում է ձեզ դուրս գալու Ուղու վրա:

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան

ԲԱԲԱՋԻ

16 հունիսի, 2005 թ.

ՊԱՏՐԱՍՏՎԵՑԵՔ ԳԻՏԵԼԻՔԻ ԱՐԵՎԻ, ՀԱՎԱՏԻ ԱՐԵՎԻ, ԱՍՏԾՈ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԵՎԻ ԾԱԳՄԱՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀՈՂԻ ՎՐԱ

ԵՍ ԵՄ Բաբաջին՝ նորից ձեզ այցի եկածը:

Ես եկել եմ խրատներ տալու համար, և այն, ինչ ուզում եմ ասել, կարևոր կլինի ձեր հոգևոր զարգացման համար: Այսօր ես պետք է խոսեմ այն մարգարեությունների ու գուշակությունների մասին, որոնք հայտնի են դարձել շատերին, բայց ձեր աշխարհում բավարար տարածում չեն ստացել:

Երբ ես մարմնավորվեցի, այն տեղը, որտեղ տվեցի իմ Ուսմունքը, կոչվում էր Հեյրախան: Ամբողջ աշխարհից մարդիկ էին գալիս, որպեսզի ներկա գտնվեն իմ դարշաններին: Ես նրանց շնորհ էի մատուցում իմ սրտից: Ես սնուցում էի նրանց էությունը Լույսով: Եվ նույնիսկ նրանք, ովքեր երբևէ պատկերացում չէին ստացել, թե ինչպես պետք է վերաբերվել Ուսուցչին, երանություն էին զգում իմ ներկայությունից ու ինձ հետ հաղորդակցվելուց:

Աստված շատ գաղտնիքներ ունի, որոնք մատչելի չեն ձեր գիտակցությանը, քանի որ այն աչքի չի ընկնում բավարար մաքրությամբ և անարատ ընկալունակությամբ: Այդ գաղտնիքներից մի քանիսը ես բացեցի իմ ամենամերձավոր աշակերտների համար:

Իսկ այդ գաղտնիքներն ավելի լայն լսարանի առջև բացելու ժամանակը դեռ չի հասել: Բայց դուք միշտ պետք է գիտակցեք, որ Աստված ձեզ համար դեռևս շատ չբացահայտված գաղտնիքներ ունի:

Եվ այն խրատը, որը կուզենայի ձեզ տալ, վերաբերում է Աստծո ձեր զգացողությանը՝ ձեր աստվածային զգացմունքին: Երբեք մի՛ կարծեք, թե դուք տիրապետում եք Աստծո բոլոր գաղտնիքներին: Երբեք մի՛ կարծեք, թե այն հայացքներն ու համոզմունքները, որոնք առկա են ձեր գլխում՝ ձեր արտաքին գիտակցության մեջ, անսխալական են և միակ ճիշտը: Ես հասկանում եմ, որ դուք ձեր գլխում պետք է որոշակի դոգմաներ ունենաք, որպեսզի սահմանափակեք ձեր ընկալումն ու ավելի լավ զննեք ձեր շրջապատի առարկաները: Դա նման է այն բանին, երբ լապտերով լուսավորում եք որոշակի տարածք, որ ավելի լավ տեսնեք ձեր լուսավորած առարկաները և քիչ թե շատ հստակ պատկերացում կազմեք դրանց մասին:

Սակայն երբեք չի կարելի ամբողջ Արարչության մասին դատել այն լուսավորված տարածքով, որի վրա ունակ է լույս սփռել ձեր գիտակցությունը:

Իմաստուն մարդը միշտ պետք է հիշի, որ իր գիտակցությամբ լուսավորված տարածքի սահմաններից այն կողմ կա ավելի լայնարձակ տարածք, որն ինքը դեռևս չի կարող ընկալել:

Ձեր հիմնական սխալը, որի պատճառով ծագում է ձեր աշխարհի տհաճությունների մեծ մասը, հենց այն է, որ անդադար իրար հետ վիճում եք, թե ում լապտերն է ավելի ճիշտ լուսավորում բոլոր իրերը: Դեռ ավելին, պնդում եք, որ Երկրի բոլոր մարդիկ պետք է կյանքում առաջնորդվեն ձեր լապտերի լույսով:

Դուք նույնիսկ կարող եք իրար հետ վիճել խոպոտվելու աստիճան՝ համոզելով մեկդ մյուսին, որ ամբողջ աշխարհը պետք է օգտվի ձեր լապտերից, որպեսզի երջանիկ լինի:

Դուք միշտ պետք է հիշեք, որ կգա լուսաբացը, և արևը բոլոր իրերը կլուսավորի ցերեկային պայծառ լույսով: Եվ արևի պայծառ լույսի տակ ձեր լապտերների լույսը կդառնա հազիվ նկատելի: Իսկ այն առարկաները, որոնք խավարում դուք լուսավորում էիք ձեր լապտերներով, արևի պայծառ Լույսի տակ ձեռք կբերեն բոլորովին այլ ուրվագծեր: Արժե՞ արդյոք այդքան եռանդ ծախսել, որպեսզի իրար ապացուցեք ձեր համոզմունքների ճշմարտացիությունը, եթե օրվա բացվելու հետ ձեր աստվածային ներկայության արևը պարզորոշ կլուսավորի բոլոր իրերը, և դուք կկարողանաք Աստծո Ճշմարտությունը ճանաչել ոչ թե ձեր մարդկային սահմանափակ խելքով, այլ Համբարձյալ Լույսի Էակի խելքով:

Իմաստուն մարդը երբեք չի վիճաբանի աշխարհընկալման այն համակարգի շուրջ, որը ձևավորվել է ուրիշ մարդկանց մոտ: Առողջության համար շատ վնասակար կլինի, եթ սեփական ավանդույթներով գնաք օտար երկիր և այդ երկրի բնակիչներին համոզեք, որ իրենք սխալ են ապրում և սխալ պատկերացում ունեն Աստծո մասին:

Բոլոր ժամանակների բոլոր միսիոներները գործել են այդ մեղքը: նրանք գալիս էին օտար երկիր և փորձում էին այդ երկրին ներարկել իրենց հավատի ավանդույթները:

Կա միայն մեկ Աստծո Ճշմարտություն, որը վեր է աշխարհի բոլոր կրոններից: Եվ իմաստուն մարդիկ մշտապես փորձում են ճանաչել այդ մեծագույն Ճշմարտությունը՝ փոխանակ աշխարհի գլխին փաթաթելու Աստծո Ճշմարտության իրենց ըմբռնումը: Եթե ձեզնից ամեն մեկը պնդի իր համոզմունքները և ապացուցի, որ միայն ինքն է ճիշտ, ու աշխարհում իր ասածից ավելի ճշմարիտ և ուղիղ բան չկա, ապա դրանով իսկ դուք կսահմանափակեք ձեր առաջխաղացումը և ձեր մեջ կաճեցնեք այնպիսի ոչ աստվածային հատկանիշներ, ինչպիսիք են հոգևոր սնապարծությունն ու կռապաշտությունը:

Ուստի ես ձեզ կոչ եմ անում՝ մշտապես ձգտեք պահել ձեր գիտակցությունն աստվածային թրթիռների բարձր մակարդակի վրա: Այդպիսի վիճակում դուք դառնում եք ավելի բարի, ավելի հանդուրժող: Ձեր ողջ էությունը ճառագում է սեր, սրտաբացություն, ուրախություն, խաղաղվածություն:

Կարողացե՛ք տարբերել ձեր մեջ ձեր գիտակցության այդ վիճակները: Եվ ձգտեցե՛ք հասնել ձեր գիտակցության այդ վիճակներին: Միայն այն դեպքում, երբ գտնվում եք գիտակցության այդպիսի վիճակում, դուք ունակ եք դառնում ընկալելու Աստծո Ճշմարտությունը:

Այժմ ես կուզենայի մի փոքր խոսել Ռուսաստանի մասին:

Գոյություն ունեն մարգարեություններ, և դրանք լավ հայտնի են Հնդկաստանում, որ Ռուսաստանը պետք է վերածնվի. Ռուսաստանը պետք է դառնա այն երկիրը, որը կհենվի նոր սկզբունքների, ճշմարիտ Հավատի սկզբունքների վրա: Ռուսաստանի պատմությունը, հատկապես ոչ վաղ անցյալի պատմությունը այդ երկրի ժողովրդին որևէ աշխարհայացքային համակարգի հետ կապված չլինելու դաս տվեց: Կարծես հատուկ կերպով այդ երկրի մարդկանց գիտակցությունն իր վրա կրեց միանգամայն տարբեր գաղափարախոսությունների ու հայացքների ազդեցությունը:

Մարմնավորման մեջ գտնվող մարդու համար արտաքին գաղափարախոսությունների հիմնադրույթների արագ հերթագայությունը նման է փոթորիկի կամ մրրկահողմի: Իրականության ընկալման կարծրատիպերի ամեն մի ջարդում մարդու էության մեջ նմանվում է արհավիրքի: իսկ մարդու համար, հատկապես նրա ստորին մարմինների համար, ներառյալ ֆիզիկականը, գաղափարախոսությունների այդպիսի հերթագայությունը մեծ վտանգ է և ցնցման պատճառ:

Սակայն մարդու հոգու զարգացման համար նմանատիպ ցնցումներն արտակարգ կարևոր դեր են խաղում: Նա, ով նման ցնցումներ է ապրում՝ կապված իր նախկին աշխարհայացքի խորտակման հետ, ձեռք է բերում ավելի ընդլայնված գիտակցություն և ավելի լայն աշխարհայացք:

Այդ իմաստով Ռուսաստանը շահավետորեն տարբերվում է աշխարհի ցանկացած ուրիշ երկրից: Անշուշտ, Հնդկաստանն ու Տիբեթը ունեն իրենց հարուստ հոգևոր ավանդույթները: Սակայն հատկապես այն բանի պատճառով, որ այդ ավանդույթները հազարամյա տարիք ունեն, դրանք խոչընդոտում են մարդկանց գիտակցության զարգացումը:

Ոչ միշտ է, որ այն, ինչ լավ է ֆիզիկական ոլորտում, նույնքան օգտավետ է նաև հոգու զարգացման համար:

Այն մարդիկ, ովքեր ողջ նշված ժամանակի ընթացքում ապրել են Ռուսաստանի տարածքում և շարունակում են ապրել այժմ, չնայած բոլոր դժվարություններին, ստացել են ամենաբարձր ձեռնադրումները, որոնք համեմատելի են այն ձեռնադրումներին, որոնք իրենց աշակերտներին տալիս էին անցյալի մեծագույն ադեպտները:

Քրիստոսի գիտակցության հասած մարդկանց քանակով նույնպես Ռուսաստանն առաջատար դիրք է գրավում աշխարհում:

Ըստ այդմ՝ հենց Ռուսաստանը կլինի այն երկիրը, ուր երկրագնդի բոլոր կողմերից մարդիկ կգան և կանցնեն իրենց ուսումնառությունը: Այն հարստությունը, որն ունի Ռուսաստանը, երկրային չէ: Ոսկին չէ այն, ոչ էլ նավթը: Ռուսաստանի հարստությունն անհամեմատ ավելի մեծ արժեք ունի, և այն կենտրոնացված է այդ երկրում բնակվող ժողովրդի լավագույն ներկայացուցիչների գիտակցության մեջ:

Եվ ճիշտ այնպես, ինչպես շատ մեծ է լինում այն հանքանյութի քանակը, որից կարելի է ստանալ չնչին քանակությամբ ոսկի, այնպես էլ շատ են այն մարդիկ, ովքեր ինչ-ինչ պատճառներով չեն կարողացել հաղթահարել իրենց գիտակցությունն ու ձեռնադրումներ անցնել: Բայց այն մարդիկ, ովքեր դա կարողացել են անել, իրապես նվաճել են լավագույն հոգևոր շնորհներ և ճանաչվել Համբարձյալ Դասերի կողմից:

Ամբողջ անցած հարյուր տարիների ընթացքում «հանքանյութի» զտում էր կատարվում Աստծո վառարանում: Եվ հիմա մենք հնարավորություն ունենք տեսնելու աստվածային գիտակցության մաքուր ոսկին՝ որպես լուսապսակ Ռուսաստանի լուսակիրների գլխավերևում:

Այն ամենը, ինչ տեղի ունեցավ Ռուսաստանում, և այն, ինչ վերաբերում է այդ երկրի շատ ուստրերի ու դուստրերի՝ ձեռնադրումներ անցնելուն, կանխավ գուշակված էր: Եվ այդ մարգարեությունը գաղտնագրված է նույնիսկ այն աշխարհագրական անուններում, որոնք առկա են այդ երկրի տարածքում:

Օմ և Տարա գետերը, որոնք իրենցով նշանավորում են Աստծո արական և իգական նախասկիզբները, սկիզբ են առնում այն տեղում, որտեղից կսկսվի Ռուսաստանի վերածնունդը: Սկզբում կհայտնվեն մարդիկ, որոնք ունեն Քրիստոսի և Բուդդայի գիտակցություն: Նրանք կվաստակեն իրենց այդ գիտակցությունը՝ անցնելով

ձեռնադրումներ ու ծանր փորձություններ: Այնուհետև այդ մարդկանց գիտակցության միջոցով կփոխվի շրջապատի աշխարհը՝ ձեռք բերելով հատկանիշներ, որոնք ավելի մոտ են Աստծուն:

Այժմ այդ մարդիկ՝ ոսկու այդ բնակտորները, ծածկված են դատարկ հանքանյութի հաստ շերտով: Եվ անփորձ հայացքը հազիվ թե նկատի Հոգու այդ բնակտորները: Սակայն եթե հանքանյութի մեջ դուք չեք կարողանում նշմարել ոսկին, դա դեռևս չի նշանակում, որ այնտեղ ոսկի չկա: Պարզապես դուք դեռ չեք հասել զանազանման այն մակարդակին, որը ձեզ թույլ կտա նշմարել Հոգու այդ բնակտորները: Ինչևէ, մարգարեությունը կատարված է: Եվ այդ մարգարեությունը կիրականանա:

Եթե նույնիսկ դուք գործադրեք ձեր բոլոր ջանքերը, որպեսզի արևը չծագի և իր Լույսով չլուսավորի ձեր գիտակցության մութ անկյունները, ապա, միևնույնն է, արևը կծագի:

Պատրաստվեցեք Գիտելիքի Արևի, Հավատի Արևի, Աստծո Բանականության Արևի ծագմանը Ռուսաստանի հողի վրա:

ԵՍ ԵՄ Բաբաջին

ՏԵՐ ՄԱՅՏՐԵՅԱ

17 հունիսի,2005 թ.

ՈՒՍՄՈՒՆՔ ՕՁ-ԳԱՅԹԱԿՂԻՉԻ ԵՎ ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ՕՁԻ ՄԱՍԻՆ

ԵՍ ԵՄ Մայտրեյան՝ նորից ձեզ այցի եկածը:

Եկավ մեր քաղցր հաղորդակցության պահը: Եվ ես եկել եմ, որպեսզի ձեզ հետ կիսեմ իմ գիտելիքներն ու իմ մտքերը:

Ձեզ շրջապատող աշխարհում միշտ կարելի է գտնել աստվածային դրսևորումներ: Միշտ կարելի է գտնել նաև այն, ինչ Աստծուց չէ: Այն, ինչ Աստծուց չէ, ձեր աշխարհում դեռևս ավելի շատ է: Ձեր աշխարհն աստվածային աշխարհներից չէ: Վաղուց ինչ-որ ժամանակ ձեր աշխարհը թանձր չէր, և թրթռանքն էլ մոտ էր աստվածայինին: Դա միլիոնավոր տարիներ առաջ էր:

Մարդը զուրկ էր թանձր մարմնից: Եվ այն ամենը, ինչ նրան շրջապատում էր, նման էր դրախտային այգու: Մարդը բույսի պես էր ապրում: Նրա գիտակցությունն անաղարտ էր:

Եվ լավ էր ամեն ինչ, բացի մի մանրուքից: Մարդը բանականություն չուներ: Եվ քանի որ բանականություն չուներ, ապա չէր կարող արարել: Նա չէր կարող ստեղծագործել և չէր կարող զարգանալ: Մարդու գոյությունը զուտ կենդանական բնույթ էր կրում:

Բարձրագույն Տիեզերական Ուժերն այլևս հնարավորություն չունեին հանդուրժելու այնպիսի մարդու գոյությունը, որը զուրկ է բանականությունից և հետևաբար հնարավորություն չունի զարգանալու:

Ուստի Արևի Որդիները՝ Իմաստության Որդիները, իջան մարդկանց մարմինների մեջ և նրանց հնարավորություն տվեցին ձեռք բերելու բանականություն՝ բանականության Հուր կամ Կրակ, որի շնորհիվ մարդն ունակ դարձավ արարելու Աստծո պես:

Ես առասպելական այս դրվագը մատուցում եմ ձեզ այն տեսքով, որով այն ձեր գիտակցության ներկա մակարդակի պայմաններում առավել ճիշտ կերպով կօգնի ձեզ՝ հասնելու ձեր պատմության ըմբռնմանը, այն պահի ըմբռնմանը, որը սկիզբ ծառայեց մատերիայի մեջ ձեր ընկղմվելուն:

Այն բանին զուգընթաց, որ մարդը կարողացավ օգտվել բանականության ընձեռած հնարավորություններից, նա ընտրելու հնարավորություն ստացավ, թե ուր առաքի այն էներգիան, որն աստվածային Աղբյուրից ներթափանցում էր իր մեջ:

Ձեզ հայտնի է Ադամի ու Եվայի առասպելը: Լսել եք այն օձի մասին, որը գայթակղեց Եվային:

Եվ դուք մտածում եք, որ օձը ձեզնից դուրս գտնվող ինչ-որ բան էր: Փաստորեն այդպես էլ կար: Մարդն իր խելքը ստացավ դրսից: Բանականության Վեհապետներն իջան մարդկանց մարմինների մեջ, որպեսզի նրանց օժտեն բանականությամբ: Բայց այդ իրադարձությունից հետո մարդն ինքնագիտակցում ձեռք բերեց և սկսեց գիտակից ընտրություններ կատարել: Եվ բանականություն ձեռք բերելուն զուգընթաց՝ մարդը սկսեց կարմա ստեղծել:

Կարմա չունեն բույսերը, կարմա չունեն կենդանիները: Կարման՝ որպես գործողության հետևանք, հատուկ է միայն այն էակներին, ովքեր օժտված են բանականությամբ: Ուստի, հենց որ մարդը բանականություն ձեռք բերեց, նա պատասխանատու դարձավ իր բոլոր արարքների համար, այն ամենի համար, ինչ արել և անում է Երկրի վրա:

Ըստ այդմ՝ մարդու բանականությունը նրա համար միաժամանակ դարձավ և՛ մեծագույն եր-

ջանկություն, և մեծագույն դժբախտություն: Ներքուստ մարդը մշտապես կասկածել է, որ դրսից ինչ-որ մեկը պատասխանատվություն է կրում այն ամենի համար, ինչ իր հետ տեղի է ունենում: Դա և՛ ճիշտ է, և՛ ճիշտ չէ: Քանզի այն բանից հետո, երբ մարդը բանականություն ձեռք բերեց, այդ բանականությունը դարձավ նրա անբաժանելի մասը: Եվ արդեն նա չէր կարող ոչ ոքի մեղադրել այն ամենի համար, ինչ իր հետ տեղի է ունենում:

Աստծո էներգիան ուղղորդելով Աստծո մտահղացմանը չհամապատասխանող ուղով՝ մարդը կարմա էր ստեղծում: Դրա հետևանքով Աստծո էներգիան ձերք բերեց թանձրություն և ձևավորեց մարդուն շրջապատող աշխարհը:

Ահա այդպես ստեղծվեց մատերիական աշխարհը, և այդպես առաջացավ կարման:

Եվ մարդը կարող է իր հետ տեղի ունեցած բոլոր դժբախտությունների համար մեղադրել արտաքին ուժերին՝ Լյուցիֆերին ու անկյալ հրեշտակներին: Ուրիշ առասպելներում, իհարկե, կարող են լինել ուրիշ անուններ:

Սակայն եթե մարդը բանականություն ձեռք չբերեր, ապա չէր կարողանա համապատասխանել այն Մտահղացմանը, որն Աստված հղացել էր մարդուն արարելիս: Եվ նույնիսկ ծառացել էր երկրային էվոլյուցիայի ոչնչացման հարցը, քանզի այն չէր համապատասխանում Աստծո մտահղացմանը:

Ուստի անտրամաբանական է բոլոր մեղքերի մեջ այն Էակներին մեղադրելը, որոնք ձեզ հնարավորություն են տվել շարունակելու ձեր էվոլյուցիան: Իրապես, այն բանից հետո, երբ իրագործվեց բանականության կայծով մարդուն օժտելը, ոչ ճիշտ արարքների կարման սկսեց ընկնել և՛ մարդու, և՛ այն Վեհապետի վրա, որն այդ մարդուն տվել է իր մասնիկը: Արդյունքում ամեն ինչ միախառնվել է, և կծիկը կքանդվի միայն այն բանից հետո, երբ մարդն իր ստեղծած պատրանքում մի կուշտ խաղալուց հետո կկարողանա գիտակցել այն Բարձրագույն Ուղին, որն առկա է և նախանշված է իր համար:

Մարդու խելքը մեծագույն պատիժ է նրա համար, և միաժամանակ խելքն այն հնարավորությունն է, որ, անցնելով ֆիզիկական աշխարհով ինչպես քավարանով, նա կմաքրվի բոլոր ոչ աստվածային բաներից և վերջապես կդառնա այն, ինչ իրեն վիճակված է դառնալ՝ Աստվածամարդ:

Ձեր գիտակցության մեջ դրված է ձեր առաջխաղացման բանալին: Քանի դեռ ձեր աղետների ու դժբախտությունների մեղավորներին փնտրում եք ձեզնից դուրս, դուք այնպիսի վիճակում կլինեք, որը չի տանում դեպի դրական փոփոխություններ:

Դուք կարող եք երկար ու բարակ քննարկել, թե ով է մեղավոր այն փոթորկի համար, որը վերջերս եղավ ու խլեց հազարավոր մարդկանց կյանքեր: Բայց քանի դեռ դուք չեք քշտել ձեր թևքերը և ձեռնամուխ չեք եղել այդ փոթորկի պատճառների ու հետևանքների վերացման աշխատանքին, ոչինչ չի փոխվի:

Ուստի այժմ ձեզ համար ամենագլխավորն այն է, որ գիտակցեք, որ ձեզնից դուրս մեղավորներ փնտրելու դիրքորոշումը կառուցողական դիրքորոշում չէ: Դուք պետք է հասկանաք, որ ձեզնից բացի ոչ ոք պատասխանատվություն չի կրում այն ամենի համար, ինչ տեղի է ունենում ձեր կյանքում: Եվ միայն դրանից հետո դուք պետք է հետ քանդեք այն կարմայի կծիկը, որը գոյացրել եք ձեր հարյուրավոր և հազարավոր մարմնավորումների ընթացքում:

Երկրի վրա գտնվելու ամեն վայրկյանի ընթացքում դուք կարմա եք բեռնաթափում, երբ ձեր գիտակցության մեջ հաղթահարում եք արտաքին իրադրությունը և ձեր շուրջը տեղի ունեցող ամեն ինչի նկատմամբ մշակում ներքին ճիշտ վերաբերմունք:

Ուստի որքան ավելի շուտ դադարեք ձեր իսկ սահմաններից դուրս մեղավորներ փնտրել, այնքան ավելի շուտ կկարողանաք հաղթահարել տարածության ու ժամանակի այն սահմանափակումները, որոնք վերցրել եք ձեզ վրա:

Երկիրը նման է մեծ մրջնանոցի: Եվ Երկրի առանձին վերցրած յուրաքանչյուր անհատ կապված է մոլորակի ամեն մի կենդանի էակի հետ:

Մեր խնդիրը նման է արևի գործին, որը լուսավորում է ձեր մրջնանոցը և առաքում կենարար ճառագայթներ: Եվ այդ ճառագայթները ստիպում են ձեզ արթնանալ, մարզել գիշերվա ընթացքում ընդարմացած անդամներն ու իրար գալ, զբաղվել այն աշխատանքով, որը դրված է ձեզ վրա:

Եվ ձեր միանգամայն առանձնահատուկ գործիքը, որը դուք կատարելագործել եք Երկիր մոլորակի վրա ընթացող ձեր էվոլյուցիայի ընթացքում, պատժի փոխարեն ձեզ համար կվերածվի օրհնանքի: Քանզի հատկապես ձեր բանականության շնորհիվ է, որ դուք կարող եք բարձրանալ աստվածային գիտակցության մեծագույն բարձունքների վրա, որոնց հնարավոր չէ մոտենալ՝ չունենալով այն միանգամայն առանձնահատուկ փորձը, որը դուք ձեռք եք բերել Երկիր մոլորակի վրա ունեցած ձեր մարմնավորումների ընթացքում:

Ձեր խելքը ձեզ խորասուզել է մատերիականության խորխորատի մեջ, և հենց ձեր խելքն էլ կօգնի ձեզ, որպեսզի դուրս ելնեք դրա միջից:

Եվ ձեր խելքի աստվածային այն որակը, որը դուք ձեռք եք բերել մատերիական աշխարհում ունեցած ձեր դեգերումների ընթացքում, կմնա ձեզ հետ և ձեզ հետ միասին անցում կկատարի դեպի ուրիշ, Բարձրագույն Աշխարհ: Իսկ ձեր խելքի ցածրորակ հատկանիշներից՝ ձեր մարմնական խելքից, ինքներդ պետք է հրաժարվեք:

Ուստի ձեր խնդիրն է սովորել զանազանել այն ամենը, ինչ Աստծուց է, այն ամենից, ինչ դուք ինքներդ եք ստեղծել, և պատկանում է ձեր աշխարհին: Ձեր ֆիզիկական աշխարհը նման է ծնողական հարմարավետ թռչնաբնի: Սակայն վաղ թե ուշ գալիս է այն պահը, երբ դուք պետք է հրաժեշտ

տաք հարազատ բնին: Քանզի արդեն հասունացել եք և կարող եք թափ տալ ձեր թևերն ու թռչել:

Թո՛ղ որ ամեն մի դոգմա, որ տեղ է գտել ձեր գիտակցության մեջ, հաղթահարվի:

Ձվից դուրս գալուց առաջ ճուտիկը պետք է սեփական ուժերով ջարդի կեղևը: Ուստի ձեր խնդիրը, առաջնահերթ խնդիրն այն է, որ ձեր սեփական ճիգերով ջարդեք դոգմաների կեղևը և կարողանաք անկողմնակալ հայացքով նայել ցանկացած առասպելի:

Ձեր խելքն ու ձեր բանականությունն են այն օձ-գայթակղիչը, որը ձեզ դյութել ու տարել է դեպի այն ուղին, որով դուք գերադասեցիք ընթանալ Երկիր մոլորակի վրա:

Ձեր բանականությունը նաև այն իմաստության օձն է, որը ձեզ համոզում է ընտրել ավելի Բարձր Ուղի:

Մտածեք՝ չի՞ հասել արդյոք ձեր ժամկետը, և ժամանակը չէ՞ արդյոք, որ սկսեք ճիգեր գործադրել, որպեսզի ջարդեք դոգմաների ու տգիտության կեղևը:

Խորհեցեք օձի խորհրդանիշի երկակի իմաստի մասին՝ օձ-գայթակղիչի և իմաստության օձի մասին:

Դուք ցած էիք իջնում, հիմա ժամանակն է, որ վեր բարձրանաք:

ԵՍ ԵՄ Մայտրեյան՝ ձեր Գուրուն

ԵՍ ԵՄ ՈՐ ԵՄ

18 հունիսի, 2005 թ.

ՁԵՐ ՀՈԳՈՒ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐՆ ԱՅՆ ԵՆ, ԻՆՉԸ ԿՄՆԱ ՁԵԶ ՀԵՏ

ԵՍ ԵՄ ՈՐ ԵՄ: ԵՍ ԵՄ քո ներսում, ԵՍ ԵՄ ամեն տեղ: Ամենուր ԵՍ ԵՄ:

ԵՍ ԵՄ ներկա ամեն մի կենդանի էակի ներսում: ԵՍ ԵՄ Է-ն, որն արարել է համայն Տիեզերքը: ԵՍ ԵՄ այդ ամենը:

Երբ քո գիտակցությունն ունակ կլինի կտրվելու երկրային չափանիշներից, դու կկարողանաս ընկալել այն գիտելիքը, որը վերաբերում է ողջ երևակվածին: Ուստի այժմ, քանի դեռ քո գիտակցությունը սահմանափակ է, ԵՍ ԵՄ տալիս միայն այն, ինչը կարող է նպաստել քո գիտակցության աճին և սահմանափակումների հաղթահարմանը:

Տիեզերքի արարումը երբևէ ենթակա չի եղել սահմանափակ բանականությանը. միայն սահմանափակ բանականությունը կարող է ստեղծել տիեզերքի այնպիսի հատված, որն ունի տարածական ու ժամանակային սահմանափակումներ:

Եթե փորձես վարդը կախել օդում, ապա այն վայր կընկնի: Եթե վարդը դնեք գետնին, ապա այն կմնա այդ դիրքով:

Ուստի ամեն տարերք համապատասխանում է իր նախասահմանմանը: Եվ ամեն մի իր օգտագործվում է իր նշանակությանը համապատասխան:

Թանձրաշխարհն ունի իր օրենքները: Թանձրաշխարհի համար կիրառելի չեն Բարձրագույն Աշխարհների օրենքները: Այլապես այն կնմանվեր օդում կախված վարդի:

Այնուհանդերձ ցածր աշխարհները ենթարկվում են Բարձրագույն Աշխարհների օրենքներին: Եվ եթե վարդը բացվել է, ապա մի օր պետք է թոշնի: Ձեր աշխարհը նման է այդ վարդին: Դուք ստեղծել եք ձեր աշխարհը, և դուք էլ պետք է այն ոչնչացնեք: Սկզբում դուք ստեղծում եք այն, ինչը համապատասխանում է ձեր անկատար գիտակցությանը, որից հետո ձեր գիտակցության միջոցով հետ եք հավաքում պատրանքը: Եվ այն բանին զուգընթաց, որ դուք հասնում եք աշխարհընկալման նորանոր աստիճանների, դուք ավելի ու ավելի եք մոտենում Ճշմարտության ճանաչմանը, և ձեր աշխարհն իր թրթռանքով աստիճանաբար մոտենում է Աստծո Աշխարհին:

Ամեն նոր փուլի վրա հասնելուն պես կայծեր են արարվում: Այդ կայծերից կամ մոնադաներից յուրաքանչյուրը որպես սաղմ է ծառայում ապագա էակի համար: Ամեն էակ իր զարգացման ընթացքում բազմաթիվ փուլեր է անցնում՝ աստիճանաբար թանձրանալով ու կատարելագործվելով:

Սկզբում դուք չդրսևորված հումք էիք, հետո վերածվեցիք քարի: Ապա դարձաք բույս, հետո՝ ցածրագույն կենդանի:

Դուք փոխում էիք ձեր ստորին մարմինները, բայց ձեր անմահ մասը մնում էր անփոփոխ:

Դարաշրջաններ անցան, մինչև դուք ձեռք բերեցիք մարդկային մարմին, որը շատ քիչ նմանություն ուներ ձեր ներկայիս մարմնի հետ:

Հետո դուք ձեռք բերեցիք ֆիզիկական մարմին, բանականություն: Իսկ այժմ կանգնած եք ձեր էվոլյուցիայի այն փուլի առջև, երբ պետք է հրաժարվեք ֆիզիկական մարմնից՝ շնորհիվ ձեր գիտակցության վերընթացի:

Դուք եղել եք ամեն ինչ, անցել եք զարգացման բոլոր փուլերով, մինչև որ հասել եք զարգացման մարդկային փուլին: Եվ ձեր զարգացման բոլոր փուլերում դուք ձեր մեջ ունեցել եք իմ մասնիկը:

ԵՍ ԵՄ միշտ ձեզ հետ՝ ձեր ուղու ողջ ընթացքում:

Ես նման եմ այն բյուրեղին, որը, դրվելով լուծույթի մեջ, այնտեղից աստիճանաբար իր շուրջն է հավաքում այն ամենը, ինչն անհրաժեշտ է իր աճի համար:

Սկզբում դուք պարզապես Աստծո կայծ էիք և զուրկ էիք ձևից: Հարկ եղավ, որ անցնեն միլիոնավոր տարիներ, մինչև հասաք էվոլյուցիայի մարդկային փուլին: Եվ դեռևս կպահանջվեն միլիոնավոր ու միլիարդավոր տարիներ, որ հասնեք Տիեզերքի Բարձրագույն Էակների զարգացման փուլին:

Որքա՞ն հաճախ եք դուք ձեր կյանքում խորհում այս բաների մասին:

Ձեր կյանքն այնքան է հագեցած տարբեր իրադարձություններով, որ ժամանակ չեք ունենում կանգ առնելու և մտորելու: Եվ քանի դեռ չեք խորհրդածի աշխարհակառույցի հարցերի շուրջ, դուք դրանց վերաբերյալ գիտելիքներ չեք ստանա:

Դուք պետք է ձգտում ցուցաբերեք, որ որ ինչ-որ բան ստանաք:

Եթե ձեր նկրտումը բացակայում է, ապա չեք կարողանա տարածությունից մագնիսի պես դեպի ձեզ քաշել հարկ եղած գիտելիքները:

Գիտակցության զարգացման գործընթացն ընթանում է շատ աստիճանական ձևով: Դուք նմանվում եք երեխաների, խնամքի կարիք եք ունենում և ստանում եք այդ խնամքը Լույսի այն անտեսանելի Էակներից, որոնց անվանում եք Հրեշտակներ, Համբարձյալ Վեհապետներ, կամ Աստվածներ: Դուք ներհայեցողաբար մշտապես գիտեք, որ կա ինչ-որ մեկը, ով հոգում է ձեր մասին և հետևում ձեր զարգացմանը: Բայց ինչպես բոլոր երեխաներին, այնպես էլ ձեզ հատուկ է խաղերով տարվելը: Ձեր խաղով տարված՝ դուք նույնիսկ չեք լսում, թե ինչպես են ձեր ծնողները ձեզ կանչում տուն, քանի որ դրա ժամանակը եկել է:

Աստծո Աշխարհի կանչը լսելի չէ ֆիզիկական լսողությամբ: Արևը, երբ գարնանն իր ճառագայթներն առաքում է Երկիր, ձայն չի տալիս խոտին, որպեսզի այն ծլարձակի հողի միջից. ժամը հասնում է, և ծիլերը, հողը ճեղքելով, դուրս են ելնում. ժամը հասնում է, և երևում են նաև տերևները, ծաղկում են ծաղիկները:

Արևի ճառագայթների համանմանությամբ դուք ստանում եք անտեսանելի ճառագայթներ, որոնք արթնացնում են ձեր գիտակցությունը և ստիպում նրան ծաղկել գարնանային ծաղիկների պես: Դա այն աշխարհի կանչն է, որտեղ դուք պետք է ծիլեր տաք, ծլարձակեք ձեր գիտակցությամբ:

Առայժմ դուք նման եք ապագա էակի սաղմի: Եվ ինչպես թիթեռը նման չէ հարսնյակին, ճիշտ այդպես էլ դուք ձեր նոր որակով չեք ունենա ձեր այսօրվա տեսքը:

Ձեր գիտակցությունն ունակ է ընդարձակվելու և ընկալունակ դառնալու նոր գիտելիքների ու նոր պատկերացումների համար: Բայց եթե նոր գիտելիքների նկատմամբ նկրտում չունենաք և փակ լինեք Երկիր թափանցող նուրբ էներգիաների հանդեպ, ապա չեք ծլարձակի:

Շատ սերմեր կոչնչանան՝ այդպես էլ հողի մակերևույթին չհասնելով: Բայց կյանքը շարունակվում է, և այդ սերմերի էներգիան շարունակում է մասնակցել աշխարհի կառուցմանը:

Ձեր անմահ մասը չի կարող ոչնչացվել, բայց այն կարող է կորցնել իր անհատականությունը՝ ձեր փորձը, որը դուք ձեռք եք բերել միլիոնավոր և միլիարդավոր տարիների ընթացքում, երբ սկզբում քար էիք, հետո դարձաք բույս, հետո՝ ցածրակարգ կենդանի, բարձրակարգ կենդանի և վերջապես դարձել եք մարդ:

Ձեր գիտակցությունն ու ձեր անհատական փորձը ձեզ համար ամենագլխավորն են: Դա այն է, ինչը ձեզ հետ է մնում ձեր մարդկային էվոլյուցիայի ավարտից հետո, և այն է, ինչը ձեզ հետ տեղափոխվում է Բարձրագույն Աշխարհներ և օգնում, որպեսզի գոյատևեք այդ աշխարհներում: Երբ ձեր գիտակցությամբ վեր եք հառնում այն աշխարհից ու այն ձևից, որում ժամանակավորապես գտնվում եք, հոգատար ձեռքերը ձեզ վերատնկում են ուրիշ մարմիններում, որ դրանցով բնակվեք այլ աշխարհներում:

Դա նման է այն բանին, երբ հոգատար տերն արդեն նեղ եկող ծաղկամանից ծաղիկը տեղափոխում է ավելի լայն ծաղկամանի մեջ, որպեսզի այն շարունակի ազատ աճել:

Ձեր գիտակցությամբ դուք ծլարձակում եք նորանոր աշխարհներում: Եվ ամեն անգամ դուք հնարավորություն եք ստանում հայտնվելու հատկապես այն աշխարհում, որը համապատասխանում է ձեր գիտակցության մակարդակին:

Այժմ դուք ձեր աշխարհում եք գտնվում: Եվ դեռ երկար կմնաք ձեր աշխարհում, քանի դեռ վեր չեք հառնել ձեր աշխարհից և ձեր գիտակցությամբ չեք մղվել դեպի Բարձրագույն Աշխարհները:

Սակայն ճիշտ չէր լինի ճնշվածություն զգալ աշխարհների անվերջանալի շարանից, որոնցում ձեզ կվիճակվի հայտնվել: Դուք պետք է սովորեք բերկրանք զգալ՝ լինելով այդ աշխարհներից յուրաքանչյուրում: Եվ այդ բերկրանքը պետք է տարբերվի այն ուրախությունից, որը դուք զգում եք ձեր ցանկությունների ու կրքերի բավարարումից: Կա ուրիշ ուրախություն՝ աստվածային ուրախություն, բերկրանք առանց պատճառի. բերկրանք այն բանի համար, որ փայլում է արևը. բերկրանք, որ դուք ապրում եք և շնչում. բերկրանք առվի խոխոջյունից, խոտերի սոսափյունից, ամպերի տեսքից:

Դուք անհամեմատ ավելի մեծ չափեր ունեք՝ համեմատած այն ձևի հետ, որն այժմ կրում եք: Եվ

կգա ժամանակ, երբ դուք կփոխեք այդ ձևը: Սակայն ձեր բերկրանքը և մյուս այն զգացմունքները, որոնք հավերժ են, ձեզ հետ կանցնեն ուրիշ աշխարհներ և մշտապես կմնան ձեր ներսում: Եվ կարևորագույն զգացմունքներից մեկը Սերն է, որը ձեր գիտակցության վերելքին զուգընթաց ձեռք է բերում ավելի ու ավելի նուրբ հատկություններ ու դրսևորումներ:

Կան հատկանիշներ ու հատկություններ, որոնք բնորոշ են բոլոր աշխարհներին: Եվ դրանցից մեկը Սիրո հատկանիշն է՝ Սիրո զգացմունքը:

Այն ամենը, ինչ քողարկված է ձեզնից ձեզ շրջապատող առարկաների միջոցով և տեսանելի չէ ժամանակի ու տարածության այն կետից, որում այժմ դուք գտնվում եք, նոր ուժով կբացվի այն բանին զուգընթաց, երբ կկարողանաք վեր հանել ձեր գիտակցությունն ու դուրս ելնել ձեր աշխարհի սահմաններից:

Խաղաղություն: Ներդաշնակություն: Գեղեցկություն: Շատ են այն հատկանիշները, որոնք այժմ ձեզ արժեքավոր չեն թվում, բայց Բարձրագույն Աշխարհներում նույնքան արժեքավոր են, որքան ձեր աշխարհում ոսկին ու ադամանդը:

Հոգու հատկանիշները՝ ձեր Հոգու ձեռքբերումները, այն են, ինչը կմնա ձեզ հետ: Դուք կմոռանաք ձեր մասնագիտությունը. ձեզ այն պետք չի գա ուրիշ աշխարհում: Դուք կմոռանաք ձեր սովորությունները. նրանք ձեզ անօգուտ կթվան: Բայց դուք կպահպանեք այն հատկանիշները, որոնք անանց արժեք ունեն բոլոր աշխարհներում:

Ուստի ժամանակ գտեք և մտորեք, թե ձեր ո՞ր հատկանիշները ձեզ համար օգտակար կլինեն Բարձրագույն Աշխարհներում: Ձարգացրե՛ք ձեր մեջ այդ հատկանիշները և շրջապատի ունայնությանը թույլ մի' տվեք, որ ձեր ներսում խլացնի այդ հատկանիշները:

ԵՍ ԵՄ ՈՐ ԵՄ

ՎԵՀԱՊԵՏ ԷԼ ՄՈՐԻԱ

19 հունիսի, 2005 թ.

ՈՒՍՄՈՒՆՔ ԱՋԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

ԵՍ ԵՄ Էլ Մորիան՝ նորից ձեզ այցի եկածը...

Այսօրվա մեր հանդիպումը, հուսով եմ, օգտակար կլինի ձեզ համար, ինչպես նաև կնպաստի ձեր աշխարհընկալմանը: Շատ օրեր են պահանջվել, որպեսզի նոր դեսպանորդը կարողանա ընկալել ոչ միայն այն գիտելիքները, որոնք այս կամ այն չափով նախկինում առկա էին նրա գիտակցության մեջ, այլ նաև որ նա սովորի փոխանցել այն գիտելիքները, որոնք միանգամայն նոր են իր համար: Ուստի ամեն անգամվա հետ մենք հնարավորություն էինք ստանում տալու ավելի ու ավելի ընդգրկուն գիտելիքներ ու հասկացություններ:

Գիտեք, որ տիեզերքը կառուցված է այնպես, որ նրա յուրաքանչյուր մակարդակը, որն օժտված է իր գիտակցության մակարդակով, իրեն նախորդող ու հաջորդող մակարդակներից բաժանված է յուրահատուկ անթափանց էներգետիկական արգելապատնեշով: Եվ դուք այդ արգելապատնեշները հաղթահարելու ունակություն եք ձեռք բերում միայն այն դեպքում, երբ ձեռք եք բերում որոշակի ներքին էներգետիկական ներուժ, որը ձեզ ընձեռում է այդպիսի հնարավորություն:

Այն էներգիան, որը դուք ունակ եք յուրացնելու, որոշվում է ձեր գիտակցության զարգացման մակարդակով: Որքան ավելի բարձր գիտակցությամբ եք օժտված, այնքան ավելի բարձր էներգետիկական շերտեր են մատչելի դառնում ձեզ համար: Ուստի և ձեր թրթիռների մակարդակը ձեզ ազատության որոշակի աստիճան է տալիս:

Գործնականում ողջ զարգացումը կայանում է ավելի մեծ ազատության աստիճանի ձեռքբերման մեջ, ինչը ձեզ թույլ է տալիս ձեր գիտակցության մեջ ընդգրկել ավելի մեծ քանակի էներգետիկական շերտեր և ձեզ համար մատչելի դարձնել ավելի մեծ քանակի տեղեկատվություն:

Պարադոքսն այն է, որ դուք սկզբում պետք է հրաժարվեք ձեր ազատ կամքից՝ նրա այն տեսքով, ինչպես դուք դա հասկանում եք ձեր գիտակցության մարդկային մակարդակով:

* Թելադրության ընդունման ընթացքում համակարգիչը խափանվեց: Թելադրության ընդունումն իմ կողմից իրականացվում է ստացված տեղեկատվության համակարգչային միաժամանակյա գրառմամբ: Ինձ հաջողվեց վերականգնել միայն ընդունված թելադրության սկզբնամասը: Հավաքված տեքստի մեծ մասը ոչնչացվեց: Մինչ փորձում էի վերականգնել կորած տեքստը՝ դուրս մնացի տեղեկատվական հոսքից և չկարողացա շարունակել թելադրության ընդունումը: Ուստի հրապարակում եմ այն, ինչ հաջողվել է պահպանել: Տ.Մ.

Ազատությունը մարդկային ըմբռնմամբ ձեր ցանկությունների բավարարման ազատությունն է, և եթե ձեր հասարակության օրենքները ստիպողաբար չսահմանափակեին հասարակության առանձին անդամների ազատությունը, ապա հասարակության որոշ անդամների անհագ ցանկություններն ունակ կդառնային վնաս հասցնելու մոլորակի վրա ապրող ամբողջ մարդկային ցեղին:

Սկզբում դուք պետք է ձեր գիտակցության մեջ կամավորապես հրաժարվեք ձեր մարմնական խելքից և այդ խելքի հետ կապված՝ ձեր մարդկային ցանկություններից ու պահանջներից: Դրանից հետո դուք ձեռք կբերեք ավելի մեծ ազատության աստիճան՝ կապված ավելի բարձր էներգետիկական և տեղեկատվական մակարդակների մատչելիության...

Վեհապետ Էլ Մորիա

ՎԵՀԱՊԵՏ ԼԱՆԵԼԼՈ

20 հունիսի, 2005 թ.

ՄՈՏԵՑԵՔ, ՎԱՌԵՑԵՔ ՁԵՐ ՋԱՀԵՐԸ ԵՎ ԼՈՒՅՍ ՀԱՍՑՐԵՔ ԵՐԿԻՐ ՄՈԼՈՐԱԿԻ ՄԱՐԴԿԱՆՑ

ԵՍ ԵՄ Լանելլոն՝ նորից ձեզ այցի եկածը:

Ամեն անգամ, երբ այս դեսպանորդի միջոցով այցելում եմ ձեզ , ես ներքին սարսուռ ու բերկրանք եմ զգում այն բանից, որ մենք վերջապես հնարավորություն ունենք դիմելու այսպիսի բարեշնորհ լսարանի:

Մեզ մեծ գործեր են սպասվում, իսկ այդ գործերի իրականացումը հնարավոր չի լինի, եթե դուք՝ Լույսի Ուստրերից ու Դուստրերից յուրաքանչյուրդ, չներդնեք ձեր բոլոր ջանքերը մտադրվածի իրագործման համար: Միայն այն համատեղ ջանքերը, որոնք կգործադրվեն մի կողմից՝ լուսակիրների, մյուս կողմից՝ Համաբարձյալ Դասերի կողմից, կկարողանան ցուցադրել նմուշօրինակն այն արագընթաց փոփոխությունների, որոնք սպասվում են, և որոնք մենք կանխատեսել ենք:

Օրակարգում հստակորեն դրված է բոլոր լուսավոր ուժերի համախմբումը:

Անկախ դավանանքից, երկրից, ռասայական և ազգային պատկանելությունից:

Ռուսաստանում ապրող մարդկանց առավել ավագ սերունդը հիշում է համատեղ աշխատանքի ու ջանքերի գործադրման այն խանդավառությունն ու ուրախությունը, որը նրանք ներդնում էին սոցիալիզմ կոչված համակարգում:

Իրականում համատեղ աշխատանքի ուրախությունն ու համատեղ ջանքերի ուրախությունը ոչ մի բանի հետ համեմատելի չեն: Եվ դա այն է, ինչը մեր կողմից պետք է վերականգնվի:

Անհատապաշտությունն ու օտարացումը զարգացած հասարակության հատկանիշ չեն. զարգացած՝ աստվածային իմաստով:

Սուրբ Հոգու Համայնք հանդիսացող հասարակությունը հիմնված է համատեղ աշխատանքի և համատեղ ջանքերի վրա, երբ յուրաքանչյուրը ցավում է ընդհանուր գործի համար, և երբ յուրաքանչյուրը կարող է դժվարին պահին հույս կապել, որ կստանա օգնություն ու օժանդակություն:

Համայնք կառուցելու սկզբունքները վաղուց են հայտնի: Եվ դուք միայն պետք է ներդնեք ձեր անձնական ջանքերն ու մղվածությունը՝ Հոգու նման Համայնքներ ստեղծելու համար:

Նոր Համայնքի ծնունդը ձեր գիտակցության մեջ, ձեր մտքերում ու սրտերում նախկինի պես առաջնահերթ խնդիր է: Իզուր եք հույս կապում այն բանի հետ, թե կգան բարի քեռիները և կհոգան ձեր ու ձեր ապագայի մասին:

Ցավոք, ինչպես ֆինանսական, այնպես էլ քաղաքական իշխանությունը փաստորեն բոլոր երկրներում կենտրոնացված է այնպիսի մարդկանց ձեռքերում, ովքեր իրենց սրտերում չունեն Աստծուն: Յուրաքանչյուր մարդ, ով ուղղված է Աստծո կողմը՝ ուղղված է իր մերձավորին օգնելուն: Ուստի բոլոր նրանք, ովքեր ձգտում են օգտագործել բոլոր միջոցները, որպեսզի մեծացնեն իրենց անձնական հարստությունն ու անձնական ազդեցությունը, չեն գործում Աստծո անունից և Աստծո հետ չունեն ոչ մի ընդհանուր բան:

Այն բանի համար, որ ինչ-որ բան փոխվի աշխարհում ամեն ազգի ու ժողովրդի համար, անհրաժեշտ է մերձավորի, աշխարհի և նրա ռեսուրսների նկատմամբ գիշատիչ վերաբերմունքին հակադրել աստվածային վերաբերմունք: Իրականում աշխարհում մշտապես պայքար է ընթանում այդ երկու ուժերի միջև: Ուժերի, որոնք գործում են հանուն ընդհանուր Բարօրության ու Բարու, և ուժերի, որոնք գործում են անձի, էգոյի հետաքրքրությունների բավարարման համար:

Եվ յուրաքանչյուր մարդ գտնվում է այդ երկու ուժերի ազդեցության տակ: Այդ ուժերը կարող են ազդեցություն գործել մարդու վրա ինչպես ներսից, այնպես էլ դրսից:

Եվ ողջ մարդկության զարգացումն ընթանում է այդ երկու ուժերի ազդեցության պայմաններում: Մի ուժը ձգտում է ուժեղացնել այս աշխարհի պատրանքը, իսկ մյուս ուժը ձգտում է հաստատել այն աշխարհը, որը գտնվում է երևակված պատրանքից այն կողմ:

Ըստ այդմ՝ ձեզնից յուրաքանչյուրը կարող է հանդես գալ այս կամ այն ուժի կողմից: Դուք չեք կարող չեզոք դիրք գրավել: Դա կնմանվի այն բանին, որ դուք փորձեք դադարի վիճակ պահպանել՝ գտնվելով արագընթաց լեռնային գետի հոսանքի մեջտեղում: Դուք կարող եք ենթարկվել հոսանքին, բայց, եթե այն ձեզ իր հետ տանի, ապա հայտնի չէ, թե ո՞ր ջրվեժի բարձրությունից և ի՞նչ սուր-սուր քարերի վրա ստիպված կլինեք վայրէջք կատարել: Դուք պետք է ջանքեր գործադրեք, որպեսզի կատարեք փոթորկոտ կյանքի գետանցում, կարողանաք թիավարել ու հասնել հակադիր ափին:

Եթե դուք հայացքով ընդգրկեք համաշխարհային պատմության անցյալն ու ներկան, ապա կնկատեք, որ պատրանքի կողմը պահող ուժերը միշտ հաղթող են դուրս եկել:

Նրանք հենց հիմա էլ շարունակում են իշխանական տեղեր զբաղեցնել, գտնվում են յուրաքանչյուր ազգի իշխանական օղակներում և գլուխն են կազմում Երկրի վրա գոյություն ունեցող բոլոր կառավարությունների: Սակայն այդ ուժերին երբեք մատչելի չի եղել Աստծո էներգիան, և նրանք ստիպված են եղել օգտվել ամբոխների ամենահետին բնազդներից ու ցանկություններից, որպեսզի ձեռք բերեն այն էներգիան, որն առկա է յուրաքանչյուր մարդու ներսում, և որի մատչելիությունից իրենք զրկվել են՝ կյանքից կյանք շարունակվող իրենց անաստված գործողությունների հետևանքով:

Եվ ընդհակառակը, այն մարդուն, ով կանգնած է Լույսի Ուժերի դիրքերում, մատչելի է Աստծո էներգիան, և նա կարիք չունի հենվելու հետևորդների ամբոխի վրա: Նա հենց ինքն է իր էներգիան տալիս յուրաքանչյուրին, ով ունակ է այդ էներգիան ընդունելու և այն ծառայեցնելու հանուն Երկրի էվոլյուցիայի զարգացման:

Եվ, չնայած այն բանին, որ ձեզ թվում է, թե ձեր շուրջն ամեն ինչ վատ վիճակում է, թե Երկիրը խրվել է անհատապաշտության ու մյուս հետին դրսևորումների մեջ, քանի դեռ մարմնավորման մեջ են գտնվում լուսակիրները՝ այն մարդիկ, ովքեր ունակ են Լույս կրել իրենց մարմիններում և պաշտպանել Բարու և Ընդհանուր Բարօրության շահերը, մարդիկ, ովքեր պատրաստ են հանուն ընդհանուր բարօրության զոհաբերել ամեն ինչ, այդ թվում նաև իրենց սեփական կյանքը, ապա մշտապես կլինի Հաղթանակի հույսը: Եվ Հաղթանակը վաղ թե ուշ կնվաճվի, քանզի այդպիսին է Աստծո Մտահղացումը Երկիր մոլորակի համար...

Եվ այսօր, երբ այսքան շատ են մարմնավորված լուսակիրները, Հաղթանակը մոտ է, ինչպես երբեք...

Ձեր մասնատվածությունը, չկամությունը և տարբեր կրոնական ուղղությունների հարող լուսակիրների միավորվելու անկարողությունն այս փուլում հանդիսանում են ձեր ամենագլխավոր թշնամին:

Ուստի դուք պետք է սովորեք շփման ընդհանուր եզրեր գտնել, հանգել ընդհանուր տեսակետների, թվում է, թե միանգամայն տարբեր հարցերում:

Վերլուծե՛ք ձեր անհաջողություններն այն իրադրություններում, երբ ցանկացել եք, բայց չեք կարողացել փոխադարձ պայմանավորվածության գալ: Ես 99,99 տոկոսով համոզված եմ, որ ինչ-որ հարցի շուրջ միաբանվելու և ընդհանուր տեսակետի հանգելու գործում ձեր կրած անհաջողության պատճառը ձեր սնապարծությունն է. ձեր համոզվածությունն այն բանում, որ միայն ձեզ է հայտնի լիակատար աստվածային Ճշմարտությունը, իսկ բոլոր մյուսները սխալվում են: Եվ դուք պատրաստ եք ձեր կողքին հանդուրժել միայն այն մարդկանց, ովքեր ձեզ հաճոյանալու համար կրկնում են ձեր ասածները:

Ուստի առաջին բանը, որ դուք պետք է սովորեք, ձեր սնապարծությունը մի կողմ դնելն է և երկխոսության մեջ մտնելն այն հոսանքների ու խմբերի հետ, որոնք ունակ են երկխոսություն վարելու: Դուք պետք է սովորեք պայմանավորվածության գալ իրար հետ և կատարել ընդհանուր գործեր:

Միայն այն դեպքում, երբ Աստծուն հնարավորություն եք տալիս գործելու ձեր միջոցով, Աստված օգտվում է այդ հնարավորությունից:

Ուստի ինքներդ ձեզ վրա աշխատելը, հաղթահարումը ձեր այն թերությունների, որոնք ստիպում են ձեզ համարել, որ դուք անսխալական եք ու միշտ ճիշտ, հենց այն են, ինչ դուք պետք է անհապաղ անեք:

Եթե դուք մի կողմ դնեք ձեր սնապարծությունը և Աստծուն հնարավորություն տաք գործելու ձեր միջոցով, ապա միշտ կկարողանաք իրար հետ լեզու գտնել և պայմանավորվածության գալ ձեզ նման նվիրյալ սպասավորների հետ:

Այն, ինչը մասնատում է, հանդիսանում է այն ուժերի գործունեության արդյունք, որոնք բազմապատկում են պատրանքը: Ուստի դուք պետք է ձգտեք միավորվելու: Ձեր ուժը միասնության մեջ է: Հենվեք ու միաձ՛ույլ եղեք այն մարդկանց հետ, որոնց սրտերում ապրում է Աստված, և դուք կդառնաք անպարտելի ու անխոցելի այն չար ուժերի համար, որոնք դեռևս այս մոլորակի վրա ղեկավարում են պարահանդեսը: Աշխարհի ոչ մի հարստություն, ֆինանսական ու քաղաքական ոչ

մի իշխանություն չի կարող դիմադրել ձեզ, եթե ձեր ներսում ապրում է Աստված: Դուք միասնական եք դառնում Աստծո հետ և միասնական եք դառնում Երկիր մոլորակի ամեն մի կենդանի էակի հետ, ում սրտում առկա է Աստված, և աշխարհում չկա մի այնպիսի ուժ, որը կարողանա ձեր դեմ կանգնել: Քանզի հնարավոր չէ մարտնչել Աստծո դեմ. դա նույնն է՝ ինչ որ նստես բզի վրա:

Մենք անկեղծորեն հույս ենք կապում, որ այս թելադրություններն ու այն Լույսը, որը պարունակվում է այս թելադրություններում, կնպաստեն Լույսի բոլոր ուժերի միաբանվելուն, այն բոլոր լուսակիրների միաբանվելուն, ովքեր այժմ գտնվում են մարմնավորման մեջ:

Մոտեցեք, վառեցեք ձեր ջահերը և Լույս հասցրեք Երկիր մոլորակի մարդկանց:

ԵՍ ԵՄ Լանելլոն

ՎԵՀԱՊԵՏ ԷԼ ՄՈՐԻԱ

21 հունիսի, 2005 թ.

ՁԵՐ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՐ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԻԱԿ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՂՆ Է

ԵՍ ԵՄ Էլ Մորիան՝ նորից ձեզ այցի եկածը:

Իմ անցած թելադրության ընթացքում ծագած իրադրությունը հիշեցում էր այն մասին, որ մեզ հակադիր ուժերը պահպանում են իրենց մարտունակությունը և պատրաստ են օգտվելու մեր պաշտպանության ամեն մի խոցելի տեղից:

Հրեշտակների երեք ջոկատներ՝ 144 հրեշտակ յուրաքանչյուրում, հսկում են թելադրությունների ամեն մի փոխանցումը:

Դրանից զատ, գործի են դրված նաև Միքայել Հրեշտակապետի պահապան հրեշտակների զորախմբերը:

Եվ, չնայած այդ կարծես անթափանց պաշտպանական պատի առկայությանը՝ խավարի ուժերին այնուամենայնիվ հաջողվում է հարված հասցնել ամենաանցանկալի պահին:

Ինչ արած, ձեր աշխարհը երկու հակադիր ուժերի մարտադաշտ է: Եվ քանի դեռ մարմնավորված վերջին անհատի գիտակցությունից արմատախիլ չի արվել պայքարի ամեն մի զգացմունք, մարտը կշարունակվի:

Պատկերացրեք երկու զորք, որոնք կռվի են ելել: Մարտիկների շարքերը մարտական պատրաստվածության վիճակում են: Դեմքերը լարված են: Յուրաքանչյուր մարտիկ հրամանի է սպասում միայն, որպեսզի նետվի մարտի:

Աշխարհում ձեր բռնած դիրքը նման է այդ մարտիկների դիրքին:

Իսկ հիմա պատկերացրեք, որ հրաշք է տեղի ունենում: Մարտի դաշտը փակող մութ ամպերի միջից հայտնվում է արևի ճառագայթ, որը լուսավորում է և՛ կռվի դաշտը, և՛ մարտիկների լարված ու մռայլ դեմքերը: Կարո՞ղ եք գոնե մի ակնթարթ պատկերացնել նման հրաշք, որ ամպերի միջով թափանցած արևի քնքուշ ճառագայթներն ունակ դառնան հալեցնելու մարտիկների սրտերի մեջ եղած ամեն մի թշնամական զգացում: Յուրաքանչյուր մարտիկի սրտից ելած մեն մի միտքը, մի ազդակը բավարար կլինի, որպեսզի մարտի ամեն մի մասնակցի գիտակցությունն ու արտաքին խելքը ձեռք բերեն ավելի բարձրաթրթիռ բնույթ:

Եթե դուք ձեր գիտակցությամբ ունակ եք բարձրանալու մի ուրիշ, ավելի բարձր մակարդակի վրա, ապա կարող եք նկատել, որ այն ամենը, ինչ նախկինում ձեզ բաժանել է ձեր թշնամիներից ու հակառակորդներից, կորցնում է ամեն մի իմաստ: Որովհետև դուք քարանում եք ձեր հայացքի դեմ հանկարծ բացված գեղեցկության ու Աստծո կատարյալ Ճշմարտության առաջ: Եվ այլևս չեք կարողանում համակվել թշնամական զգացմունքներով: Քանզի գիտակցում եք ձեր միասնությունը կյանքի յուրաքանչյուր մասնիկի հետ: Եվ հասկանում եք, որ պայքարի ամեն մի զգացում, ատելության ու հակակրանքի ամեն մի զգացում աստվածային չէ: Եվ այն մարդիկ, ովքեր ընկել են այդ զգացմունքների ազդեցության տակ, միայն կարեկցանքի են արժանի: Եվ դուք հասկանում եք, որ կարող եք այդ մարդկանց օգնություն ցուցաբերել: Դուք կարող եք նրանց օժտել ձեր Սիրո զգացմունքով, ձեր հասկացողությամբ և տալ նրանց Աստծո էներգիայի մի մասնիկ, որի շնորհիվ ձեր հակառակորդները կզգան ձեր Սերը:

Ճիշտ այնպես, ինչպես արևը, շողալով ամպերի միջից, կարող է ձեզ տալ հույսի ճառագայթ և ձեզ օժտել սիրո ու կարեկցանքի զգացմունքով, նույն կերպ էլ դուք ձեր սրտի Սիրով կարող եք օժտել ամեն մի մարդու, ում հանդիպում եք ձեր կյանքում: Հավատացեք ինձ, միայն Սերը կարող է ձեր աշխարհից դուրս մղել բոլոր բացասական դրսևորումները:

Այնուամենայնիվ ես կուզենայի վերադառնալ մեր ընդհատված զրույցի թեմային: Կրկին անդրադառնալ Ազատության, աստվածային Ազատության հատկանիշին և այն բանին, թե այդ հատկանիշն ինչպես ենք ընկալում մենք՝ Համբարձյալ Դասերս:

Ազատության ըմբռնումը՝ որպես ցանկացած սահմանափակումների բացակայություն ու ամենաթողություն, աղավաղումն է աստվածային Ազատության այն որակի, որը հատուկ է Համբարձյալ Դասերին:

Ճիշտ այնպես, ինչպես ձեր աշխարհում դուք սահմանափակում եք առանձին անհատների անհագ ցանկությունների ու մղումների կամայական դրսևորումները, որոնք կարող են վնաս հասցնել ուրիշ մարդկանց, այնպես էլ սահմանափակումներ գոյություն ունեն նաև Աստծո Աշխարհում:

Եվ այն էներգետիկական պատնեշը, որը գոյություն ունի մեր երկու աշխարհների միջև, թույլ չի տալիս մեր աշխարհ թափանցել այն անհատներին, ովքեր իրենց գիտակցությունը չեն ենթարկել համայն տիեզերքում գործող Օրենքին:

Ցանկացած անկատար դրսևորում, այդ թվում նաև ազատության այն անկատար ըմբռնումը, որն առկա է մահկանացուների ուղեղներում, չի կարող թափանցել մեր աշխարհները սահմանազատող վարագույրից այն կողմ: Եվ որպեսզի կարողանաք հաղթահարել մեզ իրարից բաժանող էներգետիկական պատնեշը, դուք պետք է հաջորդաբար հրաժարվեք ձեր էության մեջ եղած բոլոր անաստված հատկանիշներից ու դրսևորումներից՝ դրանք փոխարինելով կատարյալ կերպերով, կատարյալ դրսևորումներով:

Եվ այն բանին զուգընթաց, որ կկատարեք ինքներդ ձեզ հետ տարվող այդ ոչ դյուրին աշխատանքը, դուք կձերբազատվեք ձեր աուրաներում առկա բացասական էներգիաներից: Դրանով ձեր աուրաները համահունչ կդառնան Աստծո Իրականության հետ, կբացվեն ձեր չակրաները, և ձեր թրթիռների մակարդակը նախ թույլ կտա կարճ ժամանակով գտնվել մեր աշխարհում՝ եթերային օկտավաներում, իսկ հետագայում, երբ դուք կամրապնդեք ձեր նվաճումները և, բազմաթիվ թեստեր անցնելով, կհաստատեք ձեր նվաճած մակարդակը, նոր միայն իրավունք կստանաք ներկա գտնվելու Համբարձյալ Դասերի միջավայրում և դառնալու նրանցից մեկը:

Եվ, ի հատուցումն ձեր անկատար հատկանիշներից ու ազատության ձեր մարդկային ըմբռնումից հրաժարվելու, դուք ձեռք կբերեք աստվածային Ազատություն: Ոչ որպես ամենաթողություն, այլ որպես ձեր ողջ էության կամավոր ենթարկում համայն տիեզերքում ընդունված կատարյալ Օրենքին: Եվ միայն դրանից հետո դուք ձեռք կբերեք ազատության այն աստիճանը, որը թույլ կտա ձեզ հաղթահարել աշխարհների միջև եղած սահմանագիծը, և ձեզ համար մատչելի կդառնա ցանկացած տեղեկատվություն: Դուք կկարողանաք այցելել մեր գրադարանները, զննել ակաշայի գրառումները: Ձեզ համար մատչելի կդառնա ցանկացած տեղեկատվություն, որին հասու կլինի ձեր գիտակցությունը: Ըստ այդմ՝ ձեր ազատության, ձեր աստվածային Ազատության միակ սահմանափակողը ձեր գիտակցությունն է:

Եթե ձեր գիտակցության մակարդակը բարձր չէ, բայց այլ աշխարհներում ճամփորդելու ձեր ցանկությունը հսկայական է, ապա կարող եք դուրս գալ ձեր մարմնից և աստեղային մարմնով ճամփորդել աստեղային աշխարհներով: Սակայն դուք երբեք չպետք է մոռանաք, որ ձեր գիտակցության մակարդակը սահմանափակում է ձեզ: Եվ դուք կճամփորդեք միայն այն աշխարհներում, որոնց թրթռանքը համապատասխանում է ձեր թրթիռներին:

Ուստի մենք ասում ենք, որ աշխարհները բաց են ձեզ համար, սակայն ձեր հիմնական խնդիրն այն է, որ հոգաք ձեր գիտակցության, ձեր գիտակցության մակարդակի մասին և ձգտեք ձերբազատվել ամեն մի անկատարությունից, որը խոչընդոտում է ձեր զարգացումը:

Ձեր գիտակցությամբ դուք ծիլ եք տալիս նորանոր աշխարհներում: Դուք ծլարձակում եք Երկնքի տարբեր մակարդակների միջով: Եվ մղվում եք ավելի ու ավելի բարձր՝ դեպի Անսահմանություն:

Սակայն, քանի դեռ դուք գտնվում եք երևակված թանձրաշխարհում, երբեք չպետք է մոռանաք, որ ձեր գործունեության բոլոր բնագավառներում հնարավոր են աղավաղումներ: Եվ դուք կարող եք, մարզումների ճանապարհով կամ հիշելով անցյալ կյանքերի ձեր փորձը, սովորել դուրս գալ ձեր մարմնից: Սակայն եթե դուք դեռ չեք հասել ձեր ստորին չորս մարմինների որոշակի մաքրության աստիճանին, ապա ձեր ճամփորդությունները տեղի կունենան աստեղային ու մենտալային ոլորտների այն մակարդակներում, որոնք իրենց թրթռանքով մոտ են ձեզ: Եվ այդ ճամփորդություններից դուք ձեր հոգու զարգացման առումով ոչ մի օգուտ չեք ստանա: Ձեր այդ վարժանքները կնմանվեն այն թմրամոլների ճամփորդություններին, որոնք տարբեր քիմիական նյութերի օգտագործման միջոցով հասնում են այնպիսի վիճակի, որում իրենց նուրբ մարմինն անջատվում է ֆիզիկական մարմնից և թափառում աստեղային ոլորտում:

Աշխարհների մերձեցմանը զուգընթաց ի հայտ կգան ավելի ու ավելի շատ մարդիկ, որոնք ունակ կդառնան հաղորդակցվելու նուրբ աշխարհներում բնակվող էակների հետ:

Եվ ձեզնից կպահանջվի զանազանելու կարողություն ունենալ, որպեսզի կարծիք կազմեք այլ աշխարհներում կատարված ճամփորդությունների մասին ստացված պատմությունների ու նկարագրությունների վերաբերյալ:

Դուք մշտապես պետք է հիշեք, որ նմանը նմանին է ձգում, ուստի զննեք այն մարդուն, որը պատմում է իր փորձերի ու փորձառությունների մասին, դիտեք նրա դատողություններն ու արարքները, և ձեզ համար պարզ կդառնա, թե ո՞ր աշխարհներում այդ մարդը կարող էր ճամփորդած լինել: Անսովոր ոչինչ չկա այն բանում, որ մարդիկ կարող են ճամփորդել աստեղային և մենտալային ոլորտներում: Դուք դա անում եք ամեն գիշեր: Սակայն հարցն այն է, թե որքանո՞վ են այդ ճամփորդությունները նպաստում ձեր գիտակցության զարգացմանը, որքանո՞վ են նպաստում Ուղով ձեր առաջընթացին:

Իմաստ ունի միայն Աստծո մեջ ձեր կատարելագործվելը, իսկ աստեղային ու մենտալային ոլորտների հետ ձեր կապվածությունը ժամանակի ընթացքում պետք է հաղթահարվի ճիշտ այնպես, ինչպես ձեր կապվածությունը ֆիզիկական ոլորտի հետ: Քանզի նուրբ աշխարհի ցածրագույն մակարդակները ձեր հոգուն չեն կարող տալ այն գիտելիքները, որոնց կարիքը նա ունի:

Դուք կարող եք երկար թափառել հարթավայրում, բայց մենք ձեզ կանչում ենք դեպի գագաթը, աստվածային գիտակցության գագաթը:

Ես ուրախ եմ, որ մեր այսօրվա զրույցը կայացավ:

ԵՍ ԵՄ Էլ Մորիան,
մինչ նոր հանդիպում...

ՀԱՈՒԹԱՄԱ ԲՈՒԴԴԱ

22 հունիսի, 2005 թ.

ԴՈՒՔ ՊԵՏՔ Է ԸՆԹԱՆԱՔ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՂՈՎ

ԵՍ ԵՄ Հաութամա Բուդդան՝ ամառային արևադարձի օրով ձեզ այցի եկածը:

Մոլորակների դիրքի հետ կապված նշանավոր օրերից յուրաքանչյուրն ինքնին կարևոր է:

Երբևէ Երկրի մարդկությունը կկարողանա վերադառնալ այն գիտելիքների ըմբռնմանը, որոնք հայտնի են եղել տասնյակ հազարավոր տարիներ առաջ Երկրի վրա ապրած հինավուրց քաղաքակրթություններին և հիմա անմատչելի են դարձել Երկրի մարդկությանը:

Դրա գաղտնիքը շատ պարզ է: Եթե ձեզ հայտնի է այն, ինչ ցույց են տալիս աստղերը, բայց չեք կատարում այդ ցուցումները, ապա ձեր գիտելիքը կորսվում է:

Ճիշտ նույն կերպ, եթե մենք այս թելադրությունների միջոցով գիտելիքներ ենք հաղորդում ձեզ, և դուք դրանք չեք կիրառում ձեր կյանքում, ձեր առօրյա կյանքում չեք առաջնորդվում այդ գիտելիքներով, ապա գիտելիքները հետ են վերցվում: Ձեզ տրվում է հնարավորություն, աստվածային հնարավորություն, որը վաստակվել է շատ կյանքերի ընթացքում՝ Լույս կրողների մարտիրոսությամբ ու մարտիրոսական մահերով:

Դուք հնարավորություն եք ունենում ձեզ համար ստանալու Աստծո Ճշմարտության ու աստվածային ոգեկոչման այդ զուլալ աղբյուրը:

Եվ եթե դուք չեք օգտվում այն գիտելիքներից, խրատներից ու ուսմունքներից, որոնք շարադրված են թելադրություններում, ապա դուք կորցնում եք ձեր գիտակցությամբ թռիչք կատարելու հնարավորությունը: Դուք կորցնում եք դեպի աստվածային գիտակցություն ձեր վերելքի, հաջորդ գագաթի վրա բարձրանալու հնարավորությունը:

Եվ հակառակը, եթե այն մարդկանց քանակությունը, որոնք ունակ են ընկալելու և կիրառելու այս թելադրություններից ստացված գիտելիքները, հասնի որոշակի կրիտիկական զանգվածի, ապա աստվածային գիտելիքի հոսքը կբազմապատկվի ու կուժեղացվի: Եվ դա կարվի ոչ միայն այս դեսպանորդի, այլ նաև տասնյակ ու հարյուրավոր այլ դեսպանորդների միջոցով, ովքեր կկարողանան անցնել իրենց ձեռնադրումները՝ շնորհիվ այն լուսակիրների համատեղ ջանքերի, որոնցից յուրաքանչյուրը կկարողանա իր կյանքում առաջնորդվել այս թելադրություններում շարադրված գիտելիքներով ու խրատներով: Յուրաքանչյուր հետևորդից, ով կանցնի համապատասխան ձեռնադրումներն ու հնարավորություն ձեռք կբերի խոսելու մեր անունից, արդեն ավելի քիչ ջանքեր կպահանջվեն իր ունակությունների ձեռքբերման համար:

Եվ ձեզնից յուրաքանչյուրը պետք է հիշի այն մասին, որ, իր գիտակցությամբ ընդհանուր հոսքի մեջ մտնելով, մասնակցելով գիտելիքների ու տեղեկատվության տարածմանը, նույնիսկ միայն պարզապես առաջնորդվելով մեզնից ստացած խրատներով, ձեր կյանքերում դուք մեր օկտավաների միջև մեծ փոխանակումների հնարավորություն եք ստեղծում, նպաստում եք աշխարհների փոխմերձեցմանը:

Մարդկության գիտակցության աճի գործընթացը կոլեկտիվ գործընթաց է: Աստված մշտապես առաքել է իր դեսպանորդներին ու մարգարեներին, և ամեն անգամ մարդկությանը հնարավորություն է տրվել: Եվ այդ հնարավորությունը հազվադեպ է օգտագործվել մեր առաքյալների կյանքի ընթացքում: Այնուամենայնիվ այն ազդակը, որը սխրագործողի գիտակցությունը հաղորդել է Երկիր մոլորակի ֆիզիկական ոլորտին, ունակ է եղել արթնացնելու այն անհատների գիտակցությունը, ովքեր պատրաստ են եղել, և արդյունքում տեղի է ունեցել մարդկության գիտակցության թռիչք: Շատ կարևոր է այդ ազդակը Երկիր մոլորակի ֆիզիկական ոլորտ հասցնելը, բայց էլ ավելի կարևոր է, որ գտնվեն նրանք, ովքեր կորսան այդ իմպուլսը և կկարողանան այն կիրառել առօրյա գործերում:

Տրվում է կառուցողական էներգիա: Տրվում է էներգիա՝ ձեր գիտակցության ընդլայնման համար: Եվ, այն բանից կախված, թե ինչպես կօգտագործվի այդ էներգիան, տառացիորեն կորոշվի պատմության հետագա ընթացքը:

Աստծո էներգիայի ազդեցությամբ լուսակրի գիտակցությունը պատրաստ է ջահի պես բռնկվելու: Սակայն ավելի կարևոր խնդիր է ջահը կրելը: Կրակի պահումն ու պահպանումը նշանակալի ժամանակահատվածի ընթացքում: Մի' կարծեք, թե կրակի պահպանման հետ կապված ձեր գործունեությունը վերջանում է միայն աղոթքներ ու պատգամներ ընթերցելով: Երկրի վրա գտնվելու ձեր ամեն վայրկյանի ընթացքում դուք պետք է մշտապես առաջնորդվեք մեր ցուցումներով և կյանքի յուրաքանչյուր իրադրությունում ընթանաք Բարձրագույն Ուղով:

Երբեք չի կարելի մոռանալ, որ դուք եկել եք ձեր աշխարհ, որպեսզի փորձ ձեռք բերեք: Եվ Երկրի վրա գտնվելու ձեր յուրաքանչյուր րոպեին դուք ընտրություն եք կատարում, թե ուր ուղղորդեք ձեր ստացած էներգիան:

Լինելով կյանքի բովում՝ մշտապես պահպանել աստվածային համալարում. դա այն է, ինչ այժմ պահանջվում է ձեզնից: Ձեր գիտակցությամբ դուք պետք է մշտապես գտնվեք լեռնագագաթի վրա: Միևնույն ժամանակ մշտապես զգալով ոտքի տակի հողը: Եվ ճիշտ այնպես, ինչպես ձեր կյանքում դուք առաջնորդվում եք այն երկրի օրենքներով, որտեղ ապրում եք, այնպես էլ ձեր կյանքում դուք պետք է մշտապես առաջնորդվեք Աստծո Օրենքով:

Միշտ հնարավորություն կա ընթանալու բարձրագույն Ուղով, նաև միշտ հանարավորություն կա ցած սահելու:

Եվ այն պահին, երբ ձեր կյանքի դժվարին իրադրությունում դուք ընտրություն եք կատարում, միշտ հիշեք այն մասին, որ դուք անհամեմատ ավելի մեծ չափեր ունեք, քան ձեր ֆիզիկական մարմնի չափերն են: Դուք աստվածային բնույթ ունեք և անմահ եք: Ուստի, երբ կատարում եք ձեր ընտրությունը, մշտապես առաջնորդվեք նրանով, թե ինչն է օգտակար ձեր հոգու համար:

Եթե ստիպված եք դեմ գնալ խղճին, որպեսզի չկորցնեք ձեր աշխատանքը, հարմարվել ու քծնել ձեր ղեկավարին, որպեսզի պահեք ձեր աշխատատեղը, ապա միշտ հոգացեք ձեր հոգու մասին: Ձեր հոգին միշտ գիտի, թե ինչպես վարվեք ցանկացած իրադրությունում: Նույնիսկ եթե ձեր վարմունքը չհամընկնի շրջապատի մարդկանց մեծամասնության կարծիքի հետ, մշտապես ձգտեք վարվել այնպես, ինչպես ճիշտ է համարում ձեր իսկ Բարձրագույն մասը:

Միշտ ձեր աչքի առաջ ունեցեք Հիսուսի կերպարը: Չէ՞ որ նա կարող էր խուսափել դժնդակ մահից: Կարող էր ջանքեր գործադրել և նույնիսկ դառնալ թագավոր: Նրա աշակերտներից յուրաքանչյուրը պատրաստ էր զոհելու իր սեփական կյանքը, որպեսզի, մարտի մեջ մտնելով, պաշտպանի իր Ուսուցչին: Այնուամենայնիվ Հիսուսը խաչվեց: Ձեզնից յուրաքանչյուրը կյանքում պետք է առաջնորդվի այս օրինակով, որը ձեզ տրված է: Եվ եթե ձեր առաջ հարց է ծառանում՝ նահանջել սեփական սկզբունքներից, խղճից և չզրկվել աշխատատեղից կամ ձեզ համար արժեք ներկայացնող ինչ-որ բանից, ապա երբեք մի՛ մոռացեք, որ ձեր կյանքում կա ավելի մեծ բան, քան պարզապես ձեր ֆիզիկական պահանջմունքների բավարարումն է:

Դուք պետք է ընթանաք Բարձրագույն Ուղով և միշտ ընտրեք Բարձրագույն Ուղին:

Ես արքայազն էի և ունեի ամեն ինչ: Ես ունեի երիտասարդ կին, և մեզ երեխա էր ծնվել: Ես ունեի այն ամենը, ինչի մասին կարող է երազել մարդը՝ ծնվելով Երկրի վրա: Սակայն ես գիտեի, որ կա ինչ-որ ավելի մեծ բան, հանուն որի մենք գալիս ենք Երկիր: Եվ ես թողեցի ամեն ինչ ու հեռացա:

Շատ տարիներ անցան, նախքան կկարողանայի գտնել իմ Ուղին: Իսկ այդ Ուղին կապված չէր հարստության, տան կամ ընտանիքի հետ:

Կա Բարձրագույն Ուղի, որով վաղ թե ուշ կընթանաք բոլորդ:

Սա չի նշանակում, թե ես բոլորիդ կոչ եմ անում թողնել ձեր ընտանիքներն ու գնալ մենաստան: Ձեր կյանքը ձեզ անհամեմատ ավելի մեծ հնարավորություններ է տալիս ձեռնադրումներ անցնելու համար:

Դուք վեր եք բարձրանում ձեր գիտակցությամբ և ընդունում եք այն որոշումները, որոնք նպաստում են ձեր գիտակցության զարգացմանը: Դուք ձեր ընտրությունն անում եք՝ առաջնորդվելով Բարձրագույն Օրենքով: Եվ, եթե ձեզ հաջողվի անցնել ձեր ձեռնադրումներն ու հասնել Քրիստոսի ու Բուդդայի գիտակցության մակարդակին՝ չհեռանալով սովորական կյանքից, ապա դա կլինի հենց այն, ինչը ձեզնից պահանջվում է մարդկության զարգացման տվյալ փուլում:

Եվ նաև դուք երբեք չպետք է մոռանաք, որ երբ ձեր գիտակցությամբ հասնեք թռիչքի, ապա ձեր շրջապատը կփոխվի: Կհեռանան այն մարդիկ, ովքեր պատրաստ չեն ձեր գիտակցության նոր մակարդակին, և կմոտենան նրանք, ում թրթիռները մոտ են ձերին: Մի՛ մոռացեք նաև այն մասին, որ, եթե մի մարդ իր գիտակցությամբ թռիչք է ապրում, ապա նա ազդեցություն է գործում բոլոր այն մարդկանց վրա, ում հետ այդ կյանքում նա կարմայորեն կապված է: Եվ շատ հոգիներ, անհրաժեշտ ազդակ ստանալով այդ մարդուց, ունակ են դառնում բացելու իրենց գիտակցությունն ու թռիչք գործելու:

Միշտ հիշեք, որ նուրբ ոլորտում բոլորդ իրար հետ կապված եք, և մեկի հաղթանակը հանգեցնում է շատերի գիտակցության բարձրացմանը:

Ձեզնից յուրաքանչյուրն արժեք ունի իր տեղում և կարող է անել այն աշխատանքը, որի համար մարմնավորվել է՝ գտնվելով հենց այն տեղում, որտեղ ինքը ծնվել ու ապրում է:

Ձեր կյանքում միշտ էլ տեղ կա և՛ սխրանքի, և՛ ճգնանքի, և՛ հերոսության համար:

Քանզի շատերի համար գիտակցության փոփոխությունը տառացիորեն նշանակում է ամբողջ կյանքի փոփոխություն: Դուք այլևս չեք կարողանա անվերջ ժամեր անցկացնել ընդհանուր ճաշկերույթներում: Այլևս տանել չեք կարողանա ոռք երաժշտության թրթռանքը: Դուք ստիպված կլինեք հրաժարվել ձեր շրջապատի այն ամենից, ինչը չի համապատասխանում աստվածային թրթիռներին: Եվ շատերիդ համար դա նման կլինի այն քայլին, որը ես կատարեցի՝ հեռանալով իմ հոր պալատից:

Եվ այնժամ, երբ կընտրեք պարտությունը և չեք կռվի ձեր հակառակորդների հետ՝ ամեն ինչ կորցնելով և թույլ տալով, որ ձեր թշնամիները խաչեն ձեզ, ապա դրանով իսկ կանեք այն, ինչ արեց Հիսուս 2000 տարի առաջ:

Հավատացեք ինձ, ձեզնից յուրաքանչյուրի կյանքում կան պահեր, երբ դուք կարող եք արարք կատարել, որն իր հոգևոր նվաճմամբ հավասար կլինի այն արարքներին, որոնք կատարել են բոլոր ժամանակների սրբերը:

Եվ եթե դուք չեք տեսնում, թե ինչ անեք և ինչպես վարվեք, ապա մի՝ խաբեք ինքներդ ձեզ: Ձեր հոգին միշտ գիտի Բարձրագույն Ուղին: Եվ ձեր վիճատությունը, ինքնախղճահարությունն ու ձանձրույթը խոսում են հատկապես այն մասին, որ դուք չեք անում և չեք ուզում անել այն, ինչի համար ձեր հոգին մարմնավորվել է:

Այն լուսակիրները, ովքեր կատարում են իրենց պարտքն ու առաքելությունը, վառվում և իրենց լույսն են տալիս աշխարհին՝ չունենալով ո՛չ քուն, ո՛չ դադար:

Դուք արթնացվա՛ծ եք: Մի՞թե էլի քնով կանցնեք՝ շուռ գալով մյուս կողքի վրա:

ԵՍ ԵՄ Հաութաման

ՏԵՐ ՍՈՒՐԻԱ

23 հունիսի, 2005 թ.

ՀԱՋՈՐԴ ԱՄՍՎԱ ԿԱՐՄԱՅԻ ԹԵԹԵՎԱՑՄԱՆ ԵՎ ԿԱՐՄԱՅԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱՄԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԵՍ ԵՄ Սուրիան, այսօր ձեզ այցի եմ եկել իմ դեսպանորդի միջոցով:

Այսօր այնպիսի օր է, երբ դուք կարող եք ձեր աղոթքներով ջանքեր գործադրել և ձեր աղոթքի էներգիան ուղղորդել հաջորդ ամսվա կարմայի փոխակերպմանը: Ձեր խնդրածից ձեզ կհատկացվի ճիշտ այնքան, որքան թույլ են տալիս ձեր սրտի մաքրությունն ու անկեղծությունը, և որքան թույլ է տալիս կարմայի Օրենքը: Ըստ այդմ՝ ես խորհուրդ եմ տալիս չծուլանալ և աշխատել այդ օրը: Կարող եք նույնիսկ այդ օրվա համար նախատեսված ձեր բոլոր գործերը նվիրաբերել կարմայի փոխակերպության գործին: Պատկերացրեք այնպես, ինչպես երբ լվանում եք ամանները կամ հավաքում եք ձեր բնակարանը. նույն կերպ անցյալի կարմայի շերտանստվածքները սրբում եք այն ամենի վրայից, ինչը ձեր ձեռքի տակ է ընկնում:

Ջուրը ձեր օգնականն է:

Դուք կարող եք շարունակել և ձեր փորձը տեղափոխել մենտալ հարթություն: Կարող եք պատկերացնել, թե ինչպես եք վերցնում ջնջոցը և սրբում ձեր բոլոր անմաքուր մտքերը, որոնք երբևէ այցելել են ձեզ: Հետո կարող եք տեղափոխվել աստեղային ոլորտ և սրբել ձեր բացասական զգացմունքների բոլոր շերտանստվածքները:

Համարեք, որ իրականացնում եք ձեր բոլոր մարմինների հիմնարար մաքրում:

Կարող եք մտովի պատկերացնել, թե զգեստի պես հանում եք ձեր մենտալային կամ աստեղային մարմինը և թափ տալիս դրանց վրայից անկատար մտքերի կամ զգացմունքների ամբողջ փոշին:

Օդը ձեր օգնականն է:

Դուք կարող եք արևահարել ձեր մարմինները՝ դրանք պահելով ամառային բարկ արևի ճառագայթների տակ, որպեսզի արևը փոխակերպության ենթարկի ձեր կարմայի բոլոր հետքերը:

Արևը ձեր օգնականն է:

Կարող եք նաև պատկերացնել, թե ինչպես է մանուշակագույն բոցն անցնում ձեր բոլոր մարմինների միջով և ձեր չորս ստորին մարմիններում վառում այն ամենը, ինչն Աստծուց չէ:

Բոցը ձեր օգնականն է:

Այսօր սկսվում է Երկրի Կարմայական Վարչության նստաշրջանը: Դուք կարող եք ձեր նամակներով և խնդրանքներով դիմել Կարմայական Վարչությանը: Ձեր գործն օգնություն խնդրելն է, իսկ Կարմայական Վարչության գործն է քննարկել ձեր խնդրանքը և ցուցաբերել այն օգնությունը, որը կարող է ձեց հատկացվել տիեզերական ողորմածությամբ:

Խնդրեցեք հրեշտակներին, որ ձեր նամակը հասցնեն ըստ հասցեի. մի՛ մոռացեք դնել ամսաթիվն ու ձեր անուն-ազգանունը, որից հետո վառե՛ք նամակը: Եթե դուք պահպանեք ձեր նամակի պատճենը, ապա որոշ ժամանակ անց կնկատեք, որ Կարմայական Վարչությունից ձեր խնդրածի մեծ մասը, եթե ոչ ամբողջը, բավարարված է:

Մարդկության գլխին կախված կարմայի բեռը չափազանց ծանր է, և Համբարձյալ Դասերն օգտագործում են տառացիորեն յուրաքանչյուր նոր ծագած հնարավորություն, որպեսզի օգնեն ձեզ՝ Երկրի մարդկանց, որ գտնվում եք մարմնավորման մեջ: Մի՛ անտեսեք ձեզ շնորհված ողորմածությունն ու ընձեռված հնարավորությունները:

Տիեզերական Օրենքը մեզ չի թույլատրում միջամտել ձեր կարմային, եթե դուք չեք խնդրում մեզ դա անել: Բայց հենց որ կանչն առկա է, և այն լսվել է, Համբարձյալ Դասերը պատրաստ են լինում ձեզ ցուցաբերելու ամբողջ հնարավոր օգնությունը:

Սակայն չարժե, որ ձեր ամբողջ հույսը դնեք Համբարձյալ Դասերի վրա: Եթե մի անգամ մեկը խնդրում է, որ օգնենք իրեն՝ ազատվելու իր ուսից կախված ծանր կարմայից, օրինակ՝ պտղահեռացման կարմայից, ապա մենք օգնում ենք: Սակայն եթե որոշ ժամանակ անց այդ նույն մարդը նորից է կատարում այդ նույն կարմայածին արարքը, ապա այդ դեպքում Համբարձյալ Դասերի համար անհամեմատ դժվարանում է օգնություն ցուցաբերելը:

Ըստ այդմ՝ ամեն անգամ, երբ դուք օգնություն եք խնդրում անցյալում կատարած ձեր սխալ գործողությունների հետևանքներից ազատվելու համար, ապա գիտակցորեն պետք է հանձն առնեք ձեր կյանքում այլևս չկրկնել այն արարքները, որոնք հանգեցրել են կարմայի առաջացման:

Եվ եթե ձեզ համար դժվար է մշտապես հիշել կարմա չստեղծելու ձեր պարտավորությունը, ապա մաքուր թղթի վրա գրառեք այն ամբողջ բացասականը, որ ձեր ներսում ունեք և որից կուզենայիք ձերբազատվել: Եվ ամեն անգամ, երբ ձեռնամուխ կլինեք ձեր աղոթքային ծեսին, աղոթքի էներգիան ուղղեք այն էներգիաների ցրմանը, որոնք առկա են ձեր չորս ստորին մարմիններում և ծանր բեռի պես նստած են դրանց վրա հատկապես անցյալում կատարած ձեր ծանր արարքների հետևանքով:

Եթե կարմայի կամ հատուցման Օրենքի իմացությունը լայնորեն տարածված լիներ երկրաբանակների մեջ, հատկապես երիտասարդության շրջանում, ապա հնարավոր կլիներ կանխարգելել մարդկանց շատ արարքները, որոնք նրանք թույլ են տալիս իրենց անգիտության պատճառով:

Կարմայի իմացությունն առաջին քայլն է, որն անհրաժեշտ է յուրաքանչյուր անհատի, որ չմեղանչի և կյանքում գործի՝ առաջնորդվելով աստվածային սկզբունքներով:

Ուստի մոտակա ժամանակում ձեզնից յուրաքանչյուրի հիմնական խնդիրը թող լինի այն, որ հնարավորինս ավելի շատ մարդկանց ծանոթացնեք կարմայի կամ հատուցման Օրենքին:

Եվ լավագույնը կլինի ձեր անձնական օրինակը, որը ցույց կտաք ձեր երեխային, ձեր ընտանիքին, ձեր աշխատանքային ընկերներին:

Բացասական էներգիան չի կարող ինքն իրեն չքանալ, բայց բացասական կարման կարող է տարրալուծվել ձեր աղոթքների էներգիայով, նաև այն մտապատկերացումներով, որոնց մասին խոսեցի մեր զրույցի սկզբում: Իսկ բարի կարմայի էներգիան, որը դուք ստեղծում եք ձեր ճիշտ գործողություններով, ձեր խնդրանքով կարող է ուղղվել ձեր կարմայական բեռի թեթևացմանը կամ այն բանին, որ կարմայի բեռնաթափումը ձեզ համար ընթանա ամենաթեթև ճանապարհով:

Ձեր ոչ ճիշտ արարքների կարման ենթակա է պարտադիր բեռնաթափման, բայց դուք կարող եք դա անել, օրինակ՝ ընկնելով և ջարդվածք ստանալով կամ պարզապես ձեր գլուխն ազատելով թեթև վնասվածքով ու կապտուկով:

Ուստի խորհուրդ եմ տալիս, որ այսօր կամ մոտակա օրերին խնդրանքով դիմեք Կարմայական Վարչությանը: Դուք նաև կարող եք ձեր նամակում նշել, թե կոնկրետ ինչ եք պարտավորվում անել, որպեսզի ձեր բարի արարքների էներգիան նպատակաուղղվի ձեր կարմայական բեռի թեթևացմանը: Դա կարող է լինել, օրինակ, որոշակի ժամանակահատվածի ընթացքում որշակի քանակությամբ աղոթքներ կամ Վարդարաններ կարդալու պարտավորությունը: Կամ կարիքավորներին ու տկարներին օգնելու պարտավորությունը:

Վերցրեք միայն այնպիսի պարտավորություններ, որոնք հաստատ գիտեք, որ ի զորու եք կատարելու: Որովհետև երբ դուք չափազանց մեծ պարտավորություններ եք վերցնում՝ այն հույսով, որ ավելի մեծ կարմա կբեռնաթափեք, ապա հնարավոր է, որ չդիմանաք բեռնվածությանը: Հաշվի առեք, որ ձեզ հարկ կլինի կյանքում թեստեր անցնել և պահպանել գիտակցության ամենաբարձր վիճակը՝ անկախ բոլոր խոչընդոտներից և կյանքի խժդժություններից, որոնց ստիպված կլինեք բախվել:

Եվ բացասական թրթիռներն ու գրգռվածությունը, որ կունենաք վերցրած պարտավորություններից գլուխ չհանելու դեպքում, կարող են գերազանցել այն դրական արդյունքը, որը դուք ձեռք կբերեք ձեր ճիշտ գործողություններով ու արարքներով:

Ձեր խնդիրն այն չէ, որ մեղանչեք և հետո թողություն աղերսեք ձեր մեղքերի համար:

Ձեր խնդիրն այն է, որ նոր կարմա չստեղծեք: Հին կարման, այսպես թե այնպես, միևնույնն է, ձեզ հարկ կլինի բեռնաթափել: Ուստի ուշադիր եղեք, որ նոր կարմա չստեղծեք:

Այսօրվա զրույցը շատ օգտակար եղավ, քանի որ ձեզ տվեցի գործիքներ, որոնց ճիշտ կիրառությունը կդառնա Ուղով ձեր հաջող առաջընթացի գրավականը:

Հիշեք, որ ձեր իսկ անիրական մասը՝ ձեր էգոն, կօգտագործի ամեն մի հնարավորություն, որ ձեզ ուղղի կեղծ ուղով, համոզի ձեզ, որ ձեր աղոթքներն ու նամակներն արդյունք չեն տալիս. համոզի ձեզ, որ դուք այսօր չափազանց հոգնած եք և կարող եք ձեզ թույլ տալ թալկանալ և չկատարել վերցրած պարտավորությունները:

Դուք ստեղծել եք ձեր կարման միլիոնավոր տարիների ընթացքում՝ ձեր բազմաթիվ երկրային մարմնավորումների ընթացքում: Եվ ինչ՝ ուզում եք ձեր կարմայից ակնթարթորեն ազատվել... Եթե Օրենքը ձեզ թույլ տար ակնթարթորեն կրելու ձեր ամբողջ կարմայի վերադարձի հետևանքները, ապա ոչ մի մարդ նույնիսկ վայրկյանի մի կարճ պահ չէր դիմանա վրա եկող բացասական էներգիային: Այն տառացիորեն ցաքուցրիվ կաներ ձեզ, ձեր մարմինները: Ուստի կարմայի Օրենքը կարմայական ձեր պարտքերը ձեզ է վերադարձնում աստիճանաբար՝ ժամանակի նշանակալի հատվածի ընթացքում մարելու համար: Եվ օգնությունը, որը խնդրում եք, նույնպես չի կարող ձեզ ցուցաբերվել ակնթարթորեն: Ձեզ օգնություն ցուցաբերելու համար ժամանակ է պետք: Եվ այդ ժամանակը տարբեր կլինի՝ կախված կարմայի ծանրությունից, ձեր խնդրանքի բովանդակությունից և ձեզ վրա վերցրած պարտավորություններից:

Օգնության ցուցաբերման ժամկետը կարող է տարբեր լինել և կազմել վեց ամսից մինչև տասներկու տարի:

Ըստ այդմ՝ տրամադրվեք ամենօրյա աշխատանքի: Ձեր կյանքում հրաշքներ հնարավոր են, բայց դուք ինքներդ եք նախահիմքեր ստեղծում ձեր կյանքի այդ հրաշքների համար՝ բարի կարմայի ամենօրյա արարումով:

ԵՍ ԵՄ Սուրիան

ՎԵՀԱՊԵՏ ԿՈՒԹՀՈՒՄԻ

24 հունիսի, 2005 թ.

ՈՒՍՄՈՒՆՔ ՉԳՈՐԾԵԼՈՒ ԿԱՐՄԱՅԻ ՄԱՍԻՆ

ԵՍ ԵՄ Կութհումին՝ նորից եկածը:

Այսօրվա մեր զրույցը նվիրված կլինի չգործելու կարմային: Երբևիցե լսել էիք չգործելու կարմայի մասին: Ձեզ, իհարկե, թվում է, թե միայն ձեր գործողությունները կարող են կարմա ստեղծել: Մեր նախորդ զրույցներից դուք գիտեք, թե ինչ է կարման, և թե ինչպես է այն ստեղծվում: Նաև հնարավորություն եք ունեցել պատկերացում ստանալու բարի կարմայի մասին: Եվ ահա այժմ, վերադառնալով կարմայի թեմային, ես ցանկանում եմ ձեզ Ուսմունք տալ չգործելու կարմայի մասին: Պատկերացրեք, որ որևէ մեկը օգնության խնդրանքով դիմել է ձեզ, և դուք չեք ուզում օգնել: Արդյո՞ք դուք այդ դեպքում կարմա եք ստեղծում: Չէ՞ որ դուք ոչինչ չեք անում: Ոչ մի ջանք չեք գործադրում, որպեսզի օգնեք այն մարդուն, ով դիմել է ձեզ:

Երկրի մարդկանցից շատ-շատերը կարմա են ստեղծում հենց նրանով, որ ոչինչ չեն ձեռնարկում այն իրադրությունում, որի ընթացքում իրենք պետք է գործեն:

Ինչպես տեսնում եք, Աստծո Օրենքն այնպիսին է, որ դուք կարմա եք ստեղծում նույնիսկ այն դեպքում, երբ ոչինչ չեք անում:

Դուք ձեր աշխարհն եք գալիս, որպեսզի փորձ

ձեռք բերեք ու գործեք: Ուստի եթե դուք խուսափում եք գործելուց, ապա կարմա եք ստեղծում:

Թույլ տվեք բացատրություններ տալ այս հարցի շուրջ: Դուք հիշում եք այն մասին, որ կարման իրենից ներկայացնում է սխալ գործողությունների ընթացքում ձեր կողմից սխալ դասակարգված էներգիա: Եթե դուք Աստծո աշխարհից ձեզ հասած Աստծո էներգիան օգտագործում եք Աստծո Օրենքին համապատասխան, ապա դուք բարի կարմա եք ստեղծում՝ ձեր գանձը Երկնքում: Եթե սխալ եք օգտագործում Աստծո էներգիան, ապա այն բացասական էներգիայի տեսքով նստում է ձեր ստորին չորս մարմիններում: Եվ, համաձայն Աստծո Օրենքի, այդ էներգիան դեպի ձեզ է քաշում այնպիսի իրադրություններ, որոնք դուք պարտավոր եք անցնել նորից ու նորից, որպեսզի յուրացնեք դասը, ճիշտ ընտրություն կատարեք և դրանով բեռնաթափեք կարման: Օրինակ՝ եթե դուք նախանձում եք, մեկին նեղացնում եք, կամ չարախոսում, ապա կարմա եք ստեղծում: Եվ այդ կարման ամենայն հավանականությամբ կվերադառնա ձեզ այնպիսի իրավիճակների տեսքով, երբ ճիշտ նույնպիսի արարքներ կկատարվեն արդեն ձեր նկատմամբ. ձեզ կնախանձեն, կնեղացնեն կամ ձեր մասին կչարախոսեն: Եվ, որպեսզի բեռնաթափեք ձեր կարման, դուք բոլոր այդ իրավիճակներին պետք է վերաբերվեք խոնարհությամբ ու Աստծո Կամքին հնազանդվելով՝ առանց մեղադրելու նեղացնողներին, անսահման ներելով այն մարդկանց, ովքեր ձեզ վնաս են պատճառում:

Ահա թե ինչու էր Հիսուս ասում, որ պետք է ներել նաև յոթ անգամ յոթանասուներորդ դեպքում: Դուք երբեք չեք կարող իմանալ, թե անցյալ կյանքերում քանի անգամ եք նեղացրել մարդկանց և նրանց նկատմամբ թույլ տվել անվայել արարքներ:

Իսկ այժմ վերադառնանք չգործելու կարմային:

Ասենք, մեկը ձեզ է դիմել օգնության խնդրանքով: Եվ դուք նրան մերժում եք այդ օգնությունը: Ստեղծո՞ւմ եք արդյոք դրանով կարմա: Չէ՞ որ Աստծո էներգիա չեք ծախսում: Դուք պարզապես ոչինչ չեք ձեռնարկում: Այս իրադրությունն այնքան էլ պարզ չէ, որքան թվում է: Եվ կարմա ստեղծում եք թե ոչ՝ կախված է շատ հանգամանքներից:

Նախ և առաջ դուք պետք է վստահ լինեք, որ ձեզնից օգնություն խնդրողն իսկապես օգնության կարիք ունի: Եթե օգնության կարիք չունի, բայց դիմել է, և դուք այնուամենայնիվ այդ օգնությունը ցուցաբերել եք, ապա այդ դեպքում կարմա է ստեղծում օգնության խնդրանքով ձեզ դիմած մարդը: Այդ դեպքում ինքներդ կարմա չեք ստեղծում, բայց, այնուհանդերձ, անուղղակիորեն նպաստում եք, որ մի ուրիշ մարդ կարմա ստեղծի: Երբ դուք հասնում եք որոշակի հոգևոր մակարդակի, ապա պարտավոր եք հոգ տանել ոչ միայն ինքներդ ձեր մասին, այլ նաև օգնել մյուս մարդկանց՝ խուսափելու այնպիսի իրավիճակներից, որոնց դեպքում նրանք կարմա են ստեղծում:

Այժմ հաջորդ պահի մասին: Եթե օգնության խնդրանքով ձեզ դիմած մարդն իսկապես օգնության կարիք ունի, ապա նրան մերժելով՝ դուք կարմա չեք ստեղծում միայն այն դեպքում, եթե պարզապես հնարավորություն չունեք այդ մարդուն օգնություն ցուցաբերելու:

Շատ հնարավոր է, որ մարդը հայտնվել է դժվարին դրության մեջ և, իրոք, կարիք ունի օգնության, ասենք՝ դրամական օգնության: Բայց եթե դուք հնարավորություն չունեք այդ մարդուն օգնելու, կամ համարում եք, որ ձեր փողերով առաջին հերթին պետք է կերակրեք ձեր ընտանիքին, ապա այդ դեպքում դուք կարմա չեք ստեղծում: Միանգամայն հնարավոր է, որ ձեզ դիմած մարդն իր նախկին կյանքերից մեկում մերժել է ձեզ օգնել, երբ դուք դիմել եք իրեն, և հիմա դուք պարզապես վերադարձնում եք նրան ձեր վաղեմի կարմայական պարտքը:

Եվ վերջապես, այն դեպքում, երբ մեկն օգնության խնդրանքով դիմել է ձեզ, իսկապես օգնության կարիք ունի, և դուք էլ կարող եք օգնել, բայց մերժում եք, ապա դրանով դուք կարմա եք ստեղծում: Դուք պարտավոր եք օգնել օգնության խնդրանքով ձեզ դիմողներին: Եվ այն դեպքում, եթե կարող եք օգնել, բայց հրաժարվում եք դա անել, ապա ձեզ թվում է, թե եթե Աստծո էներգիան չեք ծախսում, ուրեմն կարմա չեք ստեղծում: Սակայն այն զգացմունքներն ու շարժառիթները, որոնցով առաջնորդվում եք որոշում կայացնելիս, ստիպում են ձեզ կարմա ստեղծել: Օրինակ՝ դուք ուզում եք օգնության խնդրանքով ձեզ դիմած մարդուն մի լավ դաս տալ, կամ ձեզ համար հաճելի է, երբ ինչ-որ մեկը ձեր առջև ստորանում է, կամ էլ ծուլանում եք օգնել, կամ ձեզ ագահությունն է տիրած լինում: Ինչպես թվարկված, այնպես էլ բոլոր մյուս այն հանգամանքները, որոնք ձեր մերժման իրական պատճառը կարող են լինել, ոչ աստվածային հատկանիշներ են, և, դրանք դրսևորելով, դուք կարմա եք ստեղծում:

Ուստի նախքան օգնության խնդրանքով ձեզ դիմած մարդուն մերժելը մշտապես շատ մանրազնին կերպով կշռադատեք բոլոր «թեր» և «դեմ» կողմերը:

Եվ դժվարին իրադրություններում ձեր լավագույն խորհրդատուն, անշուշտ, կլինի ձեր Բարձրագույն Ես-ը: Քանզի ձեր Բարձրագույն Ես-ը մշտապես գիտի՝ դուք պե՞տք է օգնություն ցուցաբերեք, թե՞ ոչ: Եթե ձեզ համար դժվար է ձեր Բարձրագույն Ես-ի հետ կապ հաստատելը, կամ վստահ չեք ստացված պատասխանի հարցում, ապա գոնե ուշադրությամբ վերլուծեք ձեր ներքին շարժառիթը, ձեր զգացմունքները: Կա՛մ դուք չեք ուզում մարդուն օգնել, քանի որ ալարում եք, կա՛մ չեք օգնում այն պատճառով, որ ափսոսում եք փողը կամ ժամանակը: Կամ թե՝ սկսում եք մեղադրել այդ մարդուն, որ այն աստիճանին է հասել, որ չի կարողանում ինքնուրույն լուծել իր խնդիրները:

Եթե նման մտքեր են ծագում ձեր գլխում, ապա հաղթահարե՛ք այդ մտքերը, ստիպե՛ք ինքներդ ձեզ, որ ցուցաբերեք այն օգնությունը, որը ձեզնից խնդրում են: Եվ այն բանից հետո, երբ այդ օգնությունը կցուցաբերեք, դուք թեթևություն կզգաք, իսկ դա կլինի այն բանի նշանը, որ դուք ճիշտ քայլ եք կատարել և բեռնաթափել եք ինչ-որ հին կարմա, որն անցյալից նստած է եղել ձեր ուսերին:

Եթե ոչ մի բացասական զգացմունք չունեք, բայց ձեր ինտուիցիան ձեզ հուշում է, որ դուք տվյալ մարդուն չպետք է օգնություն ցուցաբերեք՝ չնայած այն բանին, որ նա ունի այդ օգնության կարիքը, իսկ դուք էլ կարող եք այդ օգնությունը ցուցաբերել, ապա հարյուրից մեկ տոկոսով դա կարող է լինել թեստ, որը ձեր կողմից առաջադրվում է ձեզնից օգնություն խնդրող մարդուն: Բայց դա չափազանց հազվագյուտ դեպքերում է լինում, և դուք պետք է օժտված լինեք բարձր հոգևոր մակարդակով, անցած լինեք գուրուի պատմուճան ձեռք բերելու ձեռնադրումներով, որպեսզի այդպիսի թեստ առաջադրելու հնարավորություն ունենաք: Ուստի ես ձեզ խորհուրդ եմ տալիս մշտապես օգնություն ցուցաբերել օգնության խնդրանքով ձեզ դիմած մարդուն, եթե նա իսկապես օգնության կարիք ունի, և դուք էլ կարող եք ցուցաբերել այդ օգնությունը:

Իրականում ձեր աշխարհում ծագած խնդիրներից շատ-շատերը կապված են հատկապես այն բանի հետ, որ մարդիկ օգնություն են խնդրում ու չեն ստանում այն: Օրինակ՝ օգնության հարցով դիմում են այն պաշտոնյաներին, որոնք պաշտոնի բերումով պարտավոր են օգնություն ցուցաբերել և նույնիսկ դրա համար վարձատրվում են, բայց այնուամենայնիվ օգնություն չեն ցուցաբերում իրենց դիմած մարդկանց:

Միշտ պետք է հիշել, որ հաջորդ կյանքում ձեր տեղերը կփոխվեն, և այն պաշտոնյան, որն իր ծուլության երեսից հավուր պատշաճի չի կատարել իր պարտականությունը, արդեն կհայտնվի խնդրողի վիճակում և օգնության խնդրանքով կդիմի հենց այն անհատներին, որոնց ժամանակին ինքը մերժել է:

Ճիշտ նույնպիսի խնդիր է ծագում նաև այս աշխարհի ուժեղների հարցում, որոնց ձեռքում մեծ հարստություն կա կուտակված: Մեծ հարստությունը միշտ վկայում է մարդու ունեցած կարմայի մասին, որը նա ձեռք է բերել փողի նկատմամբ ոչ ճիշտ վերաբերմունքով:

Եվ հարստությունը տրվում է որպես հնարավորություն՝ կարման բեռնաթափելու համար: Ուստի նա, ում գլխին մեծ հարստություն է թափվել, կարման բեռնաթափելու նպատակով պետք է ուշադրությամբ վերլուծի, թե ինչպե՞ս տնօրինի իր հարստությունը, որպեսզի օգնություն ցուցաբերի, որքան հնարավոր է, մեծ թվով կարիքավորների: Ընդ որում օգնի հատկապես կարիքավորներին, այլ ոչ թե փողերը ծախսի ցուցադրական բարեգործության վրա: Քանզի եթե մարդը սխալ է տնօրինում տվյալ կյանքում իրեն բաժին հասած հարստությունը, այն վատնում է հաճույքներ ստանալու կամ պերճանքի առարկաներ ու հեղինակություն ձեռք բերելու համար, ապա 99 տոկոս վստահությամբ կարելի է ասել, որ հաջորդ կյանքում կարման նրան կվերադառնա այն տեսքով, որ ստիպված կլինի ծնվել շատ աղքատ ընտանիքում, ողջ կյանքում ողորմություն կխնդրի կամ չի կարողանա ծայրը ծայրին հասցնել: Ըստ այդմ, երբեք մի՛ նախանձեք այն մարդկանց, ովքեր մեծ հարստություն ունեն: Մեծ հարստությունը վկայում է ներկայումս ունեցած մեծ կարմայի մասին, իսկ այն ճիշտ չտնօրինելու դեպքում է՛լ ավելի մեծ կարմա է նրան վերադառնում ապագայում:

Կարծում եմ, որ այսօրվա զրույցն օգտակար եղավ: Համենայն դեպս, այս գիտելիքը ձեզ կարող է օգնել, որ ձեր կյանքում կարողանաք խուսափել չգործելու կարմայից:

ԵՍ ԵՄ Կութհումին

ՍԱՆԱՏ ԿՈՒՄԱՐԱ

25 հունիսի, 2005 թ.

ՕԳՏՎԵՑԵՔ ԱՍՏԾՈ ԿՈՂՄԻՑ ՁԵԶ ՇՆՈՐՀՎԱԾ՝ ՈՒՍՈՒՄ ԵՎ ԽՐԱՏՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան՝ իմ դեսպանորդի միջոցով նորից ձեզ այցի եկածը: Ամեն անգամվա հետ բարձրանում է այն թրթիռների մակարդակը, որոնք այս դեսպանորդի ֆիզիկական հաղորդչի և այս թելադրությունների միջոցով մենք իջեցնում ենք ֆիզիկական ոլորտ:

Մեր փորձ ձեռք բերելուն զուգընթաց հաջողվում է ասել ավելի շատ և փոխանցել ավելի հեշտ: Չնայած այն իրադրությունը, որը դեսպանորդի շուրջ ձևավորվում է ֆիզիկական և նուրբ ոլորտներում, երբեմն խոչընդոտում է, որ տեղեկությունը հաղորդենք առավել արդյունավետ կերպով:

Եթերային օկտավաներից թելադրություններ ընդունելու այս փորձը, որն ավելի քան երեք ու կես ամիսների ընթացքում առանց ընդհատվելու շարունակվում է ամեն օր, մեր կողմից կարող է շարունակվել մի պայմանով, որ կարողանանք հետագայում ևս պահպանել անցուղու և հաղորդչի մաքրությունը:

Փորձի էությունն այն է, որ հնարավորություն տրվի այն հոգիներին, ովքեր պատրաստ են մեր տեղեկատվությունն ընկալելուն, որ նրանք երկարատև ժամանակահատվածի ընթացքում առանց ընդհատման ամեն օր ստանան մեր էներգիան: Բանն այն է, որ ֆիզիկական աշխարհը նման է ճահճի, որը մարդկանց գիտակցությունը քաշում է կարծես ճահճատիղմի մեջ: Եվ երբ ձեր ոտքերը խրվում են այդ տիղմի մեջ, դուք միաժամանակ դեռևս չեք տագնապում. բայց գալիս է պահը, երբ տիղմն ավելի ու ավելի ուժեղ է քաշում ձեզ, և դուք այլևս ուժ չեք ունենում, որպեսզի ինքնուրույնաբար դուրս գաք դրա միջից: Ուստի մենք ձեզ տալիս ենք այս Ուսմունքի ճոպանը, որից կառչելով՝ կարող եք դուրս գալ զանգվածային գիտակցության ճահճատիղմից:

Մենք ձեզ հնարավորություն ենք տալիս Աստծո էներգիայի ամենօրյա չափաբաժին ստանալու այն ընթացքում, երբ ընթերցում եք այս թելադրությունները:

Նույնիսկ սովորական դպրոցում կամ քոլեջում, որպեսզի ինչ-որ բան կարողանաք սովորել, դուք պետք է ամեն օր հաճախեք պարապմունքներին և ջանքեր գործադրեք մատուցվող նյութը յուրացնելու համար: Առանց ձեր կողմից գործադրվող ամենօրյա ջանքերի և պարապմունքներին կանոնավորապես հաճախելու հազիվ թե ձեզ հաջողվի յուրացնել ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը: Աստվածային գիտության ուսուցումն ու աստվածային գիտելիքների ստացումը ոչնչով չեն տարբերվում ցանկացած ուրիշ ուսումից ու կրթությունից, որոնք դուք ստանում եք ֆիզիկական ոլորտում:

Ըստ այդմ՝ որքան ավելի կանոնավոր կարդաք այս թելադրությունները, այնքան ավելի մեծ արդյունքի և գիտակցության ավելի մեծ ընդլայնման կհասնեք:

Պետք չէ մոռանալ, որ դուք բոլորդ գտնվում եք Աստծո Իրականության ճանաչման տարբեր աստիճանների վրա: Եվ ձեզնից որոշների համար տեղեկատվության նույնիսկ այնպիսի պարզ շարադրանքը, որից մենք այժմ օգտվում ենք, կամ չափազանց բարդ կթվա, կամ էլ ձեզ կգրգռի հատկապես իր այդ պարզությամբ:

Եթե դուք դպրոցից հետո միանգամից հայտնվեիք համալսարանի վերջին կուրսում, ապա հազիվ թե կարողանայիք արագ հարմարվել և յուրացնել այն դրույթները, որոնք այնտեղ ուսուցանվում են, նույնիսկ եթե տեղեկատվությունը տրվեր ձեր մայրենի լեզվով և բավարար չափով պարզ շարադրանքով:

Ոչ միշտ է, որ շարադրանքի պարզությունը խոսում է մատուցվող նյութի պարզության մասին: Իր էությամբ Աստծո Ճշմարտությունը շատ պարզ է, բայց մարդկային գիտակցության կողմից նրա ընկալումը ոչ միշտ է տեղի ունենում: Որովհետև Աստծո Աշխարհն իր բնույթով և օրենքներով տարբերվում է ֆիզիկական աշխարհից: Եվ ձեզ վիճակվում է ճանաչել այն, ինչը չի ընկալվում ձեր ֆիզիկական զգայարաններով: Այստեղից էլ հենց ծագում են և՛ նյութի յուրացման դժվարությունները, և՛ կասկածները, և՛ ժամանակ հատկացնել չուզենալն այն առարկաների համար, որոնք, ինչպես ձեզ թվում է, ոչ մի կերպ կապված չեն ձեր կյանքի հետ: Իսկապես, այս Ուսմունքներում ցուցումներ չկան այն մասին, թե ինչպես երկրային կյանքում հասնել հաջողության, հարստություն և ճանաչում ձեռք բերել:

Այս թելադրություններում ոչինչ չկա այն մարդկանց համար, որոնք իրենց ուժերի կիրառման կիզակետում դրել են ֆիզիկական ոլորտն ու

նյութական աշխարհը: Նրանց համար այստեղ ոչ մի օգտակար տեղեկատվություն չկա: Քանզի այն ամենը, ինչի մասին խոսվում է այս Ուսմունքներում, անհրաժեշտ է ձեզ, որպեսզի բարձրացնեք ձեր գիտակցությունն այն անհրաժեշտ մակարդակի վրա, որը թույլ կտա ձեզ անցնել մի ուրիշ աշխարհ, ավելի նուրբ, ավելի բարձր թրթռումներ ունեցող աշխարհ:

Եվ եթե դուք հանդիպեք մարդու, որն ամբողջովին կենտրոնացած է նյութական աշխարհի վրա, և սկսեք պատմել նրան այն տեղեկությունների մասին, որոնք ձեռք եք բերել այս Ուսմունքներից, ապա ամենից առաջ այդ մարդը կմտածի, որ ձեր գլխում ամեն ինչ չէ, որ կարգին է: Եվ հնարավոր չէ հավատալ այն բանին, ինչը չի կարելի սեփական ձեռքերով շոշափել և սեփական աչքերով տեսնել: Դրա համար էլ ձեզ համար այդքան անհրաժեշտ է դառնում, որ նրբացվի շրջապատող իրականության ձեր ընկալումը:

Երբ դուք բազմաթիվ հեռուստահաղորդումներ եք դիտում կամ լսում եք ձեր ռադիոհաղորդումները, ապա կարելի է ասել, որ շատ զգայուն սարքով, որով կարելի միկրոնսներ տարբերել, դուք սկսում եք մեխ խփել: Ձեր օրգանիզմն իր բնույթով եզակի է, և այն թույլ է տալիս ձեզ զգալ նուրբ աշխարհները և զանազանել նուրբ աշխարհների թրթռանքները: Ըստ այդմ՝ օգտագործեք, խնդրեմ, ձեր օրգանիզմն ըստ իր նշանակության: Ձեզ հեռու պահեք ձեր աշխարհի բոլոր կոպիտ ու անկատար դրսևորումներից: Քանզի երբ դուք չափից դուրս շատ ուշադրություն եք հատկացնում ցանկացած անկատար գործունեության, իջեցնում եք ձեր թրթիռները և արդեն չեք կարողանում տարբերել այն, ինչը պատկանում է նուրբ աշխարհին, ինչպես նաև ձեր կյանքում չեք նկատում նուրբ աշխարհի դրսևորումները: Ձեր գիտակցությունը փոխվում է օրվա ընթացքում, փոխվում է օր օրի, և դրանով է բացատրվում, որ Ուսմունքի որոշ դրույթներ արձագանք են գտնում ձեր գիտակցության մեջ, իսկ որոշներն էլ գրգռում են:

Ուղով առաջընթացն ու Աստծո Իրականության ըմբռնումը կրում են շատ աստիճանական բնույթ: Եվ այդ պատճառով մենք այս թելադրություններով ձգտում ենք հնարավորինս երկար ժամանակով պահել ձեր թրթռումները բավականաչափ բարձր մակարդակի վրա, այնքան ժամանակով, մինչև ձեր գիտակցությունն ունակ կլինի զանազանելու ձեր աշխարհի կոպիտ թրթռումները և հեռու մնալու դրանցից՝ ելնելով ինքնապաշտպանության զգացումից:

Նախքան անվտանգ նավամատույցին հասնելը նավը հազարավոր մղոններ լողում է փոթորկոտ ծովով և մրրկածուփ օվկիանոսով: Եվ միայն հարազատ Տան հուշն ու ցամաք հասնելու ցանկությունն են ստիպում ծովագնացներին դիմանալու կյանքի փոթորիկների ճնշմանը:

Ձեր ճամփորդության ընթացքում ձեզ անհրաժեշտ է կողմնացույց, քարտեզ, և նաև անհրաժեշտ է կողմնացույցով, քարտեզով ու աստղերով կողմնորոշվելու հմտություն ունենալ, որպեսզի կարողանաք հասնել հարազատ Տան մոտ գտնվող անվտանգ նավամատույցին: Այդ պատճառով մենք ձեզ ուղղություն ենք տալիս, ցուցումներ ենք տալիս և խրատում ենք ձեր Ուղու ընթացքում: Բայց դուք միշտ պետք է հիշեք, որ կգա պահը, երբ դուք կարող եք միայնակ մնալ փոթորկուն ծովում: Եվ միայն ուսուցման ընթացքում ձեռք բերած ունակություններից ու հմտություններից կախված կլինի, թե կկարողանաք արդյոք հաղթահարել խոչընդոտներն ու հասնել անվտանգ նավամատույցին:

Ըստ այդմ՝ մի՛ ծուլացեք: Օգտագործեք ուսումնառության և խրատներ ստանալու այս աստվածաշնորհ հնարավորությունը: Տիրապետե՛ք քարտեզով, կողմնացույցով ու աստղերով ձեր Ուղին որոշելու հմտությանը:

Եվ ձեր կյանքի ոչ մի արտաքին հանգամանքի թույլ մի՛ տվեք խցկվելու ձեր և Աստծո Իրականության միջև:

Ես այսօր ձեզ ողջերթի խոսք եմ ասում, քանզի եթե դուք ձեր կյանքում չօգտագործեք ձեր ստացած գիտելիքները, ապա ուղղակիորեն Վեհապետների հետ հաղորդակցվելու ձեզ շնորհված հնարավորությունը կարող է դադարեցվել: Եվ ո՞վ գիտե, թե մեկ էլ երբ կստանաք այսպիսի հնարավորություն:

Կարելի է Աստծո հսկայական քանակի էներգիա ծախսել մեր կապուղու պահպանման համար, բայց եթե մենք չտեսնենք, որ այդ էներգիան յուրացվում է ձեր կողմից և կիրառվում ձեր կյանքում, ապա աստվածային հնարավորությունը կընդհատվի և էներգիան հետ կվերցվի:

Չէ՞ որ ինքներդ էլ չեք ջրում ձեր այգում գտնվող չոր ծառը: Ճիշտ նույն կերպ մենք գերադասում ենք իզուր տեղը չծախսել Աստծո թանկարժեք Էներգիան:

Ես հուսով եմ, որ դուք կգտնեք ազատ ոգի, որպեսզի առանձնանաք և ձեր սրտի անդորրության մեջ մտորեք իմ ասած խոսքերի շուրջ:

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան

ՎԵՀԱՊԵՏ ԼԱՆԵԼԼՈ

26 հունիսի, 2005 թ.

ՁԵԶՆԻՑ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐՆ ԻՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ Է ԹՈՂՆՈՒՄ ԵՐԿԻՐ ՄՈԼՈՐԱԿԻ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ

ԵՍ ԵՄ Լանելլոն՝ այս դեսպանորդի միջոցով նորից ձեզ այցի եկածը...

ԵՍ ԵՄ եկել, որ ձեզ հնարավորություն տամ ծանոթանալու իրերի ներկա վիճակին վերաբերող իմ մտքերին ու հայացքներին: Խոսքը վերաբերում է մոլորակին, և խոսքը վերաբերում է այն երկրին, որի լեզվով մենք տալիս ենք այս թելադրությունները:

Ներկա պահին աշխարհում ձևավորված իրադրությունը, թվում է, ոչ մի անակնկալ բան չի կանխանշում: Սակայն Երկրի ընդերքում թաքուն պրոցեսներ են ընթանում, որոնք աստիճանաբար ի հայտ են գալիս հրաբխային ակտիվության ու տարբեր արհավիրքների տեսքով:

Շատ սերտ կապ գոյություն ունի երկրակեղևի վիճակի ու մարդկության գիտակցության մակարդակի միջև, և ստորերկրյա ցնցումների ու երկրաշարժերի ուժով ու հաճախությամբ դուք կարող եք դատել Երկրին մոտ գտնվող նուրբ ոլորտում գոյություն ունեցող լարվածության մասին:

Երկիրը շատ զգայուն է այն ամենի նկատմամբ, ինչ տեղի է ունենում Երկրի մարդկության գիտակցության մեջ, մարդկության կոլեկտիվ գիտակցության մեջ:

Երկիրը կարելի դիտարկել որպես մայրական մարմին, որն ընդհանուր է եղել մոլորակը բնակեցրած քաղաքակրթությունների համար: Եվ, ինչպես մայրն է զգալի հեռավորությունից զգում բոլոր վտանգավոր իրադրությունները, որոնցում հայտնվում են իր զավակները, ճիշտ այդպես էլ Երկիրն արձագանքում է գիտակցության այն վտանգավոր վիճակներին, որոնք կապված են իր զավակների հետ: Որպեսզի նմանությունը լինի լիակատար ու վերջնական, կարող եք պատկերացնել, թե ինչպես է Մայր Երկիրը սկսում տագնապել, երբ իր անխելամիտ զավակներն իրենց գիտակցության մեջ մեծ աղավաղումներ են թույլ տալիս՝ անկատար մտքերի ու զգացմունքների տեսքով: Ինչպես ամեն մի մայր, Մայր Երկիրն էլ է սկսում անհանգստանալ ու տագնապել իր զավակների համար, և դա արտահայտվում է ստորերկրյա ակտիվության աճով:

Ըստ այդմ՝ որքան ավելի մեծ թվով մարդիկ պահպանեն գիտակցության բարձր մակարդակ և առաքեն իրենց Սերն ու երախտագիտությունը Մայր Երկրին, այնքան ավելի հանդարտ տեղի կունենան Երկրի մակերևույթի վրայի մայրցամաքների ու օվկիանոսների ուրվագծերի այն փոփոխությունները, որոնք անխուսափելիորեն վրա են հասնելու:

Յուրաքանչյուր նոր ռասա, որը ոտք է դնում Երկրի վրա, իր զարգացման ու ծաղկման համար պետք է ստանա նոր մայրցամաք:

Եվ դուք պետք է գիտակցեք, որ գալիս է այն դարաշրջանը, երբ մարմնավորվում է նոր՝ Վեցերորդ Արմատական երկրային Ռասան: Դեռևս այդ Ռասան տեղաբաշխվում է արդեն գոյություն ունեցող մայրցամաքների վրա, բայց հետագայում, երբ այդ Ռասան իր ազդեցությամբ գլխադասային տեղ կգրաղեցնի Երկրի էվոլյուցիայում, նա կստանա իր մայրցամաքը, որը Երկրից ծնունդ կառնի ներկայիս օվկիանոսի տեղում: Համապատասխանաբար, այնպիսի մայրցամաքները, ինչպիսիք են Եվրոպան, Ասիայի մի մասն ու երկու Ամերիկաները, աստիճանաբար կանցնեն ջրի տակ՝ իրենց բոլոր քաղաքներով ու դրանցում բնակվող մարդկանցով: Եվ այդ գործընթացը կարող է տեղի ունենալ աստիճանական ու անցավ կերպով՝ հազարավոր ու տասնյակ հազարավոր տարիների ընթացքում, բայց նաև կարող է տեղի ունենալ համարյա ակնթարթորեն, ճիշտ այնպես, ինչպես ջրի տակն անցավ Ատլանտիդա մայրցամաքը՝ Չորրորդ Արմատական Ռասայի մնացորդներով, որոնց վարքը հանգեցրեց այն բանին, որ համաղետը կրեց գլոբալ բնույթ: Եվ գործնականում ամբողջ մայրցամաքը՝ նրա մեծ մասը, սուզվեց ջրի տակ հաշված օրերի ընթացքում: Բնության կողմից ընձեռված այդ ժամանակի ընթացքում փրկվել հնարավոր չեղավ՝ չնայած կատարյալ նավերի ու կատարյալ թռչող սարքերի առկայությանը:

Ողջ փրկությունը գտնվում է ձեր գիտակցության մակարդակի մեջ: Եվ եթե ձեր գիտակցությունը բավարար բարձր մակարդակ ունի, որպեսզի կապ պահպանվի Համբարձյալ Դասերի հետ, ապա դուք նախապես զգուշացված կլինեք վրա հասնող համաղետի մասին և հնարավորություն կունենաք տապան կառուցելու կամ էլ նախապես հաստատվելու նոր երկրում:

Ըստ այդմ՝ եթե մարդկության զանգվածային գիտակցությունը մոտակա ժամանակում ունակ դառնա բարձրանալու ավելի բարձր աստիճանի վրա, ապա անխուսափելի արհավիրքները կընդ-

թանան աստիճական ու անցավ կերպով և կզբաղեցնեն նշանակալի ժամանակահատված: Իսկ եթե մարդկությունը գերադասի իր ազատ կամքով շարունակել փորձարարությունը և ականջ չդնի Աստծո Բանականության ձայնին, ապա արհավիրքը կկրի ավելի կտրուկ ու ավերիչ բնույթ: Իր զավակների համար անհանգստացած Երկրի համար ոչինչ չի արժենա, որ մեկ օրվա ընթացքում ջրի տակ անցկացնի այնպիսի աշխարհամասը, ինչպիսին ամբողջ Եվրոպան է:

Ես հասկանում եմ, որ ձեզ համար դժվար է հավատալ ձեզ սպառնացող վտանգին, քանի որ ձեր կյանքերի ընթացքում դուք նման բան չեք տեսել: Իսկ Ատլանտիդայի կործանման առասպելը՝ իր հարյուր հազարավոր բնակիչներով հանդերձ, պահպանվում է մարդկության հիշողության մեջ որպես ինչ-որ մի չափազանց ֆանտաստիկական բան, որին դժվար է հավատալ:

Սակայն, երբ դուք ձեր գիտակցությամբ հասնում եք որոշակի աստիճանի, ապա այն արդեն ձեզ թույլ է տալիս գիտակցելու այդ առասպելի իրական հիմքերը, և դուք նույնիսկ ունակ եք դառնում հիշելու Ատլանտիդայի վրա ունեցած ձեր մարմնավորումը: Եթե մայրցամաքի հետ սուզվել եք ջրի տակ, ապա մինչև այժմ դուք վախ կզգաք ու անգիտակից անհանգստություն՝ ամեն մի երկրաշարժի ժամանակ, որը տեղի կունենա ձեր ներկայիս կյանքի ընթացքում: Իսկ եթե Ատլանտիդայի կործանման ժամանակ դուք այն մարդկանց մեջ եք եղել, ովքեր ականջալուր են եղել մարգարեների ձայնին և ժամանակին լքել խորտակվող երկիրը, ապա այժմ էլ կգտնվեք այն մարդկանց շարքում, ովքեր ուշադրությամբ լսում են բոլոր մարգարեներին և աշխատում են իրենց կյանքում հաշվի առնել նրանց միջոցով տեղ հասած զգուշացումները:

Եթե հիմա նախապես ձեզ ասվի, թե ինչ է սպասվում Երկիր մոլորակին մոտակա ժամանակներում, ապա դա կարող է իրարանցում առաջացնել այն մարդկանց մեջ, ովքեր լավ հիշում են, որ մարգարեությունները երբեմն իրականություն են դառնում: Սակայն յուրաքանչյուր իրարանցում ոչ աստվածային դրսևորում է և առաջ կբերի Երկրի ավելի մեծ հուզում: Ուստի երբեք այն մարգարեություններում, որոնք նախատեսված են լայն զանգվածների համար, որևէ կոնկրետ բան չի ասվում այն արհավիրքի տեղի ու մեծության մասին, որն սպասվում է:

Սակայն կան մարդիկ, ովքեր նույնիսկ ամենաանշան ակնարկում ունակ են տեսնելու լուրջ սպառնալիքը և սկսելու իրենց աղոթքային գործունեությունը, որպեսզի չեզոքացնեն Երկրի մարդկության մտքերի ու զգացմունքների բացասական կուտակումները, որոնք հասել են վտանգավոր խտության աստիճանի: Նաև այդ մարդիկ փորձում են հանդարտեցնել ալեկոծված Մայր Երկրին՝ դեպի ուղիղ նրա սիրտն առաքելով իրենց սրտի Սերը:

Եվ շատ հաճախ այդ մարդկանց ջանքերը բավարար են լինում, որպեսզի կամ ընդհանրապես կանխարգելվի արհավիրքը, կամ էլ հետևանքները հասցվեն նվազագույն աստիճանի:

Ասվածին կարող եմ ավելացնել միայն այն, որ ձեզնից յուրաքանչյուրն իր ազդեցությունն է թողնում Երկիր մոլորակի իրադրության վրա:

Դուք կարող եք նույնիսկ ոչ թե աղոթել, այլ ուղղակի կանգնեցնել բացասական էներգիայի հոսքը: Ձեր սրտում կարող եք կարճ միացնել բացասական պարույրները և ձեր սրտի Սիրով դրանք վերածել վարդի թերթիկների:

Դուք օրվա ընթացքում մշտապես հետևում եք այն իրավիճակներին, որոնք Մայր Երկրին ստիպում են ալեկոծվել: Մտովի կամեցեք ձեր սրտի մեջ առնել այդ իրավիճակները և վերաձևափոխել դրանց հետևանքները: Մի՛ դատապարտեք այն մարդկանց, ովքեր իրենց շուրջն առաջացնում են բացասական դրսևորումներ և մասնակցում դրանց: Նրանց գիտակցությունը մթագնած վիճակում է, և նրանք ի վիճակի չեն գիտակցելու այն վնասը, որն իրենք պատճառում են Երկրին և, առաջին հերթին, իրենց: Թույլ տվեք, որ Աստված և Տիեզերական Օրենքն ուսուցանեն այդ մարդկանց ենթարկվել Աստծո Օրենքին: Ձեր խնդիրն է, եթե վկա եք դարձել բացասական, ավերիչ իրավիճակի, փորձել ձեզ վրա վերցնել այն բացասական էներգիայի բեռնաթափումը, որը մյուս մարդկանց ոչ ճիշտ գործողությունների ընթացքում նստեցվում է ֆիզիկական, աստեղային և մենտալային պլաններում: Նրանք չեն գիտակցում, թե ինչ են անում, բայց դուք գիտակցում եք: Ուստի ձեր դատապարտմամբ լրացուցիչ բացասական էներգիա մի՛ ավելացրեք ընդհանուր պղտոր հոսանքի մեջ: Ձեր էներգիայով մի՛ սնուցեք անկատարությունը: Պարզապես էներգիան դուրս քաշեք անկատարությունից և փորձեք ձեր աղոթքների ու չակրաների օգնությամբ վերամշակել գոյացած բացասական էներգիան: Հավատացեք, որ դրանով անհամեմատ ավելի լավ արդյունքի կհասնեք, քան եթե փորձեք խրատ կարդալ Երկրի անկառավարելի ու գազազած զավակների գլխին:

Մարգարեությունն արտաբերված է, և տա՛ Աստված, որ այն իրողություն չդառնա:

ԵՍ ԵՄ Լանելլոն

ՎԵՀԱՊԵՏ ԷԼ ՄՈՐԻԱ

27 հունիսի, 2005 թ.

ԱՍՏԾՈ ՆՈՐ ՈՂՈՐՄԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԵՍ ԵՄ Էլ Մորիան, կրկին ձեզ այցի եմ եկել:

Մեր հանդիպումից հետո տեղի է ունեցել կարևոր իրադարձություն, որի մասին կուզենայի պատմել մեր այսօրվա զրույցի ընթացքում: Ձեզ հայտնի է արդեն, որ յուրաքանչյուր ամսի 23-ին ձեզ հնարավորություն է տրված աղոթքների, պատվիրանների, Վարդարանների կամ մանտրաների ընթերցման միջոցով բեռնաթափելու հաջորդ ամսվա կարման:

Տեղյակ եք նաև, որ հունիսի 23-ին սկսվել է Կարմայական Վարչության նստաշրջանը, որը կընթանա երկու շաբաթ: Այդ նստաշրջանի ընթացքում արդեն որոշում է ընդունվել, որ հաջորդ ամսից սկսած՝ 2005 թ.-ի հուլիսի 23-ին և հաջորդ յուրաքանչյուր ամսվա 23-ին՝ ներառյալ այս տարվա դեկտեմբերի 23-ը, դուք ձեր անձնական կարմայի և մոլորակի կարմայի փոխակերպության աննախադեպ հնարավորություն եք ստանում:

Ձեզնից նրանք, ովքեր յուրաքանչյուր ամսվա 23-ին ժամանակ կգտնեն այն ոչ բարդ ծեսի համար, որը ստորև ես կնկարագրեմ, պայմաններ կստեղծեն իրենց առաջընթացի և գիտակցության նոր մակարդակի անցման համար: Նախկինում նման հնարավորություն երբեք տրված չի եղել:

Դուք առայժմ այս հնարավորությունից կարող եք օգտվել մինչև տարվա վերջը: Եվ դուք կտեսնեք, թե ձեր գիտակցությունը որքա՜ն առաջ կընթանա դեպի ավելի բարձր մակարդակներ: Իրականում այն, ինչը հեռացնում է ավելի բարձր գիտակցության մակարդակից, ձեր կարման է: Այն գմբեթի պես փակում է ձեզ, և դուք չեք կարող իրերը տեսնել այնպիսին, ինչպիսին նրանք իրականում կան, որովհետև ձեզ խանգարում են ձեր չորս ստորին մարմիններում առկա բացասական էներգիաները:

Եթե մինչև տարվա վերջ յուրաքանչյուր ամսի 23-ին բավականաչափ մեծ թվով մարդիկ գոնե օրվա մեջ մեկ ժամ հատկացնեն հաջորդ ամսվա կարմայի փոխակերպությանը, ապա այդ ուղղությամբ ձեր ջանքերը կբազմապատկվեն այն մարդկանց թվաքանակով, որոնք մինչև տարվա վերջ կմասնակցեն այդ աղոթքային արթնությանը:

Այսպես, օրինակ՝ եթե դուք հուլիսի 23-ին, օգոստոսի 23-ին, սեպտեմբերի 23-ին, հոկտեմբերի 23-ին և դեկտեմբերի 23-ին մասնակցեք հաջորդ ամսվա կարմայի փոխակերպությանը, և եթե ձեզ հետ միասին երկրագնդի վրա այդ արթնությանը մասնակցի 1000 մարդ, ապա ձեր ջանքերը կբազմապատկվեն հազարապատիկ: Եթե ամսի 23-ի արթնությանը մասնակցի 10000 մարդ, ապա ձեր ջանքերը կբազմապատկվեն 10000-ով:

Ուստի խնդրում եմ ձեզ լրջորեն վերաբերվել այս նոր՝ Աստծո կողմից ձեզ պարգևված հնարավորությանը: Բաց մի՛ թողեք ձեր հնարավորությունը:

Մենք լավ ենք գիտակցում, որ այն մարդկանց մեջ, ովքեր կարդում են այս թելադրությունները, կան տարբեր հոգևոր ուղղությունների պատկանող մարդիկ, որոնց աղոթքային գործառությունները տարբեր են իրարից:

Սակայն դուք մի՛ անհանգստացեք, որ չեք միավորվում ընդհանուր աղոթքով:

Օգտագործեք այն աղոթքներն ու պատվիրանները, որոնց սովոր եք:

Ամենակարևորը ձեր գիտակցության մղվածությունն է: Ձեր ամբողջ էությամբ դուք պետք է ձգտեք ձեր ջանքերի համախմբմանը հազարավոր լուսակիրների ջանքերի հետ, որոնք սփռված են ամբողջ երկրագնդով մեկ: Պատկերացրեք, թե որքա՛ն Լույս կհորդի այդ օրերին: Այն ամբողջովին կնպատակամղվի ձեր կոչերին համապատասխան և կուժեղացվի այնքան անգամ, որքան մարդ կմասնակցի թվարկածս յուրաքանչյուր ամսվա 23-ի արթնությանը:

Եվ եթե դուք սովոր չեք աղոթքի ծեսի, ապա կարող եք ժամ ընտրել, և այն հատկացնել հատուկ ընտրված ծեսի: Դրա հետ մեկտեղ դուք կարող եք անել ձեր ամենօրյա գործերը, օրինակ՝ հավաքել բնակարանը, զբաղվել ձեր հողամասում կամ լինել սովորական աշխատանքի տեղում, բայց մշտապես պետք է գտնվեք ձեզ համար հնարավոր ամենաբարձր գիտակցության վիճակում և այն ամբողջ էներգիան, որը տվյալ պահին ձեզ է հասնում Աստծո իրական Աշխարհից, հատկացնեք հաջորդ ամսվա կարմայի փոխակերպության գործին:

Օրվա ընթացքում կատարեք ձեր սովորական ամենօրյա աշխատանքը և դրա հետ մեկտեղ մշտապես պատկերացրեք, թե բյուրեղյա լարով ինչպես է էներգիան հասնում ձեր սրտին. այնուհետև ձեր ուշադրությամբ այն նպատակաուղղեք դեպի ձեր և մոլորակի այն իրավիճակները, որոնք վերափոխություն են պահանջում:

Դուք կարող եք և չիմանալ, թե ինչպես կլուծվեն կյանքում ձեր առջև ծառացած խնդիրները: Պարզապես Աստծո էներգիան առաքեք դեպի տվյալ իրավիճակը և խնդրեք, որ այդ էներգիան

օգտագործվի այդ իրավիճակի աստվածային հանգուցալուծման նպատակով:

Եթե ձեր կյանքի հանգամանքները թույլ են տալիս, ապա այդ արթնությանը դուք կարող եք հատկացնել մեկից ավելի ժամեր, եթե ձեզ համար դա հոգնեցուցիչ չլինի:

Երկիրը կարիք ունի հիմնարար մաքրման: Եկեք համատեղ մեր բոլոր ջանքերն ուղղենք այն բանին, որ այդ մաքրումն իրականություն դառնա մինչև տարեվերջ:

Հիշեցե՛ք, ձեր մղումների և ձեր սրտերի մաքրությունից է կախված ձեր առաքած Աստծո էներգիայի այն հոսքի մեծությունը, որը կբազմապատկվի: Այդ պատճառով, եթե դուք փորձեք այս թողության շնորհն օգտագործել ձեր շահադիտական նպատակների և ձեր անձնական հաշիվների մաքրման համար, ապա ձեզ համար կարմա կստեղծեք, որը նույնպես կբազմապատկվի այն մարդկանց թվաքանակին համապատասխան, որոնք մասնակցում են արթնությանը: Ըստ այդմ՝ եթե ձեր շարժառիթը բավարար մաքուր չէ, ապա ավելի լավ է ձեռնպահ մնաք այդ արթնությանը մասնակցելուց:

Ցավոք սրտի, այդպիսին է ձեր աշխարհի յուրահատկությունը. յուրաքանչյուր թողության շնորհ, յուրաքանչյուր աստվածային ողորմածություն վերածվում է երկու ծայրով մահակի: Քանզի ձեր աշխարհը հենց այն վայրն է, որտեղ ընթանում է որոմը հատիկից ջոկելու գործընթացը: Եվ դուք ինքներդ եք ձեր ներսում բաժանում կատարում, թե ինչն է Աստծուց, ինչը՝ ոչ:

Ոմանց համար այս թողության շնորհը կհանգեցնի իրենց գիտակցության աննախադեպ աճի այն դեպքում, երբ որոշներն էլ վերջնական ընտրություն կկատարեն, թե ում են ծառայելու:

Դուք կարող եք նույնիսկ չմտորել այն մասին, թե ուր կուղղվի ձեր էներգիան: Այն կօգտագործվի լավագույն ձևով: Պարզապես ցանկացեք այդ օրը ձեզ հատկացված Աստծո էներգիան ծառայեցնել ձեր անձնական կարմայի, ձեր երկրի կարմայի, մոլորակի կարմայի փոխակերպության գործին:

Եվ որքան անշահախնդրորեն դուք զոհաբերեք ձեր էներգիան, այնքան ավելի արագ ու ճիշտ կհանգուցալուծվեն ձեր կյանքի կարմայական իրավիճակները:

Բարձրագույն Օրենքին թույլ տվեք օգտագործել ձեր էներգիան. պայմաններ մի՛ դրեք Աստծո առաջ, թե ինչպես դուք կկամենայիք, որ լուծվեն իրավիճակները:

Աստված բոլորին հնարավորություն է տալիս ուղղելու ցանկացած սխալ: Միայն թե կամեցե՛ք մշտապես հետևել Աստծո Կամքին: Նույնիսկ եթե հիվանդության պատճառով գամված եք անկողնուն կամ անդամալույծի սայլակին և հնարավորություն չունեք ո՛չ աղոթք կարդալու, ո՛չ աշխատելու, ապա պարզապես առաքեք ձեր սերն այն Վեհապետին, որի հետ առանձնահատուկ կապվածություն եք զգում: Թող դա լինի Մարիամ Աստվածածինը, Հիսուսը կամ Սեն-Ժերմենը: Ձեր սերն այն ամենալավ, ամենամաքուր էներգիան է, որն անպայման կբազմապատկվի բոլոր դեպքերում:

Ես ուզում եմ խոսքս ավարտել նրանով, որ ձեզնից յուրաքանչյուրը հնարավորություն ունի օգտվելու այս թողության շնորհից: Ձեզնից յուրաքանչյուրը հնարավորություն ունի վեր հանելու իր գիտակցությունն ավելի բարձր մակարդակի վրա՝ ազատվելով կարմայի մի հսկայական կտորից: Սակայն դրա համար դուք պետք է գործադրեք ձեր սրտի բոլոր ջանքերը: Դուք դա պետք է անեք բաց սրտով, անկեղծորեն: Միայն ձեր սեփական մաքրությունն ու անկեղծությունն են որոշում, թե մինչև տարեվերջ դուք կստանա՞ք արդյոք ձեր պարգևը՝ աստվածային գիտակցության նոր աստիճանը: Աշխատեցեք ցած չսահել՝ ենթարկվելով ձեր անմաքուր մտքերին ու մղումներին:

Ես հուսով եմ, որ մենք կկարողանանք հանդիպել տարվա վերջին և ամփոփել ձեր առջև բացված այս նոր հնարավորության արդյունքը:

ԵՍ ԵՄ Էլ Մորիան՝
ձեր հաջողության Հավատով լի

ՏԵՐ ՀԻՍՈՒՍ

28 հունիսի, 2005 թ.

ԴՈՒՔ ՉԵՔ ԿԱՐՈՂ ԱՌԵՎՏՈՒՐ ԱՆԵԼ ԱՍՏԾՈ ՀԵՏ

ԵՍ ԵՄ Հիսուս՝ նորից ձեզ այցի եկածը:

Այսօր ես կուզենայի անդրադառնալ ևս մի թեմայի, որը կարող է ձեզ համար օգտակար լինել, բայց և դուք կարող եք դրան առանձնակի նշանակություն չտալ՝ պատրանքային աշխարհով ձեր կլանվածության պատճառով:

Ինչպես միշտ, ձեր ուշադրությունը գրավում են ձեզ շրջապատող պատրանքին պատկանող իրերը: Եվ ձեզ համար շատ դժվար է լինում վեր հանել ձեր գիտակցությունը և բարձրանալ Աստծո Իրականության ընկալման այն մակարդակի վրա, որի դեպքում ձեզ շրջապատող ամեն ինչ աղոտանում ու խամրում է այն գեղեցկության, հույզերի ու մղումների համեմատ, որոնք դուք կարող եք ստանալ մեր աշխարհից:

Այնուամենայնիվ երկվության աշխարհում ձեր ներկայիս վիճակն ամենից լավն է նպաստում ձեր զարգացմանն ու առաջընթացին: Ձեր Ուղու վրա կա մի կետ, որից հետո այլևս չեք կարողանա ձեզ բավարարված զգալ այն ամենով, ինչը ձեզ շրջապատում է պատրանքային աշխարհում: Եվ մեր ու ձեր հիմնական խնդիրը ձեր Ուղու այդ կետին հասնելն է: Եթե դա համեմատելու լինենք լեռնագագաթի նվաճման հետ, ապա պատկերացրեք, որ մագլցում եք մերկ ժայռերով, անցնում եք նեղ կիրճերով և հանկարծ հայտնվում եք մի բացատում, որտեղից այնպիսի կախարդիչ տեսարան է բացվում, որ ձեր աչքերը լցվում են արցունքով, և դուք հասկանում եք, որ հանուն այդ տեսարանով հիանալու՝ արժեր մագլցել, արժեր կյանքը վտանգել և արժեր ինքն իրեն հաղթահարել:

Եվ դուք հասկանում եք, որ ձեր կապվածությունն այն աշխարհի հետ, որը թողել եք հետևում, աստճանաբար վերանում է, և դուք միաձուլվում եք նոր բացված աշխարհի գեղեցկությանը, այլևս չի մնում ոչինչ, որ ձեզ հետ քաշի դեպի այն աշխարհը, որը լքել եք հավերժորեն: Քանզի չնայած այն բանին, որ դուք շարունակում եք քայլել ֆիզիկական աշխարհում, այլևս նրան չեք պատկանում: Ձեր մեջ այլևս չկա ոչինչ, որ այդ աշխարհից լինի: Ձեր մեջ այլևս չկա ոչ մի այնպիսի էներգիա, որը ձեզ քաշի դեպի պատրանքների աշխարհը:

Այնուամենայնիվ դուք շարունակում եք մնալ ձեր աշխարհում, քանի որ լիովին գիտակցում եք, որ շատ են ձեր օգնության ու ձեր փորձի կարիքն ունեցողները:

Դուք տեսնում եք մարդկանց տառապանքների պատճառը, տեսնում եք, թե ինչու են նրանք տառապում, նաև հասկանում եք, թե ինչպես կարող են նրանք ազատվել այդ տառապանքներից: Եվ չնայած դուք շատ պարզ լեզվով այդ մարդկանց ասում եք շատ պարզ բաներ, նրանցից շատ քչերն են ունակ լինում ձեզ հասկանալու:

Ես ինքս եղա Երկրի վրա, խոսեցի մարդկանց հետ: Հազարավոր ժամերով ես հաղորդակցվեցի մարդկանց հետ: Փորձեցի նրանց գիտակցությանը հասցնել բաներ, որոնց գիտակցումն ինձ համար հնարավոր էր դարձել այն բանի շնորհիվ, որ ես ցանկացա ազատվել իմ անիրական մասից և բաժանվեցի նրանից: Սակայն, որքան էլ փորձեցի պարզ խոսել մարդկանց հետ, միայն տասներկու աշակերտներս կարողացան մասնակիորեն հասկանալ իմ տված Ճշմարտությունը:

Նույնը ձեր ժամանակներում է: Որքան էլ լավ ու մատչելի ձևով տրվեն գիտելիքներն այս դեսպանորդի կամ ցանկացած ուրիշի միջոցով, շատ քիչ մարդիկ ունակ կլինեն իրենց սրտով ընդունելու տրվող Ուսմունքի էությունը, և շատ ավելի քիչ կլինեն այդ Ուղով ընթանալ ցանկացողները:

Մենք Ճշմարտությունը տալիս ենք բաց ձևով: Մոտեցե՛ք մեր սեղանին: Դուք կարող եք վերցնել այն ամենը, ինչ ուզում է ձեր հոգին: Եվ միակ վարձը, որը դուք անխուսափելիորեն պետք է վճարեք, ձեր անիրական ես-ն է, որը դուք կամովին պետք է զոհաբերեք Աստծուն, Կյանքին և Լույսի Ուժերի Հիերարխիային ծառայելու զոհասեղանի առաջ:

Ես տեսնում եմ, թե ինչպես են բոցավառվում սույն թելադրությունները ընթերցող շատերի սրտերը: Տեսնում եմ, թե ինչպես է բոցավառվում նրանց մղման հուրը: Եվ որքա՜ն ցավալի է լինում տեսնելը, թե ինչպես է մարդը վերադառնում այն հարթ ճանապարհին, որն անվտանգ է թվում, և որը, բացի մահից, ուրիշ ոչ մի տեղ չի տանում:

Դուք անմահ հոգիներ եք: Եվ ցավալի է դիտելը, թե ինչպես եք ինքներդ ձեզ շրջապատում անպետք ու փուչ բաներով և փորձում սպասավորություն խաղալ՝ փոխանակ անկեղծորեն ծառայելու:

Ինչպե՞ս է ձեզ հաջողվում Աստծուն ու Սպասավորությանը վերաբերող գեղեցիկ խոսքերը համատեղել կարիերայի, բարեկեցության, անհոգ անգործության հասնելուն ուղղված մանր-մունր մղումներով լի ձեր կյանքի հետ:

Ձեզ չի հաջողվի անվերջ իրար հետ համատեղել այդ երկու իրար հակառակ բաները: Վաղ

թե ուշ կգա այն պահը, երբ ստիպված կլինեք ընտրություն կատարելու, թե ում եք ծառայելու:

Կշարունակե՞ք ծառայել ձեր աշխարհի Ոսկե Հորթին, թե՞ կընտրեք Աստծուն ու Կյանքին իրապես ծառայելը: Ես ասել եմ, որ հնարավոր չէ երկու տիրոջ ծառա լինել: Չեք կարող ծառայել և՛ Աստծուն, և՛ մամոնային:

Ես այդ խոսքերն ասել եմ երկու հազար տարի առաջ: Եվ դեռևս ձեզնից յուրաքանչյուրն իր կյանքում բախվում է այդ նույն երկընտրանքին:

Աստված ձեզ ամբողջությա՛մբ է ուզում: Դուք չեք կարող առևտուր անել Աստծո հետ: Դուք չեք կարող ասել. «Ահա, Տե՛ր, ես սա անում եմ հանուն քեզ, իսկ դու, Տե՛ր, արա այն, ինչ ես խնդրում եմ»:

Որքա՞ն գոռոզ պետք է լինի մարդ, որ առևտրի մեջ մտնի Աստծո հետ:

Դուք Աստծո տաճարն եք գալիս միայն այնժամ, երբ բախվում եք աղետների ու դժբախտությունների, հիվանդությունների ու դառնությունների: Եվ ձեր՝ տաճար մուտք գործելն ամբողջովին կապված է լինում Աստծո հետ գործարքի մեջ մտնելու հետ. մոմ վառեք, ձեր խնդիրների բարեհաջող լուծումը խնդրեք:

Ի՞նչ է, դուք լրջորեն հույս եք տածում, որ Աստված կարձագանքի՞ ձեր խնդրանքին:

Դուք կարծում եք, որ ձեր «մատաղներով» կկարողանաք գնե՞լ Աստծո ողորմածությունը:

Աստծուն ձեր «մատաղները» պետք չեն: Ո՛չ ձեր ոսկե հորթերը, ո՛չ փողերը: Աստված ուզում է, որ դուք տաք միայն մեկ բան՝ ձե՛ր իսկ անիրական մասը, ձեր ներսի այն ամենը, ինչ Աստծուց չէ:

Այնքա՞ն պարզ բան է սա... Բայց, չգիտես ինչու, դուք չեք կարողանում դա հասկանալ: Ամեն մի մարգարե կամ Ուսուցիչ, գալով աշխարհ, ուսուցանում էր միայն այս Մեծ Ճշմարտությունը: Եվ հիմա ևս դուք ստանում եք նույն այն Ճշմարտությունը, որը ես քարոզում էի 2000 տարի առաջ: Դուք ստեղծել եք կատարյալ թռչող սարքեր, Տիեզերք եք թռչում, սուզվում եք օվկիանոսի հատակը, ստեղծել եք կատարյալ համակարգիչներ ու կապի միջոցներ: Դուք ձեր միտքն ուղղել եք պատրանքի կատարելագործմանը: Բայց ինչո՞ւ դուք ձեր այդ զարգացած ուղեղով չեք կարողանում հասկանալ Աստծո պարզ Ճշմարտությունը: Քանի որ ձեր խելքը մարմնական խելք է՝ խելք, որը պատկանում է ձեր աշխարհին և ծառայում է ձեր աշխարհին: Ուստի ձեր առաջնահերթ խնդիրն է հրաժարվել ձեր մարմնական խելքից: Հրաժարվել այն ամենից, ինչը ձեզ կապում է ձեր պատրանքային աշխարհի հետ:

Դա չի նշանակում, որ դուք պետք է հեռանաք տնից ու աղքատ կյանք վարեք: Չնայած ոմանց համար դա էլ օգտակար կլիներ: Դուք պետք է ձեր գիտակցությունն ազատեք ձեր աշխարհի հետ ունեցած բոլոր կապերից: Դուք, իհարկե, կարող եք շարունակել ապրել ձեր աշխարհում, բայց միայն այն բանի համար, որ մյուսների համար օրինակ դարձնեք այն Ուղին, որով ընթացել եք:

Ձեզնից յուրաքանչյուրն ընթանում է իր ուրույն Ուղով, բայց, ընդհանուր հաշվով, ճիշտ կարելի է համարել միայն մի Ուղի՝ սեփական էգոյից և ձեր աշխարհի հետ ունեցած բոլոր կապվածություններից հրաժարվելու Ուղին: Եվ մեծագույն մեղք է ձեր այն ցանկությունը, որ ստիպեք Աստծուն ծառայել ձեզ:

Հենց այդ հարցում է, որ սայթաքել են շատ հոգիներ: Դուք օգտագործում եք Աստծո էներգիան, որ ի կատար ածեք ձեր էգոյի քմայքներն ու ցանկությունները՝ փոխանակ խոնարհությամբ ծնկի իջնեք Աստծո առաջ և ասեք.

«Տե՛ր, ահա ես, վերցրո՛ւ ինձ, Տե՛ր, օգտագործի՛ր ինձ: Ես քո ստրուկն եմ: Ես ոչինչ եմ, Տե՛ր, իսկ դու՝ ամեն ինչ»:

Մտորե՛ք այսօրվա իմ խոսքերի շուրջ: Հնարավոր է՝ ձեզ կթվա, թե իմ խոսքերը չափազանց խիստ հնչեցին, և որ այդ խոսքերը ձեզ հետ ոչ մի առնչություն չունեն:

Սակայն մի՛ շտապեք հետևություններ անել և նախ վերլուծեք ձեր արարքներն ու ձեր գործերը:

Քանզի իմ խոսքերը հրատապ նշանակություն ունեն մարմնավորված մարդկանց 99,99 տոկոսի համար:

Ես ստիպված եղա խստաշունչ խրատ կարդալ, քանզի շատերը հենց այդպիսի խիստ խոսքերի կարիքն ունեն, որպեսզի պատրանքային աշխարհի ոսկեզօծումը ցրիվ գա իրենց համար, փառն ընկնի աչքերից, որ վերջապես ողջ իրենց էությամբ ընկալեն Աստծո Ճշմարտությունն ու ամբողջ սրտով մղվեն դեպի այն:

Ես գիտեմ, որ ձեզնից յուրաքանչյուրը կհասնի Հաղթանակի և կդիմանա ու կհաղթի այն պատրանքին, որը գոյատևում է միլիոնավոր տարիներ, բայց կգտնի իր վերջը: Քանզի պատրանքային աշխարհը, ի տարբերություն Աստծո Աշխարհի, ունի իր սկիզբն ու վերջը:

Շտապեցե՛ք ձեր Ուղով հասնելու իրական Աշխարհ: Այնպես չլինի, որ դարպասները փակվեն ուղիղ ձեր քթի դեմ:

ԵՍ ԵՄ Հիսուս

ՎԵՀԱՊԵՏ ԿՈՒԹՀՈՒՄԻ

29 հունիսի, 2005 թ.

ՊԱՏՐԱ՞ՍՏ ԵՔ ԱՐԴՅՈՔ ՈՒՂՂՈՎ ԸՆԹԱՆԱԼՈՒ

ԵՍ ԵՄ Կութհումին՝ այս օրով ձեզ այցի եկածը:

Համբարձյալ Դասերի հոգսը մարդկության գիտակցության բարձրացումն է: Մենք այդ խնդրին ենք հատկացնում մեր անխոնջ ուշադրությունը և դրա իրականացման համար գործադրում ենք մեր բոլոր ջանքերը: Եթե մեզ հաջողվեր մարդկային գիտակցության հսկա կառույցը տեղաշարժել գոնե մի միլիմետրով, ապա ձեզ շրջապատող աշխարհի փոփոխությունները չէին հապաղի իրենց դրսևորել:

Ըստ էության, մատերիական աշխարհում չկա ոչինչ, որն այնքան դժվար լիներ փոխելը, որքան մարդկային գիտակցությունն է: Քանզի մնացած ամեն ինչը ենթարկվում է գիտակցության փոփոխությանը և փոխվում է շատ արագ ու համարյա ինքնաբերաբար:

Ըստ այդմ՝ մեր և ձեր առաջնահերթ խնդիրն այն է, որ փոխենք այն մարդկանց գիտակցությունը, ովքեր այժմ գտնվում են մարմնավորման մեջ:

Ես ձեզ մի պարզ օրինակ կբերեմ: Եթե դուք ինչ-որ աշխատանք պետք է կատարեք, ապա նախ ձեր գիտակցության մեջ պետք է կազմեք այդ աշխատանքի պլանը կամ ձեր գիտակցության մեջ պետք է պատկերացում ունենաք, թե ինչին պետք է հասնեք ձեր աշխատանքի ընթացքում և ինչպիսին պետք է լինի ձեր գործունեության արդյունքը: Ճիշտ նույնն է նաև մարդկային գիտակցությունը փոխելու աշխատանքը: Մարդկությունն իր մեծամասնությամբ պետք է գիտակցի գիտակցությունը փոխելու անհրաժեշտությունը և պատկերացում ունենա, թե ինչ ուղղությամբ և ինչ քայլեր պետք է ձեռնարկվեն: Մնացածն ընդամենը տեխնիկայի հարց է: Եվ մտադրվածը կիրականացվի ինքնաբերաբար ու անխուսափելիորեն, հենց որ մարդկանց գլուխներում հուսալիորեն ամրապնդվի այն կերպարը, դեպի որը նրանք պետք է մղվեն: Ուստի այն ուժերը, որոնք բազմապատկում են ֆիզիկական աշխարհի պատրանքները, շատ լավ սովորել են օգտագործել գիտության և տեխնիկայի նվաճումները, որպեսզի մարդկանց գիտակցության մեջ պահպանեն ոչ ճիշտ վարքի կարծրատիպերն ու նմուշօրինակները, որոնցով մարդիկ առաջնորդվում են իրենց կյանքում:

Ժամանակակից աշխարհի ամբողջ հզոր արդյունաբերությունն ուղղված է հատկապես այն բանին, որ բազմապատկվի պատրանքը: Մարդկության լավագույն ուղեղներն իրենց ջանքերը գործադրում են, որպեսզի մարդկանց ուշադրությունը սևեռվի միայն պատրանքը բազմապատկող բաների վրա: Իսկ ձեզ հայտնի է, որ որտեղ կենտրոնացված է ձեր ուշադրությունը, այնտեղ էլ հոսում է ձեր էներգիան: Ուստի, չխուսափելով գովազդային հոլովակները, գովազդային ուղեցույցներն ու ցուցատախտակները դիտելուց, ինքնաբերաբար դուք ձեր էներգիան ներդնում եք ձեր աշխարհի պատրանքի բազմապատկման գործում: Կատարելության հասած արդյունաբերությունը ոչ մի սահման չի ճանաչում, որպեսզի Աստծո էներգիան օգտագործի պատրանքի բազմապատկման համար: Մարդիկ ջանում են ձեռք բերել հենց այն առարկաները, որոնք իրենց գիտակցությանն են փաթաթվում դրսից: Բորբոքվում է մանր-մունր իրերին տիրանալու ցանկությունը: Եվ մարդը, նորանոր իրերի հետևից ընկնելով, ավելի ու ավելի շատ ճիգ ու էներգիա է ծախսում: Նրան այլևս չի բավարարում Աստծուց ստացած Էներգիան, և, որպեսզի շարունակի իր մրցավազքը, ինքն իրեն խթանում է հաճկատարությամբ իրեն տրամադրվող խթանիչներով ու ցավազրկիչներով:

Եվ արդեն 40-ին մոտ տարիքում մարդկանց մեծամասնության ներսն այնքան է ամայացած լինում իրերի ու հաճույքների այդ անվերջանալի մրցավազքի պատճառով, որ նրանց գիտակցությունը պարզապես ունակ չի լինում ընկալելու այն բաները, որոնց մասին խոսվում է այս թելադրություններում:

Սակայն մարդկանց այն տարիքը, երբ տեղի է ունենում այդ ներքին ամայացումը, տարեցտարի ավելի է փոքրանում: Եվ շատ ու շատ ջահելներ արդեն մանուկ հասակից կցվում են ձեր աշխարհի իրերի ու հաճույքների անվերջ մրցավազքին: Եվ այդ գլխապտույտը շարունակվում է կյանքից կյանք: Իսկ հիմա իրեր ու հաճույքներ ձեռք բերելու կրքերն այնքան են շիկացել, որ արդեն շատ քչերն են կարողանում դիմանալ հաճույքների ու վայելքների այդ կատաղի մրցավազքին:

Եվ միայն ծանր հիվանդության կամ սնանկացման պատճառով այդ մրցավազքից դուրս մնալով ու կոտրած տաշտակի առաջ հայտնվելով է, որ մարդը վերջապես սկսում է մտորել ամենապարզ բաների մասին, որոնց մասին պետք է մտորեր հենց իր կյանքի արշալույսից սկսած: Ինչո՞ւ է եկել այս աշխարհը: Ո՞րն է իր գոյության իմաստն այս աշխարհում:

Ուստի ցանկալի կլիներ, որ դուք ձեր կյանքը չհասցնեիք կործանման եզրին, որ հետո նոր

միայն մտածեիք այնպիսի կարևոր բաների մասին, ինչպիսին, օրինակ, ֆիզիկական աշխարհում ձեր գոյության իմաստն է: Մի՛ հասցրեք ձեր կյանքը նավաբեկության շեմին: Ուժ գտեք ձեր մեջ կանգ առնելու, մի կողմ քաշվելու հաճույքներ, իրեր ու վայելքներ ձեռք բերելու կատաղի մրցավազքից: Եվ փորձեցեք կողքից դիտել այն մարդկանց, ովքեր վատնում են իրենց անգին կյանքը, Աստծու շնորհած էներգիան, որպեսզի բազմապատկեն պատրանքը, քանի որ նրանց բոլոր մտքերն ու մղումներն ամբողջությամբ կենտրոնացված են պատրանքային աշխարհի վրա:

Ձեր խնդիրն է գիտակցել ձեր կյանքի այն պահերը, երբ ձեզ հատկացված Աստծո Էներգիան ծախսում եք ոչ թե Աստծո, այլ ձեր աշխարհին հատուկ նպատակներով: Ձեր սահմաններից դուրս ոչ ոք չկա, ով ձեզ ստիպեր մղվելու դեպի հերթական մանր իրը ձեռք բերելը, հաճույք ստանալը մոդայիկ համերգից, ֆուտբոլային խաղից կամ համբավավոր առողջարանում հանգստանալուց: Դուք և միայն դուք եք ստիպում ինքներդ ձեզ, որ վազեք այդ անպետք բաների հետևից: Ձեր ցանկությունները, ձեր մարմնական խելքն ու ձեր ներսի անիրական ամեն ինչն են ստիպում ձեզ: Հենց այդ պատճառով է տրվում այս Ուսմունքը, ձեր անիրական մասից ձերբազատվելու Ուսմունքը: Հիշեցեք պատմությունը, հիշեք այն մարգարեներին, ովքեր քարկոծվում էին ու խաչվում: Ինչո՞ւ էր դա տեղի ունենում: Քանզի հանուն ֆիզիկական աշխարհում հաճույքներ ստանալը շարունակելու՝ մարդկային խելքը պատրաստ է սպանել յուրաքանչյուրին, ով քարոզում է պատրանքային աշխարհից հրաժարվելու Ուղին:

Ըստ էության, մարմնավորված բոլոր այդ մարդիկ ենթարկված են իրենց մարմնական խելքին: Եվ, որպեսզի մարդը գիտակցի իր վիճակի անհեթեթությունը, Աստված մարդուն կանգնեցնում է այնպիսի իրադրությունների առաջ, որոնցից նա կարող է իր համար առավել կարևոր դասեր առնել: Եվ ամեն անգամ, երբ մարդը հայտնվում է այնպիսի իրադրության մեջ, որից պետք է դաս քաղի, այդ իրադրությունը ժամանակի հետ դառնում է ավելի ու ավելի սուր, մինչև հասնում է անհեթեթության աստիճանի, երբ նույնիսկ կույրն ու խուլը կհասկանային այն դասի իմաստը, որ հրամցնում է կյանքը: Ձեզնից յուրաքանչյուրն իր կյանքի ընթացքում բախվում է այդպիսի իրադրությունների: Եվ ձեզնից յուրաքանչյուրին բազմաթիվ անգամ հնարավորություն է տրվում կատարելու միակ ճիշտ ընտրությունը, սակայն դուք ձեր մարմնական խելքի դրդմամբ գերադասում եք հրաժարվել այդ ընտրությունից և շարունակում եք ծառայել ձեր աշխարհի իրեղենին:

Աստված համբերատար է: Աստված շատ համբերատար է: Եվ երբեմն, որպեսզի մարդը գիտակցի իր մեն մի հատկանիշը, որից ինքը պետք է ձերբազատվի, ծախսվում է ամբողջ կյանքը, երբեմն էլ՝ մի քանի կյանքեր:

Դուք առջևում դեռ ժամանակ ունեք, որպեսզի ճանաչեք ձեր ներսի բոլոր թերությունները և ձերբազատվեք դրանցից: Բայց ձեզ համար ամենակարևորը կլինի ձեր էգոյից հրաժարվելու, Աստծո իրական Աշխարհը վերադառնալու Ուղով ընթանալու ընտրությունն անելը:

Հարկ եղած ուղղությամբ կատարած ձեր ամենաառաջին և ամենակարևոր քայլը ձեզ համար կարող է դառնալ այնքան վճռորոշ, որ հաշված տարիների ընթացքում կփոխի ձեր ողջ կյանքը: Կարելի է ևս մի քանի միլիոն տարի ծախսել պատրանքային աշխարհում թափառելու վրա: Բայց այն դեպքում, երբ դուք քայլ եք կատարում ճիշտ ուղղությամբ և հետո շարունակում եք ընթանալ՝ անկախ այդ Ուղու վրա ձեզ հանդիպած դժվարություններից ու փորձություններից, դուք ճիշտ ընտրություն եք կատարում, և ձեր այդ ընտրությունը երաշխիք կհանդիսանա ձեր հաղթանակի, պատրանքային աշխարհից դուրս գալու և Աստծո Աշխարհ մուտք գործելու համար:

Ձեր աշխարհը գոյություն ունի միայն ձեր գիտակցության մեջ. ձեր գիտակցությամբ դուք նպաստում եք այդ աշխարհի գոյատևմանը: Ուստի պետք է անցնեք գիտակցության ու ձեր շրջապատի իրականությունը հասկանալու նոր մակարդակի վրա, որպեսզի լքեք ֆիզիկական աշխարհն ու ձեռք բերեք աստվածային ազատություն: Ոչ ոք՝ ոչ մի մարդ, չի կարող ձեզ ստիպել, որ դուք կատարեք ձեր ընտրությունը: Միայն դուք ինքներդ կարող եք ձեր առանձնության ու սրտի անդորրության մեջ կայացնել այդ ճակատագրական որոշումը:

Երբեք մի՛ մոռացեք, որ ֆիզիկական աշխարհում դուք ոչ մի պարգև չեք ստանա, և երբեք մի՛ մտածեք ֆիզիկական աշխարհում ձեզ համար ինչոր արտոնություններ ձեռք բերելու մասին: Ձեր բոլոր նվաճումներն ու ամբողջ փորձը կմնան ձեզ հետ այս տիեզերքի գոյության ողջ ընթացքում և ձեզ հետ միասին կանցնեն Բարձրագույն Աշխարհներ:

Պատրաստ եք արդյոք կանգնելու Ուղու վրա և, խոչընդոտներն ու պատնեշները հաղթահարելով, ընթանալու դեպի ձեր հաղթանակը:

Շատերին է կանչ հղվում, բայց արդյոք շատե՞ր են ընտրվում:

ԵՍ ԵՄ Կութհումին՝
ի սրտե ձեր Նկատմամբ հույսով

ՎԵՀԱՊԵՏ ԷԼ ՄՈՐԻԱ

30 հունիսի, 2005 թ.

ԵՍ ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՄ ՁԵԶ ԱՅՍ ԿԱՐԵՎՈՐ ՓՈՐՁԻ ՀԱՋՈՂ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԹԻՎ՝ ԿԱՊՎԱԾ ՀՐԱՏԱՊ ՈՒ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՈԼՈՐՏ ՀԱՍՑՆԵԼՈՒ ՀԵՏ

ԵՍ ԵՄ Էլ Մորիա Խանը՝ այս դեսպանորդի միջոցով այս օրով ձեզ այցի եկածը:

Իրադարձություններն այնքան արագ տեմպով են ծավալվում, որ պահանջվում են մարմնավորված տառացիորեն բոլոր լուսակիրների ջանքերը: Ես չգիտեմ՝ զգո՞ւմ եք դուք արդյոք այն փոփոխությունները, որոնք տեղի են ունենում էլ ավելի մեծ ուժով ու արագացմամբ: Հիրավի, եկել է շատ արագ ու միահամուռ գործելու ժամանակը: Ովքեր դա չեն զգում ու հասկանում, արժանի են կարեկցանքի, քանզի դուրս են մնում ժամանակից և փորձում են ապրել հին դրվածքով, ամեն ինչին մոտենալ հին չափանիշներով:

Սկսվել է Նոր Դարաշրջան, որին տառացիորեն ընթացքի պահին դուք պետք է հարմարեցնեք ձեր գիտակցությունը: Քանզի այն ռիթմը, որը մոտ ապագայում սպասվում է ձեզ, կպահանջի ձեր բոլոր ջանքերը, ձեր բոլոր մղումներն ու ձեր սրտերի ամբողջ կրակը:

Ըստ այդմ՝ եթե նույնիսկ ձեզ թվում է, թե ձեր շուրջը ոչինչ չի փոխվել ու մնացել է առաջվա պես, մի՛ հավատացեք ձեր աչքերին: Ամեն ինչ է փոխվել: Եվ փոխվել է այնքան վճռականորեն ու անվերադարձ, որ ձեր ողջ երևակայությունը չի հերիքի, որ պատկերացնեք այն փոփոխությունները, որոնք սպասվում են կամ արդեն տեղի են ունենում, բայց դեռևս տեսանելի չեն ձեր ֆիզիկական աչքերի համար: Մենք սկսել ենք մեր ընթացքը: Եվ առաջարկում ենք բոլորին, ովքեր արթուն են, ովքեր գիտակցում են վրա հասնող փուլի կարևորությունն ու պատրաստ են գործելու, որ նախապատրաստվեն առանց իրենց խնայելու: Շատ շուտով դուք նույնպես՝ ձեզնից յուրաքանչյուրը, ձեր երկրում ու ձեր քաղաքում կզգաք այն փոփոխությունները, որոնք սկիզբ են առել:

Ձեզ համար դժվար է դրան հավատալ, քանի որ ձեր շուրջն ամեն ինչ մնացել է կարծես նախկինի պես: Բայց ես վստահեցնում եմ ձեզ, որ այն ամենակարևոր փոփոխությունը, որին մենք ձգտում էինք հասնել վերջին մեկուկես հարյուրամյակի ընթացքում, արդեն իրականացել է: Տեղի է ունեցել մարմնավորված բավարար թվով մարդկանց գիտակցության փոփոխություն, ինչի արդյունքը ֆիզիկական ոլորտում միանգամայն զգալի դրսևորում կգտնի: Այն ժամկետները, որոնց ընթացքում գիտակցության այդ փոփոխությունները կնստեցվեն Երկիր մոլորակի ֆիզիկական ոլորտում, նույնպես կարճացված են: Կար ժամանակ, երբ գիտակցության փոփոխությունները ֆիզիկական ոլորտում նստեցվում էին տասնյակ ու հարյուրավոր տարիների ընթացքում: Իսկ հիմա, եթե ձեր գիտակցությունը փոփոխություն կրի, ապա մի գիշեր էլ չի անցնի, և ձեր գիտակցության փոփոխությունն իր ազդեցությունը կունենա ձեր գործերի վրա: Ես պարզեցված եմ խոսում, որպեսզի դուք գոնե պատկերացում ստանաք վրա հասնող ժամանակների ու հնարավորության մասին:

Շատ շուտով դուք ձեր կյանքերում կկարողանաք նկատել այն հետևանքները, որոնք արդյունք են ձեր փոփոխված գիտակցության: Իսկ եթե դուք ոչ մի փոփոխություն չնկատեք, ապա դա ընդամենը կարելի է բացատրել մի բանով. դուք իզուր եք ժամանակ վատնել այս թելադրությունները կարդալու համար, քանի որ այն ամենակարևոր բանը, որի համար տրվել են այս թելադրությունները, աչքաթող եք արել. չեք կարողացել փոխել ձեր գիտակցությունը: Դուք կորցրել եք ձեր թանկագին ժամանակը և ձեռքից բաց եք թողել Աստծո կողմից ձեզ շնորհված հնարավորությունը:

Դուք առաջվա պես մտածել եք, որ այս թելադրություններում գեղեցիկ բաներ կկարդաք, և դա է բոլորը, ինչ ձեզ անհրաժեշտ է: Սխալվել եք, քանի որ, գեղեցիկ խոսքեր կարդալուց բացի, ձեզնից պահանջվել են կոնկրետ գործողություններ, որոնք 100 տոկոս հավանականությամբ կհանգեցնեին արդյունքի՝ ձեր գիտակցության փոփոխությանը, եթե միայն չծուլանայիք և թելադրությունները կարդայիք ոչ թե որպես խոսքեր, այլ ուղեցույց՝ ձեր պրակտիկ գործողությունների ու ֆիզիկական ոլորտի ձեր գործերի համար:

Ի՞նչ արած, նրան, ով բաց է թողել ձեռնադրումների արագացված դասընթաց անցնելու և գիտակցությունը փոխելու պատեհ առիթը, հնարավորություն կտրվի մնալու նույն դասարանում և նորից կարդալու այս դեսպանորդի միջոցով տրված թելադրությունները՝ սկսած այս տարվա

մարտի 4-ին տրված թելադրությունից: Եվ եթե դուք նորից ձեր գիտակցության մեջ ու ձեր կյանքում ոչ մի փոփոխություն չզգաք, ապա խորհուրդ եմ տալիս երրորդ անգամ կարդալ դրանք:

Դուք անգնահատելի, միանգամայն առանձնահատուկ շնորհ եք ստացել՝ այս թելադրությունների տեսքով: Դուք նույնիսկ չեք կարող պատկերացնել, թե որքան էներգիա է ծախսվել Համբարձյալ Դասերի կողմից, որպեսզի այս թելադրությունները համացանցի միջոցով հասցվեն ուղղակի ձեր տուն: Որքան շատ հրեշտակներ են մասնակցել գործին: Ես էլ չեմ ասում այն ճիգերի մասին, որոնք այս թելադրություններն ընդունելիս գործադրել է Տատյանան:

Դուք նույնիսկ չեք կարող երևակայել, թե ինչ է նշանակում դիմանալ տեղեկատվության ու էներգիայի ամենօրյա այդ հոսքին:

Փորձի սկզբում մեզնից ոչ մեկը վստահ չէր, որ մեզ կհաջողվի այդքան սեղմ ժամկետներում այդքան կարևոր տեղեկատվության այդպիսի մեծ ծավալի փոխանցում իրականացնել: Բայց այժմ մենք կարող ենք համարձակորեն հայտարարել, որ փորձը հաջողությամբ է պսակվել: Գործն արված է և արված է հրաշալի՛ կերպով:

Ես շնորհավորում եմ ձեզ, ես շնորհավորում եմ Տատյանային այս կարևոր փորձի հաջող իրականացման առթիվ՝ կապված հրատապ ու կարևորագույն տեղեկատվությունը ֆիզիկական ոլորտ հասցնելու հետ: Աշխատանքը կշարունակվի, բայց ամենագլխավոր փուլն արդեն հետևում է, տեղեկատվական փուլը, երբ մոլորակի ֆիզիկական ոլորտ է հասել հատկապես ընթացիկ պահի համար այդքան կարևոր տեղեկատվությունը: Դուք հնարավորություն կունենաք ստանալու բոլոր անհրաժեշտ պարզաբանումները: Եվ մենք մեր դեսպանորդ Տատյանայի հետ կշարունակենք մեր աշխատանքը:

Գալիս է նոր փուլ, մի փուլ, երբ թելադրություններում պարունակված տեղեկատվությունը ծիլեր կտա մարդկանց սրտերում: Եվ յուրաքանչյուրը կկարողանա կիրառություն գտնել իր բոլոր ուժերի ու ունակությունների համար: Գործը բոլորին կհերիքի: Ֆիզիկական ոլորտի ձևափոխության գործը դեռ նոր է սկսվում: Եվ ամեն ոք, ով կարողացել է արթնացնել իր գիտակցությունն ու վառել բոցն իր սրտում, գիտելիքի, տեղեկատվության ու էներգիայի աղբյուր կդառնա այն բոլոր մարդկանց համար, ում կհանդիպի իր կյանքում: Ձեր՝ լուսակիրներիդ խնդիրն այն է, որ մշտապես վառ պահեք ձեր ջահերն ու Լույս տաք աշխարհին:

Յուրաքանչյուր ոք, ով այս թելադրությունները կարդալու ընթացքում կարողացել է արթնացնել իր գիտակցությունը, ինձնից կստանա ցանցի նուրբ մի թել, որով կկարողանա կապվել ինձ հետ և օժանդակություն ստանալ դժվարին պահին:

Հարկ կլինի միայն հղել հետևյալ կոչը. *«Հանուն ԵՍ ԵՄ ՈՐ ԵՄ-ի գործի եմ կոչում այն թելը, որն ինձ կապում է Վեհապետ Էլ Մորիայի հետ: Վեհապե'տ Էլ Մորիա, խնդրում եմ օգնել ինձ այս իրադրության մեջ (մանրամասն նկարագրեք իրադրությունը): Օգնի՛ր ինձ՝ ապրվածային լուծում գտնելու իմ այս իրադրության համար՝ այն օգնության սահմաններում, ինչ թույլ է տալիս ցուցաբերել Բարձրագույն Օրենքը»:*

Հենց որ հղվի այս կոչը, ես կօգնեմ յուրաքանչյուրին, ով իր աշխատանքով վաստակել է ինձ հետ անձնական, անհատական կապ ունենալու իրավունքը: Դուք անպայման կզգաք այդ կապի թելը, որով ձեր սրտերը կկապվեն իմ սրտի հետ: Եվ շատերն արդեն իսկ զգում են այդ կապը:

ԵՍ ԵՄ Էլ Մորիան,
պնդում եմ, որ Աստծո հետ ամեն ինչ
հնարավոր է դառնում...

ՍԱՆԱՏ ԿՈՒՄԱՐԱ

5 օգոստոսի, 2005 թ.

ԻՆՉՊԻՍԻ ՄԵԹՈԴԻԿԱՆԵՐ ԵՎ ԻՆՉՊԻՍԻ ԳՈՐԾԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՀԱՆՁՆԱՐԱՐՎԱԾ, ԵՎ ՈՐՈՆՔ ԵՆ, ՈՐ ՊԵՏՔ Է ԻՐԱԳՈՐԾՎԵՆ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿՈՒՄ

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան:

Քո այն հարցը, թե ինչպիսի՞ մեթոդիկաներ և գործառություններ են հանձնարարված, և թե դրանցից որո՞նք պետք է իրագործվեն ներկա ժամանակում, կարող եմ պարզաբանել հետևյալով:

Հենց որ մարդկությունը հասնում է իր զարգացման որոշակի մակարդակի, վերանում է խստորեն հանձնարարվող գործառությունների միջոցով ծառայություն իրականացնելու անհրաժեշտությունը:

Ամեն մի անհատ ունակ է դառնում ինքն իր համար որոշելու, թե որ մեթոդիկան է իր համար ընդունելի, և թե ինչպիսի գործառության հետևի:

Որոշակի մեթոդիկաներ տալը քո խնդիրը չէ:

Կհայտնվեն մարդիկ, և արդեն հայտնվում են, որոնք կկարողանան իրենց հետևից տանել ուրիշներին՝ օգտվելով այն մեթոդիկաներից, որոնք նրանք ուղղակիորեն կստանան իրենց Բարձրագույն Ես-ից:

Գլխավոր պայմանն է Հիերարխիայի հետ պահպանել համալարվածությունը և աշխարհների միջև կապը պահպանել այն հաղորդիչների միջոցով, որոնց մենք ընտրել ենք մեր նպատակների իրագործման համար: Եվ դու հանդիսանում ես այդ հաղորդիչներից մեկը:

Ըստ այդմ՝ յուրաքանչյուր մարդ, ով ընդունում է քեզ՝ որպես մեր դեսպանորդի՝ որպես մեր ներկայացուցչի ֆիզիկական ոլորտում, միաժամանակ կանգնում է Հիերարխիայի աստիճանի վրա և օգտվում է քո նվաճումների ամբողջ պաշարից ու մեր օժանդակությունից, որն անմիջականորեն նրան կմատուցվի իր Բարձրագույն Ես-ի միջոցով:

Այն բանին զուգընթաց, որ մենք կհետևենք իրադրության զարգացմանը և կվերլուծենք այն, կկարողանանք տալ նաև անհրաժեշտ խորհուրդներ ու հանձնարարականներ:

Առայժմ անհրաժեշտ է օգտագործել այն հմտությունները, որոնց տիրապետում են մարդիկ, և կիրառել դրանք:

Եվ հատուկ ուշադրություն եմ հրավիրում այն բանի վրա, որ ֆիզիկական ոլորտում գլխավոր ծառայությունը գործնական քայլերն են:

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան

ՍԱՆԱՏ ԿՈՒՄԱՐԱ

7 հոկտեմբերի, 2005 թ.

ԵԿԵԼ Է ՄՈԼՈՐԱԿԻ ԲՈԼՈՐ ԼՈՒՍԱՎՈՐ ՈՒԺԵՐԻ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան: ԵՍ ԵՄ եկել, որպեսզի ոչ մեծ մի հանձնարարական տամ Սանկտ-Պետերբուրգ քաղաք մեր Դեսպանորդի սպասվող այցի մասին:

Թվում է, թե Տատյանայի միջոցով այս տարի տրված թելադրությունների ժամանակահատվածի ավարտից հետո ձեզ շրջապատող իրականության մեջ շատ քիչ բան է փոխվել: Սակայն թո՛ւյլ տվեք

ձեզ հետ չհամաձայնել: Գիտակցության այն փոփոխությունները, որոնք տեղի ունեցան մեր թելադրություններն ընթերցել ցանկացող մարդկանց մոտ, գերազանցեցին մեր բոլոր սպասելիքները: Եվ մեզ մնում է միայն ափսոսալ, որ մեր ուղերձները չհասան ֆիզիկական աշխարհում տարածվելու այն աստիճանին, որը մենք ակնկալում էինք:

Այսպիսով, մի կողմից մենք տեսնում ենք գիտակցության զարգացման հսկայական թռիչք նրանց համար, ովքեր կարդացին թելադրությունները և դրանք ընդունեցին ամբողջ հոգով ու սրտով: Մյուս կողմից՝ մենք տեսնում ենք այն լուսակիրների կատարյալ թշվառ վիճակը, որոնք հնար չունեցան հասնելու այդ ուղերձներին, հետևաբար չկարողացան ժամանակին ըմպել մեր կենարար էներգիան, որն ուղղակի անհրաժեշտություն է այս բարդ ժամանակներում:

Ըստ այդմ՝ իմ խնդրանքը մնում է նույնը. խնդրում եմ, կիրառեք բոլոր անհրաժեշտ ջանքերը, որ այդ ուղերձները հասնեն յուրաքանչյուր լուսակրի ոչ միայն Ռուսաստանում, այլ նաև ամբողջ աշխարհում:

Պետերբուրգի բնակիչները, այդ քաղաքին բնորոշ և 1917 թվականի դեպքերի հետ կապված կարմայական պատճառներից ելնելով, միանգամայն օրինաչափորեն պետք է, որքան կարող են, ներդնեն իրենց բոլոր ջանքերը տվյալ ուղերձների տարածման համար: Այդ պատճառով, մարդկանց առջև դեսպանորդի առաջին հրապարակային ելույթը կկայանա Սանկտ Պետերբուրգ քաղաքում: Բոլոր նախորդ ելույթները, ինչպես դուք գիտեք, անց են կացվել փոքր խմբերում և բնության գրկում:

Դա լրացուցիչ պատասխանատվություն է դնում այդ քաղաքի բնակիչների վրա, որի հետ դեսպանորդը կապված է նաև կարմայով՝ որպես ռուսաստանյան իր նախորդ մարմնավորումների հետևանք:

Թող ձեզ չվրդովի ուղերձների թրթռանքի թվացյալ անհամապատասխանությունն այն թրթռանքների հետ, որոնց դուք սովոր եք, և որոնք բնորոշ էին այլ մարդկանց համար: Ամեն անգամ, երբ մենք գալիս ենք, ստիպված ենք լինում օգտվել այն հնարավորություններից և ունակություններից, որն ունի մեր Խոսքի տվյալ կոնկրետ հաղորդիչը:

Ես ուրախ եմ, որ այն ազդակն ու այն էներգիան, որ մենք ներդրել էինք մեր ուղերձների հաղորդման մեջ, չի կորսվել, այլ պահպանվել է ռուսաստանյան լուսակիրների միջոցով: Խնդրում եմ, գիտակցեք, որ այն հրաշալի փոփոխությունները, որոնք նուրբ ոլորտում նախապատրաստված են Ռուսաստանի համար, առանց ձեր անմիջական օգնության և օժանդակության հնարավոր չի լինի մեր կողմից ավարտին հասցնել: Համաձայնեք, որ կա աշխատանքի մեր բաժինը, և կա աշխատանքի ձեր բաժինը, որը դուք եք կոչված իրագործելու: Միայն Համբարձված Դասերի և չհամբարձված մարդկության համախմբման մեջ է մեր հզորության և հաջողության գրավականը: Ես կուզենայի նաև ձեր ուշադրությունը հրավիրել ֆիզիկական ոլորտում ձեր միասնության վրա:

Եկել է մոլորակի բոլոր Լուսավոր Ուժերի համախմբման ժամանակը:

Եկեք սկսենք այդ գործընթացը՝ անկախ կրոնական և խմբային պատկանելությունից: Կա ավելի նշանակալից բան, քան այն, ինչ ձեզ բաժանում է: Եվ դա ձեր Սպասավորությունն է Կյանքին, Աստծուն, բոլոր կենդանի էակներին: Համախմբվեք Սիրո, համագործակցության և ֆիզիկական աշխարհում ձեր կոնկրետ գործերի հիման վրա, որոնք դուք կարող եք իրագործել հենց հիմա:

Ուշադրություն մի՛ դարձրեք այն ամենին, ինչը ձեզ բաժանում է. լինեն դրանք Ուսմունքի որոշակի դրույթներ, թե աղոթքի խոսքեր:

Կենտրոնացեք այն ընդհանուրի վրա, որը ձեզ կհամախմբի: Եվ այդ ընդհանուրը Սպասավորությունն է Կյանքին, Երկրի էվոլյուցիային: Եվ նվաճումների ձեր չափանիշը միշտ եղել է և կլինի այն զոհողությունը, որը դուք կկարողանաք ի սպաս դնել հանուն մարդկության Բարօրության, հանուն Երկիր մոլորակի էվոլյուցիայի:

Եկեք ևս մեկ անգամ կենտրոնանանք սրտերում: Թափանցեք ձեր սրտի խորքը և զգացեք ձեր Միասնությունը: Ձեր միակ ցանկությունը Ծառայելը պետք է լինի: Ձեզ բաժանող ոչինչ չի եղել ու չկա: Ապագան ծնվում է ձեր գիտակցության մեջ: Այս պահին ահա ես ամրացնում եմ Միասնության Կիզակետը ձեր սրտերում, յուրաքանչյուրի սրտում, ով լսում կամ կարդում է այս տողերը: Այն կօգնի ձեզ, որ միայն Լո՛յսը տեսնեք բոլոր այն մարդկանց աչքերում, որոնց հետ գործ կունենաք ֆիզիկական ոլորտում: Այն, ինչի վրա դուք կենտրոնացնում եք ձեր ուշադրությունը, ստանում է Աստծո էներգիա, որը ձեր միջով հասնում է ֆիզիկական ոլորտ: Այսուհետև դուք ձեր եղբայրների ու քույրերի մեջ միայն լավը կտեսնեք ձեր Ճանապարհին: Միշտ հիշեք, որ ձեր աշխարհը մի հայելի է, որի մեջ անդրադառնում է ձեր գիտակցությունը, և ձեզ շրջապատող մարդիկ կշրջվեն դեպի ձեզ այն կողմով, որը դուք նրանց մեջ կնկատեք: Այդպիսով դուք կմեծացնեք ձեր նվաճումների պաշարը և կբազմապատկեք դեպի Ընդհանուր Բարօրությունն ու Բարին ուղղված ձեր էներգիաները:

Ապրեք Բերկրանքով ու Սիրով և դե՛ն նետեք այն ամենը, ինչ խանգարում է ձեզ լինելու Աստծո հետ:

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան,
ձեզ հետ եղա այսօր

ՏԵՐ ՇԻՎԱ

27 նոյեմբերի, 2005 թ.

ՁԵՐ ԱՄԵՆ ՄԻ ՋԱՆՔՆ ԱՆՆԱԽԱ-ԴԵՊ ՁԵՎՈՎ ԿԲԱԶՄԱՊԱՏԿՎԻ, ՔԱՆԻ ՈՐ ԱՅԴՊԻՍԻՆ Է ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՀԱՆՋԸ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ Է ԱՅԺՄ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐԻ ՎՐԱ

ԵՍ ԵՄ Շիվան: ԵՍ ԵՄ եկողը, որպեսզի խրատներ տամ տարբեր հոգևոր խմբերի և ուղղությունների փոխազդեցության վերաբերյալ, որոնք առկա են պատմական այս պահին:

Մենք հստակ պատկերացնում ենք մարդկային գիտակցության ամբողջ սահմանափակությունն ու Աստծո Ճշմարտությանը հայացք նետելու չկամությունը, որ այն ընդունվի Երկիր մոլորակն այսօր բնակեցնող մարդկանց մեծամասնության կողմից:

Սակայն այն մղումները, որոնք դուք ունեք, իրոք անգնահատելի են: Քանզի յուրաքանչյուր ոք, ով արթնության է հասել, և ամեն ոք, ով ունակ է դարձել ընկալելու Աստծո Ճշմարտությունը, թեկուզ և ոչ ամբողջությամբ, բայց դրան հասնելու ձգտումն ունի, մեզ համար դառնում է անգին հաղորդիչ՝ բյուրեղ-սաղմ, որի միջոցով մենք կարող ենք Երկիր ներմուծել նոր գիտակցության և նոր փոխհարաբերությունների տարրերը:

Ուստի թող ընդունեն իմ շնորհակալությունները բոլոր նրանք, ովքեր լի են նկրտումներով և ներդնում են իրենց թեկուզ չնչին ծառայությունը Երկիր մոլորակի փրկության ընդհանուր գործում:

Դուք կարող եք սրտում պահել ձեր նկրտումը և առօրյա կյանքում գործել դրան համապատասխան. կարող եք կատարել այն գործերը, որոնց պատրաստ է ձեր գիտակցությունը. կարող եք ձեր նյութական կամ հոգևոր ամեն մի նվերը դնել Աստծո Ճշմարտությանը ծառայելու զոհասեղանին: Ձեր բոլոր նվերները մեր կողմից կընդունվեն երախտագիտությամբ և կբազմապատկվեն ձեր սրտերում:

Եկել է ժամանակը, երբ ձեր յուրաքանչյուր թեկուզ և չնչին գործողությունը, որն ուղղված է ձեր ֆիզիկական օկտավայում աստվածային թրթռանքին օժանդակելուն, կհասնի մեզ, կպահպանվի և կբազմապատկվի մեր կողմից:

Օրհնյա՛լ են ձեր ջանքերը, և օրհնյա՛լ են ձեր մղումները, ո՛ր բնագավառում էլ որ դրանք իրագործեք:

Դուք չեք կարող չգործել՝ գտնվելով ֆիզիկական ոլորտում. դուք չեք կարող չգործել, քանի որ այդպիսին է ժամանակի պահանջը, և այդպիսին է այժմ Աստծո կամքը: Պահպանեք և բազմապատկե՛ք ձեր Աստվածայնությունը՝ ձեր հոգևոր սկիզբը: Եվ ձեր կյանքի ուղեկիցը դարձրեք Աստծո, այս տիեզերքում գործող Բարձրագույն Օրենքի նկատմամբ պաշտամունքը:

Ձեր ամեն մի ջանքն աննախադեպ ձևով կբազմապատկվի, քանի որ այդպիսին է ժամանակի պահանջը, և այդպիսին է այժմ իրադրությունը Երկրի վրա:

Բայց նրանց համար, ովքեր ինչ-որ պատճառով չեն կամենում ենթարկվել ժամանակի պահանջին և Բարձրագույն Օրենքին, բարդ ժամանակաշրջան է սկսվում: Որովհետև ձեր ցուցաբերած յուրաքանչյուր հակազդեցություն շուռ կգա ձեր դեմ: Եվ ձեր գործողություններն ակնթարթորեն կբերեն համապատասխան հետևանքներ, որոնք նույնպես կբազմապատկվեն: Եվ դուք չեք կարողանա զգալ հին գիտակցությունից, հին վարվելակերպից և նախկին մտածելակերպից ու գործելակերպից կառչելու ձեր փորձերի ապարդյունությունը:

Ձեր շուրջն ամեն ինչ ենթակա է փոփոխության և արդեն իսկ փոխվում է: Եվ միայն խուլն ու կույրը կարող են շարունակել ձևացնել, թե ոչինչ չի փոխվում, և ամեն ինչ մնում է նախկինի պես:

Ո՛չ, հավատացնում եմ ձեզ, երբեք Երկիր մոլորակի փոփոխություններն այնքան արագ տեմպերով չեն ընթացել, որքան ձեր ժամանակներում: Եվ այդ փոփոխություններին հարմարվել հնարավոր է միայն սեփական մտածելակերպի ու վարվելակերպի կարծրատիպերը փոխելով:

Իսկ այժմ կուզենայի ևս մեկ ողջերթի խոսք և խրատ կարդալ: Ընդունեք այն որպես հանձնարարական ձեր ամենօրյա հոգևոր աշխատանքում:

Ամեն օր՝ այսօրվանից սկսած մինչև Նոր տարի, խնդրում եմ, օրական թեկուզ մի քանի րոպե հատկացրեք մեդիտացիայի՝ ներխոկման, և ձեր երկրի ու մոլորակի ապագայի տեսլականն ընդունելուն:

Դուք կարող եք ձեր գիտակցության մեջ նկարել ամենահամարձակ պատկերներ ու պլաններ՝ օգտագործելով ձեր ամբողջ երևակայությունը: Միակ պայմանը ձեր շարժառիթների, ձեր հղացումների և մղումների մաքրությունն է: Եվ ես ձեզ խոստանում եմ, որ ինչքան էլ համարձակ ակնկա-

լիքներով, պատկերներով ու պլաններով բեռնավորեք ձեր գիտակցությունը մոտակա ապագայի վերաբերյալ, հաջորդ տարվա և մոտակա մի քանի տարիների ընթացքում կցուցաբերեմ անձամբ իմ օժանդակությունը, որպեսզի դրանք բազմապատկվեն և վերադարձվեն ձեր աշխարհ աստվածային հնարավորության, աստվածային ողորմածության և աստվածային դրսևորման տեսքով:

Արդ, խիզախեք, կազմեք ամենահամարձակ պլանները՝ դրանք համապատասխանեցնելով այն աստվածային ուղղությանը, որը բնորոշ է ներկայումս Երկիր մոլորակում ընթացող բարեփոխումներին: Այդ ամենն օժանդակություն կստանա և կդրսևորվի ձեր ֆիզիկական աշխարհում:

Քիչ ժամանակ է մնացել ձեր ներխոկումների համար: Միայն մինչև այս տարվա վերջը:

Մի՛ մոռացեք ձեր ամեն մի ներխոկումից առաջ կանչել ինձ՝ Տեր Շիվային, որպեսզի ավերեմ այն ամբողջ հինն ու իր դարն ապրածը, որն ընկած է ձեր պլանների իրականացման ճանապարհին, աստվածային հնարավորություն ապահովեմ և պարուրեմ ձեզ իմ Սիրով, Հույսով ու Հավատով:

Բազմապատկե՛ք ձեր նկրտումները: Խիզախե՛ք: Միշտ հիշեք, որ միտքը մատերիական է և միշտ ունակ է արարելու: Եվ ձեր մտքի այդ արարչագործական ունակությունը, որը մշտապես բնորոշ է եղել ձեզ, պարզապես մինչև տարվա վերջ բազմակիորեն կուժեղացվի:

Բաց մի՛ թողեք ձեզ ընձեռված հնարավորությունը և մի՛ մոռացեք գրել առանձին թղթի վրա ձեր բոլոր մտքերը, պլաններն ու ցանկությունները: Յուրաքանչյուր ներխոկման ընթացքում մտասևեռվեք և մանրամասն տեսք տվեք ձեր ամեն մի մտահղացմանը: Եվ նոր տարվա, ինչպես նաև մոտակա մի քանի տարիների ընթացքում հետևեք, թե ինչ տեղի կունենա ձեր կյանքում և շրջակա իրականության մեջ: Ձեզնից ամեն ոք կգիտակցի իր մտքի ուժը, երբ այն համահունչ կլինի Աստծո՝ այս պատմական պահի համար նախատեսված նպատակներին ու խնդիրներին:

Իսկ այժմ ես ձեզ մաղթում եմ արգասաբեր աշխատանք և ձեզ մենակ եմ թողում ձեր մտքերի ու մտահղացումների հետ:

Ես ԵՄ Շիվան,
ձեզ հետ եղա այսօր

ՍԱՆԱՏ ԿՈՒՄԱՐԱ

28 նոյեմբերի, 2005 թ.

ՎԱՐԴԱՐԱՆՆԵՐԻ ԸՆԹԵՐՑՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան: Եկել եմ տալու հանձնարարականներ, որոնք վերաբերում են իմ տված Վարդարանների ընթերցանությանը:

Չկան ինչ-որ առանձնահատուկ հանձնարարականներ, և չկան ինչ-որ հատուկ պահանջներ՝ կապված այդ Վարդարանների ընթերցանության հետ: Դուք դրանք կարող եք կարդալ բոլորն իրար հետ (խառը հաջորդականությամբ – թ.) կամ հաջորդաբար: Կարող եք առաջին շաբաթում կարդալ առաջին Վարդարանը, երկրորդում՝ երկրորդը և երրորդում՝ երրորդը: Որից հետո կարող եք բոլորապտույտով կրկնել դրանց ընթերցումը:

Ի վերջո, դուք կարող եք ինքնուրույն որոշում կայացնել հետևելու այն հանձնարարականներին, որոնք կստանաք ձեր Բարձրագույն Ես-ից:

Միաժամանակ կա շատ կարևոր մի բան, որը պետք է ձեզ հիշեցնեմ և հանձնարարեմ, որ երբեք չմոռանաք այդ մասին: Դա այն է, որ դուք մշտապես գիտակցության ակնածալից վիճակ պետք է պահպանեք Վարդարանների ընթերցման, ինչպես նաև ձեր ցանկացած այլ հոգևոր աշխատանքի ընթացքում: Միշտ աշխատեք ձեր մտքերը կենտրոնացած պահել Բարձրագույն Իրականության վրա: Երբեք մի՛ մոռացեք, որ Վարդարանների ընթերցման պահին դուք հաղորդակցվում եք Աստծո հետ: Հետևաբար մշտապես պետք է ակնածալից սարսուռ ապրեք ու սանձեք ձեր բոլոր մարմնավոր մտքերն ու զգացմունքները: Եթե տհաճ խոսակցությունից կամ վեճից հետո գրգռված վիճակում եք, ապա հետաձգե՛ք Վարդարանի ընթերցումը: Սկզբում ներդաշնակվեք՝ բնության գրկում զբոսնելով, ունկնդրեք հանդարտ երաժշտություն կամ էլ մտասևեռվեք լռության մեջ: Բայց երբեք գրգռված կամ որևէ այլ անհավասարակշիռ վիճակում ձեռնամուխ մի՛ եղեք հոգևոր աշխատանքի:

Միշտ հիշեք այն մասին, որ ձեր գործողությունները դուք զարդարում եք ձեր իսկ ներքին վիճակով: Եվ երբ, անհավասարակշիռ վիճակում լինելով, սկսում եք ընթերցել Վարդարանները, ապա, փոխանակ էներգիա առաքելու դեպի Բարձրագույն ոլորտներ, Աստծո էներգիան վատնում եք ձեր ֆիզիկական աշխարհում՝ նպաստելով պատրանքների բազմապատկմանը:

Ըստ այդմ՝ Վարդարանները սկսեք կարդալ

միայն գիտակցության ներդաշնակ վիճակում, և որքան անշահախնդիր լինի ձեր այդ ծառայությունը, այնքան ավելի մեծ հոգևոր աշխատանք կկարողանաք իրականացնել:

Այն ամենը, ինչ առաքում եք աշխարհին, վերադառնում է ձեզ: Ուստի տվեք առատորեն՝ չխնայելով ոչ ձեզ, ոչ էլ Վարդարաններ կարդալու ձեր ժամանակը: Ամբողջ այն էներգիան, որն անշահախնդրորեն տալիս եք Աստծուն, կվերադառնա ձեզ:

Եվ ամեն ինչ լավ կլինի:

Աստված սիրում է ձեզ և միշտ ձեզ հնարավորություն է տալիս կյանքում ընթանալու լավագույն Ուղով:

Ահա և տվեցի ձեզ այն հանձնարարականները, որոնք այսօր հարկ էի համարում տալ: Իսկ ավելի մանրամասն ցուցումներ դուք միշտ կարող եք ստանալ ձեր Բարձրագույն Ես-ից: Բավական է միայն ուզենաք, ձգտում ցուցաբերեք և ունկնդրեք սեփական սրտին:

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան՝
ձեր նկատմամբ Սիրով լեցուն